



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅՈՑ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ  
1600-ԱՄԵԱԿԻ ՄԱՏԵՆԱՀԱՐ  
ԹԻԻ 6



ԵՐՈՒԱՆԳ ՕՏԵԱՆ

# ԱՆԻԾԵԱԼ ՏԱՐԻՆԵՐ

1914 - 1919  
(անձնական յիշատակներ)

ԹԵՅՐԱՆ, 2010

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՔՈՒՆՆԱԿՆԵՐ

ՆՐԱՄԱՆԱԲ՝  
Տ. ՍԵՂՈՒՆ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՆՐԱՆԻ ՆԱՅՈՑ ԹԵՄԻ

ՔՈՒՆՆԱԿՆԵՐ

1917 - 2017  
(100-ամյակի նվիրված)



ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

1917

ԴԵՐ - 2017

## ՈՂՋՈՅՆ ՔԵԶ ԿԵԱՆՔ

1915 . . . 2005

Իննսուն ամեակ հայոց ցեղասպանության . . . :

Ինչ ահաւոր յուշագրութիւն: Միթէ փարիները կարող են ցաւի, վշտի ու կորսնցուցածի ահաւորութիւնն աղօսել, մթազնել եւ մի օր էլ յուշի վերածել այն: Քաւ լիցի, մեղանչում է այդ, աւելի ճիշդ սրբապղծութիւն:

Ինչպէս կարելի է մոռանալ իր հաւաքքի համար չարչարալից մահով նահապակուող հայ օրիորդին ու մայրիկին:

Ով կարող է մոռանալ պարմութիւնը այն դժբախտ մօրը, որ սրիպսած իր զաւակն է վաճառում եւ ինքն էլ քիչ երբ խենթանում, խելագարում է:

Ինչպէս մոռանալ փարաբախտ հայ գրողների, մտաւորականների անմարդկային ջարդը, Գրիգոր Զօհրապի ու Վարդգէսի եղեռնը . . . :

Միթէ կարելի է մոռանալ հազարաւոր, փասնեակ, այլեւ հարիւր հազարաւոր հայ մանուկների, պարանիների, երիտասարդների ու փարէցների հաւաքական ջարդերն ու սպանութիւնները:

Մինչեւ այսօր Տէր Զօրի, Շէրփապէի, Մարկապէի, Ռասուլ այնի եւ այլ վայրերի բլուրներն ու աւազանները խառնելիս ու բուրելիս հայ նահապակների կմախքներին է հանդիպում անցորդը:

Միթէ կարելի է չիշել հազարաւոր այն եկեղեցիները, վանքերն ու մաքրումները, որոնք մի օրից միւսը աւերակի վերածուեցին, ամայացան. նրանց աղօթաբոյր քարերը սրբապղծուեցին. գերեզմանաքարերը կործանուեցին ու դողանջող զանգերը լռեցին. ինչպէս կարելի է չիշել հազարաւոր այն զինուորներին, որոնք օսմանեան հայրենիքին ծառայելու նախանձախնդրութեամբ լեցուն զէնք վերցրին պաշտպանելու համար այդ հայրենիքը եւ յանկարծ այդ զէնքը եղաւ իրենց դահիճը: Այո, փակաւին կարելի է մտաբերել ահաւոր այն տեսարանները զանգաւածային ջարդերի, կոտորածների, վայրագութիւնների եւ անմարդկային այն արարքների, որոնց ենթարկուեց հայ ժողովուրդը: Մակայն

Սոյն գիրքը հրատարակուած է  
մեկենասութեամբ  
«Փիւնիկ» մարդկային  
աղբիւրների զարգացման  
համահայկական  
բարեգործական  
հիմնադրամի

միայն յիշելն ու չնոռանալը բառական չեն, պէտք է վերապրել նրանց կեանքը:

Այսօրայ մեր կեանքում կա՞ն Վարուժանը, Միսմանթօն, Ռուբէն Սեւակը, Գրիգոր Զօհրապը, Գեղամ Բարսեղեանը, Տիգրան Զեօկիւրիինը, Թւկարենցին, Նրանդը, Երուխանը, Ռուբէն Զարդարեանը, Արփաշէս Յարութիւնեանը եւ փակալին շար շարերը, որոնց անունները քանդակել են մեր եղեռնապարտումի մարտանում. Այո՛, հարց են փալիս, ո՞ր են վերոյիշեալները մեր այսօրայ կեանքում. միթե՞ մենք էլ մի նոր եղեռն ենք պատրաստում . . . :

90-ամեակը մի հանգրուան է մեր կեանքում, որպէսզի հարկ է մի պահ կանգ առնել եւ մտածել. ո՞ր են ես յարաբերաբար իմ ազգի ցեղասպանութեան. ինչ են արել մինչեւ հիմա եւ ինչ կարող էի անել եւ չեմ արել:

Տեղասպանութեան ենթարկելով կորսնցուցիւնք երկիրը, երկրի մի կարեւոր մասը: Փառք Աստուծոյն, այսօր մի փոքր մասի վրայ, մեր ժողովուրդը իր անկախ պեղծականութեամբ կերպում է իր ապագան. սակայն նահապետների արիւնով սրբագործուած հողերը դեռ մնում են թշնամու իշխանութեան ներքոյ: Սփիւռքացած մեր կեանքով, մեր լեզուն, մեր հաւաքը, մեր ընկերական նիւթականութիւնը, մեր մշակոյթը, մեր հոգեւոր կեանքը կորցնելու վտանգի մէջ ենք: Նպետաբար մեծ մարտահրաւերների առաջ ենք:

Առաջին առիթով պէտք է լիցքաւորենք մեր պարտութեամբ, մշակութային արժէքներով եւ հաւաքի սրբութեամբ: Մեր անցեալի կեանքի հետ հաղորդակցութեամբ պիտի զօրանանք մեր կոչումի եւ առաքելութեան մէջ: Այո՛, հարկ է իմանալ մեր անցեալը, որ որքան էլ արիւնոտ լինի, բովանդակում է նաեւ լուսաւոր ու պայծառ էջեր:

Նայոց եղեռնի պարտութիւնը իր բոլոր ծալքերով, իր երկեամբ պէտք է ամէն մէկ հայի սեփականութիւնը դառնայ: Եղեռնապարտումը մեր կեանքը կենսաւորող եւ մեզ մեր առաքելութեան եւ փեսիլքների մէջ զօրացնող ամենավաւերական իրողութիւնն է լինելու:

Դժբախտաբար մեր եղեռնի պարտութիւնը՝ եղեռնապարտումը, փակալին սպասում է իր պարմաբանին.

բարեբախտաբար եղեռնից հրաշքով ազատուած մի քանի հեղինակներ իրենց գրչով քանդակեցին եղեռնը մեր հոգիներում: Այդ գործերը պէտք է որ ամէն հայի սեղանի ամենօրեայ հացը լինեն: Յիշենք մի քանիսը, Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեանի, «Նայ Գողգոթան» երկու հատորով. Կարապետ Գաբիկեանի, «Եղեռնապարտում». Սալբիի, «Մեր խաչը». Վահան Մինախորեանի, «1915»-ը. Արամ Անպոնեանի, «Այն սեւ օրերուն եւ մեծ ոճիրը»: Յիշենք նաեւ Սեպուհ Ալունիի «միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պարմութիւնը»: Եղել են նաեւ ոչ հայ հեղինակներ եւ եղեռնի վկաներ, որոնք իրենց գրութիւններում եւ յիշարակարաններում ակնապատի վկայութեամբ պարմել ու նկարագրել են ահաւոր եղեռնը:

Երանդ Օրեանը այն բացառիկ ու բարեբախտ գրողներից եղաւ որ կենդանի նահապետութեամբ «մահը» ճաշակելուց յետոյ ազատեց թուրքի ճիրաններից եւ 1918-ի զինադադարին վերադարձաւ Պոլիս, փառապա՛ծ մարմնով եւ բեկեալ հոգով: Իր ժողովրդի վառ ապագայի փեսիլքը իր հոգու խորքում նման Գրիգոր Ծ. Վրդ. Պալաքեանի, որ իր Նայ Գողգոթան գրելիս «քեզի հայ ժողովուրդ» խօսքը ունի, ինքն էլ իր ողջոյնի խօսքը ունի իր «հայութեան մնացորդների» հայրենակիցներին.- «Ողջոյն քեզ հայ ժողովուրդ,- մեղայ, ողջոյն ձեզ հայութեան մնացորդներ,- հեռուէն, շար հեռուներէն կու գամ:

Տէր Զօրէն կու գամ՝ որուն կամուրջէն երեք հարիւր հազար հայեր անցան եւ որոնցմէ այսօր միմիայն հազար հինգ հարիւր կիներ ու որք փղաք ողջ մնացին:

Կու գամ Օսմանիէն, ուրկէ փեղապարափ անձրեւով մը վաթսուն հազար հայեր խարազանի հարուածներու փակ քշուեցան լեռնէ լեռ:

Կու գամ Բուզանդիէն դէպի Թարսուս փանող աղէրալի ճամբայէն, ուր նորածին հայ մանկիկները եղեռններու ներքեւ իրենց մայրերէն լքուած, մեր աչքերուն առջեւ բորենիներու եւ շուներու կեր կըլլային:

Կու գամ Նալեպէն դէպի Տէր-Զօր երկարող այն անիծեալ անապարներէն, ուր փասնեակ հազարներով հայեր, երեք փարի վրաններու փակ, կոպորուեցան փեռնէն, թիֆուսէն ու թանջքէն:

Կու գամ Մեպիլի վրաններէն, ուր անօթի ծնողքներ իրենց գաւակները աճուրդի հանեցին եւ ուր փասը փարեկան աղջիկներ վաթսուն փարայի վաճառուեցան:

Կու գամ Սուրիայէն, ուր հարիւր հազարէ աւելի հայեր, բնաջինջ ըլլալու սպառնալիքին փակ, իրենց Ասփուածը ուրացան:

Կու գամ Համայէն ու Հոմսէն, Մէքքէնէն, Համմամէն, Միսրիսէն, Էլ Պուսէրայէն, Սուլթանիէն ու Գոնիայէն, ուր երեսուն քառասուն հազար հայ որբուկներ մայրիկ մայրիկ կը ճըւան թուրք բնակարաններու խաֆէսներուն ետեւէն:

Կու գամ եղեռնի այն դժոխային վայրերէն, ուր Զօհրապներ, Ակնունիներ, Խաժակներ, Զարդարեաններ, Վարուժաններ, Քէլէկեաններ, Սեւակներ, Տաղաւարեաններ-վերջապէս ամբողջ ազգի մը ուղեղը ջարդ ու փշուր եղաւ ճէնկիզ խաներու եւ Լէնկ Թիմուրներու արժանատր յաջորդներուն ձեռքով:

**Ողջոյն ձեզ, հայրութեան խլեակներ»:**

Այո՛, Օրեանը իր ողջոյնի խօսքով վերսկսում է իր գրական ստեղծագործական աշխատանքը, որի գեղեցիկ արդիւնքներից է «Անիծեալ փարիներ» իր անձնական յիշատակներ գործը, որ խորքում իր եւ իրնով իր ժողովրդի գողգոթացեալ կեանքի պարմութիւնն է:

Մենք մեր պարանկութեան փարիներից խորապէս փրկաւորած ու ներշնչած ենք եղել Օրեանով, իր վեպերով, պարմածքներով, «Ընկեր փանջունի»-ով բայց մանաւանդ Անդրանիկ Ծառուկեանի՝ մին եղեռնի որբերից շար փրկաւորիչ յուշագրութեամբ, որպէս պարմում է թէ ինչպէս իրենց որբանոց դպրոցն է այցելում մի հիւր եւ այդ հիւրը որի մասին շար էին լսել իբրեւ «ուրիշները խնդացնող» եկաւ եւ նրանց լացացրեց, որովհետեւ ի փես բազմահարիւր որբերին ոչինչ չկարողացաւ ասել. երկու առիթներով փորձեց խօսել եւ ասաց -

**Տղաքներ՛ր, որբեր... եւ ապա լռեց, երկրորդ անգամ փորձեց խօսել.**

**-Որբեր՛ր, ես ձեզ շար կը սիրեմ... այնուհետեւ չկարողացաւ շարունակել միայն թաշկինակով իր աչքերից հոսող արցունքներն էր սրբում:**

Ինչ խօսեր փառապած ու «մահուան ձորի» միջից անցած հայ գրողը, որ ահա կանգնել էր հարիւրաւոր աղէտահար երեխաների առաջ...

Երանդ Օրեանը մեր գրականութեան իրապաշտ շարժման ամենից յայտնի գրողներից է, որ նշանաւորում է իբրեւ վիպագիր ու երգիծաբան. բեղուն արքայագրող է եղել, Օշականի բնորոշումով, «Երանդ Օրեանի գրական վաստակը ամենէն ընդարձակներէն է արեւմտահայ գրականութեան ժառանգութեան մէջ»:

Հայաստանում «Նայիրի» հրատարակչական կողմից հրատարակւած «Անիծեալ փարիներ» 1914-1919 (անձնական յիշատակներ) գործը, աշխատասիրութեամբ Գրիգոր Յակոբեանի, մեր սիրտը ուրախութեամբ եւ ինչու չէ նաեւ երախտագիտութեամբ լցրեց:

Ներկայ 2010 փարին Հայոց Յեղասպանութեան 95-ամեակն է, այս առիթով, մէկ անգամ եւս, վերահրատարակում ենք «Անիծեալ փարիներ» գործը՝ ի յիշատակ մեր աւելի քան մէկուկէս միլիոն նահապակների, մանաւանդ որ՝ առաջին հրատարակութիւնը՝ կարարւած 2005-ին, արդէն իսկ սպառուել է՝ ի գոհունակութիւն ընթերցատէր մերժողովրդի գաւակների:

Այս առիթով ուզում ենք մեր գնահատանքն ու օրհնութիւնը յայտնել «Փիւնիկ» մարդկային աղբիւրների զարգացման համահայկական բարեգործական հիմնադրամին, որի նւիրատութեամբ լոյս է տեսնում ներկայ հրատարակութիւնը:

Ասփուածային օրհնութիւն «Փիւնիկ» հիմնադրամին եւ հիմնադրամի բոլոր անդամներին՝ մաղթելով բոլորին առողջութիւն, գործոց յաջողութիւն եւ ազգանւեր ու հայրենաշէն գործունեութիւն:

Թեհրան  
2010

ՄԵՊՈՒՏ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ  
ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՆՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ



ՆՐԱՆԻ ՕՏԵՆ



ՆՐԱՆԻ ՕՏԵՆ

## ԱՐՇԱՆՈՅՄԻՆ ՄԱՅՐԸ

«Տեր Զօր կամ աւելի ճիշդ Տեր Էզզօր, կը գտնուի Եփրատի ձախ եզերքին վրայ, Սուրիոյ հողամասին մէջ: Եփրատի աջ կողմը կը փարածուի Միջագետքը: Ընդհանրապէս Տեր Էզզօրի դէմը, Եփրատի մէջ կը գտնուի բաւական ընդարձակ կղզեակ մը, պարտէզներով ու փուններով: Երկու կամուրջներ այդ կղզեակը կը կապեն ցամաքին: Այսպէս ուրեմն, քաղաքէն Միջագետք անցնելու համար հարկ է նախ անցնիլ փոքր կամուրջէ մը, յետոյ կղզեակէն եւ ապա մեծ կամուրջէն: Երկու կամուրջներուն գլուխը, կղզեակին կողմը կան պահականոցներ, եւ սուինաւոր ոստիկաններ միշտ կը հսկեն անցորդներուն վրայ: Արաբները ազատօրէն կ'երթանէկեն այդ կամուրջներէն, բայց հայերուն բացարձակապէս արգիւտած է առանց վէսիքայի կամ մասնաւոր արփօնութեամբ անցնիլ մեծ կամուրջէն:

Գերմանները երբ հանգրուան մը հաստատուեցին Տեր Էզզօրի մէջ, ուզեցին անմիջապէս անթել հեռագրի կայան մը ունենալ, եւ ապոր համար ընտրեցին Միջագետքի եզրը՝ մեծ կամուրջին մօտ փեղ մը, աւագուր անապատին մէջ: Ես այդ միջոցներուն գերման հանգրուանը կը գտնուի իբրեւ զինուոր եւ իբրեւ թարգման: Ինծի վիճակուած էր ամէն օր, երբեմն օրը երկու անգամ, անթել հեռագրի կայանը բերել դրկուելիք հեռագիրներու պատճէնը: Բնականաբար անարգել կ'անցնէի կամուրջներէն, քանի որ պահակ ոստիկանները կը ճանչնային զիս եւ գիտէին պաշտօնական դիրքս: Անթել հեռագրի կայանին մօտ կը գտնուէին մէկ քանի արաբական վրաններ: Օր մը, երբ գործս աւարտած՝ կը վերադառնայի կայանէն, այդ վրաններէն կին մը դուրս ելաւ եւ արագ քայլերով մօտեցաւ ինձ:

- Դուն հայ ես, այնպէս չէ՛,- հարցուց հայերէն:
- Այո՛,- պատասխանեցի,- իսկ դուն ո՛ր փեղացի ես:
- Խարբերդի եմ,- ըսաւ կինը,- ամէն օր կը փեսանմ քու հոս գալ երթալը եւ դէմքդ գուշակեցի որ հայ ես... խնդիրք մը ունիմ Աստուծոյ սիրոյն՝ մի՛ մերժեր:
- Ըսէ՛ փեսանմը...:

Եւ պատմեց: Նազարաւորներու սովորական պարմութիւնն էր: Խարբերդէն փեղահան եղած էին. ամուսինը ճամբան սպանած, մանչ զաւակն ալ քիւրպերը յափշտակած: Նազի յաջողած էր երկու աղջիկները ազատել, որոնցմէ մին մեռած էր թիճիստ:

- Մէկ հարիկ աղջիկս մնացած էր քովս,- շարունակեց,- 12 փարեկան Արշալոյսս, աշխարհի մէջ իրմէ՛ զար ա՛յ մէկը չունէի... ջարդէն հրաշքով ազատեցանք, միասին Մարաթ կը գտնուէինք, հոսկէ 2-3 ժամ անդին, անօթի մնացինք, ա՛յ ճարս հարաւ, աղջիկս առի՛ եկայ Տեր Զօր երթալու համար ուր կը յուսայի գործ մը գտնել: Կամուրջէն անցայ, երբ միւս ծայրը հասայ՝ ոստիկանները կասկածեցան, մեզի բռնեցին, հարցաքննեցին, եւ երբ փեսան որ հայ էի՝ աղջիկս ձեռքէս առին ու զիս ետ դրկեցին... Աստուծոյ սիրուն՝ աղջիկս ազատէ՛ այդ մարդոց ձեռքէն, իմ աղուր հրեշտակս մի՛ ձգէր այդ հրեշներուն քով...:

Եւ խեղճ մայրը դառնօրէն արցունք կը թափէր:

- Բայց ես ի՞նչ կրնամ ընել,- կմկմացի յուզուած ու շուարած:
- Դուն գերմանացիներուն հետ յարաբերութիւն ունիս. կը փեսանմ կոր, ամէն օր հոս կու գաս կ'երթաս, անոնց ձեռքով կրնաս բան մը ընել:

Թշուառ կինը ինծի կը վերագրէր կարողութիւն մը գոր չունէի, ափսո՛ս: Այսուհանդերձ քանի մը յուսաբոյ խօսքեր ըրի եւ հեռացայ քովէն: Ներքեւալ օր նորէն եկաւ քովս:

- Գերմանացիները չեն ուզեր միջամտել,- ըսի,- սպասէ. փեսանմ, ուրիշ հնարք մը կը սրբածենք...:

- Բայց չեմ կրնար սպասել,- բացազանչեց,- այս արաբներուն քով կը ծառայեմ չոր հացի մը փոխարէն, եւ 1-2 օրէն վրանը պիտի քակեն ու մեկնին... ստիպուած եմ կամ հետերնին երթալ, կամ...:

Խօսքը չաւարտեց:

Ի՞նչ կրնայի ընել այս թշուառ կնոջ համար: Վերադարձիս պահականոց մտայ եւ հարցուցի թէ 12 փարեկան Արշալոյս անուն աղջկան մը մասին փեղեկութիւն ունէի՞ն:

- Արանկ աղջիկ չենք ճանչնար,- գոչեց ոստիկան մը կոշտութեամբ:



- Ի՞նչ պիտի ընես.- հարցուց ուրիշ մը, քիչ մը աւելի քաղաքավար:

- Իր մօրեղբայրն եմ, իմացայ որ ձեր քովը կը գտնուի եղեր, կ'ուզեմ քովս առնել:

- Քեզի սխալ տեղեկութիւն փութեր են,- պատասխանեց ուսրիկանը:

Ներսէսալ օրը ուսրիկաններուն հետ ունեցած խօսակցութիւնս պարմեցի խարբերոցի կնոջը: Տարբամօրէն երեսս կը նայէր, առանց կարծես հասկնալու ըսածս: Միւս օր երբ, ըստ սովորութեան, գացի անթել հեռագրի կայանը, անյայտ եղած էին արաքական վրանները: Գերման սպան որուն յանձնեցի հեռագիրները աղճապ ֆրանսերէնով մը ըսաւ.

- Այս առփու կին մը ինքզինքը գետը նետեց ու խեղդեցաւ. աշխարհեցանք ազատելու, բայց անկարելի եղաւ. կամուրջին ճիշդ մէջտեղէն նետուեցաւ, հոն ուր ջուրը շար խոր է եւ յորձանքը զօրատր:

- Ո՞վ էր այդ կինը,- հարցուցի յուզուած ձայնով մը:

- Այն կինը որ քանի մը անգամ քեզի հետ տեսնուեցաւ, ինչպէս նշմարեցի հոսկէ:

Արշալոյսին մայրն էր»:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԾԱԳՈՒՄԸ

1914 յունիսի մէջ առտու մը, լրագիրը բանալով կարդացի Աւստրիոյ-Հունգարիոյ գահաժառանգ արհիդուքս Ֆրանց Ֆէրտինանտի եւ իր ամուսնին դքսուհի Հօհենպէրկի դէմ եղած մահափորձը Սէրայէվոյի մէջ, որուն զոհ գացած էին երկուքն ալ: Մահափորձին հեղինակն էր սերպիացի պատանի մը՝ Բրինցիբ:

Լուրը, որքան զգայացունց, գուշակել չէր տար այն մօտալուտ եւ ահեղ հետեւանքները որոնք ծնունդ պիտի առնէին այս ոճիրէն:

Իրա՛ւ էր սակայն որ մահափորձը անհատապէս գործուած անիշխանական արարք մը չէր, այլ զուտ քաղաքական ոճիր մը, երկարօրէն պատրաստուած եւ խոշոր դաւադրութեան մը արդիւնք:

Հետզհետէ հասնող մանրամասնութիւններ ցոյց տուին թէ որքա՛ն կարեւորութիւն կը ստանար այդ մահափորձը Եւրոպայի՝ եւ մասնաւորաբար Աւստրիոյ մէջ:

Յուլիսի սկիզբները թերթերը արդէն իսկ կը ծանուցանէին թէ Աւստրիոյ զինուորական գործունէութիւնը զգալապէս կ'աւելնար եւ թէ բովանդակ երկրին մէջ բուռն հակառակութիւն եւ զրգուութիւն կը տիրէր Սերպիոյ հանդէպ: Նոյն ամսուն վերջը արդէն իսկ եւրոպական մեծ եւ ընդհանուր պատերազմի մը սարսափը կը սաւառնէր աշխարհի վրայ եւ Աւստրիա իր վերջնագիրը կուտար Սերպիոյ 18 ժամ պայմանաժամով:

Այդ վերջնագիրը, որուն պայմանները անընդունելի էին Սերպիոյ համար, անխուսափելի կը դարձնէին պատերազմը

Աւստրիոյ ու Սերպիոյ միջեւ ու արդարեւ յուլիսին վերջերը առաջին թնդանօթները կ'արձակուին երկու պետութիւններու սահմանազիւսին վրայ: Իսկ պատերազմը պաշտօնապէս կը յայտարարուի 15/28 յուլիսին:

Միեւնոյն ատեն ռուսական զօրաշարժին լուրերը կը հասնին:

Կացութիւնը ծանրացած է:

Ընդհանուր պատերազմը անխուսափելի կը թուի, բայց դեռ ամէն յոյս չէ կորած: Մեծ պետութիւններու դահլիճները\* կը բանակցին, համաձայնութեան գետին մը կը փնտռեն, կամ գոնէ այնպէս հաւատացնել կ'ուզեն:

Ինչ որ քիչ շատ որոշապէս կը տեսնուի՝ սա է թէ Գերմանիա եւ Ռուսիա պատերազմ կ'ուզեն:

Անգլիա, վերջին վայրկեանին ի նպաստ խաղաղութեան գերազոյն ջանքեր կ'ընէ, հաճելի հրդեհումին առաջը առնելու համար, բայց ի զո՛ւր:

Օգոստոսի 2ին (Ն. Տ.) կիրակի օր, թերթերը կը ծանուցանեն թէ ընդհանուր պատերազմը յայտարարուած է:

Նոյն առտուն Պոլսոյ պատերու վրայ փակցուած տեսանք հետեւեալ յայտարարութիւնը խոշոր գիրերով.

«Սէֆէրպէրլիք վար, ասքէր օլան սիլահ ալթընա:

Սէֆէրպէրլիկին պիրինճի կիւնի թէմուզըն 21իւնի բազար էրթէսի կիւնիւ»\*\*:

Այս յայտարարութիւնը, ինչպէս յետոյ աքսորանքիս մէջ իմացայ, միեւնոյն օրը փակցուած է նաեւ գաւառներու մէջ, Անատօլուէն մինչեւ Սուրիա, կուսակալանիստ քաղաքներէն մինչեւ ամենայնտին նահիէին\*\*\* մէջ: Եւ այդ տպուած թուղթերը, կնքուած պահարաններով\*\*\*\*, ամիսներ առաջ ղրկուած

\* Կառավարութիւնները:

\*\* Ջօրափառք է, ով զինուոր է՝ զէնքի դիմի: Ջօրափառքի առաջին օրը՝ յուլիսի 21-ը, երկուշաբթի օրն է:

\*\*\* Գատակի:

\*\*\*\* Մրարներով:

են ամէն կողմ, բոլոր միթարներուն\*, ամենախիստ պատուէրներով որ գաղտուկ պահեն եւ բանան միայն այն ժամանակ երբ կեդրոնէն հրաման գայ:

Եւ այդ ծածուկ կնքուած պահարանները, որոնց գոյութիւնը իմացած է ժողովուրդը առանց պարունակութեանը ծանօթ ըլլալու, սարսափի մատնած է շատ տեղերու Հայերը, որոնք ենթադրած են թէ ջարդի հրաման մը կար անոնց մէջ ծածկուած:

Սակայն խնդիրը այդ չէ: Ընդհանուր պատերազմի յայտարարութենէն շաբաթներ առաջ զօրաշարժի համար տրուած այս ծածուկ հրամանը ցոյց կուտայ թէ իթթիհատական կառավարութիւնը արդէն իսկ ծախուած էր Գերմանիոյ եւ որոշած էր անոր կողքին կռուելու:

Դառնանք մեր պատմութեան:

Այս օգոստոս 2ի պատմական կիրակիէն սկսեալ, յանկարծ Պոլսոյ կերպարանքը փոխուեցաւ, սովորական կեանքը խանդարուեցաւ, ընդհանուր իրարանցում մը, խուճապ մը տիրեց ամէն կողմ: Անակնկալներու, անծանօթ փորձանքներու երկիւղը զգաց ամէն մարդ: Ասոր առաջին արտայայտութիւնը եղաւ անօթի մնալու, ուտելիքէ զրկուելու վախը:

Ամէն մարդ փուռերուն առջեւ, նպարավաճառներու խանութը վազեց, իր նիւթական կարողութեանը չափով ուզեց պաշար համբարել:

Գտնուեցան մարդիկ որոնք այդ կիրակի օրը մէկ քանի ամսուան պաշար շտկեցին:

Ընդհանուր համոզումը այն էր արդէն թէ՛ պատերազմը հազիւ 2-3 ամիս պիտի տեւէր:

Եւ սակայն մտատանջութիւնը հետզհետէ կ'աւելնար:

Երկուշաբթի առտու Բերայի Շիտակ ճամբուն վրայ շահեկան տեսարան մը կը պարզուէր:

Բոլոր զրամատունները իրենց դռները փակած էին: Ժողո-

\* Գիւղապետներին, քաղաքում թաղի ամենափոքր միատրի (մաճալլէ) կառավարիչներին:

վորդը, այր ու կին, դռներուն առջեւ խոնուած՝ աղմուկ կը յա-  
րուցանէին եւ իրենց դրամները կը պահանջէին:

Յուզումը, իրարանցումը եւ յուսահատութիւնը ընդհանուր  
էր:

– Դրամներդ կըցա՞ր առնել...

– Ո՛չ, դո՞ւն...

– Ես ալ չկըցայ առնել, թիւ մը տուին ձեռքս, կարգիս կը  
սպասեմ կոր:

– Բարեկամներէս մէկը հարիւր ոսկի ունի եղբր, հազիւ տա-  
ւը ոսկի տուեր են:

– Ալ ի՞նչ կ'ուզէ, բախտաւոր է եղբր, կ'ըսեն թէ հարիւրին  
հինգը միայն պիտի տան:

– Ասանկ խաղքութիւն\* կ'ըլլա՞յ:

Ու այսպէս ամէն մարդ իր ցաւը կուլար:

Սրճարաններուն մէջ խօսակցութիւնները քաջալերական  
չէին:

– Քաղաքին մէջ երեք օրուան ալիւր ունինք եղբր...

– Ճամբաները բոլոր գոցուած են:

– Հինգ օր է Եւրոպայէն թղթաբեր եկած չէ:

– Գալիք ալ չունի:

– Ամէն բան պիտի սղէ:

– Քանի մը օխա\*\* բաթաթէս\*\*\* առնելու է:

Մնունդի այս մտահոգութեան վրայ կը ծանրանար զինուո-  
րագրութեան խնդիրը: Բացի պատերուն վրայ փակցուած պաշ-  
տօնական յայտարարութիւններէն, թմբկահարներ օրն ի բուն  
փողոցէ փողոց կը շրջէին հրաւիրելով բոլոր 45 տարեկանէն  
վար եղողները երթալ արձանագրուիլ իրենց շիւպէները\*\*\*\*:

Այդ թմբկահարները ճշմարիտ մղձաւանջ մը դարձած էին

\* Խայտառակութիւն, անամօթութիւն:

\*\* Չափի միաւոր (400 գրամ):

\*\*\* Կարտֆիլ:

\*\*\*\* Մասնաճիւղերը, այստեղ՝ ոստիկանական բաժանմունքները:

պոլսեցի զինուորական տարիք ունեցողներուն եւ ծնողքնե-  
րուն համար: Օրուան ամէն ժամերուն, նոյնիսկ գիշերները,  
յանկարծ կը թնդար չարաշուք թմբուկին ձայնը: Ամէն մարդ,  
աս ու դողով, կը վազէր պատուհան, մտիկ ընելու համար թըմբ-  
կահարին ազդարարութիւնը:

Ու ասա՛ կամաց կամաց ծանօթներ, բարեկամներ կը մեկ-  
նէին, մախաղը ուսերնին, դէպի զինուորական ծառայութիւն:  
Իրա՛ւ է որ, սկիզբները, շատեր պէտէլ\* վճարելով կամ ուրիշ  
անուղղակի միջոցներով կըրցած էին գոնէ առժամապէս փոր-  
ձանքէն խուսափիլ:

Օգոստոսի մէջ էր երբ, կիրակի օր մը, ընկերացայ Նշան Թա-  
չէ մինչեւ Թէշվիքիէ Լեւոն Շաթրեանին, որ իբրեւ 36նոց զին-  
ւոր կ'երթար իր ծառայութիւնը ընելու:

Շատ մը ծանօթ Հայ երիտասարդներ հաւաքուած էին հոն:  
Տեսարանը աւելի զուարթ էր քան տխուր:

Ընդհանուր իրարանցումը, կերակրեղէն ծախողներու երթե-  
ւեկը եւ պոռչտուքը\*\*, նոյնպէս կարգ մը զինուորական պի-  
տոյքներ ծախողներուն բազմութիւնը տեսակ մը տօնավաճառի  
երեւոյթը տուած էին ընդարձակ դաշտավայրին:

Ծանօթներ իրարու քով կուգային զուարթ դէմքերով:

– Վա՛յ, դո՞ւն ալ հոս ես...

– Հարկաւ, երեսուննոցներուն մէջ եմ:

– Այս կ'ընակի մախաղդ քանիի՞ առիւր:

– Քսանը հինգ զրուշի:

– Խարուեր ես, ես 18 զրուշի առի եւ աւելի մեծ է:

– Ո՛ւր պիտի տանին մեզի:

– Չեմ գիտեր:

Ու այսպէս, ուրախ, անտարբեր, խօսակցութիւնը կը շարու-  
նակուէր:

\* Փոխարժէք, այստեղ՝ զինուորական ծառայութիւնից ազատուելու հա-  
մար կատարուած վճարում:

\*\* Գոռգոռոցը, աղմուկ-աղաղակը:

Անդին աւելի տարէցններ կ'երեւային որոնք ո եւ է բեռ չու- նէին հետերնին:

- Աս ի՞նչ է, դուն հետդ բան չես առեր:
- Ես քառասուննոցներուն մէջն եմ:
- Ուրեմն ինչո՞ւ եկեր ես:
- Բարեկամներ տեսնելու:
- Քու կարգդ ալ կուգայ քանի մը օրէն:
- Տափուլին\* կը սպասեմ կոր որդիս առնել գալու համար:
- Մինակ ես չեմ ա՛, հարուստ, աղքատ ամէնքն ալ հոս են:

Անշուշտ այդ բազմութեան մէջ տխուրներ, մտածկոտներ ալ կը գտնուէին, երիտասարդներ, որոնք իրենց սիրելիներուն վրայ կը մտածէին որոնցմէ հազիւ կէս ժամ առաջ բաժնուած էին արցունքոտ աչքերով:

Բայց շուրջերնին տիրող իրարանցումն ու ոգեւորութիւնը իրենց վրայ ալ կ'ազդէ եւ ի վերջոյ իրենք ալ կը խառնուին ընդհանուր խօսակցութեան:

Ձինուորագրութիւնը այդ միջոցին հեշտ կ'երեւար, որովհետեւ, ինչպէս ըսի, ամէնուն համոզումը այն էր որ պատերազմը շատ կարճ պիտի տեւէր, ասկէ զատ Թուրքիա դեռ մասնակից չէր ընդհանուր կռիւին եւ չէր կարծուեր թէ իթթիհատականները յիմարութիւնը ա՛յնքան առաջ պիտի տանէին որ Պալքանեան պատերազմին ձախողանքէն հազիւ պրծած՝ նոր արկածախնդրութեան մը մէջ նետուէին: Ձինուորական ծառայութեան գացողները կ'ենթադրէին թէ՛ քանի մը ամիս մարզանք ընելէ ետքը պիտի վերադառնային իրենց տեղը:

Ասոր համար շատեր որոնք պէտէլ վճարելու կարող էին, նախընտրեցին զինուորական ծառայութիւնը:

– Յիսուն ոսկին ես չե՞մ կրնար կոր ուտել,– մտածելով:

Կառավարութիւնն ալ պաշտօնապէս յայտարարած էր իր չէզոքութիւնը, իսկ գալով զօրահանութեան, ըսած էր թէ այդ ո-

\* Թմբուկից:

րոշումը դրապէս կարենալ գործադրելու համար էր որ մասնա- կի զօրակոչ կ'ընէր:

Նոյն միջոցներուն էր, երբ օր մը, փողոցին մէջ, հանդիպե- ցայ թղթատարական նախարար Ոսկան էֆէնտիի:

Բնականաբար մեր խօսակցութիւնը դարձաւ օրուան հրա- տապ դէպքերուն շուրջը:

Ոսկան էֆէնտին շատ յոռետես գտայ:

– Այս մարդիկը Գերմանիոյ պիտի միանան ու պիտի պատե- րագմին,– ըսաւ:

– Բայց կատարեալ յիմարութիւն է ատիկա,– դիտել տուի:

– Յիմարութիւն կամ ո՛չ, իրողութիւնը այս է:

– Եւ արդիւնքը ի՞նչ պիտի ըլլայ:

– Իրենց համար շատ գէշ, որովհետեւ կասկած չի կայ թէ ի վերջոյ Գերմանիա պիտի յաղթուի:

Արդարեւ, ինչպէս ամէն Հայ, Ոսկան էֆէնտի ալ նոյն հա- մոզումը ունէր:

– Միայն թէ,– աւելցուց,– մեզի համար շատ վտանգաւոր շրջան մը պիտի անցընենք: Իցիւ թէ\* գործը երկար չտեւէր:

Կառավարութիւնը, իբրեւ թէ իր չէզոքութիւնը շեշտելու համար, հետզհետէ միջոցներ ձեռք կ'առնէր:

Այսպէս պատերազմէն քիչ յետոյ նեղուցները փակուեցան:

Ձինուորական իշխանութեան հրամանով որոշուեցաւ գիշեր- ւան ժամը 10-էն գոցել բոլոր սրճարանները, թէյարանները, գարեջրատունները եւ այդ կարգի զբօսատեղիները:

Թերթերու գրաքննութիւնը հաստատուեցաւ:

Որոշապէս թուականը չեմ յիշեր, բայց նոյն միջոցներուն էր երբ օր մը լուր բերին ինծի թէ՛ Ֆրանսական դեսպանատունը գտնուող Հայ մը կ'ուզէր անպատճառ զիս տեսնել:

Հետաքրքիր՝ դիմեցի դեսպանատուն եւ յանկարծ դէմս գտայ Թորգոմը, Բիէն Լօթիի հետ մենամարտելու գացող պուլ-

\* Երանի թէ:

կարահայ սպան, որուն պատկերը հրատարակած ու գովեստը ըրած ըլլալնուս համար «Ժամանակ» շաբաթ մը դադարման դատապարտուած էր ու պատասխանատու խմբագիրը, Հրանդ Սամուէլ, մազ մնացած էր որ Սինոպ աքսորուէր, եթէ Ջաւէն պատրիարք չմիջամտէր:

– Ի՞նչ ունիս հոս, – գոչեցի տեսնելով մեր արկածախնդիր բարեկամը:

– Պուկարական բանակը թողուցի ու փախայ, – ըսաւ:

– Ինչո՞ւ համար...

– Որովհետեւ այդ անպիտանները Գերմանիոյ ու Թուրքիոյ պիտի միանան ու ես չեմ ուզեր անոնց հետ կողք կողքի կռուիլ Ֆրանսայի ու Անգլիոյ դէմ:

– Հիմա ի՞նչ է միտքդ:

– Ռուսիա պիտի անցնիմ եւ ռուսական բանակին մէջ ծառայութեան պիտի մտնեմ:

Եւ Թորգոմ բացատրեց իր կացութիւնը:

Զինուորական նոր պաշտօնով մը Տէտէ Աղաճ ղրկուած միջոցին՝ փախած էր ու էտիրնէէն երկաթուղիով եկած էր Պոլիս:

– Բայց հոս, եթէ ոստիկանութիւնը իմանայ, կրնայ քեզ ձերբակալել, – դիտել տուի:

– Անշուշտ, – պատասխանեց, – եւ ճիշտ ասոր համար է որ, հոս, Ֆրանսական դեսպանատունը ապաստանեցայ, բայց, դժբախտաբար, աւելի երկար ատեն չեմ կրնար մնալ հոս եւ իրենց հիւրընկալութիւնը չարաչար գործածել, պէտք է որ հիմա մեկնիմ հոսկէ եւ ուրիշ տեղ մը գտնեմ ինծի, մինչեւ որ յաջողիմ ճամբայ ելլել դէպի Ռուսիա: Ո՛չ միայն թրքական ոստիկանութիւնը՝ այլ նաեւ պուկար կառավարութիւնն ալ ապահովաբար կը հետապնդէ զիս եւ գիտէ թէ Պոլիս ապաստանած եմ: Ինծի ապահով տեղ մը պէտք է գտնաս:

– Բայց ո՞ւր... քեզի պէս վտանգաւոր մէկը ո՞վ կը համարձակի քովը պահել:

Երկար խորհրդակցութենէ ետքը, որոշեցինք գոնէ նոյն գի-

շերը օթէլ մը տեղաւորել զինքը եւ հետեւեալ օր աւելի յարմար թաքստոց մը գտնել:

Խօսակցութեան միջոցին՝ Թորգոմ յայտնեց նաեւ որ նիւթական շատ անձուկ վիճակի մը մէջ կը գտնուի. թէ վրան հազիւ քանի մը Ֆրանք ունի եւ թէ առնուազն հազար Ֆրանք պէտք է իրեն ինքզինք գոնէ Օտեսա նետելու համար:

– Անգամ մը որ հոն հասնիմ կրնամ գլխուս ճարը տեսնել, – յայտարարեց:

Իբրեւ բռն միակ պայուսակ մը ունէր: Տղու մը միջոցաւ զայն փոխադրեցի Սափուա օթէլը ուր քիչ ետքը ինքն ալ եկաւ:

Հիմա կը մնար հազար Ֆրանքը ճարել:

«Ահաւասիկ խնդիրը», – ինչպէս կ'ըսէ Շէքսպիր:

– Հարուստները պէտք է տան, – ըսաւ Թորգոմ, – ես ազգին համար զոհուած մարդ մըն եմ, ազգին պատիւը բարձր պահելու համար մինչեւ Բարիզ գացի ու մենամարտեցայ ամէնէն ճարտար սուսերամարտիկին հետ ու ճիշտ սրտէս վիրաւորուեցայ:

Եւ Թորգոմ շապիկը բանալով ցոյց տուաւ սպիացած վէրքին նշանը:

– Ազգային փառք մըն եմ ես այսօր, – շարունակեց, կէս լուրջ կէս ծաղրական շեշտով մը, – եւ այսչափ զոհողութիւն պէտք չէ որ զլանան ինծի:

– Իրաւունք ունիս, – պատասխանեցի, – բայց մեր հարուստները այնքա՛ն վախկոտ են որ եթէ անունդ լսեն՝ ո՛չ թէ միայն դրամ տալու պիտի վարանին, այլ քուններին ալ պիտի փախչի:

– Ի՞նչ ընենք ուրեմն...

Կը մտածէի թէ որո՞ւ կրնայի դիմել որ կարող ըլլար գնահատել Թորգոմի պէս մէկը եւ միանգամայն ի վիճակի ըլլար հազար Ֆրանք տալու:

Զօհրապը միտքս ընկաւ:

– Թերեւս իրմէ կարենանք առնել, – ըսի:

– Այո՛, – գոչեց Թորգոմ, – լաւ մտածեցիր, Զօհրապ զիս ալ

լաւ կը ճանչնայ եւ զգացումի ալ տէր է, վաղը առտու կանուխ եկո՛ւր եւ միասին կ'երթանք իրեն:

Ու բաժնուեցայ իրմէ:

Հետեւեալ առտու կանուխ վերադարձայ իր մօտ: Թորգոմ տննդային վիճակի մէջ էր: Լուր առած էր թէ ոստիկանութիւնը իմացած է իր Պոլիս գտնուելը եւ թէ խուզարկութիւններու ձեռնարկած է:

Հապճեպով զգեստները հագաւ: Պայուսակին մէջէն խոշոր ըէվօլվէր մը հանեց իր կաշիէ պատեանովը ու մէջքին կապեց, յետոյ աւելի փոքր պրատուինկ մը տեղաւորեց գրպանը:

– Եթէ փողոցը զիս ձերբակալել ուզեն՝ պիտի դիմադրեմ, ու ի հարկին վրանին կրակ պիտի ընեմ...

Այս տրամադրութեան ներքեւ գտնուող մէկու մը հետ ճամբայ քալելը հաճելի բան մը չէր. այսուհանդերձ ստիպուեցայ համակերպիլ, բախտի յանձնելով ամէն բան:

Մինչեւ Ղալաթիա պիտի երթայինք, Լաճիվէրտ խան, ուր կը գտնուէր Ձօհրապի գրասենեակը:

Բայց անկէ առաջ Թորգոմ ուզեց ուսական հիւպատոսարանը հանդիպիլ: Անվտանգ անցանք Շիտակ ճամբէն, հիւպատոսարան մտանք ուր բարեկամս տեսակցեցաւ մէկ քանի պաշտօնեաներու հետ: Յետոյ ճամբանիս շարունակեցինք ու եկանք Լաճիվէրտ խան:

Ձօհրապ հոն չէր: Իր զաւակը եւ գրագիր մը մեզ ընդունեցին: Նոյն միջոցին հոն կը գտնուէր նաեւ Արամ Անտոնեան:

Ըսինք թէ կը փափաքէինք Ձօհրապ էֆէնտիի հետ տեսակցիլ:

– Հայրիկս քիչ մը առաջ հոս էր, – պատասխանեց զաւակը, – չեմ գիտեր թէ ո՛ւր գացած է, կեցէ՛ք քանի մը տեղ թէլէֆօն ընեմ եւ եթէ կարենամ հետը խօսիլ կ'ըսեմ որ հոս իրեն կ'սպասէք կոր:

Եւ մտաւ, Արամ Անտոնեանի հետ, Ձօհրապի սենեակը, մինչ մենք դուրսը, սպասման սրահը մնացինք:

Քիչ ետքը վերադարձաւ մեզի եւ ըսաւ թէ անկարելի եղած էր հօրը հետ տեսակցիլ:

– Եթէ կ'ուզէք՝ սպասեցէք, թերեւս կուգայ, – ըսաւ:

Ժամու մը չափ սպասեցինք: Միջոց մը Արամ Անտոնեան մէկ կողմ քաշեց զիս եւ ըսաւ.

– Պարապ տեղը մի՛ սպասէք, Ձօհրապը գալիք չունի. տղան հետը խօսեցաւ եւ ըսաւ թէ Թորգոմը եկած է ու զինքը տեսնել կ'ուզէ եւ խորհուրդ տուաւ որ գրասենեակ չհանդիպի: Ձօհրապն ալ պատասխանեց որ ժամ առաջ գրասենեակէն հեռացնելու նայի Թորգոմը...:

Ի վերջոյ, կէսօրին մօտ, գրագիրը յայտարարեց.

– Ա՛լ ասկէ ետքը Ձօհրապ էֆէնտի չի գար, Պոլիս անցած ըլլալու է, որովհետեւ կարեւոր գործ մը ունի այսօր դատարանը: Դատարանէն ետքն ալ ուղղակի շոգենաւ կ'երթայ:

Արդարեւ նոյն միջոցին Ձօհրապ Մեծ Կղզի կը նստէր:

Յուսահատ՝ դուրս ելանք:

– Ի՞նչ պիտի ընենք հիմա, – հարցուց Թորգոմ:

– Իրա՛ւ որ չեմ գիտեր:

– Բայց պէտք է որ անպատճառ տեսնենք Ձօհրապը...

– Դժբախտաբար Կղզին կը բնակի, եթէ ո՛չ գոնէ իրիկունը տեսնելու փորձ մը կ'ընէինք:

– Ուրեմն վաղը առտու Մեծ Կղզի ուղղակի իր տունը երթանք:

– Երթանք, – ստիպուեցայ համակերպիլ:

Հետեւեալ օրը կիրակի էր ու ապահովաբար պիտի կրնայինք Ձօհրապը իր տունը գտնել:

Ժամադիր եղանք կամուրջին վրայ, կղզիներու նաւամատոյցը եւ իրարմէ բաժնուեցանք:

Նոյն օրն իսկ իմացայ որ Բերայի մէջ ոստիկանները իբր Թորգոմ ձերբակալած էին Սարգիս Մինասեանը որ հեռուէ հեռու նմանութիւն մը ունէր մեր բարեկամին հետ:

Կիրակի առտու գացի կղզիներու շոգենաւր: Սակայն Թոր-

գոմ չեկաւ ու ես առանձին գացի Մեծ Կղզի ու հետեւեալ առտուն ուղղուեցայ դէպի Նիզամ ուր կը գտնուէր Զօհրապի բնակարանը:

Ներքնապէս գոհ էի որ Թորգոմ չէր եկած, քանի որ Արամ Անտոնեանէն իմացած էի որ իր ներկայութիւնը դժգոհութիւն պիտի պատճառէր Զօհրապի:

Հիմա առանձին՝ կրնայի իրեն հետ տեսնուիլ ու ազատօրէն ամէն բան բացատրել:

Բարբախտաբար նոյն միջոցին Զօհրապը տեսայ որ դէպի նաւամատոյց կուգար: Միասին մեր ճամբան շարունակեցինք: Երբ պատմեցի իրեն Թորգոմի գալուստը եւ իրմէ սպասած ակընկալութիւնը, շատ յուզուեցաւ.

– Ամա՛ն, – գոչեց, – չըլլայ որ դայ զիս տեսնելու, ըսէ իրեն որ դժբախտաբար այս միջոցիս ի վիճակի չեմ իր ուզած գումարը տալու, եթէ խնդիրը փոքրիկ գումարի մը վրայ ըլլար, ամենայն Հաճութեամբ... ինչ որ ալ ըլլայ՝ խորհուրդ տո՛ւր իրեն որ իսկոյն հեռանայ Պոլսէն, եթէ ձեռք անցնի՝ գործը գէշ է: Հիմա ժամանակները փոխուած են...

Հանդարտեցուցի զինքը եւ ըսի որ ամէն ջանք պիտի ընեմ որպէսզի Թորգոմ ո՛ր եւ է կերպով զինքը անհանգիստ չընէ:

Յետոյ, մեր խօսակցութիւնը շարունակեցինք օրուան կացութեան շուրջը:

Երբեք Զօհրապը չէի տեսած այնքա՛ն յոռետես որքան այդ օրը:

– Սարսափելի օրերու մէջ կ'ապրինք կոր, – ըսաւ, – այս թուրքերը բոլորովին փոխուած են, մանաւանդ մեզի հանդէպ...

– Ի՞նչ բանէ կը վախնաք, – հարցուցի:

– Կը վախնամ որ մեզ ամէնքս ալ ջարդեն, – պատասխանեց Զօհրապ, իրապէս յուզուած շեշտով մը: – Այդ ընդհանուր պատերազմը իրենց համար առիթ մըն է որ երբեք ձեռք չպիտի կըրնան անցընել:

Այդ օրէն ետքն ալ, քանի անգամ որ Զօհրապի հետ խօսակ

ցելու պատեհութիւնը ունեցայ, նոյն տրամադրութեան մէջ գտայ զինքը:

– Պիտի ջարդեն մեզի, – կը կրկնէր:

Ու ասիկա սեւեռուն գաղափար մը եղած էր իր մէջը:

Գալով Թորգոմին՝ երկուշաբթի երբ Կղզիէն Պոլիս վերադարձայ ու եկայ «Ժամանակ»ի խմբագրատունը ինծի ըսին որ Հոն եկած էր զիս փնտռելու:

Ցերեկուան մօտ թէլէֆօնով խօսեցաւ հետս:

– Ռուսական հիւպատոսարանը կը գտնուիմ, – ըսաւ, – ու կէսօրէն ետքը ռուսական շոգնաւով պիտի մեկնիմ Օտեսա. շոգենաւ եկուր զիս տեսնելու:

– Դրամի խնդիրը ի՞նչ ըրիր, – հարցուցի:

– Կարգադրեցի, – պատասխանեց:

Այս լուրը շատ ուրախացուց զիս, որովհետեւ անկեղծօրէն կը փափաքէի որ բարեկամս ազատէր իր նեղ կացութենէն:

– Անպատճառ դաս շոգենաւ, զիս տեսնելու, – կրկնեց թէլէֆօնին մէջէն:

Խոստացայ երթալ, բայց վերջին պահուն վարանեցայ ու չգացի: Շատ իբաւունք ունիմ եղեր խոհեմութեամբ շարժելու, որովհետեւ շոգենաւին շուրջ ոստիկանութիւնը կը հսկէ եղեր, ինչպէս յետոյ իմացայ:

Ամիսներ ետքը իմացանք որ Թորգոմ Բեդերսպուրկի պուլկարական դեսպան Ռատկօ Տիմիթրիէֆի բանակին մէջ կը կռուի եղեր Կալիցիոյ սահմաններուն վրայ, թէ նոյնիսկ քաջութիւններ գործած, վէրքեր ստացած ու աստիճանի բարձրացումներ ունեցած է:

Իսկ աւելի ետքը, անցած է Կովկաս ու միացած հայկական զունդերուն եւ Վանի գրաւումին մասնակցողներէն մէկը եղած է:

Ընդհանուր պատերազմի առաջին արդիւնքներէն մէկն ալ եղաւ քափիւթիւլասիօններու\* ջնջումը, որ տեղի տուաւ, իբ

\* Համաձայնագրերի:

րեւ թէ, ժողովրդական խանդավառ ցոյցերու, յատկապէս կազմակերպուած Իթթիհատի կուսակցութեան կողմէ:

Գրեթէ միեւնոյն ժամանակ Կէօպէն եւ Պրեսլաւ գերմանական մարտանաւերը, անգլիական նաւատորմէն հալածուած, կը յաջողէին ապաստանիլ Տարտանէլի նեղուցը եւ օր մը ետքը, պաշտօնապէս կը ծանուցուէր թէ այդ երկու զրահաւորները թուրք կառավարութիւնը գնած էր եւ միացուցած օսմանեան նաւատորմին:

Բոլոր ասոնք կը զգացունէին թէ Թուրքիա կը պատրաստուէր մասնակցելու պատերազմին, Գերմանիոյ հետ միացած:

Բայց տակաւին շատեր չէին հաւատար այսպիսի հաւանականութեան եւ կը կարծէին թէ վերջին վայրկեանին Իթթիհատ պիտի հրաժարէր այսպիսի յիմարութենէ մը:

Սեպտեմբերի մէջ Տարտանէլի նեղուցը կը գոցուի նաեւ առեւտրական շոգենաւերու համար:

Հայերու դէմ արդէն իսկ թշնամութիւնը ծայր կուտայ Թուրքերու մէջ:

Այս բանին կը նպաստէ եւրոպական թերթերու այն լուրը թէ՝ Ռուսիոյ կայսրը ուքազով\* մը անկախութիւն խոստացեր է Կովկասի Հայերուն:

Նոյն միջոցին Արեւելեան նահանգներու բարենորոգմանց քննիչ պ. Լօֆֆ, որ Վան կը գտնուէր պատերազմը ծագած միջոցին, կը վերադառնայ Պոլիս իր հետեւորդներով:

Հոկտեմբեր 18/31ի թերթերը կը ծանուցանեն թէ օսմանեան նաւատորմին մէկ փոքր մասը Սեւ ծովի մէջ փորձեր կատարելու ատեն ռուս նաւատորմը, որ նախապէս բոլոր այս փորձերուն կը հետեւէր եւ զանոնք կը խանգարէր, ի վերջոյ թշնամութիւններու սկսած է եւ յարձակած է օսմանեան նաւատորմին վրայ:

Ասկէ առաջ եկած կռիւին մէջ օսմանեան նաւատորմը ընկը՞ մած է 5000 թօնօնոց Բիրօթ ականադիր նաւը, յետոյ ծանր

\* Հրամանագրով, հրովարտակով:

վնասներ տուած է ռուս թորփիլանաւերէն մէկուն եւ գրաւած է ածխաբարձ նաւ մը:

Յետոյ, Կայրէթը Միլլիէ թորփիլանաւին կողմէ արձակուած թորփիլ մը ընկղմած է 1100 թօնօ տարողութեամբ Քուպանէց թորփիլահալածը եւ Մուլվէնէթը Միլլիէ թորփիլանաւին կողմէ արձակուած թորփիլ մը շատ ծանր վնասներ պատճառած է ռուս եզերապահի մը, եւ այլն:

Թերթերը կը ծանուցանէին թէ ծովային կռիւները կը շարունակուին «մեր նաւատորմին նպաստաւոր կերպով»:

Միեւնոյն ատեն կը ծանուցանէին թէ՝ կայսերական կառավարութիւնը ամենաբուռն կերպով պիտի բողոքէ ռուսական նաւատորմին կողմէ մեր նաւատորմին մէկ փոքր մասին դէմ ուղղուած թշնամական այս արարքին համար:

Յաջորդ օրն իսկ կը մեկնին ռուս դեսպանն ու հիւպատոսը եւ օր մը վերջն ալ Ֆրանսական ու անգլիական դեսպանները:

Այսպէս էնվէր ու Թալէաթ կը հասնին իրենց նպատակին ու Թուրքիան կը նետեն արկածախնդրութեան մը մէջ, ուրկէ դուրս պիտի գար փճացած ու կործանած:

Քանի մը օր ետքը արդէն իսկ Տարտանէլի ռմբակոծումը կ'սկսի եւ Կովկասի սահմաններուն վրան առաջին թնդանօթները կ'արձակուին:

Հակառակ թուրք վարձկան մամուլի պոռչտուքներուն\* եւ բռնի կազմակերպուած ցոյցերուն, Թուրքիոյ ընդհանուր պատերազմին մասնակցութիւնը բնաւ խանդավառութիւն յառաջ չբերաւ: Ընդհակառակը մտատանջութեան մատնեց ժողովուրդը, մանաւանդ զինուորական տարիք ունեցողները:

Նոյեմբեր 1/14ին տեղի ունեցաւ մեծ միթինկ մը, միշտ Իթթիհատի կողմէ պատրաստուած եւ որու մէջ Ճիհատի յայտարարութիւնը եղաւ:

Յետոյ հսկայ թափօր մը, որուն կը մասնակցէին բոլոր Թուրք արհեստաւորները, լէպլէպիճի\*\*, բռնակիր, կառապան, մաս-

\* Այստեղ՝ վայնասուցի:

\*\* Խորոված սիսեռ վաճառող:



վաճառ եւ այլն, եւ այլն, փողոցները շրջեցաւ տավուլ զուռնայի խլացուցիչ աղմուկներով:

Այս խառնիճազանճ ամբոխը, որուն առջեւէն վայրագ դէմքով եւ այլանդակ տարագով մարդիկ կը քալէին մերկ սուրերը օդին մէջ ճօճելով, անցաւ կամուրջէն եւ ուղղուեցաւ Բերա, թըշնամական ցոյցեր ընելու համար Ֆրանսական, ռուսական եւ անգլիական դեսպանատուններուն առջեւ:

Յուցարարները այսքանով չբաւականացան սակայն եւ իրիկւան դէմ յարձակեցան Թօքթիւեան սրճարանին վրայ, ապակիները խորտակեցին եւ կարասիներն ու սպասները ջարդ ու փշուր ըրին եւ հոն գտնուող մէկ քանի քրիստոնեայ յաճախորդներ ալ գաւազանահար ծեծեցին:

Այս վայրենի արարքով վերջ գտաւ Ճիհատի յայտարարութիւնը:

Յաջորդ օրերուն թուրք ամբոխը, ոստիկաններու եւ զինւորներու աջակցութեամբ, քանդեց Քալաթարիա գտնուած ռուսական գեղեցիկ ու հոյակապ յիշատակարանը:

Ճիհատի յայտարարութիւնը, անոր յաջորդող դէպքերը եւ թուրքերուն հակաքրիստոնէական ցոյցերը, որոնք գրեթէ ամէն օր զանազան ձեւերով կը կրկնուէին, սկսան բաւական մտատանջութիւն պատճառել պոլսեցիներուն եւ մանաւանդ Հայերուն, որոնք դէմ մասնաւոր ատելութիւն մը կարծես ծայր տակ'սկսէր:

Դեկտեմբերի վերջերը թրքական բանակը յաջողութիւններ ունեցաւ Կովկասի սահմաններուն վրայ եւ օր մըն ալ լսեցինք թէ Արտահանը գրաւուած է, ինչ որ զարմանք եւ մանաւանդ յուսախաբութիւն պատճառեց մեզի:

Այս յաղթանակը տօնուեցաւ փայլուն կերպով: Ոստիկանութեան հրամանով բոլոր խանութները եւ վաճառատունները, ինչպէս նաեւ խմբագրատունները դրօշազարդուեցան:

Քիչ յետոյ սակայն, 1915 փետրուարի մէջ, Տարտանէլի ումբակոծումը սաստկացաւ, ինչ որ շատ պաղ ջուր լեցուց թրքական խանդավառութեան վրայ:

Պահ մը նոյնիսկ ըսուեցաւ թէ նեղուցը չպիտի կրնար դիմանալ եւ թէ անգլիական մարտանաւերը մէկ օրէն միւսը պիտի երեւնային Մարմարայի մէջ:

Զգայացուեց լուրեր, ամէն օր, բերնէ բերան կը շրջէին:

– Իմացա՞ք կառավարութիւնը կը պատրաստուի եղբր Պուսէն մեկնելու:

– Պուխը զինուորական իշխանութեան պիտի յանձնուի:

– Հանրային պարտքի վարչութիւնը սնտուկներ պատրաստել կուտայ կոր տետրակները փոխադրելու համար:

– Կայսերական թանգարանը կը պարպեն կոր եղբր:

– Կառախումբ մը, շոգիի տակ, պատրաստ կը սպասէ եղբր Հայտար փաշայի կայարանը, եւ այլն:

Այդ լուրերէն շատերը, թէեւ հնարածոյ, բայց հաւատացողներ կը գտնէին:

Գալով ընդհանուր պատերազմի լուրերուն՝ ստիպուած էինք գոհանալ «Վօլֆ» գործակալութեան պաշտօնական զեկոյցներովը: Յրանսական, իտալական կամ անգլիական ո եւ է թերթ այլեւս չէր մտներ Պուխ:

Երբեմն, անուղղակի միջոցներով, կը յաջողէինք բարիզեան մէկ քանի թերթեր ձեռք ձգել զորս անյագութեամբ կը լսփէինք:

Գիտէինք սակայն որ վճռական կռիւներ տեղի չէին ունենար Արեւմտեան ճակտին վրայ: Ամէն բան դանդաղ կ'ընթանար ու այլեւս ո՛չ ոք կը հաւատար թէ պատերազմը քանի մը ամիսէն պիտի վերջանար:

Լօրտ Քիչնէր արդէն յայտարարած էր թէ հինգ կամ եօթը տարի պիտի տեւէր այս պատերազմը:

Աւստրիոյ սահմաններուն վրայ Ռուսերը կը շարունակէին իրենց յառաջխաղացութիւնը եւ մարտի մէջ լսեցինք Բրդէմիւլի անկումը: Բայց հող կանգ առաւ նաեւ ռուսական յաջողութիւնը:

Թուրքերը գիտէին թէ Հայերուն համակրութիւնը դէպի ո՞ր կողմը կը հակի. ու այս բանը կը զայրացնէր զիրենք:

«Գարակեօզ» օր մը գրեց. «Եթէ կ'ուզէք հասկնալ պատե-  
րագմին ընթացքը, Հայերուն դէմքին նայեցէ՛ք: Եթէ Հայերուն  
դէմքը կը խնդայ՝ ըսել է որ Ֆրանսացիները եւ Ռուսերը յաղ-  
թող են, իսկ եթէ իրենց դէմքը տխուր է՝ վստահ եղէք որ Գեր-  
մանացիներն են յաղթողը»:

Այդ միջոցներուն զրոյց մը մէջտեղ ելաւ, որուն շատ հա-  
ւատք չընծայեցինք:

Իբր թէ ոստիկանութիւնը Հայերու ցուցակներ կը պատրաս-  
տէ եւ այդ ցուցակներուն համեմատ շատեր պիտի աքսորուին:

– Վեց հազար Հայերու ցուցակը պատրաստուած է,– լուր  
կը բերէր մին:

– Ո՛հ, միայն երկու հազար հոգիի ցուցակ մը կայ եղեր,– կը  
հաւաստէր ուրիշ մը:

Օրերով այդ ցուցակին լուրը լսեցինք, բայց, ինչպէս ըսի, ա-  
ռանց հաւատք ընծայելու:

Սակայն բոլոր այդ զրոյցները հետզհետէ մտահոգութեան  
մթնոլորտ մը կը ստեղծէին մեր շուրջը:

Օդին մէջ սպառնալիք մը կար:

## ՉԱՐԱՇՈՒՔ ԳԻՇԵՐԸ

1915 ապրիլ 11 շաբաթ, իրիկուան դէմ, Սարգիս էֆէնտի Գօ-  
չունեան խմբագիրներու սենեակը մտնելով ըսաւ.

– Տղաք, դաշնակցականները կը ձերբակալեն կոր եղեր...

– Ո՞վ ձերբակալած են,– հարցուցինք:

– Տպարանատէր Արամ Շահէնը, գրավաճառ Ստեփան Քիւրք-  
չեանը, Հրաչը, յետոյ ուրիշ մէկ քանիներ որոնց անունը չկըր-  
ցայ իմանալ:

– Պատճառը ի՞նչ է արդեօք:

– Իբր թէ Գարեգին Փաստըրմաճեանը հինգ հարիւր ձիա-  
ւորներով էրզրում մտեր ու քաղաքին տիրեր է ու այս լուրը  
հոս հասնելուն՝ որոշեր են դաշնակցականները ձերբակալել:

Լուրը այնքա՛ն անհաւատալի էր որ կարեւորութիւն  
չտուինք: Իսկ գալով ձերբակալուածներուն՝ ենթադրեցինք որ  
անհատական խնդրի մը համար տարուած են ոստիկանատուն:

Իրիկունը երբ մեկնեցայ խմբագրատունէն մէկ քանի բարե-  
կամներու հարցուցի թէ իմացա՞ծ էին այդ ձերբակալութիւն-  
ները:

– Ո՛հ,– պատասխանեցին:

Կ'երեւայ որ սխալ կամ սուտ լուր մըն է, մտածեցի ու ա՛լ չըզ-  
բաղեցայ անով:

Հետեւեալ առտու կանուխ մեկնեցայ տունէն ու գացի տի-  
կին Թէոդիկը տեսնելու որ մենէ ո՛չ շատ հեռու Օսման պէյի մօ-  
տերը կը բնակէր: Նոյն միջոցին իր ամուսինը նոր ձերբակալ-  
ւած էր եւ յոյս ունէինք որ ազդեցիկ միջամտութեամբ մը պի-  
տի կրնար օձիքը ազատել եւ ճիշտ այդ խնդրին համար կ'ուզէի  
տեսնել զինքը:

Տիկին Թէոդիկը գտայ շատ յուզուած վիճակի մը մէջ:

– Երէկ գիշեր մեծ սրտադող մը անցուցինք,– ըսաւ:

– Ի՞նչ պատահեցաւ,– հարցուցի:

– Կէս գիշերին եկան ձերբակալեցին Բարսեղ Շահապը որ մեր վրայի աբարթըմանը\* կը բնակի...,– խեղճ կնոջ յուզումը մինչեւ հիմա չէր հանդարտած:

Յիշեցի առջի իրիկուան Սարգիս էֆէնտիին հաղորդած լուրը եւ ըսի.

– Կ'երեւայ որ դաշնակցականներու դէմ հետապնդում մը կը կատարուի, որուն պատճառը յայտնի չէ, ինչ որ ալ ըլլայ, չեմ կարծեր որ խնդիրը մեծ կարեւորութիւն մը ունենայ: Այսօր հարկաւ կը հասկնանք իրողութիւնը:

Տիկին Թէոդիկին քովէն մեկնելով գացի Թաքսիմ գերեզմանատան անկիւնի սրճարանը, ուր ամէն առտու սովորութիւն ըրած էի հանդիպիլ ու սուրճ մը խմել:

Հագիւ թէ սուրճը բերած էին՝ երբ ծանօթ մը մօտեցաւ ինձի եւ ցած ձայնով ըսաւ.

– Երէկ գիշեր Սարգիս Մինասեանը եւ Դանիէլ Վարուժանը ձերբակալեցին, ինչպէս նաեւ այս սրճարանին տէրը, կարծեմ հոս նստիլը շատ ապահով չէ...

Դուրս ելայ սրճարանէն բաւական մտատանջութեան մատնուած:

Կը խորհէի թէ ձերբակալուածները ամէնքն ալ դաշնակցական ճանչցուած անձեր էին եւ եթէ հետապնդում մը կար, ուղղակի այդ կուսակցութեան դէմ էր, հետեւաբար, գոնէ ես անձնապէս վախնալու բան մը չունէի: Ասիկա կը սրտապնդէր զիս, բայց մտատանջութիւնս չէր փարատեր բոլորովին:

Այսպէս հասայ մինչեւ Թաքսիմի Հրապարակը ուր հանդիպեցայ պ. Պետրոս Ատրուսիի հօր:

– Երէկ գիշերուան ձերբակալութիւնները իմացա՞ր,– հարցուց վշտահար դէմքով մը:

\* Բնակարանը:

– Այո՛,– պատասխանեցի,– կ'երեւայ որ դաշնակցականներու դէմ բան մըն է:

– Ի՞նչ կ'ըսես,– գոչեց,– դաշնակցականի խնդիր չէ... Բիւզանդ Քէչեանն ալ բռնեցին տարին:

Պ. Ատրուսի Ֆերիտիէ փողոցը կը նստէր ու դրացի էր «Բիւզանդիոն»ի խմբագրապետին:

Այս ձերբակալման լուրը տակնուվրայ ըրաւ իմ ենթադրութիւններս:

Բիւզանդ Քէչեան ձերբակալուած... ուրեմն կուսակցական խնդիր չէր այս:

– Տոբթոր Թորգոմեանն ալ ձերբակալուած է,– շարունակեց պ. Ատրուսի,– ինչպէս նաեւ տոբթոր Տաղաւարեանը եւ դեռ ուրիշներ ալ որոնց անունը չկրցայ տակաւին իմանալ:

– Բայց ի՞նչ է պատճառը...

– Մարդ չգիտեր:

– Ինչպէ՞ս միեւնոյն պատճառին համար կը ձերբակալուին Քէչեան, Տաղաւարեան, Թորգոմեան եւ դաշնակցականները:

Ի գո՛ւր միտքս կը տրորէի այս առեղծուածը լուծելու համար:

– Լաւագոյն է,– խորհեցայ,– երթալ Տիրան Քելէկեանը տեսնել, անիկա թերեւս որոշ բան մը իմացած է:

Եւ ուղղուեցայ Ալիօն փողոց իր բնակարանը: Երբ սահողութիւն վեր կ'ելլէի՝ հանդիպեցայ Արթիւր էֆէնտի Մաղաքեանին որ վար կ'իջնէր:

– Տիրանը վե՞րն է,– հարցուցի:

– Տիրա՛նը,– ըսաւ զարմացած,– լուր չունի՞ս...

– Ի՞նչ կայ որ...

– Երէկ գիշեր բռնեցին տարին:

Քելէկեանին ձերբակալութիւնը ա՛լ աւելի շփոթեց զիս:

– Քեզի ինչպէ՞ս չեն ձերբակալած,– ըսաւ Արթիւր էֆէնտի:

– Բայց ինչո՞ւ պիտի ձերբակալեն:

– Չեմ գիտեր, բայց քանի որ Տիրանը, Քէչեանը, տոբթոր

Տաղաւարեանը եւ ուրիշներ ձերբակալած են, ձեզ ալ կրնան ձերբակալել:

— Ուրիշ ձերբակալուածներու անուններ ալ գիտե՞ս:

— Ո՛չ, հիմա Երրորդութեան եկեղեցին կ'երթամ կոր հասկընալու համար:

— Ուրեմն միասին երթանք:

Քառորդ մը ետքը եկեղեցիին խորհրդարանն էինք: Հոն իմացայ նաեւ Արամ Անտոնեանի, Գրիգոր Թորոսեանի, Երուանդ Թօլայեանի, Զարդարեանի, Խաթակի, Ակնունիի եւ այլն ձերբակալութիւնը:

Ա՛լ կասկած չկար, եթէ ես չէի ձերբակալուած, պարզապէս դիպուածի արդիւնք էր: Թերեւս ոստիկանները տունս չէին գտած:

Բայց անշուշտ այսօր պիտի գտնէին:

Իբրեւ ապահովութեան միջոց որոշեցի խմբագրատուն չերթալ: Յօդուածներս արդէն գրած էի ու կրնայի մէկու մը հետ ղրկել: Բայց ո՛ր երթալ ծածկուելու:

— Փողոցը մի՛ պտտիր, ապահով տեղ մը պահուըտէ՛, — խրատ տուին եկեղեցին գտնուող ծանօթներս:

Դուրս ելալ շուարած, նոյնիսկ չուզեցի Շիրտակ Ճամբան երթալ: Փողոցին մէջ կրնային ձերբակալել զիս:

Թառլա Պաշիի կողմէն ուղղուեցայ Ֆէրիտիէ ու գացի պ. Պետրոս Նշանեանի տունը: Մինչեւ կէսօր Հոն մնացի:

Կէսօրին գացի ուրիշ բարեկամի մը պ. Արշակ Պապիկեանի տունը որ Պետրոս Նշանեանի տանը դէմ կը գտնուէր:

Բարեկամ մը, Գրիգոր Գալֆայեան, եկաւ այցելութեան եւ նորանոր ձերբակալութիւններու լրբը հաղորդեց:

Ինք Պոլսոյ կողմը պիտի անցնէր: Խնդրեցի իրմէ որ ձեռագիրս «Ժամանակ»ի խմբագրատունը յանձնէ եւ միեւնոյն ատեն հարցնէ թէ զիս փնտռող եղա՞ծ է:

Ուշ ատեն եկաւ եւ ըսաւ.

— Ադէկ որ խմբագրատուն չես գացած, երկու անգամ քեզ հարցուցեր են:

— Ո՛վ...

— Ծպտեալ ոստիկաններ:

Գալֆայեան յայտնեց թէ ձերբակալուածներուն թիւը երեք հարիւրը անցած է:

Մինչեւ կէս գիշեր մնացի Պապիկեանի տունը, յետոյ ուղեցի տուն երթալ:

Պապիկեան շատ ստիպեց որ իրենց տունը անցընեմ գոնէ նոյն գիշերը: Հակառակ իր ստիպումներուն՝ ես յամառեցայ եւ գացի տունս պառկելու:

— Քանի որ բոլոր ծանօթներս ձերբակալեր են, թո՛ղ զիս ալ ձերբակալեն, — կը մտածէի:

Ասկէ գատ տակաւին չէինք գիտեր թէ գործը ո՛ր պիտի յանգէր եւ ամէնուն զաղափարը այն էր որ կառավարութիւնը սուտ եւ անհեթեթ զրպարտութեան մը վրայ այդ ձերբակալութիւնները կատարած էր, թէ անշուշտ ճշմարտութիւնը պիտի յայտնուէր ու ամէնքը պիտի արձակուէին:

Առտու կանուխ մեկնեցայ տունէս ու շիրտակ գացի Պէճիտեան տպարանը ուր կը գտնուէր բարեկամս Գրիգոր Նազարէթեան:

Ձեռագիրս կրկին ուրիշի մը ձեռքով ղրկեցի «Ժամանակ»ի խմբագրատուն:

Սարգիս էֆէնտի կրկին լուր ղրկած էր ինծի որ եկած էին դարձեալ զիս փնտռելու եւ խորհուրդ տուած էր որ պահուըտիմ ապահով տեղ մը:

Մինչեւ իրիկուն տպարանին մէջ մնացի:

Ձերբակալութիւններու մասին հետզհետէ նորանոր մանրամասնութիւններ կ'իմանայինք. երբեմն ալ չափազանցուած լուրեր:

«Ազատամարտ»ի խմբագրութիւնը խիստ հսկողութեան ենթարկուած էր: Բոլոր խմբագիրները, աշխատակիցները, պաշտօնէութիւնը ձերբակալուած էին: Ոստիկաններ խմբագրատան ներսը պահուած էին ու ներս մտնողը ձերբակալած:

Ամէն ներս մտնող ձերբակալիչի նոր անուններ կը հաղորդէր:

– Միքայել Շամտանճեանը, Կոմիտաս վարդապետը, տոբթոր ձէլալ, տոբթոր Միսքեան, տոբթոր Պողոսեան, Գասպար Չերազ, Յակոբ Գորեան ձերբակալուած են...

Քիչ մը յետոյ ոչրիչ մը կը հասնէր.

– Յէրիգիւղի տէր Վարդան քահանան ալ ձերբակալեր են, ինչպէս նաեւ Պալաքեան վարդապետը, Յովհան վարդապետը, Հայկ Խօճասարեանը, տոբթոր Թոփճեանը:

Յետոյ, դարձեալ նոր անուններ.

– Համբարձում Համբարձումեանը, Ատոմ Եարճանեանը, Շաւարշ Քրիսեանը, Տիգրան Չէօկիւրեանը, Մելքոն Կիւրճեանը, Շահրիկեանը, Արիստակէս Գասպարեանը, Գեղամ Բարսեղեանը, Ճանկիւլեանը...

Ու սարսափը կ'սկսէր տիրել ամէնուս վրայ:

– Ռոստոմ Ռոստոմեանն ալ տարեր են, Լեւոն Լարենցն ալ, Ներսէս Չաքարեանն ալ, Ենովք Շահէնն ալ, Միհրդատ Հայկազն ալ...

Ոմանք լուր կը բերէին թէ ձերբակալութիւնները կը շարունակուէին, ուրիշներ կ'ըսէին թէ դադարած էին: Ձերբակալեալներու թիւը որոշապէս գիտցող չի կար: Երկու հարիւրէն մինչեւ վեց հարիւր կը հաշուէին:

Իրիկունը Գրիգոր Նազարէթեանի հետ Օրթաքէօյ իր տունը գացինք ու հոն մնացի: Բայց այդ տեղն ալ շատ ապահով չէր, որովհետեւ հաւանական էր որ բարեկամս ալ գային ձերբակալելու:

Երեքշաբթի կանուխ միասին վերադարձանք Ղալաթիա, Պէճիտեան տպարանը:

Այդ օրը լուրերը աւելի վրդովեցուցիչ էին:

Ձերբակալեալները առջի օր աքսորուած էին, բայց ո՞ր ո՞չ ոք գիտէր: Եւ այս գաղտնիքը սարսուռ կը պատճառէր ամէնուս: Նոյնիսկ ըսուեցաւ թէ իրենցմէ տասներկու հոգին բանտին մէջ կախուած էին, թէ ուրիշներ իրենց մահապատիժը պիտի կրէին աքսորի մէջ: Յոռետեսներ չէին վարաններ հաստատե-

լու թէ՛ ամէնքը շոգենաւով Մարմարայի բացը տարուած ու ծով թափուած էին:

Նոյն օր «ժամանակ» չէր հրատարակած ո՛չ քրոնիկս եւ ո՛չ ալ «Թաղականին կնիկը» թերթօնս: Ինչ որ ցոյց կուտար թէ այլեւս վտանգաւոր մարդ մը դարձած էր:

Անհրաժեշտ էր ծածկուիլ ապահով տեղ մը:

Միտքս ինկաւ Կարապետ Տիրհէմճեանը, մտերիմ բարեկամ մը որ կը բնակէր գերմանական դեսպանատան ետեւ գտնուած տուն մը. Գապաթաշի զառիվարին վրայ, թուրք թաղի մը մէջ: Լաւագոյն թաքստոցն էր այդ: Նազարէթեան մարդ զրկեց եւ տպարան բերել տուաւ Տիրհէմճեանը որուն յայտնեցինք դիտաւորութիւննիս:

Թէեւ վտանգաւոր բան մըն էր նոյն միջոցին ինծի պէս մէկը իր տունը հիւրընկալել, այսուհանդերձ բարեկամս բնաւ չվարանեցաւ:

Նոյնիսկ գոհ մնաց որ իր տունը ընտրած եմ իբրեւ թաքստոց: Իրիկունը ուշ ատեն, միասին մեկնեցանք տպարանէն:

Նոյն օրը Սուլթան Րէշատի գահակալութեան եօթերորդ տարեդարձն էր եւ սովորականէն աւելի ոգեւորութիւն մը կար Ղալաթիոյ պողոտային վրայ:

Ճամբան հանդիպեցայ Յակոբ էֆէնտի Հաճեանի որ զարմացած մնաց զիս տեսնելով.

– Իմացայ որ դուն ալ ձերբակալուած ես, – ըսաւ:

– Կը տեսնես որ սուտ է, – պատասխանեցի:

– Շատ գոհ եմ, շատ գոհ, միայն թէ զգուշութիւն ըրէ:

– Բնականաբար:

Բարեկամս եւ ես կառք մը նետուեցանք եւ գացինք Գապաթաշ ուրկէ բարձրացանք իր տունը:

## ԹԱՔՍՏՈՑԻՍ ՄԷՁ

Ա՛լ հիմա բաւական ապահովութեան մէջ կը գտնուէի ու ամէն բոպէ ձերբակալուելու վախը չունէի:

Հետեւեալ օր թերթերը կը ծանուցանէին անգլիական զօրքին Տարտանէլ ցամաք ելլելը եւ միեւնոյն ժամանակ անոնց չարաչար պարտութիւնը եւ փախուստը եւ այս առթիւ Սուլթանին ղազիութեան տիտղոս առնելը:

Երկու օր ետքը պատերազմական ատեանը տասը օրուան պայմանաժամ կուտար Հնչակեան Սապահգիւլեանին եւ տիարպէքիրցի Վարազդատին Պոլսոյ պատերազմական ատեանին ներկայանալու «երկրին ներքին անդորրութիւնը խանգարել Համարձակած ըլլալնուն Համար»:

Տարտանէլի մէջ Անգլիացիները Հետզհետէ կը Հաստատուէին ցամաքին վրայ, կատաղի կռիւներ մղելով: Մայիսի սկիզբը օրական Հազարաւոր վիրաւորներ սկսան Հասնիլ Պոլիս:

Ես բարեկամիս տանը մէջ փակուած, մինչեւ իրիկուն կը սպասէի իր գալուն որպէսզի նոր տեղեկութիւն մը, յուսատու լուր մը առնէի:

Բայց, ափսո՛ս, յուսատու ոչինչ կար: Աքտրեանները բռնած էին Չանկըրը եւ Այաչ եւ յոյս չի կար թէ մօտ օրէն պիտի վերադառնան: Շաբաթ եւ կիրակիէն ետքը նոր ձերբակալութիւններ եղած էին, որոնց թիւը 50ի կը Հասնէր: Այս վերջիններուն մէջն էր նաեւ Պետրոս Նշանեան, որուն տունը անցուցած էի կիրակի առտու եւ որ Հետեւեալ օրը, Պապը Ալիի ճամբուն վրայ գտնուած իր գրավաճառի խանութին մէջ բռնուած ու բանտարկուած էր:

Ձիս անգամ մըն ալ եկած Հարցուցած էին տունս եւ խմբագրատունը:

– Չենք գիտեր ո՛ւր է, Հաւանօրէն ձերբակալուած ու դուրս դրկուած է, – պատասխանած էր մայրս, – դուք պարտաւոր էք իր մասին ինծի տեղեկութիւն տալ:

Գաղտնի ուստիկանները Հեռացած էին առանց ու եւ է խուզարկութիւն կատարելու տան մէջ:

Մինչեւ ե՞րբ ծածկուած պիտի մնայի այսպէս:

Փրկութեան միակ յոյս մը ունէի. այն էր Անգլիացիներուն նեղուցէն անցնիլ ու Պոլիս մտնելը:

Թերթերուն պաշտօնական գեկոյցները բնականաբար այս յոյս չէին քաջալերեր:

Բարեբախտաբար Կարապետ աղան, ամէն իրիկուն, անպաշտօն լուրեր կը բերէր.

– Անգլիական մարտանաւերը նեղուցէն ներս մտեր են, Չանաք Գալէն ռմբակոծեր են, այնինչ ամրութիւնը գրաւեր են...

Եւ իբրեւ եզրակացութիւն՝

– Շաբաթը չանցած՝ անպատճառ ներս կը մտնեն:

Սպասելով այդ երանելի օրուան, սենեակիս մէջ փակուած, մինչեւ իրիկուն ընթերցանութեամբ կ'անցընէի: Բարեբախտաբար տուներնիս բարձրահայեաց էր ու սենեակիս պատուհանէն ամբողջ Վոսփորը կը պարզուէր աչքիս առջեւ: Յաճախ կը տեսնէի Կէօպէնը եւ Պրէսլաւը որոնք դէպի Սեւ Սով կ'երթային ու կը վերադառնային: Երբեմն ալ Պէօյիւք Տէրէի կողմէն թնդանօթի ձայներ կը լսէինք, ռուսական յարձակումներու արդիւնք:

Երկու անգամ բաւական սրտադող կրեցի այս թաքստոցիս մէջ:

Առաջին անգամ իրիկուն մըն էր երբ տան պարտէզին դուռը զարկին եւ ահա՛ թաղին մըխթարը, ուստիկան մը եւ ուրիշ անձ մը ներս մտան:

Կարծեցի թէ զիս փնտռելու եկած են:

Բարեբախտաբար ո՛չ: Պարզապէս եկած էին տուներ խուզարկելու, արգիլուած զէնք փնտռելու համար:

Խուզարկութիւնը ժխտական արդիւնք տուաւ եւ մարդիկը մեկնեցան առանց իմ վրաս ուշադրութիւն դարձնելու:

Երկրորդ անգամ կէս գիշերին մօտ էր երբ կրկին տան պարտէզին դուռը ափ առին:

Ես իսկոյն արթնցայ եւ լսեցի որ «դուռը բաց» կը պոռային:

Կարապետ աղա պատուհանէն կը հարցնէր, թէ ո՞վ էին եւ ի՞նչ կ'ուզէին:

– Դուռը բաց, – կը պոռային վարէն քանի մը ձայներ:

Զիս տանելու եկած են, մտածեցի, անկողնէս ելայ եւ սկսայ հապճեպով վրաս հագուել:

Իմացած էի որ մէկ քանի հոգի, իրենց գիշերազգեստով ձերբակալած էին եւ չէի ուզեր այդ անհաճոյ վիճակին մէջ երթալ բանտ:

Այդ միջոցին Կարապետ աղա կը յամառէր դուռը չբանալու, մինչ միւսները կը շարունակէին դուռը բախել՝ զայն խորտակելու աստիճան:

– Բայց ո՞վ կը փնտռէք, – կը հարցնէր Կարապետ աղա պատուհանէն:

Վերջապէս հաւանեցան խօսելու եւ խնդիրը լուսաբանուեցաւ:

Մեր բնակած տունը թրքական քօնաք\* մըն էր երկու բաժինով, հարէմլիք\*\* եւ սէլամլըք\*\*\*, որոնք մասնաւոր դուռներ ունէին: Հարէմլիքի կողմը կը բնակէինք մենք իսկ սէլամլըքը վարձած են եղեր թուրք անբարոյ կիներ: Թաղեցիներուն բողոքին վրայ այդ կիները քանի մը օր առաջ վտարուեք են տունէն ու տան դուռն ալ կնքուեք է:

Այժմ այդ պարոնները, առանց լուր ունենալու այդ տեղա-

\* Առանձնատուն:

\*\* Կանաչոց, կանաչ յարկաբաժին:

\*\*\* Հիրեթի յարկաբաժին:

հանութենէն, եկեր են իրենց բարեկամուհիները տեսնելու եւ զուր տեղ սէլամլըքի դուռը զարնելէ վերջ եկած էին մեր տան դուռը ափ առնելու, կարծելով որ միւս տան բնակիչները հոն փոխադրուած են:

Վերջապէս իրենց սխալմունքը հասկցան ու հեռացան գացին, իրենց հետ տանելով նաեւ մեր քունը, որովհետեւ թէ՛ ես, թէ՛ Կարապետ աղան եւ թէ՛ բոլոր տնեցիք յարուցուած աղմուկէն սարսափահար եղած էինք եւ այլեւս մինչեւ առտու չկըրցանք քնանալ:

Մայիսի սկիզբները Տարտանէլէն հասնող թուրք վիրաւոր զինուորներու թիւը օրական 10-15 հազարի կը հասնէր: Բոլոր հիւանդանոցները, հանրային շէնքերը, դպրոցները, մեծ բնակարանները վիրաւորներով խճողուած էին: Պոլսոյ թուրքերը կը սկսէին խռովուիլ եւ կառավարութիւնը ի զուր թերթերու միջոցաւ կը ջանար հանդարտեցնել հանրային յուզումը:

Նոյն միջոցին էր որ թերթերը «Թանին»էն արտատպել սկսան «Քաղաքական կատակերգութիւն մը» վերնագրով թերթօնաձեւ գրութիւն մը, տեսակ մը մանուածապատ պատմութիւն որուն մէջ իրար խառնուած էին Սապահէտտին իշխան, Շէրիֆ փաշա, Սատրք պէյ, Կիւմիւլիճինէլի Իսմայիլ, լօրտ Քիշնէր, Վէնիզէլօս, յունաց նախորդ դեսպան Բանաս, անգլիացի ծովակալ մը, Սապահգիւլեան Փարամազ, Վարազդատ եւ այլն:

Զհասկցուեցաւ թէ այս առասպելը յերիւրելու մէջ ի՞նչ շահ ունէր կառավարութիւնը: Խնդիրը այն էր որ «Թանին» յանկարծ դադրեցուց այդ հեքեաթին շարունակութիւնը եւ մէյ մըն ալ ատոր խօսքը չեղաւ:

Ինչ որ յայտնի կ'երեւար, սա էր թէ կառավարութիւնը կը ջանար Հայերը ամէն տեսակ դաւադրութիւններու մէջ խառնել:

Նոյն օրերը, այսինքն մայիս 12/25ին Իտալիա եւս պատերազմ կը հրատարակէր Աւստրիոյ դէմ եւ կուգար միանալ Համաձայնականներուն:

Իտալիոյ այս ձեւով մասնակցութիւնը ա՛լ այն հաւատքը ներշնչեց մեզի թէ՛ Համաձայնութեան վերջնական յաղթանակը մօտալուտ էր:

Քանի մը օր ետքը, իրիկուն մը, Կարապետ աղա ներս մտաւ գուարթ դէմքով մը:

– Քեզի աղէկ լուր մը կը բերեմ, – ըսաւ:

– Ի՞նչ է տեսնե՞ք, – հարցուցի կասկածոտ դէմքով մը:

– Աքսորուածները դառնալ սկսան:

Այս լուրը այնքա՛ն անակնկալ էր որ չուզեցի հաւատալ:

– Կատակ կ’ընես, – ըսի:

– Չէ՛, – պնդեց, – լրջօրէն կը խօսիմ:

– Ո՞վ են վերադարձողները:

– Ութը տասը հոգի են, միւսներն ալ կամաց կամաց պիտի գան եղբր:

– Բայց որո՞նք են եկողները:

– Բիւզանդ Քէչեան, տոքթոր Թորգոմեան, Կոմիտաս վարդապետ, Կավոօշ, տոքթոր Ճէլալ, Հայկ Խօճասարեան եւ այլն:

Այս լուրը, բնականաբար, չափազանց ուրախացուց զիս:

Յայտնի էր որ կացութիւնը մեղմացած էր, մանաւանդ որ նոր ձեռքակալութիւններ չէին եղած օրերէ ի վեր:

Կ’ենթադրէի թէ Հայերու հանդէպ քաղաքականութեան այս փոփոխութիւնը արդիւնքն էր Տարտանէլի անգլիական յարձակումներուն եւ Իտալիոյ պատերազմի մասնակցութեան:

Այլեւս տանը մէջ փակուած չմնացի: Սկսայ դուրս ելլել մինչեւ Գապաթաշ ծովեզերքը երթալ, փոքրիկ պտոյտներ կատարել: Նոյնիսկ անգամ մը մինչեւ Գուրու Չէմչէ գացի թրամվայով, ամբողջ օրը անցուցի Յովհաննէս Շահնազարի հետ եւ իրիկունը վերադարձայ տեղս:

Թրամվայի տոմսակալաճառը, որ Հայ մըն էր, ճանչցաւ զիս ու զարմացած մնաց:

– Դո՞ւք ալ նոր եկաք, – հարցուց:

– Ուրկէ՞...

– Աքսորէն:

– Բայց ես աքսորուած չէի:

– Ինչպէ՛ս, ձեզ ալ միւսներուն հետ չքշեցի՞ն:

– Չէ, – պնդեցի, – զիս չաքսորեցին, միայն թէ ժամանակէ մը ի վեր հիւանդ էի, դուրս չէի ելլեր կոր:

Յետոյ իմացայ որ, տոմսակալաճառին պէս ուրիշ շատեր կը կարծեն եղբր որ ես ալ աքսորուած եմ:

Մէկ երկու օր ետքը մեկնեցայ Թաքստոցէս: Գացի Բիւզանդ Քէչեանը եւ Կավոօշը տեսնելու եւ տեղեկութիւն ուզելու մեր բարեկամներուն մասին:

Քէչեան շատ ցնցուած էր իր կրած յուզումներէն:

– Մանաւանդ մինչեւ շոգեկառք մտնելնիս շատ սարսափ կրեցիք, – ըսաւ, – կը կարծէինք թէ մեզ ծովը պիտի թափեն կամ հրացանի բռնեն: Մեզի հանդէպ ձեռք առնուած ոստիկանական հսկողութիւնը մանաւանդ սոսկում ազդեց մեզի: Գիշեր ատեն Սառայ Պուռնուի պարտէզը եւ հոնկէ շոգենաւ փոխադրուեցանք սուինաւոր զինուորներու շարքի մը մէջէն:



## ԱՆՁԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Թէեւ հիմա տունս վերադարձած էի ուր զիս հարցնող փրճու-  
ռող չի կար, այսուհանդերձ տակաւին խմբագրատուն չէի եր-  
թար ու չէի աշխատակցեր «ժամանակ»ին:

— Թո՛ղ քիչ մը ատեն անցնի, տեսնենք ի՛նչ կ'ըլլայ, — ըսած էր Սարգիս էֆէնտի:

Նոյն միջոցներուն Պոլսոյ կացութիւնը շատ դժնդակ էր: Մէկ կողմէ ապրուստը օրէ օր կը սղէր, միւս կողմէ զինուորա-  
գրութիւնը դամոկլեան սուրի մը պէս կախուած էր ամէնուն գլխէն: Պատերազմը կը շարունակուէր առանց մօտալուստ վեր-  
ջաւորութեան մը յոյսին:

Օր մըն ալ, մայիս 20 (Ղ. Տ.) թերթերու մէջ հրատարակուած տեսանք հետեւեալ օրէնքը.

«Յօդ. 1. — Պատերազմի պահուն՝ բանակի, զօրաբանակի եւ զօրաբաժնի հրամանատարները եւ ասոնց փոխանորդները եւ ազատ դիրքերու հրամանատարները արտօնուած եւ պարտաւոր են զինուորական ուժով ամենաբուռն պատիժներ տնօրինելու եւ արմատէն ջնջելու երբ ժողովուրդին կողմէ, ի՛նչ կերպով որ ալ ըլլայ, կառավարութեան հրամաններուն եւ հայրենիքի պաշտպանութեան, անդորրութեան ապահովման վերաբերող գործունէութեան եւ կարգադրութիւններու դէմ եղած ընդդիմութիւն, գէնքով յարձակում եւ դիմադրութիւն տեսնեն:

Յօդ. 2. — Բանակի, անջատ զօրաբանակի եւ զօրաբաժնի հրամանատարները կրնան գիւղերու կամ քաղաքներու ժողովուրդը գատ գատ կամ խմբովին ուրիշ վայրեր ղրկել եւ բնակեցնել զինուորական անհրաժեշտութեանց բերումով եւ կամ երբ զգան անոնց լրտեսութիւնն ու դաւաճանութիւնը»:

Երկու յօդուածէ բաղկացած այս կարճ օրէնքը մէկ ու կէս միլիոն Հայու մահուան վճիռն էր:

Այն ատեն սակայն չարիքին այս մեծութիւնը չկրցանք ըմբռնել: Թէեւ զգացինք որ տեղահանութեան սպառնալիքը Հայերուն դէմ ուղղուած էր, սակայն կ'ենթադրէինք թէ միմիայն կովկասեան սահմանագլխի Հայերուն համար էր:

Եթէ չեմ սխալիր, այդ ատեններն էր որ պատահած էին Վանի դէպքերը: Հայ զինուորացուներու հետապնդումը, Իշխանին ու Վուսնեանի սպանութիւնները եւ ուրիշ կարգ մը խժոժութիւններ որոնք գերազրգուած եւ ըմբոստութեան մղած էին Հայերը:

Միւս կողմէ Կովկասի Հայութիւնը, իբրեւ յառաջապահ ռուս բանակին, արդէն իսկ կ'արշաւէր հրգրումի ու Վանի սահմաններէն ներս: Լուրերը թէեւ խեղաթիւրուած, չափազանցուած կամ հատակոտոր, կը հասնէին մինչեւ Պոլիս:

Կը պատմուէր թէ Թալէաթ Հայ մէպուսներուն\*, մասնաւորաբար Զօհրապին ու Վարդգէսին ըսած է.

— Մինչեւ հիմա, մենք, Կովկասի սահմաններուն վրայ, Ռուս թշնամիներու հետ կռիւ չունեցանք, միայն Հայերու հետ է որ կը կռուինք:

Նոյնպէս կը պատմուէր թէ՛ Ռուսիոյ հետ պատերազմի յայտարարութենէն ետքը, Թալէաթ Վարդգէսին ըսած է.

— Հիմա Հայերը ցոյց պիտի տան ինքզինքնին եւ պիտի յայտնեն թէ ճշարտապէս կապուած են մեզի հետ:

— Ի՛նչ կերպով, — հարցուցած է հրգրումի Հայ մէպուսը:

— Չէթէներու\*\* խումբեր կազմելով ու մեր բանակին օժանդակելով:

— Բայց, — առարկած է Վարդգէս, — ի՞նչպէս կրնանք չէթէական խումբեր կազմել, քանի որ բոլոր երիտասարդները իբրեւ զինուոր բանակին մէջ կը գտնուին եւ բացը մնացած էրիկմար-

\* Երեսփոխաններին, պատգամատրներին:

\*\* Հրոսակախմբեր: Այստեղ կիրառուած է աշխարհագորի իմաստով:

դոց քովն ալ գէնք չկայ... գոնէ մեզի գէնք ու ձի հայթայթեցէ՛ք, թերեւս այն ատեն կրնանք բան մը ընել:

Այս խուսափողական պատասխանը չէ գոհացուցած Թաււէաթը, որ կրկին ամբաստանած է Հայերը իբրեւ Ռուսիոյ համակիր:

Յայտնի է որ Վան առաջին անգամ Հայերու կողմէ գրաւելէ ետքը, դարձեալ թուրք բանակը գրաւեց զայն:

Ճիշդ այդ միջոցին՝ Ջաւէն պատրիարք կ'այցելէ պատերազմական նախարար Էնվէր փաշայի.

– Աղէկ լուր մը ունիմ ձեզի հաղորդելիք, – կ'ըսէ նախարարը, – Վանը վերագրաւեցինք:

– Շատ ուրախ եմ, – կը պատասխանէ պատրիարքը:

– Միայն թէ, – կը շարունակէ նախարարը, – մէկ թուրք մը չգտանք քաղաքին մէջ:

– Շատ կը ցաւիմ, – կ'աւելցնէ պատրիարքը:

Բոլոր այս պատմութիւնները, որոնք քիչ շատ խեղաթիւրեալ վիճակի մէջ կը հասնէին մինչեւ մեր ականջներուն, ընդհանուր մտատանջութիւնը աւելցնելու կը ծառայէին միայն:

Ա՛լ տարակոյս չի կար թէ կառավարութիւնը թշնամական աչքով կը նայէր Հայերուն, թէ վստահութիւնը բացարձակօրէն վերցուցած էր անոնց վրայէն եւ թէ առիթը կը փնտռէր կամ կը ջանար ստեղծել զանոնք ջախջախելու համար:

Կ. Պոլսոյ մէջ սարսափը այնչա՛փ տարածուած էր որ շատ մը ունեւոր Հայ ընտանիքներ մէկիկ մէկիկ կը մեկնէին դէպի Եւրոպա, որովհետեւ այդ միջոցին Հայերուն համար Եւրոպա երթալը արգիւտուած չէր, մանաւանդ կիներուն եւ գինուորական տարիք չունեցողներուն համար:

Իսկ գինուորական տարիք ունեցողներուն վիճակը սոսկալի էր: Թմբկահարները, ամէն օր եւ ամէն գիշեր, իրենց թմբուկներուն ահուդող ազդող ձայնը կը հնչեցնէին գինուորական ծառայութեան հրաւիրելով մինչեւ 45 տարեկանները: Նոյնիսկ պէտէլ տուողները կրկին կը կանչուէին եւ նոր կանչուածները

պէտէլ տալով ալ չէին կրնար իրենց օձիքը ազատել: Երիտասարդներ, Հայ, Յոյն, Հրեայ եւ թուրք, տուներուն մէջ փակուած կը մնային: Ուրիշներ այլեւայլ զարտուղի միջոցներու կը դիմէին խուսափելու համար սպառնացող վտանգէն:

Այդ միջոցներուն լաւագոյնը համարուած էր կաշառել զինուորական բժիշկները: Ամէն ոք առանց բացառութեան կաշառակեր էր, միայն թէ ատով ալ չարիքին առաջը չէր առնուեր բոլորովին: Բժիշկը, ո՛ր եւ է պատրուակով, քանի մը ամսուան արտօնութիւն միայն կուտար: Յետոյ դժուարութիւնը նորէն կ'սկսէր:

Կեանքը անտանելի դարձած էր գրեթէ:

Ընտանիքի հայր մը տունէն դուրս կ'ելլէր նպարավաճառէն հարիւր տիրէմ\* ձէթ առնելու համար ու ալ չէր դառնար իր զաւակներուն քով: Քանի մը օր ետքը կ'իմանային որ խեղճը փողոցին մէջ իբրեւ գինուոր ձերբակալուած ու անմիջապէս ղրկուած էր Տարտանէլ, Չօլլու կամ Իզմիր եթէ ոչ աւելի հեռուն:

Շատ երիտասարդներ հիւանդ ձեւանալու կամ ճշմարտապէս հիւանդանալու համար միջոցներու կը դիմէին որպէսզի ազատէին զինուորական ծառայութենէն:

Կը ճանչնամ մէկը որ օրերով ծոմ պահեց ու ոտքի վրայ կայնելու անկարող վիճակի մէջ ներկայացաւ բժշկական քննութեան: Մէկ քանիններ նառկիլէի աղտոտ ջուրը խմեցին՝ երեսնուն գոյնը դեղնեցնելու համար: Անոնք որ սրտի հիւանդութիւն, ալպիւմին կամ յօդացաւ ունէին, ինքզինքնին երջանիկ կը համարէին:

Ձինուոր երթալու մղձաւանջը՝ տարագրուելու սարսափը, ուտեստեղէններու սղութեան մտահոգութիւնը, ապագային անստուգութիւնը միացած՝ բոլորովին կը դառնացնէին ամէնուն կեանքը:

\* Զափի հիմ միատր: Պոլսում համապատասխանում էր 3, 207 գրամի:

Մեծ փողոցներու եռուզեռը, ոգեւորութիւնը գրեթէ դադարած էր բոլորովին:

Ընդժովեաններու յարձակումէն վախնալով՝ Վոսփորի մէջ խարսխած շոգեանաները բերուած էին Ոսկեղջիւր: Եւ Վոսփորը կարծես իր զարդերէն մերկացած, լերկ ու ամայի, տխուր տպաւորութիւն մը կը գործէր:

Կամուրջի անցուղարձը զգալապէս նուազած էր, ա՛լ երիտասարդ գրեթէ չէր տեսնուեր բնաւ. կա՛մ գինուոր գացած էին կա՛մ տուններու մէջ պահուելու:

Փողոցներուն մէջ ամէն քայլափոխի կը հանդիպէինք վերաւոր սպաններու, թեւերնին կամ գլուխնին պատատած\*, կամ անթացուպով կաղն ի կաղ քալելու դատապարտուած: Ամէնքն ալ Տարտանէլէն կուգային, հարիւրներով, հազարներով:

Կ. Պոլսոյ առման տարեդարձին օրը վերսկսայ իմ աշխատակցութիւնս «Ժամանակ»ին: Ըստ մամուլի նորագոյն օրէնքին՝ թերթի արտօնատէրները երբ նոր խմբագիր մը ունենային կամ նախկին խմբագիր մը ատեն մը հեռանալէ ետքը կրկին առնուէր թերթին մէջ, պէտք էր որ իմաց տային մամուլի վերատեսչութեան:

Ըստ այս օրէնքին, Սարգիս էֆէնտի հարկ համարեց դիմել մամուլի տեսուչ Հիքմէթ պէյին:

– Մեր խմբագիրը, Երուանդ Օտեան, որ հիւանդութեան պատճառաւ քանի մը ամիսէ ի վեր դադարած էր գրելէ, հիմա առողջացած է ու նորէն իր պաշտօնը պիտի շարունակէ եթէ արգելք մը չի կայ, – ըսած է Սարգիս էֆէնտի:

– Ո եւ է արգելք չիկայ, անշուշտ կրնայ շարունակել իր գործը, – պատասխանած է տեսուչը:

Պաշտօնական անձի մը կողմէ այս հաւաստումը բաւական ապահովութիւն ներշնչեց ինձի եւ կարծեցի թէ ա՛լ վտանգը հեռացած էր ինձի համար:

\* Վնասուած, կտրած մարմնի մասը փաթաթած, վիրակապած:

«Ժամանակ»ի մէջ վերսկսայ գրել փոքրիկ խմբագրականով մը Պոլսոյ առումին նուիրուած, որուն մէջ դրուատիքը կ'ընէի Յաթիհ Սուլթան Մէհմէտի ու անոր յաջորդներուն, «որոնց բարեացակամ տրամադրութեան շնորհիւն էր որ կրցած էինք դարերու ընթացքին հետզհետէ յառաջդիմել ու բարգաւաճել»:

Հետեւեալ օրը կը վերսկսէի ընդհատուած թերթօնս «Թաղականին կնիկը», որ անաւարտ պիտի մնար:

Նոյն ատեններն էր երբ առտու մը, Թաքսիմի կողմէ եկած միջոցիս, մայթին վրայ, դէմս ելաւ Ոսկան էֆէնտի Մարտիկեանը:

Լսած էի որ պաշտօնէն հրաժարած էր ու կը պատրաստուէր եւրոպա մեկնելու. իմացած էի որ նախարարութեան մէջ իր բընած ընթացքով դժգոհութիւն եւ կասկած հրաւիրած էր իր վրայ:

Այս պայմաններու մէջ մտածեցի որ թերեւս հաճոյ չթուի իրեն ինձի պէս քիչ շատ վտանգաւոր մէկու մը հետ հանդիպումը եւ քովէն անցայ առանց բարեւելու անձանօթի մը պէս:

Ոսկան էֆէնտի զիս կեցուց:

– Ինչո՞ւ կ'անցնիս առանց բարեւելու, – հարցուց:

– Մտածեցի որ թերեւս այսպէս լաւագոյն կ'ըլլար, – պատասխանեցի:

– Միթէ երկու շաբաթ, փողոցին մէջ, իրար չպիտի՞ կրնան բարեւել ասկէ ետքը:

– Չեմ գիտեր...

– Ո՛ւր կ'երթաս:

– Խմբագրատուն:

– Եթէ ժամանակ ունիս միասին եկուր հետս, քիչ մը խօսակցինք:

– Ամենայն սիրով, եթէ ձեզի նեղութիւն չ'սմ պատճառներ:

Եւ ետ դարձայ իրեն հետ դէպի Թաքսիմ:

Բնական է որ մեր խօսակցութիւնը դարձաւ օրուան կացութեան եւ մասնաւորաբար մեր վիճակին շուրջը:

– Այս մարդոց նպատակն է, – ըսաւ Ոսկան Մարտիկեան, –

մեզ մտաւորապէս եւ նւթապէս բնաջինջ ընել: Առաջինը ըրին քարտեղով Պոլսոյ բոլոր ծանօթ մտաւորականները...

– Աքսորելը բնաջինջ ընել չէ, – ընդմիջեցի:

– Այո՛, եթէ քարտէ վերադառնալու հաւանականութիւն ըլլայ, – շարունակեց Ոսկան Մարտիկեան տխրօրէն գլուխը շարժելով:

– Մէկ մասը վերադարձաւ:

– Աննշան մէկ մասը եւ ճշմարիտը ըսե՞մ. մինչեւ հիմա գարմացած եմ թէ ի՛նչպէս վերադարձան ատոնք:

Յետոյ, խօսքը իմ վրաս բերելով՝ շարունակեց.

– Բարեբախտաբար դուն աժան ազատեցար:

– Այո՛, դիպուածին շնորհիւ, բայց <կը> կարծէ՞ք որ այլեւս վտանգ չսպառնար ինձի:

– Ձէ՛, մտաւորականներու դէմ հալածանքը դադրեցաւ. հիմա կարգը եկաւ առեւտրականներուն, վաճառականներուն... Հայերու հարստութիւնը պիտի առնեն ձեռքերնէն: Ձեմ գիտոր թէ ասոր համար ի՛նչ միջոցներ պիտի գործածեն, բայց սա գիտեմ որ այս մարդիկը ամէն բան ընելու կարող են... ամէն բան կը հասկնա՞ս:

Եւ այդ բառերը սոսկալի նշանակութիւն մը կ'առնէին նոյն միջոցին Ոսկան էֆէնտի բերնին մէջ:

Քանի մը օր ետքը թղթատարութեան նախկին նախարարը կը մեկնէր Պոլսէն:

Յունիս 21ի առտուն լսեցինք թէ քսան հնչակեաններ կախաղան հանուեր են: Այս լուրը նոր սարսափ մը սփռեց ամբողջ Պոլսոյ հայութեան մէջ:

Այս նահատակներուն մահու պատիժը հետեւեալ կերպով կը ծանուցանէր Պոլսոյ կեդրոնական հրամանատարութիւնը.

«Պատերազմական ատեանի առջեւ ի ներկայութեան տեղի ունեցած դատավարութեամբ հաստատուած ըլլալով որ անկախ եւ ինքնօրէն Հայաստան մը կազմելու համար եղեռնափորձեր կազմակերպած, օտարները օսմանեան կառավարութեան դէմ

զրգուելու եղանակով ձեռնարկած են կայսերական երկրամասերէն մաս մը օսմանեան կառավարութենէն անջատելու եւ այս նպատակով օտար երկիրներու զանազան կողմերը գաղտնի եւ յայտնի համաժողովներ գումարելով մէկտեղ հրատարակութիւններ, զրգուութիւններ եւ թղթակցութիւններ ըրած են, պատժական քաղաքային օրէնքին 54-րդ յօդուածին յաւելուածական մասին համաձայն Պոլսոյ Պատերազմական ատեանին կողմէ մահուան դատապարտուեցան հետեւեալ անձերը. Փարամազ, վառնացի Յակոբ Գազազեան, Մինաս, Սմբատ, Վահան Պոյաճեան, տոքթոր Պէննէ, Արմենակ, կօշկակար Աբրահամ, Արամ Աչըգպաշեան, բժշկական վարժարանի ուսանող Հրանդ, շապին գարահիսարցի Գարեգին, ոսկերիչ Պողոս, Յակոբ Պասաճեան, Թովմաս Թովմասեան, կօշկակար Երեմիա, Մկրտիչ Երէցեան, զինուորական ուսանող Գեղամ Վանիկեան, ուսուցիչ Երուանդ Թօփուզեան, սրճագործ Գառնիկ»:

Կախաղանի պատիժը տեղի ունեցած էր շատ գաղտնի կերպով եւ արշալոյսէն առաջ: Վերջին վայրկեանին միայն Մայր եկեղեցիէն ափյափոյ\* քահանայ մը տարած էին մահապարտներուն քով:

Այդ քահանան, տէր Գալուստ իր վերադարձին, թաղական խորհուրդին մէջ պատմած էր եղելութիւնը Սարգիս էֆէնտիին ու թաղական խորհուրդի ուրիշ անդամներուն:

Տէր Գալուստի պատմածներուն համեմատ, բոլոր դատապարտեալներն ալ մեծ քաջութեամբ բարձրացած են կախաղան: Փարամազ եւ տոքթոր Պէննէ կախաղանին վրայէն խօսք ուղղած են ներկաներուն. առաջինը յայտարարած է թէ Հագիւ 2-3 յանցաւորներ կան իրենց մէջ, որոնց մէկն ալ ինքն է, բայց միւս մնացորդները բոլորն ալ անմեղ են այն ամբաստանութիւններէն որոնց համար մահուան պատիժի ենթարկուած են:

Իսկ տոքթոր Պէննէ, ի մէջ այլոց յայտարարած է որ նոյն օ-

\* Ձեռագ, յանգաւորատից:

ըր մեծ հրդեհ մը Պոլսոյ մէկ մասը մոխիր պիտի դարձնէ եւ թէ այդ հրդեհին զոհ պիտի երթան միմիայն թուրքերը ի պատիժ այս անիրաւ դատապարտութեան: Տոքթոր Պէննէի բերնին մէջ երազատեսի այս մարգարէութիւնը շատ բնական էր, որովհետեւ խեղճ նահատակ բժիշկը շատ կը զբաղէր հոգեւտեսութեամբ, ինքնաթելադրութեամբ ու այս կարգի գաղտնի գիտութիւններով:

Տէր Գալուստ քահանայի կողմէ կրկնուած ու բերնէ բերան տարածուած այս մարգարէութիւնը նոյն առտու իսկ շատերու կողմէ լսուած էր:

Յերեկը, ազգականս Արտաւան Հովեանը տեսնելու համար Հանրային պարտքի վարչութիւն գացած էի ու հոն, ընդարձակ պարտէզին մէջ կը շրջէինք խօսակցելով, երբ, յանկարծ, մեր ուշադրութիւնը գրաւեց թանձր մուխ մը որ Ղալաթիոյ կողմէն դէպի երկինք կը բարձրանար:

Հրդեհ կար...

Արտաւանին հաղորդեցի նոյն առտուն, արշալոյսին, կախողան ելլող տոքթոր Պէննէի մարգարէութիւնը:

Ուրիշներ ալ եկած էին կրակը դիտելու: Սաստիկ հով մը կը փչէր նոյն միջոցին ու ծուխը հետզհետէ կը ծաւալէր:

Եկայ խմբագրատուն ուր մնացի մինչեւ ուշ ատեն: Լուր առինք թէ հրդեհը ծագած էր Ֆիրուզ աղա թրքական թաղէն ու երթալով կը ճարակէր, մանաւանդ որ հովն ալ հետզհետէ կը սաստկանար:

Ու այսպէս հրդեհը շարունակուեցաւ 24-25 ժամ, տասը հազար տուններ մոխիր դարձնելով: Հետեւեալ օր ամբողջ Թաքսի մի հրապարակը, զօրանոցին բակը, Այազ փաշայի պողոտան ու շրջակայ փողոցները լեցուած էին հրկիզեալներու բազմութեամբ. գրեթէ ամէնքն ալ, առանց բացառութեան, թուրքեր, որոնք շատ քիչ բան մը կրցած էին ազատել կրակին ճիրաններէն:

— Պէննէին մարգարէութիւնը կատարուեցաւ, — կ'ըսէին Հայերը:

Եւ այս աղէտքը կարծես փոխարինութիւն մը եղաւ առջի օրւան կախաղանի պատժին:

Կառավարութիւնը որ նոյնպէս տեղեակ էր նահատակ տոքթորին արտասանած վերջին խօսքերուն, սա ձեւով ահռելի հրդեհին լուրը գրել տուաւ թերթերուն մէջ.

«Երէկ, կէսօրին, հրդեհ ծագեցաւ Բերա, Ֆիրուզ աղա, Քատրիլէր Եօզուչու Հասան աղա պաղջէսի\* անկիւնը գլտնուող տունէն եւ եղած ջանքերու շնորհիւ առաջքն առնուեցաւ»:

Յունիսի վերջերը շէնքերու նշանատախտակներու մասին կայսերական իրատէ\*\* մը կը հրամայէր ի միջի այլոց. «Թշնամի տէրութեանց լեզուներուն գործածութիւնը արգիլուած է ներկայ որոշմանգրին հրատարակութեան թուականէն ետք եւ պատերազմին տեւողութեան միջոցին վաճառատանց, մթերանոցներու եւ խանութներու, պատերուն, տուններուն, ապակեփեղկերուն ու դրան եզերքներուն վրայ նորէն գրուելիք գիրերուն եւ նշանատախտակներուն համար: Միայն թէ գործածութիւնը արտօնուած լեզուներուն համար լատինական տառեր գործածել կարելի է»:

Այս իրատէին համեմատ բոլոր Ֆրանսերէն վերտառութիւնները վերջան Բերայի, Ղալաթիոյ եւ Պոլսոյ վաճառատուններուն վրայէն: Բերայի մեծ փողոցը, քանի մը օրուան մէջ փոխեց իր դիմագիծը եւ այդ մեծ փոփոխութիւնը որ մեծ նշանակութիւն մը չունէր ու ցոյց կուտար միայն իթթիհատականներուն նեղմտութիւնը, դառն տպաւորութիւն մը գործեց ամէնուս վրայ:

Թուրքերը, մանաւանդ կառավարութիւնը դէպի անհաշտ ատելութիւն կը դիմէր եւ ասոր համար ամէն առիթ կը ջանար գործածելու: Ֆրանսերէն արձանագրութիւններու դէմ խաչակրութիւնը այս դրութեան մէկ արտայայտութիւնն էր:

\* Պարտէզ:

\*\* Հրահանգ, հրամանագիր, հրովարտակ:

Ամէն օր, կարծես մէյ մէկ քիչ մեր ազատութենէն կը կապտուէր:

Հրապարակային տեղեր չէինք համարձակեր ազատօրէն արտայայտուիլ, նոյնիսկ Հայերէ ստիպուած էինք զգուշանալ:

Խաֆիէները\* գործի վրայ էին ու կը լսէինք ձերբակալութիւններ Հայերու, Յոյներու կամ թուրքերու, որոնք անխոհեմութիւնը գործած էին թուստային կամ շոգենաւին մէջ քննադատել էնվէրը կամ Թալէաթը կամ Գերմանիոյ Քայզըրը:

Իրիկունները, քանի մը բարեկամներ ամայի սրճարան մը կը փնտռէինք հաւաքուելու եւ խօսակցելու համար եւ եթէ երբեք նոր ու անծանօթ դէմք մը գար մեր դէմը նստէր, իսկոյն պատրուակ մը կը փնտռէինք հեռանալու: Այդքա՛ն երկիւղը տիրած էր սրտերնուս մէջ:

Այս սրտմաշուք օրերուն էր երբոր, առտու մը, թերթերուն մէջ կարդացինք սա պայմանաժամը, Պոլսոյ Պատերազմական ատենանի նախագահութենէն.

«Պոլսոյ Պատերազմական ատենանը՝ դատելու համար տասը օրուան պայմանաժամ տուած է փախստական վիճակի մէջ գըտնուող Պողոս Նուպար փաշայի որ ներկայանայ:

Յիշեալը ամբաստանուած է թէ Արեւելեան նահանգներուն մէջ անկախ Հայաստան մը կազմելու նպատակով պատերազմէն օգտուելով Երեւակ համաձայնութեան տէրութեանց հետ կը գործակցի, թէ էջմիածնի կաթողիկոսին կարգադրութեամբն ու թելադրութեամբը Հայերէն նուիրահաւաքութիւն կ'ընէ եւ հաւաքած դրամներովը Կովկասի մէջ ռուս բանակին կամաւոր արձանագրելով հանդերձ օսմանեան կառավարութեան դէմ ապստամբող Հայոց նիւթապէս եւ ուրիշ եղանակով եւ նոյն նպատակին համար օժանդակութիւններ կ'ընէ, թէ Ամերիկայ հրատարակուող «Ազգակ» եւ «Երիտասարդ Հայաստան» թերթերուն մէջ բովանդակ Հայ ազգին ուղղուած եւ զայն յեղափոխութեան դրդելու համար կոչեր հրատարակած է, ինչպէ՛ս

\* Լրտեսները, գործակալները:

նաեւ Պալքանեան պատերազմէն ետք գոյացած եւ օսմանեան կառավարութեան տկարութիւնը յառաջ բերող նախորդ կացութենէն օգտուելով՝ Արեւելեան նահանգներու խնդրին մէջ Հայ քրօնիկներուն առաջնորդ հանդիսանալով բովանդակ Հայ ազգին պատուիրակի հանգամանք առնելով օտար հակակշռի ներքեւ կէս անկախ Հայաստանի մը կազմութեան համար Երեւակ համաձայնութեան մայրաքաղաքներուն մէջ օսմանեան կառավարութեան աննպաստ ձեռնարկներ ըրած է:

Այն պարագային երբ յիշեալը տրուած պայմանաժամին չներկայանայ, ըստ պատժական դատարարութեան օրէնքին յատուկ տրամադրութեանց, ի բացակայութեան դատարարութիւն տեղի պիտի ունենայ, յիշեալին կալուածներն ու գոյքերը գրաւման տակ պիտի առնուին եւ պիտի զրկուի քաղաքացիական իրաւունքներէ, աստիճանէ ու պատուանշանէ եւ այս պատճառաւ իրաւունք պիտի չունենայ դատ վարելու: Գիտցողները պարտաւոր են յիշեալին ո՛ւր գտնուիլը իմացնել, իսկ դատական ոստիկանութեան պաշտօնեաները զինքը ձերբակալելը»:

Այս պաշտօնական յայտարարութիւնը մասնաւորապէս վերդովեցուցիչ էր ինծի համար, որովհետեւ հրապարակին վրայ ունէի պատկերազարդ գրքոյկ մը Պողոս Նուպարի կենսագրականին ու իր ազգային գործունէութեան նուիրուած: Ասկէ զատ, ուրիշ աւելի ընդարձակ գիրք մըն ալ պատրաստած էի «Հայկական խնդիրը եւ Պողոս փաշա Նուպար» տիտղոսով, որ տակաւին հրատարակ ելած չէր բարբախտաբար եւ որ կը գըտնուէր հրատարակիչ Ստեփան Քիւրքեանի մթերանոցը: Այս երկրորդ գրքին մէջ, իբրեւ յառաջաբան, կը գտնուէր Պողոս փաշային ինծի ուղղած մէկ ընդարձակ նամակը:

Բոլոր ասոնք ներկայ պարագաներուն մէջ մէյ մէկ փորձանքներ էին ինծի համար:

Աւելին կար: Ստեփան Քիւրքեան ապրիլ 11ի գիշերը ձերբակալուած ու Այաջ աքսորուած էր: Մթերանոցին տէրը, որ

Կամուրջին վրայ յաճախ կը Հանդիպէինք խումբ խումբ Հայերու որոնք ոստիկաններու Հսկողութեան ներքեւ կը տարուէին Հայտար փաշայի շոգենաւը, հոնկէ շոգեկառք դրուելու եւ Իգմիթ ու աւելի հեռուները քշուելու համար:

Ասոնք ընդհանրապէս գաւառացի ամուրիներ էին. ծեր, երիտասարդ, պատանի, գործի եւ զբաղումի տէր անձեր, որոնք յանկարծ իրենց խանութին մէջ կամ ճամբան ձերբակալուած ու առանց հարցաքննութեան բանտը նետուած էին ու հիմա կը տարուէին մորթուելու:

Այդ անձկութեան օրերուն չէի կրնար երկար ժամանակ մնալ, ընթերցում մը կամ լուրջ աշխատութիւն մը ընել: Հազիւ շաբաթը քանի մը անգամ խմբագրատուն կը Հանդիպէի թերթօնիս ձեռագիրը տալու համար ու կը հեռանայի նորանոր ձերբակալութիւններու լուրեր իմանալէ ետքը:

Օր մը Արտաշէս Գալփաքճեան ըսաւ ինծի.

– Կ'ուզե՞ս որ քեզի բարեկամական խորհուրդ մը տամ:

– Տո՛ւր տեսնենք:

– Սա մօրուքդ ածիլիլ տուր:

– Ինչո՞ւ համար:

– Որովհետեւ սրածայր մօրուքը ուշադրութիւն կը գրակ:

– Իրաւունք ունիս, – ըսի ու իսկոյն գացի մօրուքս ածիլիլ տալու:

տալու:

Երբ վերադարձայ, Գալփաքճեան ըսաւ.

– Ա՛լ մի վախնար, ապահով կրնաս պտտիլ:

Եւ սակայն բարեկամս կը սխալէր: Մօրուքս ածիլիլ տալէ քանի մը օր ետքը՝ ես ալ պիտի ձերբակալուէի:

## ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՔՍՈՐ

Օգոստոս 25 երեքշաբթի իրիկուն՝ Այ-Ստէֆանօ՝ մօրեղբօրս այցելութեան գացի ու հետեւեալ առտուն եկայ Մաքրիգիւղ հօրաքոյրս Եւփիմէ Օտեանը տեսնելու: Կարծես քնազգական գրգիռ մը կար ներսս որ զիս կը մղէր երթալ ազգականներս տեսնելու:

Յետոյ երբ Սիրքէճի Հասայ, խմբագրատուն երթալէ առաջ, ըստ սովորութեան Հանդիպեցայ Նշան Պապիկեան գրատունը:

– Արչակ Ալպոյաճեանը ձերբակալել են այս առտու, – ըսաւ Պետրոս Նշանեան զիս տեսնելուն պէս:

Թէեւ այս տեսակ լուրերու վարժուած՝ այսուհանդերձ ցընցում մը ունեցայ:

– Կարգը ինծի կուգայ կոր կարծեմ, – ըսի խնդալով, – արդէն զարմանալի է որ մինչեւ հիմա զիս չքշեցին:

– Քեզի մոռցած ըլլալու են:

– Բայց օր մը պիտի յիշեն:

Գրատունէն գացի խմբագրատուն ձեռագիրս տալու:

Ամէն օրուան անձկութիւնը կը տիրէր հոն:

Իզմիթի, Պարտիզակի, Ատաբազարի տեղահանութեան լուրերը հասած էին իրենց խուժուած\* մանրամասնութիւններով: Խօսք կար թէ Պոլսոյ Հայերն ալ տեղահան պիտի ըլլային:

Բոլոր այս լուրերը իրենց ահաւոր ծանրութեամբ կը ճնշէին մեզի: Հեռացայ խմբագրատունէն ու գացի մինչեւ Պէշիկթաշ, նաւամատոյցի սրճարանը ուր մնացի մինչեւ իրիկուն: Կը նախընտրէի առանձին մնալ քան թէ բարեկամներու հետ տեսակ-

\* վայրագ, բարբարոս:

ցիւ, որովհետեւ գիտէի որ հաճոյալի խօսք մը չպիտի լսէի ի  
րենցմէ:

Իրիկունը սակայն, Բերայի մէջ մէկ քանի բարեկամներու  
հետ, սրճարանի մը անկիւնը ժամանակ անցուցի եւ բաւական  
ուշ էր երբ Շիշլիի մեր տունը եկայ:

Հազիւ թէ կերակուրս աւարտած էի՝ ննջասենեակս մտայ ու  
հանուեցայ անկողին մտնելու համար:

Ճիշտ նոյն ըրպէիս զանգակը հնչեցուցին:

Սպասուհին բացաւ դուռը:

– Երուանդ էֆէնտի Օտեանը հո՞ս է, – հարցուց անծանօթ  
ձայն մը:

– Հոս է, – պատասխանեց սպասուհին:

– Վայրկեան մը կ’ուզենք զինքը տեսնել:

Սենեակէս այս խօսքերը կը լսէի. կէս հանուած՝ դուռը բա-  
ցի եւ ըսի.

– Ի՞նչ կ’ուզէք:

– Երուանդ էֆէնտի Օտեանը դո՞ւք էք:

– Այո՛:

Մարդը որ մինչեւ այդ ատեն դռան մէջ կեցած էր, ներ-  
մտաւ: Ուրիշ անձ մը հետեւեցաւ իրեն:

– Ի՞նչ կ’ուզէք, – հարցուցի:

– Կը ներէք, – ըսաւ առաջին խօսողը, – քօմիսէր էֆէնտի  
ձեզ տեսնալ կ’ուզէ:

Հասկցա՛յ...

– Հիմա՞...

– Այո՛, հիմա անմիջապէս:

– Ո՛ւր պիտի երթանք:

– Հո՛ս, Բանկալթիի քարաքօլը\*, Հարպիէի մօտ, – պատաս-

խանեց մարդը:

– Լա՛ւ, հագուիմ ու երթանք:

\* Ոստիկանատունը:

– Պէտք չի կայ հագուելու, – ըսաւ ծպտեալ ոստիկանը, –  
մէկ վայրկեանի համար է, բան մը պիտի հարցնէ պարզապէս:

– Այո՛, բայց ասանկ դուրս չեմ կրնար ելլել:

– Ինչպէս որ կ’ուզէք, միայն թէ շուտ երթանք, կը սպասէ  
կոր... վայրկեանի մը համար է:

Աճապարանքով հագուեցայ ու մեկնեցանք, մինչ խեղճ  
մայրս, եղելութիւնը կռահելով կ’ուզէր անպատճառ ընկերա-  
նալ ինծի՝ «գաւակս ո՞ւր կը տանիք կոր» գոչելով: Հազիւ կա-  
րողացայ զինքը հանդարտեցնել, հաւաստելով որ անմիջապէս  
պիտի վերադառնայի: Բարեբախտաբար զիս տանելու եկող եր-  
կու գաղտնի ոստիկաններն ալ նոյնը կը կրկնէին:

– Հանրմ էֆէնտի, հիմա պիտի գայ...

Փողոցին մէջ երկու ոստիկաններէն մին սկսաւ հայերէն խօ-  
սիլ հետս:

– Կարեւորութիւն ունեցող բան մը չէ, հոգ մի՛ ըներ, – ըսաւ  
ինծի:

– Ի՞նչ է խնդիրը, – հարցուցի:

– Կարծեմ տեղեկութիւն մը պիտի հարցնեն քենէ. հինգ  
վայրկեանէն տուն կը վերադառնաս:

– Ի՞նչ տեղեկութիւն...

– Ձեմ գիտեր, բայց կարեւորութիւն տալիք բան մը չէ:

Ինքնաբերաբար ըսուած այդ խօսքերը զիս հանդարտեցու-  
ցին եւ ճշմարտապէս պահ մը հաւատացի որ քիչ յետոյ ետ պի-  
տի դառնամ:

Հասանք քարաքօլ ուր զիս առաջնորդեցին քօմիսէրին քով:

Շիք երիտասարդ մըն էր:

Երկու ծպտեալ ոստիկանները զիս ներկայացուցին:

– Երուանդ էֆէնտի Օտեան:

– Հրամմեցէք, – ըսաւ քօմիսէրը, իր մօտ դրուած թիկնաթո-  
ւր ցոյց տալով:

Ձիս բերողները բարեւեցին ու աներեւոյթ եղան:

– Կը ծխէ՞ք:



Եւ սիկառէթի տուփը երկարեց ինծի: Մեքենաբար հատ մը առի ու վառեցի:

– Երուանդ էֆէնտի Օտեանը դո՞ւք էք, – հարցուց:

– Այո՛, ես եմ, – պատասխանեցի:

– «Ժամանակ» լրագրի խմբագիր...:

– Այո՛:

– Շատ աղէկ:

Եւ քօմիսէրը սեղանին վրայ դրուած զանգակը հնչեցուց:

Բօլիս մը ներս մտաւ:

– Էֆէնտին տարէք, – ըսաւ քօմիսէրը զիս ցոյց տալով:

– Հրամանեցէ՛ք, – ըսաւ բօլիսը:

Ոտքի ելայ:

– Մնաք բարով:

– Երթաք բարով:

Երկմտութեան մէջ էի: Ազա՞տ պիտի թողուն զիս: Շատ յոյս չունէի: Եթէ քօմիսէրը գոնէ պզտիկ հարցաքննութիւն մը ըրած ըլլար, կրնայի ենթադրել որ թող պիտի տան զիս: Բայց անուսնէս զատ բան չէր հարցուցած: Հաւանական էր որ ուրիշ տեղ մը պիտի հարցուփորձէին զիս:

Երբ բօլիսին հետ փողոց ելանք ըսի.

– Ո՛ւր պիտի երթանք հիմա:

– Պոլիս, – պատասխանեց:

– Պոլի՞ս, բայց ինչպէ՞ս...:

– Ինչպէս որ կ'ուզէք, կառքով, թռամվայով կամ ոտքով:

Գրպանս հագիւ երեսուն դրուշի չափ դրամ ունէի, այնպէս որ կառքի պերճանքը չէի կրնար ընծայել ինծի:

– Թռամվայով երթանք, – առաջարկեցի:

– Ինչպէս որ կը հրամայէք, – ըսաւ բօլիսը քաղաքավարութեամբ:

– Թռամվայը սակայն մինչեւ թիւնէլ կ'երթայ եւ ոչ աւելի հեռուն:

Երբ մտանք կառքին մէջ, բօլիսը ըսաւ.

– Դուք առաջ անցէ՛ք ու առանձին նստեցէ՛ք. ես դուրսը կը կենամ, որպէսզի հոս գտնուողները չնշմարեն որ բօլիսի ընկերակցութեամբ կ'երթաք կոր:

– Շատ աղէկ:

Այս փափկանկատութիւն<ը> բաւական տարօրինակ թուեցաւ ինծի:

Թիւնէլէն մինչեւ Ղալաթիա, Եիւքսէք Քալտըրըմի ճամբով հետիոտն իջանք:

Տեսայ որ տակաւին բաւական տեղ ունէինք քալելու:

– Կառք մը չե՞ս կրնար վարձել, – ըսի բօլիսին, – մինչեւ 15 դրուշ կը վճարեմ:

– Տուր դրամը:

– Ահաւասիկ:

Եւ երեք քառորդ մէծիտիէ\* դրի ձեռքը:

Բօլիսը կառք մը կանչեց, զիս նստեցուց, ինքն ալ քովս բազմեցաւ, ու կառապանին դառնալով հրամայեց.

– Քչէ՛:

– Ո՛ւր:

– Պոլիս, բօլիս միւտիրիէթի, քուրումը սիասի\*\*:

– Արդեօք զիս վա՞ր պիտի դնեն, – հարցուցի բօլիսին երբ կառքը ճամբայ ելաւ:

– Չեմ կարծեր, – պատասխանեց, – թերեւս հարցաքննութիւն մը ընեն ու թող տան:

– Քօմիսէր էֆէնտին բան մը չհարցուց ինծի:

– Կ'երեւայ որ ձեզ ուղղակի միւտիրիէթէն\*\*\* ուզած են:

Քսան վայրկեան ետքը հասած էինք տեղերնիս:

Բօլիսը զիս առաջնորդեց քօմիսէրի մը քով, անոր յանձնելով, նաեւ պահարանով թուղթ մը: Յետոյ՝ բարեւեց եւ հեռացաւ:

\* Արծաթեայ մետաղադրամ: ՄԷԿ մեծիտիէն հաւասար է 20 դրուշի:

\*\* Ոստիկանական հաստատութեան տնօրինութիւն:

\*\*\* Տնօրինութիւնից, տեսչութիւնից:

– Երուսաղէմի Քրիստոսը ի՞նչ էր, – հարցուց քօմիսէ-  
րը:

– Այո՛:

– «Ժամանակ» թերթի խմբագիր:

– Այո՛:

– Շատ աղէկ:

Ու գանգակիկը հնչեցուց:

Բօլիս մը ներկայացաւ:

– Էֆէնտին նէգարէթ\* տա՛ր, – հրամայեց:

– Հրամայեցէ՛ք, – ըսաւ բօլիսը ինծի դառնալով:

– Մնաք բարով:

– Երթաք բարով:

Հետեւեցայ բօլիսին որ զիս տարաւ դրան մը առջեւ, դուռը  
բանալիով բացաւ, զիս ներս մտցուց եւ դուռը կրկին կղպեց:

Բանտարկուած էի:

Շուրջս նայեցայ:

Մեծկակ սրահ մըն էր ելեքտրական լոյսով լուսաւորուած:  
Տասներկու մաքուր մահճակալներ կային, վեցը գետինը եւ վե-  
ցը վերը, օդին մէջ, ճամբորդի շոգեմեքներու «քապին»ներուն\*\*  
մէջ գտնուած մահճակալներուն ձեւով: Տախտակամածը մոմ-  
լաթով ծածկուած էր: Սրահին ճակատը երկու ծորակներով ա-  
ւազան մը կար լուացուելու համար: Մէկ քանի աթոռներ հոս  
ու հոն: Վերջապէս շատ շոքոքով բանտ մըն էր:

Աթոռի մը վրայ նստայ եւ գննութիւնս շարունակեցի: Երկու  
անկողին պարապ էին, իսկ միւսներուն մէջ բանտարկեալներ  
կը քնանային:

Կէս գիշերին մօտ էր երբոր զիս ներս մտցուցին ու ամէն ոք  
խոր քունի մէջ էր:

Սկսայ դիտել քնացողները յուսալով որ թերեւս ծանօթ դէմ-  
քի մը կը հանդիպիմ:

\* Կալամատու:

\*\* Խցիկներ:

Վերի անկողիններէն մէկուն մէջ նշմարեցի մէկը որ կը նմա-  
նէր Արշակ Աւսոյաճեանին:

Լսած էի որ մեր բարեկամը նոյն առաւօտուն ձերբակալուած  
էր: Կասկած չի կար թէ ինքն էր քնացողը:

Ոտքի ելայ, մօտեցայ իրեն ու կամաց մը մշտեցի՝ «Արշա՛կ»  
գոչելով:

Չարթնցաւ: Աւելի ուժով մշտեցի կրկին անունը տալով:

Այս անգամ ընդոստ տեղէն ցատկեց ու անկողին մէջ նըս-  
տաւ.

– Ի՞նչ կայ, – գոչելով թրքերէն լեզուով:

Իսկոյն նշմարեցի թէ սխալած էի, մարդը Արշակ Աւսոյա-  
ճեանը չէր:

– Կը ներէք, – կմկմացի, – ձեզ ուրիշի մը նմանցուցի:

– Ալլա՛հ, ալլա՛հ, – գոչեց մարդը, – զիս դող ու սարսափի  
մատնեցիր:

– Կը ներէք, – կրկնեցի:

– Չե՞ս գիտեր որ հոս ընդհանրապէս գիշերուան այս ժամե-  
րուն կուգան հարցաքննութեան համար Պատերազմական ա-  
տեան տանելու...

– Չէի գիտեր, ես դեռ հիմա եկայ հոս, քիչ մը կարճատեւ  
եմ, այդ պատճառաւ տեղի ունեցաւ թիւրիմացութիւնը:

Վերջապէս միջադէպը փակուեցաւ եւ վերադարձայ աթոռիս  
վրայ նստելու: Թէեւ պարապ անկողին մը կար, բայց ես քուն  
չունէի:

Վայրկեան մը ետքը գլուխ մը բարձրացաւ գետնի անկողին-  
ներէն մէկէն.

– Մօ՛, Օտեա՛ն, դո՞ւն ես, – ըսաւ ձայն մը:

– Այո՛, դո՞ւն ով ես:

– Չճանչցա՞ր... տոքթոր Բըլլըճեան:

Եւ վերմակը մէկ կողմ նետելով, ելաւ անկողինէն, քովս եկաւ  
ու համբուրուեցանք:

Բանտին մէջ ծանօթ դէմքի մը հանդիպիլը ճշմարիտ երա-  
նութիւն մըն է:

– Ինչո՞ւ ձերբակալեցին քեզ:

– Չեմ գիտեր, – պատասխանեցի:

– Տունդ խուզարկութիւն կատարեցի՞ն:

– Բնաւ երբեք:

– Վախնալու բան մը չունիս, – ըսաւ տոքթորը, – դուն ո՛չ Հնչակեան ես, ո՛չ դաշնակցական, ո՛ր եւ է կուսակցութեան չես պատկանիր, հոգ մի՛ ըներ:

– Իսկ դո՞ւն, – հարցուցի:

– Իմ կացութիւնս քիչ մը ծանր է, ես իբրեւ դաշնակցական բերուած եմ հոս:

Եւ տոքթոր Քըլըճեան պատմեց թէ՛ պատերազմի սկիզբը, իբրեւ զինուորական բժիշկ եւ հարիւրապետի աստիճանով կը ղրկուի Պանտրմա, հիւանդանոցի բժշկապետի պաշտօնով եւ բաւական երկար ժամանակ հոն մնալէ ետքը օր մըն ալ զինքը կը ձերբակալեն կը բերեն Պոլիս ու կը բանտարկեն իբրեւ դաշնակցական:

– Մէկ երկու անգամ հարցաքննեցին, – շարունակեց, – խոստովանեցայ թէ ժամանակին, Սամաթիոյ դաշնակցական մասնաճիւղին անդամակցած եմ, բայց ըսի որ յետոյ քաշուած եմ, ինչ որ իրականութիւնն է... Հետս թէեւ շատ քաղաքավար կերպով կը վարուին կոր, բայց ազատելու շատ յոյս չունիմ...:

– Իսկ Արշակ Ալպոյաճեանը՝ լսեցինք որ այս առտու ձերբակալուեր է. հոս չբերի՞ն:

– Այո՛, առտուն հոս բերին, բայց կէսօրէն յետոյ ազատ արձակեցին:

– Ինչպէ՞ս...

– Կարծեմ Պատրիարքարանէն միջամտեցին: Գամէր էֆէնտի Շիրինեանը եկաւ ու ազատեց:

Այս տեղեկութիւնը զիս սրտապնդեց:

Ուրեմն, մտածեցի, կարելի է ձերբակալուիլ, բանտարկուիլ ու յետոյ ազատիլ:

Տոքթորին հետ բաւական տեսակցելէ ետքը, որոշեցի քիչ մը

քնանալ եւ անգամ մը որ անկողին մտայ, աչքերս գոցուեցան եւ մինչեւ լոյս հանգիստ ննջեցի:

Հետեւեալ օր ծանօթացայ բանտակից ընկերներու:

Մէջերնիս կար յոյն վարդապետ մը Աղեքսանտր անուն, որ Պատրիարքարանի դիւանապետն է եղեր: Յետոյ, իր երկու ընկերները, յոյն դեղագործ մը եւ վարժապետ մը: Այս երեքը ամբաստանուած էին իբրեւ միջնորդ Շէրիֆ փաշայի ու անոր Պոլսոյ գաղափարակիցներուն: Իբրեւ թէ Բարիզէն գրուած նամակներ այս անձերուն ձեռքով կը հասնին եղբր իրենց հասցէներուն:

Չորս ամիսէ ի վեր բանտարկուած էին եւ իրենց խնդիրը տակաւին չէր լուսաբանուած, բայց կ'երեւար որ ամբաստանութիւնը բոլորովին անհիմն չէր:

Կար նաեւ պարսիկ երիտասարդ մը, արհեստով լուսանկարիչ, որ թրքուհի մը լուսանկարը հանելու ոճիրը գործած էր:

Յետոյ ոջլոտ հօճա մը իբրեւ իթթիլաֆական ամբաստանուած:

Այն անձը զոր Ալպոյաճեանը կարծած էի՝ թուրք նաւապետ մըն էր որ գինովցած ու գիշեր ատեն աղմուկ յարուցած էր փողոցին մէջ:

Կար նաեւ թուրք ուսուցիչ մը որ քօմիսէր մը նախատած ու անոր գրասենեակին ապակին կոտրած էր:

Թէեւ յարաբերութենէ զրկուած էինք եւ դուրսէն ո՛չ ոքի հետ կրնայինք տեսնուիլ, այսուհանդերձ մեր կացութիւնը անտանելի չէր:

Առտուն կանուխ սուրճ, կաթ, սալէպ\*, թէյ, սիմիթ ինչ որ ուզէինք կը գտնէինք մեր տրամադրութեան տակ: Լրագրավաճառները մինչեւ բանտին դուռ կուգային եւ ուզած թերթերնիս կը գնէինք: Կերակուրի համար ալ ազատ էինք մեր ընտրած ճաշարանէն փափաքածնիս բերել տալ: Ոմանք, ինչպէս

\* Կաթով պատրաստուած տաք ըմպելիք:

վարժապետը եւ դեղագործը, իրենց տունէն կը ստանային կերակուրնին: Կառավարութիւնն ալ օրական 300 տիրէմ հաց կուտար մեզի:

Քովս հազիւ մէկ քանի զրուշ մնացած էր: Բարեբախտաբար բարեկամս տղթոր Քըլըճեան իր քսակը տրամադրեց ինծի:

Կը կարծէի որ անմիջապէս զիս հարցաքննութեան պիտի տանէին ու մտովի կը պատրաստէի պաշտպանողականս: Միայն թէ չէի գիտեր թէ ի՛նչ յանցանքով ամբաստանուած եմ: Եթէ իբրեւ կուսակցական զիս բռնած էին՝ շատ դիւրին էր անմեղութիւնս հաստատել: Սակայն ուրիշ վախ մը ունէի, թերեւս զիս ձերբակալած էին իբրեւ Պօղոս Նուպարի կենսագիրը, այդ պարագային կրնայի դժուարութեան հանդիպիլ:

Առաջին օրը, ինչպէս ամէն նոր բանտարկեալ, ախորժակս գոցուած էր բոլորովին եւ մինչեւ իրիկուն բերանս գրեթէ բան մը չգրի:

— Վաղը կը սկսիս ուտել, — կ'ըսէին բանտակիցներս խնդալով, — մենք ալ առջի օրը քեզի պէս ախորժակնիս կորսնցուցինք:

Մինչեւ իրիկուն զիս հարցնող փնտռող չեղաւ: Հետեւեալ օրը, ուրբաթ, ցերեկին մօտ, մայրս, սպասուհիին հետ, եկած էր զիս տեսնելու:

Թոյլ չտուին որ հետը խօսք մը փոխանակեմ, հազիւ սպասուհիին հետ կրցայ թրքերէն քանի մը բառ ըսել, առանց սակայն երեսը տեսնելու, եւ այն ալ անսաստելով\* ոստիկանին հրամանին որ կը պողար թէ բացարձակապէս արգելուած էր ինծի դուրսէն մարդու հետ խօսիլ եւ կը սպառնար սպասուհիին բանտարկելու: Մայրս իր հետ բերած էր քանի մը կտոր ճերմակեղէն ու քիչ մը դրամ, զոր յանձնեցին ինծի:

Իրիկուան դէմ ոստիկան մը տուփ մը սիկառէթ ու խնձոր բերաւ:

— Ի՞նչ են ասոնք, — հարցուցի:

— Քեզի համար է:

— Ո՞վ բերաւ...

— Բարեկամ մը հարկաւ:

— Անունը չըսա՞ւ:

— Ըսաւ, բայց ես չեմ կրնար ըսել քեզի:

Քիչ յետոյ, երբ սիկառէթին տուփը կը բանայի՝ նշմարեցի որ ետին մատիտով արձանագրութիւն մը կար: «Սիրալիր բարեւներ, Գրիգոր Գալֆայեանէն»:

Ինչ որ ոստիկանը չէր ուզած ըսել ինծի՝ սիկառէթի տուփը կ'ըսէր:

Մեր բանտարկուած սենեակը երկրորդ յարկի վրայ էր: Պատուհաններէն կը տեսնուէր վարի բակը որ բաւական ընդարձակութիւն ունէր:

Թէեւ մեզի արգելուած էր պատուհանէն դուրս նայիլ, բայց շատ չէինք յարգեր այդ արգելքը: Միջոց մը երբ պատուհանէն դուրսի բակը կը դիտէի, նշմարեցի ծանօթ դէմք մը: Ստեփան անունով երիտասարդ ճարտարապետ մըն էր բնիկ իզմիթցի, որուն հետ գրեթէ ամէն իրիկուն միասին կ'անցնէինք Բերա, ուրիշ բարեկամներու հետ:

Քանի մը օր առաջ լսած էի որ ձերբակալուած է, իսկ հիմա կը տեսնէի որ ո՛չ թէ միայն վարի բակը ազատօրէն կը շրջէր, այլ նոյնիսկ գործի վրայ էր ու հրամաններ կուտար հո՛ն աշխատող գործաւորներու որոնք զբաղած էին երկար նստարաններ եւ այլն շինելու:

Պատուհանին առջեւ բաւական սպասեցի, յուսալով որ պ. Ստեփան վեր կը նայի եւ ես կրնամ իրեն նշան մը ընել: Բայց ի գո՛ւր: Բարեկամս իր գործովը զբաղած էր ու վեր նայելու միտք չունէր: Այն ատեն ուրիշ միջոցի մը դիմեցի: Թուղթի մը վրայ գրեցի թէ բանտարկուած եմ եւ եթէ կարելի է գայ զիս տեսնայ կամ գոնէ դուրսը գտնուող բարեկամներուս իմացնէ հոն գտնուիլս: Կամաց մը պատուհանը բացի եւ թուղթը նետե-

\* Չճանապարհորդութիւն:

ցի բակը: Այս անգամ Հնարքս յաջողեցաւ: Պ. Ստեփան պատու-  
հանը բանալու ձայնէն գլուխը վեր առաւ եւ տեսաւ նետած  
թուղթս զոր իսկոյն առաւ գետնէն եւ գրպանը խոթեց, առանց  
կարդալու: Կ'երեւայ որ չէր ուզեր բանալ կարդալով ո՛ր եւ է  
կերպով կասկած հրաւիրել իր վրայ:

Նոյն իրիկունն իսկ պ. Ստեփան յաջողեցաւ գալ մօտս ու  
վայրկեանի մը չափ տեսակցիլ: Ըսաւ թէ բանտին զանազան շի-  
նութիւնները իրեն յանձնուած են եւ ասոր համար ազատ ելե-  
մուտ ունի ու պաշտօնեաներուն ծանօթ է եւ ատոր շնորհիւ,  
հակառակ արգելքին, կրցած է գալ զիս տեսնել: Պ. Ստեփան  
ուրիշ քանի մը անգամներ ալ եկաւ քովս եւ ձեռքէն եկած  
մանր մուկն ծառայութիւնները չխնայեց ինծի:

Գալով տոբթոր Բըլըճեանին՝ բանտարկութենէս երեք օր  
ետքը, եկան տարին հարցաքննութեան: Այս երրորդ անգամ  
էր որ հարցաքննութեան կը տարուի եղբը:

Քանի մը ժամ ետքը վերադարձաւ զուարթ դէմքով մը:

– Գործս կարծեմ յաջող է, – ըսաւ:

– Ի՞նչ հարցուցին:

– Միշտ միեւնոյն բաները. ե՞րբ դաշնակցական եղած ես,  
ո՞վ էին ընկերներդ, որչա՞փ զէնք ունէիք, որչա՞փ դրամ հա-  
ւաքած էիք եւ այլն: Ամէնուն ալ խուսափողական պատաս-  
խաններ տուի: Ի վերջոյ հարցաքննիչը ըսաւ թէ իմ անմեղու-  
թեան մասին համոզում գոյացուցած է:

– Ուրեմն աչքդ լոյս:

– Մինչեւ որ ազատ չարձակուիմ՝ չեմ հաւատար:

Քիչ յետոյ եկան աւետելու թէ ազատ էր եւ կրնար մեկնիլ:  
Տոբթոր Բըլըճեան ուրախութեամբ իր գոյքերը ծրարեց, նոր  
ու հաստ ֆանէլա\* մը ինծի նուիրեց ու մեկնեցաւ:

Բարեկամիս ազատումը բնականաբար շատ գոհ թողոց  
զիս: Բայց միեւնոյն ժամանակ տխրեցայ ու ինքզինքս աւելի ա-  
ռանձին լքուած զգացի:

\* Կիսաթել ներքնաշապիկ:

– Քանի որ տոբթորը ազատեցաւ դուն ալ կ'ազատիս, – կը-  
սէին բանտակիցներս:

– Եթէ զիս հարցաքննեն վստահ եմ որ պիտի կրնամ անմե-  
ղութիւնս ապացուցանել, բայց դժբախտաբար զիս հարցնող  
փնտոող չկայ:

– Երբեմն առանց հարցաքննելու ալ ազատ կ'արձակեն:

Կը մտածէի որ արդարեւ պէտք չկար յուսահատելու, քանի  
որ դաշնակցական կուսակցութեան պատկանած անձ մը ազատ  
կ'արձակուէր, ես ու եւ է կուսակցութեան չէի պատկաներ, աւե-  
լի հաւանականութիւն ունէի օձիքս ազատելու:

Ա՛խ մէյ մը զիս հարցաքննելու տանէին...:

Երկու օր յետոյ բանտի կեանքին վարժուած էի: Ախորժակս  
բացուած էր եւ անձանձրոյթ ժամանակ կ'անցնէի:

Գրեթէ ամէն օր մէկ երկու հոգի կ'արձակուէին եւ անոնց  
տեղ ուրիշներ կուգային, այնպէս որ միշտ խօսակցութեան նոր  
նիւթ մը կը գտնէինք:

Ամէն անգամ որ նոր մէկը ներս խոթէին՝ իսկոյն կը շրջապա-  
տէինք զինքը:

– Բարի եկաք, – ըսելով:

Նորեկը, ընդհանրապէս տխուր եւ ընկճուած, մեր բարեւը  
կ'առնէր նեղսիրտ դէմքով մը:

– Հոգ մի՛ ընէք, աս ալ կ'անցնի:

Այս տեսակ մէկ քանի միսիթարական խօսքերէ ետքը, կու-  
գայինք բո՛ւն հարցումին.

– Ինչո՞ւ համար ձեզ ձերբակալեցին:

Եւ ահա՛ մարդը կը սկսէր իր պատմութիւնը:

Օր մը գայմագամի\* աստիճան ունեցող ծերուկ զինուորա-  
կանի մը բերին.

– Ես այս մարդը կը ճանչնամ, – ըսաւ տոբթոր Բըլըճեան, –  
Պանտրմայի Պատերազմական ատեանին նախագահն է:

Արդարեւ նոյն ինքն էր, կաշառակերութեամբ ամբաստան-  
ւած ու բերդարգելութեան դատապարտուած:

\* Գաւառապետի: ՀԱՌՄ՝ Գաւել զինուորական աստիճան:

Տխուր եւ յուսահատ, իր անկողնին վրայ ծալլապատիկ նըստած, անդադար գլուխը կ'օրօրէր եւ ատեն ատեն օ՛Ֆ մը արձակելով կ'ըսէր.

— Նէ իտիք, նէ օլտուք...\*

Խեղճը չէր կրնար հաշտուիլ իր նոր վիճակին հետ:

— Ես որ մէկ խօսքով մարդ մը կախաղան զրկելու իշխանութիւն ունէի՝ հիմակ պարզ ոստիկանի մը առջեւ ակնածանքով կենայու ստիպուած եմ,— կը կրկնէր:

Գալով իր կաշառակերութեան՝ բնականաբար սուտ զրպարտութիւն մը կը համարէր, տեսակ մը մեքենայութիւն որուն զոհ գացած էր միամտօրէն:

— Էֆէնտիմ,— կը բացատրէր,— մարդը պահարանի մը մէջ 300 ոսկի դրեր ու բերեր գրասեղանիս վրայ ձգեր է, ես ալ, առանց գիտնալու թէ մէջը ի՛նչ կայ, պահարանը գրպանս կը դնեմ... պարզապէս թիւրիմացութիւն մը: Ասոր համար ինձի պէս բարձրաստիճան զինուորական մը միթէ հինգ տարուան բերդարգելութեան կը դատապարտե՞ն:

Մեր դիմացի սենեակը իբրեւ կիներու բանտ կը ծառայէր եւ շատ անգամ իրենց աղմուկն ու պոռչտուքը կը լսէինք, երբեմն ալ առիթ կ'ունենայինք զիրենք տեսնելու, երբ երկու բանտերու դռները դիպուածով բաց կ'ըլլային:


Այդ կիները ընդհանրապէս թրջուհիներ էին մեծ մասամբ իբրեւ անբարոյական ամբաստանուած, իրենց մէջ կային նաեւ քաղաքական յանցաւորներ: Օր մը եօթանասուն ամեայ պառուալ յոյն կին մը նշմարեցինք բանտին դրան առջեւ: Յոյն վարդապետը Աղեքսանտր, հետաքրքիր, պահապան ոստիկանին հարցուց թէ այդ խեղճ կինը ի՞նչ բան ունէր հոս:

— Չորս ամիսէ ի վեր հոս է,— պատասխանեց պահապանը,— եւ դեռ հարցաքննութիւնը չէ աւարտած:

— Բայց ի՞նչ ամբաստանութեամբ ձերբակալուած է:

— Շատ ծանր ամբաստանութեամբ մը,— պատասխանեց ոստիկանը խնդալով:

\* Ինչ էիք, ինչ եղանք:



Երուանդ Օտեանի տունը Կ.Պոլսում



Երուանդ Օտեան, Արամ Շալվարճեան,  
Արամ Անտոնեան

Վարդապետը որ ամիսներէ ի վեր բանտն էր, կրցած էր մտերմութիւն հաստատել բանտի ոստիկաններուն եւ նոյնիսկ քօմիսէրին հետ եւ ատով բաւական առանձնաշնորհումներ կը վայելէր, օրինակի համար, երբեմն դուրսի սրահը կը պտտէր, շատ անգամ բանտին դրան առջեւ կը կենար եւ կրնար տեսակցիլ ծանօթներու հետ:

Իր այս բացառիկ դիրքէն օգտուելով՝ ոստիկանին ըսաւ.

— Արդեօք կարելի չէ՞ որ պառաւ կիներ հոս կանչես ու պահ մը հետը տեսնուինք:

Պահապանը քիչ մը վարանելէ ետքը, հաւանեցաւ եւ պառաւը բերաւ մեր դրան առջեւ:

Կիներ իր պատմութիւնը պատմեց լալահառաչ ձայնով.

— Ես այստէ՛ֆանոցի եմ, — ըսաւ, — հաւ մը ունէի որ թուխս նստել կ'ուզէր, իսկ ես չէի թողուր: Եւ սակայն կը տեսնէի որ հաւս իր առողջութիւնը կը կորսնցնէր: Բարեկամներ խորհուրդ տուին որ զայն առնեմ ու մէկ քանի անգամ ծովի ջուրին մէջ մխրճեմ: Հաւս առի, գացի ծովեզերք ու հաւունս ոտքերէն բռնելով՝ քանի մը անգամ ջուրին մէջ խոթեցի հանեցի: Ճիշտ այդ միջոցին զգացի որ մէկը թեւէս կը բռնէր: Ետիս դարձայ. մարդ մը կանգնած էր քովս:

— Ի՞նչ կ'ընես հո՛ս, — հարցուց:

— Հաւս ջուրը խոթեցի, — պատասխանեցի:

— Ինչո՞ւ համար:

Պատճառը բացատրեցի իրեն:

— Հետս եկուր, — ու տարաւ քարաքօլ:

Հոն կարճ հարցաքննութիւն մը ըրին ու ղրկեցին զիս Մաքրիգիւղ. հոնկէ ալ հոս բերին: Քանի մը անգամ հարցաքննեցին եւ ամէն անգամ ալ նոյն բանը կը կրկնեն:

— Ի՞նչ բան:

— Կ'ըսեն որ ծովեզերքէն նշան ըրած եմ ընդծովեաններուն: Ի զո՛ւր կըսեմ թէ ատանկ բան մը մտքէս անցած չէ, թէ պարզապէս բարեկամներու խորհուրդին վրայ՝ հաւս ջուրը խոթած

էի: Խորհուրդը տուող երկու կիներն ալ բերին Հարցաքննեցին, որոնք իմ ըսածներս Հաստատեցին, այսուհանդերձ մինչեւ հիմա բանտարկուած կը մնամ:

Եւ խեղճ պառաւը հեռացաւ լալով:

Անգամ մը խեղճ ծերունի թուրք մը բերին մեր քովը:

Մարդը, յուզումէն շուարած ու շփոթած, խօսելու կարողութիւն չունէր:

Քիչ մը ջուր տուինք իրեն, հանդարտեցուցինք, յուսադրեցինք: Յետոյ, մեր սովորական Հարցումը ուղղեցինք:

— Ինչո՞ւ ձեզ Հոս բերին:

— Էֆէնտիմ,— սկսաւ պատմել ծերունին,— Հանգստեան կոչուած նախկին պալատական պաշտօնեայ մըն եմ, ամսականս առնելու համար գործողութիւն մը կար ըլլալիք՝ ասոր համար Պապը Ալի գացի ու հագիւ թէ ներս մտած էի՝ չորս հոգի վրաս յարձակեցան:

— Ո՞վ ես, ուրկէ՞ կուգաս, ո՞ւր կ'երթաս,— Հարցնելով:

— Խնդիրքս բացատրեցի, բայց դարձեալ զիս բռնեցին ու սենեակ մը տարին. Հոն վրաս գլուխս խուզարկեցին, ի վերջոյ այցաքարդս գտան որուն վրայ անունս եւ նախկին պաշտօնս գրուած էր:

— Դուն հիմա Հանգստեան կոչուած ես, ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս քարդը կը գործածես,— ըսին:

— Պատասխանեցի թէ այդ քարդերը շատոնց ի վեր շինել տուած էի, երբ դեռ պաշտօնի վրայ կը գտնուէի:

Այս պատասխանս ալ գոհացուցիչ չգտան ու առին զիս Հոս բերին:

Ճամբան ոստիկանը պատմեց թէ՛ հիմա Պապը Ալի մտնողները ամենախիստ հսկողութեան կ'ենթարկուին, որովհետեւ վախ կայ որ նախարարներուն դէմ մահափորձ պիտի կատարուի:

— Ես բանէ մը տեղեկութիւն չունէի եւ ահա այս փորձանքը գլուխս եկաւ: Երեւակայեցէ՛ք որ Չէնկէլ քէօյ կը նստիմ, կիսս

մեռած է, տղաքս առանձին են, եթէ այս իրիկուն տունս չերթամ, թէ՛ անօթի կը մնան եւ թէ տանը մէջ չեն կրնար առանձին մնալ...:

Քիչ մը ետքը եկան առին մարդը եւ նոր Հարցաքննութեան տարին:

Երբ վերադարձաւ, ա՛լ աւելի այլայլած վիճակ մը ունէր:

Այցաքարդի խնդիրը ծանրակշիռ հանգամանք մը առած էր: Ձինքը կ'ամբաստանէին թէ դիտմամբ նախկին պաշտօնը նշանակած էր քարդին վրայ, որպէսզի կարող ըլլայ անով նէզարէթը մտնել եւ իր ոճրափորձը կատարել:

Գիշերը մեզի հետ անցուց եւ հետեւեալ օրը զինքը տարին Պատերազմական ատեանի բանտը:

Ուրիշ անգամ փաթթոցաւոր պատանի մը բերին մարած վիճակի մէջ: Այնչա՛փ սաստիկ ծեծած էին զինքը որ ուշակորոյս եղած էր:

Մեր խնամքներուն շնորհիւ խելքը գլուխը եկաւ:

Գոնիայէն բերած էին զինքը:

— Դպրոցական ընկերներէս մէկուն՝ որ Հոս կը գտնուի՝ նամակ մը գրած էի որուն մէջ, կատակի համար կ'ըսէի թէ ես սատրազամ\* պիտի ըլլամ, թէ զինքը ներքին գործոց նախարար պիտի անուանեմ, թէ ուրիշ ընկեր մը արտաքին գործոց նախարար պիտի ընեմ եւ այլն:

Այս նամակս ձեռք կ'անցնի եւ ահա՛ ամէնքս ալ կը ձերբակալին:

— Միւս ընկերներդ ո՞ւր են,— Հարցուցինք:

— Ամէնքն ալ Հոս են, բայց տարբեր բանտի մը մէջ:

— Անոնք ալ ծեծ կերա՞ն:

— Այո՞, ինծի չափ անոնք ալ կերան,— պատասխանեց խեղճը:

Այս տղան ալ զրկուեցաւ Պատերազմական ատեան:

Իմ բանտարկութեանս միջոցին էր նաեւ որ ռուսահպատակ

\* Վարչապետ:



Հայերը բերին: Ձիրենք տեսայ պատուհանէն, վարի բակը խռնուած էին: Իրենց գլխարկները առած ու աղտոտ ֆէսեր տուած էին. մէկ քանին բոլորովին գլխաբաց էին: Հոնտեղէն փութա եղան եւ ղրկուեցան էնկիւրի:

Գիշերները սոսկալի տեսարաններ կը պարզուէին վարի բակը, գոր կը դիտէի պատուհանէս:

40-50 Հայեր, ընդհանրապէս ամէնքն ալ գաւառացի, բեռնակիր, ծառայ, մանրավաճառ կամ գործաւոր, որոնք բանտէն Հանելով՝ մութին մէջ կը շարէին քով քովի:

Յետոյ կը սկսէր անուանակոչութիւնը:

– Սահակի որդի Աւետիս, վանցի:

– Ես եմ, – կը պատասխանէր խեղճուկ ձայն մը:

– Կարապետի որդի Մարկոս, սըվազցի:

– Ես եմ...

Ու այսպէս մէկիկ մէկիկ ամէնուն ինքնութիւնը կը Հաստատուէր:

– Քսանըհինգական ղրուշ պիտի վճարէք, – կը գոչէր չափուշին\* վայրագ ձայնը:

Ոմանք անտրտունջ կը Հանէին քսակներն ու պահանջուած գումարը կուտային:

Ուրիշներ կ'առարկէին թէ դրամ չունէին:

Եւ ահա՛ մտրակը անխնայ կ'իջնէր իրենց գլխին, ուսին, դէմքին վրայ:

Մեծուողները լալով պոռալով կը վճարէին պահանջուած գումարը:

Բայց երբեմն կը պատահէր որ իրաւցնէ դրամ չունէին խեղճերը: Այս պարագային ծեծը կը շարունակուէր բաւական ատեն, մինչեւ որ չափուշը Համոզում գոյացնէր թէ մարդը դրամ չունի:

Այն ատեն միւսներուն կը դառնար եւ կը գոչէր.

\* Ձիւնորական ցածր աստիճանաւոր:

– Այս մարդուն դրամը դուք պիտի տաք:

Եւ եթէ ընդդիմանային կրկին ծեծ:

Քսանհինգ ղրուշը երկաթուղիի վարձքն էր, Պոլսէն մինչեւ Իզմիթ:

Ամբողջ այս գործողութեան միջոցին անլուր Հայհոյանքներ կը լսուէին խեղճ աքսորականներու Հասցէին:

Յետոյ զոյգ զոյգ կը շարէին ամէնքը եւ ճամբայ կը Հանէին դէպի կամուրջ:

Չորս օրէ ի վեր բանտարկուած էի երբ իրիկուն մը ոստիկան մը եկաւ ձեռքը քառթ փութալ\* մը բռնած:

– Հոս Հայերէն գիտցող կա՞յ, – Հարցուց:

Ձիս ցոյց տուին:

– Կարդա՛ սա ու թարգմանէ, – ըսաւ պատկերազարդ քառթ փութալ մը երկարելով ինծի:

– Բայց չըլլայ որ սխալ թարգմանես, ետքը գլխուդ փորձանք կուգայ:

Քառթ փութալին պատկերը ճանչցայ, Փայլակ Գոլանճեանն էր զինուորականի տարազով, քառթը էնկիւրիէն կուգար եւ ուղղուած էր Սեպուհ Ակունիի, պարունակութիւնը բոլորովին անվնաս էր: Թարգմանեցի բառ առ բառ:

Այդ քառթը կը յայտնէր թէ Սեպուհ Ակունին ալ ձերբակալուած էր եւ վրան խուզարկած ատեննին գտած էին այդ նամակը:

Հետեւեալ առտու կանուխ մեր բանտին դուռը բացուեցաւ եւ Թիմուր էֆէնտի երեւցաւ:

Թիմուր էֆէնտի սէվքիաթի\*\* պետն էր:

– «Ժամանակ» թերթին խմբագիր Երուանդ Օտեան, – գոչեց:

– Ես եմ, – պատասխանեցի:

– Չորս Հարիւր յիսուն ղրուշ պիտի վճարես:

\* Բացի:

\*\* Տեղափոխութեան, փոխադրութեան, առաքման:

– Ինչո՞ւ համար:  
 – Ճանապարհածախս... վաղը առտու ճամբայ պիտի ելլես, դրամը պատրաստէ՛ եւ եթէ ուրիշ պատրաստութիւններ ալ ունիս՝ ըրէ՛:

– Բայց իմ քովս այդչափ դրամ չունիմ, առարկեցի, հազիւ 120 դրուշ կայ գրպանս:  
 – Ատիկայ իմ գիտնալիք բանս չէ: Մինչեւ իրիկուն քեզի պայմանաժամ 450 դրուշ ճարելու համար:  
 – Այն ատեն թոյլ տուէք որ ոստիկանի մը հետ դուրս ելլեմ ու դրամ ճարեմ:  
 – Անկարելի է:  
 – Գոնէ հոս մօտը մինչեւ «Ժամանակ»ի խմբագրատունը երթամ, հինգ վայրկեանի խնդիր է:  
 – Անկարելի է, բացարձակապէս անկարելի, ոտքդ այս սենեակէն դուրս չես կրնար նետել:  
 – Գոնէ թոյլ տուէք որ մէկու մը հետ թուղթ մը ղրկեմ խըմբագրատուն:  
 – Այդ ալ չըլլար...  
 Եւ թիմուր էֆէնտի մեկնեցաւ:  
 Այսպէս ուրեմն հարցաքննուելու, ազատ արձակուելու յոյսը կորած էր: Հիմա հարկ էր մինչեւ իրիկուն ճամբու ծախքը հայթայթել:  
 Բայց ինչպէ՞ս:  
 Խորհուրդ հարցուցի յոյն վարդապետին:  
 – Գնա՛ քօմիսէրը տես եւ խնդիրքդ բացատրէ՛, թերեւս ինք հրաման տայ դուրս ելլելու կամ գոնէ մարդ մը ղրկելու:  
 Պահապան ոստիկանին ըսի որ կ'ուզէի քօմիսէրը տեսնել խիստ կարեւոր խնդրի մը համար: Վարդապետին միջամտութեամբ ոստիկանը բարեհաճեցաւ երթալ քօմիսէրին քով:  
 Քիչ յետոյ վերադարձաւ եւ ըսաւ.  
 – Քօմիսէրը հոս պիտի գայ կրնաս հետը խօսիլ:  
 Արդարեւ քօմիսէրը սովորութիւն ունէր օրը անգամ մը այ

ցելելու մեր բանտը: Ժամ մը յետոյ եկաւ: Խնդիրս բացատրեցի իրեն:  
 – Ձեռ կրնար դուրս ելլել, ո՛չ ալ թուղթ գրել ու ղրկել:  
 – Թոյլ տուէք որ թէլէֆօն ընեմ խմբագրատուն:  
 – Այդ ալ կարելի չէ:  
 – Ուրեմն դուք թէլէֆօն ըրէք եւ ըսէք որ ինծի դրամ հասցընեն:  
 – Ատիկայ մեր գործը չէ:  
 – Ուրեմն ի՞նչ կ'ուզէք որ ընեմ:  
 – Երկար ըրիր,– ըսաւ քօմիսէրը եւ կռնակը դարձնելով մեկնեցաւ:  
 – Դուն ինչ որ պիտի գրես գրէ՛ ու թուղթը ինծի տուր, ես իր տեղը հասցնեմ,– ըսաւ յոյն վարդապետը:  
 Անմիջապէս թղթի կտորի մը վրայ երկտող մը գրեցի Սարգիս էֆէնտիին եւ Գոնիա երթալս յայտնելով՝ տասը ոսկի ուզեցի:  
 Վարդապետը սրճեփին ձեռքով թուղթս ղրկեց:  
 Մարդը քիչ ետքը վերադարձաւ:  
 – Տպարանը գոց էր, մարդ չի կար,– ըսելով:  
 Յետոյ հասկցայ որ ապուշը փոխանակ «Ժամանակ»ի՝ «Բիւզանդիոն»ի խմբագրատունը գացած էր թերեւս զայն աւելի մօտիկ գտնելով:  
 Իրիկուն կ'ըլլար եւ դեռ բան մը չէի կրցած ընել:  
 Ուշ ատեն թիմուր էֆէնտին եկաւ:  
 – Ի՞նչ ըրիր, դրամը գտա՞ր,– հարցուց:  
 – Ո՛չ, էֆէնտի:  
 – Ուրեմն մինչեւ Իզմիթ շոգեկառքով կ'երթաս, անկէ անդին կը քալես...  
 – Մինչեւ ո՞ւր:  
 – Մինչեւ Գոնիա,– պատասխանեց թիմուր էֆէնտի:  
 – Քանի՞ օր կը տեւէ:  
 – Քառասուն օր:

– Աման Թիմուր էֆէնտի, ճար մը մտածէ, ինծի սա փորձանքէն ազատէ...

– Ի՞նչ կ'ուզես որ ընեմ, ես գրպանէ՞ս վճարեմ 450 ղրուշը:

– Բայց ես ի՞նչ կրնամ ընել, քովս դրամ չունիմ, դուրսէն դրամ բերել տալու համար ինծի Թոյլտուութիւն չէք ըներ... խմբագրատունը հոս մօտն է, մէկը ղրկեցէք եւ իմաց տուէք:

Յոյն վարդապետն ալ միջամտեց.

– Կ'աղաչեմ Թիմուր էֆէնտի դուք եթէ ուզէք բան մը կըրնաք ընել:

– Մարդ ղրկել չըլլար, բայց Թէլէֆօն կ'ընեմ ձեր խաթերը համար:

– Շնորհակալ եմ:

– Հետս եկուր տեսնեմ, – ըսաւ ինծի դառնալով:

Միասին դուրս ելանք ու գացինք սենեակ մը ուր Թէլէֆօն կար:

Թիմուր էֆէնտի սկսաւ խօսիլ:

Սարգիս էֆէնտի խմբագրատունը չէր: Իմացուցին թէ իր աւերածազին՝ երկաթի վաճառական Միհրան էֆէնտի Գարագաշեանի տունը կը գտնուէր, որ նոյն միջոցին կը բնակէր Բանկալթիի կողմը: Թիմուր էֆէնտի խնդիրը բացատրեց եւ ըսաւ որ երթան զինքը գտնեն:

Վերադարձայ բանտ բաւական յուսահատ վիճակի մէջ:

Հետեւեալ առտու արշալոյսին ճամբայ պիտի ելլէինք եւ արդէն իսկ գիշերը բաւական առաջացած էր: Գիտէի որ խմբագրատան մէջ ամէն մարդ զբաղած էր. ո՞վ գործը պիտի ձգէր եւ երթար Սարգիս էֆէնտին փնտռելու:

Կէս գիշերը անցած էր երբոր Թիմուր էֆէնտի եկաւ զիս գըտնելու.

– Ի՞նչ ըրիր, դրամդ եկա՞ւ, – հարցուց:

– Ո՛չ, – պատասխանեցի, – վայրկեանէ վայրկեան կը սպասեմ կոր:

– Եթէ մինչեւ հիմա չեկաւ, ա՛լ ասկէ ետքը գալիք չունի:

– Վաղը առտու անպատճառ կը ստանամ, վստահ եմ:

– Վաղը առտու շատ ուշ է:

– Կարելի չէ՞ որ ցերեկուան կառախումբով երթանք:

– Ճամփորդի համար հիմակ մէկ կառախումբ կայ որ արշալոյսին կը մեկնի եւ անոր հասնելու համար մութին ճամբայ ելելու է հոսկէ:

Միւս բանտակիցներս փութացին ինձ օգնութեան եւ ջանացին համոզել Թիմուր էֆէնտին որպէսզի մեկնուամ օր մը յետաձգէ:

Նախ ընդդիմացաւ, ի վերջոյ կրցանք զինքը համոզել:

– Շատ աղէկ, – ըսաւ, – ձեր ամէնուն խաթերը համար, իմ անձնական պատասխանատուութեանս ներքեւ օր մը պայմանաժամ կուտամ:

Ամէնքս միաբերան շնորհակալ եղանք այս մեծանձնութեանը համար:

Խոշոր փորձանքէ մը ազատած էի եւ կրցայ հանգիստ քնանալ մինչեւ առտու: Եթէ Թիմուր էֆէնտի յամառէր անպատճառ երկուշաբթի արշալոյսին, ճամբայ հանելու զիս՝ պիտի ստիպուէի Իզմիրթէն մինչեւ Գոնիա ոտքով ճամբորդելու:

Իր բարեացակամութենէն օգտուելով ըսի.

– Եթէ երբեք Գոնիայէն աւելի հեռուն պիտի ղրկեն զիս, իմացուցէ՛ք որպէսզի ըստ այնմ հոգամ պէտքերս եւ աւելի դրամ ուզեմ:

– Թուղթդ Գոնիայի համար գրուած է, հետեւաբար Գոնիա պիտի մնաս, – հաւաստեց ինծի:

– Արդեօք կը բանտարկե՞ն զիս հոն:

– Ձէ՛, աքսոր կ'երթաս կոր հոն, երաշխաւոր մը կուտաս եւ քեզ ազատ կը թողուն, միայն թէ ամէն օր պիտի երթաս «իսպաթը վիճիւտ» \* ընելու:

– Այդ դիւրին է:

Թիմուր էֆէնտի մեկնեցաւ:

\* Այստեղ՝ Աերկայաճալ:

Բաւական Հանդարտած էի: Գոնիա վերջապէս բնակելի քաղաք մըն էր ու Պոլսոյ մօտ, մանաւանդ երկաթուղիի գիծին վրայ:

Սակայն Հանդարտութիւնս երկար չտեւեց:

— Ամէնքն ալ այսպէս խաբելով ճամբայ Հանեցին,— ըսաւ փաթթոցաւոր Հօճան որ անկողնին մէջ երկնցած մեզ մտիկ կ'ընէր:

— Ինչպէ՞ս,— ըսի,— միթէ Գոնիա չպիտի՞ տանին զիս... բայց տոմսակը այդ տեղի Համար պիտի առնուի:

— Գոնիայէն թերեւս անցունեն,— շարունակեց Հօճան,— բայց չեմ յուսար որ Հոն թողուն, Գոնիա Հայերուն Համար աքսորավայր չկրնար ըլլալ:

Հօճային այս խօսքերը կրկին միտքս խռովեցին, բայց ալ քունս եկած էր ու անկողին մտայ:

Հետեւեալ առտու կանուխ Թիմուր էֆէնտին երեւցաւ:

— Որո՞ւ որ լուր պիտի ղրկես շուտով գրէ՛ ու թուղթը ինծի տուր որ ղրկեմ իր Հասցէին,— ըսաւ:

Նոյն ժամուն Սարգիս էֆէնտի տակաւին խմբագրատուն եկած չէր կրնար ըլլալ: Թուղթս գրեցի «Ժամանակ»ի գործակատար պ. Լեւոն Պիւլպիւլեանին ու յանձնեցի Թիմուր էֆէնտի:

Քիչ յետոյ եկաւ զիս տեսնելու բարեկամս ճարտարապետ պ. Ստեփան:

— Բանի մը պէտք ունի՞ս,— Հարցուց:

— Այո՛,— ըսի,— վաղը արշալոյսին ճամբայ պիտի ելլեմ, շուտով Հանրային պարտքի վարչութիւնը գնա՛, Լեւոն էֆէնտի Տէմիրճիպաշեանը տես եւ ըսէ իրեն եւ միանգամայն խնդրէ՛ որ ինծի երկու ոսկի տայ: Եթէ չէ եկած, սպասէ:

— Շատ աղէկ,— ըսաւ բարեկամս ու ճամբայ ելաւ:

Կը մտածէի որ թերեւս ձախող դիպուածով մը չէի կրնար խմբագրատունէն դրամ ստանալ, ասոր Համար կ'ուզէի գոնէ մէկ երկու ոսկի ունենալ գրպանս:

Բայց, բարբախտաբար, վերջապէս եկաւ պ. Լեւոն Պիւլպիւլեանը Թիմուր էֆէնտի ընկերակցութեամբ:

Այս վերջինը ըսաւ.

— Ինչ որ պիտի խօսիս՝ խօսէ, միայն թէ թրքերէն լեզուով:

Քանի մը բառով կացութիւնս պարզեցի իրեն: Պ. Լեւոն մեկնեցաւ ու քիչ յետոյ վերադարձաւ տասը ոսկի բերելով ինծի, ինչպէս նաեւ փոքրիկ պայուսակ մը որուն մէջ դրած էր Հաց, պանիր, փաստըրմայ, կէվրէկ\* ու փոքրիկ շիշ մը օտը քօլօներ:

Ա՛լ փրկուած էի:

Պ. Ստեփանն ալ եկաւ երկու ոսկի բերելով: Նախապէս քովս վեց մէճիտիէի չափ դրամ կար: Ծամբու ծախքս վճարելէ յետոյ քովս կը մնար ինը ոսկիէ աւելի դրամ:

Իսկոյն Թիմուր էֆէնտի յանձնեցի 450 դրուշը:

— Հետս եկո՛ւր,— ըսաւ:

Գացինք սենեակ մը ուր երկու պաշտօնեաներ գրասեղանին առջեւ նստած կը գրէին:

Քիչ յետոյ Հոն բերին նաեւ Սեպուհ Ակունին եւ դեղագործ Ներսէս Չաքրեանը: Հասկցայ որ երեքս միասին պիտի ճամբորդէինք ու այս բանը սրտապնդեց զիս: Չաքրեանը առաջին անգամն էր որ կը տեսնէի, բայց Սեպուհ Ակունի Հին ծանօթ մըն էր եւ նոյն թուականին միասին կ'աշխատակցէինք «Ժամանակ»ի:

— Երեքիդ Համար 1350 դրուշ պիտի վճարէք,— ըսաւ պաշտօնեան,— այսինքն մարդ գլուխ 450 դրուշ:

— Ես արդէն իմ բաժինս յանձնած եմ Թիմուր էֆէնտիի,— պատասխանեցի:

Սեպուհ Ակունի քիչ մը ընդդիմացաւ, ըսաւ թէ իրեն Համար չափազանց էր այդ դրամը, թէ Գոնիա երթալու Համար այդքան գումարի պէտք չկար եւ այլն:

Այն ատեն մեզի դիտել տուին թէ՛ բացի մեր ճամբու ծախքէն, պարտաւոր էինք վճարել նաեւ մեզի ընկերացող երկու օտարիկաններուն երթուղարձի ծախքը, ինչպէս նաեւ ճամբորդութեան միջոցին անոնց օրականները:

\* Հացի տեսակ:

Այսպէս ուրեմն, կառավարութիւնը առանց ո՛ր եւ է որոշ ամբաստանութեան, մեզ կը ձերբակալէր ու ոստիկանական հսկողութեամբ կ'աքսորէր ու մենէ կ'առնէր ո՛չ թէ միայն մեր ուղեւորութեան ծախքերը, — ինչ որ արդէն անլուր անիրաւութիւն մըն էր, — այլ նաեւ ոստիկաններու ճամբու ծախքը եւ օրականները:

Երբեք կամայական բռնակալութիւնը այս աստիճանին չէր հասած կարծեմ:

Սեպուհ Ակունի թեթեւ ընդդիմութենէ մը ետք տեղի տուաւ բռնի ուժին առջեւ եւ դրամը ցնծաց: Ներսէս Չաքրեան արդէն յօժարակամ վճարած էր իր տուրքը:

Բանտին մէջ վերջին գիշերս հանգիստ անցուցի: Մինչեւ Գոնիա ոտքով երթալու մղձաւանջը փարատած էր:

Լուսնալու մօտ, երբ տակաւին անկողինն էի, Թիմուր էֆէնտի եկաւ ու իր խոշոր ձայնովը պոռաց.

— Երուանդ Օտեան, ե՛լ հագուէ՛, ճամբայ պիտի ելլէք:

Բանտակիցներս իրենք ալ արթնցած էին ու իրենց անկողիններէն տխրութեամբ կը դիտէին իմ հապճեպով հագուելիս:

Վեցօրեայ բանտարկութեանս միջոցին ամէնուն հետ բարեկամացած, գրեթէ մտերմացած էի: Բանտը շոգեմալային ճամբորդութեան կը նմանի, հո՛ն անծանօթներ շուտով մտերմութիւն կը հաստատեն իրարու հետ: Բանտարկեալները տխուր էին, ո՛չ թէ իրենց մէկ ընկերոջ մեկնումին համար, այլ մանաւանդ որ գիտէին թէ ի՛նչ վտանգ կը սպառնար ինծի:

Յորմէհետէ իմ Գոնիա աքսորուելիս հաղորդուած էր, ամէնքեւ անձկութեամբ համակուած էին, թէեւ կը ջանային գայն ծածկել ու կարելի եղածին չափ սրտապնդել:

Միայն թուրք հօճան էր որ, չեմ գիտեր չարութեամբ թէ անկեղծութեամբ կամ միամտութեամբ իր զգացումները չէր ծածկեր:

Ինքն ալ արթնցած էր հիմակ եւ ուրիշներուն հետ կը դիտէր մեկնումիս պատրաստութիւնները:

— Հէ՛յ վախ, հէ՛յ վախ, — կը կրկնէր գլուխը օրօրելով:  
Մէկ քանի կտոր ճերմակեղէններս ու պաթանիէս\*, զորս տունէն բերել տուած էի, ծրար մը ըրի, թեւս զարկի, կերակրեղէնի փոքրիկ պայուսակս ալ ձեռքս, հրաժեշտ առի բանտի ընկերներէս ու դուրս ելայ:

Դուրսը կը սպասէին Ներսէս Չաքրեան եւ Սեպուհ Ակունի: Մեզ իջեցուցին վարի բակը ուր քառասունի չափ ուրիշ Հայեր ու տասնի չափ օտարականներ շարուած էին:

Հայերը ընդհանրապէս գաւառացի ամուրիներ էին, բացառաբար միայն երկու պոլսեցի ծանօթ դէմքեր նշմարեցի Կիւլպէնկեան էֆէնտին եւ միւսը ուսուցիչ Խաչիկ Ինկիլիզեան: Իսկ օտարականները անգլիահայաստակ մալթացի նաւուղիդներ\*\* ու նաւապետներ էին: Դպրոցական աշակերտներու պէս ամէնքս ալ երկերկու շարուեցանք: Ամէնէն ետեւէն կ'երթայի ես, քովս ունենալով Սեպուհ Ակունին, իսկ ճիշտ մեր առջեւէն կ'երթային Ներսէս Չաքրեան եւ Կիւլպէնկեան:

Ոստիկաններուն մէջ պահ մը խնդիր ծագեցաւ թէ՛ ձեռքերնիս քէլէփչէ\*\*\* դնելո՞ւ էր:

Բարեբախտաբար, Թիմուր էֆէնտի որ մեզի պիտի ընկերանար մինչեւ Հայտար Փաշա, պէտք չտեսաւ:

Թափօրը ճամբայ ելաւ: Լուսցած էր, ու բարակ անձրեւ մը կուգար, աշնանամուտի տխուր օր մը:

Սեպտեմբեր մէկ, երեքշաբթի օր մը ճամբայ կ'ելլէինք:

— Գէշ, — դիտել տուաւ մենէ մէկը, — երեքշաբթին ուղուրսուղ\*\*\*\* համարուած է:

Անցանք «Բիւզանդիոն»ի խմբագրատան առջեւէն:

Գրաշարները պատուհաններէն մեզ կը դիտէին: Ժպտալով բարեւեցի զիրենք:

\* Հաստ վերմակ:  
\*\* Լոցմաններ:  
\*\*\* Ձեռնաշղթայ:  
\*\*\*\* Ռժբախտ:

Սեպուհ Ակունի, որ քովէս կը քալէր, ջղայնոտած վիճակ մը ունէր եւ փախուստի ծրագիրներ կ'երեւակայէր:

— Արդեօք սրտեղէն փախչի՞մ,— կ'ըսէր ամէն անգամ որ կողմնակի փողոց մը դէմերնիս կ'ելլէր:

Այդպիսի փորձ մը անկարելի չէր, բայց շատ վտանգաւոր էր: Ութը տասը զինեալ ոստիկաններ կ'ընկերանային մեզի, որոնցմէ մին ճիշդ մեր ետեւէն կը քալէր:

Երբ կամուրջ Հասանք Սեպուհ Ակունի դարձեալ փախչելու փափաք մը ունեցաւ որ միւսներուն պէս անգործադրելի մնաց:

Առտուան այդ ժամուն փողոցները եւ կամուրջին վրայ անցորդները շատ ցանցաւ էին, այնպէս որ Հայտար Փաշայի նաւամատոյցը Հասանք առանց ծանօթ անձի մը Հանդիպելու:

Հոն, նաւամատոյցին վրայ կը սպասէին մալթացի աքսորականներուն ընտանիքները, կիներ, աղջիկներ, տղաք, որոնք լաց ու պոռչտուք մը ձգեցին իրենց մարդիկը նշմարելուն պէս:

— Քուռածիօ, քուռածիօ (քաջութիւն, քաջութիւն),— կը պոռային կիները իրենց ամուսիններուն վիզը պլլուած:

Ու իրենց բերած դրամը, ուտելիքները, ըմպելիի շիշերը անոնց վերարկուներուն գրպանը կը տեղաւորէին:

Շոգենաւին յապաղմանը պատճառաւ բաւական երկար ատեն մնացինք նաւամատոյցին վրայ:

Ոստիկանները մեզ մեկուսացուցին անկիւն մը եւ շուրջերնիս պաշարեցին:

Պ. Ստեփան եկած էր մնաս բարով ըսելու ինձի: Յաջողեցաւ մօտենալ ու ինձ յանձնեց քանի մը տուփ սիկառէթ եւ մկրաս մը, զոր խնդրած էի իրմէ:

Վերջապէս շոգենաւը եկաւ, պարպուեցաւ ու մեզ ներս մտցուցին: Ոստիկան մը իսկոյն իջաւ ստորնայարկի սրահը, հոն գտնուող բոլոր ուղեւորները դուրս Հանեց ու մեզ ամէնքս այդ տեղ նստեցուցին, մինչ երկու ոստիկաններ սանդուխին գլխիս վրայ կը հսկէին:

Ինձ ներսէս Չաքրեան շատ յուզուած ու ընկճուած էր

գրեթէ մինչեւ վերջը կուլար եւ ես զո՛ւր կը փորձէի մխիթարել ու սրտապնդել զինքը: Անդադար կնոջը, մօրը եւ փոքրիկ զաւակներուն խօսքը կ'ընէր: Ես բոլորովին գտած էի պաղարիւնութիւնս. վեցօրեայ բանտարկութենէ ետքը այս ճամբորդութիւնը Հաճոյք կը պատճառէր ինձի: Գալով սպառնացող ապագայ վտանգներուն՝ անոնց վրայ չէի մտածեր երբեք: Այդ օրը կ'այրէի ու կեանքս վտանգի մէջ չէր եւ ասիկա բաւական էր ինձի Համար:

— Ինչո՞ւ,— կը խորհէի,— խռովիլ վտանգներու, դժբախտութիւններու Համար որոնք թերեւս չպիտի պատահէին:

Հայտար Փաշա մեզ առաջնորդեցին կայարանը, ուր արդէն կառախումբը կը սպասէր պատրաստ:

Ներսէս Չաքրեանի մայրը եկած էր իր զաւակը տեսնելու: Հիացայ այդ կնոջ կորովի նկարագրին վրայ: Մինչ զաւակը յուսահատ կուլար՝ մայրը անխռով, գրեթէ ժպտուն, կը ջանար սրտապնդել զայն:

— Բան մը մի՛ մտածեր, բանի մը հոգ մի՛ տանիր, միայն առողջութիւնդ խնամէ,— խորհուրդ կուտար,— դեղարանի գործերդ ես կը կարգադրեմ, կինդ եւ զաւակներդ ես կը խնամեմ... քեզի Համար ալ ամէն բան պիտի ընեմ շուտով ետ բերել տալու Համար:

Ու կը յիշէր իր կատարած դիմումները:

— Եթէ պէտք ըլլայ՝ մինչեւ Շէյխ իւլ Իսլամին պիտի երթամ,— կը գոչէր:

Մօրը այդ խօսքերը եւ աննկուն ընթացքը ազդեցին Չաքրեանի վրայ, որ Հանդարտեցաւ ու իր լացը դադրեցուց:

Մեզ, բոլոր աքսորականներս, մասնաւոր վակօնի մը մէջ տեղաւորեցին:

Կայարանի քարափին վրայ կեցած էին մալթացիներու կիները որոնք շոգենաւով մեզի ընկերացեր էին:

Վայրաշարժը սուլեց եւ կառախումբը ճամբայ ելաւ:

— Քուռածիօ,— կը պոռային կիները:

Մինչ տիկին Չաքրեան վերջին անգամ կը սրտապնդէր զա-  
լակը.

— Ներսէս, Հոգ մի՛ ըներ, քիչ օրէն կը վերադառնաս, քաջ ե-  
ղի՛ր, երթաս բարով...:

Առաջին անգամ ճշմարիտ յուզում մը զգացի, երբ Մալթէ-  
փէէն անցած ատեննիս Իշխանաց կղզիները պարզուեցան աչ-  
քերուս առջեւ:

Չերբակալութենէս առաջ, շաբաթը 3-4 օր այդ կղզիները  
կ'անցնէի, մանաւանդ Հալքի, բարեկամիս՝ Արշակ Պապիկեանի  
տունը, որ եղեւիններու անտառակին ստորոտը կը գտնուէր:  
Հիմա զիս դէպի վտանգաւոր անծանօթը տանող կառախումբին  
մէջ, կը վերյիշէի Հոն անցուցած Հաճելի ու անդորր ժամերս,  
ծովի լողանքը, եղեւիններու տակ մեր ոտքով պտոյտները, բա-  
ցօթեայ կերուխումները, նարտի խաղերը, բոլոր այն ոչնչու-  
թիւնները որոնք յանկարծ մեծ արժէք մը կը ստանան երբ ան-  
դարձ կը հեռանան:

Պոլիսը կամաց կամաց կը կորսուէր մեր աչքերէն... արդեօք  
անգամ մըն ալ պիտի տեսնէինք զայն: Լուռ կը դիտէինք այս  
տեսարանը եւ սակայն ամէնուս մտածումն ալ այդ էր:

Մեզ երեքս, Ներսէս Չաքրեան, Սեպուհ Ակունի ու զիս  
ճամբան զատեցին միւս աքսորականներէն, զատ «քօնբարթի-  
ման»\* մը դրին երկու ոստիկաններու հետ, որոնք պաշտօն ու-  
նէին մեզ մինչեւ Գոնիա տանելու: Ասոնցմէ մին մակեդոնիա-  
ցի էր, սակաւախօս ու անհամբոյր մարդ մը, իսկ միւսը Ազիզ  
էֆէնտի, պոլսեցի սիրուն երիտասարդ մըն էր եւ շատ հաճոյա-  
կատար:

Ուզեցինք իրմէ հասկնալ թէ ի՞նչ գրուած էր մեր թահրիրա-  
թին\*\* մէջ:

— Հոգ մի՛ ընէք ծանր բան մը չի կայ, — հաւաստեց մեզի,-  
Գոնիա պիտի երթաք ու Հոն պիտի մնաք:

\* Գնացքի խցիկ:

\*\* Պաշտօնական նամակ, գրութիւն:



ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ



Երուանդ Օտեանը աքսորից յետոյ

– Ազատ պիտի թողո՞ւն քաղքին մէջ:

– Բնականաբար, միայն թէ թերեւս երաշխաւոր ուզեն:

Իր խօսքերը կը համաձայնէին Թիմուր էֆէնտի խօսքերուն հետ, բայց նորէն ապահով չէինք:

Իրիկուան դէմ հասանք Իգմիթ: Հոն իջեցուցին Կիւլպէն-կեանը, Խաչիկ Ինկիլիզեանը եւ 40ի չափ ուրիշ Հայ աքսորականներ:

<...>

– Միասին առէք:

Շատ մը նրբանցքներէ անցնելէ ետքը՝ պարտէզ մը ելանք ու ուղղուեցանք դէպի քարաշէն աղտոտ շէնք մը:

– Ո՞ւր կը տանիս մեզի, – հարցուցինք ոստիկանին:

– Բանտ, – պատասխանեց:

– Բայց մենք յանցաւոր չենք, մենք քաղաքական աքսորեալներ ենք ու Գոնիայի մէջ ազատ պիտի մնանք, մեր թուղթերը այդպէս գրուած են Պոլսէն:

– Ես ատանկ բան չեմ գիտեր, ես ինծի տրուած հրամանը կը գործադրեմ, – պատասխանեց ոստիկանը:

Հասանք աղտոտ շէնքին առջեւ: Սիտիքլի կոչուած ամենագարշելի բանտն էր:

Բանտ մտնելու համար հարկ էր անցնիլ երկաթեայ ծակէ մը, ինչ որ բաւական դժուարին գործողութիւն մըն էր:

Յուսահատ տրամադրութեան մը ներքեւ կատարեցինք այս գործողութիւնը: Ներսը լեցուած էր բանտարկեալներով, ընդհանրապէս թուրք ոճրագործներ, աւագակներ, գողեր: Աղտոտ նրբանցքէ մը անցնելով մտանք սրահ մը:

– Հա՞յ էք դուք, – հարցուց բանտարկեալ մը դէպի մեզի յառաջանալով:

– Այո՛, – պատասխանեցի:

– Ուրկէ՞ կուգաք:

– Պոլսէն:

Վայրկեան մը ետքը արդէն բարեկամացած էիք իրարու հետ:



Մեզի հետ խօսողն էր իզմիրցի Վահան Պալապանեանը որ Արշակ Աբուլեանի եւ ուրիշ երեք ընկերներով հոն կը գտնուէր ամիսներէ ի վեր: Հինգ իզմիրցի երիտասարդները ծանր ամբաստանութեամբ ձերբակալուած էին: Հինգն ալ դաշնակցական էին եւ իրենց քլիւպէն\* պօմպաներ գտնուած էին եւ այս պատճառաւ ամէնքն ալ մահուան դատապարտուած: Ամբաստանեալները կրցած էին ապացուցանել սակայն որ այդ պօմպաները իթթիհատի կուսակցութիւնը տուած էր իրենց եւ ասոր վրայ մահուան վճիռը փոխուած էր 15 տարուան տաժանակիր աշխատութեան եւ իրենց պատիժը կրելու համար ղրկուած էին Գոնիա:

— Մեզի հոս բերին ու բանտարկեցին վզերնիս շղթայ անցուցած,— բացատրեց Վահան Պալապանեան,— դեռ հազիւ 15 օր առաջ վալին\*\* բանտը այցելելով տեսաւ այդ շղթաները եւ հանել տուաւ:

Հակառակ այդ գարշելի բանտին ու տաժանելի պայմաններուն որոնց ենթարկուած էին՝ հինգ իզմիրցի երիտասարդները պահած էին իրենց հոգեկան կորովը: Մանաւանդ Վահան Պալապանեան չափազանց զուարթ եւ չափազանց յուսալից էր:

— Քիչ օրէն բանտէն կ'ելլենք եւ դուք ալ տեղերնիդ կը վերադառնաք,— կ'ըսէր,— Տարտանէլի անկումը մօտալուտ է, օրւան խնդիր է, թերեւս վաղը նեղուցը կը բացուի...

Սպասելով նեղուցի բացումին զգացինք որ մեր ախորժակը բացուած էր արդէն:

— Ի՞նչ պիտի ուտենք, կամ մանաւանդ ի՞նչ կրնանք ուտել,— հարցուցինք մեր նոր ընկերներուն:

— Ինչ որ կ'ուզէք, ձեր ուզածը կրնանք բերել տալ,— ըսին: Ոչխարի խորոված ապսպրեցինք, ինչպէս նաեւ հաց, պանիր, պտուղ:

Խորովածը սքանչելի էր: Արդէն Գոնիայի ամէնէն անուանի

\* Ակումբից:

\*\* Նախագապետը, կուսակալը, կառավարիչը:

կերակուրն էր այդ: Մեծ ախորժակով ճաշերնիս ըրինք եւ շարունակեցինք մեր խօսակցութիւնը:

— Արդեօք մեզ հոս բանտարկած պիտի պահեն,— հարցուցինք:

— Չեմ կարծեր,— ըսաւ Պալապանեան,— թերեւս քանի մը օր հոս վար դնեն ու յետոյ քշեն:

— Ո՞ր պիտի քշեն:

— Աւելի առաջ, դէպի Պօզանթի ու աւելի հեռուն:

— Բայց մենք Գոնիա մնալու համար ղրկուած ենք: Մեր թուղթը այնպէս գրուած է:

— Թուղթին կարեւորութիւն մի՛ տաք... հոս վար չեն դներ ձեզ, ասոր վստահ եղէք:

Պալապանեան պատմեց նաեւ որ քանի մը շաբաթ առաջ Արիկ Մուպահեաճեանն ալ բերած բանտարկած էին հող ու քանի մը օր ետքը բանտէն հանած ու աւելի հեռու քշած էին:

— Ո՞ր արդեօք:

— Չենք գիտեր:

Այս անորոշութիւնն էր որ ամէնէն աւելի կը մտատանջէր:

Իրիկուան դէմ յանկարծ բանտի պահապանին ձայնը հնչեց մեզ:

— Սթամպուլու\* Երուանդ Օտեան, Ներսէս Չաքրեան, Սեպուհ Ակունի...

Ոտքի ցատկեցինք եւ դուրս ելանք:

— Գոյքերնիդ միասին առէք,— պոռաց պահապանը:

Վերադարձանք, գոյքերնիս ժողուեցինք, մեր նոր բարեկամներուն մնաս բարով ըսինք ու դուրս ելանք:

— Կ'երեւայ որ մեզ ազատ պիտի արձակեն,— կը մտածէինք:

Ոստիկան մը առաջնորդեց այն պաշտօնեային քով որ մեզ բանտ ղրկած էր:

— Յիսուներչորսական ղրուշ պիտի վճարէք,— ըսաւ այս վերջինը:

\* Ստամբուլի:

Հասկցանք որ մեզ ուրիշ տեղ մը կը ղրկէին:

– Ո՞ր պիտի երթանք, – Հարցուցի ուզած դրամը տալով:

– Երբոր երթաք կը հասկնաք, – պատասխանեց մարդը խըստով թեամբ:

– Բայց մեր թուղթը Գոնիայի համար գրուած է, – առարկեց Ներսէս Չաքրեան:

– Շատ մի՛ խօսիր, ծեծ կ'ուտես, – գոչեց պաշտօնեան:

Յետոյ դէպի ոստիկանը դառնալով հարցուց.

– Էրէյլիի համար տոմսակին գինը 54 ղրուշ չէ՞:

– Այո՛:

Հասկցանք որ Էրէյլի պիտի երթայինք:

Դուրս ելանք մեր գոյքերով:

– Ոտքո՞վ երթալ կ'ուզէք թէ կառքով, – Հարցուց ոստիկանը:

– Ո՞ր պիտի երթանք:

– Կայարան... շատ ժամանակ չունինք կորսնցնելու, կառա-

խումբը ճամբայ պիտի ելլէ:

– Լաւ ուրեմն կառքով կ'երթանք:

Կառք մը գտնելու գործողութիւնը բաւական երկար տեւեց վերջապէս բերին, մէջը բազմեցանք ու ճամբայ ելանք:

Երբ կայարան հասանք, կառախումբը ճամբայ կ'ելլէր:

– Փախուցինք, – գոչեց ոստիկանը, – ձեզի ըսի որ քիչ մը ա՛ճապարէք:

– Ուրիշ կառախումբ չիկա՞յ:

– Վաղը առտու:

– Լաւ ուրեմն անով կ'երթանք:

Ոստիկանը մեզ տարաւ կայարանին կից գտնուող պահանոցը եւ խնդիրը բացատրեց քօմիսէրին:

– Այս գիշեր թո՞ղ հոս մնան, վաղը ես զիրենք կը ղրկեմ՝ ըսաւ քօմիսէրը:

Բայց հոն մնալ անկարելի էր, աղտոտ, գարշահոտ խորը մէջոյց տուած էին մեզ ուր անկարելի էր ո՛չ նստիլ, ո՛չ պառկիլ:

Քօմիսէրէն խնդրեցինք որ մեզ խան մը ղրկէ գիշերը անցընելու համար: Նախ ընդդիմացաւ, յետոյ վերջապէս հաւանեցաւ:

Ոստիկան մը ղրկեց եւ խանին տէրը բերել տուաւ: Տարեց, մօրուօք, փաթթոցաւոր թուրք մըն էր խանճին:

– Այս մարդիկը քեզի կը յանձնեմ, – ըսաւ քօմիսէրը մեզիցոյց տալով, – խան կը տանիս ու սենեակի մը մէջ կը փակես մինչեւ վաղը առտու: Առտուն կանուխ հոս կը բերես՝ որպէսզի սէվք\* ընեմ, չըլլայ որ զիրենք փախցնես՝ յետոյ պատասխանատու կը մնաս:

– Հոգ մի՛ ընէք, – հաստատեց խանին տէրը, – վաղը առտու երեքն ալ ձեզի կը յանձնեմ:

Խանը կայարանին մօտ էր, հինգ վայրկեանէն հասանք հոն: Խոշոր բակի մը շուրջ բազմաթիւ սենեակներով աղտոտ շէնք մըն էր, աւելի ախոռ՝ քան թէ մարդերու յատկացուած տեղ մը: Ամբողջ խանը լեցուած էր Հայ տարագիրներով, ընդհանրապէս պանտրմացիներ ու ատաբազարցիներ:

Խանճին ուզեց մեզ աղտոտ սենեակի մը մէջ բանտարկել:

Բողոքեցինք, փորձեցինք ընդդիմանալ, բայց օգուտ չըրաւ:

Այդ միջոցին Հայ մը մօտեցաւ մեզի:

– Բռնութեամբ բան մը չէք կրնար ընել աւելի գէշ կ'ըլլայ, – ըսաւ կամաց մը, – անոյզ գացէ՛ք հետը:

– Բայց այս աղտոտ տեղը կարելի չէ կենալ:

– Ամէն բան կարգի կը մտնայ եթէ լաւ պախշիշ\*\* մը տաք իրեն:

– Ի՞նչ պէտք է տալ:

– Դուք գիտէք... մարդ գլուխ 10 ղրուշ տուէք:

Լեզունիս փոխեցինք ու սկսանք աղաչաւոր կերպով խօսիլ. Ներսէս Չաքրեան վարեց բանակցութիւնները:

– Մէհմէտ աղա, – ըսաւ, – կ'աղաչեմ մեզի հոս մի՛ դնէք:

\* Տեղափոխութիւն:

\*\* Թէյաբաժի:

Մենք վարժուած չենք ասանկ տեղեր պառկելու, մենք պոլսեցի ենք... քեզի գոհ կ'ընենք, ապահով եղիր, հիմակուհիմա մեր երեքնուս համար ա՛ռ սա երեսուն դրուշը...

Մէհմէտ աղա դրամները գրպանեց եւ իսկոյն դէմքին արտայայտութիւնը փոխուեցաւ:

– Մեզի երեք հատ խահուէ ապսպրէ՛, – հրամայեց Չաքըր-եան:

– Գլխուս վրայ, – պատասխանեց խանճին ու իր մարդերէն մէկուն դառնալով հրամայեց որ մեզի երեք աթոռ բերէ:

– Հիմակուհիմա հոս կրնաք նստիլ, – ըսաւ, – յետոյ ձեզի յարմար սենեակ մը կը ճարենք: Անկողին ու վերմակ կ'ուզէ՞ք...

– Բնականաբար, միայն թէ մաքուր ըլլան:

– Գործը դրամին վրան է, եթէ դրամ տաք թէ՛ մաքուր սենեակ եւ թէ՛ մաքուր անկողին կ'ունենաք:

– Դրամին խնդիրը դիւրին է կռիւ չենք ըներ, ուզածդ թող դրամ ըլլայ:

Մարդը հեռացաւ գոհ դէմքով ու մենք բազմեցանք մեր աթոռներուն վրայ:

Նախապէս մեզի հետ խօսող Հայր մօտեցաւ:

– Տեսա՞ք որ ամէն բան կարգադրուեցաւ, – ըսաւ:

– Շնորհակալ ենք, – պատասխանեցինք:

Յետոյ ուզեցինք օգուտ քաղել այդ մարդուն ներկայութենէն դուրսի հետ յարաբերութիւն մշակելու համար:

– Յակոբ Տէր Յակոբեանը կը ճանչնա՞ս, – հարցուցինք:

– Կը ճանչնամ, – պատասխանեց:

– Կրնա՞ս զինքը հոս բերել:

– Ինչու չէ, եթէ գալ ուզէ:

– Այդ մասին մի՛ տարակուսիր, երբոր անուննիս տաս՝ վազելով կուգայ:

– Աւելի աղէկ կ'ըլլայ որ թուղթ մը գրէք ու իրեն յանձնեմ:

– Շատ լաւ:

Ու թուղթի կտորի մը վրայ յայտնեցինք մեր Գոնիա գրտուելը եւ զինքը հրաւիրեցինք մեր քով:

Մարդը արագ քայլերով հեռացաւ մեր բարեկամը գտնելու համար:

Սեպուհ Ակունի դարձեալ փախուստի մարմաջէն բռնուեցաւ:

– Վրանիս հսկողութիւն չի կայ, – կ'ըսէր, – ես հիմա կծիկը կը դնեմ կ'երթամ տեղ մը կը պահուըտիմ: Գոնիա բաւական մեծ քաղաք է եւ դիւրաւ կարելի չէ հետքս գտնել:

– Այո՛, բայց եթէ դուն փախչիս ի՞նչ կ'ըլլայ մեր վիճակը:

– Դուք ալ ձեր գլխին ճարը նայեցէք:

– Եւ, յետոյ, քաղաքը չես ճանչնար բնաւ. ինչպէ՞ս պիտի կրնաս ապահով թաքստոց մը գտնել:

– Աստուած ողորմած է...

– Գոնէ սպասէ՛ որ Տէր Յակոբեանը գայ եւ անկէ որոշ տեղեկութիւն մը քաղենք կացութեան մասին:

Արդարեւ քիչ յետոյ Յակոբ Տէր Յակոբեան եկաւ մեզ գտաւ Ասատուր Տէր Մատթէոսեանի ընկերակցութեամբ:

Համբուրուեցանք, փոխադարձ տեղեկութիւններ տուինք մեր կացութեան վրայ: Ի վերջոյ ջանացինք ճար մը գտնել Գոնիա մնալու համար: Տէր Յակոբեան որեւէ ազդեցիկ մէկը չէր ճանչնար դժբախտաբար եւ ասկէ զատ ինքն ալ շատ ապահովութեան մէջ չէր, մէկ վայրկեանէն միւսը կրնար ձերբակալուիլ ու աւելի հեռուները քշուիլ:

– Փորձ մը ընենք սակայն, – ըսաւ, – «Պապալըք» թերթին խմբագիրը կայ, բաւական լաւ երիտասարդ մըն է, իբրեւ խումբագիր՝ անոր աջակցութիւնը խնդրեցէք, թերեւս յաջողի բան մը ընելու:

Առաջարկութիւնը կրկնել չտուինք, Ակունի իսկոյն նամակ մը գրեց թուրք խմբագրին աջակցութիւնը խնդրելով մեզի համար եւ Տէր Յակոբեան յանձնառու եղաւ զայն իր հասցէին յանձնելու եւ մեզի պատասխան մը բերելու:

Կէս ժամ ետքը վերադարձաւ քիչ մը յուսալից:

— Մարդը գտայ, նամակը տուի, — ըսաւ, — խոստացաւ ձեռքէն եկածը ընելու մինչեւ վաղը. իցի՛ւ թէ քանի մը օր կարենայիք մնալ, թերեւս յաջողէինք ձեզ հոս վար դնել:

Հիմա ուրիշ փափաք մը ունէիք: Խանէն դուրս ելլել մեր բարեկամներուն հետ, միասին քիչ մը ժամանակ անցընել, ճաշել եւ վերադառնալ:

Դիմում ըրինք մեր խանճիին:

— Անկարելի է, — ըսաւ, — չեմ կրնար ձեզ թող տալ, որովհետեւ ծանր պատասխանատուութեան ներքեւ կը մնամ:

— Դուն ալ միասին եկուր. կը խմենք, կը ճաշենք եւ միասին կուգանք: Քեզի բացէն պախշիչ մըն ալ կուտանք:

Խանճին երբոր ուտել խմելու եւ պախշիչ առնելու խօսքը լսեց՝ տեղի տուաւ ու ամէնքս միասին ուղղուեցանք մօտակայ յոյն գինետուն մը:

Հոն եկաւ մեզի միացաւ Յակոբ Նշանեան, Իզմիթ Օթէլի տէրը որ իթթիհատականներու հետ բարեկամ ըլլալով հանդերձ աքսորուած էր Գոնիա:

Բաւական խօսակցելէ ետքը գացինք ճաշելու: Ի վերջոյ խանճին ստիպեց որ տեղերնիս վերադառնանք եւ համակերպեցանք:

Մեր երեքին համար մաքուր անկողիններով սենեակ մը պատրաստած էր: Երկօրեայ ուղեւորութենէն եւ յուզումներէն յոգնած իսկոյն ինկանք մեր անկողիններուն վրայ եւ լսեցինք որ մեր վրայէն դուռը կը կղպէին:

Հետեւեալ առտու կանուխ խանճին մեզ տարաւ յանձնեց պահականոց:

Կառախումբը արդէն պատրաստ կեցած էր: Ուտիկան մը մեր տոմսակները առաւ եւ տարաւ մեզ վակօնի մը մէջ տեղաւորեց ու ինք վարը քարափին վրայ սպասեց:

Կը կարծէինք թէ կառախումբը մեկնելու վայրկեանին պիտի գար մեզի միանալու:

Յանկարծ՝ վակօնին պատուհանէն՝ նշմարեցի սպայ մը որ զարմացած դէմքով դէպի մեզի կուգար:

Երբ մօտեցաւ՝ ճանչցայ զինքը: Հրանդ Սամուէլն էր «ժամանակ»ի երբեմնի խմբագիրը եւ պատասխանատու տնօրէնը:

Վեր ելաւ եւ եկաւ քովերնիս նստելու:

Յիսնապետի աստիճան ունէր եւ շատ գոհ էր իր արդի վիճակէն:

— Հոս գրեթէ ինքնագլուխ եմ, — ըսաւ, — տրամադրութեանս ներքեւ ձի մը ունիմ, գործս ծանր չէ եւ ժամանակս պտոյտ ընելով կ'անցընեմ:

Կայարանին մէջ տեսանք նաեւ Հալէպի մէպուս Յարութիւն էֆէնտի Պօշկէզէնեանը որ Հալէպէն գալով Պոլիս կ'երթար:

Բացատրեցինք իրեն մեր կացութիւնը եւ ըսինք որ հակառակ Պոլսէն տրուած հրահանգին մեզ փոխանակ Գոնիա վար դնելու էրէլի կը ղրկէին:

— Եթէ վալին՝ ձէլալ պէյը՝ հոս ըլլար, թերեւս յաջողէի ձեզի համար բան մը ընել, — ըսաւ, — որովհետեւ ինծի ծանօթ եւ բարեկամ է: Բայց ճիշտ այս միջոցիս Գոնիայէն բացակայ է:

Արդարեւ ձէլալ պէյի բացակայութիւնը ձախորդութիւն մըն էր մեզի համար, քանզի Սեպուհ Ակունի եւ ես ալ կը ճանչընայինք զինքը յաճախ «ժամանակ»ի խմբագրատունը եկած ըլլալով: Ակունի արդէն Պոլսէն մեկնած ատեննիս իսկ միտքը դրած էր ձէլալ պէյի դիմում ընել, սակայն Գոնիա հասնելուս իմացանք որ Գոշ Հիսար գացած էր քննական պտոյտ մը ընելու:

— Գոնէ երբոր Պոլիս երթաք մեր մասին դիմում ըրէք, — ըսինք Պօշկէզէնեան էֆէնտիին:

— Ձեռքէս եկածը կ'ընեմ, — խոստացաւ:

Յետոյ Պոլիս գացող կառախումբին մէջ նշմարեցինք նաեւ Ատանայի մէպուս Նալպանտեան Մատթէոս էֆէնտին:

Սեպուհ Ակունի անկէ ալ խնդրեց որ մեր մասին միջամտութիւն մը ընէ Պոլիս վերադառնալու:

Նալպանտեան էֆէնտին ալ խոստացաւ ձեռքէն եկածը ընելու:

Վերջապէս մեկնումի զանգակը հնչեց: Հրանդ Սամուէլ վարցատեղեց վակօնէն:

Ոստիկանը «ուղուրլար օլսուն»\* ըսաւ մեզի ու հեռացաւ եւ կառախումբը ճամբայ ելաւ:

Այլեւս ոստիկանական հսկողութեան ներքեւ չէինք գտնուեր, ուրեմն ազատ էինք...:

– Կ'երեւայ որ էրէյլի պիտի երթանք ու հոն հանգիստ պիտի նստինք, – մտածեցինք:

Գոնհայէն մեկնած ատեննիս երեքս վակօնին մէջ առանձին էինք: Երբ յաջորդ կայարանը եկանք, քանի մը ճամբորդներ ուղեցցին ներս մտնել, տեսնելով որ պարապ տեղ կայ:

– Մուտքը արգիլուած է, – ըսինք պատուհանէն:

– Ինչո՞ւ համար...:

– Աքսորեալ կայ հոս:

Ճամբորդները անտրտունջ հեռացան եւ մենք մեր հանգըստութիւնը չկորսնցուցինք:

Այս խաղը յաջողեցաւ յաջորդական մէկ քանի կայարաններ ալ, սակայն ի վերջոյ ճամբորդները, որոնց ա՛լ ուրիշ վակօններու մէջ տեղ չէր մնացած, սկսան բողոքել:

– Եթէ աքսորեալ էք ո՞ւր է ձեր վրայ հսկող ոստիկանը, – գոչեցին:

Ու առանց մեր ընդդիմութեան ականջ դնելու, դուռը բացին ու վեր ելան:

Մէջերնէն փաթթոցաւոր մը խօսակցութեան բռնուեցաւ մեզի հետ:

Հասկցուցինք թէ Հայ էինք, պոլսեցի էինք եւ աքսոր կ'երթայինք:

– Ձեր գործը ի՞նչ էր Պոլսոյ մէջ, – հետաքրքրուեցաւ:

– Խմբագիր, – պատասխանեց Սեպուհ Ակունի:

\* Բարով գնաք:

– Հիմա կը հասկնամ թէ ինչո՞ւ ձեզ աքսորած են, – պատասխանեց փաթթոցաւորը, – անշուշտ «Ազատամարտ»ի խումբագիր էիք:

– Ձէ, – ըսինք, – «Ժամանակ»ի խմբագիր էինք:

– Բայց «Ժամանակ» յեղափոխական թերթ չէ, – գոչեց մարդը:

– Այո՛, այսուհանդերձ մեզ աքսորեցին:

– Ուրեմն ուրիշ յանցանք մը գործած ըլլալու էք:

Ինչ որ զիս զարմացուց, այդ փաթթոցաւորին ծանօթութիւնն էր Հայ թերթերու մասին:

Տգէտ գիւղացիի մը երեւոյթը ունէր եւ սակայն կարող էր զանգանել «Ազատամարտ»ը «Ժամանակ»-էն: Այս դէպքը մեկուսացեալ դէպք մը չէր եւ աքսորի կեանքիս մէջ շատ առիթներ ունեցայ հաստատելու համար թէ՛ թուրքերը աւելի լաւ ճանչցած էին մեր ներքին կեանքը՝ քան թէ մենք իրենցը:

Մուտքը կոխած էր երբ հասանք էրէյլի:

Երբ դուրս ելանք վակօնէն պահ մը շուարած մնացինք:

Կայարանին մօտ բնակութիւններ չէին երեւար: Միայն ձախ կողմը, ընդարձակ դաշտին մէջ հարիւրաւոր վրաններ կը տեսնուէին, մարմրուն լոյսերով: Հայ տարագիրներու վրաններն էին: Պահ մը մտածեցինք երթալ իրենցմէ ասպնջականութիւն\* խընդրել մինչեւ յաջորդ առտուն, բայց միթէ խեղճերը տեղ պիտի ունենայի՞ն մեզի պատասպարելու համար:

Բարեբախտաբար այդ միջոցին երիտասարդ մը մուտիւն մէջ մօտեցաւ մեզի:

– Դուք Հա՞յ էք, – հարցուց հայերէն լեզուով:

– Այո՛, – պատասխանեցինք:

– Ուսկի՞ց կուգաք:

– Պոլսէն:

– Վէսիքայո՞վ...\*\*

\* Հիրընկալութիւն:

\*\* Փաստաթղթով:

– Ո՞չ, առանց վէսիքայի, մենք աքսորուած ենք:  
 – Պաշտօնական թուղթ ունի՞ք հետերնիդ:  
 – Բան մըն ալ չունինք: Հիմա մեզի տեղ մը կրնա՞ս ցոյց տալ գիշերը անցընելու համար:  
 – Ձեզի մինչեւ օթէլ տանիմ:  
 – Որ օթէլը,– հարցուցինք,– հոս օթէլի նմանող բան մը չենք տեսնար կոր:  
 – Ես ձեզ կ'առաջնորդեմ,– ըսաւ երիտասարդը:  
 Գոյքերիս շալկած՝ ճամբայ ելանք: Էրէյլիի կայարանը քաղաքէն 15-20 վայրկեան հեռու կը գտնուի եւ բաւական յոգնած էինք երբոր Պաղտատ օթէլին հասանք: Երիտասարդը բաժնուեցաւ մենէ եւ մենք վեր ելանք մութ սանդուխէ մը եւ հասանք տարտամօրէն լուսաւորուած սրահ մը:  
 – Ի՞նչ կ'ուզէք,– հարցուց երիտասարդ մը թրքերէն լեզուով:  
 – Երեք անկողինով սենեակ մը:  
 – Անուննիդ ի՞նչ է:  
 Մեր անունները տուինք:  
 – Հա՞յ էք եղեր,– ըսաւ մարդը այս անգամ հայերէն լեզուով,– ուրեմն եթէ վէսիքա չունիք՝ ձեզի անկողին չենք կըրնար տալ: Որովհետեւ գաղթականներուն արգելուած է քաղաքին մէջ մնալ, պէտք է որ վրանները երթան:  
 – Բայց մենք գաղթական չենք, մենք աքսորուած ենք ու հոս պիտի մնանք:  
 – Այդ մասին պաշտօնական թուղթ ունի՞ք:  
 – Ձէ, բան մը չունինք, բայց ինչ որ կ'ըսենք ճիշտ է. թերեւ մեր թուղթերը ուղղակի գայմագամին ղրկուած են, վաղը առտու կ'երթանք կը ստուգենք:  
 – Կը ցաւիմ, բայց ես բան մը չեմ կրնար ընել,– պատասխանեց Հայ երիտասարդը որ ատաբազարցի տարագիր մըն էր, բարեկեցիկ վաճառական մը, ինչպէս իմացանք յետոյ, որ հիմա օթէլին մէջ սպասաւորութիւն կ'ընէր իր մորթը փրկելու համար:

– Օթէլին տէրը հոս չէ՞,– հարցուցի,– անգամ մը անոր խօսէ՞ թերեւս կը հաւանի մէկ գիշերուան համար մեզի տեղ տալու:  
 – Հոս է, բայց կը քնանայ կոր, ինչ որ է երթամ ձայն տամ:  
 Օթէլին տէրը որ թուրք մըն էր հաւանեցաւ մեզի սենեակ մը տալ, պայմանաւ որ հետեւեալ օրը կա՛մ գայմագամէն արտօնութիւն մը բերէինք հոն մնալու համար եւ կա՛մ հեռանայինք: Գացինք սենեակ ուր ատաբազարցի երիտասարդը ընկերացաւ մեզի:  
 – Գիտէ՞ք որ,– ըսաւ,– Աբիկ Մուպահեաճեանն ալ հոս է:  
 – Ո՛ւր,– հարցուցինք,– վրաններո՞ւն մէջ...  
 – Ձէ՛, հոս քաղաքը տան մը մէջ պահոււցած է:  
 – Հեռո՞ւ է տունը:  
 – Մեր օթէլին մօտերն է:  
 Երիտասարդէն խնդրեցինք որ երթայ անմիջապէս իմաց տայ Աբիկ Մուպահեաճեանին մեր Պաղտատ օթէլին գտնուելը եւ եթէ կարելի է՝ միասին օթէլ բերէ:  
 Կէս ժամ ետքը Աբիկ Մուպահեաճեան խորհրդաւոր դէմքով մը ներս մտաւ սենեակէն: Համբուրուեցանք:  
 – Ի՞նչպէս ձերբակալուեցաք, ե՞րբ ելաք Պոլսէն, բանտին մէջ ծեծ կերա՞ք,– հարցուց ցած ձայնով:  
 Մանրամասնաբար պատասխանեցինք իր հարցումներուն եւ միանգամայն պարզեցինք մեր կացութիւնը:  
 – Հիմա ի՞նչ պիտի ընէք,– հարցուց:  
 – Հոս պիտի հաստատուինք, թէեւ մեր թուղթը Գոնիայի համար գրուած էր, բայց չենք գիտեր ինչո՞ւ մեզ հոս ղրկեցին:  
 Մուպահեաճեան ըսաւ որ սին յոյսերով չօրօրուինք, թէ զինքն ալ նոյն պայմաններով հանած էին Պոլսէն, սակայն յետոյ պարզապէս տարագիրներու վիճակին ենթարկուած էր:  
 – Քսաներկու հոգի Պոլսէն ճամբայ ելանք,– բացատրեց,– բայց մենէ շատերը իզմիթ վար դրին չէթէճի պաշի\* Իպրահի-

\* Հրոսակախմբի պետ:

մի խոշտանգումներուն ենթարկուելու համար, բարեբախտաբար զիս, Գարեգին Ադամեանը, Կարապետ Խերպէկեանը, Սըմբատ Քըրքոլեանը, Լեւոն Աճէմեանը, Համազասպը եւ Արթին Քըզուրեանը մինչեւ Գոնիա տարին ու հոն քանի մը օր բանտարկելէ ետքը, ճիշդ ձեզի պէս շոգեկառք դրին ու էրէյլի ղըրկեցին: Հոս կրցանք քանի մը օր այս օթէլը մնալ, բայց յետոյ անկարելի եղաւ, որովհետեւ Հայերուն բացարձակապէս արգիււեցաւ քաղաքին մէջ բնակիլ: Բոլոր Հայերը պարտաւոր էին վրանները երթալ եւ հոնկէ մաս առ մաս սէվք ըլլալ: Տեսանք որ գործը գէշ էր, ստիպուեցանք տան մը մէջ ծածկուած մնալ:

– Բայց մինչեւ ե՞րբ, – Հարցուցի:

– Տեսնենք... Պոլիս բարեկամներուս գրած եմ, կը յուսամ որ ինծի համար կ'աշխատին ու ճարը կը գտնեն վերադարձնելու: Առայժմ խնդիրը օր վաստըկելու եւ աւելի հեռուն չերթալու վրայ է:

– Իսկ մենք ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ խորհուրդ կուտաս մեզի: Քովերնուս դրամը շատ քիչ է եւ եթէ մեզի աւելի հեռուները ղրկեն, ի՞նչ պիտի ընենք:

– Անմիջապէս հեռագիր մը պատրաստեցէք Պոլիս ձեր ընտանիքին ուղղուած, դրամ ուզելու համար եւ այդ հեռագիրը վաղը առտու գայմագամին ցոյց տալով՝ խնդրեցէ՛ք իրմէ որ մինչեւ հեռագրին պատասխանը գալը ձեզի հրաման տայ հոս բնակելու: Թերեւս այս կերպով կը յաջողիք քանի մը օր վատըկելու:

Եւ Աբիկ Մուպահեաճեան մեզի բարի գիշեր մաղթելով ստուերի մը պէս անյայտացաւ:

Հետեւեալ առտու կանուխ Ակունի, Չաքրեան եւ ես գացինք քօնաք՝ գայմագամը՝ Ֆայիք պէյը տեսնելու:

Առանց արգելքի յաջողեցանք իր սենեակը մտնել:

Ֆայիք պէյ գեղադէմ երիտասարդ մըն էր, ջերմ իթթիհատական եւ հայատեաց, ինչպէս իմացանք ետքէն:

Իրեն բացատրեցինք մեր կացութիւնը, ըսինք որ Պոլսէն Գո-

նիա աքսորուած էինք հոն մնալու համար, բայց մեզ հոնկէ էրէյլի ղրկած էին եւ Հարցուցինք թէ մեր մասին հրահանգ եկած էր իրեն:

– Ձեր մասին ո՛ր եւ է հրահանգ չեմ ստացած, – ըսաւ Ֆայիք պէյ:

– Ուրեմն ի՞նչ կարգադրութիւն պիտի ընէք մեր մասին:

– Ոչինչ, դուք պարզապէս մուհաճիրներ\* էք եւ պէտք է որ անմիջապէս վրանները երթաք հոնկէ սէվք ըլլալու համար:

– Բայց մենք դրամ չունինք, ահաւասիկ հեռագիր մը պատրաստած ենք Պոլիս ղրկելու համար, որպէսզի մեզի դրամ հասցնեն: Գոնէ հրաման ըրէք որպէսզի մինչեւ մեր դրամը գալը այստեղ մնանք:

– Քանի՞ օրէն կուգայ ձեր դրամը:

– Չենք գիտեր, բայց գոնէ երկու շաբաթ մեզի պայմանածամ մը շնորհեցէք:

– Անկարելի է, – ըսաւ, – բայց ձեզի արտօնութիւն կուտամ շաբաթ մը մնալու հոս:

Այդ ալ մեծ շնորհ մըն էր արդէն: Շնորհակալութիւն յայտնելով մեկնեցանք քօնաքէն:

Այսպէս ուրեմն գոնէ ութը օր պիտի կրնայինք ազատօրէն էրէյլի մնալ:

Գացինք հեռագրատուն եւ մեր հեռագիրը ղրկեցինք: Յետոյ վերադարձանք օթէլ եւ տիրոջը պատմեցինք մեր այցելութեան արդիւնքը:

– Լաւ ուրեմն, – ըսաւ, – կրնամ ձեզ շաբաթ մը վար դնել քանի որ գայմագամը արտօնած է:

Ներսէս Չաքրեան գնաց թաղապետական դեղարանը որուն տէրը Հայ մըն է եղեր:

– Պաշտօնակից մըն է, թերեւս օգտակար կ'ըլլայ ինծի, – ըսաւ:

Ես ու Ակունի Պաղտատ օթէլի ներքեւ գտնուած սրճարանը

\* Գաղթականներ:

գացինք ուր ընկերս գտաւ իր բարեկամը Գարագաշ որ նոյնպէս Պոլսէն աքսորուած էր մենէ առաջ: Գարագաշ երբոր իմացաւ որ մենք օթէլը կը գտնուինք՝ իսկոյն ինքն ալ Հոն փոխադրուեցաւ:

Իրիկունը Չաքրեան եկաւ մեզ գտաւ: Թաղապետական դեղարանի տէրը իրեն ծանօթ է եղեր եւ խոստացեր է միջոց մը գտնել զինքը Գոնիա փախցնելու համար:

– Ի՞նչ պիտի ընես, – Հարցուցի:

– Պիտի փախչիմ, – վճռեց Չաքրեան:

– Ես ալ քեզի Հետ կը փախչիմ, – ներս նետուեցաւ Սեպուհ Ակունի:

Ակունի:

– Բայց մարդը հազիւ պիտի կրնայ զիս փախցնել, այն ալ դեռ որոշ չէ... այս իրիկուն գործը պիտի կարգադրէ եւ վաղը վերջնական լուրը պիտի բերէ:

Ակունի այն անգամ ալ ստիպուեցաւ հրաժարիլ իր փախուստի ծրագրէն:

Մեր գալուստը իմացուած էր էրէյլի մէջ եւ մէկ քանի տարագիրներ եկան մեզ տեսնելու, գորօրինակ ատաբազարցի փաստաբան Սիւքերեան էֆէնտի եւ իզմիթցի Հանրային պարտուց պաշտօնեայ Լեւոն էֆէնտի Չաքարեան: Ծանօթացանք նաեւ մէկ քանի տեղացի Հայերու Հետ:

Օր մը ետքը ներսէս Չաքրեան իր փախուստի ծրագիրը գործադրեց: Այս առթիւ ինծի թողուց իր մէկ խոշոր պայուսուկը, խոզանակ մը, պնակ, դգալ, դանակ, պատառաքաղ, մէկ քանի անձեռոց, թաշկինակ, գուլպայ եւ այլն, որովհետեւ ինք ստիպուած էր առանց գոյքի ճամբորդել, զինուորականի վերարկուով մը ծպտուած:

Մեր էրէյլի հասնելէն երկու օր ետքը եկաւ նաեւ Ասատու Տէր Մատթէոսեան զոր Գոնիայի մէջ տեսած էինք:

Աբիկ Մուպահեաճեան ինչպէս ըսի, իր ընկերակիցներով պահուելու համար մը մէջ: Միայն իրիկունները կառախումբը ժամանելուն ատեն երեւան կ'ելլէր, որովհետեւ այդ միջոցին ոստիկանները կայարան կը գտնուէին:

Հակառակ իր գաղտնածածուկ կեանքին Մուպահեաճեան անգործ չէր մնար:

Կառախումբի Հայ պաշտօնեաներուն միջոցաւ յարաբերութիւն հաստատած էր Պատրիարքարանի Հետ ու տեղեկագիրներ կը ղրկէր գաղթականներու վիճակին մասին:

Իր այդ տեղեկագիրներուն շնորհիւ զէյթունցիները մէկ քանի անգամ նպաստ ընդունած էին Պատրիարքարանէն:

Յայտնի է որ զէյթունցիները ամէնէն առաջ տեղահան եղան, եթէ չեմ սխալի 1915 մայիսի սկիզբները: Նախ զիրենք բերած էին Սուլթանիէ ու էրէյլի, յետոյ «տեղերնիդ պիտի երթաք» ըսելով, կրկին ճամբայ հանած էին ու Հետիոտն քշած մինչեւ Տէր-Չօր:

Այս կերպով անօթութենէ, խեղճութենէ, Հիւանդութենէ 30000 զէյթունցի բնաջինջ եղած էր: Անոնք որ կարող եղած էին ամենաթշուառ վիճակի մէջ Տէր-Չօր հասնիլ՝ չէրքէզ չէնէններու ձեռքով ջարդուած էին: Երբ ես Տէր-Չօր գացի՝ հազարաւոր զէյթունցիներուն մէջէն միայն երկու հոգի ողջ մնացած էին:

Առաջին անգամ էրէյլի մէջ մօտէն տեսանք Հայ տարագիրներու վրանաբնակ կեանքը: Հոն գտնուողները, ընդհանրապէս ատաբազարցի, իզմիթցի, պարտիզակցի, արսլանպէկցի, չէնկիլէրցիներ էին: Ամէնքն ալ քիչ շատ բարեկեցիկ ընտանիքներ:

Շատ քիչեր կրցած էին շէնք շնորհք կտաւէ վրաններ շինել իրենց համար: Մեծամասնութիւնը սաւաններով կամ, հին ու մին լաթերով խարխիլի վրան մը ձեւացուցած էր:

Վրաններու ներքեւ գտնուողներուն արգիլուած էր, առանց մասնաւոր արտօնութեան, որոշեալ սահմաններէն դուրս ելլել:

Վէսիքա պէտք էր առնել շուկայ երթալու համար:

Սուկալի բան էր այդ խճողուած բազմութիւնը որ ստիպուած էր սահմանափակ շրջանակի մը մէջ պառկիլ, կերակուր եփել եւ բնական պէտքերը գոհացնել:

Սակայն հակառակ այդ տաժանելի կացութեան, տարագիր-



ները ո՛չ թէ յուսահատ չէին՝ այլ նոյնիսկ իրենց բարոյական ամբողջ կորովը պահած էին:

Վրաններու մէջէն մինչեւ ետքը հայկական երգեր կը լսուէին: Ոմանք իրենց ջութակը, քանոնը կամ կիթառը միասին բերած էին ու կը նուագէին: Էրիկ մարդիկ նարտ կամ թուղթ կը խաղային, իրիկունները, շատ վրաններու մէջ, օղիի ափսէն կը շտկուէր:

Ամէնքը այն համոզումը ունէին թէ քիչ օրէն ամէն բան պիտի վերջանար ու տեղերնին պիտի վերադառնային:

Տղաքը միասին բերած էին իրենց դասագիրքերը եւ յուզիչ տեսարան մըն էր դիտել փոքրիկ աղջիկները որոնք իրենց վրանին քովիկը, հողին վրայ նստած՝ դասերնին կը սերտէին, չմոռնալու համար: Այդ խեղճ պզտիկներէն քանինե՞րը ողջ մնացին:

Քանի մը օր թէլ մնալէ յետոյ, Ակունի, Գարագաշ եւ ես որոշեցինք սենեակ մը բռնել թէ՛ խնայողութեան եւ թէ՛ ապահովութեան համար: Տունի մը մէջ կարելի էր ծածկուած մնալ, մինչդեռ թէլը կարելի չէր:

Տեղացի երիտասարդ մը մեզ առաջնորդեց Հայ ընտանիքի մը տունը եւ հոն սենեակ մը վարձեցինք: Տանը մէջ միայն կիներ կային, էրիկ մարդիկ գացած էին իրենց զինուորական ծառայութիւնը կատարելու եւ կիներն ալ իբրեւ «ասփէր այլիսի»<sup>\*</sup> տեղահան չէին եղած:

Նոյն տանը շրջափակին մէջ սենեակ մը վարձած էին նաեւ Կիւլպէնկեան ու Խաչիկ Ինկիլիզեան որոնք Պոլսէն մեզի հետ ճամբայ ելած ու քանի մը օր իզմիթ մնալէ յետոյ զրկուած էին էրէյլի:

Մեզի դրացի էր նաեւ իզմիթցի ընտանիք մը 8-9 հոգի բաղկացած: Այդ ընտանիքին պատկանող կիներէն մին երկուքի մէջ էր ու այս առթիւ գայմագամը արտօնած էր իրենց ա միտի մը չափ քաղաքը մնալու:

<sup>\*</sup> Զինուորի ընտանք:

Մեր բնակած տունը, ինչպէս էրէյլի տուներուն մեծագոյն մասը, պարտէզներով շրջապատուած էր: Գրեթէ մինչեւ իրիկունը տանը մէջ կ'անցնէինք: Առտուն կանուխ զգուշութեամբ շուկայ կ'երթայինք, գնումները կ'ընէինք ու մենք մեր ձեռքով կ'եփէինք մեր կերակուրը: Գարագաշ այս մասին ճարտար էր ու համեղ կերակուրներ կը պատրաստէր մեզի:

Բայց տանը մէջ պահուելով հանդերձ՝ ապահով չէինք. առտն առտն ոստիկաններ կամ սէվքիթի պաշտօնեաներ տունները կը խուզարկէին, բարեբախտաբար այդ պարագային կիները մեզ իմաց կուտային եւ մենք անմիջապէս պարտէզներուն մէջ, պատէ պատ ցատքելով, կ'երթայինք հեռաւոր անկիւն մը պահուրտելու, մինչեւ որ վտանգը անցնէր:

Մեր միւս բարեկամները Կիւլպէնկեան եւ Խաչիկ Ինկիլիզեան, իրենց տան մէջ թաքստոց մը պատրաստած էին ուր կը ծածկուէին ամէն անգամ որ խուզարկութիւն կը կատարուէր:

Այս պայմաններուն մէջ անշուշտ մեր կեանքը շատ հաճելի չէր, բայց գոնէ օր կը շահէինք:

Այսուհանդերձ երբեմն դուրս ալ կ'ելլէինք, երբ ոստիկանները կայարան գացած ըլլային:

Արիկ Մուպահեաճեան, մեր էրէյլի հասնելէն քանի մը օր ետքը, եկաւ զիս գտաւ, եւ անկիւն մը տանելով, ցած ձայնով ու շուրջը զգուշաւոր նայուածք մը նետելէ ետքը, ըսաւ.

— Ի՞նչ է դիտաւորութիւնդ, հոս պահուրտած պիտի մնա՞ս թէ աւելի առաջ պիտի երթաս:

— Պիտի ջանամ կրցածիս չափ հոս մնալ, — պատասխանեցի:

— Իսկ երբ անկարելի ըլլայ մնալը:

— Այն առտն ճամբաս պիտի շարունակեմ:

— Մինչեւ ո՞ւր...

— Ո՛ւր որ երթան միւս տարագիրները:

— Բայց մինչեւ Տէր-Զօր պիտի քշուին Հայերը, այսպէս որոշուած է:

— Ուրեմն ես ալ կ'երթամ մինչեւ Տէր-Զօր:

– Ատիկա պարզապէս մահուան երթալ է:

– Ի՞նչ ընենք, քանի որ ուրիշ ճար չկայ:

Աբիկ Մուպահեան սկսաւ մօրուքը շոյել, յետոյ դարձեալ շուրջը ակնարկ մը նետեց ու ձայնը աւելի ցածցընելով՝ ըսաւ.

– Ետ դառնալու միտք չունի՞ս:

– Ո՞ր կ'ուզես որ դառնամ:

– Օրինակի համար Գոնիա:

– Հոն զիս հանգիստ կը թողո՞ւն:

– Գոնիա մեծ քաղաք է, կարելի է դիւրաւ ծածկուած մնալ. ասկէ զատ Պոլսէն շատ հեռացած չես ըլլար:

– Այո՛, բայց ծածկուած մնալու համար դրամ պէտք է եւ ես քովս հազիւ 2-3 ոսկի ունիմ: Յետոյ, քեզի բան մը ըսե՛մ, ես Պոլսէն ալ, թուրքերէն ալ զգուած եմ, կը նախընտրեմ Արաբներուն մէջ երթալ: Ով գիտէ, թերեւս կը յաջողիմ Եգիպտոս փախչիլ:

– Ուրեմն որոշած ես ճամբադ շարունակել:

– Այո՛:

Մուպահեան ձայնը աւելի ցածցուց:

– Ես,– ըսաւ,– որոշած եմ ետ երթալ:

– Ո՞ր:

– Գոնիա, առայժմ, Հոնկէ թերեւս եթէ միջոցը գտնամ, Պոլիս կ'երթամ:

– Առանձի՞ն պիտի երթաս Գոնիա:

– Ձէ, ընկերներով, Ադամեանը, Խերպէկեանը եւ այլն:

– Ե՞րբ պիտի փախչիք Հոսկէ:

– Դեռ օրը յայտնի չէ, բայց կարգադրութիւնները եղած են, յարմար առիթին կը սպասենք: Երկաթուղիի Հայ պաշտօնեաներու ձեռքով պիտի ըլլայ ամէն բան: Եթէ դուն ալ ուզէիք միասին կուգայիր:

– Մինչեւ ետքը ծածկուած մնալ դժուար ու անտանելի է. կը նախընտրեմ ճամբաս շարունակել:

– Դուն գիտես,– պատասխանեց Աբիկ Մուպահեան ու հեռացաւ:

Երկու օր յետոյ փողոցը իրեն հանդիպեցայ:

– Ի՞նչ եղաւ ձեր փախուստի ծրագիրը,– հարցուցի:

– Տակաւին յայտնի չէ,– ըսաւ:

– Ձրլլայ որ առանց իմաց տալու երթաս:

– Բնականաբար մնաս բարովի պիտի գամ:

Նոյն վայրկեանին դէմերնիս ելաւ Ասատուր Տէր Մատթէոսեանը քանի մը տարագիր Հայերու հետ:

– Չափազանց զբաղած եմ, եղբայր,– ըսաւ ձեռքերնիս սեղմելով,– այս բոլոր տարագիրներուն գործերը ես կ'ընեմ կոր, զլուխ քերելու ատեն չունիմ: Կ'ուզէի ձեզի հետ երկարօրէն տեսակցիլ, բայց հիմա ժամանակը չէ...:

– Մենք ալ կը փափաքինք տեսնուիլ,– ըսի:

– Հիմա զայմագամին կ'երթամ կոր սա մարդոց գործը տեսնելու,– շարունակեց,– ժամի մը չափ գործ ունիմ, յետոյ ազատ եմ, օֆիսս հրամանեցէ՛ք, Հոն տեսնուինք:

– Օֆի՞ս բացած էք Հոս,– հարցուցի զարմացած:

– Այո՛, օֆիս մը ունիմ, ժամէ մը անպատճառ հրամանեցէ՛ք, կ'սպասեմ:

– Ո՞ր կողմն է ձեր օֆիսը:

– Փութային մօտերը, աջ կողմի փողոցին մէջ, Նիքօլիին խանութը հարցուցէք: Բայց անպատճառ կը սպասեմ: Առայժմ մնաք բարով: Չմոռնաք, մէկ ժամէն...:

Խոստացանք երթալ իր օֆիսը:

Թէ՛ ես, թէ՛ Մուպահեան շատ լաւ կը ճանչնայինք Ասատուր Տէր Մատթէոսեանը, գիտէինք իր Պոլսոյ արկածախնդրական կեանքը, բայց չէինք երեւակայեր թէ այս աքսորական ու հալածական վիճակին մէջ կրնար օֆիս մը հաստատել:

Ժամ մը ետքը գացինք մեր ժամադրավայրը:

Նիքօլիի խանութը ուր Տէր Մատթէոսեան իր օֆիսը հաստատած էր՝ պարզապէս աղտոտ գինետուն մըն էր: Գինետան

մէկ անկիւնը պատուտած վարագոյրը կ'երեւար, որուն ետեւ նըստած էր մեր բարեկամը, սեղանի մը քով որուն վրայ կը տեսնուէին օղի ու քօնեաքի շիշեր:

Մէկ քանի անձանօթներ շրջապատած էին զինքը:

— Վայրկեան մը շնորհք ըրէք, սա գործս լմնցեմ,— ըսաւ Տէր Մատթէոսեան մեզի երկու պարապ աթոռ ցոյց տալով:

Նստեցանք եւ սպասեցինք: Մեր բարեկամը մարդիկը ճամբու դրաւ, բայց նոյն միջոցին ուրիշ քանի մը Հայ տարագիրներ ներկայացան:

— Այս կողմէն մտէք,— հրամայեց Մատթէոսեան պատուած վարագոյրին աջ կողմը ցոյց տալով:

Մարդիկը մտան վարագոյրէն ներս եւ իրենց խնդիրը պարզեցին:

Յետոյ ուրիշներ յաջորդեցին ու այսպէս մինչեւ ետքը: Արդարեւ խեղճը գլուխ քերելու ժամանակ չունէր: Ոմանք կուգային խնդրագիր գրել տալու, ուրիշներ գոյքերնին գողցուցած էին եւ իր աջակցութեանը կը դիմէին որպէսզի զանոնք գտնեն, մէկ քանիներ փախուստի ծրագիրներ ունէին եւ եկած էին նոյնպէս իր աջակցութիւնը խնդրելու:

Կային որոնք Պօզանթի պիտի երթային եւ կ'ուզէին որ Տէր Մատթէոսեան իրենց շոգեկառքի տոմսակ Հայթայթէ, որովհետեւ նոյն միջոցին շատ դժուար էր շոգեկառքի տոմսակ ձեռք ձգելը: Վերջապէս ամէն մարդ տէրտ \* մը ունէր եւ Մատթէոսեան ամէնուն կը հասնէր, բնականաբար դրամական փոխարի նութեամբ:

Բայց երբեմն կը մտնար այնպիսի գործերու մէջ որոնք գլուխ հանելը իր կարողութենէն վեր էր: Այդ պարագային մարդիկը դրամը կը վճարէին ու գործերնին չէր տեսուեր եւ Նիքօլի գինետան օֆիսին բարի անունը կ'աղարտէր:

Արիկ Մուպահեան եւ իր բարեկամները հետեւեալ օր՝ իսկ անյայտացան հրապարակէն: Յաջողած էին Գոնիա փախ

\* Հոգս:

չիլ, բայց Մուպահեան մոռցած էր ինծի իմաց տալ իր մեկնումը:

Քանի մը օր ետքը խստութիւնները աւելցան էրէյլիի մէջ: Օր կ'ըլլար որ քանի անգամ տուները կը խուզարկէին անոնց մէջ ապաստանած Հայերը փնտռելու համար:

Ոստիկանները տանտիրուհիներուն յայտարարած էին որ եթէ իրենց տունէն Հայ գտնուի իրենք ալ միասին պիտի աքսորուէին: Այս յայտարարութիւնը իր ազդեցութիւնը գործած էր:

Խեղճ կիները ահ ու դողի մատնուած, կը ստիպէին իրենց տունը ապաստանողները, որպէսզի երթան, նոյնիսկ ոմանք կը սպառնային մատնել զիրենք:

Այլեւս անկարելի էր էրէյլի մնալ:

Որոշեցինք մեկնիլ եւ երթալ մինչեւ Թարսուս ու ջանալ հոն մնալու:

Մանօթացած էի կայարանի շտեմարանապետ էհմալեան էֆէնտիի հետ որ շատ ազնիւ անձ մըն էր եւ ձեռքէն եկած օգնութիւնը չէր զլացած Հայ տարագիրներուն: էհմալեան էֆէնտի յաջողեցաւ թէ՛ ինծի եւ թէ՛ բարեկամներու համար երկաթուղիի տոմսակ Հայթայթել մինչեւ Պօզանթի: Ասիկա պարզապէս շնորհ մըն էր որուն շատ քիչեր կ'արժանանային:

Վերջապէս սեպտեմբեր 24 (Հ. Տ.) հինգշաբթի առտու շոգեկառքով մեկնեցանք էրէյլիէն Սեպուհ Ակունի, Գարագաշ, ես, Կիւլպէնկեան եւ Խաչիկ Ինկիլիզեան, ինչպէս նաեւ էրէյլիցի Հայ վաճառականներէն Արթին էֆէնտի Իսպէնչեան իր բազմանդամ ընտանիքովը:

Տոմսակի գինը վճարելէ ետքը 50 փարա մնացած էր քովս, այնպէս որ Պօզանթիէն անդին ստիպուած էի հետիոտն շարունակել ճամբաս: Բարեբախտաբար ընկերներս ալ նիւթական փայլուն վիճակ մը չունէին եւ իրենք ալ որոշած էին հետիոտն շարունակել ճամբորդութիւննին: Այսպէս ուրեմն ճամբան առանձին չպիտի մնայի: Գալով ուտելիքի՝ Աստուած ողորմած էր:

Ճամբան տոմսակահաւաք պաշտօնեաները որոնք Հայ էին, զիս ճանչցան ու երրորդ կարգի վակօնէն՝ երկու ընկերովս առաջին կարգի վակօն մը փոխադրեցին:

Իրիկունը՝ մութը կոխելէն յետոյ՝ հասանք Պօզանթիի կայարանը:

Հագիւ թէ վակօններէն վար իջած էինք՝ ուստիկանները Ապուհ Ակունին ձերբակալեցին:

— Դուն գինուոր ես,— ըսելով:

Ակունի բողոքեց, ըսաւ որ ինք քաղաքական աքսորեալ մըն է, հետեւաբար գինուորական ծառայութիւն չկրնար կատարել:

Բայց ուստիկանները մտիկ չրին ու առին տարին գինքը:

Կայարանին մօտերը Իսպէնչեան էֆէնտի իր երկու վրանները կանգնել տուաւ, իսկ մենք չորսերնիս, որ վրան չունէինք, բացօթեայ տեղաւորուեցանք:

Ակունիի ձերբակալութիւնը ամէնքս ալ վրդոված էր, կ'ուզէինք զինքը փրկել ուստիկաններուն ճանկէն՝ բայց ի՞նչպէս...

Քանի մը ժամ յետոյ մարդ մը մօտեցաւ մեզի.

— Կայարանին մէջ ձերբակալուող երիտասարդը ձեր ընկերն է,— հարցուց:

— Այո՛,— պատասխանեցինք:

— Չէ՞ք ուզեր զինքը ազատել:

— Հարկաւ կ'ուզենք, բայց ի՞նչպէս:

Նոյն միջոցին Իսպէնչեան էֆէնտին ալ մօտեցաւ մեզի եւ ըսաւ որ իրեններէն ալ երիտասարդ մը ձերբակալած էին իբրև գինուոր:

— Երկուքն ալ կ'ազատենք,— ըսաւ մարդը,— միայն թէ դրամ տալու է:

— Որչա՞փ:

— Երկուքին համար չորս ոսկի:

Սակարկութեան սկսանք եւ վերջապէս երկու ոսկի կապեցինք:

Կէս ժամ յետոյ երկու բանտարկեալները վերադարձան մեր քով:

Բայց Ակունի գոհ չէր իր ազատելէն:

— Ինչո՞ւ զիս ազատեցիք,— ըսաւ,— ես հոն գործս կարգի դրած էի:

— Ի՞նչ կարգադրութիւն:

— Ըսի որ երկրորդական վարժարանէ վկայուած եմ եւ ասոր վրայ խոստացան զիս Պոլիս սպայից վարժարանը դրկելու:

Իրողութիւնը այն էր սակայն որ ուստիկանները այդ գինուորացուի խնդիրը ստեղծած էին տարագիր Հայերը կողոպտելու համար:

Հետեւեալ առտու կանուխ ուստիկանները եկան ու հրամայեցին որ անմիջապէս գոյքերնիս ժողվենք եւ երթանք վրանները որոնք կէս ժամ հեռու կը գտնուէին:

Համակերպելով ճամբայ ելանք: Ա՛լ երկաթուղի չի կար, որովհետեւ նոյն թուականին գիծը Պոլսէն մինչեւ Պօզանթի կը հասնէր:

Տարագիրները ստիպուած էին մինչեւ Թարսուս երթալ կա՛մ ոտքով, կա՛մ կառք ու ձի, կամ էլ վարձելով: Սակայն ատոնց համար ալ ահագին դրամ պէտք էր:

Այսպէս ուրեմն տարագիրներուն համար բո՛ւն չարչարանքը Պօզանթիէն կը սկսէր:

Մենք ալ հո՛ն զգացինք, առաջին անգամ, մեր կացութեան ահաւորութիւնը:

Գոյքերնիս շալկած հասանք վրանները:

Չափազանց ծանրացած էինք: Հարցուցինք թէ ո՞ւր կարելի էր լաւ ջուր գտնել:

— Հոն վերը, բլուրին գագաթը,— ցոյց տուին մեզ,— պարզ ու պատուական ջուր կայ որ գետնէն կը հոսի:

Կիւլպէնկեան, Խաչիկ Ինկիլիզեան եւ ես գոյքերնիս թողուցինք բարեկամներու քով եւ ելանք ցոյց տրուած բլուրին գագաթը ուր փոքրիկ ծառաստան մըն ալ կար:

Չուրը արդարեւ հիանալի էր, ինչպէս նաեւ մեր աչքին առջեւ պարզուած տեսարանը:

Համեստ ճաշ մը ընելէ ետքը, ծառի մը տակ երկնցանք ու բաւական երկար քնացանք: Գիշերը գրեթէ անքուն անցուցեր էինք: Արթննալէ յետոյ՝ կրկին հոն մնացինք: Վարը վրաններուն մէջ գործ մը չունէինք:

Այսպէս ուշ ատեն իջանք բլուրէն վար:

Երեւակայեցէք մեր զարմանքը երբ տեսանք որ դաշտը, ուր հարիւրաւոր վրաններ ցցուած էին, ամայացած էր բոլորովին: Սէվքիաթի պաշտօնեաներ յանկարծ ճամբայ հանած էին բոլոր տարագիրները:

Մենք ալ վազն ի վազ սկսանք երթալ մեծ ճամբէն: Գոյքերնիս բարեբախտաբար բարեկամներու կառքերուն մէջ տեղաւորած էինք եւ վախ չունէինք թէ կը կորսուէին:

Ճամբուն վրայ, հոս ու հոն կը հանդիպէինք տղաքներու, կիներու, ծերունիներու որոնք գլխիկոր կ'երթային, յուսահատ ու լալազին:

Տեղեկացանք թէ երեք ժամ անդին, լերան մը գագաթը, պիտի գիշերէին ճամբայ ելլողները:

Այդ լեռնոտ ճամբուն վրայ հանդիպեցայ տարագրի մը որ առանց գոյք ունենալու, կը քալէր առանձին: Մաքուր հագուած անձ մըն էր ու պոլսեցիի կը նմանէր: Մօտեցայ իրեն:

— Հա՛յ էք, — հարցուցի:

— Այո՛, Հայ եմ, — պատասխանեց տխրութեամբ:

— Ո՛ր տեղացի էք:

— Պոլսեցի:

— Ո՛ր կողմէն:

— Բանկալթիէն:

— Ես ալ պոլսեցի եմ, — պատասխանեցի: — Կ'երեւայ որ մեզի պէս ձեզ ալ աքսորեր են:

— Ձէ, — պատասխանեց մարդը, — ես Պոլսէն չեմ աքսորուած այլ Պանտրմայէն մուհաճիր եղայ:

Ու պատմեց իր պատմութիւնը:

Ինք երկրաչափ է եղեր եւ կառավարութեան կողմէ պաշտօն

ստանձներ է Պանտրմայի քարափներուն շինութեան հսկել ու այդ պաշտօնով Պոլսէն փոխադրուեր է հոն եւ ահա՛ զինքն ալ բռներ տարագրեր են Պանտրմայի Հայերուն հետ:

— Տունս, տեղս, կիսս, զաւակներս Պոլիս են, — բացատրեց մարդը, — ես ալ քանի մը օրէն պիտի երթայի, երբ յանկարծ զիս գործիս գլուխէն բռնեցին ու ճամբայ հանեցին: Նոյնիսկ ժամանակ չտուին որ բնակարանս հանդիպիմ ու քիչ մը ճերմակեղէն առնեմ հետս: Ո՛չ ալ ունեցած դրամս կրցայ առնել: Քսակիս մէջ քանի մը ոսկի ունէի՝ անով ճամբայ ելայ, հիմա մէկ ոսկիս մնաց, եթէ ան ալ լմննայ, չեմ գիտեր ի՛նչ պիտի ընեմ...

Մարդը իր պատմութիւնը պատմած ատեն այնչափ յուզուած էր որ սկսաւ լալ:

Կրցածիս չափ մխիթարեցի զինքը ու հեռացայ քովէն, միանալու համար ընկերներուս որոնք վազն ի վազ լեռնէ մը վեր կը մագլցէին:

Մութը տիրած էր երբ հասանք այն լեռնադաշտը, ուր պիտի գիշերէինք:

Հոն գտանք Սեպուհ Ակունին եւ Գարագաշը, ինչպէս նաեւ մեր գոյքերը:

Գիշերը բացօթեայ անցուցինք եւ հետեւեալ առտու արշալոյսին ճամբայ ելանք:

Առտուն կանուխ քալելը շատ հաճելի էր, բայց երբ արեւը բարձրանար եւ տաքը սկսէր, ա՛լ անտանելի կը դառնար:

Բարեբախտաբար լեռներուն մէջ միշտ պաղ եւ մաքուր ակունակներու կը հանդիպէինք, ինչ որ մեր յոգնած մարմինը կը կազդուէր:

Յերեկը մէկ քանի ժամ հանգստացանք հովիտի մը մէջ ուր խան մը եւ մէկ քանի խանութներ կային: Յետոյ դարձեալ ճամբայ ելանք:

Ճամբաները չափազանց ելեւէջաւոր ու փոշոտ էին ու մեր զնացքը հետզհետէ յոգնեցուցիչ կը դառնար:

Կառքով կամ ձիով գացողները հեռացած էին մենէ:

Տակաւին 4-5 ժամուան ճամբայ ունէինք հասնելու համար Գավաքլը ուր պիտի գիշերէինք:

Յանկարծ տեսայ որ կառք մը կուգար մեր ետեւէն: Երկու ուժեղ ձիերու լծուած վիքթորիա մըն էր: Հագուագիւտ բան մը այդ ճամբուն վրայ:

Մէկ կողմ քաշուեցայ որպէսզի կառքին յարուցած փոշիէն ազատիմ:

Կառքը կեցաւ ճամբուն մէջտեղը եւ լսեցի ձայն մը որ իմ անունս կուտար:

Նայեցայ ու տեսայ որ Բարսեղ էֆէնտի Կիւտէնեանն էր, գոնիացի վաճառական մը որ տարագիր կ'ըլլար իր կնոջ եւ երկու փոքր տղոց հետ եւ զոր ճանչցած էի էրէյլի:

- Ո՞ւր այսպէս, - հարցուց:
- Թարսուս կ'երթամ, - պատասխանեցի:
- Ուրքո՞վ:
- Այո՞:
- Հրամանեցէ՛ք մեր կառքը:

Նախ մերժեցի՝ չուզելով զիրենք անհանգիստ ընել, բայց այնքան պնդեց որ տեղի տուի:

Այս հանդիպումը, իրա՛ւ, ճիշտ ատենին պատահած էր: Երբ կառքին անկիւնը տեղաւորուեցայ, այն ատեն զգացի թէ ո՞րքան յոգնած եմ:

Իրիկունը հասանք Գավաքլը ուր ես պիտի գիշերէի իմ ընկերներովս:

Կիւտէնեան էֆէնտի իր ճամբան շարունակեց: Կ'ուզէր անպատճառ նոյն օրը Թարսուս հասնիլ ուր նախապէս ղրկած էր իր վրանը եւ գոյքերը:

- Գիշերը աղտոտ խանի մը փայտերուն վրայ անցուցինք:
- Առտուն, արշալոյսին պատրաստուեցանք ճամբայ ելլելու:
- Նոյն միջոցին Թարսուսի կողմէն եկած կառք մը կանգ առաւ խանին առջեւ:

Տեսանք որ ճամբորդներ կային մէջը: Հետաքրքիր մտե-

ցանք եւ տեսանք որ Հայեր էին: Մին Յակոբ Գորեանն էր, միւսը Յովհաննէս Թէրլէմէզեան եւ երրորդը՝ դեղագործ մը որուն անունը չեմ յիշեր: Այս վերջինը հիւանդ պառկած էր կառքին մէջ:

Չանկըրիէն՝ ուր աքսորուած էին ապրիլ 11ին՝ ղրկուած էին մինչեւ Թարսուս, սակայն հոն վերադարձի հրաման եկած էր Պոլսէն:

Գորեան շատ ընկճուած կ'երեւար, իսկ Թէրլէմէզեան զուարթ տրամադրութեան մէջ էր:

- Աստուծով դուք ալ կուգաք մեր ետեւէն, - ըսաւ:
- Քիչ ետքը ճամբայ ելանք: Բաւական հեռացած էինք Գավաքլէն ու զառիվայրէ մը կ'իջնէինք երբ ուղտի կարաւան մը դէմերնիս ելաւ: Ուղտապանները, աւագակի դէմքով զինեալ հրէշներ, ատելախառն նայուածքներ ուղղեցին մեզի, հասկեցան Հայ տարագիրներ ըլլալնիս եւ սկսան նախատինքներ եւ սպառնալիքներ տեղալ վրանիս:

- Ձեզ ամէնքդ ալ սատկեցնելու է, - կ'ըսէր մին:
- Սըւոր գլուխը հոստեղ ջախջախե՞մ, - ըսաւ ուրիշ մըն ալ օձիքէս բռնելով:

Բարեբախտաբար իրենց պետը միջամտեց եւ մէկ կողմ քաշեց սպառնացող վայրենին:

Քիչ յետոյ պարապ կառք մը նշմարեցինք որ Թարսուսէն կուգար: Հաւանեցաւ մեզ տանելու աժան գնով: Մտանք կառք ու երկու ժամէն հասանք Քիւլէկ Սթասիօնին որ Թարսուսէն ժամ մը հեռու կը գտնուի եւ ուր հաստատուած էին Հայ տարագիրներու վրանները:

Ամբողջ ընդարձակ դաշտը բանակատեղիի մը երեւոյթը առած էր: Հագարաւոր վրաններ կը ցցուէին ամէն կողմ: Թերեւս այդ միջոցին, Թարսուս, վրաններու ներքեւ, 25-30 հազար Հայեր կային, ընդհանրապէս ատաբազարցի, իզմիթցի, պարտիզակցի, պրուսացի, էտիրնէցի, ռոտոսթոցի, պանտրմացի եւ այլն:

Առաջին ծանօթը որուն հանդիպեցայ Հրանդ Մկրեանն էր Պարտիզակէն:

Ոտքերը պօթ\* Հագած, ձեռքը մտրակ մը, հրամայողական դիրքով մը վեր վար կը պտտէր:

– Ի՞նչ է այդ, Հրանդ, – հարցուցի, – գործի վրայ ես:

– Այո՛, – պատասխանեց, – պահապանի պաշտօն ունիմ:

– Ի՞նչ պահպանութիւն:

– Վրաններուն ապահովութեանը, կարգապահութեանը կը հսկեմ, ասկէ զատ մեռելներն ալ թաղելու պաշտօն ունիմ:

Հարցուցի թէ ծանօթ անձեր կայի՞ն վրաններուն մէջ:

– Իզմիթի առաջնորդ Ստեփաննոս սրբազանը Հոս է, – պատասխանեց, – ինչպէս նաեւ Գոնիայի առաջնորդ Գարեգին վարդապետ Խաչատուրեանը:

Երկուքն ալ անձնապէս չէի ճանչնար: Բայց ուզեցի ծանօթանալ Գարեգին վարդապետին հետ:

Հրանդ Մկրեան զիս առաջնորդեց անոր վրանը: Երբ անունս տուի՝ Գարեգին վարդապետ սիրալիբ ընդունելութիւն մը ըրաւ ինծի: Իրեն կ'ընկերակցէին ձերբակալներն ալ:

Իսկ քովի վրանը կը կենային պարտիզակցի ուսուցիչ մը Գառնիկ Պատուրեան, նախկին արմաշական մը եւ Գարեգին վարդապետի դասընկերը, ինչպէս նաեւ Արսլանպէկէն Մուշկեանի սկստիկները, Կարապետ, կինը, երկու զաւակները, կնոջ եղբայրը՝ Միհրան:

Գարեգին վարդապետ հետաքրքրուեցաւ նիւթական կացութեամբ:

Յայտնեցի որ փայլուն չէր եւ թէ Հազիւ 15-20 դրուշ դրամ ունէի քովս: Այդ դրամն ալ ճարած էի ծախու հանելով Պոլսոյ բանտին մէջ տղթոր Բըլըճեանի ինծի նուիրած ֆանէլան:

Ստիպեց որ ընդունիմ փոքրիկ գումար մը, մէկ քանի օրուս համար, մինչեւ որ կարենայի Պոլսէն դրամ բերել տալ:

– Որո՞ւ հասցէին կարելի է դրամ բերել տալ, – հարցուցի:

\* Զինուորական կօշիկ:

– Շալվարճեան եղբայրներուն հասցէին, – ըսաւ Գարեգին վարդապետ ամէն մարդ այդպէս կ'ընէ:

– Ո՞վ են այդ Շալվարճեան եղբայրները:

– Ալիւրի մեծ գործարան մը ունին եւ անոր շնորհիւ կըրցան թարսուս մնալ, որովհետեւ իրենք կը հայթայթեն Հոս գտնուող 25 հազարի չափ թուրք զինուորներուն ալիւրը:

Անմիջապէս հեռագիր մը խմբագրեցինք, որով թարսուս գտնուելու յայտնելով՝ դրամ կ'ուզէի Պոլսէն:

Գարեգին վարդապետ զիս ճաշի վար դրաւ: Բաւական մեծակ վրան մը ունէր ու բաւական ալ կահ կարասի:

– Դժբախտաբար գիշերը չի պիտի կրնամ քեզ վրանիս մէջ հիւրընկալել, – ըսաւ, – որովհետեւ աւելորդ անկողին ու վերմակ չունիմ:

– Ես տեղ մը կը ճարեմ, – պատասխանեցի:

Վրաններու մէջ նոր պտոյտ մը ըրի Հրանդ Մկրեանի ընկերակցութեամբ:

– Մենք ալ մեր վրանին մէջ շատուոր ենք, – ըսաւ Հրանդ, – ու աւելորդ տեղ չունինք, բայց կեցիր ես տեղ մը կը գտնեմ:

Զիս ներկայացուց կեսարացի երիտասարդներու, որոնցմէ մին ըսաւ թէ կրնար զիս իրենց վրանը առնել, պայմանաւ որ գոհանայի կէս անկողինով ու կէս վերմակով:

– Քով քովի կը պառկինք, – առաջարկեց:

– Ամենայն սիրով:

Դժուարահաճ ըլլալու ատենը չէր:

Այսպէս կարգադրեցի նաեւ անկողնոյ խնդիրը:

Վրանի կեանքը առաջին վայրկեանին հաճելի թուեցաւ ինծի: Նորութեան հրապոյրը ունէր ամէն բանէ առաջ:

Միայն թէ ցերեկները անասելի տաք կ'ընէր վրաններու ներքեւ ու յետոյ ճանճերը հանգիստ չէին թողուր մեզ:

Իսկ մեծագոյն անպատեհութիւնն էր ոջիւր, որ տարածուած էր բոլոր վրանաբնակներուն վրայ եւ որմէ ես ալ ետ չմնացի կրկու օր ետքը:

Ընկերներս Սեպուհ Ակունի եւ Գարագաշ Հազիւ թէ երկու  
օր մնացին վրանները ու յետոյ գացին Թարսուս ուր յաջողե-  
ցան ծածկուած մնալ:

Թարսուս երթալու համար հարկ էր վէսիքա առնել եւ այս  
վէսիքան օրը հազիւ 40-50 հոգիի կը տրուէր, սակայն շատեր  
առանց վէսիքայի կ'երթային՝ ճամբան պահակ կեցող ոստի-  
կանները կաշառելով:

Քիւլէկ Սթասիօնին, ուր կը գտնուէին վրանները, ճամարիտ  
տօնավաճառի մը երեւոյթը ունէր, ափյափոյ կարգաւ խանութ-  
ներ բացուած էին, ուր կը վաճառուէին կերակուրի վերաբե-  
րեալ ամէն ինչ, միս, հաւ, բանջարեղէն, մածոն, պտուղ եւ  
այլն, լիմոնը եւ թուրունճը\* առատ ու աժան էին: Արդէն նոյն  
միջոցին ամէն ինչ աժան էր:

Վրանաբնակ տարագիրներն ալ գործի սկսած էին: Այսպէս,  
օրինակի համար կային սափրիչի վրաններ, դեղագործի վրան-  
ներ, մանրավաճառի վրաններ, եւ այլն:

Շրջուն մանրավաճառներ ալ պակաս չէին:

– Աղուոր սառ ունիմ,– կը պոռար մէկը:

– Պատուական ճերմակ ջուր (օղի),– կ'ըսէր ուրիշ մը:

– Մաքուր ջուր...

– Սքանչելի մածոն,– եւ այլն:

Քանի մը օրէ ի վեր վրաններն էի երբ օր մը մարդ մը մօտե-  
ցաւ քովս: Անմօրուս, ճերմակ պելսերով մէկն էր, ճերմակ  
հաստ ու խոշոր վարտիք մը հագած, գլուխը աղտոտ ֆէս մը,  
ոտքերը մերկ, կոշտ մուճակներու մէջ:

– Չճանչցա՞ր զիս,– ըսաւ:

– Ո՛չ,– պատասխանեցի:

– Աղէկ մը նայէ՛ երեսս:

Ուշադիր նայեցայ դէմքին: Չափազանց յոգնած ու տառա-  
պած մարդու մը երեւոյթը ունէր:

– Չեմ ճանչնար կոր,– ըսի:

\* Թուրից՝ դատը միջուկով Գարսի տեսակ:

– Այս որչա՛փ փոխուեր եմ ուրեմն,– ըսաւ տխրութեամբ:  
Յետոյ աւելցուց:

– Տոքթոր Պօղոսեանն եմ...

Զարմանքի ճիչ մը արձակեցի:

– Այո՛, տոքթոր Պօղոսեանն եմ:

Արդարեւ ինքն էր, ազգային հիւանդանոցի յիմարանոցին  
բժշկապետը:

Ինչպէս յայտնի է, ապրիլ 11ի ձերբակալուածներուն մէջն  
էր ինքն ալ ու աքսորուած Զանկըրը: Քանի մը ամիս ետքը  
Զանկըրըն փոխադրած էին գինքը Էնկիւրի ու հոնկէ ալ քշած  
էին մինչեւ Թարսուս ուր եկած էր քառասուն օր քալելէ ետքը:

Իր պատմութիւնը սրտաճմլիկ էր: Էնկիւրցի Հայ կաթուղիկ  
խումբի մը հետ ճամբայ հանած էին: Եթէ չեմ սխալիր գերա-  
պայծառն ալ իրենց հետ է եղեր:

– Երեքական հոգի շղթաներով իրարու կապուած մեզ ճամ-  
բայ հանեցին,– պատմեց,– եթէ մէջերնէս մին կայնէր, միւս եր-  
կուքն ալ ստիպուած էին կանգ առնել, եթէ մին բնական պէտք  
մը գոհացնելու հարկին ներքեւ գտնուէր, միւս երկուքն ալ  
միասին ծռելու եւ կոկոզ ընելու ստիպուած էին: Գիշերներն  
անգամ շղթաները չէին հաներ... ցերեկը, տաքին, շատ անգամ  
ծարակէ կը տանջուէինք, ջուրի մը քով կը հասնէինք, մեր պա-  
հապանները ջուր կը խմէին, իսկ մեզի պուտ մը չէին տար,  
պարզապէս չարչարելու համար:

Տոքթորը պատմեց նաեւ որ Էնկիւրիէն ճամբայ ելած ատեն-  
նին ամէնքն ալ միտքերնին դրած էին թէ քանի մը ժամէն պի-  
տի ջարդուէին, որովհետեւ այդպէս եղած էր իրենցմէ առաջ  
ճամբայ ելող կարաւանը:

– Այր ու կին բարձրաճայն աղօթելով կը քալէին,– ըսաւ,–  
շատեր ճամբան իրենց ունեցած ոսկի դրամներն ու գոհարեղէն-  
ները կը նետէին, որպէսզի ջարդարարներուն ձեռքը չանցնին:

Տոքթոր Պօղոսեանի գալուստը նախախնամական բարիք մը  
եղաւ վրանաբնակներուն համար որոնց մէջ Հիւանդութիւննե-



ըը ծայր տուած էին: Գրեթէ ամէն վրանի տակ մէյմէկ հիւանդ կար ու այդ միջոցին, ինչպէս ըսի, վրաններուն թիւը հինգ վեց հազարի կը հասնէր:

Գլխաւոր հիւանդութիւններն էին տիզանդերի (թանջը), ջերմ ու աչքի ցաւ: Տիզանդերին որ փոխանցիկ ալ է, ամէնէն աւելի զոհ կ'ընէր: Այդ հիւանդութենէն <օրական> 60-70 հոգի կը մեռնէին:

Թաղումը կը կատարուէր սա ձեւով: Քահանան կուգար վրանին մէջ, մեռելին վրայ կարճ աղօթք մը կ'արտասանէր, յետոյ կառքի մը մէջ կը նետէին դիակը առանց պատանքի, միմիայն իր հագուստներով ու կը տանէին կը թաղէին քիչ մը հեռու, դաշտին մէջ:

Քիւլէկ Սթասիօնի դաշտին մէջ թերեւս այսպէս թաղուած տասնեակ հազարներով Հայեր կան:

Պոլիս տուած հեռագրիս պատասխանը քանի մը օրէն եկաւ: Ղրկուած դրամը գանձելու համար առաջին անգամ Թարսուս գացի:

Թարսուս, կամ հին անունով Տարսոն, Պօղոս առաքեալի ծննդավայրը, Կիւնդոս գետին եզերքը, պարտէզներով շրջապատուած սիրուն քաղաք մըն է: Հեռուն կ'երեւան Լամբրոնի լեռները, լի հայկական յիշատակներով: Տարսոնի Հայերը ընդհանրապէս այդ լեռներուն վրայ կ'երթան օդափոխութեան: Ամէն բարեկեցիկ ընտանիք պարտէզ եւ ամառանոց ունի Լամբրոնի մէջ: Եթէ Կիլիկեան անկախ Հայաստանին միացուի, ինչպէս կը յուսանք ու կը հաւատանք, պիտի նախընտրէի երթալ Տարսոն բնակիլ:

Առաջին այցելութեանս միջոցին ճանչցայ Շալվարճեան եղբայրները որոնց անգնահատելի օժանդակութիւնը պիտի վայելէի քիչ յետոյ:

Ինչպէս ըսի, Քիւլէկ Սթասիօնի վրանները կը գտնուէր նոյն միջոցին Նիկոմեդիոյ ձերուհագարդ առաջնորդը Ստեփաննոս սրբազան Յովակիմեան:

Հակառակ իր կրած տառապանքներուն եւ յոգնութիւններուն Ստեփաննոս եպիսկոպոս պահած էր իր մտքի առոյգութիւնը եւ սրամտութիւնը: Ամէն առտու կ'երթար մօտը գըտնուած գետակին եզրը, ծառի մը տակ փոել կուտար օթոցը եւ հոն ծալլապատիկ նստած կ'անցընէր ամբողջ օրը:

Իզմիթցիները, որոնք բազմաթիւ էին, միշտ շրջապատած էին իրենց սիրելի առաջնորդը «Սրբազան, սրբազան» ըսելով:

— Ա՛լ ինծի սրբազան մի՛ ըսէք, սրբազանութեան տեղս չըմնաց:

Օր մըն ալ դիտելով շուրջի հեռապատկերը ախ մը քաշեց եւ ըսաւ.

— Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա... այո՛ ցանկամ տեսնել բայց աս պիչիմը\* չէ:

Քիւլէկ Սթասիօնին ամէնէն անտանելի ու սարսափելի բանը առաքումներն էին կամ իրենց բառով սէվքիաթը: Օրը երկու անգամ, առտուն արշալոյսին եւ իրիկուան դէմ Օսմանիէէն կառախումբը կուգար, տարագիրներով կը լեցուէր ու ճամբայ կ'ելէր, ամէն անգամ հազար, հազար հինգհարիւր հոգի տանելով:

Ամէն անգամ որ վայրաշարժի սուլիչին ձայնը կը լսուէր, ամէնուն սիրտը դող կ'ելէր:

— Որո՞ւնն էր արդեօք կարգը քշուելու երթալու աւելի հեռո՞ւն, դէպի Օսմանիէ, Իսլահիէ, Ռաճիօ ու անկէ ալ աւելի հեռուն, դէպի Տէր-Ջօրի անջրդի ու ամայի անապատները:

Մենք քանի մը ամուրիներ, որ ո՛չ վրան, ո՛չ ընտանիք, ո՛չ գոյք ունէինք, սուլիչին ձայնը լսելնուս պէս կը փախչէինք հեռուն, կէս ժամ անդին ու ծառի մը տակ կը կծկուէինք մինչեւ որ սէվքիաթի գործողութիւնը աւարտէր, կառախումբը ճամբայ ելլէր ու վտանգը հեռանար քանի մը ժամուան համար:

Բայց այն խեղճերը որոնք ընտանիքի, զաւակներու, վրանի ու բնոներու տէր էին, ո՞ւր կրնային փախչիլ:

\* Տեսքը:

Այդ առաքման գործողութիւնը շատ վայրագ կերպով կը կատարուէր:

Սէվք մէմուրին\*, խուժարի էֆէնտի իր քանի մը օգնականներովը, սօփաներով\*\* զինուած, յանկարծ կը մտնէր վրաններուն մէջ եւ իր քմահաճոյքին համեմատ քանդել կուտար այս կամ այն վրանը, անոնց ձողերը քաշել տալով:

— Ղալխըն, երխըն, չըխըն\*\*\*, — կը պոռային այդ հրէշները իրենց բիրերովը\*\*\*\* սպառնալով տնտնացողներուն:

Եւ ահա՛ վայնասուն մըն էր որ կը լսուէր փլած վրաններուն մէջ: Խեղճ կիներ, աղջիկներ, ափյափոյ վրանը կը ծալլէին, կը կապէին, ձողերը կը ժողուէին, գոյքերնին ու բեռներնին կը ծրարէին եւ կ'սկսէին կռնակնին առած փոխադրել շոգեկառք: Մինչ կը շարունակուէր լսուիլ չարաշուք բառերը.

— Ղալխըն, երխըն, չըխըն...

Այս երեք բառերը էսկի-Շէհիրէն մինչեւ Տէր-Ջօր, մահուան զօղանջի մը պէս հնչած են տարագիրներու ականջին:

Ու լաց ու կոծի պոռչտուքներուն մէջ, կը լսուէին նաեւ բարկութեան, անէծքի, յուսահատութեան աղաղակներ:

— Անի քաղաքէն ալ գէշ եղանք, — կը պոռար կին մը:

— Քէ՛օր ես, չե՛ս տեսնար կոր, — կը գոչէր ուրիշ մը բռունցքը սպառնական երկինք բարձրացրած:

Անկարելի է երեւակայել աւելի սրտաճմլիկ տեսարան մը:

\*\*\*

Վրաններուն մէջ գտնուած ատենս էր երբ օր մը դէմս ելաւ Ասատուր Տէր Մատթէոսեանը, զոր էրէյլի, իր օֆիսին մէջ թրջած էինք:

\* Տեղափոխութեան պատասխանատու պաշտօնէան:

\*\* Մահակներով:

\*\*\* Վեր կացէք, փշոքք, դուրս ելէք:

\*\*\*\* Լախտերով:

Հակառակ պաշտօնական անձերու հետ իր մշակած յարաբերութիւններուն՝ չէր կրցած օձիքը ազատել տարագրութեան յորձանքէն եւ յորձանքը զինքը նետած էր Քիւլէկ Սթասիօն:

Նախկին խմբագիրը շատ խեղճուկրակ վիճակ մը ունէր: Ինչպէս խոստովանեցաւ, ճերմակեղէնները չէր փոխած երեք ամիսէ ի վեր, եւ ինչպէ՞ս կրնար փոխել քանի որ փոխնորդ չունէր: Ծայրայեղօրէն ոջլոտած էր:

Այսուհանդերձ իր հոգեկան կորովը եւ մեծխօսիկութիւնը պահած է:

— Գործս կարգին է, — ըսաւ, — Մերսինի կառավարիչը մտերիմ բարեկամս է, եղբօր պէս ենք միասին... Հիմա միտք ունիմ անմիջապէս կառք մը բռնել ու Մերսին երթալ, վստահ եմ որ զիս հոն վար պիտի դնէ ու աղէկ պաշտօն մըն ալ պիտի տայ: Դուն չըլլայ որ հոսկէ մեկնիս մինչեւ որ ինչ լուր չառնես, որովհետեւ վստահ եղիր որ քեզի համար ալ պիտի խօսիմ ու քեզ ալ Մերսին պիտի բերել տամ, հոն հանգիստ կ'ընես: Օր մըն ալ երբոր առիթը ներկայանայ, նաև մը կը մտնենք Կիպրոս կ'երթանք, անկէ ալ Եգիպտոս կ'անցնինք: Այստեղ եթէ բարեկամներ ունիս անուանին տո՛ւր, անոնց համար ալ խօսիմ...:

Արդարեւ Ասատուր Տէր Մատթէոսեան գնաց իր մտերիմ բարեկամ միւթէսարըՖը\* տեսնելու:

Սակայն այդ վաղեմի մտերիմը, ի նշան բարեկամութեան, Տէր Մատթէոսեանը քէլէպճէի զարկած՝ վերադարձուց Թարսուս, ուրկէ անմիջապէս ղրկուեցաւ աւելի հեռուն: Յետոյ ի մացայ որ խեղճը ճամբան հիւանդանալով մեռած է:

Սեպտեմբերի վերջերն էինք, անձրեւի եղանակը պիտի սկսէր եւ անկարելի էր վրաններու ներքեւ մնալ:

Որոշեցի քաղաք երթալ եւ թաքստոց մը պատրաստել ինծի: Օր մը քաղաքը, Սթրաթիի գինետունը նստած էի, երբ երիտասարդ մը մօտեցաւ ինծի:

\* Սանճակի կառավարիչը:

– Վա՛յ Օտեան, – գոչեց, – լսեցի որ վրաններն ես եղեր, փափաքեցայ քեզ տեսնել, հոն պիտի գայի, բարեբախտաբար քեզ հոս տեսայ, զիս չճանչցա՞ր, ձօնն եմ, գրաշար ձօն Մարտիկեան, Եգիպտոս տեսնուած էինք միասին:

Յիշեցի զինքը:

– Հոս ի՞նչ կ'ընես, – հարցուցի:

– Աժանսը\* կը հրատարակեմ օրը երկու անգամ, անկէ զատ տպարանական ուրիշ գործեր կ'ընեմ... տպարանը թուրքի մըն է բայց ամբողջ գործը ինծի ձգած է, ինք բանի մը չխառնուիր:

– Ինչպէ՞ս կ'ըլլայ որ քեզ չեն քշած մինչեւ հիմա:

– Քաղաքին մէջ ուրիշ գրաշար չկայ, ուստի ստիպուած են զիս պահելու: Եթէ զիս քշեն, աժանս չհրատարակուիր եւ Թարսուս ու Մերսին առանց լուրի կը մնան:

Միւսիւ ձօն, ինչպէս զինքը կը կոչեն Թարսուսի մէջ, ինծի պատմեց թէ՛ իր կնոջ հետ կը բնակի յոյն կնոջ մը տունը եւ թէ նոյն տան մէջ կայ կահաւորուած սենեակ մը, թէ տան տիրուհին պատրաստ է այդ սենեակը ինծի տրամադրել ամսական 120 դրուշի փոխարէն եւ զիս ստիպեց որ վրաններէն հոն փոխադրուիմ:

Իմ ալ դիտաւորութիւնս քաղաք գալ էր արդէն:

– Մեր տանը մէջ ապահով կրնաս ըլլալ, – ըսաւ, – խուզարկութենէ վախ չունինք: Ասկէ զատ սէվքիաթի պաշտօնեաները ինծի ծանօթ են, եթէ խնդիր մը ծագի առաջը կ'առնենք:

Շնորհակալութիւն յայտնեցի բարեկամիս եւ վերադարձայ Քիւլէկ Սթասիօն, միտքս դնելով որ առաջին առթիւ գոյքերս առնեմ ու քաղաք գամ: Արդէն Գոնիայի առաջնորդ Գարեգին վարդապետն ալ նոյն դիտաւորութիւնը ունէր:

Հեղեղանման անձրեւ մը նոյն գիշերը ողողեց ամբողջ վրանները: Խեղճութիւնը իր ծայր աստիճանին հասաւ: Վրաններէն շատը փլան: Ամբողջ կարասիները, անկողիները, վերմակները

ջուրին մէջ խխում եղան: Կպճտուն ցելսը որ մինչեւ ծունկերնիս կը հասնէր, տեղ տեղ, անկարելի կընէր քալելը եւ երեւակայեցէ՛ք որ այդ անտանելի կացութեան մէջ սէվքիաթը կը շարունակուէր մտրակի ու սօփայի սպառնալիքին ներքեւ:

Անձրեւին հետեւեալ օրը Գարեգին վարդապետ իր մօր եւ քրոջը հետ յաջողեցաւ քաղաք փոխադրուելի ուր իրեն հետեւեցան նաեւ իր միւս ընկերները:

Օր մը վերջն ալ ես յաջողեցայ երթալ եւ տեղաւորուել բարեկամիս տունը:

\* Բառացի՝ գործակալութիւնը, այստեղ՝ լրատու:

## ՏԱՐՍՈՆԻ ՄԷՋ

Ինչպէս ըսի՝ Սեպուհ Ակունի եւ Գարագաշ ինէ առաջ գացած էին Թարսուս ուր քանի մը օր գաղտագողի պանդոկի մը մէջ անցընելէ ետքը, կրցած էին սենեակ մը գտնել: Իրենց հետ էր նաեւ Լեւոն Մօզեան, զոր առաջին անգամ տեսայ իրենց սենեակը:

Լեւոն Մօզեան, «Ազատամարտ»ի խմբագիրներէն, ապրիլ 11էն առաջ ձերբակալուած, բանտարկուած ու աքսորուած էր, կարծեմ Գօշ Հիսար, հոնկէ ալ քշած էին զինքը ու խառնած տարագիրներու՝ յորձանքին:

Թարսուս ապաստանած էին նաեւ Խաչիկ Ինկիլիզեան եւ Կիւլպէնկեան: Այս վերջինը յաջողեցաւ սակայն քանի մը շաբաթ ետքը վերադառնալ Պոլիս ներքին գործոց նախարարութենէն եկած մասնաւոր արտօնութեամբ:

Հո՛ն էին Լեւոն Չաքարեան եւ Մատթէոսեան էֆէնտի որոնք մեզի հետ էրէյլի կը գտնուէին:

Մատթէոսեան էֆէնտի զաւակն էր Եգիպտոսի ծխախոտի ծանօթ վաճառական մեծահարուստ Յովհաննէս պէյ Մատթէոսեանի:

Օդափոխութեան համար Պոլիս եկած է եղբր ու ձերբակալուելով տարագիր ըրած էին զինքը:

Հազիւ շաբաթէ մը ի վեր Թարսուս կը գտնուէի երբ լսեցի թէ Արամ Անտոնեան Քիւլէկ Սթասիօնին կը գտնուի եղբր, Արսէն քահանային վրանին մէջ: Չափազանց ուրախացայ որովհետեւ կը կարծէի թէ ինքն ալ իր ընկերներուն պէս ջարդուած էր:

– Միայն թէ, – ըսին լուրը տուողները, – շատ գէշ վիճակի մէջ է, ճամբան կառքէն ինկեր, ոտքը կոտրեր է. ու երկու անթացուպով կը քայլէ կոր:

Լուր զրկեցի իրեն որ ճար մը գտնէ ու անմիջապէս ինքզինք Թարսուս նետէ:

Բայց Արամ Անտոնեան արդէն իր գլխուն ճարը գտած էր եւ հետեւեալ օրն իսկ լուր առի թէ եկած էր քաղաք ու կը զբտնուէր Սեպուհ Ակունիի ու Գարագաշի սենեակը:

Իսկոյն փութացի իր քով: Համբուրուեցանք: Քիչ մը նիհարեցած գտայ զինքը, բայց բարոյական կորովը չէր կորսնցուցած բնաւ: Նոյն զուարթ կատակող Արամն էր:

– Երկու ոտքով ճամբայ ելայ Պոլսէն եւ չորս ոտքով հոս հասայ, – ըսաւ իր երկու անթացուպներուն ակնարկելով:

Յետոյ պատմեց իր արկածները: Շատ մը ուրիշ աքսորականներու հետ ճամբայ հանած էին Չանկըրըն կառքերով: Ծամբան, միջոց մը, կառքին մէջ ոտքի կ'ելլէ բալթօն հագնելու համար, նոյն բոպէին կառքը ցնցում մը կ'ունենայ եւ Արամ կը գըլտորի կառքէն վար, այնպիսի ուժգին կերպով որ աջ ոտքը կ'ելլէ զիստին կողմէ:

Ջինքը կը դնեն կառքին մէջ ու կը փոխադրեն մինչեւ էնկիւրի: Կառքին մէջ անխնամ թողուած՝ ահռելիօրէն կը տանջուի մեր բարեկամը:

Էնկիւրի հասնելուն պէս զինքը հիւանդանոց կը փոխադրեն: Իսկ ընկերները կը շարունակեն իրենց ճամբան ու կը ջարդուին:

Հիւանդանոցին մէջ բժիշկը կուգայ ու կը քննէ կոտրուածքը եւ կ'ըսէ թէ՛ հարկ է անմիջապէս գաճի մէջ առնել կոտրուած մասը: Բայց երբ կը հասկնայ թէ վիրաւորը Հայ մըն է, մէյ մըն ալ քովը չմօտենար:

– Ստիպուեցայ ես զիս դարմանել, – պատմեց Արամ, – մօրմէս իմացած էի որ կոտրուածք մը անշարժ մնալու է այնքան օր որքան վիրաւորը տարիք ունի: Ես քառասուն տարեկան էի, ուստի որոշեցի ոտքս քառասուն օր անշարժ պահել: Առանց ո՛

եւ է հաստատուն կապի շատ դժուար բան մըն էր ասիկա, բայց վերջապէս յաջողեցայ եւ իրաւամբ քառասուն օր ետքը ոսկորներս միացած էին, միայն թէ չէի կրնար քալել առանց անթացուպի:

Հագիւ թէ ոտքի ելայ, զիս հիւանդանոցէն հանեցին: Բարեբախտաբար այդ ժամանակամիջոցին ջարդերը դադրած էին այդ կողմերը եւ կրցայ առանց սպաննուելու ինքզինքս հոս նետել:

Սեպուհ Ակունիի բնակած սենեակին կից կը բնակէր Կարապետ Շահպազը. որ Պոլիս ձերբակալուած ու աքսորուած էր, ինչպէս նաեւ մէկ երկու ուրիշ տարագիրներ:

Ես սկսած էի բաւական ապահով զգալ ինքզինքս եւ յաճախ դուրս ելլելով կը պտտէի քաղաքին մէջ:

Յերեկները կը ճաշէի թաղապետական պարտէզին մէջ գլտնուող ճաշարանը որ լաւագոյնն էր եւ յաճախ ինծի սեղանակից կ'ունենայի Թարսուսի գայմագամը որ ամուրի ըլլալով դուրսը կը ճաշէր:

Առտունները եւ իրիկունները կ'անցընէի Սթրաթիի գինետունը ուր կը հաւաքուէին նաեւ ուրիշ բարեկամներ:

Հոն առաջին անգամ հանդիպեցայ մեր բարեկամ Եղիա Սուզիկեանին (Նոր Քաղաքագէտ) որ Գոնիայէն կուգար:

Եղիա Սուզիկեան, երբ Պոլիս կը գտնուէի, իբրեւ զինուոր ղրկուած էր Չօուլու եւ ապա Սիլիվրիի կողմերը:

Յետոյ սակայն զինքն ալ, Հայ ըլլալուն համար, ուրիշ Հայ զինուորներու հետ քշած էին դէպի Անատոլու, իբրեւ տարագիր:

<Հոն> յաջողած էր բաւական ատեն <մնալ>... ուր կրցած էր ապրիլ «ժամանակ» թերթը վաճառելով: Բայց, յետոյ, հալած... <...> ացած ըլլալով, ինքն <ալ> <...> շատերու հետ քշուած էր Թարսուս:

Սթրաթիի խանութը ժամադրավայրն էր բոլոր տարագիր Հայերուն, ամէն առտու վրաններէն բան գնելու համար քաղաք եկողները անպատճառ կը հանդիպէին Հոն եւ այս կերպով քա

ղաք գտնուողներն ու վրանաբնակները միշտ յարաբերութեան մէջ կ'ըլլային իրարու հետ:

Հոն էր որ ծանօթացայ նաեւ ոտոսութոցի տարագիրներու հետ, որոնցմէ կը յիշեմ Մովսէս Պալլըքեան ծանօթ վաճառականը, Հնտաբոյծ Նշան Թարաքեան եւ դեղագործ Թադէոս Պէզիրեան:

Կամաց կամաց Թարսուսի մէջ ալ խստութիւնները շատցան եւ քաղաքը ապաստանած Հայերու դէմ հալածանքը սկսաւ:

Մէկ քանի անգամ մենք ալ բռնուեցանք եւ յաջողեցանք փախչիլ, բայց հասաւ օր մը ուր անկարելի եղաւ այլեւս ծածկուած մնալ:

Այն ատեն Շալվարեան եղբայրները ազնուաբար զիս հիւրընկալեցին իրենց ալիւրի Ֆապրիքան որ քաղաքէն կէս ժամ հեռու կը գտնուի, Կիւնդոս գետին եզերքը:

Այդ ընդարձակ գործարանը զոր Շալվարեան եղբայրները հիմնած են, կատարեալ եւրոպական հաստատութիւն մըն է եւ օրական 50-60000 քիլօ ալիւր կ'արտադրէ: Ամէն շէնքը ելեքտրականութեամբ լուսաւորուած է, շնորհիւ Կիւնդոսի ջուրի հոսանքին:

Արդէն Թարսուս քաղաքն ալ այդ գետին շնորհիւ, ելեքտրականութեամբ լուսաւորուած է եւ շատ ալ աժան կերպով:

Հագիւ թէ Հոն գացած էի՝ երբ հետզհետէ քաղաքէն փախչելով՝ եկան ինծի հետ միացան Եղիա Սուզիկեան, Սեպուհ Ակունի եւ Լեւոն Մօզեան:

Շալվարեան եղբայրները ո՛չ թէ միայն մեզ սենեակ ու անկողին տուած էին, այլ նաեւ առատաձեռնօրէն կը հայթայթէին մեր կերակուրը, օղին, գինին եւ ծխախոտը:

Երեք շաբաթ մնացինք այդ հիւրընկալ յարկին ներքեւ եւ երբեք չպիտի մոռնամ այն նիւթական ու բարոյական օժանդակութիւնը զոր ամէնքս ալ վայելեցինք այդ ազնիւ եղբայրներուն եւ իրենց զաւակներուն՝ պ. Արամ եւ Արտաշէս Շալվարեաններու կողմէ:

Պ. Արամ որ լուսանկարի սիրահար մըն է, իմ ու Արամ Անտոնեանի լուսանկարը Հանեց, զանազան դիրքերով:

Շալվարճեաններուն ֆապրիքին մէջ մենէ գատ կային նաեւ 20-30ի չափ ուրիշ տարագիր Հայեր որոնք իբրեւ արհեստաւոր օրականով կ'աշխատէին հոն:

Բայց հալածանքը այնքան սաստկացաւ Հայերուն դէմ որ անկարելի եղաւ այդ մարդիկը պահել ալիւրի գործատան մէջ: Նոյնիսկ մենք ալ այլեւս չէինք կրնար մնալ հոն առանց վտանգելու մեր հիւրընկալները:

Գարեգին վարդապետ Խաչատուրեան որ իրեններով տան մը մէջ ապաստանած էր, նոյնպէս ոստիկանութեան կողմէ կը հետապնդուէր:

Ա՛լ ժամանակը հասած էր ճամբանիս շարունակելու դէպի անծանօթը:

Ընկերներուս ըսի որ ես պիտի երթայի Գարեգին վարդապետի հետ որուն մտերմացած էի աքսորանքի մէջ:

Մօզեան, Ակունի, Գարագաշ եւ Սուգիկեան նախընտրեցին Թարսուս մնալ փախստական վիճակի մէջ:

Արամ Անտոնեան եւս հոն պիտի մնար, բայց ինք գործը կարգի դրած էր: Հայ միւթահիտի մը քով պաշտօնեայ եղած էր ու այս կերպով կրցած էր վէսիքա մը ձեռք ձգել:

Նոյեմբեր 5/18 հինգշաբթի առտու Գարեգին վարդապետ, մայրը, քոյրը, միւս հետեւորդներն ու ես Թարսուսէն շոգեկառքով մեկնեցանք դէպի Օսմանիէ ուր հասանք նոյն գիշերը:

Կայարանը քաղքէն հեռու գտնուելով՝ ստիպուեցանք մեր ծանր բռնները կայարան թողուլ եւ թիթեւները շալկած երթալ քաղաք:

Օսմանիէի մէջ միակ օթէլ մը կար ուր գացինք հիւրընկալութիւն խնդրելու:

— Տեղ չունինք,— ըսաւ տէրը,— բոլոր սենեակներն ալ բռնուած են սպաներու կողմէ:

Շուտաւ՝ փողոցները կը թափառէինք երբ երիտասարդ մը

որ հեռագրատան պաշտօնեայ մըն է եղեր, մեր վիճակը տեսնելով խղճաց վրանիս:

— Եկէք ձեզի տեղ մը ցոյց տամ, այս գիշեր հոն անցուցէք, վաղը Աստուած ողորմած է,— ըսաւ:

Շնորհակալութեամբ հետեւեցանք իրեն:

Պարտէզի մը դուռը բացաւ եւ սանդուխէ մը վեր հանեց: Վերնայարկը վրան գոց թէռաւ մը կար ուր կրնայինք գոնէ պատսպարուիլ անձրեւէն որ սկսած էր տեղալ: Սենեակները կղպուած էին:

— Կարելի չէ՞ այս սենեակներէն մէկը բանալ,— ըսինք,— նոյնիսկ վճարումի փոխարէն:

— Դժբախտաբար բանալիները քովս չեն,— պատասխանեց մեր առաջնորդը:

— Բայց այս տունը որո՞ւնն է:

— Այս տան տէրը պառաւ կին մըն է,— ըսաւ,— զաւակները զինուոր գացած են, ինքն ալ իր քրոջ հետ կը բնակի, բայց չեմ գիտեր թէ ո՞ր կողմը կը նստին:

Ինչ որ է համակերպեցանք: Ծածկոցները փռեցինք գետին ու գէշ աղէկ պառկեցանք: Առտուն նախաճաշ պատրաստելու վրայ էինք, երբ տեսանք որ հեռուէն պառաւ ջատուկ մը կուգար, ձեռքերը շարժելով ու աղաղակելով:

Երբ քիչ մըն ալ մօտեցաւ, հասկցանք որ այդ կինը մեզի կուգար ու մեզի կ'ողղէր իր խօսքերը:

— Կորսուեցէ՛ք, աւազակներ,— կը պոռար պառաւը,— ի՞նչ գործ ունիք իմ տանս մէջ, ո՞վ հրաման տուաւ գալ այստեղ նըստիլ, շուտով դուրս կորսուեցէք, ոստիկան չիկա՞յ այստեղ... կեա՛վուրեն՛ք, քա՛ֆիրեն՛ք\*, դուրս ելէք տունէս...:

Ու այսպէս պողոտայով հասաւ մինչեւ մեր քովը:

Գարեգին վարդապետ ջանաց հանդարտեցնել այդ կատղած ջատուկը:

— Հանրմ էՖէնտի, հանդարտէ՛, մենք չեկանք այստեղ, այլ մեզի բերին:

\* Աճառատներ:

– Ո՞վ բերաւ...

– Հեռագրատան պաշտօնեան:

– Ան իմ տուննիս ի՞նչ կը խառնուի: Հիմա պիտի կորսուիք երթաք... տեսէ՛ք ի՞նչ ըրեր են տունս, խարապ ըրեր, աղտոտեր են...

– Բայց հանրմ էֆէնտի խօսք մտիկ ըրէ:

– Դո՛ւրս ելլէք, դո՛ւրս ելէք...

– Կամաց խօսէ հիմա կ'երթանք:

Վերջապէս դժուարաւ գինքը հանդարտեցուցինք: Գարեզին վարդապետ առաջարկեց իրեն գիշերուան վարձք արծաթ մէծիտ մը վճարել:

Դրամին տեսքը աւելի հանդարտեցուց գինքը եւ ձայնը քաշեց:

Բայց դրացի կիները արդէն աղմուկին ձայնը լսած ու շուրջերնիս հաւաքուած էին: Եւ անոնք ալ սպառնական խօսքեր կը նետէին մեր հասցէին:

Նորէն դիմեցինք օթէլի որ մօտ կը գտնուէր:

– Հոս տեղ չի կայ, – պատասխանեցին:

Տեղացի Հայ կին մը մեզ առաջնորդեց օթէլին կից գտնուող պարտէզ մը, ուր մէկ երկու սենեակներ կային: Ատոնց մէկին մէջ երկու կիներ կը բնակէին: Դրամի փոխարէն հաւանեցան սենեակը քանի մը օրուան համար մեզի յանձնել եւ իրենք ուրիշ տեղ մը գացին:

Այս կերպով փրկուեցանք անտանելի կացութենէ մը:

\*\*\*

Մեր Օսմանիէ գտնուած միջոցին լսեցինք այն սոսկալի խոշտանգումները որոնց ենթարկուած էին 40-50 հազար տարագիրներ:

Այս խեղճերը, մէկ գիշերուան մէջ, տեղատարափ անձրեկ մը ատեն, յանկարծ գինուորներու ու ոստիկաններու սպառնա-

լիքին ու ծեծին տակ ճամբայ կը հանուին: Այդ տասնեակ հազարներով կիները, տղաքը, աղջիկներն ու ծերուներն, հիւանդներն ու անկարները կը ստիպուին թողուլ իրենց ունեցած բոլոր վրանները եւ գոյքերը ու այսպէս, անձրեկին տակ, լեռնէ լեռ քալել օրերով, հասնելու համար Իսլահիէ: Այդ քառասուն հազար տարագիրներէն հազիւ քսան հազարը կրնան հանդուրժել ճամբու տաժանքին, մնացածը բնաջինջ կ'ըլլայ:

Մեր հոն գտնուած ատենը հազիւ քանի մը հազար տարագիր կար վրաններուն ներքեւ, որոնք քաղքէն մէկ ու կէս ժամ հեռու ամայի դաշտի մը մէջ կը բնակէին:

Մուշեղ եպիսկոպոսին եղբայրը Կարապետ, կինը, փոքրիկ աղջիկը եւ կնոջ եղբայրը Միհրան որոնք Թարսուս, Գարեզին վարդապետի հետ էին, մենէ առաջ սէվք եղան: Կը յուսայինք զիրենք Օսմանիէ գտնել, բայց հոն չէին:

Այն ատեն ենթադրեցինք որ տեղատարափին ատեն ճամբայ հանուած 40 հազար տարագիրներուն հետ գացած են, ինչ որ չափազանց մտատանջութեան մատնեց մեզ:

Բարեբախտաբար գիշեր մը յանկարծ Կարապետ ու Միհրան ներս մտան մեր սենեակէն:

Չափազանց զարմացանք այս անակնկալ այցելութենէն:

– Ինչպէ՞ս, հո՞ս էիք ուրեմն, – հարցուց վարդապետը:

– Ձէ՛, հոս չէինք, նոր եկանք, – պատասխանեց Կարապետ խորհրդաւոր ձեւով մը:

– Ուրկէ՞ եկաք:

– Տէօրթ Եօլի կողմերէն:

– Բայց ի՞նչ գործ ունէիք այդ կողմերը:

– Օսմանիէ գտնուած ատեննիս մեզի ըսին որ յաճախ ֆրանսական կամ անգլիական շոգենաւեր կը մօտենան ծովեզերքին եւ երբ ցամաքէն իրենց նշան ըլլայ, նաւակ կը ղրկեն ու եթէ նշան ընողները Հայ տարագիրներ են, զանոնք շոգենաւ կ'առնեն ու Կիպրոս կամ Եգիպտոս կը փոխադրեն: Մենք ալ մտածեցինք փորձել փրկութեան այդ միջոցը, քանի որ Օսմա-

նիէէն Տէօրթ Եօլի ծովեզերքը Հազիւ 10-12 ժամուան հեռաւորութիւն ունի: Ուրիշ ընկերներ ալ գտանք, 10-12 հոգի մեր կիներովն ու զաւակներովը ճամբայ ելանք գաղտնաբար եւ յաղեցանք ծովուն մօտենալ, թէ եւ միշտ լեռներու կամ անտառներու մէջ պահուրտած: Այսպէս թափառեցանք երկու շաբաթի չափ, հազար ու մէկ նեղութիւններով ու չարչարանքներով, բայց հորիզոնին վրայ ո՛չ մէկ Ֆրանսական կամ անգլիական շոգենաւ երեւցաւ եւ որովհետեւ մեր հետը առած պաշարը սպառած էր, ստիպուեցանք ետ դառնալ:

Թարսուս գտնուած ատեննիս ալ այդ կերպով փախչողներու եւ ազատողներու պատմութիւններ լսած էինք եւ հոն ալ նոյն արկածախնդրութիւնը փորձողներ եղան, բայց կարծեմ իրենց մէջէն շատ քիչեր յաջողեցան:

Օսմանիէի մէջ տարօրինակ լուր մը բաւական յոյս ներշնչեց խեղճ Հայ տարագիրներուն, որոնք ամէնէն անհեթեթ լուրերը իբրեւ ճշմարտութիւն կ'ընդունէին: Թշուառութեան մէջ, մարդ չափազանց դիւրահաւան կ'ըլլայ:

Այսպէս, օր մը, մէկ քանի տարագիրներ եկան մեր սենեակը ուրախ դէմքով:

— Բարի լուրը լսեցի՞ք, — ըսին:

— Ի՞նչ լուր, — հարցուցինք:

— Ամերիկեան կառավարութիւնը բանակցութեան մէջ է եղեր Գերմանիոյ հետ Հայերուն մասին: Ամերիկա բոլոր Հայերը ծախու առնել ու Ամերիկա փոխադրել կ'ուզէ եղեր եւ ամէն մէկ Հայու համար երեք ոսկի տալ խոստացեր է: Գերմանիա 5 ոսկի կը պահանջէ եղեր, ասոր համար բանակցութեան մէջ են... ա՛խ գետնին տակն անցնելիք սա ծակաչք Գերմանացին...

Քանի մը օր այս լուրը բերնէ բերան շրջան ըրաւ եւ բաւական սրտապնդեց տարագիրները:

— Իցի՛ւ թէ շուտով կարգադրուէր խնդիրը, — կ'ըսէին, — եւ մենք ամէնէն առաջ շոգենաւ մտնէինք Ամերիկա երթալու համար, քանի որ ծովեզերքին մօտ կը գտնուինք:

Օսմանիէի մէջ ուրիշ լուր մըն ալ բաւական յուսադրեց մեզ, լուր մը որ շատ աւելի տրամաբանական ու խելքի մօտ էր քան Հայերու առուծախին լուրը:

Անգլիացիները Եռամուրթալը կը ումբակոծեն կոր եղեր, ըսեցաւ օր մը:

Եռամուրթալը Իսկէնտէրունի ծոցին մէջ փոքրիկ նաւահանգիստ մըն է, Տէօրթ Եօլէն քանի մը ժամ անդին եւ Օսմանիէէն հազիւ 8-10 ժամ հեռու:

Հետեւեալ օրը ուրիշ մանրամասնութիւն մըն ալ լսեցինք.

— Անգլիացիները զօրք ցամաք հաներ են:

Ու տեղւոյն ռազմագէտները, որովհետեւ պատերազմի շըրջանին ամէն տեղ ռազմագէտներ կը գտնուէին, նոյնիսկ Օսմանիէի մէջ, պատերազմական այդ գործողութիւնը կը բացատրէին սա կերպով.

— Յայտնի կը տեսնուի որ Անգլիացիին նպատակն է երկաթուղիին գիծը գրաւել եւ ասոր համար Եռամուրթալը քէն լաւագոյն տեղ մը չէր կրնար գտնել ցամաք ելլելու համար:

Հիմա ուղղակի Օսմանիէի վրայ պիտի քայլէ եւ այս կերպով երկաթուղին ձեռք անցնէ:

Այսպէս ուրեմն մէկ օրէն միւսը անգլիական զօրքերը կրնային Օսմանիէ գալ եւ այն ատեն փրկուած էինք:

Կերեւակայէք թէ այդ լուրերը որքա՛ն կը խանդավառէին մեզ:

Բայց, ափսո՛ս, իրականութիւնը այն էր որ ո՛չ ցամաք զօրք ելած էր, ո՛չ ալ Եռամուրթալը ումբակոծուած:

\*\*\*

Տասը օրի չափ մնացինք Օսմանիէ: Յետոյ կառքով ճամբայ ելանք դէպի Իսլահիէ որ երկու օրուան հեռաւորութիւն ունի:

Այս ճամբուն վրայ տեսանք տարագիրներու կարաւաններուն աննկարագրելի խեղճութիւնը: Հազարաւոր կիներ, աղ-



Ղիկներ, տղաք, իրենց բեռներուն տակ կքած ոգեսպառ ու ցաւատանջ կը քալեն ու կը քալին ելեւէջաւոր քարոտ ու ցեխոտ ճամբաներէ, ողբ ու կոծի աղաղակներ բարձրացնելով: Դիակներ հոս ու հոն, գիշատիչ թռչուններէ, շուններէ ու բորենիններէ յօշոտուած: Հիւանդներ, որոնք ծառերու տակ կը հեծեծեն անօգնական: Նորածիններ լքուած, որոնք կը ճուլան անօթի: Ափյափոյ, գէշ թաղուած մեռելներ որոնց սրունքը կամ թեւը դուրս մնացած է: Դժոխային անուշի տեսարան զոր ո՛չ մէկ ճանդէ կրցած է երեւակայել:

Մանուկներ, կորսուած կամ լքուած, որոնք «մայրի՛կ, մայրի՛կ» կը պոռան լալահառաչ եւ որոնց ո՛չ ոք պատասխան կուտայ:

Ու այդ անհնարին աղէտքը, այդ անուշի արհաւիրքը կը տեսնէինք առանց օգնութիւն մը կարենալ ընելու, առանց մխիթարութիւն մը կարենալ տալու:

Իրիկունը հասանք Հասան Պէյլի ուր պիտի գիշերէինք: Հոն ալ քանի մը հարիւր գաղթականի վրաններ կային:

Գարեգին վարդապետ ծանօթներ ալ գտաւ որոնք եկան խանը ուր իջեւանած էինք ու տեղեկութիւն տուին իրենց վիճակին վրայ:

Հետեւեալ առտու երբ կը պատրաստուէինք մեկնիլ, եկաւ զիս գտաւ Հայկ Կօշկարեանը, գրավաճառ եւ «Կիկօ»ի հրատարակիչ:

Ինք պատերազմին սկիզբը, իբրեւ զինուոր ղրկուած էր Չաթալճայի կողմերը. ուրկէ խոյս տալով՝ ապաստանած էր Ռոտտթօ ուր ծածկուած կը մնար:

– Հոս ի՞նչ բան ունիս, – հարցուցի:

– Ռոտտթօցիներուն հետ ես ալ մուհաճիք եղայ, – պատասխանեց:

Եւ պատմեց թէ բաւական նեղութիւն կրելէ ետքը հասած էին Հասան Պէյլի ուր կը մնային առայժմ, ոստիկանները կաշառելով:

Նոյեմբերի վերջերն էր եւ ցուրտը սկսած էր այդ կողմերը: Բաց կառքերուն մէջ դողդողալով ճամբանիս շարունակեցինք, հետզհետէ դէպի վեր ելլելով: Հանդիպեցանք բանուոր Հայ զինուորներու, որոնք ճամբու շինութեան կ'աշխատէին ամենախեղճ վիճակի մէջ: Իրենց մէջ կը գտնուէին «Ժամանակ»ի երկու նախկին գրաշարներ, որոնք զիս ճանչնալով եկան կառքին քով:

– Օրը տասը ժամ, այս ցուրտին, կ'աշխատինք չոր հացի մը փոխարէն, – ըսին:

– Բայց այստեղ տուն չկայ, վրան չկայ, – դիտել տուի, – գիշերը ո՞ւր կը պառկիք:

– Հոս, բացօթեայ կը պառկինք, – պատասխանեցին:

– Հիւանդ չէ՞ք ըլլար...

– Հարկաւ կ'ըլլանք:

Ու բացատրեցին թէ ութը հարիւր հոգիէն հազիւ 160 հոգի ողջ մնացած էին իրենց մէջէն:

Մինչեւ Իսլահիէ հանդիպեցանք հազարաւոր տարագիրներու միշտ նոյն անուշիօրէն խղճալի վիճակին մէջ:

Ու առանց հասանք Իսլահիէ ու իջանք պանդոկ մը որուն տէրը յոյն էր ու հաճեցաւ մեզի հիւրընկալել:

Իսլահիէ նոյն միջոցին 10 հազարի մօտ տարագիրներ կային վրաններու տակ: Քաղքին օդը վատառողջ ու տենդային է:

Գրեթէ ամէն վրանի մէջ մէյմէկ հիւանդ կար:

Հոն կրկին հանդիպեցայ Հրանդ Մկրեանին որ նորէն պահապանի ու մեռելաթաղի պաշտօն կը կատարէր:

– Օրական 100-150 հոգի կը մեռնի կոր, – ըսաւ, – ո՛չ բժիշկ ունինք, ո՛չ դեղ:

– Բայց լսեցի որ հոս հիւանդանոց մը կայ եղբր:

– Այո՛, զինուորական հիւանդանոց մը, մեզի օգուտ չունի... նոյնիսկ բժիշկը օր մը չեկաւ հիւանդները աչքէ անցնելու:

Իսլահիէի մէջ հանդիպեցայ Մովսէս Էֆէնտի Պալքեճեանի որ փայտի միւթահիտ եղած էր ու այսպէս յաջողած էր իր պարագաներով ու ընտանեօք հոն հաստատուիլ:

Օր մըն ալ մեր սենեակէն ներս մտաւ Հրանդ Սամուէլը զոր Գոնիայի մէջ տեսած էի:

Դարձեալ իր յիսնապետի համազգեստը կը կրէր:

– Միշտ պաշտօնի վրա՞յ ես, – հարցուցի:

– Ձէ, – պատասխանեց, – աստիճանս առին վրայէս, հիմա պարզ զինուոր եմ եւ ամէլէ թապուրիին\* կը պատկանիմ:

– Բայց համազգե՞ստդ...

– Սուրս առին, սակայն համազգեստս թողուցին:

– Ո՞ւր կ'երթաս այսպէս:

– Տակաւին որոշ չեմ գիտեր, բայց կարծեմ մինչեւ Պիրսապա պիտի զրկեն, առայժմ Հալէպ կ'երթանք կոր:

– Քանի՞ հոգի էք:

– Ութսուն հոգի, մեծ մասը Հայ եւ Յոյն:

Հետեւեալ օրը մեկնեցաւ շոգեկառքով: Ալ անկէ ետքը զինքը չտեսայ, բայց իմացայ որ իրաւցնէ մինչեւ Պիրսապա գացեր ու յետոյ յաջողեր է Երուսաղէմ դառնալ ու հոն մնալ իբրեւ հիւանդանոցի պաշտօնեայ:

Իսլահիէ գտնուող տարագիրներուն միակ բաղձանքը, սեւեռուն նպատակն էր ինքզինքնին նախ Հալէպ ու անկէ Սուրիա նետել:

Գիտէինք որ Սուրիա գացողները բաղձատաբար հանգիստ էին մինչդեռ դէպի Տէր-Ջօր գացողներուն՝ անխուսափելի մահն էր որ կը սպասէր:

Գառնիկ Մազմանեանը որուն ճամբան հանդիպած էի երբ երկրագործական մեքենայ մը Ատանայէն Գոնիա կը փոխադրէր, ըսած էր ինծի:

– Նայէ՛ որ Հալէպ երթաս, ամէն ջանք թափէ՛ ասոր համար:

– Բայց ասոր միջոցը ի՞նչ է:

– Իսլահիէն շոգեկառք նստիլ ու Հալէպ իջնել, չըլլայ որ Ռաճիօ կամ Քաթմա իջնես:

Խորհուրդը լաւ էր անշուշտ, բայց գործադրութիւնը, ակո՛սո՛ւ, դժուար:

\* Բանուորաների խմբին, աշխատախմբին:

Բացարձակապէս արգելուած էր Հայերուն տոմսակ տալ Հալէպի համար: Ծածկաբար երթալն ալ անհնարին էր որովհետեւ թէ՛ շոգեկառքին մէջ, զրեթէ ամէն կայարան, ամենախիստ խուզարկութիւններ կը կատարուէին, եւ թէ՛ Հալէպի կայարանը:

Նոյնիսկ շա՛տ դժուար էր շոգեկառքով Ռաճիօ կամ Քաթմա երթալ:

Հայ տարագիրները պարտաւոր էին ոտքով կամ կառքով ճամբորդել, քաղաքներու մէջ չբնակիլ: Պանդոկներուն արգելուած էր Հայ ընդունիլ:

Եթէ մենք յաջողած էինք Օսմանիէի մէջ քաղաքը բնակիլ ու Իսլահիէ պանդոկ մը իջնել, ասիկա երկու հեռագիրներու շնորհիւ էր զոր Գարեգին վարդապետ մասունքի մը պէս կը պահէր գրպանը:

Այդ երկու հեռագիրները պատերազմական նախարար էնվէր փաշայի կողմէ ուղղուած էին իրեն հետեւեալ պարագաներու տակ:

Էնվէր փաշա Կովկասեան ճակատը այցելելէ ետքը, վերադարձին Գոնիայէ կ'անցնի: Կայարանին մէջ ընդունելութիւն կ'ըլլայ իրեն: Սակայն Գարեգին վարդապետ լուր չունենար, այնպէս որ չկրնար ներկայ գտնուիլ: Այս բացակայութիւնը դարմանելու համար հեռագրով իր ցաւը կը յայտնէ կայարան գտնուած չըլլալուն եւ միեւնոյն ատեն մէկ քանի փաղաքշական բառեր կ'ուղղէ Էնվէրի հասցէին: Առաջին հեռագիրը ատոր պատասխանն էր եւ շնորհակալութեան խօսքեր կը պարունակէր:

Երկրորդ անգամ, երբ Գոնիայի Հայերը տարագիր կ'ըլլային իրենց առաջնորդին հետ, Գարեգին վարդապետ Էրէյլիէն հեռագիր մը կ'ուղղէ Էնվէրին խնդրելով որ Գոնիայի նահանգը գտնուող Հայերը տարագիր չըլլան: Էնվէր ասոր ալ կը պատասխանէ երկդիմի ոճով մը:

Այդ երկու հեռագիրներուն շնորհիւ էր որ քիչ մը աչք կը բացէին մեզի ու թոյլ կուտային քաղաքին ու պանդոկին մէջ կենալու քանի մը օր:

Այդ միջոցին էնվէրի ստորագրութեամբ գրպանին մէջ երկու հեռագիր ունենալը բաւական մեծ բան կը նկատուէր:

Այսուհանդերձ օր մը ժանտարմա քօմանտանին\* եկաւ մեր սենեակը եւ.

— Դուք տակաւին հո՞ս էք, — պոռալով սկսաւ նախատել Գարեգին վարդապետը եւ նոյնիսկ մօրուքէն քաշքշել:

Յետոյ, իրեն ընկերացող ուստիկանին հրամայեց որ ամէնքս ալ, — կիներէն զատ, — իսկոյն կառավարչատուն տանի:

Ճամբայ ելանք: Քօմանտանը միշտ նախատինք ու սպառնալիք տեղալով կուգար մեզի հետ: Պահ մը լսեցի որ ուստիկանին կ'ըսէր.

— Քեզի քանի ծեծէ՛ ըսեմ նէ՛ անխնայ պիտի ծեծես, գիտցած ըլլաս...:

Մտմտուքը առաւ մեզի: Բարեբախտաբար տեղւոյն գայմագամի փոխանորդը, որ նախապէս Թարսուս կը գտնուէր, ծանօթ էր Գարեգին վարդապետին: Միայն թէ պիտի կրնայի՞նք զինքը տեսնել:

Քօնաք հասնելնուս՝ ուստիկանը հրամայեց որ բակը կենանք, մինչ քօմանտանը գնաց իր սենեակը:

Գարեգին վարդապետ յաջողեցաւ սակայն սանդուխէն վեր սարդիլ ու մտնել գայմագամի փոխանորդին քով ու խնդրը բացատրել իրեն:

Գայմագամը հրամայեց որ մեզ ազատ արձակեն: Ու այսպէսով օձիքնիս ազատեցինք: Մէկ երկու օր ետքը այդ մարդուն բարեացակամութեամբը յաջողեցանք Հալէպի համար տոմսակ ձեռք ձգել եւ շոգեկառք նստիլ, ինչ որ մեծ յաջողութիւն մըն էր մեզի համար:

## ՆԱԼԷՊԻ ՄԷՋ

Գիշերը բաւական յառաջացած էր երբ հասանք Հալէպ: Անարգել անցանք կայարանէն որովհետեւ ճամբան կաշառած էինք շոգեկառքին վրայ հսկողութիւն կատարող ուստիկանը:

Մեր բեռները ձգեցինք կայարան ու կառք մտնելով ուղղակի գացինք Հայոց եկեղեցին ուր մեզի սենեակ մը տրամադրեցին:

Հետեւեալ առտու առաջնորդական փոխանորդ տէր Յարութիւն քահանան եկաւ եւ ազնուօրէն մեծարեց մեզ:

Բայց անկարելի էր հոն երկար ատեն մնալ: Մեզ յատկացած սենեակը եկեղեցիին խորհրդարանն ու պաշտօնատունն էր եւ անկէ դուրս ալ յարմար սենեակ չկար:

Որոշեցինք պանդոկ մը փոխադրուիլ: Միայն թէ վէսիքս չուներէնք:

— Առանց վէսիքայի ո՛չ մէկ պանդոկի մէջ կրնաք ապահով ըլլալ, — ըսած էր տէր Յարութիւն քահանայ:

Գարեգին վարդապետ որոշեց կուսակալին դիմել եւ գոնէ երկու շաբթուան համար արտօնութիւն ուզել Հալէպ մնալու համար: Միեւնոյն ժամանակ հեռագիր մը պատրաստեց էնվէր փաշայի ուղղուած՝ որով կը խնդրէր կամ Հալէպ մնալ եւ կամ Երուսաղէմ երթալ իրեններուն հետ:

Այս հեռագիրն ալ միասին տարաւ կուսակալին որպէսզի ցոյց տայ եւ իբրեւ թէ անոր պատասխանին սպասելու համար արտօնութիւն առնէ Հալէպ մնալու:

Այս դիմումը յաջողեցաւ եւ կուսակալը մեզի արտօնեց 10 օր Հալէպ մնալ եւ ըստ այնմ հրահանգ տրուեցաւ ուստիկանութեան:

\* Ուստիկանապետը:

Այն ատեն փոխադրուեցանք Պապ էլ Գարաճի Հրապարակը գտնուող պանդոկ մը ուր երեք սենեակ վարձեցինք:

Հիմա կրնայինք ազատօրէն քաղքին մէջ պտտիլ:

Այս ազատութենէն օգուտ քաղեցի բարեկամներս տեսնելու:

Նախ գտայ Փիլիկ Արփիարեանը որ քանի մը տարիէ ի վեր Հալէպ կը գտնուէր իբրեւ երկաթուղիի պաշտօնեայ եւ իր այս Հանգամանքով գերծ էր թէ՛ զինուորական ծառայութենէ եւ թէ՛ աքսորուելու վտանգէն:

Տեսայ նաեւ տոքթոր Պօղոսեանը բոլորովին տարբեր այն վիճակէն զոր ունէր Թարսուսի մէջ: Իր բժշկութեան արուեստը ի գործ կը դնէր շատ յաջող կերպով, բաց աստի տեղւոյն քաղաքապետական բժիշկը օդափոխութեան համար Լիբանան գացած ըլլալով՝ փոխանորդաբար անոր պաշտօնն ալ կը վարէր:

Տոքթոր Պօղոսեան նոյնիսկ արտօնութիւն ստացած էր ներքին գործերու նախարարութենէն Պոլիս վերադառնալու համար, սակայն չէր ուզեր օգտուիլ այդ արտօնութենէն, որովհետեւ գոհ էր իր դիրքէն:

Տեսայ նաեւ պատուելի Գուռզեանը որ գերմանացի տիկնոջ մը հովանաւորութեան ներքեւ որբանոց մը կը վարէր ուր հարիւրաւոր Հայ որբեր ու որբուհիներ կը խնամուէին: Այդ տիկնոջ որ կարծեմ մատամ Քօիս կը կոչուէր բարեկամն էր ձեմալ փաշայի եւ այդ բարեկամութեան շնորհիւ կարելի եղած էր այդպիսի շրջանի մը հայկական որբանոց մը հիմնել Հալէպի մէջ:

Փիլիկ Արփիարեանի հետ այցելեցինք Կայծակ էֆէնտի Արապեանի եւ իր տիկնոջ որ քոյրն է ծանօթ բանաստեղծ Վահան Մալէգեանի: Արապեան էֆէնտի Տրապիզոնի երեւելիներէն էր եւ տեղահան եղող ու Հալէպ քշուող էրիկմարդ տարագիրներէն միակն էր որ հասած էր Հալէպ: Տրապիզոնցի կիներուն տառապանքը, այդ ճամբորդութեան միջոցին, ահռելի եղած է: Ամիսներով լեռները թափառած եւ մուրացկան գնչուի կերպ-

րանքով հասած են Հալէպ: Իրենց հետ գտնուող աղջիկներէն շատեր ճամբան յափշտակուած են թուրքերու եւ քիւրտերու ձեռքով, իրենք ալ յաճախ կողոպտուած են: Կայծակ էֆէնտի իր ծեր հասակին պատճառաւ թողուած է կիներուն հետ ու այս կերպով ազատած, մինչդեռ միւս էրիկմարդիկը բաժնած են կիներէն ու ամէնքն ալ բնաջինջ ըրած:

\* \* \*

Թարսուսէն մեկնած ատեննիս Մարտիրոս Շալվարճեան էֆէնտի մեզ յանձնարարած էր Հալէպի մէջ անպատճառ տեսնել Մազլումեան էֆէնտին «Պարոն» օթէլի տէրը եւ որ աւելի ծանօթ էր «Պարոն» անունով:

— Եթէ ո եւ է դժուարութեան մը հանդիպիք իրեն դիմեցէք, — ըսած էր Մարտիրոս էֆէնտի, — եւ վստահ եղէք որ ձեռքէն եկածը չխնայեր:

Իսլահիէ գտնուող մէկ քանի Հալէպցիներ ալ նոյն բանը կրկնեցին մեզի:

— Անպատճառ Պարոնը տեսնաք, ձեզի օգտակար կ'ըլլայ:

Նոյն յանկերգը նաեւ Հալէպի մէջ:

— Պարոնին գացէք եթէ խնդիր մը ունիք:

Արդարեւ Հալէպ հասնելէս երկու օր հտքը գացի տեսնել Մազլումեան էֆէնտին:

Սիրալիը ընդունելութիւն մը ըրաւ ինծի եւ խոստացաւ ձեռքէն եկածը ընել զիս աւելի հեռուն չի դրկելու համար:

Գարեգին վարդապետն ալ տեսնուեցաւ հետը եւ անոր ալ իր աջակցութիւնը չզլացաւ: Դժբախտաբար նոյն միջոցին հալածանքը խոստացած էր:

Մէկ քանի օր անցաւ ու էնվէրէն ո եւ է պատասխան չեկաւ:

Այդ կողմէն յոյսներնիս կտրեցինք:

— Ընձմալ փաշային դիմեմ, — մտածեց Գարեգին վարդապետ:

Ճէմալի մասին ընդհանրապէս լաւ կը խօսուէր Հալէպի մէջ: Իր շնորհիւրը շատ Հայեր, մանաւանդ ատանացիներ Սուրիոյ կողմը տարուած էին ուր բաղդատարար Հանգիստ կեանք մը կ'անցնէին:

Իրեն եղած անհատական դիմումներ ու խնդրանքներ յաճախ նկատողութեան կ'առնուէին:

Ճէմալ եւ իր սպայակոյտը գրաւած էին Պարոնին մեծ օթէլը որ Հալէպի լաւագոյն շէնքերէն մէկն է եւ Պարոնը իր պանդոկը փոխադրած էր օթէլին դէմը գտնուող ուրիշ շէնքի մը մէջ:

Չմոռնամ ըսելու որ Մազլըմեան էֆէնտի շահած <էր> Ճէմալ փաշայի համակրանքը եւ ասով կրցած էր շատ Հայեր փրկել Տէր-Չօր երթալու վտանգէն:

Գարեգին վարդապետ նախ փորձեց անձամբ ներկայանալ փաշային՝ բայց չյաջողեցաւ, ասոր վրայ աղերսագիր մը ուղղեց իրեն որուն մէջ կը խնդրէր իրեններով միասին Երուսաղէմ փոխադրուիլ:

Ճէմալ աղերսագիրը կարդացած, պատուած ու մէկ կողմ նետած էր:

Անկէ ալ յոյսերնիս կտրեցինք:

Մեր օթէլ փոխադրուելէն քանի մը օր ետքը, յանկարծ շուկային մէջ ձերբակալուած եւ դէպի Պապ ղրկուած էին Մուշեղի եղբայրը Կարապետ եւ աներձագը Միհրան, որոնք մեզի հետ կը բնակէին եւ Գարեգին վարդապետին ազգականները կը համարուէին, ինչպէս նաեւ ես որ ոստիկանութիւնը կը ճանչնար իբրեւ Երուսաղէմ Սաչատուրեան՝ Գոնիայի առաջնորդին հօրեղբայրը:

Ի զո՞ւր դիմումներ կատարեցինք այդ երկու բարեկամները Հալէպ վերադարձնելու համար:

– Դուք կ'երթաք զանոնք կը գտնաք,– ըսած էր քօմիսէրը:

Երբ էնվէրէն ու Ճէմալէն Գարեգին վարդապետ յոյսը կտրեց, դիմեցինք Օննիկ էֆէնտի Մազլըմեանի որպէսզի ճար մը գտնէ մեզ Տէր-Չօրէն ազատելու համար: Դիմումներ ըրաւ ասդին

անդին, մանաւանդ սէվքիաթի տնօրէնին, եւ այլն, օր մըն ալ ուրախութեամբ լուր բերաւ թէ՛ յաջողած էր:

– Ինչպէ՞ս,– հարցուցինք:

– Տէր-Չօր չպիտի երթաք, այլ Մուսայի՞ճ:

– Մուսայիճ ո՞ւր է:

– Հալէպէն երկու օր հեռուորութեամբ չէրքէզի գիւղ մը, ուր արդէն մէկ քանի եկեղեցականներ ալ աքսորուած են իրենց ընտանիքներով:

Մեծ յաջողութիւն մը չէր այս բայց վերջապէս լաւագոյն էր Տէր-Չօր երթալէն: Գոնէ Հալէպէն շատ պիտի չհեռանայինք:

– Հիմակուհիմա հոն գացէք, տեսնենք յետոյ ի՞նչ կըլլայ,– ըսաւ Պարոնը,– ես կրկին կ'աշխատիմ ձեզ կա՛մ Հալէպ բերել տալու եւ կա՛մ Սուրիոյ կողմը ղրկելու:

Ենորհակալութիւն յայտնեցինք իրեն:

Հալէպ եկած ատենս իմացած էի որ մօրեղբայրս, Քերոքէ Ալանեան, որ տարիներէ ի վեր Անթաքիա հաստատուած էր, հոնկէ տարագրուեր է Համա ուր կը մնայ եղբր: Ես կը նախընտրէի Համա երթալ ու իր քով մնալ եւ այս մտքով ալ նամակ մը գրած էի, որուն պատասխանը չէի առած տակաւին:

Այս խնդիրներով զբաղած էինք երբ կուսակալին մեզի շնորհած պայմանաժամը լրացաւ:

Նոյն օրն իսկ քօմիսէրը եւ ոստիկան մը եկան օթէլ եւ ըսին որ անմիջապէս պէտք էր որ Սէպիլ երթայինք:

– Բայց մենք արտօնութիւն ունինք, Մուսայիճ պիտի երթանք մէկ երկու օրէն,– պատասխանեցի:

– Այդ արտօնութիւնը միմիայն Գոնիայի առաջնորդին, մօրը եւ քրոջը համար է,– պատասխանեց քօմիսէրը:

– Ես ալ իրեն ազգականն եմ:

– Երկար խօսք մտիկ չեմ ըներ, պատրաստուէ իսկոյն ճամբայ ելլելու:

Ճար չի կար, պէտք էր երթալ: Ինէ առաջ արդէն ճամբայ հանած էին Կարապետի կիներ, փոքրիկ աղջիկը, ուսուցիչ Գառ-

նիկ Պօտուրեանը եւ Միհրան անուն ուրիշ երիտասարդ մը որ իբրեւ սպասաւոր կ'ընկերանար Գարեգին վարդապետին Թարսուսէն:

Տխուր սրտով «մնաս բարով» ըսի մեր վարդապետին, մօրն ու քրոջը եւ ոստիկանի մը հետ մեկնեցանք օթէլէն: Երթալիք տեղերնիս բաւական հեռու էր:

– Կառքով երթանք, – առաջարկեցի ոստիկանին:

Հաւանեցաւ:

Սէպիլ Հալէպի արեւելեան կողմը ընդարձակ դաշտ մըն է, քաղքէն ոտքով մէկ ժամ հեռաւորութեամբ: Տէր-Ջօր երթալիք տարագիրները հոն կը ղրկուէին, վրաններու ներքեւ:

Սէպիլ դժոխքի կայարանն էր Հայերուն համար:

Արեւը մարը մտնելու վրայ էր երբ հասայ Սէպիլ:

Հազարաւոր վրաններ ցցուած էին ամէն կողմ: Բաւական փնտռուութիւններ է ետքը վերջապէս գտայ մերինները, ծանօթի մը վրանին մէջ:

Թէեւ մենք ալ վրան մը ունէինք հետերնիս, բայց չէինք տրուած:

– Այս գիշեր այսպէս անցընենք մեր բարեկամին վրանին ներքեւ, – ըսաւ Գառնիկ Պօտուրեան, – վաղը մեր վրանը կը տնկենք յարմար տեղ մը:

Ընդհանրապէս պարտիզակցիներ, ատաբազարցիներ, ռոտութօցիներ ու էսիրնէջիներ էին այդ միջոցին Սէպիլ գտնուողները: Կային նաեւ փոքր թիւով աֆիսնգարահիսարցիներ, խաբարդցիներ ու տիգրանակերտցիներ:

Այն վրանը ուր մեզ հիւրընկալեցին՝ պարտիզակցի ընտանիքի մը կը պատկանէր:

– Մենք Սուրիա պիտի երթանք, – ըսաւ ընտանիքի պետը, – ինչպէս նաեւ մեզի հետ 300ի չափ ընտանիքներ:

– Բայց ինչպէ՞ս յաջողեցաք...

– Ծէմալ փաշա հրաման ըրած է որ արհեստաւորները զատին ու Շամ ղրկուին, մենք ալ իբրեւ արհեստաւոր հոն պիտի

երթանք ու կառավարական գործարաններու մէջ պիտի աշխատինք: Մասնաւորապէս կը փնտռեն կոր դերձակները, կօշկակարները, երկաթագործները, ատաղձագործները, ոստայնանկները:

– Այդ երեք հարիւր ընտանիքներն ալ արհեստաւոր են:

– Մեծամասնութիւնը արհեստաւոր է, բայց կայ մէջերնին մաս մը որ ո՛ր եւ է արհեստ չունի, բայց յաջողած է իբրեւ արհեստաւոր արձանագրուիլ:

– Ի՞նչպէս...:

– Կառքով կամ խաբեբայութեամբ:

Արդարեւ շատ էրիկմարդիկ որոնք իբրեւ դերձակ արձանագրուած էին, առտուրնէ մինչեւ իրիկուն իրենց վրաններուն ներքեւ նստած, իրենց կիներէն թելը ասեղին անցնել, կար կարել կը սորուէին:

Պարտիզակցին խոստացաւ աշխատիլ մեզի ալ արհեստաւորի մէյմէկ վէսիքա ձեռք ձգելու համար:

Իրա՛ւ ալ հետեւեալ օրը կրցաւ ձեռք ձգել մեռած մարդերու երկու վէսիքա որոնք գնած էր մէյմէկ ոսկիի: Այս վէսիքաներէն մին Գառնիկ Պօտուրեանը առաւ, իսկ միւսը Միհրանը:

Ես բացը մնացի:

– Հոգ մի՛ ըներ, քեզի ալ ճար մը կը գտնանք, – յուսադրեց պարտիզակցին:

Եւ իրիկուան դէմ կէս ոսկիի փոխարէն, ձեռք ձգեց նոյն օրը վրաններուն մէջ մեռած պարտիզակցիի մը նուֆուս թէսքէրէսին\* որուն մէջ հանգուցեալին արհեստը նշանակուած էր: Մեռնողը տիւրկէր\*\* է եղեր, ես ալ ստիպուեցայ իր անունն ու արհեստը ընդունիլ եւ եղայ պարտիզակցի տիւրկէր Ասատուր, 52 տարեկան, ամուսնացած եւ երկու զաւակներու հայր:

Ասիկա թէեւ վէսիքա չէր, բայց վերջապէս արհեստաւոր ըլլալս հաստատող պաշտօնական թուղթ մըն էր:

78. Անճապարհ:

79. Հիւսն:

\* \* \*

Մէջ պիտի վրաններուն մէջ ականատես եղայ շատ տխուր եւ սրտաճմլիկ տեսարանի մը:

Վրաններէն քիչ մը անդին խրամները բացուած էին ուր ընդհանրապէս տարագիրները կ'երթային իրենց բնական պէտքը գոհացնելու:

Այդ խրամներուն մօտ էի երբ տեսայ քանի մը տղաք որ վերը կեցած բան մը կը դիտէին իրարու ըսելով.

— Մեռած է:

— Չէ, չէ մեռած:

— Շարժեցաւ տե՛ս,— եւ այլն:

Հետաքրքիր՝ մօտեցայ տղոց եւ վար, խրամին մէջ նայեցայ:

Սոսկալի տեսարան մը պարզուեցաւ աչքերուս առջեւ:

Աղտեղութեան մէջ կիսամերկ պառկած էր մանկամարդ կին մը, 25-26 տարեկան, բաւական գեղեցիկ: Կինը մեռած չէր տակաւին, ատեն ատեն կը շարժէր, մէկ կողմ դառնալու ջանք կ'ընէր, թեւը կամ ոտքը վեր կը բարձրացնէր, յետոյ կրկին անշարժ կը մնար, տքալով:

Սրունքները, կուրծքը, թեւերը մերկ էին, շրջագեստ չէր հագած:

Յայտնի էր որ վրաններէն բերած նետած էին հոն, բայց ինչո՞ւ համար:

Տղաքը հարցուփորձեցի, բան մը չէին գիտեր:

Դարձայ դէպի վրանները եւ մէկ քանի հոգիի պատմեցի տեսածս:

Ո՛չ ոք կարեւորութիւն տուաւ: Ամէն մարդ իր գլուխը ազատելու զբաղած էր, ո՞վ կարեւորութիւն կուտար հոգեւարդ կնոջ մը:

Քանի մը ժամ յետոյ կրկին վերադարձայ խրամին քով, տե՛ս նելու համար թէ կինը ի՞նչ եղած էր:

Երիտասարդ մարդ մը եւ կին մը հո՛ն կեցած տխուր, տխուր

կը դիտէին այդ ահռելի տեսարանը. կինը ատեն ատեն աչքերը կը սրբէր: Անկարելի էր արդարեւ չյուզուիլ:

Աղբին մէջ պառկած կինը դեռ չէր մեռած՝ բայց յայտնի կ'երևար որ ա՛լ հոգի կուտար:

— Աս ի՞նչ սարսափելի բան է,— ըսի հոն կեցող երիտասարդին,— յայտնի բան է որ այս կինը վրաններէն բերեր հոս նետեր են, առանց մեռնելու սպասելու... ասանկ հրէշութիւն, ասանկ վայրենութիւն, ասանկ անխղճութիւն կ'ըլլա՞յ:

Մարդը լուռ ու մունջ մտիկ ըրաւ խօսքերս, յետոյ տխուր-թեամբ պատասխանեց.

— Այս խեղճ կինը իմ քենիս է, քովս կեցող կնոջ քոյրը, մենք երէկ գիշեր բերինք հոս նետեցինք զինքը...

— Դո՞ւք,— գոչեցի զարմացած:

— Այո՛,— շարունակեց,— կեցիր պատմեմ ու յետոյ մեզի կը դատես:

Եւ մարդը իր պատմութիւնը ըրաւ: Տիգրանակերտցի բարեկեցիկ ընտանիքի մը կը պատկանին եղբր: Տարագրութեան միջոցին չարաչար կողոպտուեր են:

— Գրեթէ մերկ վիճակի մէջ առանց մէկ փարայի, անօթի, ծարաւ Մէպիլ հասանք կինս, աղջիկս, քենիս ու ես: Ապահովարար մինչեւ հիմա հոս ամէնքս ալ պիտի մեռնէինք՝ եթէ բարեկամ ընտանիքի մը չհանդիպէինք: Մարդիկը մեզ իրենց վրանը առին, հագուեցուցին, կերակրեցին ու մինչեւ հիմա անոնք են որ կը հոգան մեզի: Վրանին մէջ ո՛չ բաւական տեղ կայ, ո՛չ ալ բաւական անկողին: Երկու երեք հոգի ծոց ծոցի պառկելու ստիպուած ենք: Այս պայմաններուն մէջ քենիս տիզանդըրիէ բռնուեցաւ շատ գէշ կերպով: Բժիշկ չկայ, դեղ չկայ: Գիտէք որ տիզանդըրին փոխանցիկ հիւանդութիւն մըն է: Մեզ հիւրընկալող ընտանիքը ըսաւ որ կա՛մ հիւանդը վրանէն հաննք՝ կա՛մ ամէնքս միասին դուրս կ'ելլենք: Վրանէն դուրս ելլելը կինս ալ, աղջիկս ալ, զիս ալ մահուան դատապարտել էր պարզապէս: Մէկի տեղ՝ չորս հոգի պիտի մեռնէինք զուր տեղը: Կնոջս հետ մտածեցինք,

մտածեցինք եւ ուրիշ ճար չգտանք: Գիշերը առինք քենիս ու լալով բերեցինք հոս նետեցինք... կեանքը անուշ է:

Եւ այր ու կին սկսան դառնապէս արցունք թափել:

– Կը ներէք քիչ մը առաջ ըսած խօսքերուս համար, – կմկրմացի եւ հեռացայ իրենց քովէն:

\*\*\*

Արդարեւ տիգանդըրին սարսափելի ջարդ կ'ընէր Սէպիլի վրաններուն մէջ: Դեկտեմբերը հասած էր, անձրեւը կը տեղար: Յուրտը անտանելի էր մանաւանդ գիշերները: Բարակ կտակ շինուած պատառատուն, խարխիկ վրանները անբաւական էին օդին դժնդակութեան դէմ պաշտպանելու համար մէջը գրտնուողները: Աւելցուցէք ասոնց վրայ սնունդի անբաւականութիւնը եւ կրնաք երեւակայել թէ որքա՛ն հիւանդներ պառկած էին վրաններուն տակ:

Առտուընէ մինչեւ իրիկուն աղբի կառք մը, որ իբրեւ մեռելակառք կը ծառայէր, կ'երթար կուգար մեռեալ փոխադրելով: Ամէն անգամ ութը տասը հատ կը դիզէին կառքին մէջ ու այնպէս կը տանէին:

\*\*\*

Առաջին անգամ Սէպիլի վրաններուն մէջ տեսայ տղայ փճառելու զարհուրելի ու սրտաճմլիկ գործողութիւնը:

Հալէպէն կուգային՝ կառքերով՝ Արաբ, թուրք, Հրեայ կիներ ու կ'սկսէին շրջիլ մէկ վրանէն միւսը:

– Սաթլըք չօճուք վա՞ր մը\*, – հարցնելով:

Այն ծնողքները որոնք ունեւոր էին՝ սոսկուճով ճամբու կը դնէին այդ կիները, իսկ խեղճերը, անօթիները կը վարանէին:

\* Մախու մանուկ կա՞ն:

Այդ վարանուճը բաւ էր սակարկութեան սկսելու համար:

– Տանք երթայ, – կ'ըսէր էրիկը իր տղուն ձեռքէն բռնած:

– Կը մեռնիմ՝ զաւկէս չեմ բաժնուիր, – կը գոչէր կինը լալով: Եւ ահա գնորդ կիները կը միջամտէին:

– Դուք արդէն մեռնելու կ'երթաք կոր, գոնէ սա տղան ագտեցէք: Մենք բարիք ընելու համար է որ առնել կ'ուզենք: Մեզի զաւակ պիտի ընենք... եթէ ողջ մնաք ու ետ դառնաք նորէն ձեր զաւակը ձեզի կուտանք:

Ու այսպէս հազար ու մէկ համոզիչ խօսքեր: Ու մայրը որ իր զաւկին անօթի ըլլալը գիտէ եւ միջոց ալ չունի կերակրելու, վերջապէս յուսահատ տեղի կուտայ:

Կիները մէկ երկու մէծիտ կը դնեն մարդուն ձեռքը եւ մանուկը կառք դնելով կը մեկնին:

Ու ահա՛ որք ու կոծը կը սկսի: Հիմա հայր ու մայր երկուքն ալ կուլան, կը զղջան իրենց ըրածին վրայ, կառքին ետեւէն վազել կ'ուզեն, բայց ան արդէն հեռացած է...:

Տեսայ կին մը որ իր երկու զաւակները վաճառելէ քանի մը ժամ ետքը խենդեցաւ:

Ուրիշներ, տեսակ մը թմրութեան, ապուշուութեան մէջ կ'իյնային, լուռ, ակնարկը սեւեռուն, ժամերով գետինը նստած կը մնային: Ա՛լ կարծես զգացումը, գիտակցութիւնը մեռած էր իրենց մէջ, անասնացած էին...:

Սէպիլի մէջ, այսպէս, հազարաւոր Հայ տղաք ու աղջիկներ ծախուած են հալէպցի Արաբներու, թուրքերու եւ Հրեաներու: Ընդհանրապէս փոքր տղաքը յարգի էին, 7-10 տարեկան, մանաւանդ աղջիկները:

Մանուկներու վաճառումը տեղահանութեան ահուելի եղեռնին ամէնէն զահանդեցնող\* դրուագներէն մէկն է: Երբեք կարելի չէ մարդկութեան աւելի մեծ նուաստացում մը երեւակայել:

\* Սարսափեցնող, զարհուրեցնող:



\* \* \*

Երկրորդ օրը մեր վրանը կանգնեցրինք:

Գարեգին վարդապետի քոյրը եկաւ մեզ տեսնելու օթէլ Պարոնի տնօրէնին հետ:

— Կ'աշխատինք կոր ձեզ Հալէպ դարձնելու, — ըսին, — ջանացէ՛ք որ սէվք չըլլաք մէկ քանի օր:

Հագիւ թէ մեկնած էին, մունետիկ մը շրջեցաւ վրաններուն մէջ եւ պոռաց:

— Արհեստաւորի վէսիքա ունեցողները պիտի մնան իսկ միւսները վաղ առտու արշալոյսին ճամբայ պիտի ելլեն դէպի Պապ, թող ամէն մարդ պատրաստուի: Արհեստաւորի վէսիքաները պիտի քննուին մի առ մի:

Պապ Տէր-Զօրի ճամբան էր:

Մեր մահուան վճիռն էր որ կը պոռար մունետիկը: Վէսիքաները եթէ քննութեան ենթարկէին՝ երկու բարեկամներուս գործը գէշ էր: Իսկ ես արդէն վէսիքա չունէի, այլ կեղծ նուֆուս թէսքէրէսի մը:

Մտածեցի փախչիլ, Հալէպ երթալ ու հոն տեղ մը ծածկուիլ: Բայց շատ վտանգաւոր փորձ մըն էր այս: Վրաններուն շուրջը զինեալ պահակներ կ'սպասէին որոնք հրաման ունէին վրաններէն քիչ մը հեռացողը հրացանի բռնելու:

Գիշերը վրայ հասաւ:

Նոր մունետիկ մը սկսաւ պոռալ: Նախորդ կարգադրութիւնը փոխուած էր:

— Վէսիքա ունեցող արհեստաւորները թո՛ղ պատրաստուին Շամ երթալու համար, իսկ միւսները պիտի մնան:

Արդարեւ կէս գիշերին վէսիքա ունեցող արհեստաւորները սկսան իրենց վրանները քակել եւ գոյքերնին պատրաստիլ: Մենք ալ անոնց օրինակին հետեւեցանք:

Երկու ժամ ետքը ամէնքս ալ պատրաստ էինք: Խոշոր կարուան մը կազմուած էր 1100 հոգիէ բաղկացած. էրիկմարդ, կիւն, մանուկ, ծերունիներ:

Շամի կայարանը տանող ճամբուն վրայ քննիչները կեցած էին վէսիքաները ճշգրտելու համար:

Վտանգաւոր վայրկեանը հասած էր:

Բարեբախտաբար քննութեան գործողութիւնը կը կատարուէր ափյափոյ կերպով:

Կիները եւ մանուկները թոյլ կը տրուէին անցնիլ առանց արգելքի:

Քննութեան կարգը ինծի եկաւ:

— Անունդ ի՞նչ է:

— Ասատուր:

— Հօրդ անունը:

— Մկրտիչ:

— Քանի՞ տարեկան ես:

— Յիսուներկու:

— Ո՛ւր տեղացի ես:

— Պարտիզակցի:

— Արհեստդ ի՞նչ է:

— Հիւսն:

— Խէսքէրէ ունի՞ս:

— Ահաւասիկ:

— Վէսիքադ ո՞ւր է:

— Մեր վէսիքան երկու հոգիի համար գրուած էր, ընկերոջս քովն է:

— Ո՛ւր է ընկերդ:

— Արդէն անցաւ կարծես:

— Դուն ալ անցի՛ր:

Ազատած էի:

Միւս ընկերներս ալ օձիքնին ազատեցին: Ու այսպէս ժամ մը ետքը հասանք Շամի կայարանը, երբ տակաւին մուտք պատած էր ամէն կողմ:

Կառախումբը մեզի կը սպասէր: Ամէնքն ալ ֆուռուսներ էին որոնց վրայ գրուած էր «48 մարդ»: Եւ սակայն մեզի թըխ-

մեցին մինչեւ բերանը: Կարասիները, գոյքերն ալ միասին 93 հոգի էինք մեր Ֆուռուկօսին մէջ: Ո՛չ նստիլ, ո՛չ ալ երերալ կարելի էր ու այդ դիրքին մէջ երկու երեք օր պիտի ճամբորդէինք:

Կռիւ, աղմուկ, իրարանցում անկարագրելի էր:

Մէջերնիս հիւանդներ կային որոնք ոտքի կենալու կարողութիւն չունէին, տղաքներ որոնք շարունակ կը ճուային: Ընդհանրապէս մեր Ֆուռուկօսին մէջ գտնուողները էտիրնեցիներ, պարտիզակցիներ, ատանացիներ, այնթապցիներ ու կեսարացիներ էին: Ամէնքն ալ իրենց գաւառաբարբառներով կը կանչւըրտէին բարեխական խառնաշփոթութիւն մը ձեւացնելով:

Եւ ահա՛ փոքրիկ միջազէպ մը կռիւի կը փոխուէր: Հայհօյանքներ, անլուր նախատինքներ կ'արձակէին իրարու դէմ:

Ու կառախումբը ճամբայ չէր ելլեր:

Որպէսզի նորեկներ չգան Ֆուռուկօսին դուռը գոցած էինք ու ալ շունչ անգամ չէինք կրնար առնել:

Առաւօտ եղաւ: Մեկնելու յոյս չի կար դեռ: Միջոց մը ուզեցի դուրս ելլել, օդ առնելու ու վերադառնալ:

Բարեբախտաբար դրան մօտ էի կեցած եւ կրցայ դուռը կիսովի բանալ ու դուրս սպրդիլ: Հազիւ թէ ոտքս գետին դրի.

– Պաքսանա՛\*, – գոչեց ձայն մը:

Վեր նայեցայ, դէպի ձայնին կողմը: Քիչ մը հեռուն կեցած էր Պապ էլ Գարաճի պահականոցին քօմիսէրը, որու հետ քանի մը անգամ գործ ունեցած էինք:

Ստիպուած մօտեցայ իրեն:

– Դուն հոս ի՞նչ բան ունիս, – հարցուց:

– Շամ կ'երթամ կոր, պէյս, – պատասխանեցի:

– Այս կառախումբը արհեստաւորներուն համար է:

– Ես ալ արհեստաւոր եմ:

– Դուն Գոնիայի առաջնորդին հօրեղբայրը չե՞ս:

– Այո՛, բայց արհեստաւոր եմ... Հիւսն:

– Վէսիքադ ո՞ւր է:

– Վէսիքաս ընկերոջս քովն է:

– Գնա՛ բեր, հոս կ'սպասեմ կոր... չփախչիս հա՛, վերջը գէշ կ'ըլլայ:

– Շատ աղէկ, պէյս:

Գլխիկոր դարձայ Ֆուռուկօս:

Բարեկամներուս պատմեցի գլխուս եկած փորձանքը, պայուսակս առի եւ դուրս ելայ:

– Բերի՞ր վէսիքադ, – հարցուց քօմիսէրը:

– Ձէ՛ մարդը չգտայ, կ'երեւայ որ ուրիշ Ֆուռուկօս մը մտած է, այս բազմութեան մէջ անկարելի է գտնալ...

– Աղէկ, – ըսաւ քօմիսէրը, – հիմա Պապ էլ Գարաճի պահականոցը պիտի երթաս, կառքերը պատրաստ են, այսօր ճամբայ պիտի ելլէք Մուսպիճ երթալու համար:

Նոյն միջոցին նշմարեցի որ բարեկամներս Գառնիկ Պօտուրեան, Միհրան, Կարապետի կինն ու աղջիկը իրենց գոյքերը առած՝ վար կ'իջնէին Ֆուռուկօսէն:

– Մենք ալ մտքերնիս փոխեցինք, – ըսաւ Գառնիկ, – Գարեգին վարդապետին հետ Մուսպիճ կ'երթանք:

Կառք մը բերել տուինք, գոյքերը մէջը դրինք եւ մենք ալ ետեւէն հետիոտն ճամբայ ելանք:

Քօմիսէրը հրամայեց որ ոստիկան մը ընկերանայ մեզի:

Օդը աւրուած էր եւ թեթեւ անձրեւ մը կը տեղար:

Հասանք պահականոց: Երկու քայլ անդին կը գտնուէր Ալման օթէլին ուր իջեւանած էինք եւ ուր կը բնակէր նոյն միջոցին Գարեգին վարդապետ:

Ոստիկանէն խնդրեցի որ թոյլ տար մեզի պանդոկ երթալ, մանաւանդ որ անձրեւը սաստկացած էր եւ թէ՛ մենք եւ թէ՛ գոյքերնիս կը թրջուէինք:

– Չըլլար, հոս պիտի սպասէք, – հրամայեց:

Միջոց մը յաջողեցանք կինը եւ իր փոքրիկ աղջիկը ղրկել օթէլ:

\* Սրան տե՛ս:

Քօմիսէրը եկաւ, կրկին խնդրեցի որ մեզ թոյլ տայ օթէլ Երթալու: Հաւանեցաւ:

Երկու կառք արդէն կ'սպասէին մեզ Մուճպիճ տանելու համար: Անձրեւը տեղատարափի փոխուած էր երբ վարդապետի ու մեր գոյքերը տեղաւորեցինք կառքերուն մէջ:

Այդ օգո՞վ ճամբորդելը սոսկալի բան մը պիտի ըլլար, մանաւանդ որ կառքերուն միայն վրան ծածկուած էր հին մոմլաթով մը եւ անձրեւը ներս կը խուժէր ամէն կողմէ: Գարեգին վարդապետ ու մայրը՝ տիկին Իսկուճի տկար էին եւ այդ պայմաններու մէջ երկու օրուան ճամբորդութիւնը կրնար աղետալի ըլլալ:

Իզուր խնդրեցինք քօմիսէրէն որ օր մը պայմանաժամ տար մեզի:

– Այսօր ճամբայ պիտի ելլաք հրամանը այնպէս է, – ըսաւ խստութեամբ:

Բարեբախտաբար նախախնամութիւնը օգնութեան հասաւ:

Ճիշտ մեկնումի վայրկեանին զինուորական իշխանութեան կողմէ եկան կառքերու ձիերը գրաւեցին անկարեայի\* համար:

Փրկուած էինք, միայն թէ գոյքերը խխում\*\* եղած էին:

Հետեւեալ օրը օդը բացուեցաւ, բայց ձիերը չեկան:

Առտուն գացի Պարոնը տեսնելու:

– Մօրեղբորմէդ նամակ ունիս, – ըսաւ:

Առի նամակը կարդացի: Ձիս կը ստիպէր ամէն միջոցի դէմը ինքզինքս Համա նետելու համար, ուր կը վստահեցնէր թէ Հանգիստ պիտի կրնայի մնալ: Միեւնոյն ատեն դրամ ալ զրկած էր ինձի:

Մուճպիճ երթալը բնաւ գործիս չէր գար, որովհետեւ, ինչպէս Պարոնն ալ ըսաւ, միայն վարդապետը, մայրը եւ քոյրը հոս պիտի թողուին, իսկ մեզ պիտի քշէին աւելի հեռուն, մինչեւ Տէր Զօր:

\* Պարտադրուած, անվճար, բռնի աշխատանքի:

\*\* Թրջուած, ողողուած:

– Ձիս չե՞ս կրնար Համա դրկել, – ըսի Պարոնին:

– Կրնամ, բայց ո՛չ անմիջապէս, պէտք է յարմար առիթի մը սպասել: Եթէ կրնաս տեղ մը ծածկուած մնալ, կը խոստանամ մինչեւ մէկ երկու շաբաթ ճար մը գտնել քեզ Համա դրկելու համար:

Մեկնեցայ քովէն առանց ընելիքս որոշելու:

Հալէպի մէջ թաքստոց մը գտնելու անկարելի բան չէր, բայց բան մը կար սր մտածել կուտար ինձի:

Քօմիսէր եւ ոստիկան գիտէին որ Գարեգին վարդապետի հետ պիտի մեկնէի, ցանկին մէջ անունս անցած էր: Եթէ յանկարծ աներեւոյթ ըլլայի՝ թերեւս Գարեգին վարդապետի գլուխը ցաւցնէին, զիս պահանջէին իրմէ:

Գացի իրեն հարցնելու: Օթէլը չէր, դուրս ելած էր նորանոր դիմումներ ընելու որպէսզի Մուճպիճէն լաւագոյն տեղ մը ղըրկուի:

Մինչեւ իրիկուն երեւան չեկաւ:

Ժամանակ չի կար կորսնցնելու: Դուրս ելայ օթէլէն այլեւս հոն չդառնալու մտադրութեամբ:

Հալէպ անձանօթ էր ինձի, մէկ քանի բարեկամներ ունէի, բայց բոլորն ալ ճաշարանը կամ սրճարանը կը տեսնէի: Ո՛չ մէկուն տունը գիտէի:

Խորհեցայ եկեղեցի երթալ ու քահանաներուն միջոցաւ թաքստոց մը գտնել:

Դժբախտաբար շատ ուշ մնացած էի, եւ երբ եկեղեցի հասայ դուռները գոցուած էին:

Եկայ Ռուբէն էֆէնտիի դեղարանը որ Հայ բժիշկներու կեդրոնատեղին է:

Կը յուսայի տոքթոր Պօղոսեանը գտնել հոն եւ միասին իրեն երթալ: Բայց հոն չէր:

– Յայտնի չէ թէ երբ կուգայ, – ըսին:

Տանը հասցէն ուզեցի իմանալ: Երիտասարդ մը որ հոն էր յանձն առաւ զիս առաջնորդել:

Այդ միջոցին տոբթոր Պողոսեան կը բնակէր Հէնտէքի վրայ՝ գտնուող տոբթոր Քըլըճեանի տունը: Այս վերջինը քաղաքապետական բժիշկ, օդափոխութեան գացած էր Լիբանան եւ տոբթոր Պողոսեան փոխանորդաբար կը վարէր անոր պաշտօնը:

Գացինք տուն եւ Հոն մնացի մինչեւ տոբթորին գալը:

Պողոսեան շատ ուշ ատեն եկաւ: Բացատրեցի իրեն կացութիւնս:

— Այս գիշեր Հոս, սենեակս պառկէ՛,— ըսաւ,— վաղը լաւագոյն տեղ մը կը գտնենք:

Բայց սիրտս կը տանջէր զիս Գարեգին վարդապետին համար: Կը վախճայի որ իմ անհետացումս գլխուն փորձանք մը բերէ: Խնդրեցի տոբթորէն որ երթայ Ալման օթէլին տեսնէ զինքը եւ իմաց տայ ուր գտնուիլս, որպէսզի եթէ շատ նեղեն զինքը կարենայ լուր մը ղրկել որպէսզի երեւան ելլեմ:

Պողոսեան գնաց եւ ժամ մը ետքը վերադարձաւ:

Վարդապետը խորհուրդ տուած էր որ ծածկուած մնամ, նոյն խորհուրդը տուած էր նաեւ Գառնիկ Պօտուրեան:

Հետեւեալ առտու տոբթորին Հետ մտածեցինք թէ ո՞ւր կըրնայի լաւագոյն կերպով ծածկուած մնալ:

Իր տունը բնաւ չէր յարմարեր, որովհետեւ օրը տասն անգամ ոստիկան, մըխթար եւ այլն կուգային տոբթորը փնտռելու, ասկէ զատ շատ մը խարբերողի կիներ կային Հոն, ամէնքն ալ Քըլըճեանի ազգական, որոնք նոյնպէս գաղտնի կը բնակէին տան մէջ:

— Լաւագոյնը Փիլիկ Արփիարեանի սենեակն է,— ըսաւ տոբթորը:— Ես այսօր զինքը կը տեսնեմ ու այս մասին կը խօսիմ, եթէ անպատեհութիւն մը չիկայ Հոն կ'երթաս:

Պողոսեան մեկնեցաւ եւ իրիկունը մուտքը կոխելէ ետքը եկաւ:

— Գործը յաջող է,— ըսաւ,— Փիլիկը տեսայ, մեծ հաճոյքով քեզ սենեակը կընդունի կոր, քիչ ետքը պիտի գայ ու կառքով իր տունը պիտի փոխադրէ, կ'սպասէ որ փողոցները քիչ մը մայանան:

Տոբթորը լուր բերաւ նաեւ որ Գարեգին վարդապետ, իր մայրը տիկին Իսկուհի, քոյրը օրիորդ Վարդուհի, ինչպէս նաեւ Պօտուրեան, Միհրան եւ Կարապետի կիներն ու աղջիկը ճամբայ Հանուած են դէպի Մուսպիճ:

Պանդոկապետը պատմած է թէ, իմ մասին թէեւ խնդիր եղած է, բայց կարելի եղած է անոյշ տեղը կապել խնդիրը:

Վերջապէս Փիլիկ եկաւ ու միասին գացինք իր բնակած տունը որ տեղացի քրիստոնեայի մը տունն էր: Բարեկամս երկու սենեակ վարձած էր Հոն, որոնց մին ինծի տրամադրեց:

Փիլիկ պատմեց թէ ոստիկանութեան լրտեսները զիս կը փնտռեն եղեր ո՛չ թէ իբր Գարեգին վարդապետի հօրեղբայրը, այլ իբրեւ Երուանդ Օտեան, «Ժամանակ»ի խմբագիր:

Հայ լրտես մը իմ մասին ժուռնալ\* մը տուեր է եղեր, որուն մէջ մանրամասն նկարագրուած են եղեր Հագուստներս եւ նոյնիսկ կօշիկիս վրայ գտնուած կարկտանը:

Բոլոր այն սրճարաններն ու ճաշարանները ուր սովորութիւն ունէի յաճախելու, զիս եկեր հարցուցեր փնտռեր էին:

Այս լուրը, բնականաբար, քիչ մը վրդովեց զիս, բայց ինքզինքս ապահով կ'զգայի այդ տան մէջ:

Երեք օր բանտարկուած մնացի Հոն: Երրորդ իրիկունը Փիլիկ եկաւ եւ ըսաւ.

— Պարոնը տեսայ, վաղը առտուան կառախումբով քեզ Համա պիտի ղրկէ, միջոցը գտեր է: Մուտքը կոխելէն ետքը իր օթէլը պիտի երթանք, գիշերը Հոն պիտի մնաս ու առտուն ճամբայ պիտի ելլես:

Այսպէս ըրինք: Դժբախտաբար առտուն զիս ուշ արթնացուցին: Երբ կայարան գացինք, կառախումբը մեկնած էր, ստիպեցանք վերադառնալ օթէլ եւ Հոնկէ ալ կրկին թաքստոցս գացի ուր մնացի տակաւին մէկ քանի օր:

Դեկտեմբեր 20 (Հ. Տ.) կիրակի, իրիկուան դէմ Փիլիկ եկաւ վազելով:

\* Ձեկուցագիր, տեղեկագիր, ամբաստանագիր, մատնագիր:

— Շո՛ւտ պատրաստուէ՛,— ըսաւ,— հիմա ճամբայ պիտի ելլես:

Արդէն պատրաստ էի, հետս ո՛ր եւ է գոյք չունէի, որովհետեւ պայուսակս օթէլը ձգած էի:

Կառքով ճամբայ ելանք դէպի կայարան: Ծամբան Փիլիկ բացատրեց թէ ատանացի ընտանիքի մը համար վէսիքա առնուած էր Համա երթալու: Պարոնը յաջողած է այդ վէսիքային մէջ իմ անունս ալ աւելցնել:

Կառախումբը պատրաստ էր: Փիլիկ տոմսակս առաւ եւ անարգել մտաւ վակօն ուր արդէն տեղաւորուած էր ատանացի ընտանիքը, Ստեփան Թելլալեան, իր եղբայրները, հարսը, մէկ քանի կիներ եւ տղաք:

Պարոնը իմ մեկնումս հեռագրով իմացուցած էր մօրեղբորս:

Կէս գիշերին հասանք Համա:

Կայարանին մէջ ինծի կ'սպասէր մօրեղբայրս:

Համբուրուեցանք եւ ճամբայ ելանք դէպի քաղաք որ կայարանէն 40 վայրկեան հեռու կը գտնուի:

— Հոս ա՛լ հանգիստ կրնաս մնալ,— ըսաւ մօրեղբայրս ճամբան,— բան ասող չըլլար:

— Ուրեմն սէվքիաթի խնդիր չի կա՞յ այստեղ,— հարցուցի:

— Չէ՛, ա՛լ լմնցած է: Գացողը գնաց, վրաններու տակ մարդ չմնաց:

## ՆԱՄԱՅԻ ՄԷՁ

Համա, Դամասկոսի կուսակալութեան մէջ, 60-70 հազար բնակիչով խոշոր քաղաք մըն է. էլ-Ասի (Որոնդէս) գետին երկու եզերքներուն վրայ շինուած: Բնակչութիւնը մեծամասնութեամբ Արաբ է: Կը դտնուին նաեւ քրիստոնեայ սուրիացիներ եւ Յոյներ: Տեղացի թուրք չկայ բնաւ:

Քաղաքը հաճելի է ընդհանրապէս, գետին եզերքը կը գտնուին ընդարձակ պարտէզներ, առատ պտղատու ծառերով:

Երբ հոն հասայ, հինգ հազարի չափ տարագիր Հայեր հաստատուած էին քաղաքին մէջ: Ասոնք մեծամասնութեամբ ատանացի, այնթապցի, անթաքիացի, կեսարացի էին:

Այնթապցիները եւ ատանացիները շատ չարչարանք եւ զըրկանք չէին կրած: Նախապէս, մէկ երկու շաբաթ առաջ, իմաց տուած էին իրենց տեղահանութիւնը, որով կարող եղեր էին գործերին կարգի դնել: Ատանացի վաճառականներ նոյնիսկ կրցած էին իրենց խանութներու ապրանքին մէկ մասը վաճառել եւ մէկ մասն ալ հետերին բերել:

Համայի մէջ մեծագոյն եւ լաւագոյն տուները ատանացիները բռնած էին:

Շուկային մէջ խանութներուն գրեթէ կէսը Հայերուն ձեռքն էր: Արաբ խանութպաններուն մեծ մասը ստիպուած էր խանութները փակել զինուորագրութեան պատճառաւ: Հայ նպարավաճառներ, մսավաճառներ, բանջարավաճառներ, հանդերձավաճառներ ու կերպասավաճառներ կային, ինչպէս նաեւ բազմաթիւ սափրիչներ, կօշկակարներ, ատաղձագործ, ատամնաբոյժ, լուսանկարիչ, դեղագործ, հացագործ, դերձակ, երկաթագործ եւ այլն:

Հայերն էին որ, առաջին անգամ, լուսանկարչատուն բացին Համայի մէջ: Նոյնպէս Հայերը բացին, առաջին անգամ, երկու ճաշարան:

Ամէն անգամ որ կարեւոր անձ մը անցնէր Համայի կայարանէն, ինչպէս օրինակի համար, էնվէր փաշան, Ճէմալ փաշան, եւ այլն եւ հարկ ըլլար պաշտօնական ընդունելութիւն մը ընել, ճաշ պատրաստել կամ թէյասեղան սարքել, Հայերուն դիմում կ'ընէին: Անոնք էին որ սեղանը կը յարդարէին, կերակուրները, անուշեղէնները կը պատրաստէին, թէյը կ'եփէին, սպասարկութիւնը կ'ընէին:

\* \* \*

Համայի մէջ կային 30ի չափ սամսոնցի տարագիր կիներ որոնք հազար ու մէկ չարչարանքներէ ետքը եկած ինկած էին հոն: Իրենց մէջ կը գտնուէր տիկին Մարիձա Մարեան իր երկու աղջիկներով, ծխախոտի ծանօթ վաճառականին կիներ, որուն զաւակները Գերմանիա հաստատուած էին ու ծխախոտի առետուրով կը զբաղէին:

Այդ խեղճ կիներուն պատմութիւնը սրտաճմլիկ էր:

Հազիւ թէ Սամսոնէն մեկնած՝ զիրենք բաժնած էին իրենց մուսիներէն, եղբայրներէն ու զաւակներէն:

Ճամբան թուրքերն ու քիւրտերը առեւանգած էին իրենց մանկամարդ ու գեղանի հարսերն ու աղջիկները: Յետոյ մէկ քանի անգամներ կողոպտուած էին: Կիները ստիպուած էին իրենց ոսկիները կուլ տալ որպէսզի չգողցնեն:

Սամսոնցի օրիորդ մը պատմեց ինծի թէ՛ 35 ոսկի կուլ տուած էր:

— Փորիս մէջ կը զգայի ոսկիներուն ծանրութիւնը, — կ'ըսէր, — եւ երբ գիշերը պառկած տեղս, ասդին անդին դառնայի՛ ոսկիներն ալ մէկ կողմէն միւս կողմը կ'երթային: Եւ ամէնէն

անտանելին սա էր որ երբ դրամները ելլէին, ստիպուած էինք լուալ եւ կրկին կուլ տալ, որովհետեւ ատկից ապահով տեղ չէինք կրնար պահել, թուրքերը ո՛չ թէ միայն մեր գրպանները կը խուզարկէին, այլ նաեւ մագերնուս մէջ, բերաննուս մէջ դրամ եւ գոհարեղէն կը փնտռէին ու այսչափով ալ գոհ չըլլալով, մեր մարմնոյն ամէնէն ծածուկ տեղերն անգամ կը նայէին...:

Այդ խեղճ կիները այսպէս քանի մը ամիս լեռնէ լեռ տարուելով՝ բերուած էին Հալէպ ու անկէ ալ Համա: Իրենցմէ շատերը յոգնութենէ, տառապանքէ, անօթութենէ ու հիւանդութենէ մեռած էին ճամբան:

Տիկին Մարեան եւ իր աղջիկները, ինչպէս նաեւ միւս սամսոնցի կիները մուրացկանի կերպարանքով հասած էին Համա:

Գալով սամսոնցի էրիկմարդերուն, եւ ո՛չ մէկէն կարելի եղած էր լուր առնել:

Հաւանօրէն ամէնքն ալ ջարդուած էին իրենց կիներէն բաժնուելէ ետքը:

Չարմանալի էր կեսարացի էրիկմարդերու կարաւանի մը ողջ Համա հասնիլը: Անշուշտ սխալի մը կամ թիւրիմացութեան մը արդիւնքն էր այս:

Թիւով 25-30ի չափ կային ասոնք, ընդհանրապէս վաճառականներ, մէկ քանի ալ արհեստաւոր ու ատամնաբոյժ: Իրենցմէ ոմանց կիները մնացած էին Կեսարիա ու հոն իսլամացած ինչպէս իրենք ալ Համայի մէջ իսլամացած էին: Ոմանց կիներն ալ տարբեր տեղեր դրկուած էին: Օրինակի համար Բարսեղ էֆէնտի Պալեան Համա եկած էր, մինչդեռ կիներն ու աղջիկները կը գտնուէին Միջագետք, Ռաքքա քաղաքը:

Միւս կեսարացիներն էին Ալի Քէմալ (չեմ յիշեր իր հին անունը) Ճամուզ օղլու, Տիգրան Պուրուլըեան, տիշճի\* Բուզանդ, տիշճի Օննիկ, Յովհաննէս Օհանեան, Մուխլիս էֆէնտի, եւ այլն:

\* Ատամնաբոյժ:

Այս վերջինը որ Կեսարիոյ մէջ առեւտուրով կ'ապրի եղեր, տարագրութեան միջոցին ինքզինք բժիշկ ձեւացուցեր է հիւանդ ոստիկանները խնամելով, անոնց պաշտպանութիւնը վայելելու համար: Համայն մէջ ալ այդ արհեստը ի գործ կը դնէր եւ ճանչցուցած էր իբրեւ տոքթոր Մուխլիս էֆէնտի:

Կանանչ, կարմիր, դեղին ներկուած ջուրեր ունէր շիշերու մէջ դրուած, որոնք իրեն դիմող տեղացի հիւանդներուն կուտար: Այս կերպով կրկնակի շահ ունէր, որովհետեւ թէ՛ բժշկի վարձքը կը ստանար եւ թէ՛ դեղերուն համար դրամ կ'առնէր: Զարմանալին այն էր որ հիւանդներէն շատերը կ'առողջանային: Ի վերջոյ յաճախորդները այնքան շատցան որ ձի մը ծախու առաւ այցելութիւններուն հասնելու համար:

Բայց այդ բան մը չէ: Մուխլիս էֆէնտի եղաւ նաեւ թաղապետութեան բժիշկ եւ ինքն էր որ կը հսկէր քաղքին առողջապահութեան վրայ:

Անգամ մը իր վկայականը տեսնել ուզած էին:

— Ծամբան գողցուցին,— պատասխանած էր եւ այդ պատասխանով գոհացած էին:

\* \* \*

Բաւական թիւով իզմիթցիներ ալ կային Համա: Իրենց անունը կը դնեմ այստեղ, որոնք թերեւս կրնան օգտակար ըլլալ իրենց ազգականներուն եւ ծանօթներուն:

Ներսէս Խաչատուրեան, իր կիներ Հրանոյշ, հաճի Գառնիկ Միտարեան, կիներ Վարսենիկ, քոյրը Անթառամ Քէօմիւրճեան, հաճի Սուքիաս Միսիսեան, կիներ Մարգրիտ, Աղասի Միսիսեան, կիներ Հրանոյշ, Արչալոյս Քէօմիւրճեան, Աբրահամ Մամճեան, մայրը Զարուհի, եղբայրը Մելքոն, խայմախճի\* Կարապետ Գողոսեան, կիներ, աղջիկը Արաքսի եւ զաւակը, Եղիա Արսէնեան,

\* Սեր վաճառող:

կիներ Մարիճա, Թագուհի Փափագեան: Իսկ Ատաբազարէն կային Միսաք, կիներ եւ զաւակները:

Ատանացի ծանօթ ընտանիքներէն կային Միհրան Պոյաճեան, Սամուէլ Աւետիսեան, Աւետիս Աւետիսեան, Արթին Ներսէսեան, Արթին Այվագեան, Յակոբ Ուրֆալեան, Ստեփան Թելալեան, եւն. իրենց ընտանիքներով ու զաւակներով: Թարսուսէն՝ Սերգիս Գանձապետեան եւ փաստարան Համբարձում Սարաֆեան:

\* \* \*

Համայն մէջ սկսայ վարել քիչ շատ կանոնաւոր կեանք մը: Սէվք ըլլալու մղձաւանջէն ազատած էի, սենեակս, մաքուր անկողնի մը մէջ կը պառկէի, ոջիլներէ փրկուած էի, ասոնք շնորհներ էին որոնցմէ զրկուած էի ամիսներէ ի վեր:

Մտաւորական հաճոյքներ ալ սկսայ վայելել:

Համայն սանճաքին\* երկրաչափը, Մերկեր էֆէնտի, Հայ մըն էր «Բիւզանդիոն»ի բաժանորդ, որով կանոնաւոր կերպով թերթ կարդալու միջոցը գտայ: Ատեն ատեն ուրիշ տարագիրներ «Ժամանակ» ալ կը ստանային:

Օսմանեան պանքայի պաշտօնեաններուն մէջ կար լիբանանցի երիտասարդ մը, պ. էտուար Նուն, որ գրական գիրքերու ճոխ մատենադարան մը ունէր զոր տրամադրեց ինծի:

Ասոնցմէ զատ, Համայն մէջ Գերմանացիները լրատուութեան սալօն մը բացած էին ուր բացի գերմանական հանդէսներէ ու թերթերէ, զորս ո՛չ ոք կը կարդար, կային նաեւ «Օսմանիչի Լոյտ»ի ֆրանսերէն բաժինը, «Ժուռնալ տը Պէրլութ», «Ժուռնալ տէ զ'Առտէն», «Պրիւսէլուա», եւ այլն, հո՛ն ալ յաճախ կ'երթայի թերթ կարդալու համար:

Վերջապէս ընթերցումը չէր որ կը պակսէր ինծի Համայն մէջ:

88. Վարչական միատրում:

Բայց 1916ի սկիզբները լուրերը շատ աննպաստ էին: Անգլիացիք քաշուած էին Տարատանելէն եւ Պուլկարները պատերազմի սկսած՝ Գերմաններու եւ Թուրքերու կողքին: Ասիկա պահ մը յուսահատութեան մատնեց մեզի, մենք որ քանի մը ածիսէն վերադառնալու յոյսերով կ'օրօրուէինք:

Բարեբախտաբար տարբեր կողմերէ յուսատու լուրեր կը հասնէին, թէ եւ յաճախ չափազանցուած, կամ խեղաթիւրուած եւ երբեմն ալ բոլորովին շինծու:

Պաղեստինի կողմէ, Պիրոյապայի սահմաններուն վրայ, Անգլիացիները եւ Արաբները, թէ եւ դանդաղ, բայց միշտ կը յառաջադիմէին: Այդ յաջողութիւնները չափազանցուած կը հասնէին մեզի:

Շուկային մէջ, ամէն օր, Հայ խանութպանները իրարու կը փսփսային օրուան լուրերը:

– Երուսաղէմը ինկեր է:

– Շէրիֆը վաթսուն հազար հոգիի գլուխ անցած՝ Շամի վրայ կը քալէ եղեր:

– Պոլիս Թուրքերուն մէջ խռովութիւն ծագեր է, Թալէաթը սպաններ են, էնվէրն ալ փախեր է:

Ռուսերը Սըվազէն տասը ժամ հեռու կը գտնուին եղեր:

Օր մը կը լսուէր թէ անգլիական նաւատորմիդը Իսկէնտէրունը ուժակոծեր է:

Այդ լուրը երթալով կը մեծնար, կը ճոխանար:

Հետեւեալ օր.

– Անգլիացիները ցամաք ելեր են, – կ'ըսէին իրարու ականջին:

Երրորդ օրը անգլիացիները Պէյլան կը հասնէին ու հոն կատաղի կռիւ կը մղէին:

Չորրորդ օրը կը ստուգուէր թէ եւ ո՛չ իսկ Իսկէնտէրունը ուժակոծուած է:

Բայց ասիկա արգելք մը չէր ըլլար որ նորանոր սուտերու չի հաւատայինք:

– Իտալական նաւատորմը Մերսինը ուժակոծեր է:

– Ֆրանսական եւ Իտալական զօրքը ցամաք ելեր է եւ Թարսուսի վրայ կը քալէ եղեր:

– Թուրքերը Ատանան կը պարպեն եղեր:

Լուրի մը գլխաւոր աղբիւրն է երկաթուղիի կայարանը:

Ամէն օր մենէ մէկ քանի հոգի կայարան կ'երթար ու կ'սպասէր զինուորական կառախուժքին գալուն:

Ընդհանրապէս զինուորները Հալէպի կողմէն կուգային եւ դէպի Պաղեստին կ'երթային:

Իրենց հետ, ամէն անգամ, անպատճառ Հայ բժիշկ մը, Հայ դեղագործ մը կամ Հայ ատամնաբոյժ մը կը գտնուէր զոր իսկոյն մէկ կողմ կը տանէինք ու կ'սկսէինք հարցուփորձել:

Բարեբախտաբար շոգեկառքը քանի մը ժամ կը մնար հոն, որովհետեւ զինուորները Համայի մէջ կ'ընէին իրենց ճաշը:

Եւ ահա՛ Հայ զինուորականը որ յաճախ Պոլսէն եկող մը կ'ըլլար, մեզի կը հաղորդէր իր գիտցածները, երբեմն սրտապնդիչ, երբեմն յուսահատեցնող:

Լուրի ուրիշ աղբիւր մըն էին մասնաւորներու եկած նամակները որոնք պայմանադրեալ ծածուկ ձեւերով տեղեկութիւններ կը հաղորդէին:

Այսպէս, Ատանայէն տարագիր եղած դեղագործ մը, Սոկրատ էֆէնտի, կը թղթակցէր տոքթոր Նազգաշեանի հետ եւ ամէն անգամ որ Պոլսէն նամակ մը ստանար՝ կը փութար քովերնիս:

Տոքթոր Նազգաշեան լաւատես էր եւ միշտ յուսատու լուրեր կը հաղորդէր իր բարեկամին՝ Սոկրատ էֆէնտիի.

«Մեր հիւանդ հօրեղբօր վիճակը ծանրացած է, – կը գրէր, – բժիշկները վիրաբուժական գործողութիւն մը պիտի կատարեն. մօրեղբայրս քիչ ատենէն կը հասնի: Կը յուսամ որ հօրաքրոջս անհանգստութիւնը մինչեւ երեք ամիս բոլորովին կ'անցնի»:

– Հիւանդ հօրեղբայրը Թուրքիան է, – կը բացատրէր Սոկրատ էֆէնտի, – վիրաբուժական գործողութիւնը Թուրքիոյ բաժանումը կը նշանակէ, մօրեղբայրը Ռուսիան է, իսկ վերջի տո-



ղերը կը նշանակեն թէ՛ մինչեւ երեք ամիս պատերազմը պիտի վերջանայ:

Եւ ականջէ ականջ այս աւետիսը կը տարածուէր ամէն կողմ:

Տէօրթեօլցի երեւելիներէն խաչեր էֆէնտի Գարաբաքուպեան եւս թղթակից մը ունէր Պոլիս, օրիորդ Ջարուհի Փէշտի-մայճեանը, նախկին ուսուցչուհի Տէօրթ-Յօլի վարժարանին որ թէեւ տարագիր եղած Տէօրթ-Յօլէն՝ յաջողած էր միջոցը գտնել Հալէպէն Պոլիս դառնալու: Օրիորդ Ջարուհի եւս ատեն ատեն յուսատու ծածկագիր նամակներ կը ղրկէր, զորս խաչեր էֆէնտի կը մեկնաբանէր ինծի: Այն օրն ուր այդ բարի լուրերը առնէինք, իրեն հետ մէկ քանի գաւաթ աւելի կը խմէինք Ջահլէի պատուական օղիէն:

Ընթերցումը գլխաւոր ժամանցս էր Համայի մէջ: Անկէ զատ, առտունները մէկ քանի բարեկամներ կը հաւաքուէինք արաբական սրճարան մը ուր նարտ եւ թուղթ կը խաղայինք՝ նառիկէ քաշելով: Իսկ իրիկունները ընդհանրապէս կը ժողովուէինք գետեգերեայ պարտէզ մը ուր մէկ քանի Հայ տարագիրներ սրճարան բացած էին:

Երբ ինքզինքս բաւական ապահով զգացի, ժամանցի համար սկսայ օրագրութիւնս գրել: Այսպէս երեք տետրակ լեցուցած էի, որոնք խնամով կը պահէի սենեակիս պատուհանին վերեւ գտնուած խոռոչի մը մէջ:

\* \* \*

Առաջին անգամ, Համայի մէջ խուճապի մատնուեցանք զինւորական խնդրի առթիւ:

1916 ապրիլի սկիզբը, Ջատկի օր, երբ բարեկամներու այցելութեան գացած էի, յանկարծ լուր բերին թէ փողոցը քանի մը Հայեր ձերբակալուած ու զօրանոց տարուած են իբրեւ զինուոր:

Մինչեւ այն ատեն Հայերը, իբրեւ գաղթական, զերծ էին զին-

ւորական ծառայութենէ: Բնականաբար այս իրողութիւնը ամէնս յուզեց: Եթէ 18-էն մինչեւ 45 տարեկանները զինուոր տանէին, մեծագոյն աղէտը պիտի ըլլար Համա հաստատուած Հայերուն համար եւ շատ մը ընտանիքներու բնաջնջումին պատճառ պիտի դառնար, որովհետեւ զինուորացուներու մեծագոյն մասը, օրը օրին, շուկային մէջ առեւտուր ընելով, աշխատելով կամ արհեստը ի գործ դնելով կ'ապրէր ու կ'ապրեցնէր իր ընտանիքը:

Դեռ քանի մը օր առաջ լսած էինք որ ձէմալ փաշա հրամայած էր որ Հայերէն զինուոր չառնուի ինչպէ՞ս կ'ըլլայ որ հիմա հակառակը տեղի կ'ունենար:

Անոնք որ զինուորական տարիքը անցուցած էին, գացին իրողութիւնը ստուգելու եւ լուր բերին թէ արդարեւ ձերբակալութիւնները կը շարունակուէին շուկային, փողոցներուն եւ սրբճարաններուն մէջ:

Իսկոյն մէկ քանի ծերունիներ, քահանայի ընկերակցութեամբ փութացին քօլ աղասի\* Օսման պէյի քօլ, որ տեղւոյն զինուորական իշխանութեան պետն էր եւ ընդհանրապէս բարեկամ էր հարուստ Հայերուն որոնք իրեն կը կերցնէին ու կը խմցնէին:

Պատգամաւորութիւնը իր զարմանքը կը յայտնէ այս եղածին վրայ եւ կ'ըսէ թէ ձէմալ փաշայի հրամանո՞վն է որ Հայերէն զինուոր կը հաւաքուի:

— ձէմալ փաշա մասնաւոր հրաման մը չէ ըրած Հայերէն զինուոր առնելու մասին, — կը պատասխանէ Օսման պէյ:

— Ուրեմն ինչո՞ւ զինուոր կը հաւաքէք:

— Որովհետեւ հակառակ հրաման մըն ալ չի կայ... ես օրէնքը կը գործադրեմ պարզապէս:

— Բայց մենք լսեցինք որ ձէմալ փաշայի կողմէ հրաման մը հասած է Հոմս որով հրահանգ կը տրուի Հայ գաղթականներէն զինուոր չառնել մինչեւ սեպտեմբեր եւ թէ այդ հրահանգը նոյն-իսկ պատերուն վրայ փակցուած է:

\* Հարիրապետ:

— Ես ալ լսեցի այդպիսի բան մը, բայց ինծի պաշտօնապէս որեւէ հրահանգ չէ հաղորդուած:

Պատգամաւորները կը հարցնեն թէ բռնուած Հայերը ե՞րբ եւ ո՞ւր պիտի զրկուին:

— Անմիջապէս Հոմա պիտի զրկեմ,— կը պատասխանէ Օսման պէյ,— որպէսզի մարզանքի սկսին կամ ամէլէ թապուրիները զրկուին:

Կը խնդրեն իրմէ որ մէկ քանի օր անոնց մեկնուամը յետաձգէ եւ նոյն միջոցին ձէմալ փաշայէն հրահանգ ուզէ Հայերէն զինւոր առնելու խնդրին մասին:

Բաւական դժուարութեանէ ետքը քօլ աղասին կը հաւանի: Հայերն ալ իրենց կողմէ հեռագիր մը կ'ուղղեն ձէմալի որը, քանի մը օր ետքը, հրահանգ կուտայ Հայերու զինուորագրութիւնը յետաձգել մինչեւ սեպտեմբեր:

Այսպէսով կ'անցընենք փորձանքը:

Բայց մեծագոյն փորձանքը չուշանար գալու:

\* \* \*

Յուլիսի մէջ, իրիկուն մը գացած էի մեր բարեկամներուն Գանձապետեան, Ներսէսեան եւ Աւետիսեան էֆէնտիններուն, որոնք միասին մեծ շէնքի մը մէջ կը բնակէին ընտանիքով եւ ուր կը ժողովուէինք ընդհանրապէս, ժամանակ անցնելու համար:

Հոն էր նաեւ Խաչեր էֆէնտի Գարեաւաքուպեան:

Ամէնուն ղէմքին վրայ խորին անձկութիւն մը դրոշմուած էր:

Մասնակի խօսակցութիւններ կ'ընէին ցած ձայնով, շուարած կ'երթային կուգային, հառաչանքներ կ'արձակէին...

Հասկըցայ որ շատ ծանրակշիռ բան մը կ'անցընէր, բայց չէի ուզեր զիրենք հարցուփորձել, քանի որ կը տեսնէի թէ՛ ինչ կը ծածկէին իրողութիւնը:

Նոյն օրերը խօսք կար թէ մեզ տեղահան պիտի ընեն ու դէպի անապատը (չէօլ) պիտի քշեն: Ենթադրեցի թէ այդ էր պատճառ իրենց իրարանցումին:

— Սպասենք, յետոյ Խաչեր էֆէնտիէն կ'իմանամ ամէն բան,— մտածեցի:

Արդարեւ քիչ յետոյ միասին դուրս ելանք եւ ուղղուեցանք դէպի իր տունը:

— Ի՞նչ կայ,— հարցուցի ճամբան,— ամէնուղ վրայ մեծ յուզում մը, անձկութիւն մը կը տեսնեմ, արդեօք մեզ տեղահան կ'ընեն կոր...

— Իցի՛ւ թէ այդպէս ըլլար,— ըսաւ Խաչեր էֆէնտի:

— Ուրեմն ջարդի վա՛խ կայ:

— Այդ ալ չէ... շատ ծանրակշիռ բան մը: Տուն երթանք կը պատմեմ:

Երբ տուն հասանք Խաչեր էֆէնտի ըսաւ.

— Կ'առաջարկեն կոր մեզի իսլամանալ...

— Շէվքէթ պէյին առաջա՞րկը...

— Ձէ՛, այս անգամ լուրջ է:

Շէվքէթ պէյ Համայի իթթիհատական քլիւպին նախագահն էր: Նախկին զինուորական ծերունի մը: Լեհացի կրօնափոխ հօրէ մը ծնած, քիչ մը փախուկ՝ բայց ամէն չարիք, ամէն ծայրայեղութիւն գործելու կարող, որպէսզի պահպանէ իր դիրքը:

Այդ մարդը քանի մը շաբաթ առաջ ըսած էր մէկ քանի Հայերու թէ պէտք է որ իսլամանան՝ եթէ կ'ուզեն հանգիստ ապրիլ: Այդ խօսքերը ըսած էր կէս լուրջ կէս կատակ ձեւով մը եւ ո՛չ ոք լուրջ կարեւորութիւն մը տուած էր ըսած խօսքերուն: Թէեւ այդ առաջարկը անախորժ տպաւորութիւն մը թողած էր մեր վրայ:

Այս անգամ խնդիրը լուրջ էր սակայն.

— Այս առտու,— պատմեց Խաչեր էֆէնտի,— միթէսարըֆը իր քով կը կանչէ Ներսէսեան էֆէնտին եւ անոր խորհուրդ կուտայ իսլամ կրօնքը ընդունելու, որպէսզի կարենան հանգիստ մնալ Համայի մէջ:

– Միայն ներսէսեանի՞ վրայ է խնդիրը:

– Ձէ՛, բոլոր Հայերուն համար: ՄիւթէսարըՔը ըսեր է որ եթէ չիսլամանանք՝ չկրնար մեզ պաշտպանել եւ թէ հաւանօրէն ծանր փորձանքներու պիտի ենթարկուինք:

Նոյն միջոցին Համայի միւթէսարըՔն էր ինայրի Ֆէրուզան, նախկին հազարապետ մը, շատ բարի, շատ ազնիւ եւ շատ լուսաւորեալ անձ մը, որ սիրելի եղած էր թէ՛ Արաբներուն եւ թէ՛ Հայերուն:

Այսպիսի անձի մը կողմէ այդ առաջարկութիւնը արդարեւ շատ տարօրինակ էր եւ ցոյց կուտար թէ մեծ վտանգ մը կը սպառնար մեզի եւ թէ միւթէսարըՔը այդ առաջարկը ընելով կ'ուզէր վտանգը հեռացնել մենէ:

Յետոյ իմացանք որ ճիշդ նոյն միջոցին էր որ տեղի կ'ունենային Տէր-Չօրի սարսափելի ջարդերը:

Ֆէրուզան պէյ այս յորդորը տալէ ետքը երկու օր պայմանաժամ տուած էր պատասխան մը ստանալու համար:

Ներսէսեան էֆէնտի եւ միւս ատանացիները երկար խորհրդակցութիւններէ ետքը որոշեցին մերժել եղած առաջարկը:

Ասոր վրայ միւթէսարըՔը իր մօտ հրաւիրեց, բացի Ներսէսեան՝ ուրիշ մէկ քանի Հայ երեւելիներ:

Այս անգամ աւելի լրջօրէն խօսած էր հետերնին:

Նախ ըսած էր որ ինք ամօթ կը զգար այդպիսի առաջարկ մը ընելով Հայերուն՝ բայց դժբախտաբար պարագաները կը ստիպէին զինքը այդ դիմումը ընելու, թէ այս կերպով միայն կարելի պիտի ըլլար իրենց կեանքը փրկելու, եւ այլն:

Նաեւ աւելցուցած էր.

– Պալքանեան պատերազմին ատեն ես Մակեդոնիա գլխու տուած եմ եւ ժամանակ եղած է որ Պուլկարներու ձեռքէն փախչելու եւ գլուխս ազատելու համար քրիստոնեայ ձեւացած եմ եւ եկեղեցին ապաստանած եմ: Դուք ալ հիմա նոյնը կրնաք ընել, ասիկա ժամանակաւոր բան մըն է, մինչեւ որ սա դժնդակ օրերը անցունենք:

Երեւելիները շաբաթ մը պայմանաժամ ուզած էին վերջնական պատասխան մը տալու համար ու մեկնած էին միւթէսարըՔին քովէն:

Տուներու մէջ խորհրդակցութիւնները կը շարունակուէին տենդային կերպով: Շամէն, Հոմսէն լուր կը հասնէր թէ հոն գլխուտող Հայերը սկսած են խմբովին կրօնափոխ ըլլալ ճնշումի ներքեւ:

Համայի մէջ երկու հոսանք կար, մեծամասնութիւնը կ'ուզէր գլուխը ազատելու համար ընդունիլ իսլամութիւնը, իսկ փոքրամասնութիւնը կ'ուզէր դիմադրել ճնշումին:

Բայց նոյնիսկ իսլամանալու տրամադիրները շատ մեծ տագնապի մատնուած էին, մանաւանդ անոնք որ հասուն աղջիկներ ունէին: Կը վախնային որ այս կրօնափոխութեան հետեւանքը պիտի ըլլար խառն ամուսնութիւններ, ինչ որ կը սարսափեցնէր զիրենք:

Յետոյ, ուրիշ խնդիր մը կար, ո՛չ ոք կ'ուզէր առաջին քայլը առնել եւ օրինակ ըլլալ ուրիշներու:

Այսուհանդերձ այդ մէկ շաբթուան ընթացքին, բաւական թիւով ամուսնիներ գացին կրօնափոխ ըլլալու:

Շաբաթը լրացաւ եւ դեռ երեւելիները կը վարանէին իրենց պատասխանը տանելու:

Առտու մըն ալ իմացանք որ իթթիհատի Դամասկոսի կեդրոնին անդամներէն Ալի Քէմալ պէյը եկած է Հայերու իսլամացումը փութացնելու համար: Այդ Քէմալ պէյի համար կ'ըսուէր թէ նախկին եպարքոս\* Քեամիլ փաշայի ազգականներէն էր, նախկին զինուորական, խիստ ու դաժան մարդ մը:

Արդարեւ գալէն անմիջապէս ետքը բռնել բանտարկել տուաւ փաստաբան Համբարձում Սարաֆեանը, այնթապցի ինչատուր ինչատուրեանը, պատուելի Նօհուտեանը եւ պատուելի Գասպարը, իբրեւ Հայերու իսլամացման արգելք եղող անձեր:

\* Վարչապետ:

Միեւնոյն ժամանակ լուր տարածուեցաւ որ չիսլամացող Հայերը, այր թէ կին, անմիջապէս ճամբայ պիտի հանուին ու պիտի քշուին Հաւրանի անապատները:

Բոլոր այս եղելութիւնները բնականաբար վարանողները մղեցին իսլամացման:

Առտու մըն ալ ես, Ներսէս Խաչատուրեան եւ անթաքիացի Խոսրով գացինք ներկայացանք միւթէսարըֆ Խայրի Տէրուզան պէյին եւ ըսինք թէ կը փափաքինք իսլամութիւնը ընդունիլ:

Միւթէսարըֆը գոհունակութիւն յայտնեց եւ ըսաւ.

— Ա՛լ ասկէ ետքը ձեր մագին դպչող չըլլար, կրնաք ազատ համարձակ ձեր գործերովը զբաղիլ:

Յետոյ պաշտօնեայ մը կանչելով մեզ ղրկեց նուֆուսի\* սենեակը որպէսզի ստանանք մեր նոր նուֆուս թէսքէրէսինները:

Հոն մեզ հարցուցին թէ ի՞նչ անուն կ'ուզէինք առնել:

Ես Ազիզ Նուրի անունը ընտրեցի, Ներսէս Խաչատուրեան Ալի Տէրուզան անունը առաւ, իսկ Խոսրով իր անունը չարափոխեց Խիւսրէվի:

Իսկ ամէնուս ալ հօրը անունը կոչուեցաւ Ապտուլլահ, իսկ մօր անունը Ուտուլլահ:

Նոր թէսքէրէսները առինք եւ դուրս ելանք:

Ամբողջ գործողութիւնը հազիւ ժամ մը տեւած էր:

Անունի փոփոխութիւն մը եղաւ պարզապէս եւ ո՛չ ուրիշ բան:

Երկու օր ետքը, որովհետեւ տակաւին մեծամասնութիւնը կը դանդաղէր իսլամանալու, Քէմալ պէյ ձերբակալել տուաւ այն թապցի տէր Ներսէս Թաւուքճեան քահանան, մարաշցի տէր Յակոբ քահանան եւ ուրիշ երեք քահանաներ եւ երկու պատուելիներ, որոնք արդէն բանտն էին, Նօհուտեան եւ Գասպար եւ ամէնքը մէկէն ճամբայ հանեց ու աքսորել տուաւ Թաֆլիշ, Եէմէնի ճամբուն վրայ, անապատ տեղ մը:

\* Այստեղ՝ անճնագրի:

Հետեւեալ օր իր մարդոց ձեռքով լուր տարածուեցաւ թէ բոլոր անոնք որոնք մինչեւ երեք օր չփութան իսլամութիւնը ընդունիլ, անմիջապէս հետիոտն ճամբայ պիտի հանուին դէպի Արաբիոյ անապատները:

Ասիկա պարզապէս կը նշանակէր դէպի սպանդ առաջնորդել ամէնքն ալ:

Ազդեցութիւնը անմիջական եղաւ: Հարիւրաւորներ խուժեցին իթթիհատի քլիւպը ուր տեղի կ'ունենար իսլամացման գործողութիւնը եւ իրենց նոր անունները արձանագրել տուին:

Գործողութիւնը արդէն շատ պարզ էր:

Իթթիհատի կողմէ պատրաստուած էին հազարաւոր խնդրագիրներ որոնց վրայ պէտք էր միայն աւելցնել հին ու նոր անունները եւ ստորագրել, որուն փոխարէն իրենց կը տրուէր թուղթի կտոր մը որուն վրայ իսլամական անունը եւ թիւ մը կար:

Այս թուղթին կտորը պիտի ծառայէր յետոյ նոր նուֆուս թէսքէրէսին առնելու, որովհետեւ նոյն միջոցին անկարելի էր այդքան բազմութեան նոր թէսքէրէսներ տալ, մանաւանդ որ այդքան մեծ քանակութեամբ թէսքէրէս չկար Համայի մէջ:

Չորս հինգ օր ետքը Համա գտնուող հինգ հազար տարագիր Հայերը այս ձեւով իսլամացան:

Ամէնէն դժուարը եղաւ սամսոնցի կիներուն իսլամացումը: Ասոնք մինչեւ վերջին վայրկեանը մերժեցին հաւատափոխ ըլլալ եւ պատրաստակամութիւն յայտնեցին անապատը տարագրուելու:

Ամէնքը հաւաքուած տիկին Մարիճա Մարեանի սենեակը լալով ողբալով կը մերժէին մեր յորդորները:

— Մեր ամուսինները սպաննեցին, մեր զաւակները սպաննեցին, մեր աղջիկները ձեռքերնուս խլեցին, թո՛ղ մեզ ալ սպաննեն, — կը գոչէին յուսահատօրէն:

Օրը երեք անգամ Քէմալ պէյ մարդ կը ղրկէր հարցնելու համար թէ սամսոնցի կիները տեղի տուա՞ծ են եւ ամէն անգամ կը սպառնար զիրենք քշելու Համայէն՝ դէպի անապատ:

Վերջապէս մեծ դժուարութեամբ կրցանք զիրենք համոզել:  
— Մենք եթէ պիտի տաճկնայինք գոնէ այսպէսով մեր ամուսինները ու զաւակները կը փրկէինք,— կ'ըսէին,— անոնք իրենց կեանքը զոհեցին, որպէսզի մենք կրօնափոխ չըլլանք, հիմա ի՞նչպէս մեր կեանքը փրկելու համար մահմէտական ըլլանք երբ անոնք ամէնքն ալ չարաչար մահուամբ մեռած են...

Եւ օրերով իրենց լաց ու կոծը չդադրեցաւ:

Քէմալ պէյ սամսոնցի կիներն ալ իսլամացնելէ ետքը՝ յաթիւթականօրէն դարձաւ Դամասկոս:

Իթիբիհատի այս արարքը շատ զայրացուց տեղացի Արաբները որոնք կ'ըսէին թէ այս ձեւով իսլամացումը հակառակ էր մարգարէին պատուիրաններուն:

Հակառակ որ իսլամ եղած էինք մեզի ծանօթ արաբներէն ո՛չ ոք «Ալէքիւմ Ալլամ»-ով կը բարեւէր մեզի այլ հին «Մէրհապա» ձեւը կը գործածէին:

Նոյնիսկ Հակառակեցան մէկ քանի Հայերու, որոնք փորձած էին մզկիթ մտնել:

Խնդիր մը մեծ մտատանջութիւն կը պատճառէր ամէնուսարդեօք մեզ պիտի թլփատէի՞ն:

— Հիմա մէկսիմը չէ,— ըսած էր ղատըն\*,— այդ գործողութիւնը մարտի կամ ապրիլի մէջ կ'ըլլայ:

Այսպէս ուրեմն 8-9 ամիս թլփատութեան վախ չի կար:

Նոյնիսկ շէյխեր կային որոնք կ'ըսէին թէ թլփատութիւնը մահմէտական կրօնքին էական պայմաններէն մէկը չէ:

Ուրիշ խնդիր մըն ալ ծագեցաւ: Մեր նոր անուններուն երբեք վարժուած չէինք եւ ամէն տեղ հին անունները կը գործածէինք: Ոմանք մտածեցին որ թերեւս ատիկա կրնար յանցանք մը նկատուիլ եւ գացին ղատըին խորհուրդ հարցնելու:

— Վնաս չունի,— ըսած էր այս վերջինը,— մինչեւ որ նոր անուններուն վարժուիք՝ կրնաք հինները գործածել:

Վերջապէս ո՛չ ոք մեզ լրջօրէն իսլամ կը նկատէր:

\* Դատար, կրօնագէտ, աստուածաբան:

\*\*\*

Ճիշդ այդ տագնապալից օրերուն օր մը երբ տուն եկայ, պառա Մարիամը որ մեր կերակուրը կ'եփէր, ըսաւ ինծի.

— Քեզի հիւր մը եկած է դուրսէն:

— Ուրկէ՞,— հարցուցի հետաքրքրուած:

— Կարծեմ Հալէպէն:

— Ո՛ւր է այդ հիւրը:

— Ներսի սենեակն է:

Իսկոյն վագեցի սենեակ եւ բազմոցին վրայ պառկած տեսայ մէկը որ արդարի քունով կը խուկար բարձրաձայն:

Բազմոցին քով դրուած էին հին ու մին մուճակները:

Գուլպաները եւ բանթալոնը պատուտած, առանց ժիլէի ու առանց ժաքէթի, կապոյտ հաստ Փանէլա մը հագած այդ տարօրինակ հիւրը մէկէն ի մէկ վստահութիւն չի ներշնչեց ինծի:

Զգուշութեամբ մօտեցայ, մշտեցի ու դժուարաւ արթնցուցի:

Վերջապէս աչքերը բացաւ, երեսս նայեցաւ ու յանկարծ տեղէն ցատկելով ճիտս փաթթուեցաւ:

— Օտեան դո՞ւն ես,— գոչելով:

— Բայց դուն ո՞վ ես,— հարցուցի:

— Չճանչցա՞ր զիս... Լեւոն Մօզեանը չե՞մ:

Արդարեւ ինքն էր, բայց որչափ փոխուած թարսուէն ի վեր: Նիհարեցր, հալ ու մաշ եղեր էր: Յետոյ, իր ամբողջ էութեամբը ցնցուած կը թուէր:

— Ուսկի՞ց կուգաս,— հարցուցի:

— Վերջին անգամ Ատանայէն ճամբայ ելայ, բայց նախ պատմեմ զիսուս եկածները:

Եւ սկսաւ իր ցաւատանջ դրուագները:

Մեր թարսուէն մեկնելէն ետքը Հայ տարագիրներու դէմ հալածանքը հետզհետէ կը սաստկանայ: Մօզեան եւ իր մէկ քանի ընկերները ժամանակ մը փախստական կեանք մը վարելէ ու զանազան փորձանքներ անցնելէ ետքը, վերջապէս կը տեսնեն

Թէ անկարելի է աւելի երկար ժամանակ հոն մնալ եւ ճամբայ կ'ելլեն դէպի Ինթիլի ուր իմացած էին թէ երկաթուղիի վարչուութիւնը Հայ տարագիրները կը գործածէ զանազան ճիւղերու մէջ եւ թէ այս կերպով անոնք ապահով կեանք մը կ'անցնեն:

Արդարեւ կը յաջողին անվտանգ հասնիլ Ինթիլի ու երկաթուղիի վարչութեան մէջ գործ գտնել, որով թէ՛ իրենց ապրուստը եւ թէ՛ իրենց հանգիստը կ'ապահովուի, բայց քանի մը ամիս ետքը հոն աշխատող հազարաւոր գործաւորներ, էնվէրի հրամանով, ճամբու կը դրուին ու հեռաւոր տեղ մը տարուելով ամէնքն ալ չարաչար կը սպաննուին:

Այս դէպքը սոսկում կը պատճառէ ողջ մնացողներուն:

— Օր մըն ալ կարգը մեզի պիտի գայ,— կը մտածեն:

Այս սեւեռուն գաղափարէն տարուած՝ Մօզեան եւ ուրիշ 14-15 հոգի կ'որոշեն խոյս տալ. լեռներու ճամբով երթալ Մերսինի մօտ ամայի ծովեզր մը, հոն լաստ մը շինել եւ անով անցնիլ կիպրոս:

Յանդուզն, գրեթէ յիմարական ծրագիր: Բայց տարագրութեան արհաւիրքներուն մէջ ուր մէկ օրէն միւսը Չարդուելու հաւանականութիւնը ցցուած է դէմդ, կեանքդ փրկելու համար յիմարական ծրագիրներն իսկ կարելի կը թուին:

Մօզեան եւ իր նոր ընկերները առտու մը կը թողուն իրենց գործը ու ճամբայ կ'ելլեն: Երկաթուղիի վարչութեան շտեմարաններէն կ'առնեն ապագայ լաստը շինելու համար պէտք եղած գործիքները, տապար, սղոց, ուրագ, գամ, մուրճ, պարան, եւ այլն, կ'առնեն նաեւ միասին քանի մը օրուան ուտելիք:

Անմարդաբնակ տեղերէ, լեռներուն վրայէն, անտառներու մէջէն կը ճամբորդեն, առանց որոշապէս գիտնալու թէ ո՞ր կ'երթան:

Շուտով կը սպառի ուտելիքի պաշարը եւ կը սկսին քէչի պուշուլուզի եւ ուրիշ վայրի պտուղներ ուտել, բայց սոսկալի կերպով կը նեղուին ջուրի պակասութենէ, իսկ իրենց բեռները որոնցմէ չեն ուզեր բաժնուիլ, չափազանց կը նեղեն զիրենք ու կը դժուարացնեն իրենց յառաջխաղացութիւնը:

Ընկերներէն մէկ քանինքն չի դիմանալով այս տաժանքին, ետ կը դառնան իրենց նախկին գործը շարունակելու:

Վերջապէս կը հասնի օր մը ուր Մօզեան եւ իր խումբը կը ստիպուին մօտենալ գիւղերու որպէսզի իրենց ուտելիք ու խմելու ջուր ճարեն:

Գիւղացիները ամբողջ թուրք էին, որովհետեւ Հայերը տարագիր եղած էին, հետեւաբար կարելի չէր վստահիլ իրենց ու օր ցորեկով մօտենալ ու անոնցմէ օժանդակութիւն յուսալ:

— Գիշերները կը մօտենայինք գիւղերուն,— պատմեց Մօզեան,— երբ ամէնքը խոր քունի մէջ թաղուած էին, նախ աղբիւրէն ծարաւնիս կ'անցնէինք, յետոյ կը ջանայինք ոչխար մը կամ քանի մը հաւ գողնալ ու հեռանալ:

Հետզհետէ նոր դասալիքներ կ'ըլլան եւ խումբը օրէ օր կը պզտիկնայ:

Այսպէս ամիս մը ճամբորդելէ ետքը, չորս հոգի միայն կը հասնին Մերսին, ողորմելի վիճակի մէջ: Չեն համարձակիր քաղաք մտնել ու քաղաքին շուրջ, արտերուն ու ծանծաղուտին մէջ կը թափառին, մինչեւ որ կը նշմարուին ժանտարմաներու կողմէ եւ կը հալածուին: Երկուքը կը յաջողին փախչիլ, իսկ Մօզեան եւ մէկ ընկերը կը ձերբակալուին ու կը տարուին Մերսինի բանտը, իբրեւ փախստական զինուոր:

Մօզեան նախ կը փորձէ յոյն ձեւանալ, բայց չի յաջողիր:

Հարիւրապետը որ զինքը կը հարցաքննէ, դաժան հայատեաց մըն է եղեր:

— Դուն հոս մեզ լրտեսելու եկած ես,— կ'ըսէ,— Անգլիացիներուն կողմէ:

Բնականաբար Մօզեան կ'ուրանայ: Ասոր վրայ զինուորակապետը ընկուկէրը կը հանէ, Լեւոնին ճակտին կ'ողղէ եւ կը գոչէ.

— Կ'մ'անմիջապէս խոստովանէ կամ հիմա գլուխդ կը պայթեցնեմ:

Լեւոն լուռ կը մնայ:

Հարիւրապետը կը հրամայէ որ խարազանով անխնայ ծեծեն

զինքը: Խեղճը զգայազիրկ կ'իյնայ գետին: Այս չարչարանքը կը կրկնուի քանի մը անգամ:

Օր մըն ալ զինքը ճամբայ կը հանեն դէպի Թարսուս եւ հոն կը բանտարկեն:

Մօզեան իրեն բանտակից կ'ունենայ Գերմանացի մը որ իբրեւ Անգլիացի լրտես ձերբակալուած է եղեր եւ որուն տուած բացատրութիւնները ո՛չ ոք կը հասկնայ: Մօզեան որ քիչ մը անգլիերէն ու քիչ մըն ալ գերմաներէն գիտէ, կը յաջողի հասկնալ Գերմանացիի խօսքերը:

Մարդը օսմանեան բանակի ծառայութեան մէջ օթոմօպիլի վարիչ է եղեր. իր մէկ ընկերոջ հետ պաշտօն կ'ստանայ Պոլիս երթալ ու հոնկէ մէկ քանի օթոմօպիլ բերել եւ կանոնաւոր վէսիքայով ճամբայ կ'ելլեն Հալէպէն: Թարսուսի մէջ երբ ինք առանձին կը պտտէր, մինչ ընկերը օթէլն էր, կը ձերբակալեն զինքը իբրեւ Անգլիացի լրտես ու կը տանին բանտ: Վէսիքան իր ընկերոջ քովը կը մնայ: Ի գո՛ւր կը փորձէ եղելութիւնը բացատրել, զինտորական բանտի հարիւրապետը ո եւ է օտար լեզու չգիտեր: Խեղճ Գերմանացին կը խնդրէ Մօզեանէն որ իրեն թարգման ըլլայ:

Ու երկուքը միասին կ'երթան հարիւրապետին քով: Ամէն բան կը պարզուի, ընկերը կը գտնան կը բերեն: Վէսիքան կը քննեն ու անմիջապէս ազատ կ'արձակեն օթոմօպիլի վարիչը հազար ներողութիւն խնդրելով իրմէ:

Հարիւրապետը շատ գոհ կը մնայ Մօզեանէն:

— Շնորհակալ եմ քեզի, առանց քու թարգմանութեանդ մեծ պատասխանատուութիւն պիտի գար վրաս:

Եւ ուզելով վարձատրել զայն կը զրկէ Ատանայի բանտը:

Հոն ալ կը մնայ քանի մը օր եւ յետոյ, իբրեւ զինտոր, ուրիշ 80-90 թուրքերու հետ, ճամբայ կը հանեն Պիրսապա զրկելու համար:

Հալէպի կայարանին մէջ Մօզեան կը հանդիպի Լեւոն Զաքարեանի որ այն ատեն եղած էր Ալի Հայտար եւ Հանրային

պարտքի վարչութեան շերամի ճիւղին քննիչ էր եւ միշտ կ'երթեւեկէր Պէյրութի եւ Հալէպի միջև, ատեն ատեն այցելելով նաև Համա, ուր առիթ կ'ունենայինք տեսնուելու:

— Չըլլայ որ Պիրսապա երթաս,— կը խրատէ Զաքարեան:

— Բայց ի՞նչ ընեմ,— կը հարցնէ Մօզեան:

— Համայի կայարանը հասնելուդ պէս խոյս տուր. քաղաք գնա ու Օտեանը գտիր, անիկա քեզ կրնայ պատսպարել:

Մօզեան կ'որոշէ գործադրել իրեն տրուած խորհուրդը:

Գիշեր ժամանակ կը հասնին Համա: Պատրուակելով թէ բնական պէտք մը պիտի գոհացնէ՝ վար կ'իջնայ վակօնէն ու մուտիւն մէջ անյայտ կ'ըլլայ ու այսպէս կը յաջողի քաղաք հասնիլ:

Գիշերը յառաջացած ըլլալով, բոլոր խանութները եւ սրճարանները գոց կը գտնէ: Բարեբախտաբար, Հայու գոց սրճարանէ մը խօսակցութեան ձայն կը լսէ, ականջ կը դնէ, կը լսէ որ հայերէն կը խօսին, քաջալերուած՝ դուռը կը զարնէ ու հոն կ'անցնէ գիշերը:

— Ահաւասիկ իմ պատմութիւնս,— ըսաւ Մօզեան,— խօսքը աւարտելով:

— Հիմա հետս եկուր տեսնեմ,— ըսի:

— Ի՞նչ կայ, ո՞ւր պիտի երթանք:

— Պիտի երթանք իսլամութիւնը ընդունելու,— պատասխանեցի:

Մօզեան կարծեց թէ կատակ կ'ընէի:

Բացատրեցի իրեն կացութիւնը:

— Եթէ իսլամութիւնը չընդունիս՝ շատ դժուար կ'ըլլայ հոս անվտանգ մնալդ,— ըսի:

— Ուրեմն երթանք արձանագրուելու:

Գացինք իթիհատի քլիւպը եւ իսկոյն խնդրագիր մը պատրաստեց եւ կոչուեցաւ Ալի Նուրէտտին:

Քիչ ժամանակ ետքը յաջողեցաւ մաթէմաթիքի ուսուցիչ կարգուիլ Համայի միակ Իտատի վարժարանին մէջ: Այս կերպով բոլորովին ապահովեց իր կացութիւնը:

Հակառակ մեզի տրուած խոստումներուն՝ քանի մը ամիս ետքը, սեպտեմբերին, դարձեալ Հայերուն զինուորագրութեան խնդիրը ծագեցաւ, դարձեալ ամբողջ տարագիրները ահ ու դողի մատնուեցան:

Նոր զիմումներ եղան զինուորական իշխանութեան եւ Ճէմալ փաշային եւ դարձեալ յետաճգուեցաւ Հայոց զինուորագրութիւնը մինչեւ յառաջիկայ մարտ:

Համայի մէջ, ամէն ատեն, սրտադողի պատճառ մըն էր Լա-յերու արձանագրութիւնը:

Օր մը բոլոր մըխթարները գործի վրայ կ'ելլէին, տունէ տուն կը պտտէին ու բոլոր տարագիր Հայերը կ'արձանագրէին իրենց անուններով, մականուններով, տարիքովն ու արհեստովը:

- Ինչո՞ւ Համար կը գրէք:
- Ձեռք գիտեր, մեզի այսպէս հրաման եղած է, - կը պատա-խանէին:

- Ու ահա՛ տեսակ տեսակ մեկնութիւններ շրջան կ'ընէին:
- Տէր-Ձոր պիտի դրկուինք անոր Համար կը գրեն կոր:
- Ձէ, զինուոր պիտի առնեն անոր Համար է:
- Պոլիսէն հարցուցեր են թէ որչա՞փ Հայ ողջ մնացած է:
- Արդեօք նոր ջա՞րդ մը կը կազմակերպուի:
- Շատ հաւանական է:
- Անգլիացին Դամասկոս մտած օրը բոլոր Հայերը պիտի ջարդեն եղեր, եւ այլն, եւ այլն:

Գործողութիւնը շարաթէ մը կ'աւարտէր ու ա՛լ խօսքը չէր ըլլար:

Բայց ահա՛ քանի մը ամիս ետքը, կրկին արձանագրութեան խնդիր, կրկին իրարանցում, կրկին սիրտհատնում:

Մեզ բարեկամ Արաբներ կ'ըսէին թէ կառավարութիւնը դիտմամբ այդ տեսակ գործողութիւններու կը ձեռնարկէր ատեն ատեն մեզի միշտ մտատանջութեան մէջ պահելու համար:

Ամէնէն հաւանական բացատրութիւնը այս էր կարծեմ:

Համայի արար ընտանիքներուն քով թերեւս 2-3 հազար Հայ մանուկներ կը գտնուէին, մեծ մասով փոքրիկ աղջիկներ, 4-6-8 տարեկան, երբեմն աւելի մեծ:

Այս մանուկները, պէտք է ճշմարտութիւնը ըսել, մեծ մասով լաւ խնամք եւ սնունդ կ'ստանային եւ աւելի երջանիկ էին քան անոնք որոնք իրենց աղքատ ծնողքներուն քով մնացած էին:

Ճանչցայ Սէլիմ էֆէնտի անուն պաշտօնեայ մը որ անգաւակ ըլլալով, փոքրիկ աղջիկ մը որդեգրած էր: Այր ու կին կը խենթենային այդ տղուն վրայ:

Անգամ մը երբ փոքրիկը հիւանդացաւ, յատկապէս բժիշկ բերել տուաւ Հալէպէն եւ, ըստ իր վկայութեան, հարիւր ոսկիի չափ դրամ ծախսեց հիւանդութիւնը դարմանելու համար:

Այդ մանուկներուն մեծ մասը բոլորովին որբ էին, բայց կային նաեւ ոմանք որոնք Հայր կամ մայր ունէին Սուրիոյ ուրիշ կողմերը:

Երբեմն ծնողքները իրենց զաւակները քանի մը մէծիտէի կը ծախէին, յետոյ գայն կը գողնային ուրիշի մը ծախելու համար:

Համայի մէջ ճանչցայ փոքրիկ, 11-12 տարեկան, հանած վարած տղայ մը որ իր փոքրիկ քոյրը այսպէս Արաբներուն կը ծախէր, յետոյ կը գողնար եւ ուրիշներուն կը ծախէր: Այս գործողութեամբ շատ անգամ իր հացը կ'ապահովէր:

Թեւակոխեցինք 1917 տարին, պատերազմը կը շարունակէր առանց խաղաղութեան մասին յուսատու նշաններու: Ռուսական յեղափոխութիւնը ծագած էր եւ ձարը գահազուրկ եղած, բայց բանակը կը շարունակէր կռուիլ Գերմանիոյ դէմ: Ներքին քայքայումը չէր սկսած տակաւին:

Մեր կեանքը Համայի մէջ կ'անցնէր հանդարտիկ: Դժբախտաբար ինչորի Ֆէրուզան պէյ արձակուրդով մեկնած էր Պոլիս ու հոն ուրիշ պաշտօն ստացած: Իրեն յաջորդեց, առժամեայ կերպով, Հոմսի գայմագամ Քէմալ պէյ, որու համար շատ լաւ էին խօսեր:



Ասիկա իբր թէ մտաւորական ու նախկին յեղափոխական մըն է եղեր: Իզմիրի մէջ կը պաշտօնավարէ եղեր եւ ուրկէ իր ազատական գաղափարներուն համար, Համիտի օրով, աքսորուեր է Թարապուլուս: Մահմանադրութեան հռչակումէն յետոյ վերադարձեր է աքսորէն ու եղեր է ջերմ իթթիհատական:

Հագիւ թէ Համա եկած՝ իր մասին լսեցինք շատ աննպաստ բաներ: Մասնաւորաբար կ'ամբաստանէին զինքը իբրեւ անբարոյական մը, իբրեւ այլասերած մարդ մը որուն վրայ ամէն ախոստովանելի մոլութիւն կար: Բայց ատոնք մեզի համար շատ կարեւորութիւն չունէին, խնդիրը այն էր որ միեւնոյն ատեն հայատեաց մըն էր Ֆէրուզանի յաջորդը եւ ասոր ապացոյցը չուտով երեւան եկաւ:

Իր առաջին գործերէն մէկը եղաւ Յոյն եւ Սուրիացի ընտանիքներուն քով գտնուող Հայ կիները բռնի առնել, պատրուակելով որ անոնք իսլամացած էին, հետեւաբար չէին կրնար քրիստոնեաներուն քով մնալ, եւ զանոնք աքսորել Հոմս ուր կիներու համար աշխատանոց մը հաստատուած էր:

Այդ միջոցին էր որ հետզհետէ Տէր-Ջօրէն փախստականներ կը հասնէին ու ահռելի ջարդին մանրամասնութիւնները կը բերէին մեզի:

Իրենց պատմութիւնները սարսուռով կը համակէին ամէնքս: Երբեք կարելի չէր այդ աստիճան վայրագութիւն երեւակայել:

Հոս չեմ ուզեր կրկնել այդ պատմութիւնները որոնք արդէ մանրամասնօրէն գրուած են իրենց ամէն գրուագներով:

\* \* \*

1916ի վերջերը Պարոն օթէլի տէրը Յովհաննէս էֆէնտի Մազլումեան իր եղբօր հետ աքսորուած էր Հալէպէն Լիբանան: Իրենց կ'ընկերանար նաեւ Արամ Անտոնեան որ Թարապուսէն

չուած էր Հալէպ ու Մէսքէնէ: Հոնկէ յաջողած էր փախչիլ ու վերադառնալ Հալէպ ու Մազլումեան էֆէնտիի քով ապաստանիլ:

Լիբանանի ամէնէն օղասուն տեղը, Ջահլէ, աքսորուած էին, հոն ուր կը բնակի կառավարիչը եւ որ կը նկատուի Լիբանանի մայրաքաղաքը:

Արամ հոնկէ երկու նամակ գրեց ինծի եւ Պարոնին կողմէ հրաւիրեց որ Ջահլէ երթամ քանի մը ամիս մնալու:

Երկրորդ նամակը բերող անձը պաշտօն ունէր նաեւ զիս մինչեւ Ջահլէ տանելու:

Այդ ճամբորդութիւնը թէեւ դժուար, բայց անկարելի չէր:

Բնականաբար արտօնութեամբ այսինքն վէսիքայով չէի կրնար երթալ, բայց կարելի էր գաղտնաբար շոգեկառք մտնել եւ նոյն ձեւով վար իջնել:

Նամակը բերող անձը որ ատանացի երիտասարդ մըն էր եւ որ նոյնպէս առանց վէսիքայի ելած էր, յանձն առաւ զիս փոխադրելու գործը, միայն թէ հետը բաւական մեծ քանակութեամբ օղի բերած էր վաճառելու եւ հարկ եղաւ մէկ քանի օր սպասել մինչեւ որ վաճառումը աւարտէր:

Այդ միջոցին, կիրակի իրիկուն մը, Սերգիս էֆէնտի Գանձապետեան ուրիշ մէկ քանի բարեկամներու հետ մեզ ճաշի հրաւիրեց: Ամբողջ գիշերը հաճելի ժամանակ մը անցուցինք եւ ուշ ատեն վերադարձանք տուներնիս:

Հետեւեալ առտու կանուխ, արշալոյսին, երբ տակաւին քնացած էի, սկսան ուժգին կերպով դուռը բաղխել:

Ստորնայարկը կը բնակէր Արաբ տանտէրը իր ընտանիքով ու ինք ունէր տան բանալին:

Ես թէեւ դրան զարնուելուն աղմուկէն արթնցայ, բայց անկողնէս չեկայ:

Բաղխումը կը շարունակէր հետզհետէ աւելի ուժգին:

Յատքեցի անկողնէս ու պատուհանը վազեցի: Տուներնիս ստիկաններով պաշարուած էր:

– Դուռը շուտով բացէ՛ք, – գոչեց ոստիկանը զիս նշմարեւում:

– Բանալին մեր քովը չէ, տանտիրոջը քովն է, – պատասխանեցի:

– Պարապ խօսք չենք ուզեր, դուռը բացէ՛ք եթէ ո՛չ պիտի խորտակենք:

Նոյն միջոցին մօրեղբայրս ալ ելած էր եւ վերնայարկէն կը պոռար տան տիրոջ որ դուռը բանայ:

Տանտէրը, որուն սենեակը պարտէզին խորը կը գտնուէր, կ'երեւայ որ չէր լսած աղմուկը եւ մէջտեղ չէր ելլեր:

Ոստիկանները կը շարունակէին մեզի սպառնալ: Վերջապէս տեսնելով որ դուռը չբացուիր՝ պատէն շուլլուեցան, երկու հատը ներս ցատքեց եւ սկսան դուռը կոտորելու աշխատիլ:

Նոյն միջոցին տանտէրը եկաւ ու բացաւ դուռը:

Մենք սարսափահար կը դիտէինք այդ իրարանցումը առանց պատճառը կարենալ հասկնալու:

Կ'ենթադրէինք որ խնդիրը մեր տանտիրոջ շուրջը կը դառնար:

Եւ սակայն երբ որ դուռը բացուեցաւ, չորս հինգ ոստիկան, քօմիսէրին առաջնորդութեամբը, դէպի վեր խուժեցին, առանց ուշադրութիւն դարձնելու Արար տանտիրոջ:

Այն ատեն հասկցանք որ խնդիրը մեր շուրջը կը դառնար:

Ես որ գիշերնոցով էի, սենեակս քաշուեցայ հագուելու համար, բայց երկու ոստիկան ետեւէս սենեակ մտան ու թող չի տուին որ հագուստներուս մօտենամ:

– Սա անկիւնը անշարժ կեցիր, – հրամայեցին, – եթէ ո՛չ գլուխդ կը ջախջախենք:

Բոլոր ոստիկանները, ինչպէս նաեւ քօմիսէրը ըէփօլվէրները ձեռքերնին բռնած էին:

Քաշուեցայ սենեակին անկիւնը եւ անշարժ կեցայ:

Մօրեղբայրս փորձեց սենեակս մտնել, թոյլ չտուին ու առին իր սենեակը տարին:

Քիչ յետոյ քօմիսէրը որ արագ քննութիւն մը ըրած էր չորս կողմը, եկաւ սենեակս:

– Անունդ ի՞նչ է, – հարցուց:

– Ազիզ Նուրի:

– Հին անո՞ւնդ:

– Երուանդ Օտեան:

– Խուզարկեցէք սենեակին ամէն կողմը, – հրամայեց քօմիսէրը երկու ոստիկաններուն:

Սենեակիս մէջ կարասի չի կար արդէն, գետինը փռուած անկողին մը եւ աթոռ մը, ահա՛ ինչ որ կար: Բայց դարանի մը մէջ կը գտնուէին քանի մը ֆրանսերէն գրքեր եւ աշխարհաբար Աստուածաշունչ մը, ամէնքն ալ բարեկամներէն փոխ առնուած: Պահարանի մը մէջ կար Արամ Անտոնեսանի Ձահլէէն ինծի ուղղած երկու նամակները:

Համա հասնելէ ետքը, երբ ինքզինքս ապահովութեան մէջ զգացի, սկսայ փոքրիկ տետրակի մը մէջ օրը օրին նշանակել քիչ շատ կարեւորութիւն ունեցող դէպքերը, օրուան լուրերը, Համայնէն անցնող բարեկամներու հետ ունեցած տեսակցութիւններս եւ նոյնիսկ զինուորական առաքումները: Բոլոր ասոնք իրենց ամբողջութեան մէջ, շատ վտանգաւոր էին եւ կրնային, եթէ ձեռք անցուէին, զիս Պատերազմական ատեանի միջոցաւ կախաղան բարձրացնել: Երեք տետրակ այսպէս լեցուցած էի եւ զանոնք պահած սենեակիս պատուհաններէն միոյն վերի կողմը գտնուած ծակի մը մէջ:

Երբ երկու ոստիկանները խուզարկութեան սկսան սոսկալի տազնապի մը մատնուեցայ, վախնալով որ թերեւս տետրակները մէջտեղ ելլէին:

Ոստիկանները ամենամանրակրկիտ քննութենէ մը անցուցին ամէն բան: Թուղթ, գիրք, նամակ ինչ որ գտան ծրարեցին, բայց յայտնի կը տեսնուէր որ իրենց փնտռածը ուրիշ բան էր:

Քօմիսէրը հրամայեց որ անկողինս ալ վերցնեն ու ներքեւը նային, ինչպէս նաեւ բարձին տակ, վերմակին մէջ, եւ այլն:

Բնականաբար բան մը չգտան: Ես միշտ անկիւնը կեցած էի անշարժ:

– Հրաման կուտամ՞ որ երթամ բնական պէտք մը գոհացնեմ,– Հարցուցի:

– Ո՛չ,– գոչեց քօմիսէրը:

– Կը մսիմ կոր, արդեօք կրնամ հագուիլ,– Հարցուցի:

– Ո՛չ,– գոչեց կրկին:

Երկու ոստիկանները սկսան խուզարկութիւնը շարունակել: Այս անգամ սկսան պատերու զարնել թաքստոց մը կամ ծածուկ պահարան մը փնտռելով, յետոյ տախտակամածին զարկին, մէկ քանի փայտեր տեղէն հանեցին եւ սակայն կրկին բան մը չգտան:

– Ի՞նչ կը փնտռեք,– Հարցուցի վերջապէս:

– Ան մեր գիտնալիք բանն է,– գոչեց քօմիսէրը խստութեամբ:

Երբ խուզարկութիւնը վերջացաւ, թոյլ տուին ինծի հագուելու եւ ամէնքս մէկէն գացինք դիմաց, մօրեղբօրս սենեակը:

Մօրեղբայրս ալ, նոյնպէս գիշերազգեստով, կեցուցած էի անկիւն մը:

Քօմիսէրին ներկայութեան հոն ալ խուզարկութեան սկսան, միշտ ապարդիւն կերպով:

Այդ սենեակին մէջէն՝ ժամանակով վարի յարկը կ'երթուի եղբր սանդուխի մը միջոցաւ, այդ սանդուխը յետոյ քանդեր են, բայց տեղը յայտնի էր, թէեւ ամրապէս գոցուած:

– Ի՞նչ է այս,– Հարցուց քօմիսէրը:

– Չեմք գիտեր, կարծեմ սանդուխի ճամբայ մըն է,– պատասխանեց մօրեղբայրս:

– Բացէ՛ք տեսնեմ:

– Մենք ինչպէ՞ս կրնանք բանալ, ասոր համար գործիք կ'ուզէ:

– Բացէ՛ք կ'ըսեմ կոր:

– Հրաման ըրէ՛ք որ տանտէրը գայ ու ինք բանայ:

Քօմիսէրը հաւանեցաւ: Տանտէրը եկաւ, նախ փորձեց համոզել թէ ներքեւը բան մի չի կար, բայց անօգուտ, քօմիսէրը կը պնդէր թէ անպատճառ պէտք է որ բացուէր:

Տանտէրը տապաւրով մը փայտերը կտրտեց ու նախկին սանդուխին ծակը բացուեցաւ:

Քօմիսէր ու ոստիկան զգուշութեամբ մօտեցան, քննեցին ու տեսան որ բան մը չի կար:

Նոյն մանրակրկիտ կերպով խուզարկեցին նաեւ միւս երկու սենեակները որոնց մին իբրեւ խոհանոց կը ծառայէր: Այս վերջնոյն մէջ կը գտնուէր պառաւ խոհարարուհի Մարիամին անկողինը:

Մօրեղբայրս, ոստիկանները դեռ ներս չմտած, իր քով գրտնուած պրտունին կը պահէր է այդ անկողնին մէջ:

Ոստիկանները գտան զայն ու գրաւեցին:

Յետոյ ելնարան մը բերել տուին ու ելան տան երդիքը, վերջապէս ամբողջ ծակ ու ծուկը խուզարկեցին:

Բոլոր այդ միջոցին՝ ինծի ու մօրեղբօրս արգիլուած էր իրարու մօտենալ, իրարու հետ խօսք փոխանակել:

Կ'ենթադրէինք որ զրպարտութեան մը զոհ եղած էինք, բայց չէինք կրնար գուշակել թէ ի՞նչ տեսակ զրպարտութիւն էր:

Երբ ամէն խուզարկութիւն վերջացաւ, քօմիսէրը ըսաւ մօրեղբօրս:

– Հոս ուրիշ մէկն ալ պիտի ըլլայ, ո՞ւր է ան:

– Մենէ զատ ուրիշ մարդ չի կայ այս տան մէջ:

– Կը ստես, Կարապետ անունով մէկը կայ հոս:

– Անիկա շաբաթէ մը ի վեր մեկնած է հոսկէ:

– Ի՞նչու համար:

– Եղբայրները եկան գիւղէն, անոնց հետ զատ տուն բռնեց:

Արդարեւ Կարապետ անուն սուէյտացի մը կը բնակէր մեզի հետ: Մօրեղբայրս աւելորդ սենեակներէն մին իրեն տրամադրած էր ուր Կարապետ իր արհեստը կը բանէր, որ էր ուղտի ոսկորներէ սանտր շինել: Կարապետ՝ փոխարէն այս հիւրընկա-

լուծեան՝ մեր գնումները կ'ընէր շուկայէն եւ ուրիշ այդ տեսակ մանր մուկեր ծառայութիւններ, վերջերս սակայն անհամաձայնութիւն մը ծագած էր իր եւ մօրեղբօրս միջեւ եւ հեռացած էր մեր քովէն ու գացած եղբայրներուն եւ քրոջը մօտ:

— Հիմա ո՞ւր կը բնակի այդ Կարապետը, — հարցուց քօմիսէրը:

— Հոս մօտը:

— Գիտէ՞ք իր տունը:

— Այո՛, գիտենք:

— Ուրեմն երթանք իրենց տունը:

Ոստկանները ուզեցին քէլէփճէ անցնել ձեռքերնիս, քօմիսէրը պէտք չտեսաւ:

Կարապետ եւ իր եղբայրները մեր տան դիմացի փողոցը, հարիւր քայլ հեռու կը բնակէին:

Հինգ վայրկեան վերջը իրենց տունն էինք: Հո՛ն ալ մանրակրկիտ խուզարկութիւն մը կատարեցին, որմէ ետքը Կարապետն ալ առնելով, երեքս միասին բերին քօնաք ուր կը գըտնուէր ոստիկանարանը եւ բանտը:

Նախ գացինք քօմիսէրին սենեակը ուր քանի մը ժամ սպասեցինք, որմէ ետքը քօմիսէրը սկսաւ հարցաքննել մեզ:

Հոն հին նոր անուններս, մականուններս, տարիքս, ծննդավայրս հարցնելէ ետքը, քօմիսէրը ըսաւ.

— Ի՞նչ է արհեստդ:

— Լամպաճի\*, — պատասխանեցի, — ժամանակին տէօքմէճի՝ ութիւն\*\* ալ ըրած եմ:

— Դուն խմբագիր չե՞ս:

— Երբեմն թերթերուն մէջ կը գրէի, բայց բուն գործս լա՛մպաճիութիւն է:

— Լամպա՞ կը շինես:

\* Լամպավաճառ:

\*\* Կաղապարող:

— Ո՛չ, կը վաճառեմ, կամ աւելի ճիշտը քօմիսիօնճի\* եմ: Եւրոպայէն մեծաքանակ լամպա բերել կուտամ ու վաճառականներուն կը ծախեմ: Տեսէ՛ք, նուֆուս թէսքէրէիս մէջն ալ արհեստս քօմիսիօնճի գրուած է:

— Հոս ի՞նչ գործով կը զբաղիս:

— Դասատուութիւն կ'ընեմ, Փրանսերէն դաս կուտամ:

— Որո՞ւ:

— Երկու Հայ օրիորդներու... Խաչեր էֆէնտի Գարաբաքուպեանի եւ տիկին Մարեանի աղջիկներուն:

— Առած ամսականդ կը բաւէ՞ ապրուստիդ:

— Ո՛չ, բայց Պոլսէն դրամ կը ստանամ:

— Ի՞նչ միջոցաւ կը ստանաս դրամդ:

— Կա՛մ Ռէժիի կամ Տէյուներ Ումուսիէի միջոցաւ:

— Քանի որ օսմանեան բօսթա մը կայ ինչո՞ւ դրամդ անոր միջոցաւ չես ստանար:

— Ատիկա դրամը ղրկողներուն պէտք է հարցնել: Բայց կարծեմ Ռէժիին ու Տէյուներ Ումուսիին ալ օսմանեան վարչութիւններ են:

Ահաւասիկ ամբողջ հարցաքննութիւնս:

Գրեթէ նմանօրինակ հարցումներ ուղղեցին նաեւ մօրեղբօրս ու Կարապետին:

Այս գործողութիւնը աւարտելէ ետքը մեզ տարին ուրիշ սենեակ մը եւ դուռը վրանուս փակեցին:

Հոն կային նաեւ ուրիշ երկու Արաբ բանտարկեալներ որոնց մին քաղքին էջրաֆներէն\*\* էր: Զինուորական պէտէլ տալ չուզելուն համար բանտարկուած էր ամիսէ մը ի վեր եւ որովհետեւ մեծահարուստ մարդ մըն էր, ոստիկան ու պաշտօնեայ յարգանքով կը վարուէին իրեն հետ:

Այս էջրաֆը որ քօնաքի գաղտնիքներուն տեղեակ ըլլալ կը թուէր, ըսաւ մեզի.

\* Միջնորդ:

\*\* Այստեղ՝ երեւելի, մեծատուն, հեղինակատու անձ:

- Գիտէ՞ք ինչու համար հոս բերուած էք:
- Տակաւին չկրցանք հասկնալ:
- Ամենածանր ամբաստանութիւն մը կայ ձեր վրայ:
- Ի՞նչ ամբաստանութիւն:
- Կեղծ թղթադրամ կը շինէք եղբր:

Սկսանք ծիծաղիլ, բայց յետոյ խորհեցանք թէ այդպիսի զըրպարութիւն մը թերեւս եղած է մեզի դէմ: Կարապետ, ինչպէս ըսի, ուղտի ոսկորէ սանտր կը շինէր եւ իր արհեստին համար զանազան առարկաներ ունէր, ինչպէս խոշոր քարեր, կազի թէնէքէներ\* որոնց մէջ գունաւոր դեղեր դրած էր, ճախարակ, հերիւն, եւ այլն, եւ այլն...: Այդ գործիքները կրնային կասկած յարուցանել թէ կեղծարարութեան յատկացուած են:

Ինչ որ ալ ըլլար, այդ ամբաստանութիւնը մեզ հանդարտեցուց: Գործը քաղաքական հանգամանք չունէր ուրեմն եւ մենք վստահ էինք թէ պիտի կրնայինք մեր վրայ ծանրացած այդ անճոռնի ամբաստանութիւնը ջրել:

Դժբախտաբար էշրաֆին ըսածները որեւէ հիմ չունէին:

Իրիկուան դէմ ոստիկան մը եկաւ ու մեզ առաջնորդեց միւթէսարըֆի փոխանորդ Քէմալ պէյի քով:

Իրենց մօտ նստած էր քաղքին էշրաֆներէն աղա մը:

Երեքս բարեւ բռնած՝ շարուեցանք դէմը:

- Երուանդ Օտեանը դո՞ւք էք, - Հարցուց ամենայն քաղաքավարութեամբ խօսքը նախ ինծի ուղղելով:

- Այո՛, ես եմ, - պատասխանեցի:

- Դուք ազգականութիւն ունի՞ք Գրիգոր Օտեանի հետ:

- Այո՛, հօրեղբայրս է:

- Բո՛ւն ձեր հօրեղբա՞յրն է:

- Այո՛, իսկ եւ իսկ հօրս եղբայրը:

Քէմալ պէյ քովը նստող «երեւելի»ին դարձաւ եւ ըսաւ.

- Գրիգոր էֆէնտի Օտեան նշանաւոր անձ մը եղած է. ինքն է որ Միտհաթ փաշային հետ խմբագրած է օսմանեան սահմանադրութիւնը:

\* Անորակ մետաղի տեսակ:

Այս գնահատականը բարեգուշակ թուեցաւ ինծի եւ պահ մը խորհեցայ թէ աժան պիտի ազատէինք:

Յետոյ քանի մը հարցումներ ուղղեց նաեւ մօրեղբօրս եւ Կարապետին եւ ինծի դառնալով ըսաւ.

- Դուք մտաւորական մարդիկ էք, հետեւաբար կ'սպասեմ ձեռք որ ճշմարտութիւնը խօսիք երբոր ձեզի Հարցաքննեն:

- Արդէն ծածկելու բան մը չունինք, - պատասխանեցի:

- Ինչ որ է, խնդիրը այն է որ ձեզի եղած Հարցումներուն պատասխանէք:

- Վստահ եղէք այդ մասին, պէյ էֆէնտի:

- Տարէ՛ք էֆէնտիները, - հրամայեց Քէմալ պէյ մեզի ընկերացող ոստիկանին ուղղելով:

Վերադարձանք վար կրկին քօմիսէրին սենեակը ուր այս վերջինը սկսաւ մեզ հարցաքննել:

Այս երկրորդ Հարցաքննութիւնը գրեթէ առաջինին յար եւ նման էր, միայն թէ այս անգամ մեր պատասխանները գրի կ'առնուէին:

Քօմիսէրը մասնաւորապէս սա պարագային վրայ ծանրացաւ թէ ինչո՞ւ համար Պոլսէն ինծի ղրկուած դրամը Ռէժիի կամ Տէյունը Ումուտի միջոցաւ կուգար եւ ո՛չ թէ օսմանեան թղթաբերով:

Վերջապէս մեր իֆատէները\* ստորագրեցինք ու դարձանք այն սենեակը ուր արգելափակած էին մեզ:

Քէմալ պէյի մեզի հանդէպ ցոյց տուած յարգալից վերաբերմունքը, մանաւանդ հօրեղբօրս մասին ըրած յիշատակութիւնը այն յոյսը կը ներշնչէր մեզ թէ նոյն իրիկունն իսկ ազատ պիտի արձակուէինք, մանաւանդ որ քովերնէս ո՛ր եւ է կասկածելի կամ վտանգաւոր բան չէր գտնուած:

Միայն պրաունինկ ըէվոլվէրը կար եւ ասիկա քիչ մը մտատանջութիւն պատճառած էր մեզի, բայց զարմանալին այն է որ Հարցաքննութիւններու միջոցին երբեք ակնարկութիւն չեղաւ

\* Վկայութիւնները:

րէվովէրին որ միւս առարկաներուն հետ հո՛ն սեղանին վրայ դրուած էր:

Մուժը գրեթէ կոխած էր երբ դուռը բացուեցաւ եւ ոստիկան մը ըսաւ մեզի:

– Եկէք հետս...

Եւ մեզ առաջնորդեց չէնքին խորը ուր կը գտնուի բանտը: Հասկցանք որ ազատ պիտի չի թողուէինք:

Արդարեւ մեզ մտցուցին բանտ, ու դուռը գոցեցին մեր վրայէն:

Բանտը որ երկրորդ յարկը մեծ սենեակ մըն էր, լեցուած էր բանտարկեալներով, այնպէս որ հազիւ թէ փոքրիկ անկիւն մը գտանք նստելու համար:

Բանտարկեալները ընդհանրապէս բոլորն ալ Արաբներ էին, ոճրագործ, գող, զինուորական փախստական, եւ այլն, ամէնքն ալ ազտոտ, գարշահոտ:

Յուսալով որ միւս օր պիտի արձակուինք, անկողին, եւ այլն, բերել չտուինք ու մինչեւ առտու գրեթէ անքուն անցուցինք:

Հետեւեալ օրը սակայն մեզ հարցնող փնտռող չեղաւ, ընդհակառակը ցերեկուան մօտ բանտին դուռը բացուեցաւ եւ ներս բերին Կարապետին եղբայրը՝ Մուսա, զոր փողոցը ձերբակալած էին:

– Քեզ ալ հարցաքննեցի՞ն, – հարցուցինք:

– Չէ՛, միայն անունս, տարիքս եւ ուր տեղացի ըլլալս հարցուցին:

Ժամ մը ետքը դարձեալ դուռը բացուեցաւ ու ներս մտաւ Կարապետին միւս եղբայրը Արմէն որ նոյնպէս փողոցը ձերբակալուած էր, իսկ իրիկուան դէմ բերին նաեւ կրտսեր եղբայրը Ճէպրա (Գարրիէլ) հազիւ 14 տարեկան տղայ մը:

Հասկցանք որ մեզ ազատ պիտի չթողուին: Տունէն բերել տուինք անկողին, վերմակ, եւ այլն ու տեղաւորուեցանք բանտին մէջ:

– Կ'երեւայ որ պիտի դատուինք, – խորհեցանք:

Եւ սակայն որեւէ որոշ ամբաստանութիւն չի կար մեզի դէմ, կամ գոնէ մեզի բան մը չէին ըսած:

Ի զո՛ւր մտքերնիս կը չարչարէինք մեկնութիւն մը տալու համար մեր ձերբակալութեան:

Ուշ ատեն ոստիկան մը եկաւ եւ ըսաւ.

– Պատրաստուեցէ՛ք վաղը Հալէպ պիտի երթաք:

– Այս փոքրիկ տղա՞ն ալ, – հարցուցինք ձէպրան ցոյց տալով:

– Այո՛:

– Բայց անիկայ ի՞նչ յանցանք կրնայ ունենալ:

– Միւթէսարը՞ պէյին հրամանը այս է:

Բնականաբար շատ մտատանջ գիշեր մը անցուցինք:

Առտուն կանուխ մօրեղբայրս ուզեց քօմիսէրը տեսնել եւ խնդրել իրմէ որ մէկ երկու ժամ միջոց տայ որպէսզի երթայ գործերը կարգի դնէ:

Հալէպի կառախումբը կը մեկնէր կէսօրին, հետեւաբար բաւական ժամանակ ունէինք:

Քօմիսէրը քիչ մը դժուարաւ հաւանեցաւ ու մօրեղբայրս Կարապետին հետ ու երկու ոստիկանի հսկողութեամբ գացին իրենց տուները:

Մօրեղբորս բացատրեցի թէ ո՛ւր պահած էի օրագրութեան երեք տետրակներս եւ պատուիրեցի որ զանոնք առնէ ու ընալինջ ընէ:

Բաւական գործ կար ընելիք: Յորեն եւ ուրիշ ուտեստի պաշար ունէինք տանը մէջ, հարկ էր զանոնք ափյափոյ վաճառել, քանի որ հետերնիս չէինք կրնար տանիլ, վաճառել նաեւ աւելորդ կարասիները:

Չէինք գիտեր թէ ի՛նչու համար Հալէպ կ'երթայինք: Հոն պիտի դատուէի՞նք թէ պարգապէս պիտի բանատարկուէինք:

Մօրեղբայրս եւ Կարապետ վերադարձան երեք ժամ ետքը: Կարելի եղածին չափ կարգադրած էին իրենց գործերը:

Այս անգամ Կարապետին կ'ընկերանար նաեւ քոյրը՝ Ոսկին:

Խեղճ աղջիկը չէր ուզած բաժնուիլ իր եղբայրներէն ու ինքզինք անոնց հետ տարագիր ընել յանձն առած էր:

Ամէնքս, եօթը հոգի, հաւաք ունեցանք քօմիսէրին սենեակը: Ի զո՛ր փորձեցինք իրմէ տեղեկութիւն մը քաղել մեր մասին:

— Երբ որ Հալէպ երթաք կը հասկնաք,— ըսաւ:

Մեր բեռները կառք մը դրինք ու ղրկեցինք կայարան, իսկ մենք ուստիկանի մը հսկողութեամբ ոտքով պիտի երթայինք:

Մէկ երկու բարեկամներ համարձակած էին գալ մեզ տեսնել մեր մեկնումէն առաջ, իսկ շատերը չէին համարձակեր նոյնիսկ հեռուէն մեզ դիտելու:

Մօրեղբայրս կրկին հրաման ուզեց վերջին անգամ երթալ քանի մը մարդ տեսնելու եւ անոնց հետ ունեցած դրամական խնդիրները կարգադրելու համար: Այդ արտօնութիւնը շնորհւեցաւ իրեն թէեւ միշտ ուստիկանական հսկողութեան ներքեւ:

Երբ վերադարձաւ ճամբայ ելանք դէպի կայարան: Ուստիկան մը մեզի հետ պիտի գար մինչեւ Հալէպ:

Մօրեղբայրս ինծի ըսաւ թէ՛ իր քաղած տեղեկութիւններուն համեմատ՝ մեզի մատնած կամ աւելի ճիշտը զրպարտած էր Թազուր Մանուէլեան անուն իզմիրցի երիտասարդ մը որուն հետ խնդիր մը ունեցած էին մօրեղբայրս եւ Կարապետը:

Այդ Թազուրը որ Համայի մէջ Տիգրան Վարդանեան կը կոչւէր, վերջին ատեններս Քէմալ պէյի ծառայութեան մէջ էր եւ լսած էինք թէ մէկ քանի աղտոտ գործեր ըրած էր, բայց չէինք հաւատացած:

Մեր մեկնումի օրը ալ, առտուն կանուխ բանտ եկած էր ու մեր շուրջը կը սլքտար:

Ճամբան, երբ շուկայէն կ'անցնէինք, դարձեալ դէմերնիս ելաւ ծիծաղկոտ դէմքով մը:

Ուստիկանը որ քովերնէս կ'երթար, զայն մատնանիշ ըրաւ եւ ըսաւ մեզի.

— Կը տեսնէ՞ք կոր սա սրիկան, ա՛ն է ձեզի մատնողը:

— Վստա՞հ ես,— հարցուցինք:

— Այո՛,— ըսաւ,— ինքն է ձեզի դէմ ժուռնալ տուողը:

Հասանք կայարան ուր կառախումբը արդէն կեցած էր:

Ուստիկանին հրամանով յատուկ ֆուռիօն մը տրամադրուեցաւ մեզի: Հոն տեղաւորեցինք մեր գոյքերը:

Ուստիկանը իր հետ ունէր երկու խոշոր ծրարներ, որոնք կը պարունակէին մեր եւ Կարապետին տունէն, խուզարկութեան պահուն առնուած գիրքերն ու թուղթերը: Գիրքերն էին աշխարհաբար Աստուածաշունչ մը, կարտինալ Մէսսիէի ժամանակակից հոգեբանութիւնը եւ հոգեբանութեան դասընթաց մը, Ռենանին «Յիսուսի կեանքը», Տիքընսէն երկու հատոր վէպ, Լա-Ռիվէ Տլէտօի բառարանը եւ ուրիշ մէկ քանի ֆրանսական վէպեր, բոլորն ալ անվնաս բաներ:

Այդ առարկաներուն մեզ հետ միասին տանելէն հետեւցուցինք թէ Հալէպի մէջ պիտի դատուէինք եւ ասիկա գոհ թողուց մեզ, որովհետեւ կը յուսայինք մեր անմեղութիւնը դիւրաւ ապացուցանել:

Անգամ մը որ շոգեկառքը ճամբայ ելաւ կերցուցինք, խմցուցինք մեզի ընկերացող ուստիկանին ու շուտով բարեկամացանք հետը:

Ատանացի թուրք երիտասարդ մըն էր ինք որ առաջին անգամ Հալէպ կ'երթար եւ շատ գոհ էր այս ուղեւորութենէն: Մեր տունը խուզարկելու եկող ուստիկաններէն մէկն էր ինքն ալ:

Հարցուցինք թէ ի՞նչ եկած էին փնտռելու մեր տունը:

— Կը կարծէինք թէ պօմպա պահած էք,— ըսաւ: Եւ աւելցուց.

— Ամբողջ գիշերը անքուն անցուցինք պահականոցին մէջ, կը խորհէինք թէ ինչպէ՞ս պիտի կարենայինք անվտանգ մօտենալ ձեզի պէս վտանգաւոր չարագործներու... կը վախնայինք որ թերեւս զէնքով դիմադրէիք մեզի:

Յետոյ, երբ քիչ մըն ալ բարեկամացանք հետը եւ նուէր մըն ալ սահեցուցինք ձեռքը, մեզի ցոյց տուաւ մեր մասին գրուած

տեղեկագիրը, գրուած Համայնի ոստիկանութեան կողմէ եւ ուղղուած Հայէպի ոստիկանութեան:

Այդ տեղեկագրին մէջ նշանակուած էին մեր սենեակներէն գտնուած գիրքերը եւ նամակները իրենց պարունակութեամբ:

Համա գտնուած միջոցիս շատ անգամ մէկ քանի բարեկամներ կը հաւաքուէինք ու ժամանցի Համար թուղթ կը խաղալինք:

Խաղին հաշիւները ընդհանրապէս ես կը գրէի սեւ թուղթի կտորի մը վրայ: Խուզարկութեան ատեն այդ տեսակ թուղթ մըն ալ գտնուեցաւ թուանշաններով լեցուած:

Այդ թուղթին Համար տեղեկագիրը կ'ըսէր թէ՝ ծածկագրութեան բանալի մըն էր հաւանօրէն. !!!

Նամակներուն մէջ ո՛ր եւ է կարեւորութիւն ունեցող բան մը չէին գտած, նոյնպէս գիրքերուն մասին յիշատակութիւն մը չկար:

Վերջապէս շատ թեթեւ էր տեղեկագիրը: Կարապետին տունէն գրաւած էին մէկ քանի գիրքեր, աղօթագիրք, դասագիրք ու երգարան: Երգարանը յաջողեցանք վերցնել տոպրակին մէջէն, այն միջոցին ուր ոստիկանը կը քնանար, եւ դուրս նետել վակօնէն:

Թէ ինչո՞ւ Համար Թագւոր Մանուէլեան մեզ մատնած էր իբրեւ պօմպաճի\*, կ'արժէ երկու բառով պատմել:

Այդ երիտասարդը իբրեւ զինուոր կը գտնուէր Դամասկոս ուր չկրնալով հանդուրժել կրած տառապանքներուն խոյս տուած էր զինուորական ծառայութենէն ու Սուրիացի կնոջ մը տունը ապաստանած: Հոնկէ լուր ղրկած էր քրոջը որ կը գրուէր Համա: Քոյրը գնաց Դամասկոս եւ յաջողեցաւ գայն բերել Համա, բայց որովհետեւ չէր կրնար իր տան մէջ պահել խնդրեց մենէ որ մեր տունը պահենք զինքը, մինչեւ որ յարմար տեղ մը գտնուի: Այսպէս Թագւոր երկու շաբաթի չափ մնաց մեզի մօտ ու յետոյ մեր ձեռքով տեղաւորուեցաւ սամսոնցի

\* Ռուս պատրաստող:

կնոջ մը՝ տիկին Էլիզա Խաչեանի քով: Մեր յարաբերութիւնները՝ բարեկամական՝ շարունակուեցան: Գրեթէ ամէն օր կ'այցելէր մեզի ու ժամերով կը մնար:

Օր մը հին կօշիկ մը ուզեց ծախել: Կարապետ, որ այն ատեն մեզի հետ կը բնակէր, յիսուն դրուշ տուաւ կօշիկին: Թագւոր հաւանեցաւ, դրամը առաւ եւ խոստացաւ կօշիկը բերել հետեւեալ օրը:

Բայց հետեւեալ օր յաջողած էր լաւագոյն գինով մը ծախել կօշիկը եւ դրամը վերադարձուց, այս առթիւ մէկ քանի վիրաւորիչ ակնարկութիւններ ընելով Կարապետին որ իբր թէ զինքը խաբել ուզած եւ կօշիկը առնել փորձած էր:

Կարապետ բարկացաւ եւ ըսաւ թէ իր վրէժը պիտի լուծէր: Ոչ ոք կարեւորութիւն ընծայեց այդ սպառնալիքին:

Բաւական ժամանակ յետոյ Թագւոր առտու մը վրանիս եկաւ դող ելած: Հայերէն գրուած նամակ մը ստացած էր սա իմաստով:

«Մենք գիտենք քու փախստական զինուոր մը ըլլալդ, եթէ անմիջապէս Համայնէն չհեռանաս՝ ոստիկանութեան իմաց պիտի տանք» եւ այլն:

Նոյն միջոցներուն Համայնի մէջ մէկ քանի փախստական Արար զինուոր կախած էին եւ բնական էր որ երիտասարդը չափազանց յուզուէր այս նամակէն: Գիրը քննեցինք բայց չկրցանք հասկնալ թէ ո՞վ գրած էր: Միայն յայտնի կ'երեւար որ տգէտ եւ անվարժ մէկու մը գիրն էր: Թագւոր քանի մը օր ուրիշ տեղ մը գնաց ապաստանեցաւ, յետոյ վերադարձաւ իր նախկին տեղը: Մէկ երկու օր ետքը երկրորդ նամակ մը ստացաւ նոյն իմաստով ու աւելի սպառնական: Թագւոր խուզարկութիւններու սկսաւ, կրցաւ նամակը տուն ձգողին հետքը գտնել եւ անկէ տեղեկութիւններ քաղել նամակը տուողին մասին: Այդ տեղեկութիւնները կասկած յարուցին թէ նամակագիրը Կարապետն էր: Թէեւ ինք գրել չէր գիտեր, բայց կրնար ուրիշի մը գրել տալ:

Թագւոր բացէ ի բաց կ'ամբաստանէր Կարապետը:



Ես եւ մօրեղբայրս Հարցուփորձեցինք Կարապետը որ նախ բացարձակապէս ուրացաւ, բայց ի վերջոյ ըսաւ թէ նամակը ինք գրել տուած չէ, բայց կը ճանչնայ գրողը:

Իրեն ըսինք թէ որքան վատ եւ ստորին գործ մըն էր այդ եղածը: Խոստացաւ նամակագիրը գտնել եւ իրմէ խոստում առնել որ սպառնալիքը ի գործ չդնէ:

Վերջապէս եկաւ ըսաւ որ եթէ Թագւոր քանի մը ոսկի տայ, մարդը պիտի հրաժարի իր սպառնալիքը գործադրելէ: Սակարկութեան մտանք եւ մէկ ոսկիով գործը լմնցուցինք: Թագւոր դրամը վճարեց եւ խնդիրը փակուեցաւ:

Բայց երիտասարդը միտքը այնպէս դրաւ թէ Կարապետ մօրեղբօրս դրողմովը ըրած է այս բանը:

Ի գո՛ւր ջանացի զինքը Համոզել թէ անհեթեթ ենթադրութիւն մըն էր ըրածը: Չուզեց Համոզուիլ եւ նոյնիսկ այս առթիւ բռնուն վէճ մը ունեցաւ մօրեղբօրս հետ:

Բնականաբար այս դէպքերուն վրայ մեր յարաբերութիւնները խզուեցան, թէեւ ես անձնապէս կը շարունակէի հետը տեսնուիլ, սակայն առաջին օրերու մտերմութիւնը չունէինք:

Ամիսներ յետոյ երբ Քէմալ պէյ յաջորդեց Խայրի Ֆէրուզան պէյի ու Թագւոր անոր քով իբրեւ մատակարար, եւ այլն մտաւ, չէր վարանած այսպիսի ծանր գրպարտութիւն մը ընել մեր վրայ եւ պատճառ ըլլալ որ եօթը հոգի, որոնց մին տղայ մըն էր եւ միւսը կին մը, մինչեւ Տէր-Ջօր աքսոր ղրկուին:

Յետոյ իմացայ որ այդ տխուր արարածը նմանօրինակ ուրիշ մատնութիւններ ալ ըրեր է Համայի մէջ:

Հիմա դառնանք մեր պատմութեան:

Ժամուան մը ճամբորդութենէ ետքը գիշերը ժամը 9ին միջոցները հասանք Հալէպ:

## ՆԱԼԷՊԷՆ ՏԵՐ-ՋՕՐ

Մեզի ընկերացող ոստիկանը ուզեց անմիջապէս մեզի բանտ առաջնորդել: Բայց ի վերջոյ հաւանեցաւ որ գիշերը օթէլ մը անցնենք ու հետեւեալ օր տանի մեզ յանձնելու:

Այս հաւանութիւնը երկու պայմանով տուաւ. նախ դրամական նուէր մը պիտի տայինք իրեն, յետոյ օղի պիտի առնէինք ու միասին խմէինք:

Հետեւեալ առտուն դարձեալ զինքը Համոզեցինք որ մեզ անմիջապէս ոստիկանատուն չտանի՝ այլ թոյլ տայ որ քանի մը ծանօթներ տեսնենք եւ ի փոխարէն խոստացանք Հալէպը ցոյց տալ իրեն:

Արդէն այդ օրը ուրբաթ էր ու բարձր պաշտօնեաները բացակայ էին:

Մինչեւ իրիկուն ազատօրէն շրջեցանք եւ եթէ ուզէինք ամէնքս ալ կրնայինք փախչիլ ու մէյմէկ տեղ ապաստանիլ, որովհետեւ ոստիկանը կատարեալ վստահութիւն ունէր մեր վրայ. ինք սրճարանը կը նստէր, նաուկիլէ կը ծխէր ու մեզ թոյլ կուտար որ ուզած տեղերնիս երթանք:

Բայց մենք բնաւ մտքէ չանցուցինք փախչիլ, որովհետեւ միշտ լաւատես էինք: Կը կարծէինք որ մեր դատը Հալէպի մէջ պիտի տեսնուէր, թէ երաշխաւորութեամբ պիտի կրնայինք ազատ թողուիլ եւ դատերնիս շահելով վերադառնալ տեղերնիս: Մեզի ընկերացող ոստիկանն ալ նոյն համոզումը ունէր, կամ գոնէ այնպէս ցոյց կուտար:

Շաբաթ, ցերեկէն ետքը, ոստիկանը մեզ ժողվեց ու գացինք միւտիւրիէթ որ կը գտնուի Հէնտէք կոչուած մեծ փողոցին վրայ:

Հոն մեր իսկութիւնը ստուգեցին, անուճնիս արձանագրեցին եւ ըսին որ սարայ պիտի երթանք ուր մեր մասին որոշում պիտի տրուէր:

Նոյն միջոցին Հալէպի վալին հրաժարեցուցուած էր եւ նոր վալին տակաւին չէր եկած, ուստի վալիին կը փոխանորդէր ուրիշ բարձրաստիճան պաշտօնեայ մը:

Մեզ ոստիկանին հետ անոր մօտ տարին: Մարդը հարեւանցի ակնարկ մը նետեց մեր մասին գրուած տեղեկագրին վրայ, յետոյ գրիչը առաւ քանի մը տող գրեց թուղթին մէկ ծայրը ու գայն տուաւ ոստիկանին:

Երբ սենեակէն դուրս ելանք հետաքրքիր հարցուցիւք թէ ի՞նչ գրած էր:

– Տէր-Ձօր պիտի երթաք, – ըսաւ ոստիկանը:

Լախտի հարուածի մը պէս այս բառերը իջան մեր գլխին:

Ոստիկանը մեզ տարաւ ժանտարմաներու խօվուշը\* եւ մեզ յանձնեց Հոն գտնուող տասնապետին ու ինք «մնաք բարով» ըսելով մեկնեցաւ:

Ա՛լ ամէն յոյս կորած էր մեզի համար: Պիտի երթայինք այնտեղ որուն անունը, երկու տարիէ ի վեր, ամէն Հայ սոսկումով կ'արտասանէր:

Խօվուշին մէջ մնացինք քանի մը ժամ մինչեւ որ ժանտարմաներու պետը եկաւ մեր անունները արձանագրել տուաւ եւ հրամայեց որ մեզ նէզարէթ կոչուած բանտը տանին որ կը գտնուի սարային մէջ:

Գետնայարկի վրայ երկու մեծ խօվուշներէ բաղկացած է այս բանտը որու դուռը կը բացուի մեծ բակի մը վրայ: Այդ բակին մէջտեղը կայ աւազան մը շուրջը հովանաւոր ծառերով: Բանտարկեալները, օրը երկու անգամ, առտուն եւ իրիկունը, արտօնութիւն ունեւէին այդ բակին մէջ մէյմէկ ժամ պտտելու:

Երբ եկանք բանտ, ճիշդ պտոյտի ժամանակն էր ու բոլոր բանտարկեալները դուրսը կը գտնուէին:

\* Այստեղ՝ զօրանցը:

Բանտին մէջ աղտոտութիւնը, գարշահոտութիւնը անտանելի էր: Գետինը հող, ամէն տեսակ աղբիւսներով\* լեցուած էր. բանտարկեալները յաճախ իրենց բնական պէտքը կը գոհացնէին հո՛ն եւ ճէմիշի\*\* հոտ մը կուգար ամէն կողմէ:

Հազիւ թէ ներս մտանք՝ գարշանքով դուրս նետեցինք ինքզինքնիս:

Ի՞նչպէս պիտի անցնէինք գիշերը այդ աղտոտութեան մէջ: Հիմա Տէր-Ձօրը մոռցած ատիկա կը խորհէինք: Բանտարկեալներուն մեծ մասը աղտոտ Արաբներ, զինուորական փախստականներ, գողեր, աւազակներ, ամէն մէկը մէյ մէկ ոջիլի բոյն եւ այնքան ալ շատ էին որ պիտի ստիպուէինք կողք կողքի սեղմուած նստիլ անոնց հետ:

Մերունի, մաքուր հագուած բանտարկեալ մը զոր նախ թուրք կարծած էինք, մեր շփոթութիւնը տեսնելով մօտեցաւ քովերնիս:

- Բարի եկաք, – ըսաւ:
- Բարի տեսանք:
- Ուսկի՞ց կուգաք:
- Քանի մը բառով պատմեցինք մեր պատմութիւնը:
- Մենք ալ Տէր-Ձօր կ'աքսորուինք կոր, ըսաւ ծերունին, ես զաւակս եւ ուրիշ հինգ հոգի... միասին պիտի ճամբորդենք:
- Այո՛, բայց այս բանտին մէջ ի՞նչպէս կարելի է մնալ:
- Անկարելի բան է, – պատասխանեց:
- Դուք ինչպէ՞ս կ'ընէք կոր:
- Մենք դուրսը բակին մէջ կը պառկինք:
- Ի՞նչպէս կարելի է այդ բանը:
- Պարզապէս բանտապետը կաշառելով:
- Խնդրեցինք իրմէ որ մեր կողմէն այս մասին բանակցի անմիջապէս բանտապետին հետ:
- Հաւանեցաւ ու քիչ յետոյ եկաւ ըսաւ թէ մէկ գիշերուան

\* Աղտեղութիւններով:

\*\* Արտաքնցի:

համար յիսուն զրուշ արծաթ վճարելով պիտի կրնայինք դուրսը մնալ ու բակը պառկիլ երեք հոգի, այսինքն ես, մօրեղբայրս եւ կարապետը: Իսկ այս վերջնոյն երեք եղբայրները եւ քոյրը զատ բանտ մը տարած էին:

Մերունին եօթանասունը անցած մարդ մըն էր, բնիկ քիլիսցի Գէորգ Քէշիշեան կամ Քէշիշ օղլու անունով ազարակատէր, որ պատերազմի միջոցին փայտի միւթահիտ եղած էր:

Իր գործի տեղն է եղեր Իսլահիէէն քիշ մը անդին գտնուած էքպէշ Մէյտանի կոչուած կայարանը: Թշնամիներ զինքը կ'ամբաստանեն իբրեւ Հնչակեան կուսակցութեան գանձապետ եւ միանգամայն օգնող եւ կիրարկող նոյն միջոցին Իսլահիէի կողմերը ասպատակող հրոսապետ թօփալ Յակոբի ու իր ընկերներուն:

Այսպիսի ծանր ամբաստանութիւն մը կրնար զինքը մինչեւ կախաղան բարձրացնել. բարեբախտաբար ինք ու իր զաւակը Անդրէաս Տէր-Չօր աքսորի դատապարտուելով ազատած էին, ինչ որ մեծ բարեբախտութիւն մը կը համարէին:

Իրենցմէ զատ Տէր-Չօր աքսորի դատապարտուած էին ուրիշ երկու քիլիսցիներ, Ալի Ռիզա եւ Թէվֆիք, երկուքն ալ իսլամացած Հայեր, ուրիշ քիլիսցի բողոքական մը Սիմոն անուն որոնք նոյնպէս ամբաստանուած էին իբրեւ յեղափոխական եւ հրոսախումբերու օժանդակ:

Յետոյ կար հալէպցի երիտասարդ մը Ստեփան Կարիկեան անուն: Այս անձը տարի մը առաջ ձերբակալուած ու բանտարկուած էր ուրիշ 80-100 անձերու հետ որոնց մէջ կը գտնուէր նաեւ առաջնորդական փոխանորդ տէր Յարութիւն քահանան: Ասոնք ամբաստանուած էին թէ՛ դրամ հաւաքելով զէնք գնած են Հայ չէթէական խումբեր կազմելու համար: Իրենցմէ մեծ մասը մահուան դատապարտուած էին բայց պատիժը չէր գործադրուած, մէկ մասն ալ տարի մը բանտարկուած մնալէ ետքը իբրեւ անմեղ ազատ թողուած էին, այս վերջիններէն է եղեր Ստեփան որ ազատ թողուելէ քիշ յետոյ կրկին կը ձերբակալուի, կը բանտարկուի եւ Տէր-Չօր աքսոր զրկուելու որոշում կը տրուի:

Կար նաեւ խեղճ աղքատ մարդ մը, արհեստով ոսկերիչ, Յակոբ անուն որ իբրեւ զինուորական փախստական ամբաստանուած էր, թէեւ ծառայութեան տարիքը անցուցած որ նոյնպէս Տէր-Չօր պիտի զրկուէր: Այսպէս ուրեմն մեր կարաւանը կը բաղկանար 14 հոգիէ:

Հետեւեալ օրը, կիրակի, ժանտարմայի չավուշ մը եկաւ ըսաւ թէ պատրաստութիւննիս պէտք էր տեսնէինք երկուշաբթի ճամբայ ելլելու համար:

Տասնչորս հոգիի համար առնուազն հարկ էր երեք կառք վարձել:

Ոստիկանները կառապան մը բերին որպէսզի հետը սակարկութիւն ընենք:

Երեք կառքի համար 90 ոսկի թղթադրամի համաձայնեցանք: Միայն թէ խնդիրը այն էր որ մեր մէջ կային մէկ քանիներ որոնք նիւթապէս անկարող էին կառքի վարձք վճարելու:

– Մենք կառքի դրամ չունինք ոտքով կ'երթանք, – կ'ըսէին:

Մենք ալ չավուշին ըսինք որ դրամ ունեցողները թող կառք նստին իսկ միւսները զատ խումբ մը կազմեն ու ոտքով երթան:

– Չըլլար, – ըսաւ չավուշը, – կա՛մ ամէնքդ ալ կառքով կ'երթաք, կա՛մ ամէնքդ ալ ոտքով:

– Ուրեմն ինչպէ՞ս ընենք:

– Թո՛ղ դրամ ունեցողները վճարեն նաեւ չունեցողներուն բաժինը:

Փորձառութեամբ գիտէինք որ ընդդիմութիւն կամ վիճաբանութիւն անօգուտ էր, ուստի գլուխ ծռեցինք:

Հիմա կը մնար ափյափոյ ճամբորդութեան պատրաստութիւններ տեսնել:

Գէորգ աղա Քէշիշեան յանձնարարեց շատ բեռ չառնել հետերնիս.

– Ճամբաները ապահով չեն, – ըսաւ, – հաւանական է որ կողոպտուիք, ասկէ շատ բեռը մեր վրայ ուշադրութիւն կը հրաւիրէ:

Մեզի ընկերացող ուստիկաններն ալ երբոր տեսնեն թէ բեռներով կը ճամբորդենք, պիտի ենթադրեն թէ շատ դրամ ունինք ու պիտի ուզեն մեզ շահագործել:

Հետեւեցանք իր տուած խորհուրդին ու միայն անհրաժեշտ գոյքերնիս առինք ու մնացածը թողուցինք իբրեւ աւանդ Հալէպցի բարեկամի մը պ. Ռուբէն Աթեանի քով որ եկած էր բանտին մէջ մեզ տեսնելու:

Գէորգ աղա դիտել տուաւ նաեւ որ եւրոպական տարազով ճամբորդելն ալ կրնար ուշադրութիւն գրաւել, ուստի ես եւ մօրեղբայրս մէյմէկ արարական ճէլէպիէ\* գնեցինք ու Հագանք, մեր միւս ընկերները արդէն տեղական տարազ կը կրէին, բացի Ստեփանէն որ երկաթուղիի պաշտօնեայի Համազգեստ ունէր իբրեւ ընկերութեան նախկին պաշտօնեայ:

Բոլոր այս պատրաստութիւնները կը տեսնուէին Հոգեկան ընկճուած դրութեան մէջ:

Հալէպցի մէկ քանի բարեկամներ, որոնք եկած էին բանտ, կը ջանային մեզ մխիթարել, ըսելով որ այլեւս ջարդերը վերջ գտած են եւ թէ մեծ Հաւանականութիւն կար որ ողջ Հասնէինք Տէր-Ջօր:

Նոյն միջոցին, քանի մը ամիսէ ի վեր, Պաղտատ ինկած էր Անգլիացիներուն ձեռքը:

Իբրեւ յոյսի յետին նշոյլ կը խորհէինք որ Տէր-Ջօր Հասնէի ետքը թերեւս յաջողէինք ինքզինքնիս Պաղտատ նետել ու միանգամ ընդմիջտ ազատիլ մեր մղձաւանջային կեանքէն:

Երկուշաբթի առտու կազմ ու պատրաստ կը սպասէինք ճամբայ ելլելու Համար:

Բայց կառքերը դեռ չէին եկած: Վերջապէս ուստիկանները գացին ու բռնի բերել տուին կառքերը. կ'երեւայ թէ կառպանները լաւագոյն յաճախորդներ գտած էին:

Մեր գոյքերը տեղաւորեցինք ու մենք ալ բազմեցանք կառքերուն մէջ որոնք երկուքը զսպանակաւոր էին ու վրանին մոտ լաթով մը գոցուած, իսկ մին մեծ սայլակ մըն էր:

\* Տղամարդու երկարաքղանցք շապիկ, հագուստ:

Մեզի պիտի ընկերանային վեց Հեծեալ ուստիկան:

Ժանտարմաներու Հավուշը մեզ պաշտօնապէս յանձնեց Հեծեալ ուստիկաններու տասնապետին:

— Պէտք է որ ձեռքերնին քէլէփչէ անցնենք,— ըսաւ այս վերջինը,— եթէ ո՛չ ես պատասխանատուութիւն չեմ ստանձներ:

— Ասիկա քու գիտնալիք բանդ է,— պատասխանեց Հավուշը:

Ի գո՛ւր խնդրեցինք որ այդ աւելորդ տանջանքը խնայէին մեզի:

— Թէ որ փախչիք՝ ես ի՞նչ պիտի ընեմ,— կ'ըսէր:

— Բայց ինչպէ՞ս կրնանք փախչիլ վեց զինեալ ուստիկաններուն մէջէն:

— Ջրլլար, պէտք է քէլէփչէ դրուի:

Եւ Հրամայեց որ երթան տասներկու քէլէփչէ բերեն: Տասնապետը կը Հաւանէր քէլէփչէ չանցընել մեզ Հետ աքսորուող կնոջ ու Ճէպրային՝ որ 14 տարեկան տղայ մըն էր:

Քիչ յետոյ ուստիկանը եկաւ Հետը բերելով երեք քէլէփճէ:

— Ի՞նչ է աս,— գոչեց տասնապետը բարկութեամբ,

— Ասկէ ուրիշ քէլէփճէ չի կայ եղբր,— պատասխանեց միւսը:

Եւ որովհետեւ կարելի չէր 12 Հոգիի Համար երեք քէլէփճէ գործածել, տասնապետը ստիպուեցաւ Հրաժարիլ իր մտադրութենէն:

— Վա՛յ եթէ փախչելու փորձ ընէք,— սպառնաց մեզի ու Հրամայեց որ կառքերը ճամբայ ելլեն:

Ուստիկանները ցատքեցին իրենց ձիերուն վրայ: Ամէն մէկ կառքին քովէն կ'երթային երկու ուստիկան Հրացանները կազմ ու պատրաստ ծունկներուն վրայ դրած, իբր թէ ամէնքս ալ վտանգաւոր ոճրագործներ ըլլայինք:

Հանդիսաւոր թափորը այսպէս անցաւ Հէնտէք կոչուած մեծ փողոցէն: Կէսօրի մօտ էր եւ անցորդները բազմաթիւ էին: Ամէնքը կեցած՝ Հետաքրքիր կը դիտէին մեր անցքը: Նշմարեցինք

քանի մը ծանօթ Հայեր որ մեզ ճանչցան ու գլուխին անդին դարձուցին, թերեւս վախնալով որ զիրենք կը բարեւենք կամ իրենց խօսք մը կ'ուղղենք:

Կէս ժամ ետքը արդէն իսկ քաղքէն դուրս ելած էինք ու բաց դաշտին մէջ կը յառաջանայինք ծառաշատ պարտէզներուն մէջէն:

Հետզհետէ ամայութիւնը կը տիրէր մեր շուրջը, Հալէպ աներեւոյթ կ'ըլլար մեր աչքերէն, միայն միջնաբերդն էր որ տակաւին կը շարունակէինք տեսնել:

Իրիկուան դէմ հասանք արաբական գիւղ մը ուր պիտի գիշերէինք:

Մեզի տարին աղտոտ սենեակ մը ու դուռը վրանուս գոցեցին:

Յետոյ մեզի ընկերացող ոստիկաններէն մէկը եկաւ եւ ըսաւ.  
– Տասնապետը, Օսման էֆէնտի ըսաւ որ վեց մէծիտիէ պիտի տաք:

– Ի՞նչ բանի համար:

– Ձիերու գարիի դրամ:

– Բայց ինչո՞ւ մենք պիտի վճարենք ձեր ձիերուն դրամը:

– Կանոնը այսպէս է, Օսման էֆէնտի անանկ ըսաւ, եթէ չէք ուզեր տալ, աղէկ, երթամ իրեն ըսեմ:

Եւ պատրաստուեցաւ դուրս ելլելու.

– Կեցիր, ո՞ւր կ'երթաս, – գոչեցինք:

Ու անմիջապէս մէջերնիս հաւաքեցինք վեց մէծիտիէ ու տուինք ոստիկանին:

Այսպէս փակուեցաւ խնդիրը:

Հետեւեալ առտու կանուխ, արշալոյսին, ճամբայ ելանք եւ ուշ ատեն հասանք Մէսքէնէ, Եփրատի եզերքը, զինուորակած կայան մը, աւազուտ անապատի մը մէջ:

Գետին եզերքը կ'երեւային Հայ տարագիրներու բազմաթիւ վրաններ:

Նորէն մեզի տարան սենեակ մը եւ փակեցին:

Ոստիկանը, յանուն տասնապետին, դարձեալ ձիերուն գարիին համար վեց մէծիտիէ առաւ մենէ: Այս տուգանքը ստիպուեցանք վճարել մինչեւ Տէր-Ջօր:

Առտուն կանուխ մէկ քանի Հայ տարագիրներ մօտեցան մեզի եւ կրցանք քանի մը խօսք փոխանակել:

– Քանի՞ հոգի մնացած էք հոս, – հարցուցի:

– Առաջ շատ էինք, բայց հիմա հազիւ 1500 հոգի կանք, – պատասխանեց:

– Ո՞ւր գացին միւսները:

– Մէկ մասը յաջողեցաւ փախչիլ եւ դառնալ Հալէպ, իսկ մեծ մասը քշուեցաւ դէպի Տէր-Ջօր իսկ մեծագոյն մասն ալ հոս հիւանդութենէ ու խեղճութենէ մեռաւ:

– Դուք ինչպէ՞ս մնացիք:

– Մենք ճամբու շինութեան կ'աշխատինք, անոր համար արտօնուած ենք հոս մնալու:

– Իսկ երբ ճամբու շինութիւնը աւարտի՞:

– Ձենք գիտեր ի՞նչ պիտի ըլլանք, հաւանօրէն մենք ալ Տէր-Ջօր պիտի ղրկուինք, բայց ճամբու շինութիւնը երկար կը տեւէ, որովհետեւ մէկ կողմէն կը շինենք միւս կողմէ կ'աւրուի:

Խօսակիցս ըսաւ նաեւ որ Հայ փռապաններ, հացագործներ ու նպարավաճառներ ալ կը գտնուին Մէսքէնէ, որոնք կա՛մ կաշառքով, կա՛մ ո եւ է միջոցաւ յաջողած են հոն մնալ:

Շատ կանուխ ճամբայ ելանք ու մեր ուղեւորութիւնը շարունակեցինք Եփրատի եզերքէն:

Յերեկուան մօտ կանգ առինք գետեզրը եւ երեք ժամ հանդիստ տուինք ձիերուն:

Այս դադարէն օգտուելով՝ մէկ քանիներս գացինք Եփրատի մէջ լոգնալու: Օրերէ ի վեր յոգնած ու աղտոտած՝ այս լոգանքը հեշտալի բան մը եղաւ մեզի համար եւ կազդուրեց ու զուարթացուց մեզ: Թէեւ տակաւին մայիսի սկիզբն էինք բայց տաքերը սկսած էին այդ կողմերը եւ ցերեկը շատ կը նեղուէինք, բարեբախտաբար միշտ Եփրատը ունէինք մեր քովը որուն ջուրերուն զովութիւնը կ'ամոքէր արեւուն տապը:

Շատ մեծ հաճոյք մըն էր նաեւ ըմպել Եփրատի ջուրէն: Այդ ջուրը թէեւ պղտոր, հողէ ամաններու մէջ քիչ մը հանգչելէ ետքը ջինջ ու վճիտ կը դառնար:

Արեւը իր զօրութիւնը կորսնցնելէ ետքը, ճամբայ ելանք եւ ուշ ատեն հասանք խան մը ուր եւ գիշերեցինք:

Ճամբորդութիւնը այդ նախնական կառքերով անտանելի էր. պարզապէս ջարդ ու փշուր կ'ընէր մեր ոսկորները: Մեր կառքերուն մէջ հազիւ չորս հոգի կրնայինք նստիլ, այն ալ սեղմուած վիճակի մէջ, բայց դժբախտաբար պարտաւոր էինք տեղ տալ, եւ լաւագոյն տեղը, երկերկու ոստիկաններու, որովհետեւ ասոնք, իրենց ձիերը չյոգնեցնելու համար մեր կառքերը կը նստէին: Եւ յետոյ կառքին մէջէն, պէտք էր բռնել նաեւ իրենց ձիերուն սանձը որպէսզի չփախչին: Յաճախ առտունները եւ իրիկունները մանաւանդ, երբ արեւին տաքութիւնը մեղմ է, կը նախընտրէինք ոտքով երթալ քան թէ կառք նստիլ:

Այդ պարագային՝ ստիպուած էինք կառքին շատ մօտէն քալել, որպէսզի ոստիկանները կարենային մեր վրայ հսկել իրենց նստած տեղէն:

Չորրորդ իրիկունը հասանք Համմամ, միշտ Եփրատի եզերքը եւ առաջնորդուեցանք խան մը զոր Հայ տարագիրներ շինած էին:

Գիտէինք որ բաւական թիւով Հայեր կային հոն, տուներու մէջ եւ վրաններու ներքեւ, բայց ինչպէ՞ս հետերնին տեսնուիլ:

Ըստ սովորութեան մեզ տարին վերնայարկի սենեակ մը եւ դուռը վրանուս գոցեցին: Պատուհանը սակայն փողոցին վրայ կը նայէր: Օգտուեցայ այդ պարագայէն ու պատուհանին առջեւ գացի, յուսալով որ ծանօթ դէմք մը կը նշմարեմ:

Քանի մը երիտասարդներ, վարը կեցած, պիշ պիշ դէպի մեր պատուհանը կը նայէին. յայտնի էր որ Հայ տարագիրներ էին: Իրենցմէ մին գիտ ճանչցաւ.

– Երուանդ Օտեա՞նն ես, – հարցուց:

– Այո՛, – պատասխանեցի:

– Ո՛ր կը տանին ձեզ:

– Տէր-Զօր...

Երիտասարդը տխրութեամբ գլուխը օրօրեց:

– Քանի՞ հոգի էք:

– Տասնը չորս հոգի, որոնց մէկը կին է:

Դեռ խօսակցութիւնը պիտի շարունակէինք անշուշտ, երբ դուռը բացուեցաւ, տասնապետը ներս մտաւ ու տեսնելով որ պատուհանէն կը խօսակցիմ, վրաս խուժեց ու կատաղաբար թեւէս քաշելով տարաւ սենեակին անկիւնը եւ հրամայեց տեղէս չչարժիլ:

Յետոյ կանչեց խանին տէրը եւ ըսաւ որ պէտք էր փայտ բերիլ ու պատուհանը գոցել բոլորովին: Հրամանը գործադրուեցաւ իսկոյն:

Հետեւեալ առտու կառքերը նստած ճամբայ պիտի ելլէինք, բայց ոստիկանները ասդին անդին ցրուած էին, մէկը միայն կը հսկէր մեր վրայ:

Այս ալ չեմ գիտեր ի՞նչ պատճառով պահ մը հեռացաւ մեր քովէն:

Այն ատեն քիչ մը հեռուն կեցող մէկ քանի երիտասարդներէն երկուքը վազեցին եկան իմ կառքիս մօտ: Նոյն միջոցին, կառքին մէջ, նառկիլէ ծխելու զբաղած էի:

– Բարեւ, Օտեան, – գոչեցին երկուքն ալ իրենց ձեռքերը երկարելով:

Նախ չճանչցայ զիրենք, այնքան փոխուած, նիհարցած ու սեւցած էին:

– Հայկ Կօչկարեանն եմ, – ըսաւ մին:

– Սահակ Մեսրոպն եմ, – ըսաւ միւսը:

– Ի՞նչ կ'ընէք այստեղ, – հարցուցի:

– Ես տարիէն աւելի է որ հոս եմ, – պատասխանեց Հայկ, – իսկ Սահակ Մեսրոպ նոր եկաւ:

Երկուքն ալ վաղեմի բարեկամներ էին: Հայկ Կօչկարեան դրավաճառ հրատարակիչ էր որ «Կիկօ»ն կը հրատարակէր եւ որ իմ ալ մէկ քանի գործերս հրապարակ հանած է:

Տարագրութեան մէջ անգամ մը հանդիպած էի իրենց Հասան Պէյլի, բայց անկէ ի վեր որեւէ տեղեկութիւն չունէի իրենց մասին:

Իսկ Սահակ Մեսրոպի աքսորուիլը չէի իմացած եւ զինքը Պոլիս կ'ենթադրէի:

— Իցի՛ւ թէ երէկ գիշեր կարենայինք քեզի տեսնել,— ըսաւ Մեսրոպ,— թերեւս կը յաջողէինք քեզ ազատել ու հոս վար դնել:

— Ի՞նչ կերպով:

— Սուտ հիւանդ կը ձեւանայիր, ճամբորդելու անկարող վիճակի մէջ, բնականաբար զինուորական բժիշկը պիտի կանչէին քեզ տեսնելու համար... բժիշկը մեր բարեկամն է, մեր ուզածին պէս տեղեկագիր մը կ'առնէինք իրմէ:

— Հիմա փորձէ՛ յանկարծ հիւանդանալ,— խորհուրդ տուաւ Հայկ Կոչկարեան:

Բայց նոյն միջոցին բնա՛ւ հիւանդի երեւոյթ չունէի: Կառքին մէջ բազմած նառկիլէ կը ծխէի:

Արդէն նոյն վայրկեանին իսկ ոստիկանները հասան ու մեր խօսակցութիւնը վերջ գտաւ:

— Փորձէ՛ փախչիլ Տէր-Չօրէն ու հոս գալ: Այս եղաւ բարեկամներուս ինծի ուղղած վերջին խրատականը:

Գեղեցիկ խրատ արդարեւ բայց գործադրութիւնը դժուար: Համամ գտնուող Հայերը որոնք իմացած էին Հայ աքսորականներու անցքը, եկած խոնուած էին խանին առջեւ գտնուած հրապարակը եւ հետաքրքիր ու տխուր մեզ կը դիտէին:

Կառքերը ճամբայ ելան: Ոստիկանները կ'ուզէին կարելի եղածին չափ արագ քշել կառքերը նոյն իրիկունն իսկ հասնելու համար Ջիպնէ որ Տէր-Չօրի սահմանադիւխին ծայրը, Եփրատի եզերքը փոքրիկ քաղաք մըն է: Հո՛ն պիտի վերջանար իրենց պաշտօնը, մեզի պիտի յանձնէին Չօրի ոստիկանութեան եւ իրենք պիտի վերադառնային Հալէպ: Այս պատճառաւ կառքերը գրեթէ վազն ի վազ կ'ընթանային, ջարդ ու փշուր ընելով մեր ոսկորները:

Յերեկը հազիւ մէկուկէս ժամ հանգիստ ըրինք ու յետոյ նոյն արագութեամբ ճամբանիս շարունակեցինք:

Հազիւ թէ Ջիպնէի երկու ժամ մնացած էր ոստիկանները կառքերը կեցուցին: Յետոյ Մուսթաֆա, որ դրամական խնդիրներու մասին մեզի հետ բանակցող ոստիկանն էր, մօտեցաւ մեզի եւ ըսաւ.

— Վեց ոսկի պիտի վճարէք:

Չմոռնամ յիշելու թէ՛ ամէն անգամ որ ոսկիի խօսք կ'ընեմ, պէտք է հասկնալ հնչուն ոսկեդրամ եւ ո՛չ թէ թղթադրամ, որ գործածական չէր ո՛չ Հալէպ եւ ո՛չ ալ Չօրի մէջ: Թղթադրամ ունեցողը պէտք էր որ զայն վերածէր հնչուն դրամի ու յետոյ գործածէր:

— Ի՞նչ դրամ է այդ,— հարցուցինք զարմացած:

— Ձեզի ողջ առողջ մինչեւ հոս բերինք՝ միթէ պէտք չէ՞ որ մեզի նուէր մը տաք:

Մերունի Քէշիշ օղլու որ ազա՛հ ու միանգամայն համարձակախօս եւ յամառ մարդ մըն էր պատասխանեց.

— Ձեր պարտականութիւնն էր այդ:

— Ի՞նչ պարտականութիւն,— գոչեց Մուսթաֆա,— եթէ ձեզի ճամբան սպաննէինք՝ ո՞վ մենէ հաշի՞ւ պիտի պահանջէր:

— Անշուշտ պիտի պահանջէին,— պնդեց ծերուկը:

— Կրնայինք ըսել որ էնէզի Արաբները յարձակեցան ու ձեզ սպաննեցին, կամ փախչիլ փորձեցիք ու մենք ալ ստիպուեցանք ձեզ հրացանի բռնել, կը կարծէք որ 10-15 Հայու համար մենէ հաշիւ պիտի պահանջէին... երկար մի՛ ընէք տուէ՛ք սա վեց ոսկին, ապա թէ ո՛չ ետքը գէշ կ'ըլլայ:

Լեռներու մէջ ամայի տեղ մը կը գտնուէինք: Կարելի չէր ո՛ր եւ է ընդդիմութիւն:

Մերուկը լռեց եւ հանգանակութեան սկսաւ:

— Ձիերուն գարիի դրամը զատ է,— դիտել տուաւ Մուսթաֆա:

Վեց մէծիտիէ եւս ձիերուն համար վճարեցինք եւ ազատեցանք:

կառքերը ճամբայ ելան: Արեւը մարը մտած էր երբոր հասանք Ջիպնէ:

Հիմա Ջօրի սահմանը մտած էինք:

Ուղղակի գացինք սարայ, այսինքն մէկ քանի աղտոտ ախոռներէ բաղկացած շէնք մը, խոշոր բակով մը որ բարձր պատերով շրջապատուած է:

Հալէպէն մեզի ընկերացող ոստիկան տասնապետը պաշտօնապէս մեզի յանձնեց Ջիպնէի ոստիկաններու յիսնապետին:

Մեր ինքնութիւնները մէկիկ մէկիկ քննուեցան, յետոյ տասնապետը յանձնեց նաեւ գիրքերու եւ թուղթերու ծրարը որ Համայէն մեզի հետ կը ճամբորդէր:

Այդ ծրարը ենթադրել կուտար թէ մեր դատը թերեւս Տէր-Ջօրի մէջ պիտի տեսնուէր: Հակառակ պարագային ի՞նչ հարկ կար բեռ ընել զանոնք Համայէն մինչեւ Տէր-Ջօր:

Պաշտօնական ձեւակերպութիւնները աւարտելէ ետքը, մեզի ընկերացող ոստիկանները հեռացան, իսկ մեզ տարին թխմեցին ամենազարշելի փոքրիկ բանտ մը որ արդէն լեցած էր աղտոտ, կիսամերկ Արաքներով: Բայց ա՛լ վարժուած էինք այդ կեանքին ու միջավայրին: Առանց շատ ազդուելու հոն տիրող գարշութեանէն, փրզինիս\* փռեցինք գետինը ու գէշ աղէկ քնացանք մինչեւ արշալոյս:

Առտուն կանուխ մեզ բանտէն հանեցին ու քով քովի շարեցին:

— Սպասեցէ՛ք, — ըսին, — հիմա առողջապահութեան պաշտօնեան պիտի գայ ձեզ քննելու:

Կէս ժամ սպասելէ ետքը, վերջապէս եկաւ այդ առողջապահութեան պաշտօնեան որ ողորմելի ու թափթփած մարդ մըն էր: Հարեւանցի քննութենէ մը ետքը, ուզեց մեզ պատուաստել թիֆլուսի եւ քօլէրայի դէմ:

Ուզեցինք ընդդիմանալ, վախնալով որ սխալ բան մը կ'ընէ ու գլխոնուս փորձանք մը կը բանայ, բայց ժանտարմայի հրա՛

\* Գրչերս, լաթերս:

մանատարը որ հո՛ն ներկայ էր, սպառնացաւ մեզ ծեծել տալու եթէ անմիջապէս տեղի չտայինք:

Ու ահա մէկիկ մէկիկ պատուաստեցանք:

Հագիւ թէ այս գործողութիւնը աւարտած էր՝ իսկոյն մեզ կառք դրին ու ճամբայ ելանք:

Այս անգամ միայն ձիաւոր հեծեալ ոստիկան տասնապետ մը եւ ոստիկան մը կ'ընկերանային մեզի:

Ցերեկը թիպնէ կոչուած գիւղը երկու ժամի չափ հանգստանալէ ետքը, կրկին ճամբանիս շարունակեցինք եւ ուշ ատեն հասանք Տէր-Ջօր:

Քաղաքը, հեռուէն, լաւ տպաւորութիւն մը ըրաւ վրանիս, շուրջը ամբողջ ծառաշատ պարտէզներով շրջապատուած էր որ մեզ կը յիշեցնէր Համան: Լայն պողոտայէ մը մտանք ներս, առաջին շէնքը գոր նշմարեցինք խոշոր զօրանոց մըն էր, քարաշէն ու բաւական նոր, յետոյ կուգար թաղապետական հիւանդանոցը պարտէզի մէջ, աւելի նոր շէնք մը, յետոյ անցանք զինուորական իշխանութեան շէնքին առջեւէն, հարուստ Ասորիի մը մասնաւոր տունը գոր պատերազմի առթիւ գրաւած էին:

Անցնելէ ետքը քաղաքապետարանէն, որ նոյնպէս նոր շէնք մըն է, մեծ պարտէզով մը, որուն մէջտեղ սրճարան մը շինուած է դարաստափով մը, հասանք շուկան ու դէպի ձախ դառնալով եկանք սարայ ուր կը գտնուին բանտը եւ ոստիկանատունը, այսինքն ամբողջ թրքական իշխանութիւնը:

Սարայը ընդարձակ, քառակուսի շէնք մըն էր, մէջտեղը շատ խոշոր բակով մը ուր քսանի չափ ծառեր կային, ցիրուցան:

Կառքերը կեցան ժանտարմուռի յարկաբաժնին առջեւ ուր վար իջանք ու մեր բեռներն ալ իջեցուցինք:

Մեզի ընկերացող ոստիկաններու տասնապետը մեզ յանձնեց քօմիսէր մուսավիխիին\* որ ամէն մէկերնուս ինքնութիւնը ստուգելէ յետոյ, ըսաւ որ առայժմ հոն պիտի մնայինք, այսինքն բակը, բաց օդին, հողին վրայ:

\* Օգնակահան, տեղակալիս:



— Ա՛ս տեղէն չչարժիք, — հրամայեց, — եթէ բնական պէտք մը ունենաք իմաց տուէ՛ք ձեր վրայ հսկող ոստիկանին:

Արդարեւ մասնաւոր պահակ մը հրացանը ուսը, եկաւ մեր մօտ հսկողութեան:

Մուտք բոլորովին պատած էր մեր շուրջը: Մեր անկողինները փոփոցինք գետին, քիչ մը բան կերանք ու երկնցանք մեր անկողիններուն վրայ:

Վեցօրեայ կառքով ուղեւորութիւնը, ամենայնուրեւ պայմաններու մէջ, մեզ չարաչար յոգնեցուցած էր:

Երիտասարդ ոստիկան մը որ յաճախ կ'անցնէր, կը դառնար մեր քովէն, անգամ մը ըսաւ հայերէն լեզուով.

— Մի՛ վախնաք, բան չի կայ, հոս պիտի մնաք...

Այս բառերը ոստիկանի մը կողմէ եւ հայերէն լեզուով արտասանուած, բաւական սրտապնդեցին մեզ: Կը զարմանայինք թէ ինչպէ՞ս Տէր-Ջօրի մէջ Հայ ոստիկան մը կը գտնուէր:

Երբ ուրիշ անգամ մը կրկին կ'անցնէր՝ զինքը մեր մօտ հրաւիրեցինք ու սիկառէթ հրամցուցինք:

— Դուն Հա՛յ ես, — եղաւ մեր առաջին հարցումը:

— Չէ՛, — պատասխանեց, — թուրք եմ, բայց հայերէն գիտեմ: Եւ բացատրեց թէ այնթապցի ըլլալով՝ հոն Հայերու մէջ շատ ապրած էր ու կրցած էր սորվիլ մեր լեզուն:

— Ինչո՞ւ կ'ըսես թէ հոս պիտի մնանք...

— Որովհետեւ ա՛յ սէվքիաթը վերջացած է, ձեռն առաջ եկող աքսորեալներն ալ հոս մնացին: Նոր միւթէսարը՞ք որ այնթապցի է, լաւ մարդ մըն է:

— Ե՞րբ մեզի կ'արձակեն:

— Հաւանականաբար վաղը, երբոր սէր քօմիսէրը գայ:

— Դիւրաւ տուն կրնա՞նք գտնել քաղքին մէջ:

— Տուն չա՛տ, ուզածնուդ չափ:

Վերջապէս մեզի հետաքրքրող կարգ մը տեղեկութիւններ տուաւ մեզի ու մեկնեցաւ:

Այս տեսակցութիւնը, որքան ալ աննշան, սփոփանք մը է

ղաւ մեզի համար ու հանգիստ քնացանք այդ գիշերը, ապագային համար լաւատես, որչափ որ մեր վիճակին մէջ գտնուող մէկը կրնայ լաւատես ըլլալ:

Հետեւեալ առտու մեզի փոխադրեցին դիմացի կողմը, աւերակ շէնքի մը մէջ որ ձեղուն եւ պատուհան չունէր, ուր սակայն քիչ մը պատսպարուած էինք արեւէն, բայց ասոր փոխարէն ճիշդ մօտը կը գտնուէինք ճեմիչներուն ուրկէ սարսափելի գարշահոտութիւն մը կը բուրէր:

Իրիկուան դէմ ոստիկան մը եկաւ եւ ըսաւ որ ամէնքս սէր քօմիսէրին պիտի ներկայանայինք: Մեր 14էն գատ նոյն օրը մեզի մօտ բերուած էին նաեւ մէկ քանի կիներ, տղաք եւ երկու մարդիկ: Կարծեմ Ռաքքայէն կուգային:

Մէր քօմիսէրը իր գրասենեակին դրան առջեւ կեցած էր, քովը մուկներ եւ մէկ քանի ոստիկաններ:

Գիտէինք որ ինքն էր, նախորդ միւթէսարը՞քին հետ, Տէր-Ջօրի ահռելի ջարդերը կազմակերպողը:

Այնթապը Մուսթաֆա պէյ, այս էր իր անունը, քառասուն տարեկան ըլլալ կը թուէր: Արտաքին կերպարանքը չէր մատնոր ներքին հրէշը. ընդհակառակը կարելի էր զինքը գեղեցիկ մարդ մը համարել:

Մի առ մի հարցաքննեց ամէնքս: Կարգը եկաւ ինծի.

— Անունդ ի՞նչ է:

— Ազիզ Նուրի, — պատասխանեցի:

— Մըր տեղացի ես:

— Պոլսեցի:

— Թէսքէրէ ունի՞ս:

— Ահաւասիկ:

— Իսլամ ես եղեր հա՞, — ըսաւ քմծիծաղով մը:

— Այո՛, ամէնքս ալ եղած ենք, — պատասխանեցի:

— Է՛յ, — ըսաւ սէր քօմիսէրը հեգնօրէն, — իսլամութեան պայմանները քանի՞ հատ են:

— Հինգ հատ, — պատասխանեցի:

- Որո՞նք են...
- Ուխտագնացութիւն, աղօթք, ողորմութիւն... ուրիշ երկու հատ ալ կայ, բայց միտքս չի գար կոր:
- Ի՞նչպէս կ'ըլլայ որ չես գիտեր:
- Ի՞նչ ընեմ, չտորվեցուցին որ գիտնամ:
- Յետոյ ուշադրութեամբ դէմքիս նայելով ու պիտերուս ակնարկելով որոնք կարճ կտրած էի, աւելցուց.
- Ո՞ր գիրքին մէջ գրուած է որ պիտերդ այդպէս կտրես... Ինճիւր Շէրիֆի՞ մէջ:
- Վերջին անգամ երբոր էնվէր փաշա Համայէն անցաւ, տեսայ որ պիտերը կտրած էր, ես ալ իրեն օրինակին հետեւեցայ, պատասխանեցի:
- Հիմա սա իսլամութիւնդ մէկ կողմ դիր եւ հին անունդ ըսէ տեսնենք:
- Երուանդ Օտեան:
- Արհեստդ ի՞նչ է:
- Լամպաճի:
- Ինչպէ՞ս լամպաճի, դուն խմբագիր չե՞ս, «Ժամանակ» թերթին խմբագիրը:
- Երբեմն կը գրէի «Ժամանակ»ին մէջ, քէյֆի համար, բայց բո՛ւն արհեստս լամպաճիութիւն է:
- Տեղդ գնա՛:
- Եւ ուրիշ մը կանչեց: Ամէնուն ալ հարցաքննութիւնը գրեթէ նոյն ձևով տեղի ունեցաւ:
- Յետոյ սէր քօմիսէրը մտաւ սենեակ, քօմիսէր մուսուլմանն ու ոստիկանները քիչ մը նախատեցին մեզի:
- Ձեր ողջ մնալը յանցանք է, դուք ամէնքդ ալ խայրներ էք, ձեր գլուխը ջախջախելու է...
- Ու ասոնց նման մէկ քանի քաղցրաբանութիւններէ ետք մեզի վերադարձուցին մեր տեղերը:
- Հետեւեալ օրը կրկին հաւաքեցին բակը.
- Միւթէսարըֆ փաշային պիտի երթաք,– ըսին:

\* Դաւաճաններ, ուրացողներ:

Թէեւ միւթէսարըֆին պաշտօնատեղին սարային մէկ յարկաբաժինն էր, բայց որովհետեւ շէնքը շատ հին էր, ինք նախընտրած էր պաշտօնատեղին փոխադրել պելէտիէն\* որ նոր շէնք մըն էր:

Քիչ յետոյ մէկ քանի ոստիկաններու հսկողութեան ներքեւ ճամբայ ելանք:

Երբ պէլէտիէ հասանք փաշան հոն չէր, մեզ տարին վերի յարկը դարատափ մը եւ հոն քով քովի շարեցին:

Կը զգայինք որ մեր մասին վճռական որոշում մը պիտի տրուէր, բայց ի՞նչ:

Երկու օրէ ի վեր շատ կը կասկածէինք որ մեզ Տէր-Չօր վարպիտի չղնէին ու աւելի հեռուները պիտի ղրկէին ու այս բանը սարսափ կ'ազդէր ամէնուս:

– Եթէ Տէր-Չօր վար ղնելու ըլլային պէտք էր որ մինչեւ հիմա մեզ արձակէին,– կը մտածէինք:

Իսկ աւելի հեռուն ո՞ւր պիտի ղրկէին:  
Հաւանօրէն դէպի Մուսուլ, «Մուսուլ եօլու» ինչպէս կ'ըսէին, այսինքն դէպի անխուսափելի մահը:

Հոգեկան այս տրամադրութեան մէջ էինք ահա՛ երբոր միւթէսարըֆ փաշան եկաւ:

Առանց մեզ հարցուփորձելու նախ աչքովը քննութենէ մը անցուց, յետոյ սկսաւ մէկ քանիները հարցուփորձել, մասնաւորաբար կը հարցնէր ծննդավայրը եւ արհեստը:

- Պահ մը ինձի ալ մօտեցաւ:
- Դուն ո՞ր տեղացի ես...
- Պոլսեցի,– պատասխանեցի:
- Անունդ ի՞նչ է:
- Ազիզ Նուրի:
- Իսլամ ես:
- Միւհտէտի:
- Հին անունդ ի՞նչ է:

\* Բաղաքապետարանը:

– Երուանդ Օտեան:

– Ձեր մէջ խմբագիր մը կայ եղբր, ո՞վ է ան:

– Ձեմ գիտեր... ես լամպաճի եմ:

– Խմբագիրը ո՞վ է:

– Թերեւս ինծի համար ըլլայ, որովհետեւ երբեմն թարգմանութիւններ ըրած եմ թերթերու մէջ... ուսման կը թարգմանէի, պատասխանեցի, տեսնելով որ կարելի չէր ուրանալ, – բայց մնայուն խմբագիր չեմ եղած:

– Քու դէմքդ ծանօթ կ'երեւար կոր ինծի, – ըսաւ ուշադիր երեսս նայելով:

– Թերեւս Պոլիս տեսած էք:

– Ո՛չ, ուրիշ տեղ:

– Ուրեմն Հնամ, – պատասխանեցի:

– Չէ, հոն ալ չէ:

Յետոյ գնաց ուրիշի մը քով հարցուփորձը շարունակելու:

Երբ մեկնելու կը պատրաստուէր, ծերունի Գէորգ աղա Քէշիշ օղլու իրեն մօտեցաւ եւ սկսաւ լալաքին ձայնով խնդրել որ զինքը աւելի հեռուն չքշեն, որովհետեւ իր տարիքը եօթանասունէն աւելի, կարող չէր յոգնութիւններուն տոկալու, եւ այլն, եւ այլն:

Միեւնոյն ժամանակ կը խնդրէր որ իր զաւակն ալ չբաժնէին իրմէ որովհետեւ առանց անոր օգնութեան չէր կրնար ապրիլ:

Փաշան մտիկ ըրաւ ծերունիին խօսքերը, յետոյ ըսաւ.

– Սիդ պուրտա քալաճաքսընըզ (Դուք հոս պիտի մնաք):

Քէշիշ օղլու կարգ մը աղօթքներ ընելով իր երախտագիտութիւնը յայտնեց:

Իսկ մենք երկմտութեան մէջ մնացինք: «Դուք հոս պիտի մնաք» միմիայն Քէշիշ օղլուի ու իր զաւակի՞ն համար էր թէ՞ մէնուս համար էր, քանի որ մին միւսէն աւելի յանցաւոր չէր:

Փաշան յետոյ հարցուփորձեց Հայ կառապան մը որ խաբբորդցի երկու կիներ եւ երկու տղաք Ռաքքայէն ճամբայ հանած էր Հալէպ փախցնելու համար ու ճամբան ձերբակալուած ժանտարմաներու կողմէ:

Խեղճ մարդը կ'ուրանար եւ կ'ըսէր թէ ինք փախցնելու մը՞

քով ճամբայ չէր ելած, այլ պարզապէս զանոնք Համմա պիտի տանէր ու վերադարձնէր Ռաքքա:

– Դուն Մուսուլ պիտի երթաս, – վճռեց փաշան:

Մարդը, լալահառաչ ինկաւ, միւթէսարըֆին ոտքերը, խընդրելով որ խնայէր իր երիտասարդութեան:

– Ո՛չ, Մուսուլ պիտի երթաս, – կրկնեց փաշան ու հեռացաւ:

Ոստիկանները մեզ վերադարձուցին սարայ:

Այսպէս ուրեմն մեր ճակատագիրը կը մնար նոյն անստոյգ վիճակին մէջ:

Հետեւեալ օրը, առտուն, դարձեալ սէր քօմիսէր Մուսթաֆա էֆէնտի մեզ կանչեց իր սենեակը:

Տրտում տխուր դացինք շարուեցանք իր առջեւ:

Կը խորհէինք թէ այս անգամ վերջնական վճիռը պիտի տրուէր մեր մասին:

– Ձեզի բարի լուր մը ունիմ հաղորդելիք, – ըսաւ:

Ամէնուս դէմքին վրայ յանկարծ ուրախութիւնը շողաց:

– Միւթէսարըֆ փաշան որոշեց որ հոս մնաք, – աւելցուց:

Քէշիշ օղլու, ամէնուս կողմէ օրհնանքներ կարդաց միւթէսարըֆին, սուլթանին, օսմանեան պետութեան, բանակին, եւ այլնին համար:

– Ձեզի պաշտօն ալ պիտի տրուի, – շարունակեց սէր քօմիսէրը, – պէլէտիէի մէջ:

Նոր աղօթքներ, նոր շնորհակալութիւններ:

– Միայն թէ պէտք է որ հանդարտ մնաք, ուշադիր ձեր գործին նայիք, խնդիր չհանէք, հակառակ պարագային ձեզ աւելի հեռունբը կ'աքսորենք:

– Ի՞նչ պիտի ըլլայ մեր գործը, – հարցուց Քէշիշ օղլու:

– Քիչ ետքը կը հասկնաք, – պատասխանեց Մուսթաֆա:

Յետոյ, չարաշուք ժպիտով մը աւելցուց.

– Մինչեւ հիմա իբրեւ ազատ ապրեցար, քիչ մըն ալ իբրեւ

«ուշախ» \* կ'ապրիս:

\* Մտայ:

— Ես միշտ պատրաստ եմ պետութեան ծառայելու,— ըսաւ ծերունին:

Սէր քօմիսէրը մեզի ընկերացող ոստիկաններուն դարձաւ եւ ըսաւ.

— Տարէ՛ք ասոնք պէլէտիէ եւ նախագահին յանձնեցէ՛ք:

Եւ մեզ տարին, ոստիկաններու Հսկողութեան ներքեւ, պէլէտիէ, բայց «րէիզ»ը կամ նախագահը չէր եկած տակաւին, սպասեցինք բաւական մինչեւ որ եկաւ: Տեղացի էշրաֆ մըն էր, մեծ փոր, ճարպոտ մարդ մը:

Ոստիկան մը մօտեցաւ իրեն եւ ցած ձայնով բաներ մը ըսաւ:

— Հա՛, ասոնք են,— պոռաց նախագահը,— աղէ՛կ, աղէ՛կ...

Յետոյ հոն կեցող դեղին պիւներով մէկու մը, որ ձեռքը խարզան մը բռնած էր, ըսաւ.

— Թո՛ղ գործի սկսին, Մէհմէտ չավուշ:

— Գլխուս վրայ, պէյս:

Ու նախագահը մտաւ իր սենեակը:

— Հետս եկէ՛ք,— ըսաւ մեզի խարազանակիր չավուշը:

Հետեւեցանք իրեն ու գացինք պարտէզ: Հո՛ն պատի մը տակ դիզուած էին բահեր, փողոցի աւելներ եւ կլոր սաճեր\*:

— Զատեցէ՛ք ինչ որ պիտի առնէք,— պոռաց չավուշը:

Ապշահար իրարու երես կը նայէինք:

— Ի՞նչ պիտի ընենք ասոնցմով,— հարցուց մէջերնէս մէկը:

— Ինչ պիտի ընէք, փողոցները պիտի աւելէք, շուտ ըրէ՛ք հիմայ կառքերը կուգան:

Պարզապէս մեզի թաղապետական աւելածու ըրած էին:

Այս էր այն պաշտօնը որուն կ'ականարկէր սէր քօմիսէրը:

Մէկ քանիներ գլխիկոր մօտեցան գործիքներուն եւ մէյմէլ բան զատեցին:

Ես իմ մասիս չէի գիտեր թէ ո՞րն ընտրէի, բա՛հը, սա՛ճը թիւ աւելը:

— Աւելը ա՛ռ, ամէնէն դիւրինն է,— խորհուրդ տուաւ ընկերներէս մին:

\* Տափակացուած մետաղի տեսակ:

Առի աւել մը եւ հրացանի ձեւով ուսս զարնելով հետեւեցայ միւսներուն:

Նոյն միջոցին թաղապետական երկրաչափը, որ պոլսեցի ծերունի Յոյն մըն է եղեր, եկաւ:

Մօրեղբայրս եւ Ստեփանը մօտեցան իրեն, բացատրեցին իրենց վիճակը եւ խնդրեցին որ զիրենք այս դժնդակ կացութենէն փրկեն:

— Ես ձեզ իմ քովս կ'առնեմ,— պատասխանեց երկրաչափը,— որովհետեւ այս միջոցիս քաղաքիս քարտէսը կը պատրաստեմ կոր ու փողոցները չափելու վրայ եմ, օգնականի պէտք ունիմ,— եւ իսկոյն չավուշին քանի մը խօսք ըրաւ ու այս վերջինը մօրեղբորս եւ Ստեփանին դառնալով լրամայեց.

— Դուք երկրաչափ էֆէնտիին գործին նայեցէք:

Այս յաջողութենէն քաջալերուած՝ ես ալ դիմում ըրի, բայց ի գուր:

— Ա՛յ ուրիշ մարդ չեմ կրնար տալ,— ըսաւ չավուշը,— մեր գործին պէտք են:

Աղբի կառքերը եկած էին, երեք հատ, ու պէլէտիէի առջեւ կը սպասէին: Եկած էին նաեւ ուրիշ երկու չավուշներ եւ միւֆէթթիշը\* որ աւելածուներուն եւ չավուշներուն գերագոյն պետն էր:

Իր բարձր պաշտօնին հպարտութեամբը ուռած, խրոխտ, կոկոզավիզ, հաստափոր մարդ մըն էր միւֆէթթիշը որ իր խարազանը կը շարժէր մինչեւ վերջը սպառնական ձեւով մը:

— Ամէն մէկ կառքին պիտի ընկերանան երկու աւելածու, մէկ քիւրէկճի\* եւ երկու սաճի,— հրամայեց:

Վերջապէս զանազան ուղղութեամբ ճամբայ ելանք: Ատեն ատեն կառքը կը կենար, աւելածուները փողոցին աղտոզութիւնները կը հաւաքէին տեղ տեղ, յետոյ սաճ ունեցողները զանոնք թիթեղի կտորով մը սաճին մէջ կը լեցնէին ու կը տանէին

\* Պետական քանիշը:

\*\* Այստեղ՝ աղբաճառ:

կառքը կը թափէին, իսկ քիւրէկճիին պաշտօնն էր կառքին ետեւէն երթալ մինչեւ քաղքէն դուրս դաշտը ու հոն աղբերը կառքին մէջէն դուրս պարպել:

Կէսօրէն ետքը գործի սկսած էինք, հետեւաբար առաջին օրը հազիւ երեք ժամ աշխատեցանք ու փայտօսի ատենը եկաւ:

Վերադարձանք պէլէտիէ, մեր գործիքները թողուցինք պարտէզը եւ կէս օրականնիս, այսինքն 100 տիրեմնոց մէյմէկ հաց թեւերնուս տակ զարնելով՝ չավուշի մը հսկողութեամբ դարձանք սարայ:

Գործերնիս թէեւ դժնդակ՝ բայց եւ այնպէս գոհ էինք: Գոնէ այս կերպով Տէր-Ձօր պիտի մնայինք, աւելի հեռուն, անապատ պիտի չերթայինք:

Բայց ինչո՞ւ մեզ միշտ սարային մէջ բացօթեայ կը պահէին եւ գրեթէ բանտարկեալ վիճակի մէջ, քանի որ հրաման չէր տրուեր դուրս ելլելու:

Մէկ քանիներս գացինք այս մասին բացատրութիւն ուզելու սէր քօմիսէրէն:

– Հիմա որ հոս պիտի մնանք, – ըսինք, – արդեօք չե՞նք կըրնար քաղքին մէջ հաստատուիլ, որովհետեւ մինչեւ ետքը, այսպէս, հողին վրայ չենք կրնար պառկիլ:

– Անշուշտ կրնաք քաղաքը բնակիլ, – պատասխանեց սէր քօմիսէրը:

– Ուրեմն հրաման կուտա՞ք որ երթանք սենեակ փնտռեք:

– Այդ մասին պէտք է որ միւթէսարըֆ փաշային հետ անգամ մը տեսնուիմ:

– Ե՞րբ պիտի տեսնուիք:

– Մէկ երկու օր համբերեցէ՛ք:

Այս յուսատու խօսքին վրայ՝ վերադարձանք այն ծառին տակ որ իբրեւ սենեակ կը ծառայէր մեզի:

Հետեւեալ առտու կանուխ պէլէտիէի չավուշ մը եկաւ մեզ առաւ ու նորէն սկսանք մեր չէօփճիութեան\*:

\* Աղբահաւաքութեան:

Կամաց կամաց արուեստին նրբութիւններուն կը տեղեկանայինք: Չավուշը երբեմն բարեացակամութիւնը կ'ունենար ինծի սորվեցնելու թէ ինչպէ՞ս պէտք էր բռնել աւելին կոթէն, թէ ի՛նչ ձեւով աւելը քսելու էր գետնին, թէ ի՛նչ կերպով աղբակոյտեր կազմելու էր մայթին եզերքները:

Ցերեկ ժամանակ, տաք արեւին ներքեւ, փողոցները աւելի անշուշտ հաճելի ժամանց մը չէր, բայց ինչ որ ամէնէն աւելի մեր վիճակը կը դառնացնէր, Արաբ տղաքներուն, կիներուն եւ երբեմն ալ մարդերուն ծաղրանքին առարկայ ըլլալնիս էր:

Տղաքը, խուճբ խուճբ ետեւէս կուգային «չէօփճի էֆէնտիներ, չէօփճի էֆէնտիներ» պոռալով, կիները իրենց դռներուն առջեւ կեցած՝ կը ստիպէին որ ներս մտնենք ու բակերուն մէջ կուտակուած աղբերը կառք փոխադրենք եւ երբ մերժէինք, կը սկսէին մեզ նախատել:

Մինչեւ կէսօր փողոցները մաքրելէ ետքը, մեզ տարին գետեզերքը ուր ահագին քանակութեամբ աղբ կուտակուած էր: Հարկ էր այդ աղբերը բահերով տանիլ Եփրատին մէջ թափել: Մեր աշխատութեան ամէնէն տաժանելի մասն էր այս:

Խղճի մտօք իմ գործիս զբաղած՝ երբ միջոց մը գլուխ վերցուցի ու շուրջս նայեցայ, տեսայ որ մեր ընկերներէն Կարապետը, Ջաքարը, Քէշիշ օղլուն եւ իր զաւակը Անդրէասը մէյ մէկ փոքրիկ գաւազան առած ձեռքերնին՝ ծառի մը տակ նստած՝ սիկառէթ կը ծխէին:

Կարծեցի թէ պահ մը դադար եղած էր ու ես ալ բահս մէկ կողմ թողլով՝ մօտեցայ իրենց:

– Ո՛ւր կուգաս, գործդ շարունակէ՛, – ըսաւ Քէշիշ օղլուն:

– Բայց դուք նստած քէյֆ կ'ընէք կոր...

– Դուն մեզի մի՛ նայիր, հիմա չավուշը կուգայ եւ կը բարկանայ երբոր տեսնայ որ գործիդ գլուխը չես, ասկէ զատ մեզի ալ կը վնասէ եթէ քու պարապ կենալդ տեսնայ:

– Ինչո՞ւ համար, քանի որ դուք պարապ կեցեր էք:

– Մենք ուրիշ, մենք չավուշ ենք...

— Չավո՞ւշ մի, ե՞րբ եղաք:

— Քիչ մը առաջ, մենք հիմա չավուշ ենք, ձեր վրայ հսկելու պաշտօն ունինք:

Կարծեցի թէ կատակ կ'ընէին, բայց յետոյ հասկցայ որ ճիշդ էր ըսածնին:

Արդարեւ չավուշ կարգուած էին միւլֆֆէթթիչին քիչ մը դրամ կերցնելով:

Ես, դժբախտաբար, դրամ չունէի չավուշութեան աստիճանին բարձրանալու համար եւ ստիպուեցայ մնալ իմ աղբահաւաքութեան խոնարհ վիճակիս մէջ:

Մեր պաշտօնին բերմունքով շատ տուններ կը մտնէինք կ'ելլէինք եւ յաճախ այդ Արաբ տուններուն մէջ կը պատահէինք Հայ կիներու, ընդհանրապէս պրուսացի կամ խարբերոցի, ամէնքն ալ երիտասարդ, ընտրեալ, գեղեցիկ:

Ահաւոր ջարդէն վերապրողներ էին ասոնք, որոնք մէյ մէկ տեղացիի հետ ամուսնանալով իրենց կեանքը փրկած էին:

Գիտնալով որ Հայեր ենք միջոցը կը գտնէին մեզի մօտենալուն եւ քանի մը բառ փսփսալու:

Այդ բառերը ընդհանրապէս անէծքներ էին իրենց նոր ամուսիններուն ուղղուած:

Ուրիշներ ջարդերու մասին կը խօսէին ու կը պատմէին ահաւոր դրուագներ:

Մեր չէօփճիութիւնը տեւեց 3-4 օր միայն:

Ամէն իրիկուն կը դառնայինք սարայ ու գիշերը կը պառկէինք ծառին տակ:

Իրիկուն մը Արաբ գնչու մը բերին մեր քովը, որ վէսիքայի խնդրի մը համար ձերբակալուած էր: Այդ գնչուն իր հետ ունէր կապիկ մը, արջ մը, էջ մը եւ մանկամարդ կին մը, իրեն նման գնչուհի մը սեւուլիկ ու դէմքին վրայ կտածներով (հաճի):

Էրիկ կնիկ մինչեւ ետքը իրարու հետ կռիւ կ'ընէին, ինչ որ մեզի համար ժամանց մը կ'ըլլար:

Պահ մը գնչուն տարին հարցաքննելու: Գնչուհին իսկոյն մօտեցաւ մեզի եւ ամենամաքուր հայերէնով հարցուց.

— Դուք ուրկի՞ց կուգաք եւ ո՞ր տեղացի էք:

— Դուն Հա՞յ ես, — գոչեցինք զարմացած:

— Այո՛, — պատասխանեց:

— Այդ գնչուն ո՞վ է:

— Ամուսինս է:

Եւ պատմեց իր եղբրական պատմութիւնը:

Իգմիթի կողմերէն հարուստի մը աղջիկ է եղբր ինք, Ատաբազարի Հայուհեաց վարժարանի շրջանաւարտ: Իր հօրն ու մօր եւ եղբայրներուն հետ տարագիր կ'ըլլայ Տէր-Ձօր, ջարդի միջոցին իրենները բոլորն ալ կը ջարդուին ինք կը փախչի դէպի աւսպատը Մարաթէն վար, ուր կը հանդիպի այդ գնչուին որ զայն իրեն կին կ'ընէ:

Հիմա, գրեթէ տասը ամիսէ ի վեր, այդ մարդուն հետ կ'ապրի եղբր վրանէ վրան պտտելով եւ արջն ու կապիկը խաղցնելով:

Երբ աւելի մօտէն քննեցինք զինքը, տեսանք որ գեղեցիկ աղջիկ մըն էր խեղճը հազիւ 17-18 տարեկան: Անապատի արեւն ու աղտոտութիւնը զինքը այլափոխած, գնչուհի մը դարձուցած էին:

— Գիշերները, — բացատրեց, — շատ անգամ ճամբուն վրայ կամ արտի մը մէջ կը պառկինք կապիկին, էչուն եւ արջի հետ քով քովի: Անտանելի է կեանքս, բայց վարժուեցայ:

— Թողուր փախիր այդ մարդուն քովէն:

— Ո՞ր երթամ, ի՞նչ ընեմ, — պատասխանեց աղջիկը, — եթէ անոր քովէն հեռանամ, ուրիշ Արաբ մը պիտի առնէ զիս... գոնէ ասոր հետ վարժուած եմ, թէեւ իրարու հետ կը կռուինք բայց զիս շատ կը սիրէ:

Եւ մտածե՛լ որ այս խեղճ աղջկան վիճակակից հազարաւորներ կային:

\*\*\*

Մեր չէօփճիուածեան չորրորդ օրն էր, ուրբաթ առտու մը կանուխ, պատրաստուեցանք մեր գործին երթալու:

Երբ սարային մեծ դռնէն դուրս պիտի ելլէինք՝ պահակ կեցող ոստիկանը «Եասաք»<sup>\*</sup> գոչեց:

Բացատրեցինք թէ մենք ըստ սովորականին մեր գործին պիտի երթայինք:

– Եասաք, – կրկնեց մարդը:

Շուարած՝ տեղերնիս դարձանք:

Սարային պարտէզը, այդ միջոցին, լեցուած էր հարիւրի մօտ Հայերով, մեծ մասը կին ու տղաք, ամէնքն ալ ամենախեղճ վիճակի մէջ, պատահաբար զգեստներով, կմախացած դէմքերով:

Ոստիկաններուն հարցուցինք թէ ի՞նչու հոս բերուած էին:

– Աւելի հեռուն՝ Անա պիտի ղրկուին, – պատասխանեցին:

Մեր միւլֆէթթիչը տեսնելով որ չենք երթար մեր գործին, ինք եկաւ մեզ փնտռելու:

Ոստիկանները դարձեալ թոյլ չտուին որ դուրս ելլենք:

Այն ատեն միւլֆէթթիչը գնաց սէր քօմիսէրին քով, բացառութիւն ուզելու:

Քիչ ետքը վերադարձաւ մեր մօտ:

– Սէր քօմիսէրը ինք հրամայեց է որ ձեզի թող չի տան դուրս ելլելու, – ըսաւ:

– Ինչո՞ւ համար:

– Ձեմ գիտեր:

Ու միւլֆէթթիչը հեռացաւ:

Ձգացինք որ նոր փորձանք մը կը դառնար մեր գլխուն շուրջը:

Այդ միջոցին չէօփճիութիւնը երանելի բան մը կը թուէր մեզի, զոր կը կորսնցնէինք:

Որչափ երջանիկ պիտի համարէինք ինքզինքնիս եթէ թոյլ

<sup>\*</sup> Արգելուած է:

տային երթալ փողոցները աւելու, աղբահաւաքի կառքերուն ետեւէն:

– Եկէ՛ք սէր քօմիսէրը ձեզ կ'ուզէ, – ըսաւ ոստիկան մը մեզի մօտենալով:

Սրտատրոփ գացինք պարտէզին անդի ծայրը ուր կեցած էր Մուսթաֆա էֆէնտի:

– Անմիջապէս պատրաստուեցէք ճամբայ պիտի ելլէք, – ըսաւ սէր քօմիսէրը:

– Ո՞ւր պիտի երթանք, – հարցուցինք:

– Միատին...

– Բայց մեզի համար այնպէս որոշուեցաւ որ հոս պիտի մնայինք, – առարկեց մէջերնէս մէկը:

– Միւլֆէսարըֆ փաշան որոշեց Միատին երթաք շուտով պատրաստուեցէ՛ք, հիմա ճամբայ պիտի ելլէք:

Եւ Մուսթաֆա էֆէնտի հեռացաւ:

Միատին երկու օրուան ճամբայ էր, անապատին մէջէն, ո՛չ կառք, ո՛չ ձի, ո՛չ ուղտ կարելի էր գտնել, հազիւ կարողացանք մէյ մէկ էջ վարձել: Մեր գոյքերը որոնք արդէն բաւական թեթեւացած էին, չէինք կրնար ամբողջութեամբ միասին տանիլ: Ձատեցինք ամէնէն անհրաժեշտները, այնքան բան ամէն մէկերնու համար որ էլ կարենար տանիլ, մեզ ալ միասին կրելով: Իսկ մնացածը հո՛ն պարտէզին մէջ աճուրդի հանեցինք ու ոչինչ գիներով ծախեցինք ոստիկաններուն:

Սէր քօմիսէրը կրկին եկաւ, բոլորս, հարիւր հոգիի չափ իր շուրջը հաւաքեց:

Այդ բազմութեան մէջէն զատել տուաւ զիս ու մօրեղբայրս, կարապետ իր եղբայրներով ու քրոջով: Քէշիչ օղլուն եւ զաւակը, Ձաքարը, Ալի Ռիզան ու Թէվֆիքը, Ստեփանը, յետոյ տղթոր Արմենակ Մարգարեանը որ Գոնիայէն աքսորուած էր Տէր-Ջօր, յետոյ ատանացի կօշկակար Միհրանը, յետոյ ատանացի ուսուցիչ մը եւ իր կինը: Այսպէս 17 հոգի զատ խումբ մը կազմեցինք եւ զատ արձանագրութեամբ մը յանձնուեցանք այն

նաստիկաններուն որոնք պաշտօն ունէին մեզ մինչեւ Միատին տանելու:

Կէսօրին մօտ ճամբայ ելանք: Կիզիչ արեւը շեշտակի մեր գլխուն վրայ, կ'այրէջ մեզ. մէկ քանիներս ուզեցինք հովանոց բանալ: Ոստիկանները արգիլեցին:

— Հարսնիք չէք երթար կոր, աքսոր կ'երթաք կոր, — ըսելով: Հովանոցը աւելորդ ու չափազանց պերճանք մը կը համարէին մեզի պէս չարագործներուն համար:

Յուսահատութիւնը ա'լ բոլորովին պատած էր մեզ: Տէր-Ձօրը անգամ շատ տեսած էին մեզի ու այժմ կը ղրկէին աւելի հեռու, աւելի ամայի տեղ մը:

Կարաւանը շատ դանդաղ առաջ կ'երթար, պառաւ կիներ ու ծերունի մարդիկ կային, ինչպէս նաեւ մանուկներ որոնք չէին կրնար քայլել: Հազիւ թէ կէս ժամ կ'երթայինք, հարկ կ'ըլլար կանգ առնել, ետեւ մնացողները հաւաքել: Անթացուպով ութ սունամայ հիւանդ ծերուկ մը կար, որ քայլելու բնաւ կարողութիւն չունէր:

Ոստիկանները զիս էջէն վար իջեցուցին ու այդ հիւանդ ծերուկին տուին էչս որպէսզի կարելի ըլլայ կարաւանը առաջ տանիլ:

Կիներ, որոնց ամուսինները մեռած կամ ջարդուած էին, իրենց զաւակները շալկած, գլխիկոր, լալով, անիծելով կ'երթային աւազուտ ճամբէն, հրատապ արեւուն ներքեւ:

Ինչո՞ւ համար այդ խեղճերը կը քչէին այսպէս Տէր-Ձօրի հեռու, դէպի ամայի անապատները:

Պարզապէս գանոնք բոլորովին բնաջինջ ընելու համար:

Ճամբան ծանօթացայ ատանացի ուսուցչի մը հետ որուն քնունը այժմ կը վրիպի յիշողութենէս, մանաւանդ որ երբեք քնունը չէինք տար եւ միշտ «վարժապետ» մակդիրով կը կ'չէինք գինքը:

Ինք պատմեց թէ այդ կիներուն եւ ծերունիներուն հետ միասին գտնուած է Մարաթ որ Տէր-Ձօրէն երկու ժամ հեռու արքաական գիւղ մըն է:

Հո՞ն կան եղբր մէկ քանի հազար Հայեր մէկ մասը ջարդէն ճողոպրած, մէկ մասն ալ ջարդէն յետոյ եկած: Այդ տարագիրներէն հազիւ 100-150 հոգի ողջ մնացեր է, իսկ միւսները ամէնքն ալ մեռեր են հիւանդութենէ, խեղճութենէ, անօթութենէ:

— Մէկ քանի պոլսեցի երիտասարդներ կային, — պատմեց, — որոնք ամենայետին թշուառութեան մէջ մնացած էին: Այս խեղճերը ասդին անդին կը շրջէին անտէր շուններ գտնելու եւ եփելով ուտելու համար: Շատ կիներու եւ մանուկներու միակ կերակուրն էր խոտը ու ծառի տերեւները: Սատկած ձիերն ու ուղտերը վայրկենապէս անօթիներու մէջ կը բաժնուէին:

Իրիկունը բացօթեայ դաշտի մը մէջ անցուցինք ու հետեւալ առտու շարունակեցինք ճամբանիս:

Չէինք գիտեր թէ ո՞ւր պիտի երթայինք: Ի զո՞ւր ոստիկանները կը հարցուփորձէինք, անոնք ալ չէին կրնար որոշ բան մը ըսել:

— Առայժմ Միատին կ'երթանք, տեսնեք հոնկէ ձեզի ո՞ւր կը ղրկեն:

— Ո՞վ պիտի տայ որոշումը:

— Միատինի գայմագամը:

— Թերեւս մեզի Միատինի մէջ վար կը դնեն:

— Կրնայ ըլլալ, այն ատեն ձեզի համար մեծ բարեբախտութիւն մը կ'ըլլայ: Իսկ եթէ գետին դիմացի կողմը (այսինքն Միջագետք) անցունեն գործերնիդ գէշ է...

— Ինչո՞ւ համար:

— Երկու օրէ աւելի կեանք չունիք հոն: Շաւիները ձեզ կը սպաննեն:

Շաւիները վրանարնակ Արաբ ցեղ մըն են, ծանօթ իրենց աւազակութեամբը եւ վայրագութեամբը:

Ոստիկաններուն այս խօսքերը կրնաք երեւակայել թէ ո՞ր աստիճան մտատանջութեան մատնեցին մեզի: Մարթերնիս ազատելու միակ միջոց մը կար, Միջագետք չանցած փախչիլ:

Բայց ո՞ւր կարելի էր փախչիլ անապատին մէջ:



Ստեփան որ իբրեւ բնիկ հալէպցի լաւ արաբերէն գիտէր, որոշեց Միատինին հասնելէ ետքը խոյս տալ:

— Ես կրնամ իբրեւ Արաբ ծպտուիլ ու այս կերպով օձիքս ազատել, — կ'ըսէր:

Դէմքն ալ այսպիսի ծպտումի մը յարմար էր: Նիհար եւ թուխ, կրնար դիւրաւ արաբ ձեւանալ:

Այս մտահոգութիւններով իրիկունը, ուշ ատեն, հասանք Միատին:

Ուղղակի մեզ տարին սարայ ու յանձնեցին տեղական ոստիկանութեան:

Սարայը խարխիւկ աղտոտ չէնք մըն էր, ընդարձակ պարտէզով մը:

Մեզի այդ շէնքին բակը դրին ուր անցուցինք գիշերը:

— Ուշադրութիւն ըրէ՛ք հոս շատ կարիճ կայ, — ըսաւ մեր վրայ հսկող ոստիկանը:

Արդարեւ պատերուն վրայ ու գետինը կը շրջէին կարիճները:

Եւ սակայն այնչափ յոգնած ու քնատ էինք որ հակառակ այդ անհաճոյ հիւրերուն՝ քնացանք մինչեւ առտու:

Միատինի գայմագամը բացակայ էր նոյն միջոցին ուստի մեր մասին կարելի չեղաւ որոշում մը տալ:

Իսկ միւս կիները, մանուկներն ու ծերերը, ութսուն հոգիի չափ, ճամբայ հանուեցան դէպի Ապու Քէմալ, Միատինէն երեք օր հեռու, Եփրատի վրայ գայմագամանիստ քաղաք մը:

Ստեփան իր որոշումը գործադրեց եւ յաջողեցաւ սարայէն դուրս ելլել եւ խոյս տալ դէպի Տէր-Զօր:

Իր փախուստը քանի մը ժամ յետոյ նշմարուեցաւ:

Ոստիկանները մեծ կարեւորութիւն չտուին:

— Շատ հեռուն չկրնար երթալ, — ըսին, — Արաբները զինքը կը կողոպտեն ու յետոյ մեզի կը յանձնեն:

Իրա՛ւ ալ իրիկուան դէմ տեսանք որ մեր բարեկամը կը բերէին ձեռքը քէլէփճէ անցուցած:

Հազիւ թէ ներս եկաւ, սեւամորթ ոստիկան մը յարձակեցաւ վրան ու սկսաւ անխնայ ծեծել, մինչեւ որ խեղճին քիթը բերանը արիւնեցաւ: Յետոյ բանտին դուռը բացաւ ու ետեւէն ոտքի հարուած մը տալով զայն ներս նետեց:

Բանտը երկաթէ վանդակով մը բաժնուած էր մեր գտնուած տեղէն, այնպէս որ կրնայինք տեսնուիլ բանտարկեալներուն հետ:

Ստեփան, երբ իր կերած ծեծին ազդեցութիւնը քիչ մը մեղմացաւ, սկսաւ պատմել գլխին եկածը:

Հազիւ թէ մէկ երկու ժամ կը հեռանայ Միատինէն՝ Արաբ մը վրան կը յարձակի զինքը կողոպտելու համար: Ստեփան դիմադրութիւն կը փորձէ, ասոր վրայ Արաբը իր ձեռքի հաստ գաւազանով կը զարնէ Ստեփանի ծունկերուն, որ գետին կ'իյնայ: Միեւնոյն ատեն զրպանէն կը հանէ զմելին ու երբ Արաբը կը մօտենայ զրպանները խուզարկելու համար, զմելիով հարուած մը կուտայ ձեռքին: Արաբը, ասոր վրայ կը ձգէ կը հեռանայ:

Բայց նոյն միջոցին հեծեալ ոստիկան մը վրայ կը հասնի ու կը հարցնէ թէ ի՞նչ գործ ունէր հոն:

— Ես հեռագրի պաշտօնեայ եմ, — կը պատասխանէ Ստեփան, — լուր առինք թէ այս կողմերը թելերը աւրուած են, եկայ քննելու:

Ստեփան, ինչպէս ըսի, երկաթուղիի պաշտօնեայի զգեստ հագած էր ինչ որ պաշտօնական կերպարանք մը կուտար իրեն:

Հեծեալ ոստիկանը պահ մը կը վարանի, քանի մը հարցումներ եւս կ'ընէ որոնց Ստեփան կը պատասխանէ յաջող կերպով: Ձի մոռնամ ըսելու որ հարցուփորձի միջոցին մեր բարեկամը ինքզինքը իբրեւ Արաբ ցոյց կուտայ:

Ոստիկանը դեռ չհեռացած ուրիշ մը վրայ կը հասնի. այդ երկրորդը Միատինէն է եղբր, ուր տեսած էր Ստեփանը մեզի հետ:

Այս անգամ ամէն բան երեւան կ'ելլէ: Երկու ոստիկանները կը ծեծեն զինքը, ձեռքը քէլէփճէ կ'անցնեն ու կը բերեն բանտ:

\*\*\*

Հետեւեալ օրը գայմագամը եկաւ առտուն կանուխ եւ իսկոյն մեզ իր քովը առաջնորդեցին:

Մեր անունը եւ արհեստը Հարցուց, յետոյ մեր թուղթերը աչքէ անցուց եւ ըսաւ որ բացի տոքթոր Արմենակ Մարգարեանէն ու ատանացի կօշկակար Միհրանէն, մենք էլ Պուսէրա պիտի երթայինք:

Հազիւ թէ իր քովէն դուրս ելանք՝ ոստիկանները հրամայեցին որ պատրաստուինք անմիջապէս ճամբայ ելլելու համար:

Էլ Պուսէրա՛, այդ անունը առաջին անգամն էր որ կը լսէինք:

– Հեռու է երթալիք տեղերնիս, – Հարցուցինք ոստիկանի մը:

– Վեց-եօթ ժամ կը տեւէ:

– Ո՞ր կողմն է:

– Գետին միւս կողմը:

Ատիկա նոր հարուած մը եղաւ մեզի համար:

Եփրատը պիտի անցնէինք, Միջագետք պիտի երթայինք, այսինքն Զօրի սանճակին ամէնէն վտանգաւոր տեղը: Շավիներու մէջ:

Ա՛լ հիմա ամէն յոյս կորած էր մեզի համար:

Կէս ժամէն կազմ ու պատրաստ էինք մեկնելու համար:

Ստեփանն ալ բանտէն Հանեցին ու մեզի միացուցին, սակայն ձեռքերը քէլէփէլէ անցուցած:

Քանի մը էլ վարձեցինք մեր բեռները կրելու համար ու ճամբայ ելանք:

Քսան վայրկեանէն Հասանք Եփրատի եզերքը ուր խոլով տափարակ նաւ մեզի կը սպասէր:

Նաւ մտնելէ առաջ խնդրեցինք ոստիկաններէն որ Ստեփանի ձեռնակապը հանեն:

– Եթէ երաշխաւորէք որ պիտի չփախչի՝ կը հանենք, – պատասխանեցին:

Երաշխաւոր եղանք ու այս կերպով խեղճ երիտասարդը ազատեցաւ անտանելի կացութենէ մը:

Ամէնքս ալ ընկճուած, յուսահատ մտանք նաւ, էջերով միասին:

Մեզ ընկերացող ոստիկանները կը կրկնէին ինչ որ ըսած էին ուրիշները:

– Ձեզ երկար ատեն հոս ողջ չեն ձգեր այս կողմերը: Եփրատին մէկ եզերքէն միւս եզերք անցըր Հազիւ քառորդ մը տեւեց:

Յետոյ, երկու հեծեալ ոստիկանի հսկողութեան տակ, սկսանք քալել ամայի անապատին մէջ:

Մայիս ամսուն մէջն էինք ու հեղձուցիչ տաք մը կար: Միասին առած ջուրերնիս սպառեցաւ եւ բաւական չարչարուեցանք ծարաւէն:

– Փոքրիկ քար մը դրէ՛ք բերաննիդ, որպէսզի ծարաւնիդ անցնի, – խորհուրդ տուաւ ոստիկաններէն մին:

Փորձեցի եւ արդարեւ տեսայ որ խարուսիկ զովութիւն մը կուտար բերնիս:

5-6 ժամ քալելէ ետքը Հասանք վերջապէս էլ Պուսէրա: Ոստիկանները մեզ տարին քօնաք կամ սարայ, ինչպէս իրենք կ'ըսեն, այսինքն մէկ երկու սենեակներով ու ախոռով աւերակ շէնք մը, ընդարձակ պարտէզով մը:

Միւտիւրը հոն չէր, մըխտարը եւ ժանտարմա չավուշի մը մեզ թէսլիմ\* առին:

– Հոս պիտի սպասէք մինչեւ որ միւտիւր էֆէնտին գայ, – ըսաւ չավուշը որ վայրագ դէմքով Արաբ մըն էր:

Այնտեղ ուր մեզ կը հրամայէր սպասել ախոռին քով աղբանոց մըն էր:

Հինգ վեց ժամուան գնացքէ մը յոգնած՝ ստիպուեցանք նըստիլ այդ դարչահոտութեան մէջ:

Մութը բոլորովին կոխած էր եւ միւտիւրը չէր եկած տակաւին:

\* Յանձնում:

Բարեբախտաբար իր փոխանորդը եկաւ ու մեր վրայ խղճալով՝ հրամայեց որ տուն մը տանին գիշերը անցնելու համար:

Մեզ տարին գիւղացիի մը տունը, որուն տանիքին վրայ ելանք:

Մեզի հաց, պուլկուր, մածուն եւ այլն, բերին ու կերակրեցին: Յետոյ տանիքին վրայ, լուսնի լոյսին տակ պառկեցանք:

Հետեւեալ օրը միւտիւրը եկաւ եւ մեզ իր քովը տարին:

55 տարեկան, մօրուօք, բարեմիտ դէմքով մարդ մըն էր:

Առաջին անգամն էր որ տարեց պաշտօնեայի մը դէմը կը գտնուէինք:

Մինչեւ այն ատեն մեր տեսած բոլոր պաշտօնեաները, վալի, միւթէսարըֆ, գայմագամ, եւ այլն, ամէնքն ալ 30-35 տարեկան երիտասարդներ էին, թունդ իթթիհատական ու հայատեաց:

Արդէն լսած էինք միւտիւրին համար թէ՛ լաւ մարդ էր եւ թէ՛ ձեռքէն եկածին չափ պաշտպանած էր Հայերը:

Իր դէմքն ալ լաւ տպաւորութիւն մը գործեց վրանիս:

Մի առ մի մեզ հարցուփորձեց եւ արհեստնիս հարցուց: Յետոյ արհեստաւորներուն խոստացաւ պէտք եղած դիւրութիւնը տալու որպէսզի կարենային իրենց արհեստով ապրիլ:

— Հոս բոլորովին ազատ էք, — ըսաւ, — կրնաք ուզած տեղերնիդ բնակիլ, ազատ համարձակ պտտիլ, պայմանաւ որ գիւղէն շատ չհեռանաք:

Շնորհակալութիւն յայտնեցինք իրեն ու հեռացանք:

Շուտով ամէնքս ալ տեղաւորուեցանք հոս ու հոն, արաբ տուններու մէջ:

Ես, թէվֆիք ու Ալի Րիզա, երկուքն ալ իսլամացած Հայեր, մէկ սենեակ վարձեցինք:

Ճամբան երկուքնիս խօսք մէկ ըրած էինք առաջին առթիւ փախչելու: Եւ մեր այս ծրագիրը իրագործելու համար որոշած էինք միասին բնակիլ:

## ԷԼ ՊՈՒՍԷՐԱ

Էլ Պուսէրա Եփրատի ու Խուպուր գետին միջեւ զուտ արաբական գիւղ մըն է քանի մը հարիւր տունով: Խուպուր, որ Եգեկիէլի մարգարէութիւններուն մէջ յիշուած Գոբար գետն է, ճիշտ էլ Պուսէրայի մօտ կը միանայ Եփրատի եւ գեղը կը գտնուի երկու գետերուն եզերքը: Գեղին մօտ, Խուպուրի վրայ, նորաչէն կամուրջ մը կայ:

Ինչպէս ամէն արաբական գիւղ, էլ Պուսէրան ալ աղտոտ, բարչելի, աւերակ տեղ մըն է: Շուկային մէջ հազիւ 3-4 խանութ կայ որոնց մէջ դժուար է բան մը գտնել:

Սրճարան, սափրիչ, դեղարան, հացագործ եւ այլն գոյութիւն չունին: Մեր հացը ստիպուած էինք մենք եփել, այսինքն ցորեն գնել՝ քարին տակ գայն ալիւրի վերածել, խմորել ու յետոյ «սաճ»ի վրայ կամ «թանտըր»ի մէջ եփել:

Միսը, ընդհանրապէս այժի միս դիւրաւ կը գտնէինք, որովհետեւ օրը մէկ երկու այծ կը մորթուէր: Կը գտնէինք նաեւ գիւղացիներուն քով, հաւկիթ, կարագ, իւղ, այրան (այսինքն ջրախառն մածուն) ծխախոտ, ինչպէս նաեւ եղանակին բանջարեղէնները:

Մշակուած հողերը շատ քիչ են սակայն, հակառակ ջուրի առատութեան, որովհետեւ շատ նախնական ձեւով կ'ոռոգուին արտերը եւ գետէն հարիւր մէթը հեռուն մշակութիւնը կը դադրի:

Էլ Պուսէրայի մէջ մինչեւ 8-10 հազարի չափ Հայ տարագիրներ գտնուած են միջոց մը, բայց ասոնցմէ մէկ մասը հիւանդութենէ կամ անօթութենէ մեռած են եւ միւսներն ալ դէպի Սուար

կամ Շէատաթի տարուելով չէրքէզ չէթէններու ձեռքով ջարդուած են, այնպէս որ մեր հոն գտնուած միջոցին մէկ Հայ էրիկմարդ չկար գիւղին մէջ:

Միայն Արաբներու քով Հայ կիներ ու աղջիկներ կը գտնուէին փոքր թիւով:

Միւտիւրը իր քովը ունէր Հայ կին մը, որուն հետ նիքեհազ\* եղած էր, յետոյ ուրֆացի պատանի մը եւ աղջիկ մը եւ ուրիշ տղայ մը Պուրսայի կողմերէն: Այս վերջինը 14 տարեկան սիրուն տղեկ մըն էր, մեծահարուստ ընտանիքի մը գաւակ: Հայրը որ ջարդուած էր, իր հետ ունի եղբր 4 Հազար ոսկի հնչուն դրամ: Չէթէնները ջարդեր են զայն, յետոյ կինը եւ ընտանիքին միւս անդամները: Իսկ տղան ողջ պահեր են իրենց քովը:

Միւտիւրը յաջողած էր անոնց քովէն առնել ու իր տունը բերել:

\* \* \*

Հազիւ թէ մեր նոր սենեակին մէջ տեղաւորուած, ես Ալի Րիզա եւ Թէվֆիք, սկսանք մեր փախուստի ծրագիրը մշակել:

Տէր-Ջորի մօտ իմացած էինք որ շատ մը Հայեր Սինճէր տաղին Եգիպտոսներու քով փախչելով, յաջողած էին ազատիլ: Այդ Սինճէր լեռը կը գտնուէր էլ Պուսէրայէն չորս օր հեռու, անապատի ճամբով:

Խնդիրը անապատին մէջ չմոլորելն էր: Տեղացիները Հարցուփորձելով, իմացանք որ եթէ Խուպուրի եզերքը բռնելով քալէինք 7-8 ժամ, Սինճէրը պիտի տեսնէինք հեռուէն, որովհետեւ այդ ընդարձակ անապատին մէջ միակ խոշոր լեռն է:

Օր մը երբ մօտակայ աղօրիք մը գացած էինք, Հանդիպեցինք Արաբի մը, որուն հետ Ալի Րիզա խօսակցութեան մտաւ եւ խօսքը բերաւ Սինճէրի վրայ:

\* Ամուսնութիւն:

— Շատ աղէկ գիտեմ Սինճէրը, — ըսաւ Արաբը, — յաճախ գացած եմ այդ կողմերը, մինչեւ իսկ քանի մը անգամ Հայեր առաջնորդած եմ:

— Որո՞նք կրցած են հասնիլ մինչեւ Եգիպտոսներու քով:

— Անշուշտ, միայն թէ ես մինչեւ լեռ չեմ գացած, այլ լեռան քանի մը ժամ մնալով ետ դարձած եմ:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ Եգիպտոսները Արաբներուն հակառակ են ու երբ ձեռքերին Արաբ մը անցնի կը սպաննեն, ինչպէս որ մենք ալ զիրենք կը սպաննենք:

— Իրա՞ւ է որ Եգիպտոսները բարեկամ են Հայերուն հետ:

— Այո՛, որովհետեւ թուրքերուն դէմ ապստամբած են: Ո՛չ թուրք, ո՛չ Արաբ կրնայ մօտենալ իրենց լեռան: Բայց Հայերը սիրով կ'ընդունին:

— Մեզի ալ կ'ուզե՞ս առաջնորդել:

— Ինչո՞ւ չէ, եթէ դրամ վճարէք:

Տեսանք որ ճիշդ մեր փնտռած մարդն էր այս Արաբը:

Հետեւեալ օրուան համար ժամադիր եղանք մեր սենեակը որպէսզի սակարկութիւնը կատարենք: Ալի Րիզա բաւական դրամ ունէր եւ ինք պիտի վճարէր նաեւ Թէվֆիքի համար, որ իր ազգականն էր: Գալով ինձի՝ մօրեղբայրս խոստացած էր չորս ոսկի տալ փախուստս դիւրացնելու համար: Մարդը հետեւեալ օրը եկաւ եւ ամէն մէկերնուս համար մէկուկէս ոսկի պահանջեց: Յետոյ ըսաւ որ պէտք էր էլ մը գնել մեր ջուրը եւ ուտելիքը փոխադրելու համար: Այս էլը յետոյ իրեն պիտի տայինք իբրեւ նուէր:

Գիւղին մէջ կարելի էր դիւրաւ էլ մը գտնել 4-5 մէծիտիէ վճարելով:

Արաբին հետ համաձայնեցանք որ երկու օրէն ճամբայ ելլենք:

Մենք առանձին պիտի երթայինք ժամ մը ճամբայ, յետոյ ինք, ուրիշ ընկերոջ մը հետ, պիտի գար մեզի միանալու: Այս կարգադրութիւնները ընելէ ետքը մարդը մեկնեցաւ:

Հազիւ թէ դուրս էր ելած՝ մեր տանտէրը եկաւ քովերնիս:  
– Այս դուրս ելլող Արաբը ո՞ւր ճանչցաք, – Հարցուց մեզի:  
– Հոս, աղօրթի մը մէջ, – պատասխանեցինք:  
– Ի՞նչ բանի համար եկաւ ձեզի հետ տեսակցելու:  
– Ոչինչ... եկաւ Հարցնելու թէ ծախու բան մը ունէի՞նք:  
– Ո՛չ, – պատասխանեց տանտէրը, – եկաւ ձեզի առաջարկութիւն մը ընելու:

– Ի՞նչ առաջարկութիւն:  
– Առաջարկեց ձեզի Սինճէր փախցնել:  
Նախ բացարձակապէս մերժեցինք, բայց տանտէրը պնդեց եւ ըսաւ թէ շատ աղէկ կը ճանչնար այդ մարդը եւ անոր անցեալը գիտէր:

– Ձեզի խորհուրդ կուտամ բարեկամաբար իրմէ զգուշանալու, – ըսաւ, – այդ մարդը ամէն բան ընելու կարող է:

– Ի՞նչ ըսել կ'ուզես:  
– Ձեռնէ առաջ ուրիշ Հայեր ալ համոզած՝ Սինճէր տանելու համար ճամբայ հանած ու ճամբան զանոնք սպաննած է դրամներն գողնալու համար:

Մեր տանտիրոջ այս տեղեկութիւնները բնականաբար մեզ վրդովեցին: Մարդը իր խօսքերուն անկեղծ ըլլալը ապացուցանելու համար մէկ քանի ուրիշ տեղացիներ ցոյց տուաւ եւ ըսաւ որ անոնցմէ տեղեկութիւն առնենք մեզ փախցնել առաջարկող Արաբին մասին:

Ալի Րիզա գնաց ցոյց տուած անձերուն: Ամէնքն ալ նոյն բանը հաստատեցին:

Այդ Արաբը աւագակ ոճրագործ մըն էր:  
Ու այսպէս հրաժարեցանք իր առաջնորդութենէն, բայց որոշեցինք մեր ծրագիրը գործադրել առանձին:

Ձէ՞ մի որ 6-7 ժամ քալելէ ետքը Սինճէրի լեռը պիտի տեսնէինք: Ուրեմն կրնայինք առանց առաջնորդի երթալ դէպք հոն:

Մէկ երկու օրուան մէջ ինչ որ ունէինք աւելորդ ծախեցինք:

Յետոյ 4-5 օրուան համար հաց պատրաստեցինք, երկու օխարմաւ առինք ու ճամբայ ելանք:

Մեր ընկերները սակայն վերջին ժամուն կը խորհին թէ մեր փախուստը կրնայ իրենց վիճակը ծանրացնել, որովհետեւ միւտիւրը ըսած էր որ մեզ ազատ կը թողու գիւղին մէջ, բայց փոխադարձաբար ամէնքս իրարու երաշխաւոր կը նկատէ:

Եւ ահա՛ երբ հազիւ ժամ մը հեռացած էինք, վազն ի վազ մեր ետեւէն կը հասնին մէկ քանի ընկերները:

Ի զուր կը փորձենք զիրենք համոզել որ մեր փախուստովը իրենց որեւէ վնաս չի պատահեր, թէ միւտիւրին ըսածը պարապ խօսք մըն էր, եւ այլն:

– Ձէ՛, – կը պնդեն, – կա՛մ ետ կը դառնաք, կա՛մ կ'երթանք ոստիկաններուն իմաց կուտանք ձեր փախուստը:

Տեսնելով որ ճար չի կայ զիրենք համոզելու, ետ կը դառնանք:

Միւտիւրը կը շարունակէր բարեացակամ ըլլալ մեզի հանդէպ:

Իր փափաքն էր որ մեր մէջ գտնուող արհեստաւորները իրենց արհեստը ի գործ դնէին:

Միւտիւրին այս տրամադրութենէն օգտուելով՝ քիլիսցի Ջաքար որ կօշկակարութիւն գիտէր, հրաման խնդրեց իրմէ Տէր-Ջօր երթալու որպէսզի իր արհեստին վերաբերեալ գործիքները ճարէ, Ալի Րիզա եւս ուզեց ընկերանալ ոսկերչութեան գործիքներ բերելու համար: Միւտիւրը հաւանեցաւ զիրենք ղրկելու ոստիկանի մը հսկողութեամբ:

Ջաքարի ծրագիրն էր Տէր-Ջօր հասնելէ ետքը ոստիկանը կաշառել ու փախչիլ:

Նոյն միջոցին Ստեփան եւս ուրիշ նորեկ կիւրիսցիի մը հետ փախուստի պատրաստութիւն կը տեսնէր:

Ամէնուն ալ նպատակն էր Հալէպ երթալ:  
Իսկ ես աւելի յանդուգն ծրագիր մը ունէի:

– Հալէպ երթալով, – կը խորհէի, – ազատած պիտի չըլլամ,

պիտի ստիպուիմ մինչեւ ետքը ծածկուած մնալ, եւ եթէ օր մը օձիքս ձեռք տամ, աւելի մեծ փորձանքներ կրնան գալ գլուխս, քանի որ փախչելու վտանգները աչք պիտի առնեմ, լաւագոյն է երթալ այնպիսի տեղ մը ուր միանգամ ընդմիջտ ազատ ըլլամ թրջական լուծէն:

Էլ Պուսէրայի մէջ, գրեթէ ամէն օր կը Հանդիպէինք փախըստական թուրք զինուորներու, ամենախղճալի վիճակի մէջ որոնք Պաղտատի կողմէն կուգային իրենց երկիրը երթալու համար: Յաճախ խօսակցած էի իրենց հետ եւ իմացած էի որ 20-22 օրէն եկած էին Պաղտատէն, Եփրատի եզերքը բռնելով: Այդ զինուորները պատմած էին թէ ճամբան Արաբները հիւրընկալած էին զիրենք ու կերակրած:

— Ո՛ր վրանը որ երթանք մեզի ուտելիք կուտան,— կ'ըսէին:

Ամիսէ մը ի վեր էլ Պուսէրա էի ու բաւական ուսումնասիրած վրանաբնակ Արաբներու բարքերը: Գիտէի թէ ամէնքն ալ աւազակ են՝ բայց մարդ չեն սպաններ, թէ իրենց վրանը գացողը կը հիւրընկալեն, կը կերակրեն, թէ տարւոյն այդ եղանակին, այսինքն յունիսին, Եփրատի ամբողջ երկայնքը Արաբներու վրաններ կը գտնուէին:

— Փոխանակ Հալէպի՝ Պաղտատ կ'երթամ,— վճռեցի:

Այդ միջոցին բաժնուած էի Ալի Րիզայէն ու եկած աւերակ տուն մը, մէկ սենեակով ուր կը բնակէի Ստեփանին, ատանացի վարժապետին ու անոր կնոջ հետ:

Մտադրութիւնս յայտնեցի Ստեփանին: Շատ վտանգաւոր ու արկածախնդրական գտաւ:

— Լաւագոյն է որ միասին Հալէպ երթանք,— առաջարկեց:

Բայց ես անդրդուելի մնացի:

— Կա՛մ բոլորովին կ'ազատիմ, կա՛մ ճամբան կը մնամ,— պատասխանեցի:

Արաբ Շավիններէն չկողոպտուելու համար որոշեցի մուրացկանի կերպարանք առնել:

Հին, աղտոտ, պատառատուն «մաչլախ» մը գտայ իբրեւ վե-

րարկու: Կօշիկս որ բաւական նոր էր գմելիով կտրտեցի, բզիկ բզիկ ըրի, նոյնպէս պատուտեցի ներքին զգեստներս անգործածելի դարձնելու աստիճան: Գուլպայ բնականաբար պիտի չհագնէի: Իսկ գլուխս պիտի առնէի հին լաթ մը արաբական «է-կիլ»-ով:

Բացի Ստեփանէն ո՛չ ոք գիտէր փախուստի ծրագիրս եւ ո՛չ իսկ մօրեղբայրս: Կը վախնայի որ եթէ իմաց տայի՝ կա՛մ արգելք կը յարուցանէին եւ կա՛մ զիս մտադրութենէս կը դարձնէին:

Վերջին վայրկեանին միայն ըսի վարժապետին ու իր կնոջ, խնդրելով որ գաղտնի պահեն:

Ինչ երկու օր յետոյ Ստեփան, ուրիշ իսկէնտէրունցի Հայու մը հետ, պիտի փախչէր դէպի Հալէպ:

Հետս իբրեւ ուտելիք քիչ մը հաց եւ 100 տիրէմ արմաւ ունէի, ասոնցմէ զատ 50 տիրէմ ծխախոտ, քանի մը տուփ լուցկի, մատիտ մը, թերթ մը թուղթ եւ երկու դրուշ արծաթ դրամ: Ուրիշ ոչինչ:

Լուսնալէն առաջ ճամբայ ելայ, փայտէ գաւազան մը ձեռքս:

Գեղեցիկ լուսին մը կար:

Մեր տունը գիւղին ծայրն էր եւ վայրկեան մը ետքը հասայ նուպուրի եզերքը եւ անցայ կամուրջէն:

Քանի մը մշակուած արտերէ վերջ, ընդարձակ անապատն էր որ կը բացուէր առջիս:

Շուտ շուտ կը քալէի ժամ առաջ էլ Պուսէրայէն հեռանալու համար: Հակառակ արկածախնդրական այս յուսահատ փախուստիս, զուարթ տրամադրութեան մէջ էի եւ նախագագացում մը ունէի թէ պիտի յաջողէի:

Ապագայի ծրագիրներ կը յղանայի:

— Անգամ մը որ Պաղտատ հասնիմ,— կը մտածէի,— կ'երթամ Հայոց եկեղեցին, ինքնութիւնս կը յայտնեմ, տեղացի Հայերուն հետ յարաբերութեան կը մտնեմ ու անոնց նիւթական օժանդակութեամբը վրաս գլուխս կը շիտկեմ, յետոյ կը հեռագրեմ եղբորս որ Պօմպէյ կը գտնուի, որպէսզի ինձի դրամ ղրկէ: Ապա,

Անգլիացիներուն օժանդակութեամբը կ'երթամ Պասրա, հոնկէ Պէնտէր Պուշիր եւ հոնկէ ալ շոգենաւով Պօմպէյ: Հոն քիչ մը ժամանակ կը մնամ եղբօրս քով ու կ'անցնիմ Եփրատու...:

Այս գեղեցիկ հեռապատկերներով ինքզինքս կը քաջալերէի, որովհետեւ ներկան բնաւ յուսալից չէր:

Լուսնի լուսով կ'երթայի անապատին մէջ առանց որոշ ուղղութեան, միշտ դէպի արեւելք քալելով, որովհետեւ գիտէի թէ այդ կողմը պիտի գտնէի Եփրատը որմէ առայժմ կը հեռանայի:

Ո՛չ բնակութիւն, ո՛չ վրան, ո՛չ մէկ մարդկային հետք կար շուրջս: Ատեն ատեն ջագալներու\* ոռնալուն ձայնը կը լսուէր միայն ու երբեմն ալ կատուի խոշորութեամբ եւ աւելի մեծ, մոզէզի նմանող անասուններու արագ վազքը կը տեսնէի:

Երկու ժամի չափ քալելէ ետքը արշալոյսը ծագեցաւ, կանանչ թռչուններ որոնց բոյնը հողին մէջ փորուած ծակեր են, սկսան թռչտիլ: Քիչ յետոյ արեւն ալ բարձրացաւ հորիզոնէն իրեն հետ բերելով հեղձուցիչ տաքութիւն մը:

Մէկ երկու ժամ քալելէ ետքը հեռուն նշմարեցի խումբ մը ծառեր: Եփրատի մօտեցած էի, որովհետեւ միայն գետին մօտերը ծառ կը գտնուի:

Ասիկա քաջութիւն եւ յոյս ներշնչեց ինձի: Կրնար ըլլար որ անապատին մէջ մոլորէի եւ այն ատեն մահը անխուսափելի էր անօթութենէ ու ծարաւէ:

Գետինը կէս ժամի չափ հանգչեցայ, յետոյ ճամբաս շարունակեցի ծառերուն ուղղութեամբ:

Մէկ երկու ժամէն հասայ անոնց մօտ: Եփրատ քիչ մը անդին էր:

Քիչ մը հաց ու արմաւ ուտելէ ետքը, ծառի մը տակ պահ մը քնացայ, դեռ կէսօր չէր եղած:

Յետոյ ելայ, գացի Եփրատի եզրը, լուացուեցայ, ծարաւս անցուցի ու աւազին վրայ նստայ, երեսս գետին դարձուցած:

Հեռուն կ'երեւային արաբական սեւ վրանները ուղտի ստե-

\* Ծնագալերի:

ւէ\* շինուած: Երեք հազար տարի առաջ Երգ Երգոցի հեղինակը կը յիշէ «Կեդարու սեւ վրանները», այդ օրերէն ի վեր ահա՛ փոփոխութիւն չէր կրած վրանաբնակ Արաբներու կենցաղը:

Հազիւ թէ քանի մը վայրկեանէ ի վեր նստած էի երբ յանկարծ մօտս շնչառութեան ձայն մը առի, գլուխս դարձուցի եւ աջ ու ձախ կողմս նստած տեսայ երկու Արաբ: Ասոնք զինուած էին իրենց սովորական զէնքերով, այսինքն կարճ թուր մը, խոշոր մուրճ մը եւ հաստկեկ պոճ մը, որուն մէկ ծայրը բոլորակ երկաթ մը անցած է: Սարսափելի զէնք մըն է այս եւ անով գըլխին տրուած միակ հարուած մը բաւ է մարդս մեռցնելու համար:

Այս մարդիկը առանց բառ մը արտասանելու, սկսան մաշխախիս գրպանը խուզարկել: Մխախտտ, սիկառի թուղթերս եւ լուցկիի տուփերը առին, ինչպէս նաեւ երկու զրուշ արծաթ դրամս: Իսկ թողուցին քիչ մը արմաւը եւ հացը:

Յետոյ բերանս բանալ տուին տեսնելու համար թէ ոսկեզօծ ակռայ ունի՞մ, մարմինս շոշափեցին ստուգելու համար թէ ծածկաբար տեղ մը դրամ պահա՞ծ եմ եւ իրենց բացասական խուզարկութենէն դժգոհ առին քալեցին, առանց բառ մը արտասանելու եւ ո՛չ իսկ «մնաս բարով» ըսելու:

– Աժան ազատեցայ, – մտածեցի:

Գիտէինք որ ոսկեզօծ ակռաները շատ վտանգաւոր են, որովհետեւ Արաբները զանոնք միաձոյլ ոսկի կարծելով կը քանին կը հանեն Հայերուն բերնէն: Մեր մէջ մէկ քանի հոգի կային որոնք դեռ Տէր-Ջօր չեկած՝ իրենց ակռաներուն վրայէն ոսկին քերթել տուած էին:

Բարեբախտաբար իմ բերնիս մէջ այդ տեսակ ակռայ չունէի: Երկու անախորժ հիւրերուն մեկնումէն ետքը ճամբայ ելայ դէպի վրանները:

Ճամբան, Եփրատի եզրը, ծառի մը տակ նստած տեսայ ժանտարմա մը, որուն ձին քիչ մը անդին կապուած էր:

\* Մազից:

Կամաց մը հեռանալ փորձեցի՝ բայց ուստիկանը զիս նշմարած էր:

— Հոս եկո՛ւր,— պոռաց արարերէն:

Ստիպուեցայ հնազանդիլ:

— Ո՛վ ես դուն,— հարցուց երբ մօտեցայ իրեն:

— Հայ գաղթական,— պատասխանեցի:

— Ո՛ւր կ'երթաս:

— Ապու Քէմալ:

— Ի՞նչ գործ ունիս հոն:

— Էֆէնտի, մեզի Տէր-Ջօրէն ճամբայ հանեցին Ապու Քէմալ դրկելու համար: Երբ Միատին հասանք, ես ծանրապէս հիւանդացայ, չկրցայ ճամբաս շարունակել. կինս եւ զաւակս միւս գաղթականներուն հետ գացին: Հիմակ որ աղէկցայ, կ'երթամ կոր գանոնք գտնելու:

— Բայց Միատին եւ Ապու Քէմալ գետին միւս եզերքը կը գտնուին, դուն ինչո՞ւ այս կողմը անցար:

— Էլ Պուսէրա ազգական մը ունիմ անիկա տեսնելու համար:

— Սուտ կը խօսիս ինծի:

— Ծշմարիտ է, պէյ էֆէնտի:

Ժանտարման ծուռ ծուռ երեսս նայեցաւ եւ ըսաւ.

— Ես քեզի հիմա թեւերդ կապած Միատին կը տանէի, բայց ի՛նչ ընեմ որ այս կողմերը գործ ունիմ:

— Եթէ կ'ուզէք երթանք Միատին,— պատասխանեցի,— հոն ուստիկանները կը ճանչնան զիս եւ պիտի տեսնէք որ սուտ չեմ խօսիր:

— Սա ձիս քակէ՛ ու տար գետեզերքը ջուր խմցուր,— հրամայեց:

— Գլխուս վրայ...

Իր հրամանը կատարեցի:

— Հիմա կրնա՞մ երթալ,— հարցուցի:

— Կորսուէ՛,— պոռաց:

Եւ ես մեկնեցայ ուրախ ըլլալով որ այսչափ աժան ազատած էի:

Հազիւ թէ Արարներու վրաններուն մօտեցած էի, գաւազանով զինուած պատանի մը քովս մօտենալով մաչլախս առնելու գեց:

Դիմադրեցի, սպառնաց եւ ի վերջոյ կռիւի բռնուեցանք, որու միջոցին յաջողեցայ գաւազանը ձեռքէն առնել:

Ճամբաս շարունակեցի դէպի վրանները, մինչ պատանին ետեւէս կուգար գաւազանը պահանջելով:

Վերջապէս առաջին հանդիպած վրանս մտայ եւ գաւազանը նետեցի պատանիին որ հայհոյանքներ ու սպառնալիքներ տեղալով իմ հասցէիս, հեռացաւ:

Վրանին տէրը, պատկառելի մօրուքով ծերունի մը, սիրալիբ ընդունելութիւն մը ըրաւ:

Հարցուց թէ ո՛ւսկից կուգայի եւ ո՛ւր կ'երթայի:

Կցկտուր արարերէնով մը կրկնեցի իրեն ինչ որ ըսած էի ծանտարմային:

Հետզհետէ քովի վրաններէն շուրջս հաւաքուեցան կիներ եւ էրիկմարդիկ որոնք հետաքրքիր զիս կը դիտէին: Պէտք է գիտնալ որ վրանաբնակ արարներուն մէջ նամէհրամը \* շատ թոյլ է կամ աւելի ճիշդ բնաւ գոյութիւն չունի:

Վրանին տիրոջը ըսի որ անօթի էի: Հրամայեց կիներուն որ ուտելիք բերեն: Հաց, պուկուր եւ ալկան հրամցուցին եւ ես ախորժակով կերայ:

Հարցուցի թէ ե՞րբ ուրիշ վրաններու պիտի հանդիպէի:

— Երեք ժամ անդին,— պատասխանեցին:

Երբ ճամբայ ելայ երկու հօգի, որոնք շրջակայ վրաններէն ետեւէն, հետեւեցան ինծի:

— Ինչո՞ւ միասին կուգաք,— հարցուցի:

— Ծամբան ցոյց տալու համար,— պատասխանեց մին:

— Ծնորհակալ եմ, պէտք չի կայ:

— Ո՛չ, կրնայ ըլլալ որ մոլորիս:

Նորէն պնդեցի որ պէտք չկար ինծի ընկերակցելու, բայց ի զո՛ւր, մարդիկը օձիքս թոյլ չտուին:

\* Բառացի՝ ընտանիքից դուրս, օտար:



Այս բարեացակամութենէն դժգոհ՝ ճամբաս շարունակեցի այդ երկու Արարներուն ընկերակցութեամբ: Քիչ մը ետքը եկա մեզի միացաւ նաեւ այն պատանին որուն հետ խնդիր ունեցած էի: Այս պարագան կասկածներս աւելի շատցուցին:

Հազիւ կէս ժամ քալած էինք երբ Արարները կանգ առին ու զիս ալ կեցուցին:

— Հանէ՛ մաչլախդ, — հրամայեց իրենցմէ ամէնէն տարեցը որ երեսուն տարեկանի մօտ մօրուօք աւագակի դէմքով հուժկու մարդ մըն էր:

Փորձեցի աղաչանքով օձիքս ազատել: Անկարելի եղաւ:

— Շո՛ւտ մաչլախդ տուր, եթէ ո՛չ հիմա գլուխդ կը ջախջախեմ, — գոչեց եւ մէջքէն հանեց խոշոր մուրճը:

Անմիջապէս հնազանդեցայ:

Յետոյ մէկիկ մէկիկ հանել տուին միւս զգեստներս ալ, որոնք ինչպէս ըսի, պատառատուն քուրջերու վերածած էի: Առին նաեւ գլխանոցս եւ կօշիկս ու այդպէս մօրէ մերկ ըրին զիս:

Ապա ծաղրական շեշտով մը «Մասս սէլամի» (երթաս բարով) ըսին ու ետ դարձան:

Այսպէս, աղամական վիճակի մէջ, պահ մը գետինը նստայ խորհելով թէ՛ ի՞նչ պէտք էր ընէի: Անշուշտ հազար անգամ զրդջացած էի այս յիմարական ձեռնարկութենէս, սակայն չէի ուզեր ետ դառնալ այս վիճակով, մանաւանդ կը վախնայի որ էլ Պուսէրայի ոստիկանները զիս կը բռնեն ու կը բանտարկեն ու հաւանօրէն չարաչար կը ծեծեն ալ:

Որոշեցի ճամբաս շարունակել դէպի առաջ, բայց այս մօրէ մերկ վիճակիս մէջ ինչպէ՞ս պիտի կրնայի վրանները երթալ հիւրընկալութիւն խնդրելու:

Բաւական քալելէ ետքը հանդիպեցայ ծերուկ հովիւի մը որ իր ոչխարներուն քով, դաշտին մէջ նստած կը ծխէր:

Մօտեցայ իրեն: Մերկութիւնս տեսնելով իսկոյն գուշակեց եղելութիւնը:

— Կողոպտեցի՞ն քեզի, — հարցուց:

— Այո՛, — պատասխանեցի:

— Ո՛ւր տեղ:

— Հոսկէ հազիւ ժամ մը անդին:

— Քանի՞ հոգի էին:

Պատասխանեցի թէ երեք հոգի էին որոնք հետս ընկերացան: Մերուկի հովիւը տխրութեամբ գլուխը օրօրեց, ուրիշ քանի մը հարցումներ ըրաւ ազգութեանս, ուրկէ գալուս, ուր երթալու մասին եւ սիկարէթ մը հրամցուց:

Յետոյ, քովը դրուած աղտոտ տոպրակ մը բացաւ ու վերարկուի մը նմանող հին ու մին լաթ մը հանեց եւ ինծի երկարելով.

— Հագի՛ր, — ըսաւ:

Աղտոտութենէ սեփսեւ եղած խոշոր թաշկինակ մըն ալ տուաւ որպէսզի գլուխս ծածկեմ:

Այս անակնկալ զգեստաւորումը չափազանց ուրախացուց զիս: Երախտագիտութեամբ ձեռքը քաշեցի համբուրեցի եւ արարերէն լեզուով գոց ըրած բոլոր մաղթանքներս կրկնեցի:

Վերարկուն առանց թեւի բաճկոն մըն էր որ հազիւ ծունկերս կ'իջնար:

— Անօթի՞ ես, — հարցուց:

— Ո՛չ, — պատասխանեցի, — քիչ մը առաջ ճաշեցի:

— Քիչ մը հաց տամ քեզի:

Ու հէյպէհին\* մէջէն երկու հատ թարմ բլիթ հանեց:

— Ո՛ւր կրնամ վրաններ գտնել, — հարցուցի:

— Ասկէ երեք ժամ հեռուն, — պատասխանեց:

Ժամանակ չի կար կորսնցնելիք եւ հազիւ արեւը մարը մըտնելէ ետքը պիտի կրնայի հասնիլ այդ վրանները:

Կրկին շնորհակալութիւն յայտնեցի ու մեկնեցայ:

Մութը կը սկսէր եւ տակաւին վրանները չէին երեւար:

Քայլերս արագեցի, որովհետեւ օդը գոփանալ կը սկսէր:

Յանկարծ տեսայ որ դիմացէն Արար մը կուգար: Մարդը զիս տեսնելուն պէս շեշտակի իմ կողմս եկաւ:

\* Տոպրակ:

— Ո՞վ ես դու,— հարցուց:

— Ես խեղճ, աղքատ, հիւանդ Հայ մըն եմ... անա արմեն, միսքին, մարտան...\*

— Այս վերարկուն ուրկէ՞ առիր:

— Ձիւս ճամբան կողոպտեցին, բոլորովին մերկ ձգեցին, ծերուկ հովիւի մը հանդիպեցայ, վրաս խղճաց ու այս վերարկուն տուաւ:

— Սուտ կը խօսիս, դուն գողցած ես այդ վերարկուն,— գոչեց մարդը իր երկաթէ գնդակով ճոպը բարձրացուցած:

— Կ'երդնում որ ճշմարիտ կը խօսիմ:

— Շուտ հանէ՛ վրայէդ այդ վերարկուն:

— Կ'աղաչեմ, ուրիշ հագնելիք չունիմ:

— Հանէ՛, հիմա գլուխդ կը ջախջախեմ:

Եւ վերարկուն յանձնեցի մարդուն: Երջանկութիւնս հազիւ երկու ժամ տեւած՝ էր:

Հիմա, իբրեւ զգեստ, գլուխս փաթթած թաշկինակը ունէի միայն:

Այս վիճակին մէջ, գրեթէ վազելով, շարունակեցի ճամբաս եւ հասայ վրանները:

Դէմս ելլող առաջին վրանը մտայ, գլխուս խոշոր թաշկինակը մէջքս կապած:

Հոն գտնուող մէկ քանի կիները սկսան պոռալ կանչուըտել \* զիս խենթ կարծելով, որովհետեւ Արարիոյ մէջ խենթերը ընդհանրապէս մօրէմերկ կը պտըտին:

— Մէճնո՛ւն, մէճնո՛ւն (խենթ, խենթ),— կ'աղաղակէին խեղճերը սարսափահար:

Քովի վրաններէն եկան հաւաքուեցան հոն: Բարեբախտաբար խենթութիւնը, Արարներուն համար, սրբութեան նշան մըն է, ուստի ո՛չ ոք վրաս յարձակում գործեց, մանաւանդ երբոր տեսան թէ վտանգաւոր խենթ մը չէի, այլ շատ խելօք:

\* Մայրը հայ... (վերջից երկու բառերի իմաստը չլազրուեց պարզել):

\*\* Մչալ, գոռալ:

Սկսան զիս հարցուփորձել: Ըսի թէ Հայ մըն էի եւ թէ ճամբան կողոպտած էին զիս:

Այս յայտնութեան վրայ զիս վռնտեցին վրանէն: Ուրիշ վրան մը գացի, ուր միեւնոյն ընդունելութիւնը եղաւ ինծի: Հագուտի պակասութիւնը կը խրտչեցնէր զիրենք ու չէին ուզեր բոլորովին մերկ մարդ մը հիւրընկալել:

Վերջապէս գացի խոշոր վրան մը ուր պատկառելի ծերունի մը նստած էր եւ կը թուէր ըլլալ խումբին պետը կամ շէյխը: Այս մարդը միւսներէն աւելի հիւրընկալ գտնուեցաւ, զիս չվռնտեց եւ լաթ մը նետեց վրաս որպէսզի մերկութիւնս ծածկուի:

Չմոռնամ ըսելու որ ամէն վրանի առջեւ մէյ մէկ խոշոր շուն կեցած են իբրեւ պահապան եւ որոնք միշտ հաչելով ու խածնելու սպառնալիքով վրադ կը յարձակին եւ իրենց տիրոջ մէկ հրամանին կ'սպասեն քեզ յօշոտելու համար: Բարեբախտաբար առանց հրամանի այդ ծայրայեղութեան չեն դիմեր:

Օրուան յոգնութիւնները ալ ուժասպառ ըրած էին զիս, հազիւ թէ ծերունին վրանին անկիւնը տեղ մը ցոյց տուաւ ինծի, գլուխս գետին դրի եւ անմիջապէս խոր քունի մը մէջ ընկղմեցայ:

Երկար չկրցայ քնանալ սակայն: Ծերունին եկաւ զիս արթնցուց եւ ըսաւ.

— Ե՛լ կերակուր պիտի ուտենք:

Քնանալէ առաջ ծերունիին հարցումներուն պատասխանելով հասկըցուցած էի Հայ տարագիր մը ըլլալս եւ նշմարած էի որ այս յայտնութիւնը վատ տպաւորութիւն ըրած էր իր վրան, բայց ուրիշ կերպ չէի կրնար վարուիլ, որովհետեւ ո՛չ կրնայի ինքզինքս Արար կեղծել, ո՛չ ալ թուրք: Այդ պարագային հարկ պիտի ըլլար մասնակցիլ իրենց ապտէսթին\* ու նամագին, ինչ որ չէի կրնար կատարել եւ եթէ խաբէութիւնս երեւան ելլէր՝ աւելի գէշ կ'ըլլար վիճակս:

Հազիւ թէ պառկած տեղէս ելայ՝ ծերունին պղինձէ խոշոր ա-

\* Նամագից ատաք կատարուող լուացումից:

ման մը եւ կուժ մը ներկայացուց ինծի որպէսզի ճաշէն առաջ  
ձեռքերս լուամ եւ սկսաւ ինք ջուրը լեցնել. թէեւ սրտմտած դէ-  
քով մը եւ քթին տակէն մուտալով: Յայտնապէս կը տեսնուէր որ  
այդ մարդը թշնամական զգացումներ ունէր ինծի հանդէպ. բայց  
որովհետեւ իր հիւրն էի, ստիպուած կը զգար ինքզինքը հիւրըն-  
կալութեան օրէնքները յարգելու: Տալօրինակը այն էր որ վրա-  
նին մէջ կային ուրիշ 5-6 երիտասարդներ. իր զաւակներն ու փե-  
սանները հաւանօրէն, բայց եւ այնպէս ինք ջուր կը լեցնէր ձեռ-  
քիս:

Լուացքէն յետոյ բոլորուեցան գետինը խոշոր ամանի մը  
շուրջը որ պուլկուրի փիլավով լեցուած էր: Հացը կամ լաւալը  
առատօրէն բաժնուեցաւ:

Կիները չէին մասնակցեր ճաշին, անոնք ետքը պիտի ուտէին  
երբ մենք աւարտէինք:

Ամանի մը մէջ լեցուած էր ջրախառն կաթ զոր փոխն ի փոք  
կը խմէինք:

Մատներով փիլավ ուտելը շատ դժուար էր ինծի համար.  
ուստի դանդաղօրէն կը մասնակցէի ճաշին:

Մերունին ատեն ատեն զիս կը ստիպէր ուտելու սա տեսով  
խօսքերով.

- Եաքուկ եա՛ խընդիր (կե՛ր ո՛վ խոզ):
- Եաքուկ եա՛ կեա՛վատ (կե՛ր ո՛վ կա՛վատ):
- Եաքուկ եա՛ տէյուս...\*, - եւ այլն:

Այս սիրալիր հրաւերներուն կը պատասխանէի կրցածս  
չափ ուտելով:

Միւս սեղանակիցները որեւէ խօսք չէին ըսեր, անշուշտ  
պատկառելով ծերունիին:

Հազիւ թէ ճաշը աւարտած՝ նորէն փռուեցայ գետին ու քնա-  
ցայ վրաս առած խոշոր հէյպէ մը որ կը ծածկէր մարմնոյս կե-  
սը, իսկ միւս կէսը մերկ տարածուած էր հողին վրայ:

Արարական վրանները շատ գէշ պատասպարուած են: Միայն

\* Կե՛ր ո՛վ եղջիրակիր:

ետեւի կողմը մինչեւ գետին ծածկուած է, աջ ու ձախ կողմերը  
կէս կանգունի չափ բացուածք մը ունին, իսկ առջեւի կողմը բու-  
լորովին բաց է:

Թէեւ յունիսի մէջ էինք, բայց ինչպէս Եգիպտոս, Միջագետք  
ալ գիշերը միշտ զով կ'ընէ. մանաւանդ որ յաճախ արեւելեան  
հով մըն ալ կը սկսի փչել:

Այսպէս իմ թեթեւ ծածկոցովս ու մերկ մարմնովս չափա-  
զանց կը մսէի, այնպէս որ անկարելի եղաւ քնանալ: Քունիս  
մէկ արգելքն ալ շուրջս կապուած այծերն էին որոնք հանդարտ  
չէին կենար եւ շատ գէշ կը հոտէին:

Վրանին մէջ ամէնքը կը քնանային իրենց հաստ մաշխախնե-  
րուն եւ ոչխարի մորթէ վերարկուներուն ներքեւ: Երանելի՛  
մարդիկ, ի՛նչ հանգստաւէտ անկողին, ի՛նչ ճոխութիւն, ի՛նչ  
պերճանք...:

Այս մտածումներուն մէջ էի երբ ծերունին որ ինէ քիչ մը  
անդին պառկած էր, քունէն արթնացաւ. գլխուն տակ բան մը  
փնտոեց եւ չգտնելով շուրջը նայեցաւ: Յետոյ ելաւ, քովս եկաւ  
ու քթին տակէն հայհոյելով՝ վրայէս քաշեց հանեց հէյպէն ու  
զայն ծրարելով՝ գլխուն բարձ շինեց եւ կրկին քնացաւ:

Ա՛յ վիճակս անտանելի դարձաւ: Հովը ամէն կողմէ վրանէն  
ներս կը խուժէր ու ես ցուրտէն կը դողդողայի շարունակ: Կը  
խորհէի որ այս կացութեան մէջ մինչեւ առտու պիտի չկրնայի  
դիմանալ եւ հիւանդ պիտի իյնայի:

Փորձեցի այծերէն մէկը գիրկս առնել եւ այս կերպով քիչ մը  
պատասպարուիլ ցուրտին դէմ, բայց չարածճի կենդանին, որ ի-  
նէ շատ աւելի բախտաւոր, սեւ մուշտակ մը հագած էր ու մսո-  
ղին վիճակէն չէր հասկնար, չուզեց այդ բարիքը ընել ինծի եւ  
կոտորչներովը սպառնալով փախաւ քովէս:

Քանի գիշերը կը յառաջանար այնչափ կ'աւելնար ցուրտը:

Խորհեցայ երթալ վրանին կեդրոնը որ բաղդատաբար աւելի  
պատասպարուած էր եւ ուր դրուած էին կերակուրի անօթները  
եւ ալիւրի, ցորենի ու գարիի հակերը: Կրնայի անոնց մէջ ա-  
պաստանիլ:

Կամացուկ մը գացի եւ երկու հակերու մէջ տեղաւորուեցայ, բայց ահա՛ պառաւ կին մը որ քիչ մը անդին պառկած էր, արթընցաւ եւ զիս հոն տեսնելով սկսաւ. «Հառամի՛, հառամի, (գո՛ղ, գող)», պոռալ:

Ձատուկը կը կարծէր թէ իրենց անօթները գողնալ կ'ուզէի:

Վրանին մէջ ամէնքը արթնցան եւ մարդերէն մին թեւէս բռնելով ու լուտանքներ տեղալով զիս դուրս նետեց վրանէն: Ի գո՛ւր կը ջանայի բացատրել թէ բան գողնալու դիտաւորութիւն չունէի, թէ մտելու համար հոն գացած էի:

– Հառամի,– կը կրկնէին ամէնքը միաբերան:

Տեսայ որ ծեծ ուտելու հաւանականութիւնն ալ կար, ուստի արագ քայլերով հեռացայ:

Ո՛ւր երթալ սակայն:

Կէս գիշեր ըլլալու էր եւ լուսինը կը լուսաւորէր ընդարձակ տարածութիւնը: Ծամբորդութիւնս շարունակել անհնարին էր այս վիճակիս մէջ: Կարելի չէր քսանհինգ երեսուն օր տանիլ այդ կեանքը: Որոշեցի վերադառնալ էլ Պուսէրա ձերբակալուելու, բանտարկուելու, ծեծ ուտելու վտանգը աչք առնելով:

Սկսայ արագ արագ քայլել նուազ մտելու համար: Վտանգաւոր էր վրաններուն մէջէն երթալը գիշերուան այդ ժամուն: Շունները պիտի յարձակէին վրաս, մարդիկ պիտի արթննային եւ, ո՛վ գիտէ, թերեւս զիս գող կարծելով սպաննէին: Ուստի վրանները թողուցի եւ դէպի ամայի դաշտը ուղղուեցայ, այսպէս շեղելով ուղիդ ճամբէն ու Եփրատի եզերքէն:

Բաւական քալելէ ետքը՝ ցախաստան մը ելաւ դէմս որուն մէջէն նեղ արահետ մը կ'անցնէր, այդ արահետը բռնեցի գացի: Ոտքիս տակ մողէզներ ու տեսակ տեսակ սողուններ ժուռ կուգային, հեռուէն կը լսուէր ջագալներու ոռնումը եւ ամէն վայրկեան կը վախնայի թէ օձերու պիտի հանդիպիմ: Յանկարծ արահետը վերջացաւ եւ չորս կողմս ցախերը պատեցին: Ստիպուած էի անոնց մէջէն քայլել: Այդ փշոտ տունկերը մինչեւ մէջքս կը բարձրանային ու ամէն մէն քայլիս կը խայթէին մարմինս: Կը

զգայի թէ սրունքներս կ'արիւնոտէին եւ սակայն կը շարունակէի քայլել:

Աքսորանքիս մէջ, առաջին անգամ ըլլալով, յուսահատութիւնն ու լքումը կը տիրէր վրաս: Կը մտածէի թէ ուժասպառ հո՛ն, ցախաստանին մէջ պիտի մնամ ու ջագալներուն կեր ըլլամ եւ բարձրաձայն «Ա՛լ կ'օգտէ, ա՛լ կ'օգտէ» կը պոռայի, խօսքս ուղղելով չեմ գիտեր ինչ անագորոյն աստուածութեան մը:

Որչա՞փ տեւեց այս տանջանքը ժա՞մ մը, թերեւս աւելի, չեմ գիտեր: Վերջապէս ցախաստանէն դուրս ելայ եւ ինքզինքս գտայ աւազուտ դաշտի մը մէջ:

Թէեւ հանգչելու պէտք ունէի բայց կարելի չէր նստիլ կամ կենալ, որովհետեւ պիտի սկսէի դողդղալ, մինչդեռ քալելով քիչ շատ կը տաքնայի:

Ձախ կողմս, հեռուն, լուսնի լուսով, ծառեր կ'երեւային, նշան մըն էր թէ Եփրատը այն կողմն էր եւ դէպի հոն ուղղուեցայ: Կ'ուզէի լուալ ոտքերս ու սրունքներս որոնցմէ արիւնը կը կաթկթէր:

Հասայ վերջապէս գետին եզերքը եւ քիչ մը լուացուելէ ետքը կրկին ճամբաս շարունակեցի, այս անգամ չբաժնուելով գետեզրէն: Եւ ահա ինկայ վրաններու մէջ, 10-15 շուներ սկսան զիս հալածել: Եւ ո՛չ իսկ գաւազան մը ունէի ինքզինքս պաշտպանելու համար: Խելայեղօրէն սկսայ վազել մինչեւ որ հեռացայ իրենց սահմանէն:

Շունները մինչեւ որոշ սահման մը կը հալածեն օտարականները եւ յետոյ կը վերադառնան իրենց տեղերը:

Այս փորձանքէն ալ ազատելով սկսայ առաջ երթալ: Չափազանց յոգնած էի՝ բայց չէի ուզեր նստիլ չմտելու համար: Վերջապէս արշալոյսը ծագեցաւ ու քիչ յետոյ արեւը սկսաւ բարձրանալ հորիզոնին վրայ, մինչ լուսինը որ իր լրման մէջ էր, կը խոնարհէր հակառակ կողմէն: Հագիւ թէ քիչ մը բարձրացած՝

արեւը սկսաւ տաքցնել զիս: Անգամ մըն ալ գացի Եփրատի ե-  
զերքը, լուացուեցայ, ջուր խմեցի ու դէպի աջ դառնալով անա-  
պատի ճամբան բռնեցի:

Տաքը կը սաստկանար Հետզհետէ եւ ես որ գիշերը ցուրտէն  
կը դողդղայի, հիմա անտանելի կերպով կը նեղուէի տաքէն:

Ու կը յիշէի Ծննդոց գրքին պատմութիւնը:

Յակոբ նահապետ որ Միջագետքի մէջ, քսան տարի, Լաբա-  
նի քով ծառայելէ ետքը անոր երկու աղջիկներուն, Լիայի ու  
Ռաքէլի հետ կ'ամուսնանայ ու իր հոտերովը եւ ուղտերովը,  
ճամբայ կ'ելլէ իր երկիրը դառնալու համար: Լաբան ետեւէն կը  
հասնի ու կ'ամբաստանէ Յակոբը թէ իր կուռքերը միասին տա-  
րած է: Այն ատեն Յակոբ կը սկսի գանգատիլ իր տագերով.  
«Ի՞նչ կ'ուզես ինէ, — կ'ըսէ, — ա՛լ չբաւե՞ր ինծի ըրածներդ, ե-  
թը տարի Լիային համար, եթը տարի Ռաքէլին համար ու վեց  
տարի ոչխարներուն եւ այծերուն համար զիս քովդ գերիի պէս  
աշխատողցիր իբրեւ հովիւ: Յորեկը տաքը եւ գիշերը ցուրտը  
կը մաշէր զիս»:

Անոնք որ մեր այստեղերու կլիմաներուն ծանօթ են միայն,  
թերեւս տարօրինակ գտնեն Յակոբ նահապետի բացականչու-  
թիւնը որովհետեւ հոս ամառ գիշերները այնքա՛ն տաք են որ-  
քան ցորեկները:

Այնքան քնատ ու յոգնած էի որ հանգչելու համար կը նըս-  
տէի՝ անմիջապէս աչքերս կը գոցուէին եւ կ'զգայի որ խոր քու-  
նի մէջ պիտի թաղուիմ եթէ ինքզինքս չթօթուեմ ու ոտքի ելի-  
լով չքալեմ:

Երկու հազար քայլ կ'երթայի, քիչ մը կը նստէի ու կրկին  
երկու հազար քայլ կ'առնէի, քայլերս համրելը տեսակ մը ժա-  
մանց կ'ըլլար ինծի համար:

Վերջապէս, ցերեկուան մօտ, հեռուէն նշմարեցի էլ Պուսէրայի  
հին, աւերակ միջնաբերդը որ կարծեմ բիւզանդական շինուածք  
մըն է:

Ասիկա երանութեամբ լեցուց ամբողջ էութիւնս: Էլ Պուսէ-

րա հիմակ դրախտ մը կը թուէր ինծի եւ հոն հասնիլը երջան-  
կութիւններուն ամէնէն մեծը:

Քայլերս արագեցի ու հասայ Խուլպուրի եզերքը: Սարսափե-  
լի կերպով ծարաւցած էի ու անյագօրէն ջուր խմեցի, յետոյ  
լուացուեցայ եւ շուրջս դիտեցի որ մօտերը մարդ չի կար:  
Տունս քիչ մը անդին, հազիւ քանի մը հարիւր քայլ հեռուն էր:

Վազն ի վազ գացի առանց մէկու մը հանդիպելու եւ մտայ  
տունս:

Ստեփան եւ ատանացի վարժապետին կինը հո՛ն էին:

Քանի մը խօսքով պատմեցի գլխուս եկած փորձանքները եւ  
ինկայ անկողնիս վրայ: Այնչա՛փ յոգնած եւ քնատ էի որ, հա-  
կառակ անօթի ըլլալուս, չուզեցի բան մը ուտել եւ նախընտրե-  
ցի քնանալ:

Ստեփանը ինձ հաւաստեց թէ փախուստէս տակաւին ո՛չ ոք  
տեղեկութիւն ունէր:

Երբ իրիկուան դէմ արթնցայ երկու ոտքերս ալ ուռեցած էին  
ու չէի կրնար վրանին կոխել:

Մօրեղբայրս ճերմակեղէններ ղրկած էր որոնք հագայ: Ստե-  
փան ինծի պատմեց թէ՛ Չաքար որ Ալի Րիզայի հետ Տէր-Չօր  
գացած էր, իր արհեստին վերաբերեալ գործիքներ գնելու հա-  
մար, խոյս տուած էր եւ Ալի Րիզա ոստիկանին հետ առանձին  
վերադարձած էր:

Հետեւեալ առտու կանուխ, երբ տակաւին չէր լուսցած,  
Ստեփան եւ ուրիշ իսկէնտէրունցի Հայ մը նոյնպէս խոյս տուին  
Հալէպ երթալու համար:

Այս երեք փախուստները, մէկ երկու օրուան միջոցին, բաւա-  
կան խնդիր յարուցին եւ միւտիւրը որոշեց որ բոլոր աքսորա-  
կան Հայերը մէկ տան մէջ բնակին որպէսզի անոնց վրայ հսկե-  
լը դիւրին ըլլայ:

Այսպէս երեք չորս սենեակէ բաղկացած պարապ տուն մը  
փոխադրուեցանք ամէնքս:

Ա՛լ ժամանակի մը համար հրաժարեցայ փախուստի գաղա-

փարէս: Արդէն ամիս մը տեւեց մինչեւ որ ոտքերնուս վէրքերը բուժուեցան:

Նոյն միջոցին Միատինէն էլ Պուսէրա աքսորեցին նաև տղթոր Արմենակ Մարգարեանը, որուն հետ ճամբայ ելած էինք Տէր-Զօրէն:

Յետոյ, եկաւ նաև ուրիշ երիտասարդ մը՝ Սանթուր օղլու Արամ, բնիկ հաճընցի, մատնիչ դաւաճան մը:

Շատ քիչ կը գտնուի կարծեմ Արամի պէս վատթար, ապականած, գարշելի նկարագրով հրէշ մը: Բարոյական գիտակցութիւն բնաւ չունէր այդ երիտասարդը եւ իր գործած վատութիւններն ու ոճիրները կը պատմէր տեսակ մը պարծենկոտ հպարտութեամբ ու անձնագով պոռոտախօսութեամբ:

Իր սխրագործութիւնները կը պատմէր ապշեցուցիչ անամօթութեամբ մը:

Սանթուր օղլու Արամ ուրիշ 5-6 հոգիի հետ կը ձերբակալուի, իբրև յեղափոխական, եւ Պատերազմական ատեանի կողմէ ամէնքն ալ մահուան կը դատապարտուին: Այն ատեն Արամ խնդրագիր մը կը գրէ, որուն մէջ կ'ըսէ թէ իր մահուամբ օսմանեան պետութիւնը բան մը չչահիր, մինչդեռ եթէ զինքը ողթողուն կրնայ իր յայտնութիւններովը մեծամեծ ծառայութիւններ մատուցանել: Խնդրագիրը հեռագրով կը հաղորդուի ծէմալ փաշայի ուրկէ պատասխան կուգայ որ միւս դատապարտեալները կախեն եւ Արամը ողջ թողուն պայմանաւ որ իր յայտնութիւնները ընէ:

– Բարեբախտաբար, – ըսաւ Արամ, – գիտէի թէ հաճընցիներուն զէնքերը ո՛ւր պահուած են եւ առաջին անգամ զանոնք ցոյց տուի: Մինչեւ ութը հարիւր հրացան կրցայ երեւան հանել եւ ասով ամէնուն գովեստին ու համակրանքին արժանացայ: Ձիս բոլորովին ազատ արձակեցին, դրամական նուէրներ ըրին, ամսական կապեցին: Յետոյ սկսայ զանազան զրպարտութիւններով բանտարկել տալ 36 հաճընցի Հայ երեւելիներ որոնք Պատերազմական ատեանի կողմէ մահուան դատապարտուե-

ցան ու կախաղան հանուեցան: Ես ալ ներկայ էի արարողութեան եւ մէկ քանիին աթոռը ես իմ ձեռքովս քաշեցի:

– Անձնական հակառակութիւ՞ն ունէիր այդ մարդոց հետ:

– Ձէ՛, բնաւ երբեք:

– Ուրեմն ինչո՞ւ համար ուզեցիր ձեռքովդ դահիճի պաշտօն կատարել:

– Պարզապէս հաճոյքի, քէյֆի համար, քիչ մըն ալ որպէսզի թուրքերուն աչքը մտնամ:

Արամ յետոյ իր զոհերէն մէկուն 14 տարեկան աղջիկը բռնի կ'առնէ ու հետը կ'ամուսնանայ:

Յետոյ վրայ կը հասնի տեղահանութիւնը եւ Արամ սէվքիաթի պաշտօնեայ կը նշանակուի:

– Այն ատեն ալ աղէկ գործ տեսայ, – կը պատմէր, – ամէնքը կը սարսափէին ինէ, դրամ կուտային որպէսզի զիրենք քանի մը օր ետքը սէվք ընել տամ: Դրամը կ'առնէի ու դարձեալ ես իմ գիտցածս կ'ընէի:

Արամ յետոյ կ'երթայ Ատանա ուր իր բարուք ծառայութիւններուն համար ժանտարմաներու միւլազիմ կը կարգուի:

– Անգամ մը կարեւոր գործի մը համար Հաճըն եկայ, – ըսաւ, – բայց պէտք չէր որ հոն մնացող Հայերը եւ թուրքերը զիս ճանչնային, ասոր համար կեղծ պիտեր, սեւ ակնոց, սուտ մազ դրի ու բոլորովին կերպարանափոխ եղայ: Ոստիկանապետը սակայն ուզեց փորձել թէ իրաւցնէ անճանաչելի՞ էի: Ասոր համար հետեւեալ միջոցին դիմեցինք: Հայրս որ Հաճըն մնացած էր, բերել տուինք ոստիկանատուն եւ ես սկսայ զինքը հարցաքննել եւ ամբաստանել որ ինքը յեղափոխականներու հետ յարաբերութիւն ունի: Ուրացաւ, ես պնդեցի ծանր սպառնալիքներ ընելով: Յետոյ իրեն ըսի.

– Ձիս կը ճանչնա՞ս:

– Ձէ՛, չեմ ճանչնար, – պատասխանեց:

– Սուտ կը խօսիս, կը ճանչնաս զիս:

– Կ'երդնում որ չեմ ճանչնար:

— Ես հիմա շիտակը ըսել կուտամ քեզի,— գոչեցի ու ձեռքս գտնուած խարազանով սկսայ չարաչար ծեծել զինքը «ով ըլլալս ըսէ՛», պոռալով: Հայրս երդուած կ'ընէր որ զիս չէր ճանչնար եւ ես կը շարունակէի ծեծել զինքը: Ի վերջոյ ոստիկանապետը ըսաւ որ ա՛լ բաւ էր եւ թէ փորձը յաջողած էր: Ու հրամայեց որ կեղծ մազս ու պեխերս հանեմ: Եւ հօրս դառնալով ըսաւ.

— Հիմա նայէ ո՞վ է աս մարդը:

— Զաւա՛կս է եղեր,— գոչեց հայրս ապուշ կտրած:

Այս անգամ ալ յաջողեցայ ինծի յանձնուած գործին մէջ ու 5-6 հոգիի գլուխը վառեցի:

Յետոյ Հայ չէթէներ ելած էին Իսլահիէի կողմը: Ես ըսի որ կրնայի անոնց գտնուած տեղը երեւան հանել եւ ութսուն ձիաւոր ոստիկանի գլուխը անցած՝ ճամբայ ելայ: Բայց այս անգամ գործը անյաջող ելաւ ու մենք ինկանք ծուղակը եւ ոստիկաններէն 15-17 հոգի սպանուեցան չէթէներուն կողմէ: Այս ճախողութիւնը վնասեց ինծի ու զիս պաշտօնանկ ըրին: Բայց նորէն իբրեւ սիվիլ խաֆիէ\* կը ծառայէի իրենց եւ գործս լաւ էր: Սպառնալիքով ուզած դրամս կ'առնէի Ատանա մնացող Հայերէն: Վերջին անգամ այդ տեսակ սպառնալիք մը ըրի մէկու մը որ մէկտուս իւրթլախեանի ազգական է եղեր, ասոր վրայ իւրթլախեան էֆէնտի վալիին ու քօմանտանին\*\* դիմեց եւ զիս Տէր-Զօր քստրել տուաւ:

Ուրիշ անգամ մը Սանթուր օղլու Արամ հետեւեալը պատմեց.

— Պատերազմէն առաջ, իբրեւ աշկերտ, Մերսին Հայ բողոքական դեղագործի մը քով կը գտնուէի: Կիրակի օր մը, երբ դեղագործը եւ իր ընտանիքը ժողովարան գացած էին եւ ես տան մէջ առանձին էի, սնտուկը կտորեցի եւ հոն գտնուող երկու հատ ոսկի ժամացոյցները եւ 25 ոսկի գողցայ, յետոյ սենեակին

\* Գաղտնի գործակալ:

\*\* Հրամանատարին:

մէջտեղ կրակ վառեցի ու տան դուռը գոցելով վազեցի եկայ ժողովարան ու ես ալ աղօթողներուն մէջ նստայ:

Ժողովարանը աւարտելուն՝ երբ դուրս ելանք լուր բերին որ տուններնիս կ'այրէր: Ես ու դեղագործը վազելով գացինք, բայց տունը արդէն բոցերու մէջ էր: Իբր թէ յուսահատութենէս սկսայ լալ, պոռալ, կանչել, ձեռքերս գլխիս զարնել, այն աստիճան որ դեղագործը սկսաւ զիս մխիթարել:

\*\*\*

Էլ Պուսէրայի մէջ, բնականաբար կեանքերնիս շատ միօրինակ կ'անցնէր: Կարապետ իր երկու եղբայրներով փայտէ սանտրոններ կը շինէր ու Արաբ գիւղացիներուն կը ծախէր: Ալի Րիզա եւ Թէվֆիք ոսկերչուութեամբ կը զբաղէին ու Արաբ կիներու համար թեւի ու ոտքի արծաթեայ ապարանջաններ կը շինէին եւ կամ կը նորոգէին: Քէշիշ օղլուի որդին՝ Անդրէաս՝ դերձակութիւն կ'ընէր ու միւստիւրին հագուստները կը նորոգէր: Տոքթոր Արմենակ Մարգարեան իր արհեստը ի գործ կը դնէր բնականաբար, իբրեւ վարձք ընդունելով ցորեն, իւղ, կաթ, հաւ կամ հաւկիթ պայմանաւ սակայն որ իր խնամած հիւանդները առողջանային:

Պէտք է գիտնալ որ Արաբները, մանաւանդ վրանաբնակները, շատ կարեւորութիւն չեն տար բժիշկի ու դեղի: Հիւանդ դարմանելու իրենց միջոցներն են «նուսխա» գրել տալ ու հիւանդին վզէն կախել եւ կամ կրակի մէջ կարմրած երկաթի կտորով մը մարմնոյն ո եւ է մէկ մասը այրել: Շէյխերը շատ անգամ իրենց աղօթքներով բժշկութիւն կ'ընեն:

Էլ Պուսէրայի մէջ թղթատուն չկայ եւ շատ դժուար է արտաքին աշխարհի հետ յարաբերութիւն մշակելը:

Եթէ ժանտարմա մը գործով Միատին երթար՝ առիթէն կ'օգտուէինք մեր նամակները զրկելու համար: Իսկ մեզի զրկուած

նամակները նոյնպէս ժանտարմաները կը բերէին եթէ դիպուկա-  
ծը զիրենք էլ Պուսէրա զրկէր: Հայերէն լրագրի երես բնաւ  
չէինք տեսնել, երբեմն թուրքերէն թերթ մը ձեռքերնիս կ'անց-  
նէր, այն ալ երկու երեք ամսուան հին թուականով մը:

Օրուան կացութեան մասին լուրերը կը ստանայինք տեղացի  
Արաբներէն, ա'լ կրնաք երեւակայել թէ ո՛ր աստիճան ճշմարտա-  
պատում կ'ըլլային անոնք:

Մօտակայ ագարակի մը մէջ Յովհաննէս անուն ռոտոսթօցի  
պարտիզպան մը կար, որ երբեմն իր տիրոջ պարտէզին բանջա-  
րեղէնները կը տանէր Տէր-Ջօր վաճառելու համար: Անհամբեր  
անոր վերադարձին կը սպասէինք լուր առնելու համար: Ինքն  
ալ իր լուրերը կը քաղէր ուրիշ Հայ պարտիզպանէ մը որ Տէր-  
Ջօրի մէջ կ'աշխատէր պէյի մը քով:

Ամէն անգամ մեզի տալիք զգայացունց լուր մը ունէր Յով-  
հաննէս:

– Ֆրանսացիները Սօֆիան գրաւել են, կամ Ռուսերը մին-  
չեւ Սերաստիա հասնել են եւ այլն:

Եւ ամբողջ օր մը, քով քովի եկած, այդ լուրերը կը մեկնա-  
բանէինք ու հետեւութիւններ կը հանէինք անոնցմէ:

Իբրեւ ընթերցանութեան գիրք վեցլեզուեան խօսակցու-  
թեան դասագիրք մը եւ աշխարհաբար աւետարան մը ունէի  
գոր տոքթոր Մարգարեան փոխ տուած էր:

Մեր ժամանցի միջոցներն էին թղթախաղը եւ լօգանքը Եփ-  
րատի կամ Խուպուրի մէջ:

Գրեթէ ամէն իրիկուն մօրեղբայրս, տոքթոր Մարգարեանն ու  
Քէշիշ օլլու այցելութեան կ'երթային միւտիւրին որ բացօթեայ  
հիւրանոց մը ունէր սարային դրան դէմը: Հոն կը հաւաքուէին  
նաեւ գիւղին երեւելիները:

Ես ընդհանրապէս հեռու կը փախչէի միւտիւրէն ու իր շրջա-  
նակէն եւ կը ջանայի որ ո՛ր եւ է կերպով ուշադրութիւն չհրաւի-  
րեմ իմ վրաս: Ոտքս բոպիկ, գլուխս բաց, առանց ժիլէի ու ժ-  
քէթի շալվարանման հաստ կտակէ վարտիք մը հագած՝ կը շը-  
ջէի գիւղին մէջ:

Միւտիւրը անորոշապէս գիտէր թէ արհեստաւոր էի, լամա-  
պաճի կամ տէօքմէճի, ու երբեմն կ'ըսէր միւսներուն ինծի հա-  
մար:

– Շու ապտալա պիր իշ պուլմատըք\*:

Օր մը նոյնիսկ ըսաւ թէ ինչ<sup>ո</sup>ւ տէօքմէճի խանութ մը չէի  
բանար:

Բացատրեցի իրեն թէ տէօքմէճին առանձին չէր կրնար գոր-  
ծել, թէ իրեն հոս պէտք էր նաեւ օճախճի մը, թօռնօճի\*\* մը եւ  
էյէճի\*\*\* մը:

Այս բացատրութենէս ետքը ա'լ օճիքս թողուց:

Մոռցայ մեր մեծագոյն ժամանցը որ էր ոչլահաւաքութիւն:  
Օրը երկու անգամ, առտու, իրիկուն մէյ մէկ ժամ կը յատկաց-  
նէինք այդ գործողութեան եւ միշտ արդիւնաւոր կերպով: Իսկ  
ստանացի վարժապետը իր ամբողջ պարապոյ ժամերը յատկա-  
ցուցած էր այդ գործին:

Օր մը կարեւոր լուր մը լսեցինք որ մեծ յուզում առաջ բե-  
րաւ էլ Պուսէրայի մէջ: Անգլիացիները տիրած էին Ռօմատիի  
եւ թուրքերը քաշուած էին մինչեւ Հիթ:

Կ'ըսուէր թէ յարձակումը ուժգնօրէն կը շարունակուէր եւ  
հաւանական էր որ թուրքերը Հիթն ալ լքէին ու գային Անա:  
Արաբներուն մէջ իրարանցումը շատ մեծ էր եւ օրերով զգայա-  
ցունց լուրեր կ'առնէինք ամէն կողմէ:

Պէտք է ըսել թէ Արաբները ուրախութեամբ կ'ողջունէին  
անգլիական յաջողութիւնները եւ կ'ուզէին որ անոնք ժամ առաջ  
հասնէին մինչեւ Տէր-Ջօր:

Գիտէինք որ թուրքերը շատ տկար եւ ուժասպառ բանակ մը  
ունէին այդ ճակտին վրայ ու կ'ենթադրէինք որ Անգլիացիները  
կրնային 15-20 օրէն հասնիլ մինչեւ Միատին եւ էլ Պուսէրա:

Միւտիւրն ալ բաւական իրար անցաւ եւ նոյնիսկ իր կիներն  
ու զաւակները Տէր-Ջօր զրկեց, ամէն հաւանականութեան դէմ  
պատրաստ գտնուելու համար:

\* Այս ապուշիմ մի գործ չգտանք:

\*\* Գործիքագործ:

\*\*\* Խառատ:



Եւ սակայն, ափսո՛ս, անգլիացիները Ռոմատիէն ասդին չանցան ու մեր յոյսերը ի դերեւ ելան:

Ընդհակառակը քանի մը օր ետքը տարբեր լուրեր սկսան տարածուիլ:

Իբր թէ հարիւր հազար թուրք զինուորներ, որոնց կ'ընկերանային քսան հազար Գերմանացիներ, ճամբայ ելած էին Տէր-Ձօր եւ անկէ ալ ռազմաճակատ երթալու համար: Այդ բանակը ո՛չ թէ միայն Ռոմատին՝ այլ նաեւ Պաղտատն ալ ետ պիտի առնէր:

Իրիկուն մը միւտիւրը ըսած էր.

– Ես մինչեւ հիմա չէի հաւատար կոր այդ օգնութեան բանակին գոյութեան, բայց հիմա սկսայ հաւատալ, որովհետեւ պաշտօնապէս լսեցի որ 30 հազար ձիաւոր արդէն իսկ Հալէպէն ճամբայ ելած են եւ Տէր-Ձօրի միւթէսարըՔը հրահանգ ղրկած է ինծի անմիջապէս հաւաքելու իմ շրջանակիս մէջ գտնուած յարդը եւ զայն մթերանոցներու մէջ պահելու:

Արդարեւ հետեւեալ օրն իսկ ոստիկանները սկսան, բռնի կերպով Արաբներու քով գտնուած յարդերը գրաւել եւ զանոնք դիզել հին միջնաբերդին ներքեւ գտնուող ընդարձակ նկուղներուն մէջ:

Բայց երեսուն հազար ձիաւորները երբեք չերեւցան:

\* \* \*

Նոյնիսկ էլ Պուսէրայի մէջ երկար ատեն մեզ հանգիստ չթողուցին:

Օր մը ոստիկան մը եկաւ մեր տունը եւ սկսաւ մեր անունները եւ տարիքը գրել:

Հասկցանք որ անախորժ բան մը կար ասոր ծայրը:

– Ինչո՞ւ համար կը գրէք,– հարցուցինք ոստիկանին:

– Չեմ գիտեր, միւտիւր պէյը այնպէս հրամայեց,– պատասխանեց:

Իրիկունը տոքթոր Մարգարեան միւտիւրէն լուսաբանութիւն մը ուզած էր:

– Ես ալ չեմ գիտեր, այսպէս հրահանգ եկաւ Միատինի գայմագամէն,– պատասխանած էր:

Քանի մը օր ետքը նոյնինքն գայմագամը եկաւ էլ Պուսէրա եւ հիւր եղաւ միւտիւրին:

Իր մեկնումէն ետքը իմացանք թէ որոշուած է եղեր մեզ ամէնքս, այսինքն 15-էն մինչեւ 70 տարեկան որչափ Հայ որ կայ այդ կողմերը, Միատին տանիլ ու հոն ճամբու շինութեան աշխատեցնել:

Այս նոր փորձանքը բնականաբար բուռն իրարանցում առաջ բերաւ մեր մէջ:

Մօրեղբայրս եւ Քէշիչ օղլու դիմեցին միւտիւրին եւ խնդրեցին որ այս կարգադրութեան առաջը առնէ:

– Հրամանը Տէր-Ձօրի զինուորական իշխանութենէն եկած է,– պատասխանեց,– չգործադրել անկարելի է որովհետեւ զինուորապէս այդ ճամբուն շինութեան անհրաժեշտ պէտք կայ: Միայն թէ մէկ բան մը կրնամ ընել, այն է ծերերը չղրկել, բայց երիտասարդները անպատճառ պէտք է երթան:

– Ե՛րբ ճամբայ պիտի ելլեն:

– Դեռ յայտնի չէ:

Ալի Բիզա եւ Թէվֆիք, որոնք արդէն փախուստի ծրագիր մը կը մշակէին, որոշեցին անմիջապէս գործադրել զայն:

Իրենց ծրագիրն էր առանձին դէպի Սինճէր երթալ անապատի ճամբով: Ինծի ալ առաջարկեցին իրենց ընկերանալու, բայց ես մերժեցի: Տակաւին շատ թարմ էր մտքիս մէջ դէպի Պաղտատ փախուստի յիշատակը:

Գիշեր մը ճամբայ ելան առանց մէկու մը բան ըսելու: Ես միայն տեղեակ էի իրենց գաղտնիքին:

Առտուան դէմ սակայն Թէվֆիք վերադարձաւ մօրէմերկ վիճակի մէջ: Սարսափելի յուզուած էր:

– Ի՞նչ եղաւ,– հարցուցի:

– Հազիւ թէ ժամ մը տեղ գացած էինք, երկու զինեալ Արաբներ ելան դէմերնիս, ուզեցինք փախչիլ, հրացանով սպանացան, նոյնիսկ զէնք պարպեցին: Վերջապէս ստիպուեցանք մեր բոլոր ունեցածը եւ հագուստները իրենց յանձնել: Ալի Ռիզան կարծեմ նոյնիսկ թեթեւապէս վիրաւորուեցաւ:

– Ինչո՞ւ քեզ հետ չեկաւ:

– Որովհետեւ Արաբները մեզ ստիպեցին որ զատ զատ ու իրարմէ հեռու քայենք: Ես վազելով եկայ, ինք կարծեմ ճամբան կորսնցուց:

Դժբախտաբար, աւելորդ ճերմակեղէն չունէի թէվֆիքի տալու համար եւ հազիւ յաջողեցանք իր մերկութեան էական մասերը ծածկել:

Խեղճ երիտասարդը ուզեց երթալ իր ընկերները գտնել եւ հակառակ մեր յորդորներուն մեկնեցաւ:

Քանի մը ժամ ետքը ոստիկանները երկուքն ալ ձերբակալած բերին սարայ ու բանտարկեցին:

Դիմումներ կատարեցինք միւտիւրին քով որպէսզի ազատ արձակէ զիրենք, բայց անօգուտ եղաւ եւ քսան օրէ աւելի բանտարկուած մնացին: Պէտք է նկատել որ բանտարկութիւնը շատ դժնդակ էր տարագրութեան մէջ, մանաւանդ երբ մարդ դրամ չունենար քովը: Պոլիս գոնէ հաց կուտան բանտարկեալներուն՝ իսկ գաւառները ոչինչ, այնպէս որ շատ Հայեր անօթի մեռած են բանտերու մէջ: Մեր երկու ընկերները բնականաբար անօթի չթողուցինք եւ ամէն օր կերակուր կը տանէինք իրենց:

Բանտէն արձակուելէ երկու օր ետքը կրկին փախան, այս անգամ դէպի Տէր-Չօր, Հոնկէ Հալէպ երթալու համար: Երկուքն ալ գրեթէ մերկ էին եւ կողոպտուելու վախ չունէին այլեւս:

Հազիւ թէ իրենց փախուստը իմացուեցաւ՝ ժանտարմաներու չափուչը եկաւ մեր տունը եւ ամէնքս հաւաքելով, տարաւ բանտարկեց:

Մենէ զատ միակ Արաբ մը կար բանտին մէջ: Այս մարդը ձի մը գողցած ըլլալու ամբաստանութեամբ հոն կը գտնուէր եր

կու ամիսէ ի վեր: Խեղճը տասը փարայ չունէր քովը եւ օրը բուռ մը ցորենի հատիկ ծամելով կ'ապրէր: Հալած, մալած, կմախք դարձած էր եւ շարժելու գրեթէ կարողութիւն չունէր:

Քսանչորս ժամ բանտարկութենէ ետքը մեզ ազատ արձակեցին՝ տասնական զրուշ բանտի վարձք առնելէ ետքը:

Էլ Պուսէրայի մէջ բանտարկուողները ստիպուած էին օրական մը վճարել:

\*\*\*

Քանի մը օր ետքը Միատինի գայմագամէն նոր հրահանգ մը եկաւ ստիպողաբար Հայերը ղրկելու ճամբու շինութեան:

Միւտիւրը պարտաւորուեցաւ գործադրել հրամանը: Միայն քանի մը հոգի մնացինք էլ Պուսէրա, այսինքն Քէշիշ օղլու Գէորգ աղան, մօրեղբայրս, ես, տոքթոր Մարգարեանը, Կարապետի քոյրը՝ Ոսկի եւ փոքր եղբայրը Ճէպրա:

Մեր ընկերները հազիւ թէ երկու շաբաթէ ի վեր մեկնած էին եւ Միատինէն չորս ժամ հեռու ճամբու շինութեան կ'աշխատէին երբ լուր առինք թէ իրենցմէ եօթը հոգի շղթայակապ բանտարկուած էին: Սանթուր օղլու Արամ որ միասին գացած էր, մատնած էր զանոնք ըսելով որ Անգլիացի սպայ մը Արաբի մը ընկերակցութեամբ եկած ու անոնց հետ ծածկաբար տեսակցած էր ու կարելոր գումար մը յանձնած:

Այս ծանր ամբաստանութիւնը կրնար խեղճերը մինչեւ կախաղան բարձրացնել տալ: Բարեբախտաբար գայմագամը մանրակրկիտ քննութեան մը կը ձեռնարկէ եւ Արամի յայտնութիւններուն անհեթեթ զրպարտութիւն մը ըլլալը կը հաստատուի եւ բանտարկեալները 8-10 օր ետքը ազատ կ'արձակուին:

Իսկ Արամ իբրեւ ստախօս զրպարտիչ մը չարաչար կը ծեծուի ու ձեռնակապով Տէր-Չօր կը ղրկուի ուր կը յաջողի օճիքը ազատել եւ միւթէսարըՖին գաղտնի լրտեսը ըլլալ:

Այդ միջոցներուն մօրեղբայրս գանձում մը ընելու համար միւտիւրէն հրաման ստացաւ ոստիկանի մը հետ Տէր-Ջօր երթալու: Վերադարձին յուր բերաւ թէ Սահակ Մեսրոպ, որ Տէր-Ջօր եկած էր, իմ մասիս տեղեկութիւններ ուզած է:

Անմիջապէս որոշեցինք թղթակցիլ իրեն հետ յուսալով որ թերեւս միջոց մը կը գտնէ մեզ ալ Տէր-Ջօր փոխադրել տալու:

Ասոր համար գտանք մեզի դրացի Արաբ կին մը որ յանձն առաւ փոքրիկ գումարի մը փոխարէն մեր նամակները տանիլ բերելու: Աւելի ապահովութեան համար ձէպրա պիտի ընկերանար իրեն:

Առաջին նամակովս տեղեկութիւններ ուզած էի Սահակ Մեսրոպէն իր եւ Հայկ Կօշկարեանի մասին: Պատասխանեց թէ ինք ու Հայկը ուրիշ 30ի չափ Հայերու հետ Համայէն Տէր-Ջօր եկած էին, իրենց յօժար կամքով, վերջերս այնտեղ բացուած գինուորական աշխատանոցին մէջ աշխատելու համար, թէ ինք այդ հաստատութեան գրագիրը եղած էր իսկ Հայկ պէօլիւք էմինին\*:

Այս տեղեկութիւնները տալէ ետքը, Սահակ Մեսրոպ խորհուրդ կուտար ինծի անմիջապէս փախչիլ ու Տէր-Ջօր երթալ ուր իսկոյն պիտի կրնայի աշխատանոցին մէջ ընդունուիլ: Պատասխանեցի իրեն թէ մենք կը փափաքէինք ամէնքս միասին երթալ եւ ո՛չ թէ ծածկաբար, այլ հրամանով: Բայց Սահակ Մեսրոպ գրեց թէ՛ մեզի համար որ մասնագիտական արհեստ մը չունէինք կարելի չէր գինուորական իշխանութեան միջոցաւ հրաման ստանալ, այսուհանդերձ եթէ կարենայինք անգամ մը Տէր-Ջօր ոտք դնել, ինք պիտի կրնար անմիջապէս մեզ ընդունիլ տալ աշխատանոցին մէջ: Իմ մասիս արդէն խօսած էր տնօրէնին հետ եւ ըսած էր որ ես իր հօրեղբայրն էի եւ տնօրէնն ալ հաւանութիւն յայտնած էր զիս աշխատանոցը ընդունելու:

Ի վերջոյ որոշեցինք որ ես ու Քէշիշ օղլու միասին փախչինք:

\* Համբարակ (իմտեհանտ):

Քէշիշ օղլու չորս ամիսէ ի վեր բաւական յարաբերութիւններ հաստատած էր տեղացի Արաբներու հետ եւ գտաւ երկու վստահելի Արաբներ, Ապտուլլահ եւ Ալի, որոնք խոստացան մեզ անվտանգ մինչեւ Տէր-Ջօր տանիլ մարդ գլուխ ութը մէծիտիէի փոխարէն:

Բայց ճամբորդութիւնը բաւական դժուար էր: Հարկ էր Եփրատէն անցնիլ լողալով եւ Եփրատ ո՛չ միայն շատ լայն է Միջագետքի այս մասին մէջ, այլ նաեւ զօրաւոր հոսանք մը ունի: Իրա՛ւ է որ եզերքներուն մօտ ջուրը հազիւ կէս մեթր բարձրութիւն ունի եւ կարելի է բաւական տեղ քալելով երթալ, բայց մէջտեղուանքը պէտք է լողալով անցնիլ:

1917 օգոստոս 31 շաբաթ գիշեր, երբ գիւղին մէջ ամէն մարդ ննջած էր, ես եւ Քէշիշ օղլու ճամբայ ելանք:

Արտերու եզերքներէն սողալով, հասանք տափաստան մը ու երկու Արաբները մեզի պիտի սպասէին: Արդարեւ Ապտուլլահ եւ Ալի իրենց նախապէս որոշած տեղը նստած էին: Պատուիրեցին մեզի որ հեռուէն իրենց հետեւինք, սիկառէթ չծխենք ու իրարու հետ չխօսինք որպէսզի անտեսանելի մնանք:

Արաբներու ծանր սպառնալիքներով արգիւտուած էր Հայերու փախուստին օգնել, ասոր համար մեր առաջնորդները ծայրայեղ զգուշութիւններու կը դիմէին:

Անվտանգ հասանք Եփրատի եզերքը, խոռոչաւոր տեղ մը ուր «Հանուեցէ՛ք»,— հրամայեց Ապտուլլահ:

Չորսերնիս ալ մերկացանք: Երկու Արաբները մեր եւ իրենց զգեստները թխմեցին այծի մորթէ շինուած երկու տիկերու մէջ, որոնց բերանը լաւ մը կապեցին:

Մտանք Եփրատի մէջ եւ սկսանք կամաց քալել: Ջուրը հետզհետէ կը բարձրանար նախ մինչեւ ծունկերնիս, յետոյ մինչեւ մէջքը եւ հոսանքը կը սկսէր նեղել մեզ: Վերջապէս հասաւ վայրկեան մը ուր ա՛լ կարելի չէր քալել, որովհետեւ ջուրը հասած էր մինչեւ մեր ուսերը: Բնականաբար ամէնքս ալ լողալ գիտէինք, հակառակ պարագային՝ պիտի չկրնայինք փախուստի մեր այս ծրագիրը գործադրել:

Արաբները թէ՛ կը լողային եւ թէ՛ միեւնոյն ատեն երկու տիկերը իրենց առջեւէն կը քշէին ջուրին մէջ:

Յետոյ ջուրը սկսաւ կրկին ցածնալ եւ մենք կրցանք մեր ոտքերուն վրայ կենալ: Ճիշդ ժամանակն էր, որովհետեւ իմ եւ մանաւանդ Քէշիշ օղլուի ոյժերը սպառած էին:

Վերջապէս դիմացի եզերքը ճամբայ ելանք: Գետանցքը կէս ժամ տեւած էր: Աճապարանքով տիկերուն բերանները քակեցինք որպէսզի լաթերնիս հագնինք, բայց, ափսո՛ս, տիկերը ծակած են եզեր եւ մեր լաթերը բոլորովին թրջած:

Ճար չի կար սակայն, պէտք էր հագնիլ թաց թաց եւ ճամբանիս շարունակել:

Քիչ ետքը, երբոր արաբական փոքրիկ գիւղի մը մօտէն կ'անցնէինք, Ապտուլլահ ըսաւ.

– Եթէ կ'ուզէք գիւղէն ձեզի մէյ մէկ էջ գտնեմ, հոս ազգականներ ունիմ որոնցմէ կրնամ առնել:

– Ի՞նչ պիտի վճարենք:

– Տասնական ղրուչ:

– Լաւ ուրեմն բեր էշերը, – պատասխանեցինք:

Քսան վայրկեան յետոյ մեր առաջնորդը վերադարձաւ երկու էշերով եւ ճամբորդութեան մնացած մասը բաւական լաւ պայմաններու մէջ կատարեցինք, միայն թէ ցուրտէն շատ նեղւեցանք, մանաւանդ որ մեր լաթերն ալ, ինչպէս ըսի, թրջած էին:

Արշալոյսէն առաջ հասանք Տէր-Չօր, խառնուած Արաբ գիւղացիներու խոշոր կարաւանի մը: Քաղաք մտանք, դեռ այնչափ կանուխ էր որ փողոցները ամայի էին: Գացինք չօրպաճի Միսաքին տունը: Այս երիտասարդը որ մօրեղբօրս ծանօթ էր, գուլպայի մեքենայ մը ունէր զոր տրամադրած էր զինուորական աշխատանոցին եւ ինքն ալ իբրեւ զինուոր հոն կ'աշխատէր:

Բաւական յոգնած էինք մեր ուղեւորութենէն եւ երկուքս ալ ուժասպառ ինկանք մեզի համար պատրաստուած անկողիններուն մէջ: Կէսօրին արթնցանք եւ ճաշեցինք:

Սահակ Մեսրոպ եկաւ զիս տեսնելու:

– Ա՛լ հոգ մի՛ ըներ, հոս հանգիստ կրնաս մնալ, – ըսաւ, – ամէն բան կարգադրած ենք, երբ որ ուզես կրնաս աշխատանոցին մէջ գործի սկսիլ իբրեւ զինուոր:

– Բայց ի՞նչ գործ կրնամ ընել:

– Քեզ սօքումհանէն\* պիտի դնենք հոն ծրարը կը փաթթես կամ չարխ\*\* կը դարձունես, վերջապէս քու կարողութեանդ սահմանին մէջ գործ մը: Իսկ գալով բնակարանիդ այն ալ որոշուած է. մեզի հետ պիտի բնակիս կիներու իմալաթհանէն (աշխատանոցը): Ապահովութեան համար առայժմ հոս սպասէ՛ մինչեւ որ մթնէ. Հայկ Կօշկարեանը պիտի գայ քեզի առնելու եւ հետը պիտի բերէ ձեռք մը զինուորի հագուստ եւ քապալաք\*\*\*: Անոնք հագնելէ ետքը ա՛լ ազատ համարձակ կրնաս պտտիլ, մազիդ դպչող չըլլար:

Արդարեւ իր ըսածին համեմատ ուշ ատեն Հայկ Կօշկարեանը եկաւ հագուստներով: Իսկոյն հագայ ու գացինք կիներու աշխատանոցը, որուն վերնայարկի ընդարձակ սրահը տրամադրուած էր իմ բարեկամներուս:

Բաւական բազմութիւն կար այդ սենեակին մէջ: Նախ՝ Յարութիւն Դանիէլեանը, պանարմացի, իր կնոջ եւ երկու փոքրիկ տղոցմով: Յարութիւնը առաջին անգամն էր որ կը տեսնէի, բայց շատ լաւ կը ճանչնայի իր եղբայրը Ստեփան Դանիէլեան որուն հետ 15-20 տարուան մտերմութիւն մը ունէինք: Բնական է որ այս հանդիպումը շատ ուրախացուց զիս եւ իսկոյն մտերմութիւնը հաստատուեցաւ երկուքնուս միջեւ: Յետոյ կար Հայկ Կօշկարեանը իր կնոջ ու նորածին աղջկան հետ, Սահակ Մեսրոպը, կէօտեցի Հայկ Փանոսեանը (երիտասարդ ատաղձագործ մը) եւ իր հօրեղբօր աղջիկը Չապէլ, յետոյ մարաշցի ե-

\* Կաղապար պատրաստելու արհեստանոց:

\*\* Լիսեռ:

\*\*\* Չիմուրակաճ գլխարկի տեսակ:

րիտասարդ մը, տեղւոյն երեւելիներէն որ Պոլսոյ երկրաչափական վարժարանը յաճախած էր, յետոյ ուրիշ պանտրմացի օրիորդ մը Եղիսաբեթ անուն, յետոյ պուլտուրցի կին մը եւ աղջիկ մը: Այս ամէնուն վրայ աւելցայ նաեւ ես: Բարեբախտաբար եղանակը ամառ էր եւ մենէ մէկ քանիները վերը տանիքին վրայ կը պառկէին, ըստ տեղական սովորութեան:

Բոլոր այդ բազմութիւնը աշխատանոցը կ'աշխատէր եւ զինւորական թահին կը ստանար: Նոյնիսկ Դանիէլեանի տասը տարեկան աղջիկը իր զինուորի բաժինը ունէր:

Շատ զուարթ ճաշ մը ըրինք տանիքին վրայ, լուսնի լուսով: Կերակուրնիս էր օրուան քարավանան\*, միտով եւ զանազան բանջարեղէններով:

Պէտք է գիտնալ որ մեր քարավանան սովորական զինուորներու քարավանայէն անբաղդատելի կերպով լաւ էր, որովհետեւ վայն պատրաստողները աշխատանոցին մէջ աշխատող Հայ կիներէն էին:

Գիշերը երկար խօսեցանք տանիքին վրայ ուր հաճելի գովութիւն մը կար: Ո՛րչափ բաներ ունէինք իրարու պատմելիք:

Ամիսներէ ի վեր, էլ Պուսէրայի մէջ, անապատական կեանք մը անցուցած էի, արտաքին աշխարհէն բոլորովին անջատուած ու հիմա, յանկարծ, ինքզինքս կը գտնէի պոլսեցի բարեկամներու մէջ, պատուական Հայ ընտանիքի մը քով: Ինծի այնպէս կը թուէր թէ՛ դժոխքէն դրախտ փոխադրուած էի:

Հետեւեալ օրը, երկուշաբթի, մինչեւ իրիկուն անցուցի կիներուն աշխատանոցը, ինչպէս նաեւ յաջորդ օրը:

Չորեքշաբթի օրը գացինք, Սահակ Մեսրոպի հետ, այրերու աշխատանոցը որ տասը վայրկեան հեռուն քաղքին ծայրը կը գտնուէր եւ որ ընդարձակ զօրանոց մըն էր:

Նախ գացինք Սահակ Մեսրոպի գրասենեակը սպասելով որ աշխատանոցին տնօրէն Հարիւրապետ Իհսան էֆէնտին գայ եւ իմ վէսիքս, որ նախապէս պատրաստուած էր, ստորագրէ:

\* Զինուորական ճաշաբաժին:

Այս զինուորականը չէրքէզ մըն էր, տգէտ, հաւատացեալ, բայց շատ բարեսիրտ անձ մը, մանաւանդ հանդէպ Հայերուն: Ինք նախկին երկաթագործ մըն է եղեր եւ իբրեւ արհեստի տեղեակ անձ մը զինքը աշխատանոցին տնօրէն կարգեր են:

Կէս ժամ հոն սպասելէ ետքը Իհսան էֆէնտի եկաւ: Յիսուն տարեկանի մօտ, մօրուօք, արտաքնապէս քիչ մը խոժոռ դէմքով մարդ մըն էր:

– Ահաւասիկ հօրեղբայրս որու մասին նախապէս խօսած էի ձեզի, – ըսաւ Սահակ Մեսրոպ գիս ներկայացնելով:

Հարիւրապետը ակնարկովը չափչփեց գիս.

– Հա՛, դո՞ւն ես, – ըսաւ, – շատ աղէկ, հիմա զինքը ո՞ւր պիտի դնենք:

– Տօքումհանէն ամէնէն յարմարն է, արդէն մարդու պէտք ունին:

– Աղէկ, վէսիքան պատրաստէ՛ եւ թող գործի սկսի:

– Ահաւասիկ վէսիքան:

Իհսան էֆէնտի ստորագրեց ու քանի մը պատուէրներ տալով հեռացաւ:

Սահակ Մեսրոպ կանչել տուաւ տօքումհանէին իշճի պաշին\* որ այնթապցի տարագիր մըն էր եւ զիս ներկայացնելով ըսաւ.

– Հօրեղբայրս է, ձեր քովը պիտի աշխատի: Թեթեւ գործեր տուէք իրեն:

– Շատ աղէկ, – պատասխանեց մարդը եւ միասին գացինք գործատունը որ քանի մը քայլ անդին էր:

Քսանի չափ Հայեր, ամէնքն ալ գրեթէ այնթապցի, իրենց ջուլհակի գործասեղաններուն առջեւ նստած կ'աշխատէին:

– Դուն այսօր միայն դիտելով ժամանակ անցո՛ւր, – ըսաւ իշճի պաշին, – վաղը կը սկսիս աշխատիլ:

Յերեկը վերադարձայ կիներու աշխատանոցը, ճաշելու համար, եւ յետոյ նորէն եկայ գործիս, առանց բան մը ընելու:

\* Գործավար:

Տէր-Ձօր հասնելէս ի վեր, զգուշութեան համար, աշխատանոցէն դուրս ելած չէի, որովհետեւ վէսիքա չունէի տակաւին, բայց հիմա որ վէսիքաս գրպանս էր վախնալու բան մը չունէի եւ իրիկունը, փայտօսէն\* ետքը, մինչեւ շուկայ պտոյտ մը ըրի:

Շուկային մէջ դէմս ելաւ սէր քօմիսէր Մուսթաֆան, այն որ մեզի չորս ամիս առաջ էլ Պուսէրա աքսորած էր եւ որ Տէր-Ձօրի ահաւոր ջարդերուն կազմակերպիչներէն մին է:

— Հոս չի գա՞ս, — ըսաւ ինծի երբ դիմացէն զիս նշմարեց:

Մօտեցայ իրեն:

— Ի՞նչ բան ունիս այստեղ, — հարցուց:

— Տօքումհանէն կ'աշխատիմ իբրեւ զինուոր:

— Դուն որո՞ւն արտօնութեամբ էլ Պուսէրայէն հոս եկար:

— Մեզի իբրեւ զինուոր Միատին տարին ու հոն ճամբու շինութեան աշխատացուցին, — պատասխանեցի, — յետոյ անկէ ալ մենէ մաս մը հոս բերին եւ աշխատանոցը դրին: Էլ Պուսէրայի մէջ շատ հանգիստ էի ես, բայց դժբախտաբար հոն չթողուցին, — ըսի որ մենք քաղաքական աքսորեալներ ենք, թէ մեզի զինուոր տանելու իրաւունք չունին, բայց միւտիւրը մտիկ չըրաւ եւ բռնի մեզ զրկեց Միատին, հոնկէ ալ կրկին, բռնի կերպով հոս բերին:

Սէր քօմիսէրը կասկածոտ դէմքով մը լսեց իմ այս խօսքերս, յետոյ ըսաւ.

— Վէսիքադ ո՞ւր է:

— Ահաւասիկ:

Եւ թուղթը ներկայացուցի իրեն: Առաւ, կարդաց եւ ըսաւ.

— Հոս Սահակ օղլու Երուանդ գրուած է, — դիտել տուաւ, — քու մականունդ տարբեր է:

Արդարեւ վէսիքայիս մէջ Սահակ օղլու գրուած էր, իբրեւ Սահակ Մեսրոպի հօրեղբայրը:

— Այո՛, բուն մականունս Օտեան է, — ստիպուեցայ պատասխանել, — բայց հօրս անունը Սահակ է եւ որովհետեւ իմ եւ հօրս անունը հարցուցին՝ վէսիքայի մէջ այնպէս գրուեցաւ:

\* Աշխատանքի դադարման պահը:

Ոճրագործ սէր քօմիսէրը թուղթը ինծի վերադարձուց եւ ըսաւ.

— Լա՛ւ, գործիդ գնա:

Վերադարձայ բարեկամներուս քով եւ պատմեցի պատահածը:

— Պատասխան անգամ տալու չէիր, — ըսաւ Սահակ Մեսրոպ, — հիմա դուն զինուոր ես, քաղաքական իշխանութիւնը իրաւունք չունի քեզի խառնուելու:

## ՏԷՐ-ՁՕՐԻ ՄԷՋ

Տէր-Ձօրի մէջ հաստատուած այրերու եւ կիներու զինուորական աշխատանոցները ճշմարիտ բարիք մըն էին 400ի մօտ Հայ կիներու եւ այրերու համար որոնք սոսկալի ջարդերէն թէեւ ողջ մնացած էին, բայց ապրուստի որեւէ միջոց չունէին եւ եթէ այս աշխատանոցները գոյութիւն չունենային՝ իրենցմէ մեծագոյն մասը հաւանօրէն անօթութենէ պիտի մեռնէր:

Աշխատանոցները հիմնած էր տեղւոյն թուրք մէնզիլի\* հրամանատար գայմազամ Սէիտ Համիտ պէյ, պաղտատցի Արար զինուորական մը, եւ իր հոգածութեան մասնաւոր առարկայ ըրած էր զանոնք:

Այդ աշխատանոցներուն շնորհիւ ո՛չ միայն հոն գտնուող տարագիրները իրենց ուտելիքը կը ճարէին, այլ նաեւ բացարձակ ապահովութեան մէջ կ'ապրէին, ազատ ըլլալով քաղաքային իշխանութեան եւ ոստիկանութեան կամայական հետապնդումներէն:

Սէիտ Համիտ պէյ շատ հաշտ չէր քաղաքային իշխանութեան հետ եւ հրաման ըրած էր որ ո եւ է ոստիկանի թոյլ չտրուի աշխատանոցներէն ներս մտնելու որեւէ պատրուակով:

Կիներուն մեծամասնութիւնը աշխատանոցին մէջ կը գիշերէր, որով սենեակի վարձք վճարելէ եւս ազատ էին:

Սէիտ Համիտ պէյ եւ իրեն հետ աշխատանոցներու տնօրէն հարիւրապետ Իհսան պէյ շատ խստապահանջ էին աշխատանոցի կիներուն բարոյականին մասին:

Իրիկունները կիներուն աշխատանոցի դուռները կը փակուէին

\* Այստեղ՝ թիկուճքի:

եւ մինչեւ առտու փակ կը մնային որովհետեւ խիստ պատուէր տրուած էր որ ո՛չ ոք դուրս ելլէ կամ դուրսէն մէկը ներս մտնէ:

Անգամ մը մէկ քանի կիներ գիշերանց այցելութեան գացած էին բարեկամուհիի մը դռնապանը համոզելով: Իրողութիւնը քանի մը օր ետքը կը հասնի Սէիտ Համիտ պէյի ականջը որ իսկոյն կուգայ եւ անձամբ խիստ քննութիւն մը կը բանայ եւ մի առ մի կը հարցաքննէ այցելութեան գացող կիները եւ զանոնք հիւրընկալողը եւ կը սպառնայ իսկոյն ճամբել անոնք որ նմանօրինակ արարքի մը մէջ գտնուին:

Բացի այրերէն ու կիներէն, աշխատանոցներուն մէջ կային մանր տղաք ու աղջիկներ որոնք իրենց կարողութեան չափով կ'աշխատէին ու թային կը ստանային ու միանգամայն կը պատսպարուէին հոն:

\* \* \*

Տասը օրի չափ կար որ կ'աշխատէի տօքումհանէին մէջ երբ օր մը եկան զիս կանչեցին, ըսելով թէ նօքթա քօմանտանին\* զիս կ'ուզէ:

Սրդողալով գացի: Կ'ենթադրէի որ իմ մասիս ոստիկանական տեղեկագիր մը տրուած էր ու զիս կրկին պիտի յանձնէին քաղաքային իշխանութեան որ, այս անգամ, ո՛վ գիտէ ո՛ւր պիտի աքսորէր զիս իբրեւ փախստական:

Երբ քօմանտանին քով մտայ, տեսայ որ Սահակ Մեսրոպ հոն կեցած էր: Աչքով նշան ըրի իրեն թէ ի՞նչ էր խնդիրը: Ժպտեցաւ եւ ինքն ալ աչքով հասկցուց թէ վախնալիք բան չի կար:

Քօմանտանը, որուն անունը չեմ յիշեր, իր առջեւ դրուած թուղթերը ստորագրելէ ետքը, գլուխը բարձրացուց եւ զիս նըշմարելով, ըսաւ.

— Ի՞նչ կ'ուզես...

— Դուք զիս ուզած էիք, — պատասխանեցի:

\* Պահակապետ:

– Ֆրանսերէն գիտցողը դո՞ւն ես,– Հարցուց:  
 Ես որ խնդրէն տեղեկուեթիւն չունէի, շուարած կերպարանք  
 մը առի, չէի գիտեր թէ Հա՞րկ էր Ֆրանսերէն գիտնալս խոստո-  
 վանիլ թէ պէտք էր ուրանալ:  
 – Այո՛, ինքն է,– միջամտեց Սահակ Մեսրոպ:  
 – Ինչո՞ւ չես պատասխաներ,– պոռաց Հազարապետը:  
 – Այո՛,– ըսի,– Ֆրանսերէն կը խօսիմ:  
 – Ո՞ւր սորված ես...  
 – Պոլիս դպրոցին մէջ սորված եմ:  
 – Աղէկ կը խօսի՞ս...  
 – Բաւական:  
 – Դպրոցին մէջ կարելի չէ խօսիլ սորվիլ,– դիտել տուաւ  
 Հազարապետը:  
 – Երեք չորս տարի Բարիզ մնացած եմ եւ հոն խօսիլ ալ  
 վարժուած եմ,– պատասխանեցի:  
 – Բարիզ ինչո՞ւ Համար գացիր:  
 – Գործով, իբրեւ յանձնակատար:  
 Հազարապետը քանի մը անհասկանալի բառեր արտասանեց  
 եւ ըսաւ.  
 – Ի՞նչ ըսել են ասոնք:  
 – Կը ներէք պէյս, չհասկցայ,– պատասխանեցի,– կը խնդ-  
 րեմ կրկնեցէք:  
 Կրկնեց այդ շարապիան \* որմէ կրկին բան մը չհասկցայ:  
 – Այդ ձեր ըսածը Ֆրանսերէն չէ,– դիտել տուի:  
 – Ուրեմն դուն իրաւցնէ Ֆրանսերէն գիտես եղբր,– պա-  
 տասխանեց:  
 Յետոյ, պիչ պիչ երեսս նայելէ ետքը, գոչեց.  
 – Դուն խենթ ես:  
 – Ո՛չ, պէյս, խենթ չեմ,– ըսի:  
 – Խենթ ես,– պնդեց Հազարապետը:  
 Ապա դարձաւ Սահակ Մեսրոպին եւ ըսաւ.

\* Օշարակ, այստեղ՝ գլուխկոտրուկ:

– Այս մարդը խենթ է, աչքերուն նայէ՛ մէյ մը:  
 – Ո՛չ, պէյ էֆէնտի, խենթ չէ,– ըսաւ Սահակ Մեսրոպ:  
 – Վալլահա տիվանէ տիր\*,– գոչեց Հազարապետը միշտ ե-  
 րեսս նայելով:  
 Մազերս ածիլած, պեխերս կարճ կտրած եւ գլուխս ալ գտակ  
 մը դրած, արդարեւ քիչ մը կը նմանէի յիմարանոցէն փախած  
 մէկու մը:  
 Վերջապէս կրցանք համոզել զինքը որ խելքս գլուխս էր:  
 – Լա՛ւ,– ըսաւ Հազարապետը,– շուտով պատրաստուեթիւն-  
 ներդ տե՛ս, վաղը առտու կանուխ ինծի հետ Հիթ պիտի մեկնիս,  
 իբրեւ թարգման:  
 – Գլխուս վրայ,– պատասխանեցի:  
 – Գերմանացի սպաներուն հետ կարենալ խօսելու համար  
 պէտք ունիմ քեզի:  
 – Գլխուս վրայ,– պատասխանեցի կրկին:– Միայն թէ հա-  
 գուստ, ճերմակեղէն ու կօշիկ, բան մը չունիմ:  
 – Այդ հագածներդ ի՞նչ են,– Հարցուց:  
 – Անոնք ուրիշներէ փոխ առած եմ:  
 – Աղէկ, ես հիմա թուղթ մը կը գրեմ եւ անմիջապէս կ'եր-  
 թաս մթերանոցէն կ'առնես քեզի պէտք եղածը:  
 Եւ իսկոյն գործադրեց ըսածը, յետոյ շարունակեց.  
 – Դուն ո՞ւր տեղացի ես:  
 – Պոլսեցի:  
 – Ընտանիք, զաւակ, եւ այլն ունի՞ս:  
 – Այո՛, պէյս, կին եւ երեք զաւակ ունիմ:  
 Փորձառութեամբ գիտէի որ միշտ ընտանիքի տէր ըլլալը լա-  
 ւագոյն ազդեցութիւն առաջ կը բերէր քան ամուրի ըլլալը եւ  
 ասոր համար չվարանեցայ այս սուտը խօսելու:  
 – Լա՛ւ, քեզի հետ Հիթ կ'երթանք, հոն գործերնիս լմնցնելէ  
 ետքը, ես կը յանձնարարեմ Գերման սպաներուն որ իրենց հետ  
 քեզ ալ Պոլիս տանին եւ կ'երթաս զաւակներուդ կը միանաս:

\* Աստուած վկայ խենթ է:



– Աստուած կեանք տայ ձեզի,– պատասխանեցի բարեւ մը տալով:

– Գնա՛ եւ պատրաստութիւններդ տես ու վաղը առտու կանուխ թէֆթիչը\* գտնուէ՛:

– Գլխուս վրայ:

Իր գրած թուղթը ձեռքս իսկոյն ներկայացայ մթերանոցի յիսնապետին, Սահակ Մեսրոպի ընկերակցութեամբ:

Մարդը անմիջապէս ինծի տուաւ ձեռք մը զինուորական նոր զգեստ, գերմանական նոր քափօթ մը, զոյգ մը կօշիկ, գուլպայ, ճերմակեղէն ու քապալաք:

Հիթ, ուր պիտի երթայինք բուն կռիւի ճակատն էր:

Շատ ուրախ էի այս անակնկալ ճամբորդութենէս: Նախ՝ մօտէն պիտի կրնայի տեսնել պատերազմը կամ գոնէ բանակ մը պատերազմական վիճակի մէջ, յետոյ՝ թերեւս միջոց մը պիտի կարենայի գտնել թշնամիի կողմը անցնելու եւ միանգամ ընդմիշտ ազատելու թուրքերուն ձեռքէն, հակառակ պարագային կար նաեւ հազարապետին խոստումը զիս Գերման սպաներու հետ Պոլիս վերադարձնելու մասին, վերջապէս դիրքի բարձրացում մըն էր ինծի համար իբրեւ թարգման ծառայելը քան թէ տօքումհանէին մէջ աշխատիլը:

Սահակ Մեսրոպ ինծի ըսաւ որ նօքթա քօմանտանին, հակառակ իր խոժոռ ձայնին, տարօրինակ ընթացքներուն, բարի մարդ մըն էր եւ կրնայի իրեն քով հանգիստ ապրիլ:

Բան մը միայն կը տխրեցնէր զիս այս մեկնումին առթիւ: Շատ շուտով կը կորսնցնէի բարեկամներս եւ այն ընտանեկան մթնոլորտը որուն մէջ կ'ապրէի շաբաթէ մը ի վեր:

Ճամբորդութիւնը շահտուրով պիտի կատարուէր, այսինքն Եփրատի վրայ տափարակ ու լայն նաւակներով:

Հետեւեալ առտու կանուխ գացի թէֆթիչ եւ սպասեցի հազարապետի գալուն: Կէս ժամ ետքը եկաւ, զիս տեսաւ որ բարեւ բռնած էի եւ ըսաւ.

\*.Հսկիչ: Այստեղ՝ հսկիչ կետ:

– Սպասէ հոս, ես միւֆէթթիչ պէյին քովը պիտի երթամ (այսինքն Սէիտ Համիտ պէյին) թերեւս պէտք ըլլայ քեզի ներս կանչել որպէսզի ներկայացնեմ իրեն:

Երկու ժամ տեւող տեսակցութենէ մը ետքը դուրս ելաւ սենեակէն եւ մօտեցաւ ինծի:

– Տղաս,– ըսաւ ինծի,– դուն ետ դարձիր ու գործդ շարունակէ, Հայերուն արգիլուած է եղեր ռազմադաշտ երթալ...

– Գլխուս վրայ, պէյ էֆէնտի:

Ու այսպէս իմ Հիթ երթալս մնաց սաղմնային վիճակի մէջ: Բայց գոնէ նոր հագուստները, ճերմակեղէնները քովս շահ մնացին:

\* \* \*

Քէշիչ օղլու Գէորգ աղան ալ յաջողեցաւ մտնել աշխատանոցի տօքումհանէն: Մէկ կողմէ կուգար հոն իբր թէ աշխատելու, որովհետեւ 73 տարեկան հասակին չէր կրնար որեւէ կերպով օգտակար ըլլալ, միւս կողմէ ծածկաբար ծրագիր կը մշակէր Հալէպ երթալու համար:

Հազիւ թէ կարծեմ շաբաթ մը մնաց տօքումհանէն, յետոյ անհանգստութիւն պատրուակելով քանի մը օրուան հանգիստի հրաման առաւ ու ա՛լ անկէ ետքը մէյ մըն ալ չերեւցաւ:

Ուղտի կարաւանով մը մեկնած էր Հալէպ եւ յաջողած էր անվտանգ հասնիլ իր տեղը:

\* \* \*

Նօքթա քօմանտանին մեկնելէ ետքը, անոր յաջորդած էր հարիւրապետ Ահմէտ Մուխթար պաղտատցի Արաբ մը: Շատ ազնիւ եւ լուսամիտ զինուորական մըն էր այս անձը, որ թէ՛ շուքուքի վարժարանին ընթացքը աւարտած էր եւ թէ՛ Հարպիէի վարժա-

րանին: Մասնաւորապէս շատ մտերմօրէն կը տեսնուէր Սահակ Մեսրոպին հետ եւ չէր ծածկեր իր թրքատեաց զգացումները:

Հազիւ թէ Հիթի ճամբորդութեանս ետ մնալուն վրայ շարաթ մը անցած էր, երբ օր մը դարձեալ եկան զիս փնտռեցին, ըսելով թէ՛ նօքթա քօմանտանին զիս կ'ուզէ:

Փութացի իրեն քով:

– Դո՞ւն ես ֆրանսերէն գիտցողը, – հարցուց:

– Այո՛, – պատասխանեցի:

– Շուտով միւլֆէթթիչ պէյին քով գնա՛ քեզ կ'ուզէ կոր:

– Գլխուս վրայ, – ըսի ու մեկնեցայ:

Դարձեալ մտատանջութիւնը պատեց զիս: Միշտ այն կասկածը ունէի թէ սէր քօմիսէրը մութին մէջ մեքենայութիւն մը կը սարքէր ինծի դէմ:

Սէիտ Համիտ պէյ իր գրասեղանին առջեւ բազմած էր երբոր ներս մտայ:

– Ի՞նչ կ'ուզես, – հարցուց երբ դէմը բարեւ բռնած կեցած էի:

– Դուք ուզած էիք զիս, – պատասխանեցի, – նօքթա քօմանտանին զրկեց զիս:

– Հա՛, դո՞ւն ես ֆրանսերէն գիտցողը:

– Այո՛, – պատասխանեցի:

– Ո՞ւր տեղացի ես:

– Պոլսեցի:

– Եթէ պոլսեցի ես ի՞նչու քեզ մուհաճիր ըրեր ես:

– Տեղահանութեան միջոցին Ատաբազար կը գտնուէի, – պատասխանեցի:

– Ֆրանսերէնը ո՞ւր սորված ես:

– Գործով Բարիզ գտնուած եմ քանի մը տարի եւ հոն սորված եմ:

– Գրել-կարդալ գիտե՞ս:

– Ոչ, միայն կը խօսիմ:

– Իսկ թուրքերէ՞ն, կը գրես, կը կարդա՞ս:

– Չէ՛, կը խօսիմ միայն եւ կը հասկնամ, բայց շատ խրթին բռները չեմ գիտեր:

– Դուն դպրոց չե՞ս գացած:

– Թաղային դպրոց գացած եմ, քիչ մը հայերէն սորված եմ:

Այս հարցաքննութենէն ետքը, Սէիտ Համիտ պէյ ըսաւ որ քիչ օրէն Գերմանացի սպաներ պիտի գային եւ ասոր համար պէտք ունէին թարգմանի մը. այդ պաշտօնը ես պիտի կատարէի:

– Բայց, պէյ էֆէնտի, ես գերմաներէն չեմ գիտեր, – առարկեցի:

– Անոնք ֆրանսերէն գիտեն, – պատասխանեց:

Յետոյ կանչեց իր ծառայութեան մէջ գտնուող Մէհմէտ չափուչը եւ անոր ըսաւ որ ես իրեն հետ պիտի մնայի:

Ջարմանալի էր որ 3-4 հազարապետներու, 7-8 հարիւրապետներու եւ շատ մը դպրոցէ ելած երիտասարդ յիսնապետներու մէջ մէկ ֆրանսերէն կամ գերմաներէն գիտցող մը չի կար:

Յետոյ հասկցայ ասոր պատճառը:

Բոլոր լեզուագէտ սպաները Գերմանացիներուն քով դրուած էին իբրեւ թարգման:

Հետեւեալ առտու իսկ թողուցի տօքումհանէն եւ նոր պաշտօնիս ձեռնարկեցի:

Իբրեւ պարզ գինուոր Մէհմէտ չափուչի հրամանին ներքեւ էի: Այս վերջինը պարթընցի ծովային գինուոր մըն էր որ ուրիշ շատերու հետ եկած էր Տէր-Ջօր շահտուրներու մէջ ծառայելու համար: Յետոյ յաջողած էր Սէիտ Համիտ պէյի քով ծառայութեան մտնել, ինչ որ մեծ բախտ մը կը համարուէր:

Մէհմէտ չափուչ բացատրեց ինծի իմ պարտականութիւններս.

– Առտուն շատ կանուխ պիտի գաս, – ըսաւ, – եւ անմիջապէս պիտի աւլես, մաքրես, միւլֆէթթիչ պէյին սենեակը, յետոյ դուրսի սրահը եւ սանդուխը որ դէպի պէյին ախոռը կը տանի եւ ուրկէ պէյը կ'ելլէ կ'իջնէ: Իմ այստեղ չգտնուած ատենս, եր-

բոր պէյը զիս կանչէ, իմ տեղս դուն պիտի ներկայանաս: Իրիկունը երբոր քարավանան բաժնեն, պիտի երթաս իմ բաժինը բերես: Երբոր պէյը լոգանալ ուզէ, դուն պիտի վառես կաթնա-յին կրակը եւ փայտերը դուն պիտի վեր կրես մթերանոցէն: Գիշերները մինչեւ պէյին մեկնիլը հոս պիտի սպասես:

Այսպէս ուրեմն թարգմանի պիտակին ներքեւ պարզապէս սպասաւորութիւն պիտի ընէի:

Ինծի համար ամէնէն ծանրը գիշերային սպասումն էր:

Սէիտ Համիտ պէյ ցերեկները միշտ եկող գացողներու հետ զբաղած, ժամանակ չէր գտներ իրեն ներկայացուած բազմաթիւ թուղթերը քննելու եւ ստորագրելու: Այդ աշխատութիւնը կը կատարուէր գիշերուան կերակուրէն ետքը, երբ ամէնքը կը մեկնէին եւ կը տեւէր մինչեւ կէս գիշեր: Ստիպուած էի ամփոփոյ կերակուրս ուտել կիներուն աշխատանոցը, որ թէՖթիչին կից կը գտնուէր ու վազելով գալ գործիս գլուխը եւ հոն 4-5 ժամ մրափել, մինչեւ որ պէյը իր գործը լմնցնէ եւ երթայ տունը որ երկու քայլ անդին էր: Այսպէս ուրեմն զրկուած կը մնայի բարեկամներուս հետ խօսակցելու հաճոյքէս, ինչպէս նաեւ քունէս:

Այսուհանդերձ գոհ էի վիճակէս որովհետեւ ա՛լ ինքզինքս բոլորովին ապահով կը զգայի, քանի որ Տէր-Չորի գինուորական բարձրագոյն պետին ծառայութեան մէջ էի:

Քանի մը օր ետքը արդարեւ իմացանք որ Գերման սպաները հասած էին Տէր-Չոր, ուր արդէն մէնզիլ մը ունէին: Եկողներէն մին այդ մէնզիլին նոր հրամանատարն էր:

Հետեւեալ օրն իսկ եկաւ պաշտօնական այցելութեան: Երկայնահասակ, նիհար, դեղին մազերով ու կապոյտ աչքերով, 45 տարեկանի մօտ համակրելի գինուորական մըն էր եւ կը կոչուէր հարիւրապետ Կուսթավ էտովալ:

Սէիտ Համիտի քով հաւաքուած էին ուրիշ երկու հազարապետներ, մին պօշնակ միւսը Արաբ:

Ես, ոտքի վրայ կեցած, կատարեցի թարգմանի պաշտօնս:

Չուտ քաղաքավարական այցելութիւն մըն էր այս եւ հազիւ 20 վայրկեան տեւեց:

Հարիւրապետ ժամադրութիւն մը ուզեց հետեւեալ օրուան համար, որպէսզի երկարօրէն տեսնուի կարեւոր խնդիրներու մասին:

Սէիտ Համիտ պէյ ըսաւ թէ ուզած ժամանակ կրնար գալ եւ թէ ինք միշտ պատրաստ է զայն լսելու:

Հարիւրապետ էտովալ մեկնած ատեն ամէնուն ձեռքը սեղմեց, յետոյ ինծի դարձաւ եւ հարցուց թէ թո՞ւրք էի:

– Ո՛չ, Հայ եմ, – պատասխանեցի:

– Շնորհակալ եմ որ, – ըսաւ, – թարգմանի պաշտօն կատարեցիք, առանց ձեզի պիտի չկրնայինք իրարու խօսք հասկնալ: Եւ իմ ալ ձեռքս սեղմեց:

Այս ցոյցը բաւական տպաւորութիւն ըրաւ ներկաներուն վրայ, մանաւանդ Մէհմէտ չավուշին վրայ որ սրահին բաց դուռնէն կը դիտէր տեսարանը:

Հազիւ թէ հարիւրապետ մեկնած էր, Սէիտ Համիտ պէյ զիս քովը կանչեց.

– Շատ գոհ մնացի քենէ, – ըսաւ, – յայտնի է որ Ֆրանսերէն գիտես կոր, ես վախցայ որ մարդուն քով պզտիկ պիտի մնանք:

– Եթէ չգիտնայի՝ չէի համարձակեր այս պաշտօնը ընդունելու, – պատասխանեցի:

– Գո՞հ ես իմ քովս ըլլալուդ, – հարցուց:

– Այո՛, պէյս:

Եւ տեսնելով իր լաւ տրամադրութիւնը աւելցուցի.

– Միայն ներեցէք որ ձեռքէ բան մը խնդրեմ:

– Խօսէ՛, – ըսաւ:

– Գիշերուան ծառայութիւնը քիչ մը ծանր կուգայ կոր ինծի, մանաւանդ որ պէտք մըն ալ չի կայ...

– Բայց քեզ ո՞վ ըսաւ որ գիշերները հոս սպասես, – գոչեց:

– Մէհմէտ չավուշը այնպէս հրաման ըրաւ:

– Չարմանալի՛ բան, ինծի կանչէ Մէհմէտը:

Դուրս ելայ սրահէն եւ ըսի չավուշին որ պէյը զինքը կ'ուզէր:

Գնաց եւ քիչ ետքը վերադարձաւ.

– Ասկէ ետքը գիշերները պէտք չունիս, – ըսաւ նեղսրտութեամբ, – մենք հոս ենք...:

Հետեւեալ օրը կրկին եկաւ Գերման հրամանատարը եւ այս անգամ երկու ժամէն աւելի մնաց Սէիտ Համիտ պէյի քով:

– Մեր խօսակցութեան միջոցին կը խնդրեմ որ բոլորովին առանձին ըլլանք, – ըսաւ խօսակցութեան սկսելէ առաջ:

Միւֆէթթիչը այս մասին պէտք եղած հրահանգը կուտայ Մէհմէտ չավուշի:

Այն ատեն հարիւրապետ էտվալ գրպանէն յուշատետր մը հանեց եւ սկսաւ մանրամասնաբար տեղեկութիւններ տալ Պիրեծիքէն մինչեւ Տէր-Ջօր իր այցելած բոլոր զինուորական թուրք կայաններուն մասին:

Այս տեղեկութիւնները ծանր քննադատութիւններ էին թուրք զինուորական վարչութեան հասցէին: Ամբողջ շահատուրներով ցորեն, Եփրատի վրայ, ջուրերու մէջ թրջուած փճացեր էին: Ուրիշ տեղեր ռազմամթերքի շտեմարաններ որոնք լեցուն կ'ենթադրուէին, բոլորովին պարապ էին: Ռազմամթերքը անհետացած կամ լաւ եւս է ըսել վաճառուած էր թափառաշըրջիկ Արաբ ցեղապետներու:

Էնէզինները (աւագակարարոյ Արաբ ցեղ մը) յափշտակած տարած էին բանակին պատկանող հազարաւոր ոչխարներ եւ 3200 ձի:

– Բայց դուք անշուշտ այս բաներէն տեղեկութիւն ունիք, – կ'ըսէր ատեն ատեն Գերման հարիւրապետը:

– Ո՛չ, չէի իմացած, – կը պատասխանէ Սէիտ Համիտ:

– Բայց ի՞նչպէս կ'ըլլայ:

– Էֆէնտիմ զինուորականները այդ տեսակ բաները մենէ կը ծածկեն որպէսզի պարսաւ կամ պատիժ չընդունին:

– Աւագակ էնէզինները իրենց յափշտակութիւններէն ետքը

չեն հեռացած եւ հոն կը մնան ու ատեն ատեն շահատուրներուն վրայ կը յարձակին ցորեն եւ գարի գողնալու համար: Այդ մարդիկը որչափ ատեն որ հոն մնան, մեր հաղորդակցութիւնները թէ՛ ցամաքի, թէ՛ գետի ճամբով վտանգի մէջ են: Իմ քաղած տեղեկութիւններուս համեմատ եթէ 500 ձիաւորներէ բաղկացած ոյժ մը զրկուի իրենց դէմ, կարելի է գանոնք հեռացնել:

– Հինգ հարիւր ձիաւոր ուրկէ կրնանք գտնել, – պատասխանեց Սէիտ Համիտ պէյ, – հազիւ 50 ձիաւոր կրնանք զրկել, այն ալ դժուարաւ: Եւ այդ ուժը անբաւական է:

– Ուրեմն ի՞նչ պիտի ընենք:

– Պիտի սպասենք որ Էնէզինները հեռանան իրենք իրենցմէ: Եւ միւֆէթթիչը բացատրեց թէ անոնք եղանակներու համեմատ կը տեղափոխուին եւ թէ հաւանօրէն 15 օր ետքը պիտի հեռանային Եփրատի եզերքներէն:

Գերման սպան գանգատեցաւ նաեւ կարգ մը քաղաքային պաշտօնեաներէ որոնք պէտք եղած ձեռնատուութիւնը չէին ըներ զինուորական իշխանութեան:

Վերջապէս ամբողջ տեսակցութեան ընթացքին՝ հարիւրապետ էտվալ մի առ մի մատնանիշ ըրաւ թրքական վարչութեան ամբողջ թերութիւնը:

Մեկնելու պահուն կրկին շնորհակալութիւն յայտնեց ինծի եւ ձեռքս սեղմեց:

Սէիտ Համիտ պէյ զիս կանչելով խստիւ պատուիրեց որ ըսած խօսքերը բացարձակապէս գաղտնի պահեմ:

– Հակառակ պարագային, – սպառնացաւ, – գլխուդ մեծ փորձանք մը կրնայ գալ:

Այն ատեն հասկցայ թէ այդ թարգմանի պաշտօնը որքա՛ն ծանր ու փափուկ բան մըն էր ու մանաւանդ որքա՛ն ալ վտանգաւոր: Փոքրիկ կասկած մը, անխորհրդապահութիւն մը կրնար զիս մինչեւ Պատերազմական ատեան ու հոնկէ ալ կախազան տանիլ:

Բայց զարմանալին այն էր որ տակաւին ամիս մը առաջ իբ-

րեւ քաղաքական յանցաւոր էլ Պուսէրա աքսորուած մէկը, ինչպէս էի ես, Հիմա իմ թարգմանի պաշտօնովս ամենավստահելի մարդ մը կը դառնայի եւ թուրքերուն զինուորական գաղտնիքներուն կը տեղեկանայի:

Այս տեսակ հակասութիւններ միայն թուրքիոյ մէջ կրնան տեղի ունենալ:

Հարիւրապետ էտվալի մեկնումէն ետք մեր Մէհմէտ չավուչէն սկսեալ մինչեւ հազարապետները շուրջս կը դառնային հասկնալու համար թէ ի՞նչ խօսուած էր, երկու ժամէն աւելի միւֆէթթիչին սենեակին մէջ:

— Բացարձակապէս արգիլուած է ինծի բան մը ըսել այդ մասին, — կը պատասխանէի խորհրդաւոր դէմքով մը:

Գերման սպան ուրիշ մէկ քանի անգամներ ալ եկաւ նոյն շարթուն մէջ եւ ես շարունակեցի իմ թարգմանի պաշտօնս:

Օր մըն ալ Սէիտ Համիտ պէյ ինծի կանչեց եւ ըսաւ.

— Գերմանական մէնզիլէն թարգման մը կ'ուզեն կոր Ֆրանսերէն գիտցող, հոս քենէ զատ մարդ չունիմ, կ'ուզե՞ս անոնք քովը երթալ:

— Ես կը նախընտրեմ ձեր քովը մնալ, — պատասխանեցի, բայց կամքը ձերն է, եթէ հրաման կ'ընէք կ'երթամ:

— Գնա՛, տղաս, — ըսաւ, — հոն աւելի աղէկ է, ասկէ զատ ո՞նոք թերեւս քեզի ամսական մըն ալ կուտան:

— Շատ աղէկ:

— Վաղը առտու պէտք է որ հոն գտնուիս:

— Գլխուս վրայ:

Եւ տխուր դէմքով մը դուրս ելայ, իբր թէ այդ առաջարկութիւնը զիս դժգոհ թողուցած ըլլար: Բայց իրականութիւնը այլ է որ ընդհակառակը շատ գոհ էի գերման մէնզիլը երթալու ուր աւելի ապահով պիտի կրնայի ըլլալ եւ յետոյ աւելի քաղքակիրթ մթնոլորտի մը մէջ պիտի ապրէի:

Հետեւեալ առտու կանուխ ուղղուեցայ գերմանական մէնզիլը որ քաղաքին միւս ծայրը կը գտնուէր:

Հարիւրապետ էտվալ զիս ընդունեց շատ սիրալիր կերպով

Չմոռնամ ըսելու որ այս զինուորականը Գերմանացի չէր, այլ Շուետացի եւ իբրեւ կամաւոր մտած էր գերման բանակին մէջ: Ինք նախապէս ժանտարմուրի հրամանատար է եղեր Պարսկաստան ուր պաշտօն յանձնուած էր իրեն ոստիկան զինուորութիւնը կազմակերպելու: Պաղտատի մէջ ամուսնացած էր բժիշկի մը աղջկանը հետ եւ կինը միասին բերած էր Տէր-Ջօր:

Այս կնոջ համար կ'ըսէին թէ Հայուհի մըն էր:

— Հոս, — ըսաւ ինծի հարիւրապետ էտվալ, — թարգմանի պաշտօն պիտի վարես եւ միանգամայն իմ օւտօնանսս\* պիտի ըլլաս եւ ինծի պիտի ընկերանաս երբոր թուրքերու այցելուութեան երթամ:

Հետեւեալ օրը ձիարշաւ մը տեղի պիտի ունենար թուրք զինուորականներու եւ տեղացի Արաբ երեւելիներու կողմէ կազմակերպուած, ի նպաստ Կարմիր մահիկին: Այս ձիարշաւին համար հրաւէր եկած էր նաեւ Գերման հրամանատարին, բայց ըսուած չէր թէ ժամը քանի՞ն հարկ էր ներկայ գտնուիլ:

— Գնա ոստիկանապետին, — ըսաւ հարիւրապետը, — եւ հասկըցիր թէ ձիարշաւը ժամը քանի՞ն տեղի պիտի ունենայ եւ թէ ե՞րբ հարկ է որ հոն գտնուիմ:

— Շատ աղէկ, — պատասխանեցի եւ դուրս ելայ:

Այսպէս, Գերմաններու քով պաշտօնս կը սկսէի առաջին անգամ սէր քօմիսէրին երթալով: Այս բանը թէ՛ կը նեղացնէր զիս, թէ՛ հաճոյք կը պատճառէր: Կ'ուզէի տեսնել թէ ի՞նչ ընդունելութիւն պիտի ընէր զիս էլ Պուսէրա աքսորող այդ հայատեաց հրէշը զոր իմալաթհանէն\*\* մտած օրս անգամ մը տեսած էի փողոցը:

Գացի շիտակ ոստիկանատուն որ սարային մէջ կը գտնուի եւ ուղղուեցայ սէր քօմիսէրին գրասենեակը:

Մուսթաֆա էֆէնտի սեղանին առջեւ նստած կը գրէր:

\* Բաշխում, կարգատրում, կարգադրութիւն, որոշում, վճիռ: Այստեղ՝ օգնական:

\*\* Արտադրամաս, փոքրիկ գործարան:

Իր քովն էր նաեւ ուրիշ ոստիկան մը որ իբրեւ քարտուղար կը ծառայէր:

Ձինուորական բարեւ մը տուի եւ կեցայ: Սէր քօմիսէրը գլուխը վեր վերցուց, զիս ճանչցաւ եւ խիստ ձայնով մը հարցուց.

– Ի՞նչ կ'ուզես:

– Գերմանական մէնզիլի հրամանատարին կողմէ կուգամ, – պատասխանեցի, – կ'ուզէ հասկնալ թէ վաղուան ձիարշաւը ժամը քանի՞ն տեղի պիտի ունենայ:

– Դուն գերման մէնզիլը ի՞նչ գործ ունիս, – ըսաւ առանց իմ հարցումիս պատասխանելու:

– Իբրեւ թարգման հոն կը գտնուիմ:

– Դուն տօքումհանէն չէի՞ր:

– Այո՛, բայց հոնկէ միւլֆէթթիչ Սէիտ Համիտ պէյի քով փոխադրուեցայ իբրեւ թարգման եւ հոնկէ ալ պէյին հրամանովը գերման մէնզիլը ղրկուեցայ:

– Քու անունդ Երուանդ Օտեան չէ՞ր, – հարցուց:

– Այո՛, – պատասխանեցի:

– Դուն «ժամանակ» թերթին խմբագիրն ես ու Պոլսէն Համա արքայութեան եւ հոնկէ ալ հոս ղրկուած ես:

– Ճիշդ է, – պատասխանեցի:

– Ըսել է որ հիմակ մէնզիլը մտար իբրեւ թարգման... գերմաներէն գիտե՞ս:

– Ո՛չ, ֆրանսերէն գիտեմ միայն:

– Կարծեմ անգլիերէն ալ գիտես:

– Չէ, չեմ գիտեր, – պատասխանեցի այս հարցումներէն չափազանց նեղացած:

– Հիմա բուն տեղը գտեր ես, – ըսաւ հեգնական շեշտով մը, – պիտե՞ր ալ կտրեր ես Գերմանացիներուն նմանելու համար:

– Քօմիսէր պէյ, – ըսի խստութեամբ, – պաշտօնապէս եկած եմ հոս ձեռնէ տեղեկութիւն մը ուզելու, հարցումիս պատասխանը տուէ՛ք երթամ, հրամանատարը կը սպասէ կոր:

– Վա՛յ, բարկացա՞ր մի, կը տեսնամ որ քիթդ շատ մեծցեր է, – ըսաւ միշտ հեգնական ձեւով մը, – հրամանատար պէյին ըսէ՛ որ ձիարշաւը վաղը առտու ժամը իննին տեղի պիտի ունենայ, բայց լաւ կ'ըլլայ որ ինք ութուկէսին գայ որպէսզի կարենանք լաւ տեղ մը տալ իրեն... գալով քեզի, դուն քաղաքական յանցաւոր ես ու զինուորական տարիք ալ չունիս, էլ Պոլսէրա արքայը ղրկուած ես միւլթէսարըֆ փաշային հրամանով, ինչպէ՞ս կ'ըլլայ որ հիմա հոս իբրեւ զինուոր կը ծառայես Գերմանացիներուն քով:

– Ատիկա զինուորական իշխանութեան գիտնալիք բանն է, – ըսի, – անոր հարցուցէ՛ք:

– Ես գիտեմ թէ որո՞ւ պիտի հարցնեմ, – պատասխանեց սպառնական շեշտով մը:

– Մնաք բարով:

– Երթաք բարով:

Որչափ ալ ինքզինքս ապահով կը զգայի Գերմանացիներուն քով, դարձեալ այդ սէր քօմիսէրին խօսքերը մտատանջութեան մատնեցին զիս:

Քանի մը օր ետքը քօմիսէր մը եւ ոստիկան մը ներկայացան մէնզիլը եւ ուզեցին տեսնել հրամանատարը:

Ձիրենք առաջնորդեցի պ. էտվալի քով: Ինծի այնպէս կը թուէր թէ այդ մարդիկը ինծի համար եկած էին:

Հրամանատարը նստեցուց քօմիսէրն ու ոստիկանը եւ ես ոտքի վրայ, թարգմանի պաշտօնս կատարեցի:

– Չենէ խնդիրք մը ունինք, – սկսաւ քօմիսէրը, – խնդիրք մը որ մանաւանդ ձեր օգտին համար է:

– Բացատրեցէ՛ք խնդիրը, – պատասխանեց պ. էտվալ:

– Ձեր մէնզիլին մէջ բաւական թիւով Հայեր կան որոնք իբրեւ ձիարար, խոհարար, ծառայ, գործաւոր կը ծառայեն, կ'ուզենք անոնց ցուցակը ունենալ մեր քով:

– Ինչո՞ւ համար:

– Որովհետեւ կրնայ ըլլալ որ անոնց մէջ վնասակար մար-

դիկ գտնուին, օրինակի համար գողեր, ոճրագործներ, քոմիթէ-  
ծիներ\* եւ այլն:

— Չեմ կարծեր որ այստեղ այդ տեսակ անձեր գտնուին,— ը-  
սաւ հարիւրապետը:

— Ատիկա մենք միայն կրնանք ստուգել,— պատասխանեց  
քոմիսէրը:— Ասկէ գատ ուրիշ բան մըն ալ կայ. օրինակի համար  
կրնայ ըլլալ որ Հայուն մէկը մէկը ինչն էր բան մը գողնայ եւ փախ-  
չի, ինչպէ՞ս կրնանք զինքը հետապնդել եթէ նախապէս իր ա-  
նունը, մականունը, տարիքն ու դէմքը մեզի ծանօթ չըլլան:

— Բայց ի՞նչու միայն Հայերուն ցանկը կ'ուզէք ունենալ,—  
հարցուց պ. Էտվալ,— հոս Հայերէն գատ կան նաեւ Արաբներ եւ  
թուրքեր:

— Անոնց ալ ցանկը կը պատրաստենք:

Հրամանատարը քիչ մը խորհեցաւ եւ հաւանութիւն յայտ-  
նեց քոմիսէրին որ անմիջապէս գործի սկսաւ:

Մէկիկ մէկիկ վեր կանչուեցան մէկը ինչն էր մէկը աշխատող Հա-  
յերը եւ քոմիսէրը տետրակի մը մէջ արձանագրեց անոնց անու-  
նը, մականունը, տարիքը, ծննդավայրը, արհեստը, եւ այլն:

Ամէնէն ետքը զիս հարցուփորձեց աւելի մանրամասն կեր-  
պով:

Գործողութիւնը աւարտելէ ետքը ոտքի ելաւ եւ ըսաւ.

— Մենք բոլոր այս մարդոց մասին մանրամասն քննութիւն  
մը կը կատարենք եւ եթէ մէջերնին վտանգաւոր մարդիկ կան,  
ձեզի իմաց կուտանք որպէսզի հեռացնէք հոսկէ:

Այս վերջին խօսքերն ալ թարգմանեցի հարիւրապետին որ  
սրտնեղած դէմքով մը «լա՛ւ, լա՛ւ» ըսաւ ու ճամբու դրաւ ոտի-  
կանները:

Անոնց մեկնելէն ետքը եկայ պ. Էտվալին քով եւ ըսի.

— Շատ կը վախնամ որ այս մարդիկը բոլոր այդ ձեւակիր  
պութիւնները կ'ընեն կոր որպէսզի առիթ մը գտնեն զիս այս  
տեղէն հեռացնելու:

\* Քաղաքական նպատակներով զինեալ պայքար մղող գաղտնի կազմա-  
կերպութեան անդամներ:

— Ինչպէ՞ս,— հարցուց:

— Օրինակի համար եթէ տեղեկագիր մը տան ձեզի իմ մա-  
սիս եւ զիս իբրեւ վտանգաւոր յեղափոխական մը կամ լրտես  
մը ներկայացնեն, ի՞նչ պիտի ընէք դուք: Ստիպուած էք հաւա-  
տալու իրենց ըսածին քանի որ պաշտօնական հանգամանք մը  
ունին:

— Այնպէս է,— ըսաւ հարիւրապետը:

— Ասոր համար կը խնդրեմ որ,— շարունակեցի,— ինծի հրա-  
ման տաք կրկին թրքական մէկը լը վերադառնալու, ուր Սէիտ  
Համիտ պէյ կրնայ զիս պաշտպանել:

— Սպասէ՛,— ըսաւ ինծի,— անգամ մը խօսիմ պ. Շուլցի հետ  
եւ ըստ այնմ կարգադրութիւն մը կ'ընենք:

Հարիւրապետ Շուլց թրքական սպայակոյտին մէջ էր եւ Հա-  
լայէն եկած էր կարգ մը զինուորական կարգադրութիւններ ը-  
նելու համար: Զուտ Գերմանացի մըն էր որուն ռազմագիտա-  
կան կարողութիւնները կը գովէին: Թրքական մէկը լը կը պաշ-  
տօնավարէր եւ միւլթէթիչին համահաւասար դիրք մը ունէր:  
Այդ Գերմանացին սակայն, պէտք է խոստովանիլ, շատ ազնիւ  
եւ բարի անձ մըն էր եւ մասնաւոր համակրանք մը ցոյց կուտար  
ինծի հանդէպ:

Հետեւեալ օրը պ. Էտվալ զիս կանչեց իրեն մօտ:

— Անհոգ եղիր,— ըսաւ,— եթէ որեւէ բան մը պատահի՝ քեզ  
պիտի պաշտպանենք, ասկէ գատ քու մասիդ միւլթէսարըֆին ալ  
պիտի խօսինք եթէ հարկ ըլլայ: Արդէն երեկ զղջացի տեղի տա-  
լուս, պէտք չէր թոյլ տայի որ հոս գտնուող Հայերը հարցաքըն-  
նէին... այս մասին պիտի երթամ խօսելու միւլթէսարըֆին:

Արդարեւ քիչ յետոյ երկուքս միասին գացինք պէլէտիէն  
ուր կը գտնուէր միւլթէսարըֆը:

Պ. Էտվալ պատմեց առջի օրուան ոտիկանական այցելու-  
թիւնը եւ հարցուց թէ միւլթէսարըֆը տեղեկութիւն ունէ՞ր ատ-  
կէ:

— Ո՛չ, տեղեկութիւն չունիմ,— պատասխանեց այս վերջինը:

— Ուրեմն ոստիկանապետը ինքն իր գլխին ըրած է այս բանը:

— Այնպէս կ'երեւայ:

— Ասկէ ետքը թոյլ պիտի չի տամ որ մեր մէնզիլը գան ու այս տեսակ քննութիւններ կատարեն:

— Բացարձակապէս իրաւունք ունիք:

— Եթէ յանցաւոր մը կամ գող մը գտնուի մեր քով ծառայողներուն մէջ, այն ատեն, եթէ պէտք ունենամ ոստիկանութեան օժանդակութեան, իրեն դիմում կ'ընեմ բայց չեմ ներք որ առանց իմ կողմէս դիմումի՝ մեր գործերուն խառնուին:

— Ես ոստիկանապետը կը կանչեմ եւ պէտք եղածը կը խօսիմ, — խոստացաւ միւթէսարըՔը:

Այս դէպքը առաջին բաղխումը եղաւ գերման մէնզիլին ու թուրք քաղաքային իշխանութեան միջեւ:

ՄիւթէսարըՔը կ'երեւայ թէ «պէտք եղածը» խօսած էր, որովհետեւ ոստիկանութեան կատարած քննութիւնը անհետեւանք մնաց:

\*\*\*

Բացի Հարիւրապետ Էտվալէն, իբրեւ քարտուղար մէնզիլ մէջ կը ծառայէր յիսնապետ Կէփարթ, որ շատ համակրելի եւ սիրուն երիտասարդ մըն էր եւ աւելի Անգլիացիի կը նմանէր քան Գերմանացիի, արդէն մայրը Անգլիացի է եղեր: Դժբախտաբար մէնզիլ գալէս քանի մը օր ետքը զինուորական պաշտօնով չիթ մեկնեցաւ եւ անոր յաջորդեց յիսնապետ Կերհարթ որ Ապու Քէմալէն եկաւ:

Այս վերջինը բո՛ւն Գերման զինուորականի անտանելի տպարն էր: Ինքնազաւան, մեծամիտ, դաժան ու ծայրայեղօրէն օրինապահ եւ միանգամայն դիւրագրգիռ ու բարկասիրտ:

Հազիւ 25 տարեկան, դաժան դէմքով երիտասարդ մըն է

աստուածաբանութեան ուսանող, որ պատերազմի յայտարարութեանն յետոյ զէնքի տակ կանչուած էր եւ մեկնած էր Կալիցիայի ճակատը ուր ռուսական գնտակ մը վզէն մտած ու ծոճակէն դուրս ելած էր: Ասոր վրայ զինքը ծանր վիճակի մէջ փոխադրած էին Պերլին զինուորական Հիւանդանոցը ուր քանի մը ամիս մնալէ ետքը, բոլորովին ապաքինած էր եւ զրկուած Պաղտաս: Պալտասի անկումէն ետքը եկած էր Ապու Քէմալ եւ անկէ ալ Տէր-Ջօր:

Իր մէնզիլը Հաստատուելուն պէս երկաթեայ թաթ մը սկսաւ ճնշել ամէնուս վրայ:

Առտուն ժամը 7ին ստիպուած էինք մեր գործին գլուխը գտնուելի, իսկ իրիկունները ժամը 5ին մեկնիլ, եթէ բացառիկ գործ մը չըլլար, Հակառակ պարագային՝ երբեմն մինչեւ գիշերուան ժամը 10 եւ աւելի ուշ կը մնայինք հոն: Ես նոյնիսկ ստիպուած էի կիրակի օրերն ալ երթալ:

Գերման մէնզիլին գործառնութիւնները հետզհետէ կ'ընդարձակուէին, թուրքերէն պաշտօնաթուղթեր կուգային զորս Հարկ էր թարգմանել: Ես չէի գիտեր թուրքերէն գրել կարդալ եւ ստիպուած էինք այս թուղթերը տանել պ. Ժօզէֆ Թալթըրի որ Հալէպցի վաճառական մըն էր Տէր-Ջօր Հաստատուած եւ Հայթայթիչն էր թուրք եւ գերման մէնզիլներուն: Պ. Ժօզէֆ պարապոյ ժամերուն այդ թարգմանութիւնները կ'ընէր անձնուիրաբար, բայց որովհետեւ գործերը հետզհետէ աւելի կը շատնային՝ Հարկ եղաւ մնայուն պաշտօնեայ մը գտնել:

Պ. Էտվալ ինծի յանձնեց գրագիր մը գտնելու գործը:

Բարեբախտաբար պատրաստ մէկը կար այն էր պ. Միքայէլ Մորճիկեան պիրեճիկցի ծանօթ ընտանիքին անդամներէն:

Մորճիկեան բազմանդամ ընտանիքը տարի մը առաջ աքսորուած էր Պիրեճիկէն: Իրենցմէ մաս մը յաջողած էր Գոնիա մնալ, բայց մեծամասնութիւնը քշուած էր մինչեւ Տէր-Ջօր: Պ. Միքայէլ նոյն միջոցին կը հետապնդուէր իբրեւ զինուոր եւ ստիպուած էր ծածկուած մնալ: Իրեն համար փրկութիւն պիտի ըլլար եթէ գերման մէնզիլը ընդունուէր:



Պ. Էտվալի խօսեցայ իր մասին:

– Անգամ մը բեր տեսնուի՞նք, – ըսաւ:

Հետեւեալ օրն իսկ Միքայէլ ներկայացաւ եւ ընդունուեցաւ: Հրամանատարին բացատրեցինք իր կացութիւնը:

– Ես այդ զինուորութեան խնդիրը կը կարգադրեմ անմիջապէս, – ըսաւ պ. Էտվալ:

Եւ օգտուելով նոյն միջոցին Հոն գտնուող 4-րդ զօրաբանակի ընդհանուր քննիչ Քէմալ պէյի ներկայութենէն՝ անիկա վէսիքա մը առաւ որով Միքայէլ Մործիկեան զինուորական ծառայութենէն ազատ կը կացուցուէր որչափ ժամանակ որ գերմանական մէնզիլը պաշտօնավարէր:

Միքայէլ եւ ես թէեւ իբրեւ թարգման կը ճանչցուէինք, բայց ստիպուած էինք ուրիշ տաղտկալի գործեր ալ կատարելու: Օրինակի համար հարիւրապետին եւ պ. Կէրհարտի վառարաններուն համար փայտ կոտրել, վառարանները վառել, թղթատարական պայուսակները եւ տոպրակները կրել, եւ այլն:

Երբ գերման մէնզիլին մէջ ծառայող թուրք զինուոր մը յանցանք մը գործէր, յանցանքը կը տեղեկագրուէր նօքթա քօմանտանին եւ ան էր որ պէտք եղած պատիժը կուտար: Այդ յանցաւորը զօրանոց տանելու գործն ալ ինծի յանձնուած էր: Այդ պարագային՝ հրացան մը կուտային ինծի որպէսզի եթէ յանցաւորը փախչելու փորձ ընէ զինքը սպաննեմ...:

Անգամ մը բաւական ծանր յանցանքի համար հարկ եղաւ որ երեք զինուոր զօրանոց տանիմ:

– Եթէ երեք իրենցմէ մէկը ճամբան փախցնես, գլուխդ կը կրակեմ, – ըսաւ Կէրհարտ:

– Բայց ինչպէ՞ս հսկեմ երեք հոգիի վրայ որոնց ձեռքերը կապուած չեն:

– Գերմանական հրացան չունի՞ս...

– Ունիմ, բայց...

– Քանի որ գերմանական հրացանով զինուած ես ո՛չ թէ երեք՝ այլ երեսուն հոգիի վրայ ալ կրնաս հսկել, – գոչեց:

Ճարահատ ճամբայ ելայ երեք զինուորներուն հետ: Անընդհատ սիկառէթ կը հրամցնէի իրենց եւ կը ջանայի զիրենք սիրաշահիլ որպէսզի չփախչին:

– Ի՞նչ գրուած է տեղեկագրին մէջ մեզի համար, – հարցուց զինուորներէն մին:

– Ոչինչ, շատ թեթեւ բան մը, – պատասխանեցի, – գրուած էր որ նօքթա քօմանտանին ձեզի խրատական մը խօսի...

– Գաւազանով ձեծելու խօսք չի կա՞յ...

– Երբեք, ատանկ բան մտքէ մի՛ անցնէք, – գոչեցի:

Մինչդեռ իրականութիւնը այն է թէ պ. Էտվալ կը պահանջէր 40 գաւազանի հարուած ամէն մէկուն համար:

– Եթէ ձեծի խնդիր կայ, ես կը փախչիմ:

– Ո՛չ, սիրելիս, հաւատացի՛ր խօսքիս, թուղթը իմ քովս գրուեցաւ, քանի մը խօսք պիտի լսէք, այսչափ... սիկառէթ մը հրամմէ՛: Ետ դառնալնուս կ'երթանք տեղ մը կը նստինք ու մէյ-մէկ սուրճ կը խմենք:

Ու այսպէս լուրզելով\* տարի զիրենք մինչեւ զօրանոց, նօքթա քօմանտանիին քով եւ տեղեկագիրը տուի իրեն:

Կարդաց, յետոյ բարկութեամբ խոյացաւ երեք զինուորներուն վրայ եւ սկսաւ չարաչար ձեծել զանոնք ձեռքը գտնուած գաւազանովը: Յետոյ կանչել տուաւ յիսնապետ մը եւ հրամայեց որ այդ մարդիկը վար տանին քառուսունական գաւազան զարնեն ու յետոյ բանտարկեն:

– Չավ՞ուշ, – ըսաւ ինծի, – դուն ալ ներկայ գտնուէ՛ եւ տեսածիդ պէս գնա՛ պատմէ միւսիւ Էտվալին:

– Գլխուս վրայ, պէյ էֆէնտի:

Թէեւ պարզ զինուոր էի, բայց բոլոր թուրք սպաները ալ-ման\*\* չավուշը դրած էին անունս եւ այդպէս կը կոչէին:

Երեք յանցաւորները տարին ստորնայարկը, յիսնապետին սենեակը, գետինը պառկեցուցին, իրենց կօշիկները հանեցին եւ

\* Քաղցր. աճուշ խօսքերով համոզելով:

\*\* Գերմանացի:

քառսունական խարազանի հարուած զարկին, մինչ խեղճերը իրենց աղաղակներով ու լացի ձայներով կը թնդացնէին ամբողջ գորանոցը:

Վայրագ ու աղեխարչ տեսարան մըն էր ասիկա, որուն ակամայ ներկայ գտնուեցայ պժգանքով:

Վերադարձիս պ. էտվալ եւ պ. Կէրհարտ, պատմել տալի մանրամասնօրէն ինչ որ պատահած էր:

— Բայց դուն սոսկալի մարդ մը կը դառնաս կոր, — ըսաւ Հարիւրապետը խնդալով:

Ըսի իրեն որ պատիժի այդ վայրագ ձեւը շատ յոռի տապալուութիւն մը գործած էր վրաս:

— Մեծն Տրէտէրիքէն ի վեր, — պատասխանեց Պ. էտվալ, — ծեծը վերցած է գերման բանակին մէջ, բայց թուրքերը առանց ծեծի կարելի չէ կրթել:

\*\*\*

Գերման մէնզիլը արձանագրուած էի Սահակ օղլու Երուսաղանունով եւ ընդհանրապէս Երուսաղ կը կոչէին զիս:

Օր մը երբ հարիւրապետին հետ փողոցը կ'երթայինք եւ ես ըստ սովորութեան, ետեւէն կը քալէի.

— Երուսաղ, — ըսաւ յանկարծ հարիւրապետը, — քովս եկա՞ր Մօտեցայ իրեն կարծելով որ հրաման մը ունէր տալիք:

— Քովէս քալէ՛, խօսելիք ունիմ քեզի, — ըսաւ:

Յետոյ շեշտակի երեսս նայելով շարունակեց.

— Օտեան անուն մէկը կը ճանչնա՞ս:

— Ես եմ, — պատասխանեցի:

— Կ'երեւայ որ դուն ձեր ազգին մէջ ծանօթ գրագէտ մըն ես:

— Այո՛, բաւական ծանօթ եմ, — պատասխանեցի:

— Գիրքեր հրատարակած ես եղեր, վէպեր գրած ու թարգմանած:

— Ծիշտ է, — հաստատեցի:  
— Օրաթերթերու խմբագրապետ եղած ես, եւ դուն քու մասնաւոր թերթդ ունեցած ես:

— Այո, պարոն հարիւրապետ, — կմկմացի:

— Կը շնորհաւորեմ, — ըսաւ:

— Շնորհակալ եմ, բայց ուրկէ՞ իմացաք այս տեղեկութիւնները:

— Լսեցի, — ըսաւ, չուզելով յայտնել իր տեղեկութիւններուն աղբիւրը:

Յետոյ աւելցուց

— Հիմա կը հասկնամ թէ ի՞նչու քեզ կը հետապնդէ ոստիկանապետը, բայց ապահով եղիր, այնչափ որ ես հոս եմ քեզի գաչող չըլլար:

— Շնորհակալ եմ:

— Իսկ եթէ մեկնիմ, այն ատեն չեմ գիտեր թէ ի՞նչ կրնայ պատահիլ:

Յետոյ ըսաւ թէ ինք Պարսկաստան մնացած է, իբրեւ պարսկական ոստիկան գինուորներու կազմակերպիչ եւ թէ բաւական շայնք ճանչցած է

— Որոնք սակայն, — աւելցուց, — համակրելի տիպարներ չէին

— Ինչո՞ւ համար, — հարցուցի

— Որովհետեւ Խուսերուն եւ Անգլիացիներուն միացած ամէն մեքենայութիւն կ'ընէին մեր կազմակերպական գործը ճախողութեան սատանայու համար

Յետոյ խօսեցանք հայկական չարդերէն, հալածանքին, տարագրութեան վրայ ու ի վերջոյ յայտարարեց

— Եթէ այս պատարագմին մէջ Կերմանիս յաղթող ելլէ գիտցիր որ մէկ շալ պիտի չմնայ թուրքերոյ մէջ

— Պիտի չարդե՞ն, — հարցուցի

— Ոչ, բայց թուրքերայէս դուրս պիտի վտարեն, ասիկա որոշուած բան մըն է, որուն հաւանած է Կերմանիս

Այդ օրէն ետքը, պ. էտվալ միշտ համակրական վերաբերում

ցոյց կուտար ինծի Հանդէս: Ամէն անգամ որ գործի մը համար իր տունը երթայի եւ ինք ըմպելու զբաղած ըլլար, ինչ որ յաճախ կը պատահէր, ինծի ալ գաւաթ մը կը հրամցնէր: Երբ միւթէսարըՖի, կամ ո՛ր եւ է թուրք անձնաւորութեան մը հետ տեսակցութիւն ունենար յետոյ իմ կարծիքս կը հարցնէր իր խօսածներուն մասին եւ երբեմն երբ դիտողութիւն ընէի, իրաւունք կուտար ինծի:

\*\*\*

Գերմանացիները կը պատրաստուէին զօրաւոր գերմանական ոյժ մը բերել Պաղտատի ճակատը:

Կ'ըսուէր թէ քսան-երեսուն հազար զինուոր պիտի գար:

Պ. Էտվալ այդ զինուորները տեղաւորելու համար նախապատրաստութիւններ կ'ընէր եւ ամէն օր գրեթէ տեսակցութիւններ կ'ունենար միւթէսարըՖին հետ, զանազան շէնքեր գրաւելու համար, որոնք հիւանդանոցի, սպաներու բնակութեան, մթերանոցի եւ այլնի համար պիտի ծառայէին:

Արդէն բաւական մեծկակ խումբ մը մասնագէտ զինուորականներ եկած էին իրենց գլուխ ունենալով տոքթոր Մէտքէ, որ երիտասարդ բժիշկ գիտնական մըն էր:

Այս գիտունը 15 օրուան մէջ անթել հեռագրի կայան մը հաստատեց Տէր-Ջօրի մէջ եւ ուղղակի յարաբերութեան մտաՊերլինի հետ:

Ամէն օր Պերլինէն կը ստանայինք պատերազմին լուրերը զորս կը հաղորդէինք գերմանական հաստատութիւններուն, թուրք մէնզիլին եւ միւթէսարըՖին:

\*\*\*

Տէր-Ջօրի մէջ պաշտօնապէս ճանչուած հանրատուններ չէին կային եւ Գերման զինուորները ստիպուած էին յաճախել այն

պիսի տուններ որոնք բժշկական հսկողութենէ զերծ էին եւ յաճախ վարակուած դուրս կ'ելլէին այդ տուններէն:

Ասոր դարման մը գտնելու համար պ. Էտվալ խորհեցաւ ոստիկանապետին դիմել եւ առաջարկել որ մէկ քանի հանրատուններ հաստատուին որոնց հսկողութիւնը պիտի կատարէր տոքթոր Մէտքէ, գերման հիւանդանոցին բժիշկը:

Միասին գացինք սէր քօմիսէր Մուսթաֆային:

– Փափուկ խնդրի մը մասին ձեզի հետ բոլորովին առանձին տեսակցիլ կ'ուզեմ, – ըսաւ հարիւրապետը:

Քօմիսէրը հեռացուց իր գրագիրը եւ հոն գտնուող մէկ քանի ուրիշ ոստիկաններ:

Հրամանատարը բացատրեց իր այցելութեան շարժառիթը:

Քանի Գերման հրամանատարը խնդիրը կը բացատրէր եւ ես իր խօսքերը կը թարգմանէի հաւատարմօրէն, սէր քօմիսէրը կը բարկանար, կը յուզուէր ու մեծ ճիգեր կ'ընէր իր հանդարտութիւնը պահելու համար: Ի վերջոյ ըսաւ.

– Ես հոս հանրային ապահովութեան վրայ հսկելու պաշտօն ունիմ եւ ո՛չ թէ հանրատուններ բանալու:

– Բայց, – դիտել տուաւ հրամանատարը, – Գերմանիոյ մէջ եւ ընդհանրապէս Եւրոպայի ամէն կողմը ասիկա ոստիկանութեան իրաւասութեանը պատկանող գործ մըն է:

– Ես չեմ կրնար այդ գործով զբաղիլ, – պատասխանեց սէր քօմիսէրը, – եթէ կ'ուզէք միւթէսարըՖ փաշային դիմեցէք:

– Անշուշտ պիտի դիմեմ, քանի որ խնդիրը մեր զինուորներուն առողջութեան մասին է:

Եւ ոստիկանատունէն ելլելով ուղղակի գացինք միւթէսարըՖին եւ հոն հրամանատարը խնդիրը բացատրեց:

ՄիւթէսարըՖը խոստացաւ նկատողութեան առնել խնդիրը:

Քանի մը օր ետքը իմացանք որ ոստիկանութիւնը գրաւած էր քաղղէացիներու եկեղեցին եւ զայն բոզանոցի վերածած... գոհացում տալու համար Գերմաններուն:

Ամէն կիրակի այդ եկեղեցին կը յաճախէր պ. Էտվալի կիներ որ ջերմ հաւատացեալ մըն էր, ամուսինն ալ երբեմն կ'ընկերա-

նար իրեն: Մերունի քաղղէացի քահանան այս առթիւ ծանօթութիւն հաստատած էր իրենց հետ եւ երբ կուգան եկեղեցին գրաւելու, անմիջապէս կը դիմէ տիկին Էտվալի որ կուգայ եղելութիւնը պատմելու իր էրկանը:

Պ. Էտվալ չէր ուզեր հաւատալ այդ իրողութեան:

Ի վերջոյ ուզեց աչքովը ստուգել ամէն բան: Ինքը, ուրիշ Գերման զինուոր մը եւ ես գացինք եկեղեցի, ուր արդէն 5-6 կիներ սկսած էին իրենց առեւտուրնին:

Հարցուփորձեցինք կիները որոնք պատասխանեցին թէ՛ ուտիկանները բռնի կերպով բերած էին զիրենք հոն:

Հրամանատարը վերադարձաւ մէնզիլ, մանրամասն տեղեկագիր մը պատրաստեց, եւ որուն ներքեւ ես ու Գերման զինուորն ալ ստորագրեցինք իբրեւ ականատես վկայ ու տեղեկագիրը հեռագրուեցաւ Հալէպի Գերման զինուորական իշխանութեան:

Միեւնոյն ժամանակ Հրամանատարը դիմեց նաեւ միւթէսարըՖին:

— Ես,— ըսաւ այս վերջինը,— ձեզի գոհացում տալու համար Հրաման ըրի ուտիկանապետին որ յարմար տեղ մը գտնէ հանրատունի համար, բայց չըսի որ քաղղէացիներուն եկեղեցին գրաւէ:

Հրամանատարը պահանջեց որ ուտիկանապետը կանչուի:

Այս վերջինը, իբրեւ արդարացում, ըսաւ թէ՛ գրաւուած շէնքը յատկապէս իբրեւ եկեղեցի չէ շինուած, այլ յետոյ վերածուած է եկեղեցիի:

Պ. Էտվալ պահանջեց որ եկեղեցին պարպուի:

— Ուրիշ յարմար չէնք մը կը փնտռենք,— ըսաւ ուտիկանապետը:

Եւ սակայն այդ յարմար չէնքը չգտնուեցաւ երբեք եւ հանրատունը մնաց իր եղած տեղը, հետզհետէ շրջակայ տուններն ալ վերածեցին նմանօրինակ հաստատութիւններու եւ որովհետեւ կիներու աշխատանոցը ճիշդ այդ փողոցին վրայ կը գտնուէր, Աէիտ Համիտ պէյ պատով մը փողոցին վարի մասը գոցել տուաւ,

որպէսզի Հայ կիները գէշ օրինակներ չունենան իրենց աչքին տակ:

Թէեւ պէտք է խոստովանիլ որ մէկ քանի Հայուհիներ նախընտրեցին թողուլ աշխատանոցը, հրաժարիլ պարկեշտ հացէն ու երթալ աղտոտ հեշտութեան մէջ փնտռել իրենց ապրուստը:

Գալով պ. Էտվալի Հալէպ ըրած դիմումին, ո՛ր եւ է արդիւնք չունեցաւ. նոյնիսկ իմացայ որ հրահանգ ստացած էր իր մեծեղէն այդ տեսակ խնդիրներու չի միջամտել:

Այդ հանրատունները որեւէ օգտակարութիւն չունեցան Գերման զինուորներուն համար, որովհետեւ ուղղակի Գերման բժիշկին հսկողութեան ներքեւ չէին, ինչպէս պ. Էտվալ կը պահանջէր եւ ասոր համար արգիլուած էր իրենց այդ տունները յաճախել:

Այս խնդիրը պատճառ եղաւ սակայն որ, գերման մէնզիլին ու թուրք քաղաքային իշխանութեան յարաբերութիւնները լարուին:

Արդէն այդ յարաբերութիւնները հետզհետէ սուր հանգամանք մը կ'առնէին:

Պ. Կէրհարտ մասնաւորապէս կ'ատէր թուրքերը եւ առիթ կը ստեղծէր իր զգացումները հրապարակով արտայայտելու:

Ինչպէս ըսի, Գերման զինուորական հիւանդանոցի վերածելու համար գրաւած էին մեծ նորաշէն շէնք մը որ կը պատկանէր Տէր-Ջօրի մէպուսին:

Այդ շէնքը հիւանդանոցի վերածելու համար բաւական փոփոխութիւններ ըրած էին եւ ստորնայարկը դրած էին վառարաններ որոնց ծխնելոյգէն ելած ծուխը թէ՛ շէնքի պատերը կը սեւցնէր եւ թէ՛ անհանգիստ կ'ընէր վերնայարկը բնակողները որոնք մէպուսին եղբայրն եւ ընտանիքն էին:

Քանի մը անգամ մարդը եկած էր բողոքելու, բայց իր բողոքը նկատողութեան չէր առնուած:

— Մենք չէնք միւթէսարըՖին առած ենք,— ըսած էր պ. Էտվալ,— եթէ բողոք մը ունիք, անոր դիմեցէք:

Օր մը նորէն եկած էր իր բողոքը կրկնելու նոր մանրամաս-

նութիւններով: Հրամանտարը հոն չէր եւ Պ. Կէրհարտ ընդունեց զինքը ճիշդ այն միջոցին ուր ես վար իջած էի գործի մը համար:

Երբ եկայ վեր, տեսայ որ պ. Միքայէլ Մործիկեան կը կատարէր թարգմանի պաշտօնը:

Պ. Միքայէլ կը ճանչնար մեպուսին եղբայրը, գիտէր թէ քաղքին ամէնէն ազգեցիկ եւ հարուստ էշրաֆներէն մէկն էր եւ կը ջանար քաղաքավարութեամբ վարուիլ հետը, հակառակ պ. Կէրհարտի տուած արհամարհոտ եւ խիստ պատասխաններուն զոր ստիպուած էր բառ առ բառ թարգմանել, որովհետեւ այնպէս կը պահանջէր դիւրագրգիռ ենթասպան:

Յանկարծ բարկաճայթ ձայնով մը պ. Կէրհարտ գոչեց.

– Ըսէ՛ իրեն որ լիրբ ստախօս մըն է եւ թէ զինքը կը վռնտեմ սենեակէս:

Պ. Միքայէլ ըստէ մը վարանեցաւ.

– Թարգմանէ՛ ըսածներս, – գոռաց պ. Կէրհարտ բարկութեան կաս կարմիր կտրած:

– Էֆէնտիմ, – սկսաւ պ. Միքայէլ էշրաֆին դառնալով, – կ'երեւայ որ դուք կը սխալիք կոր, հետեւաբար առայժմ գացէք եւ յետոյ կրկին կը բանակցինք:

Պ. Կէրհարտ հասկցաւ որ իր խօսքերը շատ մեղմացած ձեւով մը կը թարգմանուէին: Իսկոյն, կատղած վագրի մը պէս, վեր ցատքեց նստած տեղէն, խոյացաւ պ. Միքայէլին վրայ, եւ ապտակ մը իջեցուց երեսին յետոյ ինծի դառնալով պոռաց.

– Բառ առ բառ թարգմանէ՛ ինչ որ ըսի:

– Եալանճը հտէպսիզին պիրի սին, տէֆ օլ շուրտան\*:

Էշրաֆը ափ ի բերան մնաց, սահմուկած երեսս նայեցաւ եւ կարծելով թէ սխալ լսած էր, հարցուց.

– Ի՞նչ ըսի:

Ստիպուեցայ կրկնել խօսքերը աւելի բարձր ձայնով:

Յետոյ իմ կողմէս աւելցուցի.

\* Ստախօս անամօթի մէկն ես, կորի՛ր այստեղից:

– Շուտ գնա՛, հիմա ծեծ կ'ուտես:

Էշրաֆը հասկցաւ կացութեան ծանրութիւնը, ոսկի կոթով գաւազանը որ անկիւնը դրած էր, առաւ եւ դուրս ելաւ սենեակէն:

– Կանչէ՛ սա մարդը, – գոչեց պ. Կէրհարտ, որուն բարկութիւնը հետզհետէ կը սաստկանար:

Ետեւէն վազեցի ու ետ բերի զինքը:

– Ըսէ՛ իրեն թէ, – շարունակեց ենթասպան, – տարրական քաղաքավարութիւնը կը պահանջէ որ դուրս ելած ատենը բարեւէ զիս:

Թարգմանեցի այս խօսքերը:

Խեղճ մարդը պահանջուած բարեւը տուաւ ու կրկին դուրս ելաւ:

Իրեն եղած այս նախատինքին համար մէպուսին եղբայրը գանգատած էր միւթէսարըֆին, բայց այդ գանգատը որեւէ հետեւանք չունեցաւ:

\*\*\*

Ուրիշ դէպք մը ա՛լ աւելի մեծ ձգտում մը առաջ բերաւ գերման մէնզիլին ու քաղաքային իշխանութեան միջեւ:

Ատեն ատեն սայլերու կտրուան մը ճամբայ կը հանէինք դէպի Հալէպ մէնզիլին պաշար բերելու համար: Սայլորդները գրեթէ ամէնքն ալ մեր ծառայութեան մէջ գտնուող Հայեր էին, որոնք այդ ուղեւորութեան համար մասնաւոր վէսիքաներ ունէին:

Անգամ մը ճիշդ սայլերը ճամբայ ելլելու միջոցին Հալէպի գերման մէնզիլին հեռագիր եկաւ որով անմիջապէս քսան ջորի կ'ուզէին մենէ:

Այդ ջորիներուն փոխադրութեան համար պէտք եղաւ մէնզիլին մէջ աշխատող հինգ վեց Հայ տղաք ղրկել միասին:

Կարաւանը ճամբայ կ'ելլէ մեծ պողոտայէն եւ երբ պէլէտիէի առջեւ կը հասնի ոստիկան մը կ'ուզէ արգելել տղոց մեկնումը:

Կարաւանին պետք կը մտրակէ ոստիկանը եւ հրաման կ'ընէ որ ամէնքը ճամբանին շարունակեն: Քիչ մը անդին ուրիշ քանի մը ոստիկան կրկին կը փորձեն Հայ տղաքը վար առնել ջորիներուն վրայէն եւ Գերման պետքը նորէն կը ծածկէ ոստիկանները եւ կարաւանը ճամբան կը շարունակէ:

Եղելութիւնը բնականաբար անմիջապէս կ'իմացուի եւ սէր քօմիսէրը իսկոյն կը փութայ մեր մօտ:

— Պէտք է որ այդ տղաքը, որոնք առանց արտօնութեան մեկնած են, ետ դառնան,— կ'ըսէ պ. Էտվալին:

— Ջորիները առանձին չեն կրնար երթալ,— կ'առարկէ Գերման հրամանատարը,— Հետեւաբար տղաքը չեմ կրնար ետ դարձնել:

— Ես ստիպուած եմ իսկոյն հեռագրել Սապօս որպէսզի կարաւանը հոն հասնելուն տղաքը ձերբակալուին ու ետ ղրկուին,— կը պատասխանէ սէր քօմիսէրը:

— Եթէ այդպիսի բան մը ընէք, ես ալ տարբեր միջոցներու պիտի դիմեմ:

— Ես պարզապէս միւթէսարըֆին հրամանն է որ կը գործադրեմ:

— Ըրէ՛ք ինչ որ կ'ուզէք, մենք ալ մեր գիտցածը կ'ընենք:

Քօմիսէրը երթալէն ետքը, հրամանատարը անմիջապէս միւթէսարըֆին գնաց: Բնականաբար կ'ընկերանայի իրեն:

— Դո՞ւք տուիք հրամանը որպէսզի այսօրուան կարաւանին ընկերացող Հայ տղաքը Սապօսայի մէջ ձերբակալուին եւ ետ դարձուին,— հարցուց պ. Էտվալ:

— Այո՛,— պատասխանեց միւթէսարըֆը,— ես տուի այդ հրամանը:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ ներքին գործերու նախարարութեան հրամանով խստիւ արգիլուած է Տէր-Ջօր գտնուող Հայերուն՝ այս սանճաքէն դուրս ելլելը:

— Բայց կառապանները քանի անգամ գացին եկան Հալէպ:

— Ատիկա բացառիկ շնորհ մըն էր որ ըրի, ասկէ զատ անոնք վէսիքա ունին եւ եթէ Հալէպի մէջ փախչին՝ դուք պատասխանատու էք:

— Նոյն պատասխանատուութիւնը կ'ստանձնենք նաեւ այդ Հայ տղոց համար:

— Ո՛չ, տղոց թոյլ չեմ կրնար տալ, անոնք աւելի դիւրաւ կ'ընան փախչիլ:

— Հալէպէն շատ անգամ Հայ կառապաններ եւ ձիապաններ որոնք մեր ծառայութեան մէջ կը գտնուին, ազատօրէն կրնան երթալ ուրիշ նահանգներ,— դիտել տուաւ հրամանատարը:

— Կարելի է, բայց Տէր-Ջօր տարբեր է,— կրկնեց միւթէսարըֆը,— Հոս եկող Հայը ա՛լ անգամ մըն ալ ոտքը դուրս չի կրնար դնել:

Եւ իբրեւ փաստ իր ըսածին, միւթէսարըֆը պատմեց թէ վերջերս ձէմալ փաշայէն հրաման եկած էր մեկնումի արտօնութիւն տալու Հայու մը:

— Այդ հրամանը չգործադրեցի,— ըսաւ,— մինչեւ որ ուղղակի ներքին գործերու նախարարութենէն երկրորդ հրաման մը եկաւ:

Եւ ինծի դառնալով աւելցուց.

— Այսօր եթէ ձէմալ փաշա հրաման ընէ քեզ Հալէպ ղրկելու այդ հրամանը չեմ գործադրեր:

Գերման մէնզիլի հրամանատարը մեկնեցաւ եւ եղելութիւնը իսկոյն հեռագրեց Հալէպ:

Բայց ի գո՛ւր: Սապօս հասնելուն՝ տղաքը կը ձերբակալուին, կը բանտարկուին եւ յետոյ ճամբայ կը հանուին դէպի Տէր-Ջօր ուր կը հասնին ողորմելի եւ ուժասպառ վիճակի մէջ, որովհետեւ ամբողջ երկու օր զիրենք վազցուցած էին ժանտարմաներու ձիերուն ետեւէն:

Հազիւ թէ խեղճերը Տէր-Ջօր կը հասնին, կրկին բանտ կը նետուին եւ հազիւ պ. Էտվալի ազդու դիմումներուն վրայ կարելի կ'ըլլայ զիրենք ազատել:

\* \* \*

Պ. Էտովալի եւ իր կնոջ Հետ Հալէպէն եկած էր տէօրթեօյցի տարագիր օրիորդ մը Ովսաննա Պալեան անուն որ իրենց տան մատակարարուհին էր եւ Հարիւրապետին ու իր կնոջ բացարձակ վստահութիւնը կը գրաւէր, այնպէս որ տանը ամբողջ կառավարութիւնը իրեն յանձնած էին, նոյնիսկ գնումները: Հարիւրապետին քով կար նաեւ Հայ զինուոր մը, Պօղոս անուն, իբրեւ դռնապան:

Օր մը Ովսաննա եւ Պօղոս զանազան գնումներ ընելու համար կամուրջէն անդին գտնուած ագարակ մը կ'երթան: Կամուրջին պահապան ոստիկանները վէսիքա կը պահանջեն Ովսաննայէն:

Պօղոս կը բացատրէ թէ Ովսաննա գերման մէնզիլի հրամանատարին ծառայութեան մէջ կը գտնուի, Հետեւաբար վէսիքայի պէտք չունի:

Ոստիկանները ո՛չ թէ միայն տեղի չեն տար, այլ կ'սկսին ծանր նախատինքներ տեղալ Ովսաննային եւ նոյնիսկ կը սպառնան ծեծելու:

Աղջիկը կը վերադառնայ տուն եւ եղածը կը պատմէ հրամանատարին կնոջ որ իսկոյն զայն կը հաղորդէ ամուսնոյն:

Պ. Էտովալ անմիջապէս Պօղոսը եւ Ովսաննան բերել կուտայ մէնզիլ եւ ինծի կը պատուիրէ որ դէպքին մասին իրենց վկայութիւնը առնեմ գրաւոր կերպով:

Յետոյ, իսկոյն ամենախիստ բողոք մը կը գրէ միւթէսարը՝ Ֆին ուղղուած եւ իրողութիւնը պատմելէ ետքը երկու ոստիկաններուն պատժուիլը կը պահանջէ:

Հետեւեալ օրը յանցաւորները պաշտօնանկ կ'ըլլան, հակառակ սէր քօմիսէրին ընդդիմութեան՝ որ կը պնդէր թէ Ովսաննան նախատած էր ոստիկանները:

\* \* \*

Բոլոր այս մանր մուկերը թշնամութիւն մը ստեղծած

էին գերման մէնզիլին եւ քաղաքային իշխանութեան միջեւ որ օրէ օր սուր հանգամանք մը կ'առնէր:

Քօմիսէր եւ միւթէսարը՝ սկսան բացէ ի բաց զիս ամբաստանել թէ թարգմանի պաշտօնս ուղղամտօրէն չէի կատարեր եւ թէ կը խեղաթիւրէի փոխանակուած խօսքերը, որպէսզի Գերմանները թշնամացնեմ թուրքերուն Հետ:

Միւթէսարը՝ կ'ուզէր որ ուրիշ թարգման մը յաջորդէ ինծի:

– Գտէ՛ք ուրիշ թարգման մը, – առաջարկեց պ. Էտովալ, – եւ այն ատեն Երուսաղէմ Հետս չեմ բերեր:

Միւթէսարը՝ ձեռնարկեց այդ բանին, նոյնիսկ Հալէպ դիմում ըրաւ, բայց չյաջողեցաւ: Ո՛չ ոք կ'ուզէր Տէր-Ջօր գալ իբրեւ թարգման:

Երբ տեսան թէ այդ կերպով չպիտի կրնան զիս չէզոքացնել, ուրիշ միջոցի դիմեցին:

Օր մը սէր քօմիսէրը գրաւոր կերպով խնդրեց գերման մէնզիլին որ իրեն հաղորդէ այն սիվիլ \* անձերուն ցանկը որոնք կը ծառայէին մէնզիլին մէջ:

Հրամանատարը անպատեհութիւն չտեսաւ այս բանին մէջ եւ հրամայեց որ ցանկը պատրաստուի եւ ղրկուի: Մանաւանդ որ նոյն միջոցին մէնզիլին մէջ մէկ քանի գործողութիւններ պատահած էին եւ կասկածներ կային այդ սիվիլ անձերուն վրայ ու ոստիկանապետն ալ բերանացի կերպով բացատրութիւն տուաւ թէ այդ անձերուն մասին մանրակրկիտ քննութեան մը համար ուզուած էր ցանկը:

Ցանկը պատրաստուելէն ու ղրկուելէն երկու օր ետքը սէր քօմիսէրը ներկայացաւ մէնզիլի եւ ուզեց տեսնուիլ հրամանատարին Հետ:

Ձինքը առաջնորդեցի պ. Էտովալի մօտ:

Իր այցելութեան պատճառը բացատրելէ առաջ՝ ուզեց որ ուրիշ մէկը կատարէ թարգմանի պաշտօնը:

– Ինչո՞ւ համար, – հարցուց հրամանատարը:

\* Քաղաքացիական:

– Որովհետեւ վստահութիւն չունիմ այս մարդուն վրայ, պատասխանեց քօմիսէրը ինծի ակնարկելով:

– Այն ատեն թո՛ղ հետեւնիդ թարգման մը բերէիք,– ըսաւ հրամանատարը:

– Դժբախտաբար եւրոպական լեզու գիտցող չկայ հոս:

– Եւ որովհետեւ մենք ալ թուրքերէն գիտցող չունինք մեր մէջը, ստիպուած ենք այս թարգմանով գոհանալ... ու ասկէ գատ մենք մեր թարգմանի վրայ վստահութիւն ունինք:

– Եթէ կ’ուզէք պ. Միքայէլը կանչեմ, թո՛ղ ան թարգմանէ,– առաջարկեցի հրամանատարին:

– Ո՛չ, դուն պիտի թարգմանես,– ըսաւ:

Վերջապէս ոստիկանապետը ճարահատ՝ ստիպուեցաւ համակերպիլ:

– Ձեր դրկած ցանկը պակասաւոր է,– դիտել տուաւ:

– Ի՞նչ պակաս ունի:

– Սիվիլներ կան որոնք չեն նշանակուած:

– Որո՞նք են:

– Ձեր թարգմանը, Երուսնդ Օտեան:

– Անիկա սիվիլ չէ, զինուորական է:

– Ո՛չ, մենք զինքը սիվիլ կը ճանչնանք եւ իբրեւ զինուոր չենք կրնար ճանչնալ:

– Բայց հոս զրկուած է օսմանեան զինուորական իշխանութեան կողմէ իբրեւ զինուոր, հետեւաբար մենք ալ ստիպուած ենք զինքը զինուոր ճանչնալ:

– Տէր-Ջօր քստորուած Հայերը չեն կրնար զինուոր ըլլալ:

– Ես ձեր ներքին օրէնքները չեմ գիտեր, միայն թէ քանի որ թուրք զինուորական իշխանութիւնը իբրեւ զինուոր զրկած է հոս, ես չեմ կրնար տարբեր կերպով նկատել զինքը: Դուք կըրնաք ուղղակի թուրք զինուորական իշխանութեան հետ լուծել խնդիրը:

– Միւթէսարըֆ փաշան յատկապէս կը պնդէ այդ մասին:

– Նորէն կը կրկնեմ, այդ խնդիրը կրնաք ձեր մէջը կարգադրել:

Ոստիկանապետը մեկնեցաւ, ըսելով որ տեսակցութեան արդիւնքը պիտի հաղորդէ միւթէսարըֆին:

Նոյն օրը շատ մտատանջութեան մէջ անցուցի: Կը տեսնէի որ մասնաւոր հակառակութիւն մը կար ինծի դէմ որ հետզհետէ աւելի կը սաստկանար: Անշուշտ կատարեալ վստահութիւն ունէի պ. Էտվալի բարեացակամութեան վրայ, բայց այդ բարեացակամութիւնը բաւական պիտի ըլլա՞ր զիս վտանգէ գերծ պահելու համար:

Օրինակի համար, կրնար ճամբան քալած ատենս զիս ձերբակալել տալ, բանտարկել եւ անմիջապէս աքսորել հեռաւոր վայր մը եւ նոյնիսկ զիս սպաննել տալ պարզապէս:

Այս երկիւղներէն տարուած որոշեցի փախուստ տալ Տէր-Ջօրէն: Իզմիթցի փռապան մը, Ներսէս անուն, փախուստի պարագային ամէն նիւթական օժանդակութիւն խոստացած էր ինծի, պայմանաւ որ Պաղտատի կողմը երթամ: Ինչ որ անկարելի էր էլ Պուսէրայի մէջ, հոս կարելիութիւն կար յաջողցնելու: Արաբ կարաւաններ, ծածուկ ճամբաներով կ’երթային մինչեւ Պաղտատ եւ կը վերադառնային ապրանք փոխադրելով: Անգլիական կառավարութիւնը ամէն դիւրութիւն կ’ընծայէր իրենց: Խնդիրը վստահելի ուղտապան մը գտնելու վրայ էր: Փռապան Ներսէս յարաբերութիւն մշակած էր Արաբ ուղտապաններու հետ եւ կրնար այդ վստահելի անձը գտնել:

Գացի կացութիւնը պարզեցի իրեն եւ յիշեցուցի խոստումը: Անմիջապէս պատրաստակամութիւն յայտնեց իր խոստումը յարգելու եւ ըսաւ թէ ճիշդ այդ օրերը կարաւան մը ճամբայ պիտի ելլէր դէպի Պաղտատ, որուն պետը ծանօթ եւ վստահելի անձ մըն էր:

– Ե՞րբ ճամբայ պիտի ելլէ կարաւանը,– հարցուցի:

– Երկու, առ առաւելն երեք օրէն,– պատասխանեց:

Այս կարգադրութիւնը ընելէ ետքը, գացի պ. Էտվալին քով:

– Ինքզինքս վտանգի մէջ կը զգամ,– ըսի,– այս մարդիկը օձիքս պիտի չձգեն եւ թերեւս օր մը գայ ուր դուք ալ չկրնաք զիս պաշտպանել...



– Ուրեմն ի՞նչ կը խորհիս ընել, – հարցուց։  
 – Խոյս տալ, – պատասխանեցի։  
 – Լաւ ծրագիր, բայց շատ վտանգաւոր, – դիտել տուաւ։  
 – Կը յուսամ որ կը յաջողիմ, – ըսի, – որովհետեւ վստահելի եւ ծանօթ Արաբ մը գտած եմ։  
 – Ո՞ր կողմը երթալու միտք ունիս։  
 – Դէպի Պաղտատ, – պատասխանեցի։  
 – Իբրեւ Գերման զինուորական չեմ կրնար հաւանիլ ու գովել այդպիսի որոշում մը, բայց իբրեւ բարեկամ խորհուրդ կուտամ որ ընես, պայմանով որ վստահ ըլլաս յաջողելու, որովհետեւ գիտես թէ ի՞նչ փորձանք կը բերես գլխիդ։ Պաղտատ փախչիլը պարզապէս դաւաճանութիւն է եւ միակ պատիժ մը կայ ատոր համար, այն է մահուան պատիժը։  
 – Գիտեմ որ այդպէս է։  
 – Յետոյ ուրիշ խորհուրդ մըն ալ տամ... քու մասիդ նոր դիմում մը պիտի ընեմ, սպասէ՛ անոր արդիւնքին։  
 – Շատ աղէկ, – խոստացայ։  
 Նոյն իրիկունն իսկ միասին գացինք թուրք մէնզիլը ու Սէիտ Համիտ պէյի պարզեց իմ խնդիրս։ Թուրք հրամանատարը զարմանք յայտնեց միւթէսարըֆին ընթացքին համար։ Ըսաւ թէ Հայերը կրնային զինուոր ըլլալ ամէն տեղ, թէ բանակին գործօն ծառայութեան մը մէջ եւ զէնքի տակ Հայ զինուորներ եւ սպաներ կային, մանաւանդ իբրեւ բժիշկ, դեղագործ, պայտար, ատամնարոյժ, եւ այլն։  
 – Ծիշտ ես ալ այդ կէտը հասկնալ կ'ուզէի, – ըսաւ պ. էտովալ։  
 – Հիմա ի՞նչ ընելու դիտաւորութիւն ունիք։  
 – Անմիջապէս դիմում պիտի ընեմ Հալէպի գերման մէնզիլին, պիտի խնդրեմ որ միանգամ ընդմիշտ որոշուի Հայերուն զինուորագրութեան խնդիրը որպէսզի այսպէս միշտ խնդիրներ չունենանք։  
 Սէիտ Համիտ պէյ շատ օրինաւոր գտաւ այս դիմումը։

Երկու օր յետոյ Հալէպէն հրահանգ կուգար թէ՛ զինուորական ծառայութեան մէջ գտնուող Հայերը իբրեւ զինուոր պիտի նկատուէին եւ հետեւաբար զինուորական իշխանութեան ներքեւ պիտի գտնուէին։  
 Ասիկա մեծ պարտութիւն մըն էր միւթէսարըֆին ու ոստիկանապետին համար։  
 Երբ այդ հրահանգը եկաւ, պ. էտովալ ըսաւ ինծի.  
 – Ա՛լ կրնաս առանց վտանգի մնալ այստեղ։  
 Արդէն Պաղտատ երթալիք կարաւանը ճամբայ ելած էր եւ հարկ էր գոնէ ամիս մը սպասել նոր կարաւանի մը համար։  
 Նոյն միջոցներուն Ռուսիա խաղաղութիւն կը կնքէր Գերմանիոյ հետ եւ այս լուրը զոր առաջին անգամ գերման մէնզիլը առաւ, մեծ խանդավառութիւն առաջ բերաւ Տէր-Չօրի թուրքերուն եւ Գերմաններուն մէջ։  
 Միւթէսարըֆին տրուած այցելութեան մը միջոցին այս խաղաղութեան հետեւանքներուն վրայ խօսք բացուեցաւ։  
 – Հիմա որ Գերմանիա ամբողջ ռուսական ճակտին վրայ գտնուած իր բանակը տրամադրելի ունի, – դիտել տուաւ միւթէսարըֆը, – անշուշտ պիտի փութայ քանի մը հարիւր հազար մարդ զրկել այս կողմերը թէ՛ Պաղտատը ետ աւնելու եւ թէ՛ Եգիպտոս արշաւելու համար։  
 – Այդ բանը անկարելի է, – պատասխանեց պ. էտովալ։  
 – Ինչո՞ւ համար։  
 – Որովհետեւ փոխադրութեան միջոց չունիք եւ կարելի չէ խօսքով այդքան մեծ զօրութիւն մը Սուրիա կամ Տէր-Չօր բերել։ Երբոր Ռուսներու պատերազմը հրատարակուեցաւ՝ զօրավար Մաքէնզէն կրցաւ շաբթուան մը մէջ 300000 գերմանացի զօրք բերել Պուլկարիա, որովհետեւ իր տրամադրութեան ներքեւ ունէր 15 վայրաշարժ եւ 150 հազար վակօն, մինչդեռ Անատոլի երկաթուղին հազիւ 30 գործածելի վայրաշարժ ունի ու 5-6 հարիւր վակօն։ Այս պայմաններուն մէջ բան մը չենք կրնար ընել դժբախտաբար։

Այս բացատրութիւնը պաղ ջուր մը լեցուց միւթէսարըՖին խանդավառութեան վրայ:

Պ. էտվալ ուզեց ուրիշ կերպով մխիթարել զայն.

— Պաղտատը վերագրաւելու եւ եգիպտոսի տիրանալու համար պէտք չունինք այստեղ բանակներ բերելու,— ըսաւ,— բաւական է որ ռուսական ճակատը գտնուող Գերման զինուորները փոխադրենք Արեւմտեան ճակատը եւ հոն ջախջախենք Ֆրանսական եւ անգլիական ուժերը: Եւ այդ բանը հաւանորէն պիտի կատարենք:

Եւ իրա՛ւ ալ նոյն միջոցներուն բոլոր Գերման սպաններուն եւ զինուորներուն կարծիքը այդ էր.

— Պատերազմը 2-3 ամիսէն կը լմնայ,— կ'ըսէին,— երբոր ռուսական ճակատը գտնուող 2 միլիոն Գերման զինուորները գան Արեւմտեան ճակատը:

Եւ սակայն այդ Արեւմտեան ճակատը սարսափ կ'ազդէր իրենց:

Կը յիշեմ Տիգրինկ անուն Գերման զինուոր մը որ այդ ճակատը եւ ուրիշ շատ ճակատներ գտնուած էր եւ որ օր մը ըսաւ ինծի այն գէշ Ֆրանսերէնովը զոր կը խօսէր.

— Պատրաստ եմ երթալ կռուելու ռուսական, ռումանական, իտալական ճակատները. բայց եթէ զիս ստիպեն վերադառնալ Արեւմտեան ճակատը, անձնասպան կ'ըլլամ:

— Ինչո՞ւ համար,— հարցուցի:

— Որովհետեւ ահռելի են հոն մղուած կռիւները եւ ռազմադաշտը ճշմարիտ դժոխք մըն է:

Նոյն բանը կը կրկնէին ուրիշներն ալ:

Երբ Պրէսթ-Լիթովսքի դաշնագիրը կնքուեցաւ, կրկին մեծ ուրախութեան ցոյցեր ըրին թուրքերը:

Իսկ Հայերը թէեւ ո՛չ յուսահատ, բայց շատ ընկճուած էին:

Խաղաղութեան յոյսը հետզհետէ կը նուազէր եւ մեզ այնպէս կը թուէր թէ տակաւին տարիներով դատապարտուած էինք Տէր-Ջօր մնալու:

Միակ յոյս մը կար սակայն անգլիական յառաջխաղացութիւնը Հիթի կողմէ: Արդարեւ այդ կողմերը դարձեալ Անգլիացիները ուժգին յարձակումներ կ'ընէին Արաբներու հետ միասին:

Միայն թէ, ինչպէս միշտ շատ դանդաղ, կը յառաջանային:

Եւ մենք որ մօտէն տեղեակ էինք թուրքերուն փոքրիկ ուժին՝ կը զարմանայինք թէ ինչո՛ւ զօրաւոր յարձակումով մը միանգամ ընդմիշտ չէր ջախջախուեր այդ ուժը:

Նոյնը կը մտածէին նաեւ թուրք բանակին մէջ ծառայող Արաբ սպանները, որոնք գոնէ մեզմէ չէին ծածկեր իրենց զգացումները:

Երկու պաղտատցի Արաբ սպաներ, որոնք միւֆէթթիչ Սէյիտ Համիտ պէյի փեսաներն էին, Հիթի մէջ բացէ ի բաց թշնամիին կողմը անցած էին:

\*\*\*

Այդ միջոցներուն փռապան Ներսէս Քիւրտեան օր մը եկաւ զիս գտաւ եւ ըսաւ.

— Երկու օրէ ի վեր Պոլսէն Հայ երիտասարդ մը բերած ու հոս բանտարկած են:

— Տեսա՞ր զինքը,— հարցուցի:

— Այո՛, բարեկամ ոստիկանի մը միջոցաւ զայն տեսայ: Գարեգին Փաստրմաճեանի եղբորորդին է եղեր եւ այդ պատճառաւ իսկ աքսորուեր է, երկար ատեն պահուրտած մնալէ ետքը: Կին մը զինքը մատներ է եղեր: Խարտեաչ երիտասարդ մըն է, շատ ազնիւ մէկը կ'երեւայ: Նիւթական խեղճ կացութեան մէջ, ո՛չ դրամ ունի, ո՛չ ուտելիք:

Ներսէս, ինչպէս միշտ նմանօրինակ պարագաներու մէջ, ամէն օր հաց, ծխախոտ եւ կերակուր կը տանէր խեղճ երիտասարդին, գաղտնի կերպով:

10-15 օրէ ի վեր բանտարկուած էր. երբոր օր մը ոստիկանը լուր կը բերէ Ներսէսին թէ երիտասարդը մեռած էր բանտին մէջ:

— Բայց դեռ երէկ տեսայ զինքը, բան մը չունէր,— դիտել կուտայ Ներսէս:

— Գիշերը մէկէնիմէկ մեռեր է:

Ներսէս կը կասկածի այդ անակնկալ մահուան վրայ, փորձերիկ քննութիւն մը կը բանայ գաղտնաբար եւ վերջապէս կ'իմանանք թէ խեղճ երիտասարդը պարզապէս բանտին մէջ սպանուած էր սէր քօմիսէրին հրամանովը:

Իր մահուանէն քանի մը օր առաջ Ներսէսին յանձնած էր իր յուշատետրը եւ նուֆուս թէսքերէսին, կարծես նախազգալով զխին գալիք փորձանքը:

Պոլսէն Տէր-Ջօր աքսորուած վերջին Հայը եղաւ ինք:

\*\*\*

Երուսաղէմի անկումը, որուն լուրը անթել հեռագիրը իսկոյն բերաւ մեզի, բաւական տազնապեցուց թուրքերը, միեւնոյն ատեն նոր յոյսեր ներշնչելով թէ՛ մեզի եւ թէ՛ Արաբներուն, որոնք անհամբեր կը սպասէին Անգլիացիներու գալուն, փրկուելու համար անտանելի թշուառութենէ մը:

Ուտեստը հետզհետէ կը նուազէր եւ սովը արդէն իսկ սկսած էր շրջակայ արաբ գիւղերու մէջ:

Տէր-Ջօրի փողոցները լեցուած էին կիսամերկ Արաբ գիւղացիներով, որոնք անցորդներէն հաց կը մուրային, կ'մախացած թեւերնին երկարելով:

Ամէն առտու կանուխ, երբ գերման մէնզիլը կ'երթայի, ճաբուս վրայ կը տեսնէի անօթութենէ մեռած կամ ցուրտէն սառած Արաբներ, որոնք քիչ յետոյ թաղապետութիւնը կը հաւաքէր տանիլ թաղելու համար:

Յունուարի մէջ այսպէս փողոցը մեռնողներուն թիւը օրական 25-30ի հասաւ:

Այս ծայրայեղ թշուառութիւնը պատճառ եղաւ որ Արաբներու քով, վրաններու մէջ գտնուող շատ մը Հայ կիներ ու աղջիկներ Տէր-Ջօր լեցուին, որովհետեւ Արաբները այլեւս ի վիճակի չէին զանոնք կերակրելու:

Օր մը այդ կիներէն մէկուն Հանդիպեցայ գերման մէնզիլին քովերը, պատի մը տակ նստած:

Երբք պիտի չհաւատայի որ Հայուհի մըն էր այն եթէ Միքայէլ որ նախապէս տեսնուած էր հետը, այդ բանը չհաստատէր:

Պատառատուն զգեստներով գրեթէ կիսամերկ, արեւէն այրած, կատարեալ Շավի Արաբուհի մը դարձած էր: Գրեթէ միս չէր մնացած վրան, այլ միայն կաշի ու ոսկոր եւ դժուարաւ կըրնար ոտքի վրայ մնալ:

Ոտքերը բուլիկ, ուռեցած էին որովհետեւ չորս օր անընդհատ քալած էր անապատին մէջ:

— Ո՛ր տեղացի ես,— հարցուցի:

— Պոլսեցի,— պատասխանեց նուազկոտ ձայնով մը:

— Պոլսոյ ո՞ր կողմէն ես:

— Բերա, Թաքսիմի կողմը կը նստէինք:

— Բայց ինչպէ՞ս եղաւ որ Պոլսէն քեզ աքսորեցին:

— Ես քրոջս հետ դերձակուհի էի,— պատմեց,— օդափոխութեան համար, ամիսի մը չափ, ուզեցի Մալկարա երթալ, մեծ հօրս քով որ քահանայ է: Հազիւ թէ երկու շաբաթէ ի վեր հոն էի, երբ յանկարծ ամէնքս մէկէն տեղահան ըրին: Հազար չարչարաններով մինչեւ Տէր-Ջօր հասանք: Ծամբան կորսնցուցի մեծ հայրս որ հիւանդութենէ մեռաւ: Իսկ հոս մնացած ազգականներս ջարդեցին ես հազիւ յաջողեցայ փախչիլ եւ Արաբ վրանարնակներու քով ապաստանիլ, որոնց հետ մնացի երկու տարի:

— Ի՞նչ կ'ընէիր անոնց քով,— հարցուցի:

– Ոչխար կ'արածէի, ջուր կը կրէի, արտ կը ջրէի: Բայց հիմա ա՛լ անոնք ալ ուտելիք հաց չունին եւ զիս իրենց քովէն ճամբեցին: Չորս օր առանձին անապատին մէջ քալելով, վերջապէս կրցայ մինչեւ այստեղ հասնիլ:

Հազիւ 18-19 տարեկան այդ պոլսեցի աղջիկը, որ սիրուն ըլլալ կը թուէր, իր այս վիճակին մէջ ահռելի էր:

Քանի մը դրուշ տուի իրեն եւ խոստացայ իրմով զբաղիլ:

Տարիներէ ի վեր միջոցը չէր գտած թղթակցելու իր քրոջ եւ Պոլիս գտնուող ուրիշ ազգականներուն հետ եւ առաջին անգամ Տէր-Ջօրէն գրեց նամակ մը որուն պատասխանը չեմ գիտեր ստացա՞ւ թէ ոչ:

Դիմեցի իմալաթհանէի իմ բարեկամներուս եւ այս կերպով ապահովեցինք իր կերակուրը, յետոյ իբրեւ գործաւորուհի մտաւ կիներու բաժնին մէջ:

\*\*\*

Առտու մը երբ գերմանական մէնզիլը եկայ, շատ իրարանցումի մէջ գտայ ամէնքն ալ:

Հասկցայ թէ կարեւոր դէպք մը պատահած էր անպատճառ:

Միքայէլէն տեղեկութիւն հարցուցի:

– Կարծեմ, – ըսաւ, – մեծ կռիւ մը տեղի ունեցած է Հիթլի կողմերը եւ Անգլիացիները յառաջացեր են, իսկ թուրքերը եւ Գերմանները նահանջեր են մինչեւ Անա:

Բարեկամիս տուած տեղեկութիւնները ճիշդ էին, նոյնը հաստատեց նաեւ պ. Գրիգոր Ադամեան գերման մէնզիլին թարգմանն ու մատակարարը որ գերմաներէն գիտնալով՝ աւելի մօտէն շփման մէջ էր զինուորներուն հետ եւ որոնցմէ միշտ տեղեկութիւն կը քաղէր:

Ադամեանները իզմիրցի երեք եղբայրներ էին Գրիգոր, Հայկ եւ Երուանդ:

Հայկ եւս մեր մէնզիլը կը գտնուէր, իբրեւ խոհարար: Իրենք իզմիրի մէջ վաճառականութեամբ կը զբաղին եղբր: Երուանդ իբրեւ դաշնակցական կը ձերբակալուի եւ որովհետեւ միւս եղբայրներն ալ միասին կը բնակէին, երեքը մէկտեղ կ'աքսորեն Տէր-Ջօր եւ հոնկէ ալ Սուար, Խուպուր գետին եզրը, արարական գիւղ մը, որուն մօտերը տեղի ունեցեր են ահռելի ջարդերուն մեծ մասը: Բարեբախտաբար երեք երիտասարդները երբ հոն կը հասնին, ջարդերը վերջ գտած էին: Այսուհանդերձ քանի մը ամիս անտանելի տառապանքներ կրելէ ետքը, կը յաջողին փախչիլ եւ վերադառնալ Տէր-Ջօր եւ հոն Գրիգոր եւ Հայկ մէնզիլը մտնելով կը յաջողին ազատիլ ոստիկանական հետապնդումներէ:

Պ. Գրիգոր Հիթլի վրայ իր տեղեկութիւնները հաղորդելէ ետքը, ըսաւ նաեւ որ Գերմանները Տէր-Ջօրը լքելու եւ Հալէպ դառնալու դիտաւորութիւն ունին այն պարագային ուր նոր կռիւ մը եւ նոր պարտութիւն մը տեղի ունենայ:

Այս լուրը բնականաբար կը վրդովէր ամէնքս ալ, որովհետեւ գիտէինք որ Գերմաններուն մեկնելու հետեւեալ օրն իսկ մեր անձը վտանգի մէջ էր:

Յաջորդ օրը պ. Էտվալ զիս քովը կանչեց եւ ըսաւ.

– Անգլիացիները կը յառաջանան, կրնայ ըլլալ որ յանկարծ ստիպուիք հեռանալ Տէր-Ջօրէն, ես քեզի ծածկաբար կ'ըսեմ սահկա որպէսզի գլխիդ ճարը նայիս:

– Արդեօք կարելի չէ՞ որ զիս ալ միասին տանիք:

– Դժբախտաբար ո՛չ, այդ մասին խորհեցայ, բայց տեսայ որ անկարելի էր: Թրքական իշխանութիւնը բացարձակապէս պիտի ընդդիմանայ եւ ես պիտի չկրնամ պնդել: Հետս պիտի փորձիմ տանիլ Աքրամը, բայց չեմ գիտեր թէ պիտի յաջողի՞մ:

Աքրամը 13-14 տարեկան դեղին տղայ մըն էր. բնիկ ատաբազարցի: Բուն անունը Անդրանիկ էր, բայց Գերմանները Աքրամ կ'անուանէին զայն: Այս տղան նախ գերման մէնզիլը իբրեւ խոհարարի օգնական կը ծառայէր Յովսէփ անուն ուրիշ խարբերոցի տղու մը հետ, յետոյ հարիւրապետ պ. Էտվալ զայն

իր տունը առաւ եւ շատ գոհ էր անոր հաւատարմութենէն ու ճարպիկութենէն:

— Քեզի խորհուրդ կուտամ որ այժմէն միջոց մը գտնես հուկէ փախչելու, — շարունակեց հրամանատարը:

— Ե՞րբ մեկնելու դիտաւորութիւն ունիք, — հարցուցի:

— Որոշ չեմ գիտեր, — պատասխանեց, — բայց ինչ որ ալ պատահի տակաւին 20-25 օր հոս ենք: Չըլլայ որ մէկու մը յայտնես այս ըսածներս, ո՛չ ալ քու փախուսող... մանաւանդ Կէրհարտին բան մի՛ ըսեր:

Խոստացայ իրեն գաղտնապահ ըլլալ եւ դուրս ելայ քովէն:

Նորէն գացի գտնել փռապան Ներսէս Քիւրտեանը որպէսզի փախչելու ծրագիր մը պատրաստէ:

— Երկու օրէն կարաւան մը կայ ճամբայ ելլելիք, — ըսաւ, — ուղտապանը բարեկամ եւ վստահելի անձ մըն է, եթէ կ'ուզես պատրաստուէ՛ ու քեզ ճամբայ հանեմ:

— Կարաւանը Պաղտա՞տ պիտի երթայ:

— Ո՛չ, ճիշտ անգլիական բանակին գտնուած սահմանը, անգամ մը որ հոն հասնիս, կրնաս դիւրաւ Անգլիացիներուն քով երթալ եւ ազատիլ:

Եւ տուաւ արաբական քաղաքի մը անուն, զոր մոռցած եմ այժմ, եւ ուր պիտի երթար կարաւանը:

Հետեւեալ օրն իսկ պ. Կէրհարտին հարցուցի թէ՛ այդ քաղաքը որո՞ւն իշխանութեան ներքեւ կը գտնուի:

— Ո՛չ թուրքին, ո՛չ Անգլիացիին իշխանութեան ներքեւ, — պատասխանեց, — չէզոք գօտիի մը տակ կը գտնուի եւ Արաբները կ'իշխեն անոր:

— Իսկ հոնկէ անգլիական տիրապետութեան սահմանը երթալու համա՞ր:

— Զիով մէկ օրէն կարելի է երթալ, իսկ ոտքով առնուազն երկու օր կը տեւէ:

Այս տեղեկութիւնները զիս յուսահատեցուցին եւ չուզեցի այդ կարաւանով ճամբայ ելլել:

Քանի մը օր ետքը լուր առինք թէ անգլիական յարձակումը կասած էր եւ առայժմ Անա վտանգի ներքեւ չէր գտնուեր:

Գերմանացիները կրկին յուսադրուեցան:

\* \* \*

Օր մը հրամանատար պ. Էտվալ զիս քովը կանչեց, հրաւիրեց որ մօտը աթոռի մը վրայ նստիմ եւ սիկառէթ մը հրամցուց: Յաճախ մտերմօրէն տեսնուած էր հետս, բայց ո՛չ այդ աստիճան:

Ինքն ալ սիկառէթ մը վառեց եւ ըսաւ.

— Ծանրակշիռ խնդրի մը վրայ կ'ուզեմ հետդ խօսիլ:

Այս յառաջաբանը բաւական զիս վրդովեց:

— Խնդիրը արդեօք իմ շո՞ւրջս կը դառնայ, — հարցուցի:

— Չէ՛, — ըսաւ, — հիմա պիտի բացատրեմ:

Լայն շունչ մը առի երբ իմացայ որ իմ մասիս նոր բան մը չի կար:

— Միայն թէ նախապէս ներում կը խնդրեմ ըսելիքներուս համար, — շարունակեց:

Այդ բառերը չափազանց զարմացուցին զիս եւ միեւնոյն ատեն հետաքրքրութիւնս աւելցուցին:

— Գիտես որ, — ըսաւ պ. Էտվալ, — վերջերս քսանի չափ զինուոր եկան հոս, որոնք քանի մը օր մնալէ ետքը մեկնեցան Անա:

— Այո՛, գիտեմ, — պատասխանեցի:

— Լուր առինք թէ այդ քսան զինուորներէն տասներկու հատը, որոնք այստեղ հանրատուններ յաճախած էին, ամէնքն ալ հիւանդութեամբ վարակուած են:

— Ցաւալի բան, — պատասխանեցի առանց գուշակելու թէ խնդիրը ո՞ւր պիտի յանգէր:

— Այո՛, շատ ցաւալի, — շարունակեց պ. Էտվալ, — եւ գիտես որ քիչ օրէն 250ի չափ ուրիշ զինուորներ պիտի գան, որոնք

ժամանակ մը պիտի մնան Տէր-Ջօր: Արդ, այդ մարդիկը չենք կրնար արգելել կիներու հետ յարաբերութիւն ունենալէ, այնպէս չէ՞ ...

– Բնականաբար, – պատասխանեցի:

– Միւս կողմէ, ինչպէս փորձով տեսանք, հանրատունները ո՛ր եւ է բժշկական լուրջ հսկողութեան չեն ենթարկուած: Ինչպէս կը տեսնաս, շատ ծանրակշիռ կացութեան մը առջեւ կը գտնուինք:

– Այո՛, իրաւունք ունիք, ծանրակշիռ կացութիւն:

– Այս մասին խորհրդակցութիւն մը կատարեցինք տոքթոր Մէտքէի եւ հարիւրապետ Շուլցի հետ եւ որոշեցինք մենք մեր անձնական միջոցներով հանրատուն մը բանալ, զայն դնելով ուղղակի տոքթոր Մէտքէի հսկողութեան ներքեւ եւ յատկացնել միմիայն Գերման զինուորներուն:

– Շատ լաւ որոշում մը տուած էք:

– Ուրիշ ճար չկայ մեր խեղճ զինուորներուն առողջութիւնը ապահովելու համար: Թէեւ զինուորականութեան հետ կապ չունի այս խնդիրը եւ իմ պաշտօնիս սահմաններէն բոլորովին դուրս է, այսուհանդերձ ստիպուած եմ ատով զբաղելու... պէտք է նախ յարմար տուն մը ճարեմ մեր մէնզիլին մօտերը, զայն կահաւորեմ, վերջապէս գործը կազմակերպեմ... Թէեւ հաճելի պաշտօն մը չէ, բայց ի՛նչ կ'ուզես որ ընեմ... ասոր համար քու աջակցութեանդ պէտք ունիմ:

– Ի՞նչ ծառայութիւն կ'սպասէք այս գործին մէջ ինչ, – հարցուցի քիչ մը զարմացած:

– Տունը գտնել, կահաւորել, կազմակերպել, ատոնք մենք կրնանք ընել, բայց կը մնայ ամէնէն էականը..

– Կիները ճարել, – ըսի խնդալով:

– Ճիշտ գուշակեցիր, եւ ասիկա մեզի համար շատ դժուար է, – շարունակեց պ. էտվալ: – Լեզու չենք գիտեր, տեղացիներու հետ մօտէն յարաբերութիւն չունինք, մարդ չենք ճանչնար... մինչդեռ դուն, եթէ բարեհաճիս այս ծառայութիւնը յանձն առ

նել, վստահ եմ որ պիտի կրնաս յաջողիլ եւ մեզի մեծ մտահոգութենէ մը փրկել:

Անմիջապէս յիշեցի որ կը ճանչնայի մէկը որուն գրեթէ արհեստն էր այդ տեսակ կիները հայթայթել, միեւնոյն ատեն խորհեցայ որ գեղեցիկ առիթ մըն էր այս քանի մը օր արձակուրդ առնելու, մանաւանդ թէ եօթը ամիսէ ի վեր եւ ո՛չ իսկ կիրակի մը հանգիստ ըրած էի: Ուստի պատասխանեցի.

– Պարոն հարիւրապետ, թէեւ դժուարին առաջարկութիւն մը կ'ընէք ինծի, այսուհանդերձ յանձն կ'առնեմ ձեզ գոհացնել:

– Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, – գոչեց պ. էտվալ:

– Միայն թէ տրամադրելի ժամանակ պէտք է ունենամ, լըր-ջօրէն հետազոտութիւններ կատարելու համար:

– Բնական է... քանի՞ օրուան պէտք ունիս:

– Առնուազն երեք օր պէտք է... ասկէ զատ թերեւս ստիպուիմ մանր մունր ծախքեր ընել:

– Որչա՞փ դրամ կ'ուզես:

– Կը յուսամ որ մէկ ոսկին կը բաւէ:

(Երբ դրամի խօսք կ'ընեմ, Տէր-Ջօրի մէջ, միշտ հնչուն ոսկեդրամ հասկնալու է եւ ո՛չ թէ թղթադրամ):

– Պ. Կէրհարտը ինծի կանչէ, – հրամայեց պ. էտվալ:

Վայրկեան մը ետքը ենթասպան ներս կը մտնէր:

– Երուանդին երեք օրուան արձակուրդ եւ մէկ ոսկի տուէք, – հրամայեց:

– Շատ աղէկ պարոն հարիւրապետ:

Միասին դուրս ելանք եւ պ. Կէրհարտ ոսկին տուաւ ինծի:

– Բայց ի՞նչ բանի համար է այս արձակուրդը, – հարցուց չափազանց հետաքրքրուած:

– Խիստ փափուկ եւ կարեւոր գործի մը համար է, – պատասխանեցի խորհրդաւոր դէմքով մը, – որուն մասին ո՛ր եւ է բան պիտի չկրնամ ըսել դժբախտաբար, որովհետեւ պ. հարիւրապետը հրամայեց որ բացարձակապէս զաղտնի պահեմ:

– Լա՛ւ, – ըսաւ պ. Կէրհարտ, – քանի որ այդպէս է, չեմ ուզեր գիտնալ:

Եւ զինուորական բարեւ մը տալով մեկնեցայ քովէն:  
Անմիջապէս գացի գտնել այն մարդը, որուն վրայ յոյս  
դրած էի եւ խնդիրը բացատրեցի իրեն:

- Քանի՞ կին պէտք է,- հարցուց:
- Չեմ գիտեր որոշապէս, թերեւս 4-5 հատ:
- Վաղը, եթէ ուզես, պատրաստ է:
- Շատ աղէկ ուրեմն,- պատասխանեցի:

Այսպէս ուրեմն կէս ժամուան մէջ կարգադրած էի: Փութա-  
ցի պէլէտիէի պարտէզին սրճարանը որուն վարձակալն էր Կա-  
րապետ աղա Մարձիկեան եւ մինչեւ իրիկուն նարտ խաղալով  
եւ օդի խմելով ժամանակ անցուցի:

- Երեք օր ետքը վերադարձայ մէնզիլ:
- Ի՞նչ լուր,- հարցուց պ. էտվալ զիս տեսնելուն պէս:
- Ամէն բան կարգին է,- պատասխանեցի,- կիները պատ-  
րաստ են:

- Իրա՞ն կ'ըսես,- գոչեց ուրախ շեշտով մը:  
- Այո՛, պ. հարիւրապետ, թէեւ բաւական դժուարութիւն  
կրեցի, բայց վերջապէս յաջողեցայ:

- Շատ գոհ եմ քենէ,- պատասխանեց:

Բայց գործը աւելի առաջ չի մղեցինք: Յարմար տուն մը գրտ-  
նելու համար օրերով թափառեցաւ հարիւրապետը, յետոյ տոթ-  
թոր Մէտքէ յանկարծ Անա երթալու ստիպուեցաւ եւ հարկ ե-  
ղաւ սպասել իր վերադարձին, իսկ անկէ ետքն ալ արդէն գեր-  
ման մէնզիլը ստիպուեցաւ կծիկը դնել Տէր-Չօրէն:

\*\*\*

Տոթթոր Մէտքէի հաստատած հիւանդանոցը շատ մեծ էր  
մեր մէնզիլէն եւ յաճախ կ'երթայի հոն ո՛ր եւ է գործով մը:

Տոթթորը, օրուան որոշեալ ժամերուն մէջ, հիւանդները կ'ըն-  
դունէր զորս ձրիաբար կը դարմանէր եւ նոյնիսկ դեղերն ալ  
ինք կուտար:

Եթէ Հայ կիները ըլլային հիւանդները, ինչ որ շատ անգամ կը  
պատահէր, ես կը կատարէի թարգմանի պաշտօնը, եթէ պա-  
տահամար հոն գտնուէի:

Յր մը, այսպէս, տոթթորը զիս կանչեց թարգմանութեան հա-  
մար:

Փոքրիկ աղջիկ մը եւ կին մը նստած էին, աղջկան գլուխը  
ամբողջովին ծածկուած էր քողով մը:

- Հիւանդը,- բացատրեց կինը,- այս աղջիկն է:
- Ի՞նչ ունի,- հարցուցի:
- Աչքերը չտեսներ:

Տոթթորին պատուէրին վրայ կիներ աղջկան գլուխը բացաւ:  
Հագիւ 13-14 տարեկան հրաշագեղ աղջիկն մըն էր, խարտեաչ  
մետաքսեայ մագերով, նուրբ դիմագիծերով, սպիտակ փափուկ  
մորթով:

- Ո՞ւր տեղացի է,- հարցուցի:
- Իգմիթցի,- պատասխանեց կինը:

Յայտնի կ'երեւար, որ հարուստի մը աղջիկ էր խեղճը, շատ  
մաքուր կը խօսէր հայերէնը եւ նոյնիսկ քիչ մըն ալ Փրանսերէն  
գիտէր:

Տոթթորը ուշադրութեամբ քննեց աչքերը:

- Որչա՞փ ժամանակ է, որ աչքերը չեն տեսնար,- հարցուց:
- Երեք ամիս է ի վեր:
- Եւ դեռ նո՞ր բժիշկի կը բերէք:

- Ի՞նչ ընենք,- բացատրեց կինը,- էրիկը հոս եղած ատեն  
անկարելի էր, որ բերէինք, որովհետեւ բացարձակապէս արգի-  
լած էր. հիմա քանի մը օր է ի վեր գեղ գացած է, ատկէ օգուտ  
բաղելով բերի:

Կնոջ խօսքերը թարգմանեցի տոթթորին:

- Ի՞նչ,- գոչեց՝ կեցած տեղէն վեր ցատքելով,- այս աղջիկը  
ամուսնացած է...

- Այո՛, քառասուն տարեկան արարի մը հետ, որ բարկու-  
թեան վայրկեանի մը մէջ խեղճ աղջկան գլխին բռունցքի այն

պիսի ուժգին հարուած մը կը գարնէ որ մարած գետին կը փոռուի... շաբաթէ մը ետքը աչքերը կը սկսին չտեսնել:

Բոլոր այս խօսակցութեան միջոցին փոքրիկ աղջիկը կը հեծածէր դառնագին:

Տոբթոր Մէտքէ այս պատմութենէն յուզուած, գայթակղած.

– Այս ի՛նչ վայրենութիւն, ի՛նչ անլուր հրէշութիւն է,– կը գոչէր:

Երբ հանդարտեցաւ, կրկին քննեց աչքերը:

– Եթէ անմիջապէս գայիք՝ կրնայի աղէկցնել,– ըսաւ,– բայց հիմա ա՛լ շատ ուշ է:

Այսուհանդերձ դեղ մը տուաւ, քանի մը յուսատու խօսքեր ուղղեց աղջկան եւ ճամբու դրաւ:

Երբ դուրս ելան, ըսաւ ինծի.

– Խեղճ աղջիկ, ա՛լ կոյր մնալու դատապարտուած է:

Հէ՛գ իզմիթցի մատաղ աղջկան ցաւատանջ պատկերը օրերով չը հեռացաւ աչքերէս:

\*\*\*

Շատ դժուար է գիտնալ թէ Տէր-Չօրի Արարներուն եւ թուրքերուն քով որչա՞փ Հայ կիներ, աղջիկներ եւ տղաք կը գտնուէին: Ամէնէն լաւատեղեակները անոնց թիւը մինչեւ երկու հազար կը հաշուէին, ուրիշներ աւելի մեծ թիւ մը ցոյց կուտային:

Արարական տուններ կային ուր 3-4 Հայ կիներ կը գտնուէին:

Պէլէտիէի նախագահը որ քաղքին էջրաֆներէն էր եւ շատ հարուստ, ունէր Հայ կին մը որ կ'երեւայ թէ իր հարէմին մէջ նախընտրելին էր, բաց աստի իր տան մէջ կային մէկ քանի ուրիշ Հայուհիներ, իբրեւ սպասուհի:

Փօսթայի տնօրէնին համար կ'ըսուէր թէ 30է աւելի Հայուհիներ առած եւ յետոյ լքած էր:

Ամէն ոստիկանի, ամէն զինուորականի, ամէն պաշտօնեայի քով առնուազն մէյմէկ Հայուհի կը գտնուէր:

Շատ անգամ փողոցէ մը անցած ատենս արաբ տան մը վանդակին ետեւէն կանացի ձայներ հայերէն կը խօսէին:

Երբեմն կը պատահէր որ զիս կանչէին եւ սկսէին հետս հայերէն խօսիլ:

Այդ կիները, մեծամասնութեամբ, Պրուսայի եւ Խարբերդի կողմերէն էին, թէեւ իրենց մէջ կը գտնուէին նաեւ ատաբազարցիներ, իզմիթցիներ, պարտիզակցիներ, այնթապցիներ եւ այլն:

Պէտք է խոստովանիլ սակայն որ այդ կիներէն ոմանք գոհ էին իրենց վիճակէն եւ երբեք փափաք չունէին վերադառնալ իրենց տեղը ուր թերեւս իրենց ազգականներէն ո՛չ մէկը պիտի գտնէին:

Իսկ փոքրիկ աղջիկները բոլորովին արաբացած եւ կորսընցուցած էին իրենց մայրենի լեզուն:

Էլ Պուսէրա, գեղին մօտ, վրանի մը տակ, այսպէս կը գտնուէր 8-9 տարեկան Հայ աղջիկ մը:

Իր դիմազիծներէն գուշակեցինք թէ Արաբ մը չէր, այլ Հայ եւ հարցուփորձեցինք վրանին տէրը, որ մեզի ծանօթ մըն էր եւ Ապտուլլահ կը կոչուէր:

– Այո՛,– պատասխանեց,– Հայ է եւ երկու տարիէ ի վեր մեր քովը կը գտնուի:

Կանչեցինք քովերնիս եւ սկսանք զինքը հարցուփորձել:

Երբ արարներէն կը խօսէինք կը պատասխանէր, իսկ երբ հայերէն խօսէինք լուռ կը մնար:

Իր ազգութիւնը հարցուցինք:

– Չեմ գիտեր,– պատասխանեց:

Ի վերջոյ, Ապտուլլահի միջամտութեամբ խոստովանեցաւ Հայ ըլլալը եւ պատմեց թէ Հայրը սպաննած ու մայրը Եփրատ գետը նետած էին:

Հայերէնը գրեթէ մոռցած էր եւ շատ դժուարաւ կը խօսէր:

Միջագետքի մէջ իրեն վիճակակից թերեւս տասը հազար աղջիկներ ու տղաք կան այսօր:

Աշխատանոցներու կիներու բաժնին մէջ վաթսունէն աւելի



կային այդ մանր աղջիկներէն ու տղոցմէ, որոնք թէեւ մեծ գործ մը չէին տեսնար, բայց հաց եւ կերակուր կ'ստանային:

Որեւէ տղայ մը որ կը յաջողէր մօտենալ Սէիտ Համիտ պէյին, եւ խնդրել որ աշխատանոց դրուի, երբեք չէր մերժուեր, այնպէս որ աշխատանոցներու տնօրէնը, հարիւրապետ Իհսան էֆէնտի, որ թէեւ գէշ մէկը չէր, ստիպուեցաւ բողոքել միւլֆէթ-թիչին եւ խնդրել որ ամէն իրեն ներկայացողը աշխատանոց չդրկէ, քանզի ո՛չ պատասպարելու տեղ կար, ո՛չ ալ ամէնքը կըտացնելու չափ հաց ու կերակուր:

Հակառակ այդ դիտողութեան սակայն Սէիտ Համիտ պէյ կը շարունակէր մանր տղաքը աշխատանոց դնել:

Կը պատմուէր թէ այդ Արաբ զինուորականը որ բարեացակամութիւն ցոյց կուտար Հայերուն, պատերազմի սկիզբները, Պիթլիսի կողմը գտնուած ատեն, շատ հալածած էր Հայերը եւ նկատուած էր իբրեւ իթթիհատի մէկ կոյր գործիքը:

Չեմ գիտեր թէ ո՛ր աստիճան ճշմարիտ է այս ամբաստանութիւնը: Իրողութիւնը այն է որ Տէր-Չօրի մէջ Հայերը երբեք դժգոհութեան պատճառ մը չունեցան իրմէ. ընդհակառակը միշտ անոր պաշտպանութիւնը վայելիցին:

\* \* \*

Նօքթա քօմանտանին ալ, թուրք հազարապետ մը որ վերջերս եկած էր Կովկասի ճակտէն եւ Արաբ հարիւրապետ Ահմէտ Մուխթարի յաջորդած՝ հայասէր մըն էր կամ գոնէ ո՛չ հայատեաց մը: Ամէն պարագային՝ Հայերը կը նախընտրէր Արաբներէն, որոնց ազտոտութիւնը միշտ երեսներուն կուտար:

Արդարեւ աշխարհի վրայ չկայ կարծեմ ցեղ մը որ այնքան անմաքուր ըլլայ, որքան Արաբը: Առհասարակ ո՛րիւր կը վխտայ ամէնուն վրայ, նոյնիսկ քիչ շատ բարեկեցիկ ընտանիքներու մէջ: Մաքրութեան մասին տարրական գաղափար մը անգամ չունին:

Անգամ մը գտնուեցայ արաբական գիւղ մը ուր միակ հոր մը կար: Որպէսզի հորին ջուրը չսպառի՝ ստիպուած էին խնայողութեամբ գործածել:

Կիները իրենց աղտոտ ամանները առած՝ կուգային հորին մօտ գանոնք կը լուային, յետոյ աղտոտ ջուրը կրկին հորը կը թափէին: Էրիկ մարդիկ նոյնպէս իրենց ապտէսթը կ'առնէին, կը լուացուէին ամանի մը մէջ եւ նոյն ջուրը կը լեցնէին հորին մէջ:

Եւ ամբողջ գիւղը այդ հորին ջուրէն կը խմէր...:

Համայի մէջ աւելին տեսայ: Հրապարակի մը մէջտեղը մեծակակ աւազան մը կար: Այդ աւազանին մէջ շրջակայ սրճարաններու տէրերը կուգային իրենց նառկիլիէները եւ զանազան անօթները լուալու, խոհարարներ իրենց ոտները կը լուային:

Տղաք, մերկանալով, այդ աւազանին մէջ լողանք կ'առնէին եւ երբեմն կը միզէին, կովեր, ձիեր, եզներ ու աւանակներ այդ աւազանէն ջուր կը խմէին, եւ անոնց քով ու անոնց պէս, գլուխին ջուրին ծռած, այրեր, կիներ ու տղաք իրենք ալ կութ կութ կը խմէին աւազանին ջուրէն:

Աղտոտութեան այս մէկ քանի օրինակները կարծեմ բաւ են արդարացնելու համար թուրք հազարապետին խորշանքը Արաբներու հանդէպ:

Անգամ մը այրերու աշխատանոցին մէջ, ուր Հայերուն հետ Արաբներ ալ կ'աշխատէին, երկաթագործներու բաժնէն գողութիւն մը պատահած էր:

Արաբները Հայերը կ'ամբաստանէին իբրեւ հեղինակ պատահած գողութեան:

— Չէ՛, — ըսած էր հազարապետը, — Հայերը գող չեն ըլլար, անպատճառ Արաբներն են գողութիւն ընողները:

Ի վերջոյ, կ'որոշուի բոլոր գործաւորներու տունները խուզարկել եւ արդարեւ Արաբի մը տունէն կը գտնուին գողօնները:

— Տեսա՛ք, — կը գոչէ հազարապետը յաղթականօրէն, — ես չըսի՞ ձեզի թէ Հայերը գող չեն ըլլար:

1918 փետրուարի վերջերը պ. Էտվալ ըսաւ ինծի.

– Մտերմաբար քեզի իմաց կուտամ որ երեք շաբաթէն պիտի մեկնինք Տէր-Ջօրէն եւ պիտի վերադառնանք Հալէպ: Այս անգամ տրուած որոշումը վերջնական է եւ այս մասին պաշտօնական հրահանգ եկած է մեզի, ուստի քու մասիդ ի՛նչ կարգադրութիւն որ պիտի ընես ըրէ՛:

Ընելիքս շատ պարզ էր, պիտի խոյս տայի: Պաղտատ փախչելու ծրագիրս ա՛լ բոլորովին ջուրը ինկած էր, որովհետեւ պատերազմը սաստկանալուն հետեւանքով կարաւաններու երթեւեկը գրեթէ դադրած էր:

Հալէպ երթալէ ուրիշ ճար չի կար: Կարապետը, որ Միտիւնէն փախչելով Տէր-Ջօր եկած էր ուրիշ աքսորականի մը պ. Սարգիս Ճիէրճեանի հետ, Արաբ ուղտապանի մը միջոցաւ փախած էին Հալէպ եւ իրենց ողջամբ հոն հասնելուն լուրը առած էինք. նոյն ուղտապանը Տէր-Ջօր կը գտնուէր այդ միջոցին եւ տրամադիր էր մեզ ալ փոխադրելու: Մեզ կ'ըսեմ, որովհետեւ ինծի հետ ուրիշներ ալ կային որոնք խոյս պիտի տային Տէր-Ջօրէն: Ասոնք էին նախ մօրեղբայրս, Քերովբէ, որ քանի մը ամիսէ ի վեր արդէն յաջողած էր էլ Պուսերայէն Տէր Ջօր փոխադրուիլ միւթէսարըֆին հրամանով որ զայն տիպար շերամատան մը անուանական տեսուչ կարգած էր, յետոյ կար Միքայէլ Մորճիկեանը եւ մէկ քանի կիներ:

Բանակցութեան մտանք ուղտապանին հետ եւ համաձայնեցանք որ ուղտ հեծնողներէն չորսական եւ հետիոտն գացողներէն երկերկու դեղին ոսկի առնելով մեզ փոխադրէ մինչեւ Լալէպ:

Ուղտապանին հետ համաձայնելէ ետքը, դեռ դժուարին խը՞ դիր մը կը մնար լուծելիք:

Ի՞նչպէս պիտի հեռանայի գերման մէնզիլէն առանց կարկածներ յարուցանելու: Պ. Էտվալ կ'ուզէր որ իմ փախուստ

ընաւ չգիտցուի նախապէս, մանաւանդ պ. Կէրհարտ տեղեկութիւն չունենայ: Հրամանատարը շատ կը զգուշանար իր ստորադասէն որովհետեւ այս վերջինը թունդ Գերման մը, շատ չէր սիրեր իր մեծաւորը որ շուէտացի մըն էր եւ տեսակ մը խուլ հակառակութիւն կար երկուքին միջեւ, նոյնիսկ կասկած կար թէ Կէրհարտ տեսակ մը լրտես էր պ. Էտվալի քով գրուած:

Ամէնէն կարեւորն էր վէսիքայի խնդիրը: Գերմանները ինծի տուած էին վէսիքա մը, զոր պարտաւոր էի իրենց վերադարձնել ծառայութիւնս ձգած ատեն: Եթէ քովս պահելով անհետանայի, իրաւունք ունէին ամէն կողմ հեռագրել եւ զիս ձերբակալել տալ, եւ ապահով էի որ իրենց այդ իրաւունքը պիտի գործադրէին, ինչպէս ըրին ուրիշ մէկ քանիներու համար: Եթէ մեկնելէս առաջ յանձնէի իրենց, իմ փախուստս իմացուցած պիտի ըլլայի:

Պ. Էտվալի հետ համախորհուրդ ուրիշ միջոցի մը պիտի դիմէի: Կեղծ հիւանդ պիտի ձեւանայի, զինուորական բժիշկէն թուղթ մը պիտի առնէի թէ տասը օրուան հանգստի պէտք ունիմ: Պ. Էտվալ պիտի շնորհէր ինծի այդ հանգիստը: Այս արտօնութիւնը ձեռք անցնելուս պէս ճամբայ պիտի ելլէի: Գերման մէնզիլը տասը օր զիս պիտի չհետապնդէր, քանի որ իւրեւ հիւանդ տասը օր հանգիստի իրաւունք ունէի: Տասներորդ օրը վէսիքաս բարեկամի մը միջոցաւ պիտի վերադարձնէի իրենց, նամակով մը որով պիտի ծանուցանէի թէ Ապու Քէմալ մեկնած եմ անակնկալ կերպով:

Այսպէսով թէ՛ վէսիքայի խնդիրը պիտի կարգադրուէր եւ թէ՛ իմ հետքս պիտի կորսնցնէին:

Հիւանդութեան մասին վկայագիր մը առնել շատ դիւրին էր ինծի համար, որովհետեւ նոյն միջոցին զինուորական բժիշկը որ պաշտօն ունէր զինուորները քննելու հարիւրապետ Արթին Արապեանն էր որուն հետ շատ մտերմօրէն կը տեսնուէի:

Բացատրեցի իրեն խնդիրը եւ իսկոյն յօժարակամութիւն յայտնեց ուզած վկայագիրս տալու:

Նոյն միջոցին տոբթոր Մէտքէ բացակայ էր Տէր-Չօրէն, այնպէս որ վախ չունէի թէ պ. Կէրհարտ կրնար զիս իրենց բժիշկին զրկել, ստուգելու համար թէ իրաւցնէ հիւանդ էի թէ ո՛չ:

Մարտ 9ին, շաբաթ օրը, գացի բարեկամիս, տոբթոր Արթին Արապեանի սենեակը, որ իսկոյն ինծի տուաւ Ֆրանսերէն գրուած վկայագիր մը ուր երկու տեսակ հիւանդութիւններու ախտանիշները վրաս գտած ըլլալը հաստատելով, տասը օրուան հանգիստի հրաման կուտար, պայմանաւ որ կրկին բժշկական քննութեան մը ենթարկուիմ, պայմանաժամը աւարտելէ ետքը:

Այդ թուղթը իսկոյն ներկայացուցի պ. Էտվալի որ հրաման ըրաւ պ. Կէրհարտին տասը օրուան արտօնութիւն տալու ինծի:

Այս վերջինը թէեւ ակամայ, ստիպուեցաւ հնազանդիլ իր մեծաւորին: Հրածեշտ առի իրմէ ու մեկնեցայ գերման մէնզիլէն ուր այլեւս պիտի չվերադառնայի:

Գլխաւոր դժուարութիւններէն մէկը կարգադրուած էր:

Անմիջապէս տասը օր ետքի թուականով նամակ մը գրեցի Տէր-Չօրի գերման մէնզիլի հրամանատարին ուղղուած եւ Ապու Քէմալէն թուագրուած, որու մէջ կ'ըսէի թէ ստիպուած էի հեռանալ Տէր-Չօրէն ու երթալ Ապու Քէմալ, ուրկէ ճամբաս պիտի շարունակէի դէպի Անա եւ այս առթիւ իրենց կը վերադարձնէի վէսիքաս: Այս նամակս կարգացողը պիտի ենթադրէր թէ խոյս տուած եմ երթալ Անգլիացիներուն միանալու համար, մինչդեռ իրողութիւնը այն էր որ բոլորովին տարբեր ուղղութեամբ պիտի երթայի:

Վէսիքաս ու նամակը պահարանի մը մէջ փակելէ ետքը յանձնեցի Հայկ Կօշկարեանին խնդրելով որ տասը օր ետքը տղու մը ձեռքով զայն հասցնէ գերման մէնզիլը:

Բարեկամս խոստացաւ կատարել խնդիրքս:

Կիրակի օր մեր ճամբու պատրաստութիւնները տեսանք: Քսան օր պիտի տեւէր ուղեւորութիւնը եւ մենք ստիպուած էինք ինը հոգիի համար քսան օրուան պաշար հետերնիս առնել, որովհետեւ ճամբան պիտի չկրնայինք բան մը գտնել քո-

նի որ ստիպուած էինք ամայի ուղիներէ երթալ, օձիքնիս ձեռք չտալու համար:

Ցերեկին վերջին անգամ գացի պ. Էտվալի բնակարանը թէ՛ մնաս բարով ըսելու եւ թէ՛ իրեն յանձնելու համար քսան ոսկի (մօրեղբօրս դրամը) որպէսզի Հալէպի մէջ մեզի վերադարձնէ: Կը վախնայինք որ ճամբան կողոպտուինք եւ կուզէինք դրամին մէկ մասը գոնէ ապահովել:

Թէ՛ ինք եւ թէ՛ կիներ շատ սիրալիբ ընդունելութիւն մը ըրին ինծի:

– Քեզի համար պիտի աղօթեմ որ անվտանգ հասնիս մինչեւ Հալէպ, – ըսաւ տիկինը իրենց քովէն մեկնած միջոցիս:

## ՏԵՐ-ՉՕՐԵՆ ՆԱԼԵՊ

Ամէնքս ալ արարական տարագով պիտի ծպտուէինք, թէ՛ արբերը եւ թէ՛ կինները: Իմ զինուորական քափօթս փոխանակեցի Յարութիւն Դանիէլեանի արարական մաշլախին հետ եւ զըլ-խուս ալ էկիլ մը անցուցի, իսկ զինուորի զգեստս պահեցի, որովհետեւ ճամբան կրնար օգտակար ըլլալ ինծի:

Չմոռնամ ըսելու որ բոլոր ճամբու ծախքերս հոգաց փռական Ներսէս Քիւրտեան, վճարելով 12 դեղին ոսկի:

Միքայէլ Մորճիկեան, իբրեւ ճամբու պաշտպան ու պահպան, Ապտուլահ էլ Սէլամի անուն Արաբ մը պիտի առնէր, զոր զինած էր ատրճանակով մը: Մեր ամբողջ խումբին ունեցած զէնքն էր այդ, որովհետեւ նոյնիսկ ծերունի ուղտապանը իբրահիմ Ապու Սալէհ, խոշոր ցուպէ մը գատ ուրիշ բան չունէր:

Որոշուած էր որ կիրակի գիշեր պիտի հաւաքուէինք մեղտանող ուղտապանի տունը եւ հետեւեալ առտու արշալոյսէն առաջ ճամբայ պիտի ելլէինք:

Այսպէս ուրեմն 1918ի մարտ 10ի կիրակի գիշերը, մօրեղբայրս Քերովբէ Ասլանեան, յետոյ Համայէն մեզի հետ աքսորուած Արմենակ, ձէպրա եւ իրենց քոյրը Ոսկի, ինչպէս նաեւ պարտիզակցի մանկամարդ կին մը Տիրուհի Ճզլեան եւ չօրպածի Միսաքի եղբոր կինը Մարիամ ու իր փոքրիկ աղջիկը գացին ուղտապանին տունը:

Ես Հայկ Կօչկարեանի հետ նախ մնաս բարովի գացի Ներսէս Քիւրտեանի ու փռական Կարապետի, յետոյ եկայ միացիլ իրենց: Քիչ ետքը եկաւ նաեւ Միքայէլ Մորճիկեան իր եղբոր Արամին հետ: Այս վերջինը պիտի մնար Տէր-Չօր: Հոն էր նաեւ մեր պահապանը Ապտուլահ էլ Սէլամի:

Ամէնքս հաւաքուած ենք գետնայարկի սենեակ մը եւ ցած ձայնով կը խօսակցէինք: Մէջերնէս մէկ քանինները մտատանջ են: Յաջորդ առտուան արկածախնդրական եւ վտանգաւոր ճամբորդութեան անստուգութիւնները խռոված են զիրենք:

Հազիւ թէ ուշ առեմ քունս տարած էր, երբ ձայն կուտան:

– Ելի՛ր պիտի մեկնինք:

Տակաւին մութ է ամէն կողմ: Երկերկու հոգինոց խումբեր կը կազմենք եւ իրարմէ 80-100 քայլ հեռաւորութեամբ կը քայլենք չօրպածի Միսաքի առաջնորդութեամբ դէպի անապատի կողմը: Նախապէս որոշուած փոս մը որուն մէջ կը պահուէինք մինչեւ որ ուղտապան իպրահիմ, իր որդին Սալէհ եւ աշակերտը Ապտուլահ կը հասնին իրենց ուղտերով եւ մէկ հատիկ էշով:

Կինները կը տեղաւորենք ուղտերուն վրայ, մօրեղբայրս եւ Միքայէլը եւս կը հեծնան, իսկ ես կը նախընտրեմ էշուն վրայ նստիլ: Արմենակ եւ ձէպրա ոտքով պիտի հետեւին մեզի:

Արշալոյսը դեռ նոր կը ծագէր երբ փոքրիկ կարաւանը ճամբայ կ'ելլէ: Միշտ սրտազոզի մէջ ենք թէ մեր փախուստը թերեւս իմացուած է եւ ժանտարմանները մեզի պիտի հետապնդեն: Եթէ բռնուինք, ազատում չի կայ սէր քօմիսէր Մուսթաֆայի ձեռքէն:

Լուռ ու մունջ կ'երթան ընկերներս իրենց ուղտերուն վրայ ճօճելով, ես համեստ էշուն դաւակը անընդհատ սիկառէթ կը ծխեմ:

Հազիւ թէ երկուքուկէս ժամ ճամբայ ըրած էինք, երբ յանկարծ երեք ձիաւոր հրացանակիր ժանտարմաներ կ'երեւան մեր դէմը, որոնք ապահովաբար դէպի Տէր-Չօր կ'երթան: Սարսափը կը տիրէ ամէնուս վրայ: Ժանտարմանները կը մօտենան մեզի, հրաման կ'ընեն որ կենանք, կը հարցնեն թէ ո՞վ եք եւ ո՞ւր կ'երթանք եւ առանց պատասխանի սպասելու ուղտին վրայէն վար կը քաշեն Միքայէլն ու Ոսկին որուն եաշմախը \* կը հանեն երեսէն ու կը սկսին պոռալ:

\* Քօղը:

— Քուլլու էրմէն, Ֆիրար... (ամէնքն ալ փախչող Հայեր են):  
Յետոյ, զիս կը նշմարեն, ուշադիր կը նային եւ մին զիս կը  
ճանչնայ.

— Դուսն,— կ'ըսէ,— գերման մէնզիլին չափուշը չե՞ս:

— Այո՛,— կը պատասխանեմ:

— Ի՞նչ գործ ունիս այստեղ:

— Դիպնէ կ'երթամ ուր Գերման գինուորներ կը գտնուին:

— Վէսիքա ունի՞ս:

— Ո՛չ, չունիմ:

— Ուրեմն դուս ալ ետ պիտի դառնաս, միւսներուն հետ:

Այդ միջոցին Միքայէլին մարդը Ապտուլլահ էլ Սէլամի,  
ժանտարմաները մէկ կողմ կը տանի, հետերնին բանակցու-  
թեան կը մտնէ եւ վերջապէս իրենց երեք դեղին ոսկի ցնծալով  
օձիքնիս կ'ազատենք:

Ժանտարմաները մենէ բաժնուելէ առաջ կը յայտարարեն  
մեզ թէ այսպէս անապատին մէջ իսկ օր ցերեկով ճամբորդելը  
չատ վտանգաւոր է եւ խորհուրդ կուտան ցերեկները որեւէ  
տեղ մը ծածկուիլ եւ գիշերները ճամբորդել:

Այս առաջին ձախողութենէն քիչ մը վհատած՝ կէս ժամ եւս  
կը շարունակենք մեր ճամբան եւ կանգ կ'առնենք յարմար վայր  
մը ուր ուղտապանը կը կանգնէ իր վրանը որուն տակ հազիւ  
կրնանք պատսպարուիլ:

Օդը ամպամած է եւ իրիկուան դէմ կ'սկսի անձրեւը որ կը  
շարունակուի ամբողջ գիշերը, թրջելով մեզ ու մեր գոյքերը:

Կէս գիշերին ճամբայ կ'ելլենք: Մութ խաւար մը կը պատէ  
շուրջերնիս ու չենք գիտեր թէ ո՛ւր կ'երթանք: Քիչ յետոյ կ'իջ-  
նենք խճուղին, որովհետեւ ուրիշ կերպով կարելի չէ ճամբան  
շարունակել: Անձրեւը կու գայ անընդհատ եւ ցուրտ հով մը կը  
փչէ:

Թանձր խաւարը ա՛լ աւելի կը ճնշէ ամէնուս վրան: Հեռուէն  
գայլերու փայլուն աչքերը կ'երեւան որոնք մութին մէջ կ'անհե-  
տանան, իսկ ջագալներու ձայնը անընդհատ կը լսուի մեր շուր-  
ջը:

Ուղտերը, նիհար, անօթի, բեռամբարձ քալելու կարողութիւն  
չունին: Ատեն ատեն իրենցմէ մէկը ցեխին մէջ կը գլտորի, հարկ  
կ'ըլլայ բեռները վրայէն քակել, ոտքի կեցնել, յետոյ նստեցնել  
ծունկերուն վրայ, բեռնաւորել ու ոտք հանել: Սրտերնիս կը դո-  
ղայ որ ուղտերուն սաքը կը կտորի ու մէջտեղ կը մնանք, կամ  
կը ստիպուինք բեռներնիս, որոնք գլխաւորաբար ուտեստեղէն  
են, ճամբան թողուլ: Վերջապէս կը լուսնայ ու մենք կը շարու-  
նակենք քալել: Ուղտապան Իպրահիմ Ապու Սալէհ առաջ  
կ'անցնի յարմար թաքստոց մը գտնելու համար: Երկու ժամուան  
տաղտկալի թափառումներէ ետքը, վերջապէս կ'ուղղուինք նեղ  
արահետ մը ուր առաջին անգամ ըլլալով Միքայէլ մեզ կը  
հրամցնէ մէյմէկ գաւաթ օղի մեր ուժասպառ անդամները կազ-  
դուելու համար: Հո՛ն կը կանգնենք վրանը եւ քիչ ետք ամէն  
մարդ յոգնած դադրած կ'իյնայ գետին ու կը քնանայ:

Իրիկուն կ'ըլլայ: Քանի մը թափառիկ պէտէվիներ կուգան  
ու կը նստին մեր խարոյկին շուրջ, հաց կուտանք, սուրճ կը  
հրամցնենք իրենց:

Ապտուլլահ էլ Սէլամի կը խօսի հետերնին, կ'ըսէ թէ իսլամ  
մուհաճիրներ ենք: Միքայէլը նէճիպ կ'անուանէ եւ զիս կը  
ներկայացնէ իբրեւ պաշ չափուշ ու մարդիկը կը հաւատան չէ՞  
մի որ զինուորի զգեստ կը կրեմ:

Մութը կը պատէ, անձրեւը կը վերսկսի, պէտէվիները կը  
մեկնին: Մենք ալ բեռներնիս կը ժողվենք ու կէս գիշերին կ'ել-  
լենք ճամբայ: Կը քալենք ու կը քալենք մինչեւ առտու եւ կանգ  
կ'առնենք Շամթիա գաւառակին հարաւ արեւմտեան կողմը:  
Անձրեւը միշտ կը թափի ու մենք վրանին ներքեւ կ'ծկուած  
դուրս չենք կրնար ելլել, ո՛չ ալ կերակուր եփել:

Նոյն գիշերը կրկին ճամբայ կ'ելլենք եւ կը հասնինք Թիպ-  
նէի հարաւ արեւմտեան կողմը բլուրներու մէջ տեղ մը:

Ցերեկին դիմացէն քանի մը պէտէվիներ կը լրտեսեն մեզ: Ի  
զո՛ւր Ապտուլլահ էլ Սէլամի զիրենք սուրճի կը հրաւիրէ: Չեն  
հաճիր գալ:

— Գէշ նշան,— կ'ըսէ Ապտուլլահ մտահոգ դէմքով մը:  
Հովիւ մը իր ոչխարները կ'արածէ մօտերը: Հինգ մէծիտիէի  
գառնուկ մը կ'առնենք ու կ'եփենք:

Գիշերը գէշ նախազգացումներով խռովեալ քուն մը կ'ունենանք:  
Յանկարծ Միքայէլ կը ցատքէ պառկած տեղէն, երկու  
ստուերներ կը շրջին գլխուն վերեւ:

— Եա Ապտուլլահ, եա Ապտուլլահ,— կ'սկսի պոռալ:

Մեր պահապանը անմիջապէս կ'ելլէ պառկած տեղէն ու  
ատրճանակը կը քաշէ.

— Հարամի, հարամի (գո՛ղ, գո՛ղ),— պոռալով:

Երկու աւազակները կը քաշուին բլուրն ի վեր, բայց շատ  
չեն հեռանար ու կ'սկսին զէնք պարպել մեր վրայ: Ապտուլլահ  
պարկերուն ետեւ դիրք կը բռնէ ու կը պատասխանէ զէնքով:  
Ամէնքս սարսափահար կ'ծկտած ենք մէյմէկ տեղ:

Պահ մը զէնքերը կը լռեն ու մարտահրաւէր կոչեր կ'ուղ-  
ղուին աւազակներու եւ Ապտուլլահի եւ Իպրահիմի միջև:

— Թաւլի հօն ճալ (եկէք պատերազմինք),— կը պօռան աւա-  
զակները:

— Դուք հոս եկէք,— կը պատասխանէ Ապտուլլահ,— եթէ կը  
համարձակիք:

Ուղտապանն ալ իր կարգին հայհուլներ կը տեղայ աւազակ-  
ներուն հասցէին եւ կը սպառնայ հրացանը մէջտէղ հանելու:  
Թէեւ խեղճը ո՛ր եւ է զէնք չունի:

Ձէնքերը կը վերսկսին կրակ ընել եւ միեւնոյն ատեն երկու  
կողմէն կը շարունակեն իրարու ասպարէզ կարգալ:

Վերջապէս աւազակները կամաց կամաց կը նահանջեն:

Արդեօք վերջնականապէս հեռացա՞ծ են թէ գացած են օգ-  
նական ուժ բերելու: Այս վերջին ենթադրութիւնը աւելի հաւա-  
նական կը թուի մեզի: Ուղտապան եւ Ապտուլլահ էլ Սէլամի  
կ'որոշեն իսկոյն ճամբայ ելլել ու խոյս տալ այս վտանգաւոր  
վայրէն: Ափյափոյ կը բռնաւորենք ուղտերը եւ ճամբայ կ'ել-  
լենք: Աւազակները որոնք կ'երեւայ որ, պահուած, մեզ կը լը՞

տեսէին, կը վերսկսին իրենց յարձակումը, այս անգամ բլուրին  
բարձունքէն քարեր տեղալով վրանիս:

Ճամբայ կ'իյնանք գրեթէ վազելով: Կիրճէ մը անցնելէ ետքը,  
կը հասնինք բաց դաշտ մը: Վտանգը անցուցած ենք: Կը հա-  
ւաքուինք տեսնելու համար որ պակաս մարդ կա՞յ մէջերնիս:  
Ուղտերը կը համրեն, ճիշդ եօթը հատ են:

— Էշը ո՞ւր է,— կը հարցնէ Իպրահիմ:

Շուրջերնիս կը նայինք. էշ չի կայ:

Իրար կը հարցուփորձեն, ոչ ոք ուշադրութիւն դարձուցած  
է իշուն:

— Էշս հոն մնաց,— կ'ըսէ ուղտապանը,— պէտք է երթամ բե-  
րեմ:

Էշուն կորուստը մեզ ալ կը շահագրգռէ որովհետեւ մեր կա-  
րագ իւղը, շաքարը, դահուէն եւ ուրիշ ուտելիքներ բեռցած ենք  
վրան:

Իպրահիմ կը մեկնի Ապտուլլահին հետ եւ մենք կը սպա-  
սենք իրեն վերադարձին:

Ժամէ մը կուգան առանց էշը գտնելու, հաւանօրէն աւա-  
զակները գողցած են զայն:

Կը լուսնայ եւ մենք Թիպնէի մօտերն ենք ուր ոստիկանա-  
կան կայան մը կայ:

Գիշերուան դէպքերը խորապէս ազդած են ամէնուս վրայ:  
Մօրեղբայրս մանաւանդ բոլորովին բարոյալքուած է: Միքայէլն  
ալ կ'ազդուի իրմէ:

— Այս ճամբորդութիւնը գլուխ պիտի չկրնանք հանել,— կը  
վճռէ մօրեղբայրս,— լաւագոյն է որ երթանք անձնատուր ըլ-  
լանք Թիպնէի ոստիկաններուն: Աւելի լաւ է որ բանտին մէջ  
մեռնինք, քան թէ լեռներուն գլուխը...:

Միքայէլ համամիտ ըլլալ կը թուի իրեն:

Ես կ'ընդդիմանամ, կ'ըսեմ որ ճամբանիս պէտք է որ շարու-  
նակենք ինչ որ ալ ըլլայ:

Տիրուհի նոյնը կ'ըսէ:

– Եթէ դուք անձնատուր ըլլաք, մենք մեր ճամբան պիտի շարունակենք, – կ'ըսենք:

Օդը կը պայծառանայ, արեւը կը ծագի եւ մթնոլորտային այդ փոփոխութիւնը կարծես կ'ազդէ այդ վեհերոտներուն եւ յուսահատներուն վրայ ու կ'որոշենք առաջ երթալ:

Նոյն գիշեր Թիպնէի ոստիկանական կայանին առջեւէն կ'անցնինք, որովհետեւ ուրիշ ճամբայ չկայ, ամենամեծ զգուշութեամբ եւ ահուդողով եւ կը շարունակենք մեր ուղեւորութիւնը մինչեւ յաջորդ կէսօրը եւ կը հասնինք լեղի ջուրի ակունք մը: Եփրատը հեռու է մենէ եւ ստիպուած ենք գտած ջուրերնիս խմելու եւ այդ լեղի ջուրը կուշտ ու կուռ կը խմենք:

Կէս գիշերին կրկին կը ճամբորդենք եւ առտուն կը հասնինք Եփրատ գետին կողմերը լեռներով շրջապատուած վայր մը: Անձրեւը դարձեալ կ'սկսի սաստկօրէն եւ հազիւ հազ կը գրտնենք քարայր մը որ մեզի դրախտ կը թուի: Հոն կը տեղաւորենք մեր գոյքերը եւ մենք ալ կ'ապաստանինք անոր կամարներուն ներքեւ: Քարայրը բաւական ընդարձակ է եւ կրնայ պարունակել 70-80 մարդ:

Պէտէվիներ կուգան այցելութեան, կ'ուտեն կը խմեն: Այս անգամ մենք մեզի կը ներկայացնենք իբրեւ զրաաթ միւլֆէթթիչի\*, կառավարական պաշտօնեայ, ես չամուշ մըն եմ որ կ'ընկերանայ պաշտօնեաներուն:

Հրացանակիր Արաբ մը կուգայ Ապտուլլահ էլ Սէլամիի հետ տեսնուելու:

Գողերու խնդիրէն ի վեր Ապտուլլահ գոյնը կը փոխէ, տըժգոհ է, կը տրտնջայ եւ նոյնիսկ կ'սպառնայ մօրեղբօրս, միւս կողմէ կ'առաջարկէ Միքայէլին որ զատուի միւսներէն ու իրեն հետ ճամբան շարունակէ, լքելով խումբը: Միքայէլ բացարձակապէս կը մերժէ: Այս անգամ Ապտուլլահ կը սպառնայ մեզ մատնելու, վերջապէս Միքայէլ 5 եւ մօրեղբայրս 3 դեղին ոսկի կը վճարեն իրեն եւ մեր «պահապան»ը իր զուարթութիւնը

\* Գիւղատնտեսական քննիչ:

վերստին կը գտնէ: Գիշերը քարայրին մէջ կ'անցնենք, յաջորդ օրը օդը միշտ ամպամած է եւ մերթ ընդ մերթ կ'անձրեւէ, այնպէս որ կարելի չէ ճամբանիս շարունակել: Իրիկուան դէմ երբ երկինք կը պայծառանայ, ճամբայ կ'ելլենք եւ կը մօտենանք Մատէն կոչուած ոստիկանական կայանին:

Ապտուլլահ էլ Սէլամի մենէ կը բաժնուի եւ ժամ մը յետոյ կը վերադառնայ երեք ոստիկաններով:

Նախ կը սարսափինք, կարծելով որ թշուառականը մեզ մատնած է, բայց ինք մեզ կը վստահեցնէ թէ այդ ոստիկաններէն մին իր ազգականներէն է եւ երկուքը բարեկամներ, թէ եկած են պարզապէս գիշերը մեզ պաշտպանելու համար: Եւ կը հրամայէ կիներուն որ կերակուր պատրաստեն մեր ինքնակոչ պաշտպաններուն համար:

Խնդ Միքայէլին ամբողջ ուտելիքները, խմելիքները, սիկար, սուրճ, եւ այլն, ամէն ինչ կը սպառի մէկ գիշերուան մէջ: Առտուան դէմ ոստիկանները կը կորսուին կ'երթան եւ մենք ալ կ'իյնանք ճամբայ եւ կը հասնինք Մատէնէն քիչ մը անդին ժայռոտ կիրճ մը ուր կ'անցնենք ցերեկը: Արաբ կին մը եւ մարդ մը մածուն կը բերեն մեզի:

Գիշերը ճամբայ կ'ելլենք եւ դաշտին մէջ գիշերելէ ետքը, տակաւին լոյսը չծագած կը շարունակենք մեր ուղեւորութիւնը եւ ի վերջոյ փոքրիկ բլուրի մը ետեւ վրան կը կանգնենք:

Աւազակ Ապտուլլահ կը շարունակէ մեզ նեղել եւ տեսակ տեսակ պատրուակներով կը փորձէ մենէ դրամ առնել: Անտանելի պաշտպան մը դարձած է մեր գլխին:

Նորէն ճամբայ կ'ելլենք. ամբողջ գիշերը թաւուտներու մէջէն կը ճամբորդենք եւ կը հասնինք Սապթա որ Զօրի սահճաքին սահմանագլուխն է: Սարսափելի անձրեւ մը կը սկսի: Անկարելի է վրանը կանգնեցնել եւ ամէնքը ծածկոցին ետեւ կը կծկտին:

Կէս գիշերէն երկու ժամ ետքը «Ես ալլահ» գոչելով ճամբայ կ'ելլենք: Մեր ուղեւորութեան ամէնէն վտանգաւոր մասն է այս: Սապթա ոստիկանական մեծ կեդրոն մըն է եւ սահմանագլխին

վրայ խիստ հսկողութիւն կը կատարուի: Խուճըը երկուքի կը բաժնուի, որպէսզի աչքի չզարնէ: Բարեբախտաբար սաստիկ խաւար գիշեր է ու սաստիկ կ'անձրեւէ, այնպէս որ հաւանական չէ որ ոստիկանները այդ գէշ օդին հսկողութիւն կատարեն:

Վերջապէս կ'անցնինք անվտանգ երկիւղալի կէտէն:

Հեւ ի հեւ կը հեռանանք Ջօրի անիծեալ սահմաններէն եւ կը ջանանք ժամ առաջ ոտք դնել Հալէպի նահանգը:

Կէսօրին կը յաջողինք գտնել կիրճ մը եւ հոն մեր վրանը կանգնել: Մեր պահապանը Ապտուլլահ էլ Սէլամի գիշերը անյայտացած էր ու ալ երեւան չէր ելած: Իր այս անհետացումը շատ չչփոթեց մեզի, ընդհակառակն տեսակ մը թեթեւացում զգացինք, որովհետեւ այդ Արաբը իր պահանջումներով եւ սպառնալիքներով ա'լ անտանելի դարձած էր: Միայն թէ կը վախնայինք որ մի'գուցէ Սապքայի մէջ մատնութիւն մը ընէ:

Գիշերը կանուխ ճամբայ կ'ելլենք: Նոր եւ լուրջ վտանգ մը կը սպառնայ մեզի: Չորս կողմերնիս խարոյկներ կը նշմարենք եւ ուղտապան Իպրահիմ Ապու Սալէհ սարսափահար դէմքով մը կը մօտենայ մեզի:

– Էնէզիներու մէջ ինկած ենք, – կ'ըսէ:

Էնէզին թափառաչրջիկ եւ վրանաբնակ Արաբներու ցեղ մըն է որ հռչակաւոր է իբրեւ ամէնէն աւազակ ու վայրագ ցեղերէն մէկը:

Անհատնում վրանները կը տարածուին ընդարձակ դաշտին ամէն կողմը: Գրեթէ ամէն վրանի առջեւ մէյ մէկ խարոյկ վառած է: Այդ խարոյկները ընդհանրապէս կը վառեն վրանաբնակները, գիշեր ատեն, նախ թշնամիներու կողմէ՛ յանկարծակիի չի գալու համար, յետոյ գազանները հեռու վանելու եւ վերջապէս տաքնալու համար: Կամաց կամաց կը քալենք մութին մէջ, կարելի եղածին չափ ոտքի ձայն չհանելով:

Իպրահիմ մեզի հրահանգներ կուտայ:

– Չըլլայ որ իրարու հետ խօսիք, – կ'ըսէ, – ո՛չ ալ սիկառէթ ծխէք:

Արդարեւ Արաբները հաշուած են որ մթութեան մէջ սիկառէթին լոյսը կէս ժամ հեռուէն կը տեսնուի:

– Քանի՞ վրան կայ արդեօք, – կը հարցնենք:

– Թերեւս հազարէն աւելի, – կը պատասխանէ:

Ուղտապանը քթին տակէն արաբերէն աղօթքներ կը փսփսայ որոնց մէջ յաճախ կը կրկնուին Նէպի եւ Ալլահ բառերը (Մարգարէն եւ Աստուած): Յայտնի կը տեսնուի որ շատ կը վախնայ խեղճը եւ իրաւունք ալ ունի, իր ամբողջ հարստութիւնը եօթը ուղտերն են որոնք եթէ էնէզինները յափշտակեն, բոլորովին կը փճանայ: Մենք ալ իրեն չափ սարսափած ենք: Այդ աւազակները եթէ մեզ նշմարեն, տարակոյս չի կայ որ, ըստ իրենց սովորութեան, եթէ չսպաննեն իսկ, մօրէ մերկ պիտի թողուն եւ միեւնոյն ատեն յափշտակեն տանին մեզի ընկերացող երեք երիտասարդ կիները:

Կը քալենք ու կը քալենք անընդհատ մեր մաշլախներուն մէջ փաթթուած: Ո՛չ իրարու հետ կը խօսինք, ո՛չ կը ծխենք ինչ որ ա'լ աւելի անհանդուրժելի կը դարձնէ մեր գնացքը. վրաններուն կողմէ կը լսուին շուներու հաչիւնները:

Ճամբան մէկ աչքը կոյր շան մը հանդիպած ենք որուն քիչ մը ուտելիք տուինք: Վեց եօթը օրէ ի վեր հաւատարիմ եւ երախտապարտ կենդանին մեզի կը հետեւի եւ մեր վրանին քով պահպանութիւն կ'ընէ: Սրտերնիս կը դողայ որ այժմ այդ հեռաւոր հաչիւններուն կը պատասխանէ ու այս կերպով մեզ կը մատնէ: Բայց խելացի կենդանին ինքն ալ կը զգայ թէ ճգնաժամային դրութեան մը մէջ կը գտնուինք եւ պոչը տակ տուած կը հետեւի մեզի անշուկ:

Ժամերով կ'երթանք այսպէս: Խարոյկները կամաց կամաց, ցանցառ կը դառնան եւ վերջապէս կ'անհետանան:

Ուղտապանը քովս կուգայ եւ սիկառէթ մը կ'ուզէ գոր կը վառէ:

Վտանգը անցուցած ենք:

Ամէնուս դէմքին վրայ ուրախութիւն կը ճառագայթէ:



Ա՛լ քայլելու անկարող, առնուազն ինը ժամ քայլած էինք, կանգ կ'առնենք ու մեր վրանը կը կանգնենք: Կը լուսնայ եւ մենք կը ննջենք: Ամբողջ օրը հոն կ'անցնենք եւ գիշերը, բաւական կազդուրուած, ճամբայ կ'ելլենք:

Առտուն կանուխ կը հասնինք Համմամի մօտերը, տափարակ դաշտ մը: Տեղը շատ անյարմար է ինչ որ նախապէս չէինք նըշմարած: Քիչ մը անդիէն կ'անցնի մեծ ճամբան ուրկէ կ'երթեւեկեն կառքեր, ձիաւորներ եւ այլն, կարելի չէ օր ցերեկով մեր ճամբան շարունակել աւելի յարմար վայր մը գտնելու համար: Կ'որոշենք փոսի մը մէջ պահուելու մնալ, առանց վրանը կանգնելու: Իպրահիմ եւ իր զաւակը Սալէհ միայն կրնան ազատօրէն երեւնալ, որովհետեւ Արաբ են եւ վախնալիք բան մը չունին: Կ'երթան մեզի համար գառնուկ մը գնելու մօտերը իրենց հոտը արածող հովիւներէն:

Մուլթը կը տարածուի ամէն կողմ եւ ճամբայ կ'ելլենք ու շեղակի շարժումով մը կ'անցնինք Համմամի քովէն:

Համմամ գրեթէ Հալէպի ու Տէր-Չօրի մէջտեղը կը գտնուի, հետեւաբար մեր ճամբորդութեան կէսը կատարած ենք ու տասը օրէ ի վեր կը ճամբորդենք:

— Քանի՞ օրէն պիտի հասնինք Հալէպ, — կը հարցնենք ուղտապանին:

— Աստուած գիտէ, — կը պատասխանէ:

Վարժուած ենք այդ պատասխանին: Ամէն անգամ որ Իպրահիմի կը հարցնենք թէ այս ինչ տեղը ե՞րբ պիտի հասնինք, անփոփոխ կերպով նոյն պատասխանը կուտար:

— Աստուած գիտէ:

Եւ եթէ աւելի որոշ պատասխան մը ստանալու համար պրէ դէինք՝ կը բարկանար:

Արաբ հաւատացեալին համար անկարելի է որ մարդս գիտնայ այնպիսի բաներ որոնք նախախնամութեան գաղտնիքն են ու անոր կամքէն միայն կախում ունին:

Չէ՞ մի որ եթէ որոշապէս ըսէ թէ, օրինակի համար, տասը՝

րէն պիտի հասնինք, Աստուած կարող է իր այս յանդգնութիւնը պատժելու համար այնպիսի փորձանք մը բերել որ ամիսէ մը հասնինք կամ բնաւ չհասնինք, ուստի.

— Աստուած գիտէ:

Կ'անցնինք խիտ թփիկներու անտառէ մը ուր պահ մը կը հանգչինք: Կողմնակի ճամբաներով մինչեւ կէսօր կը շարունակենք երթալ եւ կը հասնինք Եփրատի եզերքը եւ անկէջ ալ դէպի դաշտ ուղղուելով աշտարակի մը դիմաց վրան կը կանգնենք:

Կը հանդիպինք արաբական տարազով կիներու եւ տղոց որոնք դաշտային աշխատանքէ կը վերադառնան:

Հետաքրքիր մեզի կը դիտեն:

— Դուք Հա՞յ էք, — կը հարցնէ կիներէն մին թրքերէն լեզուով:

— Չէ՛, իսլամ ենք, — կը պատասխանէ մօրեղբայրս:

Կիները կասկածոտ դէմքով մը կը շարունակեն մեզ գննել իրենց նայուածքովը:

— Հայ են, բայց կը վախնան կոր ըսելու, — կը փսփսայ կիներէն մին քովինին՝ հայերէն լեզուով:

— Դուք Հա՞յ էք ուրեմն, — կը գոչենք այս անգամ:

— Այո՛, Հայ ենք, — կը պատասխանեն:

Տարագիրներ են որոնք այդ կողմերը մնացեր են ու կ'աշխատին եղեր Արաբ պէյի մը ազարակին մէջ:

— Էրիկմարդ չի կա՞յ մէջերնիդ, — կը հարցնեմ:

— Չէ՛, մեր էրիկները տարին կտրեցին, — կը պատասխանեն:

— Ինչպէ՛ս, ձեզի լաւ կը կերակրե՞ն:

— Չմեռնելու չափ հաց կուտան:

Իրենք ալ մեզի կը հարցուփորձեն: Կ'ուզեն հասկնալ թէ ուրկէ՞ կուգանք ո՞ւր կ'երթանք: Խեղճերը երեք չորս տարիէ ի վեր Հայու երես չեն տեսած:

— Ի՞նչ լուր, յոյս կա՞յ տեղերնիս դառնալու, — կը հարցնեն:

Կը յուսադրենք զիրենք եւ կը հեռանան:

Մեր վրանին մօտերը ահագին քանակութեամբ միլան քէօ-

քիւ կոչուած արմատներէն կայ դիզուած: Կառավարութիւնը զանոնք գրաւած է բանակին համար եւ Հո՛ն թողած: Այդ արմատը ջուրի մէջ խաշելով զովացուցիչ ըմպելի մը կը դառնայ որ շատ սովորական է Հալէպի ու Ատանայի կողմերը:

Ուղտապանը իր տոպրակները կը լեցնէ անոնցմով որպէսզի ճամբան իրբեւ վառելափայտ գործածէ, որովհետեւ հետզհետէ փայտը դժուար կը սկսինք գտնել եւ կը ստիպուինք փուշ ու մացառ հաւաքել եւ անոնցմով եփել մեր կերակուրը եւ հացը:

Մենք ալ բաւական կը բերենք վրանը այդ արմատներէն ու կը խաշենք եւ իրբեւ թէյ կը խմենք տաք տաք: Օդը բաւական ցուրտ է եւ անձրեւը կը շարունակէ տեղալ:

Յաջորդ օրը շարունակեցինք մեր ուղեւորութիւնը: Ուղտապանը շատ դանդաղ առաջ կը տանէր կարաւանը, որովհետեւ սրբանշնչի արօտավայր մը գտած էր իր ուղտերը արածելու համար: Խնճճ անասունները իրենց մեկնումէն ի վեր բաւական գիրցած եւ ուժովցած էին:

Հակառակ իրենց համբաւեալ սակաւակերութեան, ուղտերը եթէ թոյլ տրուէր իրենց, օրը 24 ժամ պիտի ճարակէին\*:

Նոյն օրը հազիւ 3 ժամ ճամբայ ըրինք ու կեցանք նոյն դաշտին մէջ: Մեծ քանակութեամբ սունկ ժողված էինք ճամբան զոր եփեցինք ու կերանք: Կիները, բացի սունկէն, տեսակ տեսակ համեղ բոյսեր կը հաւաքէին զոր խաշելով կ'ուտէինք կամ աղցան կը շինէինք:

Անձրեւը միշտ կը շարունակէ եւ մենք անձրեւին տակ ճամբայ կ'ելլենք ցիխերուն մէջ տապալակելով: Ապու Հարարի զինւորական կայանէն կ'անցնինք: Դաշտը կը լմննայ ու բլուրներու մէջերէն կ'երթանք, թանձր խաւարով մը:

Արշալոյսին ուղտապանը կը նշմարէ որ իր զաւակը Սալէհ մէջտեղ չի կայ. ի զո՛ւր ասդին անդին կ'երթայ իր զաւակը փնտռելու. մէջտեղ չկայ. խեղճը յուսահատ լալահառաչ կը պրօւայ չորս հովերուն.

\* Արածէին:

– Եա՛ Սալէհ, եա ուէլէ՛տ\*...

Կ'աղօթէ, կը պաղատի, Ալլահն ու Նէպին օգնութեան կը կոչէ:

Իր վիճակը կը յուզէ ամէնքս եւ մենք ալ անձկութեամբ Հորիզոնը կը պրպտենք Սալէհը գտնելու համար:

Վերջապէս երեւան կ'ելլէ, էշուն վրայ հեծած:

Մոռցայ ըսելու որ գողցուած էշուն տեղ, ուղտապանը ճամբան ուրիշ էշ մը գնած էր:

Իպրահիմ իր զաւակը նշմարելուն պէս իր լացը կը դադրեցնէ, փառք կուտայ Աստուծոյ, յետոյ զաւազանը առնելով լաւ մը կը տփէ Սալէհը, որ կը սկսի լալ: Կը միջամտենք ու կ'ազատենք սղան հօրը ձեռքէն:

– Ինչպէ՞ս եղաւ որ կորսուեցար, – կը հարցնենք:

– Էշուն վրայ քունս տարեր է, – կը պատասխանէ:

Եւ որովհետեւ էշը նոր գնուած էր ու տակաւին վարժութիւն չունէր կարաւանին հետեւելու, դաշտին մէջ կանգ առեր եւ սկսեր է խոտ ուտել:

Սալէհի համար բաւական ժամանակ կորսնցուցինք, ուստի աճապարանքով ճամբայ ելանք, մանաւանդ որ ժամ առաջ հեռանալ կ'ուզէինք վտանգաւոր կայանէն: Փոքրիկ անխոհեմութիւն մը կրնար մեր բոլոր չարչարանքները անօգուտ դարձնել եւ նորանոր փորձանքներ բերել մեր գլխին:

Արագ արագ քալելով կ'երթայինք. ամէնէն տոկունները առաջ կ'անցնէին, իսկ շուտով յոգնողները ետեւ կը մնային, այնպէս որ խումբը բոլորովին տարտղնած կ'երթար:

Յանկարծ տեսանք որ մօրեղբայրս, որ ետեւ մնացած էր, գետինը նստած, նշան կ'ընէր մեզի: Ստիպուեցանք վերադառնալ իր քով: Այլեւս չնչասպառ եղած էր ու չէր կրնար քալել: Թեւեբէն կը մտնենք ու կը տանինք մօտակայ կիրճ մը ուր կը ստիպուինք մնալ նոյն օրը եւ գիշերն ալ Հո՛ն անցնել:

\* Մանուկ, գաւակ:

Հետեւեալ օրը, մարտ 25ին, Մէսքէնէի հարաւակողմը վրան կը կանգնենք: Հոն կը մնանք ամբողջ օրը: Շատ կը նեղուիք ջուրէ եւ կը ստիպուիք գոհանալ փոսերու մէջ հաւաքուած անձրեւի աղտոտ ջուրերով:

Հետեւեալ օրը կը հասնինք Մէսքէնէի մօտերը, գրեթէ մէկ ժամ հեռաւորութեամբ: Ճէպրան եւ Սալէհ կը դրկենք Մէսքէնէի շուկան, որպէսզի մեզի իւր, հաց, ծխախոտ եւ այլն բերեն, որովհետեւ բոլոր պաշարնիս գրեթէ սպառած է:

Կը շարունակենք մեր ճամբան եւ կը հասնինք Ասադ իւ Տէքրէ ըսուած վայրը, հոն կը մնանք ցերեկը եւ գիշերը ճամբայ կ'ելլենք եւ յաջորդ օրը մարտ 27ին կը հասնինք Ճապուռ կոչուած աղի լճին մօտ վայր մը: Օրերէ ի վեր տեղացող անձրեւը ամէն կողմ ճախճախուտներ ձեւացուցած է եւ ճամբաները գրեթէ անանցանելի դարձուցած: Տեղ մը հարկ կ'ըլլայ անցնիլ ջուրերուն մէջէն:

Ուղտերը կը մերժեն ջուրը մտնել. ի գո՛ւր Իպրահիմ, իր երկար գաւազանով, կը հարուածէ զիրենք: Նոյն միջոցին մօտակայ վրաններէն զինուորներ դուրս կ'ելլեն եւ կը մօտենան մեզի:

Կը հարցնեն թէ ուտելիք ունի՞ք:

— Ո՛չ,— կը պատասխանենք:

Ձեն հաւատար, կը գնեն մեր գոյքերը եւ երբ կը տեսնեն թէ իրաւցնէ բան մը չունինք, կը հեռանան մեր քովէն, ուղտապանին ցոյց տալով լաւագոյն ուղի մը ուրկէ ուղտերը կը բարեհաճին անցնիլ:

Ցերեկին պէտէվինի կիներ ծխախոտի փոխարէն մեզի կաթ կը բերեն, անարատ անոյշ կաթ մը զոր հաճոյքով կը ճաշակենք:

Իրիկուան կը շարունակենք ճամբանիս եւ կը հասնինք արաբական գիւղ մը ուր առատ թան կը խմենք:

Հետեւեալ օրը, իրիկուան դէմ, կը հասնինք խոտաւէտ դաշտ մը ուրկէ փոքրիկ գետակ մը կ'անցնի. կը լուացուիք գետակի մէջ ու հոն կը գիշերենք:

Առտուն շատ կանուխ ճամբայ կ'ելլենք:

Օդը գեղեցիկ է, պայծառ ու գոլ:

— Ո՛ւր պիտի կանգ առնենք,— կը հարցնենք Իպրահիմին:

— Եթէ Աստուած ուզէ Պլադ հանգիստ պիտի ընենք քիչ մը եւ ճամբայ ելլենք,— կը պատասխանէ: Գիտենք թէ Պլադ Հալէպէն 4 ժամ հեռու գիւղ մըն է, հետեւաբար նոյն իրիկունը պիտի հասնինք Հալէպ:

Այս իրողութիւնը ամէնուս ուրախութիւն եւ նոր եռանդ կը ներշնչէ: Վերջապէս մեր տաժանագին ուղեւորութիւնը վերջ գտած է եւ յաջողութեամբ պսակուած:

Ուրախ զուարթ կը խօսակցինք մերթ քալելով մերթ ալ ուղտերուն վրայ հեծնելով. ես միշտ կը նախընտրեմ խոնարհ իշուկը:

Պլադի մօտեցած ենք, երբ յանկարծ եօթը հեծեալ եւ հրացանակիր ոստիկաններ կը պաշարեն մեր կարաւանը:

Սարսափը կը տիրէ մեր վրայ: Այս անգամ ա՛լ ազատում չունինք, օձիքը ձեռք տուած ենք:

Նախ կը հացուփորձեն ուղտապան Իպրահիմը:

— Ո՛ւրկէ կուգաք:

— Տէր-Չօրէն,— կը պատասխանէ շուարած, մինչդեռ ճամբան որոշած էինք որ եթէ երբեք ոստիկանի հետ գործ ունենայինք պիտի ըսէինք թէ Մէսքէնէն կուգանք:

— Ո՛ւր կ'երթաք,— շարունակեց ոստիկաններուն պետը:

— Հալէպ,— պատասխանեց Իպրահիմ:

Յետոյ, դարձաւ մօրեղբօրս:

— Դուք ո՞վ էք,— հարցուց:

— Մենք Հայ գաղթականներ ենք, Մէսքէնէն կուգանք: Հոն հանդիպեցանք Իպրահիմի եւ իր ուղտերը վարձեցինք:

— Վէսիքա ունի՞ք:

— Ձէ՛, այնտեղի քօմիսէրը ըսաւ որ Հալէպ երթալու համար վէսիքայի պէտք չիկայ... մենք արդէն պիտի վերադառնանք Մէսքէնէ, ապրանք առնելու համար կ'երթանք Հալէպ:

– Այս կինները ո՞վ են:

– Անոնք ալ գաղթականներ են, իրենց ամուսիններուն քով կ'երթան:

– Դարձէ՛ք ամէնքդ մէկէն, բայց նախ վար իջէ՛ք ուղտերէն: Գրեթէ դողահար վար իջանք:

– Եկէ՛ք միասին, – հրամայեց ոստիկաններուն պետը:

Եւ մեզ տարին Պլադ, ուր հորի մը քով նստեցանք:

Կը մտածէինք որ քիչ յետոյ բանտ պիտի առաջնորդուէինք: Ոստիկանները հրամայեցին ուղտապանին որ բռնները վար առնէ ուղտերուն վրայէն:

Հրամանը բնականաբար իսկոյն գործադրուեցաւ:

– Ուղտերը տարէ՛ք, – ըսաւ ոստիկաններու պետը:

Իպրահիմ, Սալէհ եւ Ապտուլլահ հետեւեցան ուղտերուն եւ մենք մնացինք մեր տեղը:

Ձէինք համարձակեր որեւէ բացատրութիւն ուզել ոստիկաններէն, բայց կացութեան անորոշութիւնը մեզ կը մտատանջէր:

Անցաւ քիչ մը ժամանակ, տեսանք որ մեզի հետ զբաղող չկար:

Մէկ քանի ոստիկաններ հեռացած էին, ուրիշ մէկ քանիներ հեռու նստած կը ծխէին ու կը խօսակցէին:

Ուզեցինք փորձ մը կատարել հասկնալու համար թէ հսկողութեան ներքե՞ւ էինք թէ ո՛չ:

Ես ու Միքայէլ ուղղուեցանք դէպի գիւղ եւ գացինք նպարավաճառի մը խանութը ուրկէ չամիչ, ծխախոտ ու սիկառայի թուղթ առինք ու վերադարձանք տեղերնիս: Ո՛չ ոք դիտողութիւն ըրաւ:

Ասիկա քաջալերեց մեզի ու մօտեցանք ոստիկաններու պիտին:

– Մըր տարիք ուղտապանը, – հարցուց մօրեղբայրս:

– Ուղտապանը իր ուղտերուն հետ Պապ պիտի երթայ անկարեայի համար, հոն ապրանքներ կան գինուորական իշխանութեան պատկանող, որոնք ուրիշ տեղ պիտի փոխադրուին:

– Մենք ի՞նչ պիտի ընենք...

– Դուք կրնաք ձեր ճամբան շարունակել:

Այս խօսքերը յանկարծ հաճելի անակնկալով մը լուսաբանեցին խնդիրը: Ոստիկանները մեզի չէին հետապնդեր, այլ ուղտերը:

Քաջալերուած այս յայտարարութենէն՝ թողուցինք մեր աղաչաւորի դիրքը եւ դարձանք պահանջողներ:

– Բայց, – առարկեց մօրեղբայրս, – մենք ուղտերուն վարձքը կանխիկ վճարած ենք, հիմայ որ առիք զանոնք մեր ձեռքէն, ի՞նչպէս կրնանք մեր ճամբան շարունակել այսչափ բռններով:

– Հոս կրնաք էջեր գտնել եւ անոնցմով ճամբանիդ շարունակել, արդէն հոսկէ մինչեւ Հայէպ հազիւ 4 ժամուան ճամբայ է:

– Այո՛, բայց էջերուն համար կրկին դրամ պիտի վճարենք:

– Է՛հ, ի՛նչ ընենք, մենք հրաման ստացած ենք հոսկէ անցնող բոլոր ուղտերը եւ ձիերը գրաւելու, ուրիշ կերպ չենք կըրնար ընել:

– Գոնէ մեզի օգնեցէ՛ք որ շուտով էջ գտնենք ու ճամբայ ելլենք:

Ոստիկաններու պետը հրաման ըրաւ որ երթան գիւղէն էջ բերն: Դժբախտաբար կարելի չեղաւ ցերեկուան այդ ժամուան գիւղին մէջ նոյնիսկ հատ մը գտնել այդ համեստ ու խոնարհ անասուններէն: Ամէնքն ալ դաշտ գացած էին զանազան աշխատութիւններու համար եւ իրիկունը, մայրամուտին, պիտի վերադառնային գիւղ, հետեւաբար պարտաւորուած էինք նոյն դիշերը Պլադ անցընել:

Այս փոքրիկ անպատեհութիւնը շատ չյուզեց մեզ: Վերջապէս բախտաւոր էինք եւ մեր յուսացածէն շատ աժան կ'ազատէինք:

Եւ սակայն այսչափ նպատակին մօտ հասնիլ եւ յանկարծ ստիպուիլ կանգ առնել՝ շատ դժնդակ կը թուէր մեզի:

Միքայէլին առաջարկեցի որ երկուքս ոտքով երթայինք Հալէպ ուր կրնայինք հասնիլ մինչեւ իրիկուն, իսկ մեր ընկերները

Հետեւեալ օր ճամբայ կ'ելլէին: Միքայէլ հաւանեցաւ ու միասին առնելով նաեւ ձէպրան, սկսանք քալել:

Ճամբան հանդիպեցանք երկու հեծեալ ոստիկաններու որոնք մեզ ճանչցան, որովհետեւ մեզ կեցնողներէն էին:

– Ո՞ր կ'երթաք, – հարցուցին:

– Հալէպ, – պատասխանեցինք:

– Ո՞ւր են ձեր ընկերները:

– Անոնք Պլադ մնացին, որովհետեւ չկրցանք էշ գտնել: Վաղը պիտի գան:

Ոստիկաններուն սիրալիր վարմունքէն քաջալերուած՝ հարցուցի.

– Արդեօք այս ճամբան վտանգաւո՞ր է:

– Շատ դրամ ունի՞ս քովդ, – հարցուց ոստիկաններէն մէկը:

– Չէ՛, բայց վերջապէս չեմ ուզեր կողոպտուիլ:

– Երբեմն ճամբուն վրայ դէպքեր կը պատահին, – ըսաւ, – եթէ կ'ուզէք մենէ մի՛ բաժնուիք:

Այս առաջարկը քիչ մը կասկածելի թուեցաւ մեզի. ոստիկանները թերեւս կ'ուզէին մեզ իրենց հետ տանիլ յարմար վայր մը կողոպտելու համար: Ասկէ զատ շատ վտանգաւոր էր մեզի համար երկու հեծեալ ոստիկաններով Հալէպ մտնելը:

– Մենք ձեր ձիերուն չենք կրնար հասնիլ, – դիտել տուի:

– Կամաց կը քշենք զանոնք:

– Մեզի համար դուք ուշ պիտի մնաք այն ատեն... ասկէ զատ քովերնիս դրամ չունինք արդէն, հետեւաբար գողերէն շատ չենք վախնար:

– Դուք գիտէք:

Եւ երկու ոստիկանները ձիերը քշեցին ու հեռացան:

Մեր վախը անտեղի էր արդէն: Ճամբան ամայի չէր եւ միշտ եկող զացող գիւղացիներու կը հանդիպէինք, որոնք բարեբախտաբար պէտէվիներ, Շավիներ կամ էնէզիներ չէին: Յետոյ քանի կը յառաջանայինք, կը հանդիպէինք արաբական գիւղերու, ագարակներու, պարտէզներու:

Երկու ժամ քալելէ ետքը, հասանք բաւական մեծկակ գիւղ մը ուր կանգ առինք հանգչելու համար:

Այդ տեղէն արդէն կ'երեւար Հալէպի միջնաբերդը, վարը ընդարձակ դաշտին մէջ: Հիմա մեր ուղին այլեւս հեշտ զառիվայր մըն էր զոր կրնայինք կտրել առանց յոգնութեան: Ժամու մը չափ նստելէ ու մածուն ուտելէ ետքը, ճամբայ ելանք եւ մէկուկէս ժամ եւս քալելէ ետքը հասանք ձիթատան մը ուրկէ որոշ կերպով կ'երեւային Հալէպի տունները:

Քսան վայրկեանէն կրնայինք քաղաք հասնիլ եւ սակայն դեռ մութնալու բաւական ժամանակ կար եւ մենք կ'ուզէինք դիչեր ատեն հասնիլ ապահովութեան համար:

Ճամբան մեզի ըսած էին թէ նոյն միջոցին Հալէպի մէջ, ամենախիստ կերպով կը հետապնդէին զինուորական տարիք ունեցող Հայերը եւ Միքայէլ որ զինուորական տարիքի մէջ էր, սկսած էր չափազանց երկիւղ զգալ, նոյնիսկ կը զղջար Տէր-Զօրէն մեկնելուն:

Կը սկսի կամաց կամաց մթնել: Վրայիս զինուորի ժաքէթը ճամբան նետած եմ, որովհետեւ այլեւս կրնար վտանգաւոր ըլլալ ինծի: Միքայէլ ինծի փոխ կուտայ իր մաշլախը եւ գլխի էկիլը եւ ես կատարեալ Արաբի մը կերպարանքը կ'առնեմ: Ինք աւելի մաքուր հագուած է, գլուխը Փէս, քաղքենիի հով մը ունի եւ կրնայ իբրեւ բնիկ հալէպցի նկատուիլ: Իսկ ձէպրա արդէն կատարեալ Ֆէլլահ մըն է:

Ճամբայ կ'ելլենք եւ կ'ուղղուինք դէպի քաղաք ուր կը հասնինք կէս ժամէն:

Գիշերը ապաստանելու համար որոշած ենք գտնել սասունցի փռապան Պաղտասար աղա Մաւրատեանի, որ մօրեղբօրս ծանօթն է եւ զոր տարի մը առաջ տեսած եմ երբոր Համայէն Տէր-Զօր կ'աքսորուէինք եւ որուն փուռն ալ ծանօթ է ինծի:

– Ո՞ւր պիտի երթանք, – կը հարցնէ Միքայէլ:

– Պապը Նասրը հոն կը գտնուի Պաղտասար աղայի փուռը, – կը պատասխանեմ:

Բայց դժբախտաբար ո՛չ ես եւ ո՛չ Ճէպրան Հալէպի օժապտոյտ փողոցները կրնանք վերլիշել ու բաւական կը թափառինք Հոս ու Հոն, որու միջոցին Ճէպրա մեր հետքը կը կորսնցընէ:

Վերջապէս, մէկ քանի անձերու ճամբայ հարցնելով, կը յաջողինք Պապը Նասըր հասնիլ, ուր մեծ ուրախութեամբ կը գրտնենք Ճէպրան:

Կ'երթանք փուռը եւ դուռը կը զարնենք, կը բանան, բոլորն ալ Արարի անձանօթ դէմքեր:

– Պաղտասար աղան Հո՞ս է, – կը հարցնենք:

– Չէ՛, – կը պատասխանէ մէկը:

– Ե՞րբ կուգայ:

– Անիկա Հոս չի գար... այս փուռը հիմա ուրիշը կը բանեցնէ:

– Իսկ ինք ո՞ւր է:

– Թիլել փողոցը, Հիլալ հիւանդանոցին դէմը:

– Ո՞ր կողմն է այդ փողոցը:

– Շիտակ դէպի վար գացէ՛ք, կը գտնէք:

Քալելու կարողութիւն չէ մնացած վրանիս, այսուհանդերձ ճամբայ կ'ելլենք եւ կ'ողողուինք Հէնտէքէն վար:

Հէնտէք Հալէպի մեծ փողոցն է, ամէնէն ոգեւորեալը, ամէնէն լայնը:

Փողոցին, սրճարաններուն լոյսերը կը շլացնեն մեզի: Տարիներէ ի վեր մեր աչքերը չեն տեսած կազի լոյսը եւ դիւթական բան մը կը թուի մեզի: Երգեցիկ սրճարանի մը առջեւէն կ'անցնինք, երաժշտութեան եւ երգչուհիներու ձայնը հանդիսականներու ժխորը, տարօրինակ տպաւորութիւն մը կ'ընեն մեր վրայ: Ապշած, շլմորած պահ մը կը դիտենք ապակիներուն ետեւէն: Ընդարձակ սրահի մը մէջ խռնուած են Գերման եւ թուրք զինւորականներ, Արաբ եւ քրիստոնեայ բազմութիւն մը: Սիկառէթի ու նարկիլէի ծուխը պատած է ամբողջ մթնոլորտը եւ այդ մշուշին մէջէն, հեռուն փոքրիկ բեմի մը վրայ, կը տեսնենք հօլանի աղջիկ մը որ վաւաշտ պար մը կը խաղայ:

Հանդիսականներուն վրայ նախանձոտ ակնարկ մը նետելէ ետքը կը շարունակենք մեր ճամբան:

Չենք գիտեր թէ ո՛ր կողմը կը գտնուի Թիլել եւ հարցնելու ալ չենք համարձակիր կասկած չյարուցանելու համար:

Կառք մը կը կեցնենք, մէջը կը մտնենք եւ կառապանին կը հրամայեմ.

– Թիլել տար մեզի, Հիլալ հիւանդանոցին դէմը:

Կառապանը զարմացած երեսս կը նայի:

– Չե՞ս գիտեր այդ փողոցը:

– Գիտեմ, – կը պատասխանէ:

– Հիլալ հիւանդանոցը...

– Ան ալ գիտեմ:

– Ուրեմն քչէ կառքը:

– Ի՞նչ պիտի վճարէք, – կը հարցնէ:

– Դուն ըսէ՛ տեսնենք:

– 15 դրուշ արծաթ: Այսինքն մօտաւորապէս 75 դրուշ թըղթադրամ:

– Լա՛ւ, քչէ՛ տեսնենք կառքը:

– Պէտք է որ կանխիկ վճարէք:

Հարկ կ'ըլլայ գոհացնել կառապանը եւ վերջապէս կը բարեհաճի ձեզի մտրակել:

Երկու քայլ առնելէ ետքը կը կենայ:

– Հասանք, – կ'ըսէ:

Արդարեւ հասած էինք եւ հիմա կը հասկնանք թէ ինչո՛ւ կառապանը զարմացած ինձի կը նայէր երբ Թիլել երթալու համար կառք կը նստէինք:

Փուռը բաց էր տակաւին:

– Պաղտասար աղան Հո՞ս է, – կը հարցնեմ:

– Այո՛, – կը պատասխանէ աշակերտ մը, – ներսն է:

Տատամտոտ քայլերով ներս կը մտնենք: 5-6 հոգի նստած են, որոնց մէջ կը նշմարեմ փռապանը:

Վարանոտ կը մօտենամ իրեն, չեմ ուզեր ինքնութիւնս յայտ-

նել, վախնալով որ շուրջը գտնուող անծանօթներուն մէջ թե-  
րեւս կասկածելի մարդիկ կան:

— Քերովբէ էֆէնտին կը ճանչնա՞ք, — կը հարցնեմ:

Կասկածոտ վրաս կը նայի եւ կ'ըսէ.

— Ո՞ր Քէրովբէ էֆէնտին:

— Այն որ Անթաքիա կը գտնուէր, Քէրովբէ Ասլանեան, ան-  
ցած տարի հոսկէ անցաւ եւ ձեզի հետ տեսնուեցաւ:

— Չեմ գիտեր, ատանկ մարդ չեմ ճանչնար, — կը պատասխա-  
նէ:

Կ'ենթադրեմ որ կա՛մ իրաւցնէ զիս չէ ճանչցած եւ կա՛մ հոն  
գտնուողներէն վախնալով այնպէս ցոյց կուտար: Ամէն պարա-  
զայի աւելորդ էր մեր խօսակցութիւնը երկարել աւելի եւս եւ  
երեքս միասին դուրս կ'ելլենք:

Թուրք զինուոր մը կեցած էր դռան առջեւ:

— Ո՞վ են ասոնք, — կը հարցնէ փոռն շակերտին:

Մենք այս հարցումը լսելով կ'արագենք մեր քայլերը դէպի  
մութ փողոց մը: Ետեւնուս կուգայ պատանի մը որ յետոյ կը  
հասկնանք թէ Պաղտասար աղայի աներձագն է, Յովսէփ ա-  
նուն:

Պատանին կ'ուզէ մեզի օգտակար ըլլալ, մեզ առաջնորդել,  
որովհետեւ Հալէպի փողոցները լաւ չենք ճանչնար:

Փռապանէն յոյսերնիս կտրած՝ կ'ուզենք ձէպրայի եղբօրը  
Կարապետի հետքը գտնել:

— Համիտիէի կողմը անթաքիացիներ կը բնակին, երթանք ա-  
նոնց հարցնենք, — կ'ըսէ Յովսէփ:

Կը գտնենք անթաքիացիներուն բնակած տունը, դուռը կը  
զարնենք, բացող չի կայ:

— Մօտերը Հայու փուռ մը կայ, հոն երթանք, — կ'առաջարկէ  
մեր առաջնորդը:

Կ'երթանք, մեր վիճակը կը բացատրենք եւ կ'աղաչենք որ  
մեզ գոնէ մէկ գիշեր պատսպարէ: Նոյնիսկ դրամ կը խոստա-  
նանք, կը մերժէ:

— Դուք անծանօթ մարդիկ էք, — կ'ըսէ, — կրնայ ըլլալ որ ա-  
լիւր գողնաք, փուռին տէրը ես չեմ, պատասխանատու կ'ըլլամ,  
եւ այլն:

Նորէն կ'աղաչենք, կրկին կը մերժէ: Ի վերջոյ կ'ըսէ.

— Արդէն այս փուռը ապահով տեղ մը չէ, գիշերները պա-  
հակ ոստիկաններ կուգան կ'այցելեն եւ եթէ անծանօթ մարդիկ  
գտնեն, կը ձերբակալեն:

Եւ խորհուրդ կուտայ մեզի որ անմիջապէս մեկնինք:

Միքայէլ այս խօսքերը լսելով կը սկսի պաղ պաղ քրտինք  
թափել:

— Ուրեմն ելլենք երթանք, — կ'ըսէ փուռէն դուրս ելլելով: Կը  
հետեւիմ իրեն եւ փողոցին մէջ մեր թափառումը կը վերսկսինք:

Յովսէփին կ'աղաչենք որ մեզի գոնէ ծակ մը գտնէ, գիշեր-  
ւան մնացորդը անցնելու համար: Ա՛լ կարողութիւն չունինք  
ոտքի վրայ կենալու, գրեթէ տասը ժամէ ի վեր է որ կը քալենք:

Ազնիւ տղան կը յօժարի մեզ իր տունը տանիլ:

Երբ կը մտնենք տան բակը, սրտի խորունկ հառաչանք մը  
կ'արձակենք: Մեր Գողգոթան վերջացած էր:

Ներս կը մտնենք, տնեցիները որոնք տարի մը առաջ տեսած  
էին զիս, չեն ճանչնար բնաւ իմ արաբական տարագովս:

Վերջապէս մաչլախս ու էկիլս կը հանեմ, անուս կուտամ:

Այն ատեն կը փուռան մեզ հիւրընկալել: Մէյմէկ անկողին  
կը փոեն գետինը, որոնց վրայ կ'իյնանք դիակներու պէս: Հե-  
տեւեալ առտու բաւական կազդուրուած եմ:

Տնեցիները օրուան կացութիւնը կը բացատրեն մեզի:

Լուրերը շատ գէշ են. ջարդի շուկաներ կը լսուին: Զինուորա-  
կան տարիք ունեցող բոլոր Հայերը կը ձերբակալուին եւ զըն-  
տանները կը նետուին: Խեղճերը 30-40 օր բանտարկուելէ եւ ա-  
մենախիստ չարչարանքներ կրելէ ետքը, կը ղրկուին Պօզանթի,  
ամէլէ թապուրիի մէջ ծառայելու համար:

Այս տեղեկութիւնները յուսահատութեան կը մատնեն Մի-  
քայէլը որ կ'որոշէ փակուած մնալ տան մէջ:

Ես իր ժաքէթը ու խալփախը կը դնեմ ու դուրս կ'ելլեմ: Զին-  
ւորական ծառայութեան տարիքս անցուցած եմ եւ ատոր հա-  
մար ձերբակալուելու վախ չունիմ:

Մանօթներ ունիմ որոնք կ'ուզեմ տեսնել: Կ'երթամ Պարոնին  
օթէլը, ուր կը գտնեմ Արամ Անտոնեանը:

Կը համբուրուինք, կը տեսակցինք:

## ՆԱԼԷՊԻ ՄԷՁ

Հետեւեալ օրերը կը տեսնեմ նաեւ ուրիշ բարեկամներ: Օս-  
մանեան պանքան կ'երթամ ուր կը գտնեմ պ. Պարգեւ Փափա-  
զեանը: Պանքային վերնայարկը սենեակ մը յատկացուած է ի-  
րեն, սենեակին կից կայ ընդարձակ թեռաս մը ուր կը նստինք:

Կը պատմէ իր աքսորի դրուագները: Նոյն միջոցին ոստիկան  
մը կը ներկայանայ: Երկուքս ալ դող կ'ելլենք: Ապահովաբար  
զիս բռնելու եկած է...

Բայց ո՛չ, ոստիկանը Պարգեւ Փափազեանը կը փնտռէ:

— Ես եմ, — կը պատասխանէ բարեկամս:

— Ոստիկանութեան տնօրէնը ձեզ տեսնել կ'ուզէ:

— Լաւ, բայց այսօր անհանգիստ եմ, վաղը թերեւս կարենամ  
գալ, — կը պատասխանէ Փափազեան:

Ոստիկանը առանց դիտողութիւն ընելու կը մեկնի:

— Անկարեւոր բան մը ըլլալու է, — կ'ըսեմ:

— Այնպէս կ'երեւայ, — կը պատասխանէ Փափազեան, — ար-  
դէն ատեն ատեն կը կանչեն զիս ոստիկանատունէն, ալ վարժ-  
ւած եմ ատոր:

Հետզհետէ տեսայ ուրիշ բարեկամներ ալ, տոքթոր Պօղոս-  
եանը, տոքթոր Հէքիմեանը զոր Տէր-Զօր ճանչցած էի ուր եկած  
էր իբրեւ զինուորական բժիշկ, յետոյ հալէպցի բարեկամներ,  
Գարեգին եւ Յովհաննէս Ճիէրճեան, Միքայէլ Նաթանեանը որ  
չատ զգոյշ կը կենար, հեռաւոր թաղ մը քաշուած, ինչպէս  
նաեւ Անտօն Ռշտունիի կիներ եւ աղջիկը ու իր ամուսինը, եւ  
այլն:

Իմացայ որ Գր. Անգութն ալ հոն է եղեր, բայց ծածկուած կը  
մնար:



Նոյն միջոցին Արշաւիր հոն էր եւ քիչ շատ վտանգաւոր համարուած Հայերը մեծ զգուշութիւններ ձեռք առնելու ստիպուած էին գլուխնուն փորձանք մը չի բերելու համար:

Հազիւ թէ քանի մը օրէ ի վեր Հալէպ էի երբ Արամ Անտոնեան ինծի ըսաւ.

– Արշաւիրը իմացեր է քու հոս ըլլալդ:

– Գէշ բան, – ըսի:

– Ձէ՛, – պատասխանեց, – չեմ կարծեր որ քեզի գէշութիւն մը ընել ուզէ, ընդհակառակը կը փափաքի կոր հետք ծանօթանալ, լաւ կ'ըլլայ որ անգամ մը հետը տեսնուիս: Հիմա Արշաւիր կը ջանայ կոր մեզի պէս մարդոց օգտակար ըլլալ կամ գոնէ վնաս չհասցնել, որպէսզի ապագային իրեն մասին լաւ վկայութիւն տանք:

– Լա՛ւ, անգամ մը կը տեսնուիմ, – ըսի Անտոնեանին:

Պապ էլ Գարաճի հրապարակը կապելայ մը կար որուն տէրը ռոտոսթօցի Հայ մըն էր եւ ուր ընդհանրապէս կը յաճախէի իրիկունները: Արշաւիր ալ հոն կուգայ եղբր: Կապելային տէրն ալ խորհուրդ տուաւ անգամ մը տեսնուելու այդ նշանաւոր լըրտեսին հետ, ըսելով թէ այսպէս փափաք յայտնած էր ինք:

– Բայց ի՞նչ կ'ուզէ ինէ, – հարցուցի, – ես զինքը երբեք չեմ տեսած:

– Կարծեմ կ'ուզէ քեզի հետ տեսնուիլ ինքզինք արդարացնելու համար:

Հակառակ որ այդ տեսակցութիւնը հաճելի պիտի չըլլար ինծի, հետեւեալ օրուան համար ժամ մը որոշեցի որպէսզի իրար տեսնենք:

Որոշեալ ժամուն Արշաւիր չեկաւ, յետոյ իմացայ որ հիւանդացած էր:

Մեր Տէր-Ձօր հասնելէն քանի մը օր ետքը լուր առի թէ մեր հրամանատարը պ. Էտվալ ընտանիքով եկած էր Հալէպ: Անմիջապէս գացի զինքը տեսնելու: Հարիւրապետ Շուլցն ալ իրեն հետ էր:

Սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ ինծի:

Պ. Էտվալին յիշեցուցի իր խոստումը զիս Գերմաններու ծառայութեան մէջ առնելու մասին:

– Վաղը եկուր մեր կեդրոնատեղին, – ըսաւ:

Հետեւեալ օրը երբ գացի զիս անմիջապէս ներկայացուց մէկ քանի բարձրաստիճան սպաններու, որոնք յանձնարարագրով մը զրկեցին թուրք եւ գերմանական մէնզիլը:

Հոն անունս եւ հասցէս առնելէ ետքը պատուիրեցին որ պատրաստ գտնուիմ պէտք եղած ատեն մեկնելու:

– Ո՛ւր պիտի երթամ, – հարցուցի:

– Կամ Ծարապլուս եւ կամ Համա, – ըսին: – Հարիւրապետի մը իբրեւ թարգման պիտի ընկերանաս եւ ձիով պիտի ճամբորդէք:

Այս վերջին պարագան շատ հաճելի չէր թէեւ բայց պէտք էր համակերպիլ: Որչափ ատեն որ գերմանական ծառայութեան մէջ չըլլայի անձս ապահով չէր կրնար ըլլալ:

– Ձէ՞ք կրնար անմիջապէս վէսիքա մը տալ ինծի:

– Ո՛չ, – պատասխանեցին, – որովհետեւ յայտնի չէ տակաւին թէ երկու հարիւրապետներէն որո՞ւ հետ պիտի երթաս:

Հակառակ վէսիքա չկրնալ ունենալու՝ համարձակօրէն դուրս ելայ Գերմաններուն քովէն:

Պաշտօնապէս որոշուած էր թէ իբրեւ թարգման պիտի ծառայէի իրենց քով եւ արձանագրուած իրենց տետրակին մէջ: Այս իրողութիւնը քաջութիւն կուտար ինծի եւ սկսայ աւելի համարձակ պտտիլ:

\*\*\*

Երկու օր մեր ասպնջականներուն սենեակը մնալէ ետքը, որու միջոցին Պլադ մնացող մեր ընկերներն ալ եկան միացան մեզի, Միքայէլը, ես եւ Տիրուհին փոխադրուեցանք մօտակայ տուն մը, ուր գետնայարկի վրայ սենեակ մը վարձեցինք:

Խեղճ Միքայել միշտ փակուած կը մնար սենեակին մէջ, որովհետեւ դուրսը ձերբակալութիւնները կը շարունակուէին ամենայն խստութեամբ:

Յաճախ փողոցը կը հանդիպէի 20-30 Հայ երիտասարդներու որոնք հաստ չուանով մը իրարու կապուած, գլխիկոր կ'երթային դէպի ոստիկանատուն, ուրկէ կը յանձնուէին զինուորական իշխանութեան:

Բարեբախտաբար շատ մը արհեստաւոր երիտասարդներ զինուորական աշխատանոցներու մէջ կը գտնուէին եւ այս կերպով ազատ էին զինուորական ծառայութենէ:

Նոյն միջոցին այդ աշխատանոցներու մէջ գտնուող կին եւ էրիկմարդ բանուորներուն թիւը հինգ հազարը կ'անցնէր:

\*\*\*

Ինչպէս պատմութեանս ընթացքին ըսած եմ, երբ Հալէպէն Տէր-Չօր աքսոր պիտի երթայինք, ես եւ մօրեղբայրս մեր հագուստներէն ու ճերմակեղէններէն մաս մը թողած էինք բարեկամի մը՝ պ. Ռուբէն Սեթեանի քով:

Այդ հագուստները շատ մեծ օգտակարութիւն մը ունեցան, որովհետեւ գրեթէ բնաւ հագնելիք բան մը չուանէի երբ Հալէպ հասայ:

Բարեկամս Փիլիկ Արփիարեան ասոնց վրայ աւելցուց նաեւ նոր ֆէս մը, ինչ որ շատ թանկագին բան մըն էր, եւ բաւական շնորհքով արտաքինով մը կըրցայ դուրս ելլել:

Ցերեկները ընդհանրապէս կը յաճախէի ճիշտ ոստիկանութեան տնօրէնութեան դէմը գտնուած փոքրիկ զինատուն մը, Հէնտէք փողոցին վրայ:

Տէրը աքսորուած յոյն մըն էր որուն հաւատացուցած էի թէ նպարավաճառի խանութ մը ունիմ Մէսքէնէի մէջ եւ յատկապէս եկած եմ Հալէպ գնումներ ընելու: Նոյնիսկ խոստացած էի օղին իրմէ առնել:

Այդ փոքրիկ կապելան կը յաճախէին մէկ քանի Յոյներ, նոյնպէս աքսորուած սուրիական ծովեզերքներէն:

Օր մը գինեպանը ցոյց տալով յաճախորդ մը որ քանի մը գաւաթ օղի խմելէ ետքը դուրս կ'ելլէր խանութէն՝ ըսաւ.

– Կը տեսնա՞ս այդ մարդը, զգուշացիր իրմէ:

Ճերմակներ հագած մէկն էր որ արդէն քանի մը անգամ տեսած էի հոն ու հետն ալ խօսք փոխանակած, միշտ յունարէն կը խօսէր եւ ես կը կարծէի որ երկաթուղիի Յոյն պաշտօնեայ մըն է:

– Ի՞նչ ազգ է, – հարցուցի:

– Կրետացի թուրք մըն է, – բացատրեց զինեպանը, – եւ արհեստն ալ լրտեսութիւն է... Սէր քօմիսէրին մասնաւոր լրտեսն է ու Ձիա էֆէնտի կը կոչուի:

– Ես վախնալիք բան մը չուանիմ, – պատասխանեցի, – վէսիքայով եկած եմ ու քանի մը օրէն պիտի մեկնիմ:

– Միշտ լաւ կ'ընես որ իրմէ զգուշանաս, մանաւանդ հետը թօսած ատենդ:

– Շնորհակալ եմ տուած տեղեկութենէդ:

Հինգշաբթի ցերեկ մը, մեր Հալէպ հասնելուն տասնըմէկերորդ օրը, կրկին մտայ այդ խանութը եւ գաւաթ մը օղի ապսպրեցի:

Նախորդ օրը գացած տեսած էի հարիւրապետ պ. էտվալը որ ինձ ըսած էր թէ ուրբաթ ճամբայ պիտի ելլէինք Գերման հարիւրապետին հետ դէպի Համա:

Օղին խմելէ յետոյ պիտի երթայի վէսիքաս առնելու:

Այսպէս ուրեմն, բոլորովին ապահով կը զգայի ինքզինքս: Գինեպանին ըսի թէ՛ հետեւեալ օր կը մեկնէի Գերմաններուն հետ իբրեւ թարգման:

Նոյն միջոցին ներս մտաւ Ձիա, ոտքի վրայ օղի մը խմեց եւ դուրս ելաւ:

Ես ալ երկրորդ գաւաթս խմելու վրայ էի, 50 տիրէմնոց մեծակակ գաւաթ մը, երբոր ոստիկան մը ներս մտաւ եւ քովս գալով ըսաւ.

– Քիչ մը ոստիկանատուն հրամմէ՛:  
 – Սա գաւաթս լմնցնեմ եւ երթանք, – ըսի:  
 – Վերադարձիդ կը խմես, – պատասխանեց:  
 Յետոյ գինեպանին դառնալով աւելցուց.  
 – Էֆէնտիին գաւաթը պահէ՛:  
 Մտանք միւտրիէթը որ նախապէս Պաղտատ օթէլն էր եւ  
 գոր կառավարութիւնը պատերազմի միջոցին գրաւած էր:  
 Ոստիկանը զիս առաջնորդեց սէր քօմիսէր ձէմիլ պէյի սե-  
 նեակը:  
 Այս վերջինը երկայնահասակ, նիհար, թուխ մարդ մըն էր:  
 – Անունդ ի՞նչ է, – հարցուց:  
 – Սահակ օղլու Երուանդ, – պատասխանեցի:  
 – Ուրկէ՞ կուգաս:  
 – Գերմանացի հարիւրապետ էտվալի հետ Տէր-Ջօրէն կու-  
 գամ ուր գացած էի իբրեւ թարգման:  
 – Հիմա հոս ի՞նչ կ'ընես:  
 – Կրկին Գերմաններուն քով թարգման եմ, վաղը պիտի մեկ-  
 նիմ դէպի Համա:  
 – Վէսիքադ ո՞ւր է:  
 – Վէսիքաս հիմայ պիտի երթայի առնելու, երբոր ոստիկա-  
 նը եկաւ զիս կանչեց:  
 – Այս միջոցիս գրպանդ վէսիքա ունի՞ս, – պոռաց ձէմիլ պէյ  
 բարկաճայթ ձայնով մը:  
 – Ո՛չ, – պատասխանեցի:  
 – Ուրեմն բոլոր ըսածներդ սուտ են... վեր վերցուր ձեռ-  
 քերդ:  
 Երկու թեւերս վեր բարձրացուցի:  
 – Լաւ մը խուզարկէ՛ վրան գլուխը, – հրամայեց քօմիսէրը  
 քովս կեցող ոստիկանին:  
 Վրայէս գտան մէկ արծաթ մէճիտ, «Ժամանակ»ի թիւ մը,  
 «Օսմանիչէր Լօյտ»ի կտոր մը, ժամացոյց մը եւ թուղթ մը որուն  
 վրայ նշանակուած էր ակնոցի թիւս:

Այդ թուղթը, տքթոր Հէքիմեանի յանձնարարութեան  
 վրայ, տուած էր թուրք զինուորական ակնաբոյժ մը Հիլալ հի-  
 ւանդանոցին մէջ աչքերս քննելէ ետքը եւ կը կրէր իր ստորագ-  
 րութիւնը:

– Ի՞նչ է այս թուղթը եւ ի՞նչ կը նշանակեն այս թուանշան-  
 ները, – հարցուց քօմիսէրը խստութեամբ:

Բացատրեցի իրեն ի՛նչ ըլլալը:

Ձէմիլ պէյ չափազանց յուսախաբ կը թուէր խուզարկու-  
 թեան արդիւնքէն:

– Ի՞նչպէս կ'ըլլայ որ վրադ որեւէ թուղթ կամ նամակ չի  
 գտնուիր, – հարցուց:

– Ես նամակ գրելու սովորութիւն չունիմ, – պատասխանե-  
 ցի, – հետեւաբար ինծի ալ գրող չըլլար:

– Դաշնակցակա՞ն ես թէ հնչակեան:

– Ո՛չ մին, ո՛չ միւսը:

– Ատիկա ետքէն յայտնի կ'ըլլայ... վեր վերցուր թեւերդ:

Նորէն թեւերս վեր բարձրացուցի:

– Լաւ մի խուզարկէ՛ վրան, – հրամայեց ոստիկանին, – ա-  
 ռաջին անգամ աղէկ չխուզարկեցիր:

Ի գո՛ւր խեղճը աշխատեցաւ վրայէս բան մը գտնելու:

Ոչինչ, ոչինչ:

Սէր քօմիսէրը այս անգամ համոզում գոյացուց թէ իրաւցնէ  
 բան մը չունիմ վրաս, այսուհանդերձ հրամայեց ոստիկանին:

– Տար այս մարդը որպէսզի իֆատէն առնուի:

Փորձեցի վերջին անգամ, օձիքս ազատելու համար, Գերմա-  
 նացիները առաջ քշել:

– Հարիւրապետ էտվալ ինծի կը սպասէ, – ըսի, – թոյլ տուէք  
 որ ոստիկանի մը հետ իր տունը երթամ ու յետոյ գամ հոս...

Իմ դիտաւորութիւնս էր երթալ պ. էտվալը գտնել եւ իր  
 պաշտպանութիւնը խնդրել ինծի համար ու միեւնոյն ատեն  
 ձերբակալուած ըլլալս իմացնել:

Բայց հագիւ թէ այս խօսքերը արտասանած էի՝ ձէմիլ պէյ  
 կատաղի բարկութեամբ մը պոռաց.

– Գետնին տակն անցնիք դուն ալ Հարիւրապետն ալ... Հոս թուրքիա է, Գերմանացիները չեն իշխեր, այլ թուրքերը, քու գլուխդ կը ջախջախեմ եթէ անգամ մըն ալ Գերմանացիներուն խօսքը ընես...

Լռիկ մնջիկ ստիպուեցայ Հետեւիլ ոստիկանին որ թեւէս քաշելով զիս դուրս հանեց եւ տարաւ սենեակ մը ուր երկու երեք ոստիկանական պաշտօնեաներ նստած էին գրասեղաններու առջեւ: Մօտեցաւ դեղին պիտերով երիտասարդի մը եւ ըսաւ.

– Մէհմէտ Ալի էֆէնտի, այս մարդուն իֆատէն պիտի առնուի:

– Սպասէ՛ քիչ մը, – ըսաւ պաշտօնեան ինծի դառնալով: Պարապ աթոռ մը կար գրասեղանին մօտ, նստայ վրան: Բաւական սպասելէ ետքը, Մէհմէտ Ալի պահ մը դուրս ելաւ սենեակէն.

– Երթամ սէր քօմիսէրէն խնդիրը հասկնամ, – ըսելով եւ յետոյ վերադարձաւ:

– Հոս հանգիստ չենք կրնար խօսիլ, – ըսաւ ինծի, – եկ՛ուր Հետս առանձին սենեակ մը երթանք:

Եւ գացինք բո՛ւն իսկ ոստիկանութեան տնօրէնին սենեակը ուր ոչ ոք կար, տնօրէնը անհանգիստ ըլլալուն նոյն օրը:

Հո՛ն սկսաւ զիս հարցուփորձել մանրակրկիտ կերպով:

Ըսի իրեն թէ պոլսեցի էի, անունս Սահակ օղլու Երուանդ էր, արհեստս լամպաճի, թէ լամպա ծախելու համար Ատաբազար կը գտնուէի երբ զիս ալ տեղացիներուն հետ տարագիր ըրին, եւ այլն:

Հարցուց թէ Պոլիս ո՛ւր կը բնակէի, տուի հասցէս:

– Անկէ առաջ ո՛ւր կը բնակէիր, – հարցուց:

Նախկին տանս հասցէն ալ տուի:

– Իսկ անկէ առաջ...

Ու այսպէս մանրամասն գիտնալ կ'ուզէր բնակած տուներուն փողոցին անունը, տանը թիւը, թաղին անունը, տանտիրոջ անունը, եւ այլն, եւ այլն:

Եւ կը գրէր ու կը գրէր:  
Վերջապէս եկանք մեր Տէր-Ջօրէն Հալէպ հասնելուն: Իրեն ալ կրկնեցի թէ Գերման հրամանատարին հետ եկած էի:

– Ուրիշ Հայեր կայի՞ն ձեզի հետ, – հարցուց:

– Այո՛, – պատասխանեցի, – տէրթեօլցի Ովսաննա Պայեանը եւ ատաբազարցի Անդրանիկ անուն տղայ մը:

– Հիմա հոս ո՞ւր կը բնակիս:

– Պապը Նասըրի կողմերը:

– Ո՞ր փողոց, ո՞ր տուն:

– Ո՛չ փողոցին անունը գիտեմ, ո՛չ տան թիւը, – պատասխանեցի, – բայց եթէ պէտք ըլլայ տեղը կրնամ ցոյց տալ:

Երկու ժամէն աւելի տեւած էր հարցաքննութիւնը եւ Մէհմէտ Ալի ամբողջ երեսներ լեցուցած էր:

Հարցաքննութիւնս ստորագրել տուաւ ինծի, յետոյ ոստիկան մը կանչեց եւ ըսաւ.

– Թիւ 17 սենեակը տար այս մարդը եւ հոն բանտարկէ՛:

Շէնքին ետեւի կողմը, միակ խոշոր պատուհանով բաւական մեծակ սենեակ մըն էր, զետինը գաճով ծածկուած:

Իբրեւ կարասի փոքրիկ սեղան մը, աթոռ մը եւ դարակ մը կար միայն:

Ոստիկանը զիս ներս մտցուց, դուռը վրայէս կղպեց եւ հեռացաւ:

Յուսահատութիւնը պատած էր վրաս: Սէր քօմիսէրին խիստ վարձուքը, Մէհմէտ Ալիի ամենախիստ հարցաքննութիւնը բնա՛ւ քաջալերիչ չէին ինծի համար: Մինչեւ իրիկուն սենեակիս մէջ շրջեցայ անընդհատ սիկառէթ ծխելով: Կը մտածէի թէ արդեօք հարցաքննութեանս միջոցին անխոհեմ խօսք մը փախցուցած էի բերնէս.

Յիշեցի թէ բնակարանս յայտնած էի եւ ըսած էի որ թէեւ փողոցին անունը եւ տանը թիւը չէի գիտեր. բայց կրնայի գիտնալ: Արդ եթէ սենեակս խուզարկելու պէտք տեսնէին ու զիս ոստիկանական հսկողութեամբ հոն տանէի՞ն...

Իրա՛ւ է որ քովս ո՛չ մէկ վտանգալից բան կար, բայց ոստիկանները կրնային սենեակին մէջ գտնել Միքայէլ Մործիկեանը եւ զայն ալ ձերբակալել: Ձգացի որ մեծ անխոհեմութիւն ըրած էի բնակարանիս տեղը յայտնելով: Որոշեցի որ եթէ խուզարկութեան խնդիրը յարուցանեն, ուրանամ ըսածս:

Իրիկունը դուռս բացուեցաւ եւ ծերունի ոստիկան մը ներս մտաւ.

– Գինեպանը եկեր է առնելիք ունի եղեր կը պահանջէ կոր, 4 պարզուա (8 զրուշ) պիտի տաս եղեր, – ըսաւ:

Մէծիտիէն իրեն յանձնեցի:

– Եթէ ուտելիք բան մը կ'ուզես առնել տամ, – աւելցուց:

– Մնացած 12 զրուշով հաց, պանիր եւ ծխախոտ առնել տուր, – պատասխանեցի:

Ախորժակ չունէի արդէն, միշտ փորձած եմ որ բանտարկութեան առաջին օրը մարդուս ախորժակը կը գոցուի, որչափ ալ վարժուած ըլլայ բանտային կեանքի:

Գիշերը գրեթէ անքուն անցուցի աթոռին վրայ, արմուկներս սեղանին վրայ դրած ու գլուխս թեւիս յենած:

Ի՞նչ պիտի ընէին այս մարդիկը ինծի, հարիւր տեսակ ենթադրութիւններ կ'ընէի այս մասին, որոնց եւ ո՛չ մին վարդապոյն էր:

Հետեւեալ օր, ուրբաթ, միւտիւրիէթը գոց էր, հետեւաբար գէշ կամ աղէկ որոշում մը չէր կրնար տրուիլ իմ մասին:

Ցերեկին ծեր ոստիկանը դուռը բացաւ եւ ըսաւ.

– Տղան եկած է, եթէ ուտելիք առնել պիտի տաս, ըսէ՛ ինչ որ կ'ուզես:

(Հայ տղայ մը կար որ այսպէս ցերեկ եւ իրիկուն կուգար եւ բանտարկեալներուն ուտելիք կամ ծխախոտ կը բերէր, փոխարէն փոքրիկ նուէր մը առնելով):

– Է՛, – ըսի, – բան մը չեմ ուզեր:

– Կէսօր է, բան պիտի չուտե՞ս...

– Ձէ՛:

– Հիւա՞նդ ես, – հարցուց ոստիկանը:

– Բան չունիմ, բայց ուտելիք չեմ ուզեր:

– Ինչո՞ւ համար, – պնդեց:

– Որովհետեւ դրամ չունիմ, – պատասխանեցի: Արդարեւ քովս հազիւ 20-30 փարա մնացեր էր:

Մեր ոստիկանը տխրութեամբ գլուխը օրօրեց, յետոյ գրպանէն քսակը հանեց, բացաւ եւ ինծի ներկայացուց, ըսելով.

– Ա՛ն մէջէն ինչ որ կ'ուզես:

Մէծիտիէ մը առի եւ շնորհակալութիւն յայտնեցի:

Այդ դրամը բաւեց առտուան եւ իրիկուն ճաշերուս եւ ծխախոտիս:

Գիշերը դարձեալ աթոռին վրայ անցուցի մինչեւ առտու: Եթէ գետինը տախտակամած ըլլար պիտի փռուէի պառկէի, բայց, ինչպէս ըսի, գաճով ծածկուած էր:

Քունս այնքան եկած էր որ աթոռին վրայ նստած, գլուխս սեղանին, կրցայ քնանալ քանի մը ժամ:

Շաբաթ առտու ոստիկան մը եկաւ ու զիս տարաւ ձէմիլ պէյի քով:

Մէր քօմիսէրը կրկին խիստ դաժանօրէն ընդունեց զիս:

– Անունդ ի՞նչ էր, – հարցուց:

– Սահակ օղլու Երուանդ:

– Ի՞նչեան...

– Սահակ օղլու, – կրկնեցի:

– Հայերուն մականունները եանով կը վերջանան, դուն ի՞նչեան ես:

– Սահակ օղլու, կամ եթէ կ'ուզէք Սահակեան, միեւնոյն բանն է:

– Սուտ կը խօսիս, – պոռաց, – մեզի խաբել կ'ուզես:

– Ինչո՞ւ պիտի խաբեմ, անունս Երուանդ է, հօրս անունը Սահակ:

– Ո՛չ, քու անունդ Երուանդ Օտեան է, դուն լամպաճի չես, այլ «Ազատամարտ» թերթին խմբագիր, ո՛չ թէ Ատաբազարէն

տարագիր եղած ես, այլ Պոլսէն աքսորուած ես, անցած տարի ալ Համայէն Տէր-Ձօր աքսորուած ես...

– Ամէնքն ալ ճիշտ են, – ստիպուեցայ խոստովանիլ, – միայն սխալ մը կայ ձեր ըսածներուն մէջ, ո՛չ թէ «Ազատամարտ»ի՛ այլ «Փամանակ» թերթի խմբագիր եղած եմ:

– Ինչո՞ւ ուրեմն սուտ խօսեցար:

– Ի՛նչ ընեմ, – ըսի կէս մը շփոթած կէս մըն ալ կատակի ձեւով, – մինչեւ Հիմա ճշմարիտ խօսեցայ փորձանքը գլխէս պակաս չեղաւ: Այս անգամն ալ սուտը փորձեցի, բայց կը տեսնամ որ ան ալ օգուտ մը չունեցաւ:

– Քեզի կը հասկցնեմ սուտ խօսելը, – ըսաւ սէր քօմիսէրը խիստ ձեւով մը:

Յետոյ, ոստիկանին դառնալով աւելցուց.

– Տա՛ր աս մարդը Մէհմէտ Ալի էֆէնտիին քով եւ թո՛ղ նորէն իֆատէն առնուի...

– Չըլլայ որ այս անգամ կրկին սուտ խօսիս, – ըսաւ ինծի դառնալով, – ետքը գիտցած ըլլաս, շատ գէշ կ'ըլլայ վիճակը...

– Արդէն մէկ երկու կէտեր միայն սխալ են, – դիտել տուի, – միւս բոլոր ըսածներս կէտ առ կէտ շիտակ են:

Երկրորդ հարցաքննութիւնս շատ երկար չտեւեց եւ զիս նորէն տարին խցիկս:

Կէսօրին մօտ օտաճի\* Իսմայիլ աղան եկաւ քովս: Իմ վիճակովս հետաքրքրուեցաւ, խղճաց վրաս որ երկու գիշեր աթոռին վրայ անցուցած էի, հարցուց թէ ի՞նչ ամբաստանութիւն կար վրաս:

– Չեմ գիտեր, – պատասխանեցի:

– Յանցանքդ պարզապէս Հայ ըլլալդ է, – ըսաւ:

Յետոյ հարցուց.

– Ինչո՞ւ ծածկոց մը եւ անկողին մը բերել չես տար, այստեղ եթէ այս վիճակին մէջ քանի մը օր ալ մնաս, հիւանդ կ'ըլլաս:

\* Սեմեկապետ:

– Հրաման չեն տար կոր դուրսի հետ յարաբերութիւն ընելու:

– Գոնէ քովդ դրամ ունի՞ս:

– Ո՛չ, – պատասխանեցի, – երէկ ոստիկանէ մը մէծիտ մը առի, ան ալ սպառեցաւ:

– Այսօր ի՞նչ պիտի ընես:

– Չեմ գիտեր...

Մարդը պահ մը մտածեց, յետոյ քսակը հանեց եւ 15 դրուշ արծաթ դրամ տուաւ:

– Երբոր ունենաս, կը վերադարձնես, – ըսաւ:

Յերեկը այդ դրամով կրցայ ճաշել եւ ծխախոտ գնել:

Իսկ իրիկունը Արիֆ էֆէնտի անուն ոստիկանէ մը 10 դրուշ առի:

Կարծեմ ամբողջ հինգ տարուան ընթացքին չէ գտնուած միակ Հայ մը որ բանտին մէջ ոստիկանները տօլանտըրմիշ\* ըրած ըլլայ:

Գիշերը բաւական յառաջացած էր եւ ես գէշ աղէկ կը քնանայի աթոռիս վրայ երբ եկան յանկարծ ինծի արթնցուցին «Ճէմիլ պէյը կ'ուզէ կոր» ըսելով:

Գիշերային այս հրակէրը զիս բաւական շփոթեցուց: Աչքերս չփեցի եւ հետեւեցայ ոստիկանին:

Ճէմիլ պէյ իր գրասեղանին առջեւ բազմած էր առանձին:

Նախ՝ ոտքի վրայ կեցուց զիս:

– Գէշ տեղեկութիւններ առինք քու մասիդ, – ըսաւ խիստ շեշտով մը, – դուն վնասակար մարդ մըն ես եղեր, դաշնակցականներուն գլխաւորներէն մէկը:

– Սխալ եւ սուտ է, – պատասխանեցի, – ես երբեք յեղափոխական ո՛ր եւ է կուսակցութեան չեմ պատկանած, ընդհակառակը քսան տարիէ ի վեր անոնց դէմ պայքարած եմ, ասիկա ամէն լրագիր կարդացող Հայ գիտէ: Կանչեցէ՛ք ո՛ր եւ է Հայ մը եւ հարցուցէ՛ք թէ Օտեանը ո՞ր կուսակցութեան կը պատկանի եւ

\* Այստեղ՝ մէկից հնարամտութեամբ դրամ կորգել:

պիտի տեսնէք որ պիտի ըսէ թէ ո՛չ մէկ կուսակցութեան կը պատկանիմ:

– Պարապ խօսքեր մտիկ չեմ կրնար ընել,– ըսաւ ձէմիլ պէյ,– դուն վնասակար մարդ ես, եթէ այդպէս չըլլայիր, քեզ Պոլիսէն չէին աքսորեր: Պոլսոյ Հայութիւնը մուհաճիր չեղաւ, միայն վնասակար մարդիկը քշեցին, Հետեւաբար դուն ալ վնասակար ես... պատրաստուէ՛, Տիարպէքիր պիտի երթաս:

Տիարպէքիրի անունը լսելու՝ յուսահատութիւնը պատեց զիս: Կը նախընտրէի Տէր-Ջօր վերադառնալ ուր գոնէ բարեկամներ ունէի եւ յետոյ կը յուսայի նոյնիսկ ճամբան փախչիլ եւ ապաստանիլ Համմամի կամ Թիպնէի ծանօթ Հայերու քով, մինչդեռ Տիարպէքիրի ճամբան բոլորովին անծանօթ էր ինծի:

– Գոնէ,– ըսի,– Տէր-Ջօր զրկեցէ՛ք զիս:

– Չէ՛,– պատասխանեց,– որոշումը տրուած է, Տիարպէքիր պիտի երթաս:

– Բայց ինչպէ՞ս կրնամ երթալ այդքան ճամբան,– առարկեցի,– ո՛չ կառք եւ ո՛չ ալ ձի վարձելու դրամ ունիմ, եւ ո՛չ իսկ Հացի դրամ կայ քովս: Երկու օրէ ի վեր ոստիկաններէն եւ օտաճի Իսմայիլ աղայէն փոխ դրամ առնելով կ'ապրիմ կոր:

– Ոտքով կ'երթաս,– պատասխանեց:

– Ուտելիք չունիմ:

– Քեզի Հաց կուտան ճամբան:

– Բայց այս տարիքիս ինչպէ՞ս կրնամ Հեծեալ ոստիկանին Հետեւիլ օրերով, Հաւատացէ՛ք կէս ճամբան պիտի մնամ...

– Ատ մասին բնա՛ւ մի՛ մտածեր,– պատասխանեց սէր քօմի-սէրը ամենայն պաղարիւնութեամբ,– արդէն քեզի ընկերացող ոստիկանը՝ յիմար չէ որ մինչեւ Տիարպէքիր տանի քեզ... ասկէ ճամբայ ելլելնէդ քանի մը ժամ ետքը քեզ կը սպաննէ ու կը վերադառնայ:

Եւ այս խօսքերը կ'արտասանէր իբրեւ շատ սովորական բան մը ըսելու պէս: Եւ ամէնէն սարսափելիին այն էր որ կէտ առ կէտ ճիշտ էր ըսածը: Բոլոր անոնք որ առանձնաբար մինչեւ Տիարպէքիր աքսորուած էին, ո՛չ մէկը իր տեղը Հասած էր:

– Կը տեսնա՞ս որ ճամբու Համար Հոգ ընելու պատճառ մը չունիս,– ըսաւ ձէմիլ պէյ:

Չպատասխանեցի:

– Մէկ միջոց մը կայ Տիարպէքիր չերթալու,– աւելցուց պահ մը լուռ մնալէ ետքը:

– Ի՞նչ միջոց,– Հարցուցի:

– Հալէպ գտնուող ընկերներու գանձները կը յայտնես մեզի:

– Ի՞նչ ընկեր:

– Դաշնակցական կամ Հնչակեան:

– Այդ մարդոցմէ ո՛չ մէկը կը ճանչնամ, ես Հալէպ գրեթէ մարդ չեմ ճանչցած:

– Սուտ կը խօսիս, ճշմարիտը ըսէ՛ որ Տիարպէքիր չերթաս:

– Ո՛չ մէկը կը ճանչնամ,– կրկնեցի:

– Այստեղ գալէդ ի վեր մարդու Հետ չե՞ս տեսնուած:

– Տեսնուած եմ մէկ քանի ծանօթներու Հետ, բայց անոնք ո՛չ դաշնակցական են ո՛չ Հնչակեան:

– Որո՞նց Հետ տեսնուեցար:

– Գարեգին էֆէնտի ձիւրճեանի,– պատասխանեցի:

– Հա՛,– ըսաւ,– դաշնակցականներու պետն է:

– Չեմ կարծեր, եթէ դաշնակցականներուն պետը ըլլար, մինչեւ Հիմա ազատ չէր պտտեր եւ իտարէ մէճլիսիի\* անդամ չէր ըլլար:

– Ուրի՞շ որու Հետ տեսնուեցար:

– Յովհաննէս էֆէնտի ձիւրճեանի Հետ:

– Անիկա կարծեմ Հնչակեան է:

– Լուր չունիմ, միայն թէ իր խօսքերէն այնպէս տեսայ որ յեղափոխականներու Հակառակ մարդ մըն է:

– Պարզեւ Փափագեանը տեսա՞ր:

– Այո՛, մէկ քանի անգամ տեսայ:

– Անոր Համար ըսելիք չունիս, յեղափոխական է:

\* Օսմանեան արդարադատութեան մէջ կառավարիչ խորհուրդ:

– Ընդհակառակը անոր համար կրնամ պնդել թէ յեղափոխական չէ բնաւ, որովհետեւ մօտէն կը ճանչնամ զինքը...

– Մօտէ՞ն կը ճանչնաս...

– Այո՛, երկուքս ալ պոյսեցի ենք եւ հին ծանօթներ:

– Բայց Պարգեւ Փափազեանը դաշնակցականներուն կողմէ Եգիպտոսս պացած է:

– Բոլորովին սխալ, պէյ էֆէնտի, Պարգեւ Փափազեանը Պատրիարքարանի կողմէ եւ պետութեան արտօնութեամբ Երուսաղէմ գացած է ու վերադարձին հանդիպած է նաեւ Եգիպտոսս:

– Ինչո՞ւ ուրեմն զինքը Պոլսէն աքսորած են:

– Չեմ գիտեր պատճառը, ինչպէս չեմ գիտեր նաեւ թէ ինչո՞ւ զիս ալ աքսորեցին:

– Միքայէլ Նաթանեանը կը ճանչնա՞ս...

– Այո՛, զինքը առաջին անգամ Եգիպտոսս տեսած եմ, հոս ալ մէկ երկու անգամ տեսայ:

– Ո՞ր կուսակցութեան կը պատկանի:

– Չեմ կարծեր որ կուսակցական ըլլայ:

Վերջապէս մէկիկ մէկիկ ծանօթներուս մասին հարցուփորձել էտքը, յանկարծ իր շեշտը մեղմացուց եւ հրաւիրեց զիս որ քովը նստիմ:

– Նաթանեանները ես Վանէն կը ճանչնամ,– ըսաւ,– որովհետեւ ես ալ վանեցի եմ եւ շատ մտերիմ յարաբերութիւններ ունեցած եմ Հայերուն հետ:

Յետոյ սկսաւ դատապարտել յեղափոխականները ըսելով թէ անո՞նք եղած են պատճառ Հայ եւ թուրք հակառակութեան, որուն հետեւանքը եղած են ներկայ հալածանքներն ու ջարդերը: Ասոնց անմիջական պատճառն ալ ցոյց կուտար Վանի դէպքերը:

Այդ «Վանի դէպքեր»ը տարագրութեան ժամանակ շատ անգամներ լսած էի թուրքերու կողմէ, իբրեւ արդարացումը իրենց վայրագ հալածանքին ու անլուր գազանութիւններուն:

– Ի՞նչ են այդ Վանի դէպքերը,– հարցուցի:

– Ի՞նչպէս,– գոչեց,– տեղեկութիւն չունի՞ս:

– Չէ՛,– պատասխանեցի,– իմ Պոլիս գտնուած միջոցիս գրեթէ բան մը չէիք գիտեր Վանի մէջ անցած դարձածներէն, իսկ տարագրութեան մէջ ալ ո՛ր եւ է մանրամասնութիւն չկրցանք իմանալ:

Այն ատեն ձէմիլ պէյ պատմեց իր ուզածնին պէս անշուշտ, Վանի կռիւները, թէ ի՞նչպէս Հայերը նախայարձակ եղած են ու ջարդած են թուրք բնակչութեան մէկ մեծ մասը եւ այլն:

– Մեր տասը տարուան բարեկամ դրացին անգամ մեզի չի խնայեց,– ըսաւ,– ճիշդ մեր դէմը դրացի Հայ ընտանիք մը կը բնակէր, որուն հետ ընտանեկան յարաբերութիւններ ունէինք տարիներէ ի վեր: Եւ ահա՛ կռիւը ծագելուն կը տեսնեմ մեր բարեկամը որ պատուհանէն հրացանը փողոց ուղղած թուրք անցորդներուն վրայ կրակ կ'ընէ. միջոց մը գլուխս պատուհանէն դուրս կը հանեմ: Մեր դրացին իսկոյն հրացանը ինծի կ'ուղղէ. «Բարեկամ,– կը գոչեմ,– ես եմ ձէմիլ է՛ր:– ձէմիլ մէմիլ չեմ ճանչնար,– կը պատասխանէ,– գլուխդ ներս քաշէ՛ եթէ ո՛չ հիմա կը կրակեմ»: Կացութիւնը այն աստիճանի հասաւ որ ստիպւեցանք քաղաքէն փախչելու: Մեր ընտանիքը, կինս, զաւակներս, եւ այլն, տասըմէկ հոգի էինք երբ ճամբայ ելանք, տասն ալ ճամբան մեռան եւ ես առանձին հասայ Հալէպ:

Յետոյ իր խօսքը շարունակելով՝ ըսաւ.

– Ի՞նչ պէտք ունէիք յեղափոխական շարժումներու, արդէն 20-30 տարիէն ամբողջ երկիրը ձերը պիտի ըլլար: Հարստութիւն, ուսմունք, գիտութիւն ամէն ինչ ձեր ձեռքն էր: Երեսփոխանական ընտրութիւններու ատեն, մենք թուրքերս Վանի մէջ երկրորդ կարգի ընտրողներ գտնելու համար շուարած էինք, որովհետեւ մարդ չունէինք, մինչդեռ Հայերը ո՛չ թէ միայն երկրորդ կարգի ընտրողներ, ալ նոյնիսկ շատ մը մէպուսցուներ ունէին...

Ձէմիլ պէյ սուրճ եւ ջուր բերել տուաւ մեր երկուքին համար, սիկառէթ հրամցուց եւ խօսակցութիւնը շարունակեց:



Այս մտերմութենէն քաջալերուած՝ իմ բանտային անտանելի վիճակս բացատրեցի իրեն:

— Այս երրորդ գիշերն է որ աթոռի վրայ կ'անցընեմ, — ըսի:

Ասոր վրայ ոստիկան մը կանչեց եւ ապսպրեց որ իսկոյն փսիաթ մը եւ գորգ տրամադրեն ինծի եւ վրաս ալ ծածկոց մը տան:

Յետոյ, նիւթական անձկութիւնս մէջտեղ դրի եւ խնդրեցի որ ինծի միջոց տար դուրսի հետ յարաբերութիւն ընելու եւ դրամ բերել տալու:

— Ուրկի՞ց դրամ պիտի բերել տաս, — հարցուց:

— Գարեգին էֆէնտի ձիէրճեանին երկտող մը եթէ գրեմ, թե-  
բեւս անկողին մը եւ քիչ մը դրամ ղրկէ, — ըսի:

— Աղէկ մտածեցիր, — պատասխանեց, — Գարեգին էֆէնտին իմ ծանօթս է եւ աղէկ մարդ է. գրէ՛ իրեն եւ նամակը ինծի բեր ես ղրկել կուտամ, իմ կողմէս ալ քանի մը բառ կը գրեմ որպէս-  
զի ապահով ըլլայ:

— Շատ շնորհակալ եմ, — պատասխանեցի:

Ու այսպէս սիրալիր կերպով բաժնուեցանք իրարմէ:

Ինծի հանդէպ սէր քովսէրին ընթացքին այս փոփոխութիւ-  
նը չկրցայ որեւէ կերպով բացատրել, բայց եւ այնպէս շատ գոհ  
տպաւորութեամբ դուրս ելայ քովէն ու նոյն գիշերը հանգիստ  
քուն մը քնացայ թանձր գորգի մը վրայ: Մերունի ոստիկանը,  
Մէհմէտ Ռիֆաթ, որ առջի օրէն ազնիւ վարմունք մը ունեցած  
էր ինծի հանդէպ, իր քափօթը տուաւ որպէսզի իրբեւ վերմակ  
գործածեմ եւ փոքրիկ բարձ մըն ալ հայթայթեց:

Հետեւեալ օր նամակս գնաց եւ ուշ ատեն անկողին, բարձ,  
վերմակ, եւ այլն, բերին ինչպէս նաեւ քիչ մը դրամ:

Նոյն օրը դարձեալ հարցաքննեց զիս Մէհմէտ Ալի էֆէնտի,  
ուրկէ ետք սէր քովսէրը ըսաւ թէ ազատ էի դուրսը գտնուող  
ծանօթներուս լուր ղրկելու որպէսզի գան զիս տեսնեն:

Քովսէրին հարցուցի թէ ի՞նչ պիտի ըլլար իմ վիճակս:

— Քանի մը օրէն յայտնի կ'ըլլայ, — պատասխանեց, — դեռ  
քու մասիդ քննութիւն կը կատարենք կոր:

17 թիւ սենեակը, ուր կը գտնուէի չորս օրէ ի վեր, յատկաց-  
ւեցաւ պաշտօնէութեան եւ զիս փոխադրեցին ոստիկաններու  
քովուշը որ ընդարձակ սենեակ մըն էր:

Այլեւս խիստ հսկողութեան ենթարկուած չէի: Առտուները  
մինչեւ ժամը 9 եւ իրիկունները ժամը 6-էն ետքը ազատ էի ըն-  
դարձակ նրբանցքին մէջ պտտելու, մնացած ժամերուն ալ քօ-  
վուշին երկու դռները միշտ բաց կը մնային, միայն պատուէր  
տրուած էր ինծի դուրս չելլելու:

Աէր քովսէրին ինծի ցոյց տուած բարեացակամութիւնը ազ-  
դած էր նաեւ ոստիկաններուն վրայ, որոնք լաւ վերաբերմունք  
մը ունէին ինծի հանդէպ:

Երկու օր ետքը ձէմիլ պէյ կրկին զիս քովը բերել տուաւ:

— Դուն այնինչ թուականին Բարիզ գտնուած ես եւ Գուլի-  
տոն Լուսինեանի քով իբրեւ քարտուղար աշխատած ես, — ը-  
սաւ:

— Զիշդ է, — հաստատեցի:

— Այնինչ թուականին Լօնտոն գտնուած ես:

— Այն ալ ճիշտ է:

— Յետոյ Վիեննա գտնուած ես Անտրօնիկ Եանէսքուլի քով:  
Յետոյ Եգիպտոս գտնուած ես ու իբրեւ հաշուակալ ծառայած  
եւ ձուլարանի մը մէջ, յետոյ Հնդկաստան գացած ես եղբորդ  
քով որ ադամանդի վաճառական է եւ այլն:

Ամէնքն ալ ճշգրիտ տեղեկութիւններ որոնք հաստատելէ  
զատ բան մը չէի կրնար ընել:

— Տեսա՞ր ինչպէս ամէն բան տեղն ի տեղօք գիտեմ, — ըսաւ  
սէր քովսէրը յաղթականօրէն:

— Բայց ես ատոնք արդէն մանրամասնօրէն պատմած եմ «Ժա-  
մանակ»ի մէջ ու յետոյ առանձին հատորով ալ հրատարակուած  
է, — պատասխանեցի:

Դիտեցի որ ամէն անգամ որ հարցում մը կ'ուղղէր ինծի, ակ-  
նարկը կ'ուղղէր գրասեղանին վրայ դրուած թուղթի մը:

Կրկին դէպի հոն ակնարկ մը նետելէ ետքը, ըսաւ:

- Դուռն օղի շատ կը սիրես եղբր:
- Երբեմն կը խմեմ, - պատասխանեցի:
- Ո՛չ, միշտ կը խմես եղբր:
- Միշտ չեմ կրնար գտնել, մանաւանդ տարագրութեան մէջ... յաճախ կա՛մ օղի չի գտնուիր կա՛մ դրամ: Երբեմն երկուքն ալ կը պակսին:

- Որչա՞փ կրնաս խմել:
- Յիսուն տիրէմ:
- Ձէ՛, շիտակ չես խօսիր, շատ աւելի կը խմես եղբր:
- Թերեւս կը խմէի երբոր աժան էր, բայց քանի օղիին գինը բարձրացաւ, քանակութիւնը ստիպուեցայ պակսեցնել:
- Հոս բանտին մէջն ալ կը գտնե՞ս կոր օղի:
- Դժբախտաբար ո՛չ:
- Եթէ քեզի շիշ մը ղրկեմ գոհ կ'ըլլա՞ս:
- Շատ շնորհակալ կ'ըլլամ:

Այս խօսքերէն ետքը ձէմիլ պէյ դարձեալ Հարցուց թէ յեղափոխական ո՞ր կուսակցութեան կը պատկանէի եւ ես կրկին պընդեցի թէ ո՛չ մէկ կուսակցութեան պատկանած եմ, ի վերջոյ ըսի:

- Զիս Պոլսէն աքսորած ատեննին ընդհանուր ապահովութեան պետը Պէտրի պէյն էր որ հիմակ Հալէպի կուսակալ է, իրեն ղիմեցէք ու իմ մասիս տեղեկութիւն Հարցուցէք, Հաւանօրէն գիտէ թէ ի՛նչ բանի համար աքսորուած եմ թէ կուսակցակա՞ն եմ կամ ո՛չ:

- Ատիկա աղէկ ըսիր, իրեն հարցնենք, - պատասխանեց ձէմիլ պէյ:

Ես միամտօրէն կը կարծէի թէ Պէտրի պէյ ճշմարտախօս մէկն էր, ասկէ գատ իրեն համար կ'ըսէին թէ Թալէաթի եւ Էնվէրի հետ գժտուած էր, անոնց ծայրայեղութիւններուն պատճառաւ եւ անոր համար զինք Պոլսէն հեռացուցած էին: Այս պարագան ալ նպաստաւոր վկայութիւն մըն էր իրեն համար:

Ձէմիլ պէյէն արտօնութիւն ուզեցի պ. Էտվալին նամակ մը գրել, դրամ ուզելու համար:

- Գրէ՛, ինչ որ կ'ուզես, - ըսաւ, - եւ ղրկէ՛ որու հետ որ կ'ուզես:

- Դեռ շատ պիտի երկարի՞ բանտարկութիւնս, - Հարցուցի:
- Տեսնենք Պէտրի պէյը ի՛նչ պիտի որոշէ, - պատասխանեց: Իսկոյն պ. Էտվալի երկտող մը գրեցի որով ձերբակալուած եւ բանտարկուած ըլլալս կ'իմացնէի եւ կը խնդրէի որ եթէ կարելի է, անպաշտօն կերպով իրենց կողմէ դիմում մը ըլլայ կուսակալին կամ ոստիկանական տնօրէնին որպէսզի կա՛մ զիս ազատ թողուն եւ կա՛մ գոնէ մօտակայ տեղ մը աքսորեն, միեւնոյն ատեն դրամ ալ ուզած էի իրմէ: Պ. Էտվալ դրամը ղրկեց Ովսանա Պալեանի հետ եւ իմացուց թէ իրենց կողմէ ո՛ր եւ է միջամտութիւն կարելի չէր, որովհետեւ արգելուած էր իրենց քաղաքական ներքին խնդիրներու միջամտել:

Այդ օրերուն էր որ ծանօթ մատնիչ Արշաւիր եկաւ զիս գտաւ եւ ըսաւ թէ իրմէ իմ մասիս տեղեկութիւններ ուզած էին եւ ինքն ալ գրաւոր կերպով Հաղորդած էր:

- Զանացի որ կրցածիս չափ անվնաս բաներ գրեմ, - ըսաւ: Յետոյ իմացայ որ, այն թուղթը որուն կը նայէր ձէմիլ պէյ զիս հարցաքննած ատեն, Արշաւիրին տեղեկագիրն է եղեր եւ իրապէս ինծի նպաստաւոր գրուած: Արշաւիր իր տեղեկագիրն վերջը աւելցուցած է. «Այս մարդը ազգին մէջ ծանօթ է երկու բանով, նախ իբրեւ հակայեղափոխական եւ երկրորդ իբրեւ խմող»:

Երկուքն ալ իմ գտնուած վիճակիս մէջ, լաւ վկայութիւններ: Անկէ ետքը մէկ քանի անգամներ Արշաւիր եկաւ նորէն զիս տեսնելու եւ իմ գործիս մասին տեղեկութիւններ տալու:

Թէեւ ձէմիլ պէյ արտօնած էր որ դուրսի ծանօթներու հետ տեսակցիմ, բայց ո՛չ ոք կը համարձակէր գալու, բացի փախուստի մեր ընկերուհիէն, տիկին Տիրուհի Ճըզըրլեանէ որ մէկ քանի անգամներ եկաւ ու ձեռքէն եկած օգնութիւնը չզլացաւ:

Բանտի կեանքս շատ տանելի էր: Ազատօրէն կը պտտէի ընդարձակ նրբանցքին մէջ, պատշգամը կ'ելլէի ու փողոցի ան-

ցուղարձը կը դիտէի, մինչեւ վարի դուռը կ'երթայի որեւէ զնուժ մը ընելու համար, վերջապէս գրեթէ բանտարկեալ չէին նկատեր զիս:

Յաճախ կը հրաւիրէին զիս որպէսզի թարգման ըլլամ օտարականներու մօտ: Երբեմն ալ ձերբակալուած անձերու վրայէն գտնուած ֆրանսերէն կամ հայերէն նամակները թարգմանել կուտային, թէեւ հայերէն կարդացող եւ հասկցող մէկ քանի ուստիականներ կային:

\* \* \*

Պէտրի պէյ իմ մասիս որոշում մը չկրցաւ տալ եւ ըսած էր որ ինծի համար պէտք էր ներքին գործերու նախարարութենէն հրահանգ ուզել:

Երբ իմացայ այս կարգադրութիւնը, բաւական մտաւանջութեան մատնուեցայ: Երբեք աղէկ կարգադրութիւն մը չէի յուսար ներքին գործերու նախարարութենէն:

— Առնուազն ամիս մը պիտի սպասես, մինչեւ որ պատասխան մը գայ Պոլսէն, — ըսած էր ինծի ձէմիլ պէյ:

Այդ սպասումը հոգս չէր, որովհետեւ, ինչպէս ըսի, բանտային կեանքս կարելի եղածին չափ լաւ էր, նոյնիսկ կրնամ ըսել թէ հաճելի էր: Առտուան ժամը 9-էն մինչեւ իրիկուան ժամը 6 իրարանցումի մէջ կ'ապրէինք:

Զինուորական փախստականներ, գողեր, ոճրագործներ, անբարոյական կիներ, քաղաքական յանցաւորներ, գինովներ, քսակահատներ, վերջապէս ամէն տեսակ մարդիկ կուգային կ'անցնէին ոստիկանական նրբանցքէն:

Յաճախ ես ալ ոստիկաններուն հետ հսկողութիւն կը կատարէի անոնց վրայ կամ կ'երթայի չուան բերելու որպէսզի ձեռքերնին կապեն: Ոստիկաններուն վստահութիւնը այնքան շահած էի որ ուրբաթ օրեր երբ ոստիկանատունը գոց կ'ըլլար եւ

հազիւ մէկ երկու ոստիկան կը մնային իբրեւ պահապան, անոնք ալ կը ձգէին կ'երթային, բանտին բանալին ինծի յանձնելով. որպէսզի եթէ բանտարկեալ մը բնական պէտքը գոհացնելու զէ, դուռը բանամ եւ առաջնորդեմ զինքը ուր որ անկ է:

\* \* \*

Յաճախ զուարճալի եւ տարօրինակ բաներ կը պատահէին ոստիկանատան մէջ:

Օր մը խումբ մը Հայ երիտասարդներ բերին իբրեւ զինուորական ծառայութենէ խոյս տուողներ: Այդ տեսակ փախստականները նախկը բերուէին ոստիկանատուն եւ հոնկէ ալ կը յանձնուէին զինուորական իշխանութեան:

Մարդիկը նրբանցքին մէջ կեցած, չուանով մը իրարու կապուած, կը սպասէին որ ճամբայ հանուին դէպի զօրանոց: Իրենց մէջ մին, 22-23 տարեկան երիտասարդ մը, կը յաջողի չուանը քակել եւ փախչիլ:

Փախուստը իսկոյն կը նշմարուի եւ քանի մը ոստիկան զինքը կը հետապնդեն:

Կէս ժամ յետոյ ձերբակալուած կը բերեն զինքը եւ կ'առաջնորդեն քօմիսէր մուսավինի Հագգը էֆէնտիի սենեակը:

Ճիշդ այդ սենեակին դէմն էր ոստիկաններու քօվուշը ուր կը կենայի ես եւ որուն դրան առջեւ կեցած էի նոյն միջոցին:

Երիտասարդը ահ ու դողի մէջ էր, որովհետեւ յայտնի էր որ սարսափելի ծեծ մը պիտի ուտէր:

Հազիւ թէ մուսավինին սենեակը մտած՝ աղաղակ մը լսեցի, որուն յաջորդեց մարմինի մը անկումին ձայնը, ապա լուրթիւն...: Բանի մը վայրկեան ետք սենեակին դուռը բացուեցաւ եւ երկու ոստիկաններ երիտասարդը քաջշելով դուրս հանեցին եւ տարին բանտը դրին:

Բանտը միակ պատուհան մը ունէր նրբանցքին վրայ բաց-

լած, գացի այդ պատուհանէն նայելու եւ տեսայ որ երիտասարդը դիակի մը պէս փռուած էր գետին:

— Կ'երեւայ որ ծածին սաստկութենէն մարած է,— մտածեցի:

Թէեւ այդչափ սաստիկ ծածելու չափ ժամանակ չէր անցած:

Կէս ժամ անցաւ եւ մարդը միշտ գետին փռուած անշարժ կը մնար, հակառակ որ երեսը ջուր թափած էին, թեւին երակները շփած, եւ այլն:

Միւս բանտարկեալները սկսան բողոքել եւ պահանջել որ դուրս հանուի այդ մարդը զոր մեռած կը նկատէին:

Մէկ երկու ոստիկան գացին քննեցին, կրկին ջուր ըրին երեսը, դեղերը շնչել տուին, անօգուտ:

Վերջապէս որոշում տրուեցաւ թէ իրօք մեռած է: Եւ բանտէն հանելով բերին փոքրիկ գաւթի պէս տեղ մը ու քարին վրայ պառկեցուցին:

Ես ալ գացի մօտէն զինքը տեսնելու, ձեռքերը բռնեցի, պաղած էին: Ոստիկանատան պաշտօնեաներ միահամուռ կ'ըսէին թէ մեռած է:

Բայց ինչպէ՞ս:

— Կ'երեւայ որ զինքը խեղդեցին,— կը մտածէի:

Քանի մը ժամ անցաւ: Հազգը էֆէնտի, որուն սենեակին մէջ տեղի ունեցած էր տուամը, վրդոված կերպարանքով, ատեն ատեն, կուգար կը դիտէր գետին փռուած անշարժ երիտասարդը եւ կը վերադառնար իր սենեակը:

— Բժիշկ մը բերել տանք,— ըսաւ անգամ մը:

— Անօգուտ է,— դիտել տուին քովինները,— յայտնի է որ մեռած է:

— Բայց մեռնելու բան մը չեղաւ, հազիւ թէ ներս մտած էր, խարազանի հարուած մը զարկինք պոռաց ու գետին ինկաւ:

— Թերեւս սրտի հիւանդութիւն ունէր,— առարկեց մէկը:

Գիշեր եղաւ: Բոլոր պաշտօնեաները գացին: Հազգը էֆէնտի միշտ վրդոված դէմքով կուգար տեսնելու թէ ի՞նչ եղած էր երիտասարդը: Յայտնի կ'երեւար որ խղճահարութիւն ունէր եւ թե-

րեւս պատասխանատուութենէ կը վախնար: Բնակարանէն անկողին բերել տուաւ, որպէսզի գիշերը ոստիկանատուն անցնէ:

— Այս ի՞նչ փորձանքի հանդիպեցանք,— կ'ըսէր:

Միջոց մը կրկին քովը գացի, սիրտը շօշափեցի եւ տեսայ որ կը բարախէր, թէեւ ձեռքերը միշտ պաղ էին, բայց ասոր պատճառը թերեւս այն էր որ քարին վրայ փռած էր զանոնք:

Վազեցի Հազգը պէյին քով:

— Այս մարդը չէ մեռած,— ըսի,— սիրտը կը բարախէ կոր:

— Իրա՞ւ կ'ըսես,— գոչեց ուրախութեամբ:

— Պէտք է անմիջապէս բժիշկ մը կանչել:

Իսկոյն թէլէֆօն ըրին ոստիկանատան բժշկին որ երիտասարդ Հայ մըն էր, կարծեմ Վահան էֆէնտի անունով:

Բժիշկը եկաւ, քննեց եւ ըսաւ որ մեռած չէ, թէ որեւէ վէրքի կամ ծածի հետք չի կայ վրան, ինչ որ ճշմարիտ էր:

— Ներարկում մը կ'ընեմ, հիմա խելքը գլուխը կուգայ,— յայտարարեց:

Ներարկումը ըրաւ, բայց առանց արդիւնքի, մարդը միշտ անշարժ կը մնար գետինը:

Կրկին ներարկում, բայց անօգուտ:

Բժիշկը յուսահատ մեկնեցաւ: Բայց որովհետեւ հաստատած էր որ երիտասարդը կենդանի էր, զինքը կրկին քաշքշելով տարին բանտ ու հոն գետինը դրին:

Հետեւեալ առտու նոյն անշարժութեան մէջ տեսանք զինքը:

— Թերեւս անօթի է,— դիտել տուաւ մէկը:

Հազգը էֆէնտի կաթ եւ մսի ջուր բերել տուաւ: Ոստիկանները երիտասարդը պատին կոթնցնել տուին. բռնի ուզեցին բերնէն վար լեցնել կաթն ու ջուրը, բայց ի գուր: Ինչ որ դնէին բերանը, դուրս կուտար:

Արիֆ անուն ոստիկան մը որ խեղկատակ մէկն էր, ըսաւ.

— Ես ասոր դարմանը գիտեմ. զինքը դուրս կը հանենք բանտէն եւ կ'ըսենք թէ ազատ է ուզած տեղը երթալու: Պիտի տեսնէք թէ ինչպէս խելքը գլուխը պիտի գայ:

— Փորձեցէ՛ք,— հրամայեց Հազգը էֆէնտի:

Երկու ոստիկան թեւերէն մտան, զինքը դուրս բերին եւ ըսին թէ ազատ էր ուզած տեղը երթալու, թէ քօմիսէր պէյը ներած էր իրեն, եւ այն, եւ այն:

Դարձեալ անօգուտ:

— Թերեւս կը կասկածի, փողոց հանեցէ՛ք ու թողուցէք զինքը,— հրամայեց Հազգը:

Մեծ դժուարութեամբ, սանդուղներէն վեր քաշքշելով, փողոց հանեցին, բաւական տեղ տարին ու հոն, փողոցին մէջտեղը կեցուցին եւ ըսին որ ազատ էր այլեւս:

Մարդը միշտ անշարժ կը մնար:

— Քովէն հեռացէ՛ք,— հրամայեց քօմիսէրը:

Ոստիկանները 30-40 քայլի չափ ետ եկան:

Մարդը գլուխը չորս բոլորը դարձուց, տեսաւ թէ ոստիկանները բաւական հեռացած են եւ սկսաւ հալածական եղնիկի մը պէս վազել, առանց ետին նայելու:

Ամէնքս, նոյնինքն քօմիսէրը, սկսանք խնդալ:

— Երթա՞նք զինքը բռնելու,— առաջարկեց ոստիկան մը:

— Թո՛ղ տուէք թող կորսուի,— գոչեց Հազգը էֆէնտի:— Բա՛ւ է երեկուրն է ի վեր մեզի պատճառած հոգը... Աստուած պէլան՝ տայ:

Ու այսպէս Հայ երիտասարդը իր օճիքը ազատեց:

Իր կամքի ուժը զինքը փրկած էր, որովհետեւ արտակարգ կամք մը պէտք էր քսան ժամ մեռեալ ձեւանալու, սնունդէ ու ջուրէ ինքզինք զրկելու եւ նոյնիսկ բնական պէտքերն ալ զրսպելու համար:

— Կը տեսնա՞ս աս Հայերուն ձեռքէն մեր քաշածները,— ըսաւ Հազգը էֆէնտի ինծի դառնալով:

\*\*\*

Ուրիշ գիշեր մը սարսափելի գինով մը բերին: Տեղացի վաճառական մըն է եղբոր որ գինովցեր, կռիւ եւ աղմուկ հաներ է

\* Արդարացի պատիժ:

ու ոստիկանները ձերբակալեր են: Այս տեսակ յանցաւորները ընդհանրապէս գիշերը բանտը կ'անցնեն, հետեւեալ առտու տուգանք մը կը վճարեն ու կ'ելլեն կ'երթան:

Գինով վաճառականը մտցուցին բանտ ուր իսկոյն գլուխը գետինը դրաւ եւ սկսաւ խռկալ, խոր քունի մէջ թաղուած:

Հետեւեալ առտու, երթալու միջոցին, երբ տուգանքը վճարելու համար դրամները կը փնտռէ, կը տեսնէ որ գրպանները պարապ են:

— Որչա՞փ դրամ ունէիր քովդ,— կը հարցնէ քօմիսէրը:

— 12 դեղին ոսկի, 9 մէծիտիէ եւ 8000 դրուշ թղթադրամ,— կը պատասխանէ վաճառականը:

Յայտնի բան էր որ գողութիւնը կատարուած էր իր բանտակիցներուն ձեռքով, որոնք 6-7 հոգի էին: Իսկոյն ամէնուն վրայ խուզարկուեցաւ եւ 9 մէծիտիէն եւ 800 դրուշ թղթադրամը գտնուեցաւ Արաբի մը վրայէն որ քանի մը օր առաջ ձերբակալուած էր եւ որ տասը փարս չունէր գրպանը եւ ողորմութեամբ, կէս անօթի կէս կուշտ կ'ապրէր:

— Մ'ըր են ոսկիները,— հարցուցին իրեն:

— Չեմ գիտեր, ես ոսկի չառի, միայն արծաթն ու թղթադրամը առի,— պատասխանեց:

Սակայն խարազանի քանի մը ուժգին հարուած ուտելէ ետքը, խոստովանեցաւ թէ ոսկիներն ալ ինք առած է:

— Մ'ըր պահեցիր տեսնենք,— հարցուցին:

— Կուլ տուի,— ըսաւ Արաբը:

Կարծեցին որ կը ստէ, նորէն սկսան ծեծել զինքը, բայց այս անգամ խեղճը կը պնդէր որ ճշմարիտ կը խօսէր:

— Վալլահա \* կուլ տուի,— կը գոչէր լալով:

— Ի՞նչ պիտի ընենք Հիմա,— ըսաւ վաճառականը:

— Պիտի սպասես որ միւս կողմէ դուրս հանէ,— պատասխանեցին:

Իրա՛ւ ալ ուրիշ ճար չկար:

\* Աստուած վկայ:

Վաճառականը ստիպուեցաւ աթոռ մը առնել եւ բանտին քով նստիլ, որպէսզի գողը բարեհաճէր իր ստամոքսէն հանել ոսկիները:

Անցան 4-5 ժամեր եւ Արաբը պէտք չէր զգար նստելու այն ամանին վրայ զոր վաճառականը յատկապէս գնել տուած էր:

— Այսպէս չըլլար, — ըսաւ ոստիկաններէն մէկը վաճառականին, — այս խեղճ մարդը մինչեւ որ լաւ մը չուտէ չխմէ, քու սպասած գործը չկրնար տեսնել: Նախ պէտք է կերակրել զինքը:

Շատ տրամաբանական էր ոստիկանին դիտողութիւնը:

Վաճառականը համակերպեցաւ եւ հինգ շիշ քէպապ, կէս օխա հաց մածուն եւ բիլավ բերել տուաւ գողին:

— Որչափ շատ բան ուտէ՝ այնչափ ազդեցութիւնը շուտով կը տեսնուի, — կը հաւաստէր Արիֆ որ կատակասէր ոստիկան մըն էր:

Խեղճ Արաբը անյագ ախորժակով մը կերաւ կերակուրները: Թերեւս կեանքին մէջ երբեք այս տեսակ սարգանաբազեան ճաշ մը չէր ըրած:

Իրիկուան դէմ վաճառականը յուսաց վայելել իր զոհողութեան արդիւնքը, բայց ափսո՛ս, գողին ստամոքսը դուրս տուաւ իր աւելորդը, բայց պահեց ոսկիները:

Իրիկունը նոր ճաշ վաճառականին կողմէ: Մարդը ստիպուեցաւ գիշերը բանտը անցնել եւ անքուն մնալ, որովհետեւ յայտնի չէր թէ Արաբը ո՞ր ժամուն պէտք պիտի ունենար ամանին:

— Եթէ կ'ուզես դուն գնա՛, մենք կը հսկենք հոս Արաբին վրայ, — խորհուրդ կուտային ոստիկանները:

Բայց վաճառականը իրաւամբ հաւատք չունէր ոստիկաններուն ուղղամտութեան վրայ:

Հետեւեալ առտու իմացայ որ գողը բարեհաճած էր վերջապէս ստամոքսէն հանելու երեք ոսկին, բայց տակաւին 9 հատը կը մնար:

Ու այսպէս երեք օր, երեք գիշեր վաճառականը ստիպուեցաւ

բանտին մէջ անցնել ու կերակրել գողը որպէսզի կարենայ իր 12 ոսկին ամբողջովին գանձել, որովհետեւ մաս մաս դուրս կ'ելլէին դրամները:

Վերջապէս ամբողջ 12 ոսկին ձեռք անցնելէ ետքը մեկնեցաւ ոստիկանատունէն, երդում ընելով որ անգամ մըն ալ չգինովնայ:

\* \* \*

Օր մը, հազիւ 17-18 տարեկան, շատ մաքուր հագուած, շիք պատանի մը բերին մեր քօվուշը:

— Այս մարդը հոս պիտի մնայ, — ըսաւ իրեն ընկերակցող ոստիկանը:

Պատանին հետը ունէր նաեւ գեղեցիկ պայուսակ մը, ջութակ մը, անկողնի ծածկոց մը եւ երկու գաւազան ու մէկ հովանոց: Վերջապէս դրամ ունեցող մէկու մը դրսերեւոյթը ունէր:

Երբ ոստիկանը մեկնեցաւ, գոյքերը անկիւն մը տեղաւորեց, ինքն ալ նստաւ աթոռի մը վրայ, տրտում, տխուր, խոր մտածումի մէջ ընկղմած, ու ահա աչքերը լեցան ու սկսաւ լալ:

Քովը մօտեցայ եւ ֆրանսերէն լեզուով հարցուցի.

— Առաջին անգամն է որ կը բանտարկուիս:

— Այո՛, — պատասխանեց:

— Այս տեղացի՞ ես եւ ինչո՞ւ համար քեզ ձերբակալեցին:

Պատանին աչքերը սրբեց եւ իր արկածները պատմեց:

Բնիկ աղեքսանդրիացի Յոյն մըն է եղեր, Անթօն Սափա առնու: Հայրը մեծ գարեջրատան մը տէր, նիւթական փայլուն դիրքի մը տիրացած էր: Ինքն ալ իր հօր ու մօր մէկ հատիկ գաւակն էր: Ուսմունքը կատարելագործելու համար, զինքը կը դըրկեն Պէյրութ, յունական բարձր վարժարան մը: Եւ ահա, պատերազմը կը ծագի, թուրք կառավարութիւնը վարժարանին շէնքը կը գրաւէ, աշակերտները ցիր ու ցան կ'ըլլան: Եգիպտոսի հետ

յարաբերութիւնները կը խզուին ու տղան հօրմէն դրամ չկրնար ստանալ, նիւթական անձկութեան կը մատնուի եւ կը ստիպուի իբրեւ աշկերտ դերձակատան մը մէջ աշխատիլ, ուր քիչ ատենէն մեծ յառաջադիմութիւն կ'ընէ եւ օր մըն ալ կը սկսի առանձին գործել:

— Մասնաւորաբար մետաքսեայ թղթապանակներ ու վզնոցներ կը շինէի եւ օրական 2-3 ոսկի կը շահէի, — բացատրեց ինծի, — ու այդ գումարով հանգիստ կ'ապրէի Պէյրութի մէջ:

Բայց ահա՛ Յունաստան եւս կը մասնակցի պատերազմին եւ հալածանքը կը սկսի Յոյներուն եւ մասնաւորաբար հելլէնահայատակներուն դէմ: Անթոն Սալա հելլէնահայատակ էր, թէեւ յունարէն խօսիլ չէր գիտեր: Բաւական ժամանակ կը յաջողի զանազան միջոցներով խուսափիլ հետապնդումէ, բայց վերջերս թշնամութեան մը հետեւանքով, օձիքը ձեռք կուտայ: Զինքը կը ձերբակալեն ու անմիջապէս շոգեկառք դնելով կը ղրկեն Հալէպ: Հոն երկու օրի չափ կը մնայ Պարոնին օթէլը, յետոյ կրկին կը ձերբակալուի ու կը տանին Նազարէթ կոչուած աղտոտ բանտը, ուր օր մը մնալէ ետքը, զինքը կը բերեն միւտիւրիէթ:

Ձանացի կրցածիս չափ մխիթարել զինքը:

— Եթէ զիս հոս թողուն՝ կրնամ ապրիլ դերձակի արհեստս ի գործ դնելով, — ըսաւ, — բայց կը վախնամ որ ուրիշ աննշան տեղ մը կ'աքսորեն, ինչպէս քսորեցին ուրիշ հելլէնահայատակներ:

Իր երկիւղին մեծագոյն շարժառիթը այն էր որ հակառակ իր արտաքին երեւոյթին, խեղճը գրեթէ բնաւ դրամ չունէր կամ շատ աննշան բան մը, երկու ոսկի թղթադրամի չափ կարծեմ:

— Մէկ քանի հալէպցի ծանօթ անձնաւորութիւններու ուղղուած յանձնարարականներ ունիմ Պէյրութէն, — ըսաւ, — բայց ատոնցմէ օգտուելու համար պէտք է որ ազատ արձակուիմ: Բաց աստի ոստիկանութեան տնօրէնին քով, իբրեւ անոր սղօցը վարժուհի լիբանանցի օրիորդ մը կայ, որ Պէյրութէն եկած է եւ որ մտերիմ բարեկամուհիս է:

— Ուրեմն բնաւ պատճառ մը չունիս մտատանջուելու, — պատասխանեցի:

— Բայց ի՞նչպէս պիտի կարենամ զայն տեսնել կամ գոնէ հետը թղթակցիլ:

— Ատոր ալ ճարը կը գտնենք հարկաւ:

Ոստիկանները տեսնելով այս շիք երիտասարդը որ օրը մէկ քանի անգամ վզնոց կը փոխէր, Լիբանանի ոսկեզօծ սիկառէթները կը ծխէր ու անուշահոտութիւններով գլուխն ու երեսը կ'օծէր, ենթադրեցին որ քովը շատ դրամ կայ եւ ուզեցին զայն շահագործել:

Նախ պատրուակ մը գտան ու զայն փոխանակ քովուշը ազատ թող տալու, տարին բանտարկեցին մութ ու աղտոտ բանտին մէջ:

Հարիւր դրուշնոց թուղթ մը տալով օձիքը ազատեց: Բայց այս ազատութիւնը երկար չտեւեց:

Ոստիկան Շէֆիք քովս գալով ըսաւ.

— Խօսէ՛ քու բարեկամիդ եւ ըսէ՛ թէ իր վիճակը շատ ծանր է, իր մասին գրուած թուղթը կարդացի՛նք, վրան գողութեան ամբաստանութիւն կայ, այդ տեսակ ամբաստանութեան ներքեւ գտնուող մէկը չկրնար հոս մնալ, պէտք է Նազարէթի բանտը փոխադրուի:

— Բայց արդէն հոն տարած են նախ եւ ապա հոս բերած:

— Այո՛, որովհետեւ հոն գտնուող բանտի պաշտօնեան կաշառներ է:

— Չեմ կարծեր, — պատասխանեցի:

— Մենք ամէն բան իմացանք: Եթէ կ'ուզէ որ հոս մնայ, պէտք է որ մեզի գոհ ընէ... իրեն հասկցո՛ւր, այս տղան միլիօնատէր է եղեր:

— Կը սխալիք, — պատասխանեցի, — խեղճը դրամ չունի, հագուտին մի՛ նայիք: Ինծի խոստովանեցաւ եւ ըսաւ թէ վրան հազիւ մէկ երկու հարիւր դրուշ ունի:

— Սուտ կը խօսի, — ըսաւ Շէֆիք, — ինքզինք աղքատ ցոյց

կուտայ որպէսզի դրամ չի պահանջենք... մենք այս վարպետութիւնները շատ աղէկ գիտենք:

Ի զո՛ւր փորձեցի համոզել ոստիկանը, կարելի չեղաւ:

Անթօնին բացատրեցի խնդիրը: Նորէն երդում ըրաւ որ դրամ չունի:

Ի վերջոյ հանեց 50 դրուշ տուաւ Շէֆիքին որ բարկութեամբ դրամը երեսին նետեց.

– Մենք մուրացկա՞ն ենք, – գոչելով:

Նոյն իրիկունն իսկ մէկ քանի հոգիներ պիտի փոխադրուէին Նազարէթ, Անթօն ալ անոնց հետ խառնեցին ու տարին:

Խե՛ղճ պատանին լալով հեռացաւ:

\* \* \*

Օր մը Արշաւիր եկաւ զիս գտաւ եւ ըսաւ.

– Գէշ լուր մը ունիմ հաղորդելիք:

– Ի՞նչ է, – հարցուցի վրդոված:

– Քու մասիդ հեռագիր մը եկած է ներքին գործոց նախարարութենէն, նոյնինքն Թալէաթ փաշայի ստորագրութեամբ, որուն մէջ ըստւած է. «Երուանդ Օտեան Պոլիսէն աքսորուած է իրրեւ վտանգաւոր (մուզիր) եւ աննկարագիր (ախլաքսըզ) մէկը: Եթէ նոր մատնութիւն մը կամ դաւաճանութիւն մը գործած է, իսկոյն Պատերազմական ատեանին յանձնեցէք զինքը, ապա թէ ո՛չ զրկեցէ՛ք իրեն համար սահմանուած աքսորավայրը»:

– Ի՞նչ որոշեցին ընել, – հարցուցի:


– Դեռ որոշում չէ արուած, բայց հաւանօրէն կրկին Տէր-Ջօր պիտի վերադարձնեն քեզի, – պատասխանեց Արշաւիր:

– Որո՞ւ քով կը գտնուի հեռագիրը:

– Մէհմէտ Ալիի քով... ես հոն տեսայ:

Մէհմէտ Ալի այն պաշտօնեան էր որ զիս հարցաքննած էր:

Բաւական ծանօթացած էի իրեն, որովհետեւ քանի մը ան-



Երուանդ Օտեանի վերջին լուսանկարներից





Երուանդ Օտեանի շիրիմը Կահիրեում

գամներ զիս քովը կանչած ու թարգմանութիւններ ընել տուած էր: Որոշեցի իսկոյն երթալ եւ իրմէ տեղեկութիւն ուզել:

– Չըլլայ որ ըսես թէ Հեռագրէն լուր ունիս եւ թէ ես տուած եմ այդ լուրը, – ըսաւ Արշաւիր:

– Անհոգ եղիր այս մասին:

– Լաւ կ'ըլլայ որ իմ ոստիկանատունէն մեկնելէս ետքը երթաս քովը, – աւելցուց:

– Այնպէս կ'ընեմ, – պատասխանեցի:

Արդարեւ սպասեցի որ Արշաւիր մեկնի եւ անկէ ետք գացի Մէհմէտ Ալիի քով:

– Իմ մասիս տակաւին պատասխան մը չեկա՞նք ներքին գործոց նախարարութենէն, – հարցուցի:

– Եկաւ, – պատասխանեց:

– Ի՞նչ է այդ պատասխանը:

– Սէր քօմիսէրը քեզի կը հաղորդէ:

– Դուք չէ՞ք կրնար ըսել:

– Ձէ՛, արտօնութիւն չունիմ:

Այսպէս ուրեմն ճիշդ էր Արշաւիրի բերած լուրը: Մտածուքը դարձեալ տիրեց վրաս: Կը մտածէի որ եթէ Տէր-Չօր ղրկեն, ի՞նչպէս կրնայի փախչիլ ճամբէն, որպէսզի ոստիկանապետ Մուսթաֆայի ճանկը չիյնամ Տէր-Չօրի մէջ: Բոլոր յոյսս Հայկ Փանոսեանի վրայ էր որ Տէր-Չօրէն 10 ժամ ասդին Դիպնէ ըսած կայանը կը գտնուէր: Հայկ շատ բարեկամ էր Դիպնէի զինուորական կայանի հրամանատարին հետ, երիտասարդ սպայ մը որ Հայուհիի մը հետ ամուսնացած էր եւ ինքն ալ հայասէր մէկն էր:

Իսկ եթէ փոխանակ Տէր-Չօրի դէպի Տիարպէքիր ղրկէի՞ն...: Այն ատեն ազատում չի կար:

Երկու օր ետքը սէր քօմիսէր ձէմիլ պէյ զիս կանչել տուաւ:

– Քու մասիդ Պոլսէն հեռագիր եկաւ, – ըսաւ:

– Ի՞նչ է այդ հեռագիրը, – հարցուցի:

– Քեզ համար սահմանուած աքսորավայրը պիտի ղրկենք:

– Բայց ես աքսորուած չեմ, դատապարտութիւն չեմ կրած...  
– Հեռագիրը բացորոշ է եւ Թալէաթ փաշայի ստորագրութիւնը կը կրէ: Հիմա ըսէ՛ թէ քեզի համար սահմանուած աքսորավայրը ո՞ւր էր,– հարցուց ձէմիլ պէյ:

– Գոնիա,– պատասխանեցի:  
– Ինչո՞ւ համար Գոնիայէն հոս փախար:  
– Ձի փախայ, այլ ղրկեցին,– պատասխանեցի:  
– Ուրեմն քանի որ քու աքսորավայրդ Գոնիա է, քեզի հոն պիտի ղրկենք...

Ձէի ուզեր ականջներուս հաւատալ: Ուրախութիւնս չափ ու սահման չունէր: Տիարպէքիրի կամ Տէր-Ջորի ահռելի հեռապատկերը կը ջնջուէր: Զանացի ծածկել ուրախութիւնս եւ դրժգոհ դէմքով մը ըսի.

– Գոնիայի բանտը ես ինչպէ՞ս պիտի կրնամ ապրիլ, մանաւանդ որ քաղքին մէջ ծանօթ ալ չունիմ, որպէսզի ինծի նիւթապէս օգնեն:

– Ո՞վ ըսաւ որ Գոնիայի մէջ քեզ բանտ պիտի դնեն,– պատասխանեց ձէմիլ:

– Ազատ պիտի թողո՞ւն քաղքին մէջ:  
– Բնականաբար, միայն թէ քանի մը օրը անգամ մը պիտի երթաս իսպաթը վիճիւտ ընելու:

– Եթէ ուզեն ամէն օր կ'երթամ: Միայն թէ կը փափաքէի Հալէպ մնալ:

– Ներքին գործերու նախարարութեան որոշումը չենք կըրնար փոխել:

– Ե՞րբ պիտի մեկնիմ:  
– Դեռ չեմ գիտեր, հաւանօրէն քանի մը օր ետքը:  
– Բայց ես ճամբու ծախքի համար դրամ չունիմ:  
– Ծամբու ծախքը մենք պիտի վճարենք, այդ մասին հոգ մի՛ ընեք:

Դուրս ելայ սէր քօմիսէրին քովէն: Այս կարգադրութիւնը այնքա՛ն անակնկալ էր որ կը կասկածէի թէ խաղ չըլլար ձէմի-

լին կողմէ սարքուած, կամ թէ վերջին ժամուն իրենց դիտաւորութիւնները չփոխէին:

Հետեւեալ օրը երբ Արշաւիրը տեսայ նրբանցքին մէջ, մօտս կանչեցի եւ իրեն հաղորդեցի ձէմիլ պէյի ըսածները:

– Ես ալ իմացայ,– ըսաւ,– ասիկայ քեզի համար մեծ բարեբախտութիւն մըն է, որովհետեւ Գոնիա երբեք Հայերու համար աքսորավայր չէ եղած:

– Կը կարծե՞ս որ վերջին ժամուն իրենց որոշումը փոխեն:  
– Այն ալ կարելի է... այս մարդոց երբեք վստահելու չէ,– պատասխանեց Արշաւիր:

Այսպէս ուրեմն ուրախութիւնս կատարեալ չէր եւ կասկածը կը սաւառնէր գլխուս վրայ:

\* \* \*

Երբ ոստիկանները իմացան թէ Գոնիա պիտի ղրկուիմ, ա՛լ աւելի մեծ ազատութիւն մը տուին ինծի որովհետեւ վստահ էին թէ փախչելու փորձ պիտի չընէի:

Արդէն բոլորին հետ ալ մտերմացած էի եւ իրենց համակրութիւնը շահած: Իմ բարեխօսութեամբս յաճախ Հայ բանտարկեալներուն թոյլ կուտային նրբանցքին մէջ պտտելու, պայմանով որ երաշխաւոր ըլլամ իրենց համար որ խոյս պիտի չտան:

Օր մը երկու Հայ զինուոր բերին բանտարկեցին: Պատերազմին սկիզբէն զինուոր գացած են եղբւր եւ չորս տարի գործօն ծառայութեան մէջ մնալէ ետքը արտօնութիւն ստացած էին իրենց երկիրը վերադառնալու, մին իզմիրցի էր եւ միւսը Իզմիրի նահանգէն:

Խօսակցութեան միջոցին իմացայ որ իզմիրցին Տարսոնի մէջ զիս հիւրընկալող գրաշար Ճօն Մարտիկեանի երէց եղբայրն է:

Անմիջապէս բանտապահէն խնդրեցի որ այդ երկու զինուորներուն թոյլ տայ նրբանցքին մէջ կենալու: Բանտապահը խընդիրքս իսկոյն կատարեց:

իրենց պատմութիւնը բաւական տարօրինակ էր եւ ցոյց կուտար թուրքերուն վարուելակերպը Հայերու հանդէպ:

Ինչպէս ըսի, իրենց ծառայութիւնը լրացուցած էին եւ իրենց հրամանատարէն պաշտօնապէս արտօնուած երկիր դառնալու: Սուրբոյ կողմերէն եկած էին Հալէպ հոնկէ Իզմիր երթալու համար:

Եւ ահա՛, Հալէպի մէջ ձերբակալուած ու բանտ բերուած էին:

Ի գո՛ւր իրենց պաշտօնաթուղթերը ցոյց կուտային, ո՛չ ոք կարեւորութիւն կ'ընծայէր:

— Իր տեղէն ելլող Հայը այլեւս չկրնար տեղը վերադառնալ, — կը պատասխանէին իրենց:

— Բայց մենք տեղահան եղած չենք, մեր ընտանիքը, տունը տեղը կեցած է, մենք իբրեւ զինուոր հեռացած ենք մեր հայրենիքէն:

— Քանի որ Հայ էք ու անգամ մը դուրս ելած էք ձեր քաղաքէն, չէք կրնար այլեւս հոն վերադառնալ:

— Զինուորական իշխանութիւնը մեզի արտօնութիւն տուած է:

— Քաղաքական իշխանութիւնն ալ այդ արտօնութիւնը կը ջնջէ:

Այսպէս խեղճերը հինգ վեց օր բանտը մնացին: Ի վերջոյ արտօնուեցան, իբրեւ մեծ շնորհ մը, Հալէպի մէջ մնալու, պայմանով որ երաշխաւոր տան թէ իրենց տեղերը պիտի չվերադառնան:

Մինչ անմեղ Հայերու հանդէպ այս տեսակ խստութիւններ ցոյց կը տրուէին, թուրք կամ Արաբ գողեր ու դրամաշորթներ ամէն տեսակ պաշտպանութիւն կը վայելէին:

Թուրք պաշտօնեայ մը, որ չորս հազար ոսկի գողցած էր իր պատկանած վարչութեան դրամարկղէն եւ բերուած էր ոստիկանատուն, մեծ պատիւի եւ յարգանքի արժանի կ'ըլլար:

Յատուկ սենեակ մը տուած էին իրեն եւ մարդը տունէն

մահճակալ եւ այն բերել տալով զայն կահաւորած էր: Այդ գողը իշխանական կեանք մը կը վարէր: Մինչեւ իրիկուն այցելուներ կուգային, որոնց հետ նարտ կամ թուղթ կը խաղար, այդ խաղերուն կը մասնակցէին նաեւ ոստիկանները կամ քօմիսէրները:

Ի վերջոյ երաշխաւորութեամբ ազատ թողուեցաւ:

Իրա՛ւ է որ այս գողը թունդ իթթիհատական մըն էր:

\*\*\*

Ոստիկանատան մէջ իմացայ նաեւ թէ ի՛նչ պարագաներու ներքեւ ձերբակալուած էի:

Ինչպէս ըսի, զիս ոստիկանութեան մատնանիչ ընողն է կրեւտացի թուրք մը Զիա անուն:

Այս անձը սէր քօմիսէր ձէմիլ պէյի անձնական լրտեսն է եղեր որուն պաշտօն յանձնուած էր հանրային վայրերը պատիւ եւ քիչ շատ շնորհքով հագուած նոր դէմք մը տեսած ատեն իմաց տալ ոստիկանութեան:

Մարդը կը ձերբակալուէր, եթէ կարենար վէսիքա ցոյց տալ, ազատ կը թողուէր, հակառակ պարագային կը բանտարկուէր ոստիկանատան մէջ եւ ահա՛ Զիա կուգար իր մօտ եւ կը խոստանար զինքը ազատել ի փոխարէն չորս դեղին ոսկիի: Մարդը եթէ դրամը վճարէր, ազատ կ'արձակուէր, եթէ ո՛չ կը մնար բանտը: Չորս ոսկին կ'առնէր ձէմիլ պէյ, անշուշտ բաժին մըն ալ հանելով իր լրտեսին: Այս ձեւով ամիսը 9-10 հոգի կը ձերբակալուէին Զիայի միջոցաւ: Զիս ալ այդ տուգանքին ենթարկելու համար ձերբակալած էին, բայց, յետոյ, բո՛ւն ինքնութիւնս երեւան ելլելով, չէին համարձակած 4 ոսկիի առաջարկը ընել:

Նոր ձերբակալուած օրերուս մէկ քանի Հայ բանտարկեալներ ինծի խորհուրդ տուին դիմել Զիայի եւ իմ կողմէս դրամ առաջարկել ազատելու համար:

Հետեւեցայ իրենց խորհուրդին, բայց Ձիա ըսաւ.

— Քեզի համար դժբախտաբար բան մը չեմ կրնար ընել... դուն ծանօթ մէկն ես եղեր:

— Բայց ինչո՞ւ զիս ձերբակալել տուիք, առանց ո՛վ ըլլալս գիտնալու:

— Ես կը կարծէի որ սովորական մէկն ես, — պատասխանեց լրտեսը:

Բացի Ձիայէն Հայ գէյթունցի պատանի մըն ալ կար որ նոյնպէս ձէմիլի անձնական լրտեսն էր:

Այս երկու լրտեսները ամսական առնուազն 50-60 ոսկի շահ մը կ'ապահովէին իրեն:

\*\*\*

Օր մը Մէհմէտ Ալի պէյ զիս կանչեց եւ ըսաւ.

— Քանի մը օրէն Գոնիա պիտի երթաս, կ'ուզեմ քեզի յանձնել ինչ որ վրայէդ գտնուած էր ձերբակալուած ատենդ:

Եւ հանդիսաւորապէս կղպուած արկղ մը բացաւ ու ետ տուաւ ակնոցի համար ակնարոյժէն առած ապակիի թիւս, «ժամանակ»ը եւ «Օսմանիչէ Լոյտ»ի կտորը:

Այս արարողութիւնը թէեւ ծիծաղելի, բայց զիս յուսադրեց:

Ուրեմն իրաւցնէ պիտի երթամ Գոնիա, մտածեցի:

Ոստիկան մը պիտի ընկերանար ինծի: Երեք չորս ոստիկան հետամուտ էին այս պաշտօնին, որոնցմէ մին էր ձերուկ Մէհմէտ Ռիֆաթը, այն որ ինծի դրամ փոխ տուած է ու մինչեւ ետքը ազնուութիւն ցոյց տուած ինծի հանդէպ: Բնականաբար կը փափաքէի որ ինք ըլլար ինծի ընկերացողը:

Ոստիկաններու Գոնիա երթալ գալու փափաքը քանի մը պատճառներ ունէր:

Նախ մէկ երկու շաբաթ հանգիստ պիտի վայելէին, յետոյ յաւելուածական դրամ մը պիտի ստանային եւ երրորդ, ինչ որ

ամէնէն կարեւորն էր, վաճառականութիւն պիտի ընէին Գոնիա ապրանք տանելով ու հոնկէ ապրանք բերելով:

Ի վերջոյ որոշուեցաւ թէ Մէհմէտ Ռիֆաթ ընկերանայ ինծի:

Ինծի հետ պիտի գար նաեւ Անթօն Սափա, Յոյն պատանին մինչեւ Իսլահիէ, ուրկէ պիտի ղրկուէր Մարաշ որ Յոյներուն աքսորավայրն էր:

Հիմա որ ա՛լ քանի մը օրուան հիւր էի, ալ աւելի ազատութիւն կը վայելէի եւ կրնայի Մէհմէտ Ռիֆաթի ընկերակցութեամբ դուրս ելլել եթէ որեւէ պէտք մը ունենայի:

— Քանի որ այդ Յոյն պատանին ալ մեզի հետ պիտի գայ, — ըսաւ օր մը Մէհմէտ Ռիֆաթ, — երթանք զինքը հոս բերենք, փոխանակ զինքը Նազարէթի աղտոտ բանտը ձգելու:

— Շատ աղէկ կ'ըլլայ, — պատասխանեցի եւ միասին գացինք Նազարէթ:

Խեղճ տղան 8-10 օրուան միջոցին կերպարանափոխ եղեր էր: Առանց օձիքի ու առանց վզնոցի, հագուստները աղտոտած, ամբողջ շիբուութիւնը գացեր էր վրայէն:

Երբ զիս տեսաւ չափազանց ուրախացաւ:

— Քեզի տանելու եկանք, — ըսի, — կրկին պիտի գաս մեր քովուշը:

— Իրա՞ւ, — գոչեց ուրախութեամբ, իբր թէ դժոխքէն արքայութիւն պիտի փոխադրուէր:

Իր գոյքերը առնելով դուրս ելանք:

— Ի՞նչպէս անցուցիր բանտին մէջ, — հարցուցի:

— Սարսափելի կերպով, — պատասխանեց, — զիս բոլորովին կողոպտեցին, ջուլթակս, ածելիս, սրկառէթներս, մատանիս, թըղթապանակս, վզնոցներս, նոր ճերմակեղէններս, անուշահոտութիւններս. վերջապէս ինչ որ ունէի ստիպուեցայ բաժնել ոստիկաններուն, որպէսզի քիչ մը հանգստութիւն վայելեմ:

— Գիտե՞ս թէ ո՛ւր կը ղրկեն կոր քեզի:

— Այո՛, — պատասխանեց, — Մարաշ պիտի երթամ եւ ասիկա զիս յուսահատութեան կը մատնէ կոր:

— Հոգ մի՛ ընեք,— ըսի,— եւ մեզ ընկերացող ոստիկանը Մէհ-մէտ Ռիֆաթը պիտի ըլլայ:

Այս լուրը քիչ մը մխիթարեց զինքը:

Երբ վերադարձանք քովուշ, իրեն ըսի թէ ինչո՞ւ դիմում չը-նեք ոստիկանական տնօրէնին տունը գտնուող վարժուհիին որ իր ծանօթն է եղեր:

— Բանտէն փորձեցի նամակ մը գրել, կարելի չեղաւ,— պա-տասխանեց,— ո՛չ ոք ուզեց նամակը ոստիկանական տնօրէնին տունը տանիլ, վախնալով որ իր վրայ պատասխանատուութիւն մը կուզայ:

— Վաղը դուն անձամբ կ'երթաս հետը կը տեսնուիս,— ըսի:

— Ինչպէ՞ս կարելի է ատիկա:

— Պատուաստ ըլլալու համար քաղաքապետարան պիտի եր-թանք, հոնկէ կրնանք երթալ նաեւ տնօրէնին տունը:

Արդարեւ հետեւեալ օր միասին գացինք, միշտ Մէհմէտ Ռի-ֆաթի ընկերակցութեամբ, թաղապետարան ուր մեզ պա-տուաստեցին քօլէրայի ու ժանտախտի դէմ:

Հոնկէ գացինք նաեւ ոստիկանական տնօրէնին բնակարանը եւ Անթօն Սավա կրցաւ տեսնել իր բարեկամուհիին որ խոստա-ցաւ նոյն իրիկունն իսկ տնօրէնին մօտ բարեխօսել, որպէսզի փոխանակ Մարաշ երթալու, արտօնուի Հալէպ մնալ:

— Ես այս գիշեր կը խօսիմ,— ըսած էր վարժուհին,— դուն ալ վաղը առտու ներկայացիր տնօրէնին եւ քու կողմէդ ալ նոյն խնդիրը ըրէ՛ եւ վստահ եմ որ պիտի յաջողիս:

Անթօն Սավա խորին շնորհակալութիւն յայտնելով բաժնը-ւած էր վարժուհիէն:

Խեղճ տղան բացարձակապէս համոզուած էր թէ Հալէպ պի-տի մնար եւ նոյն օրը ուրախ տրամադրութեան ներքեւ անցուց:

Հետեւեալ առտուն անհամբեր սպասեց ոստիկանութեան տնօրէնին, որ վերջապէս եկաւ ժամը տասին:

Իսկոյն փութաց անոր քով, վայրկեան մը ետքը վերադար-ձաւ քովս յուսաբեկ դէմքով մը, գրեթէ լալով:

— Ի՞նչ եղաւ,— հարցուցի:

— Հազիւ թէ անունս տուի զիս դուրս վճնտեց,— պատաս-խանեց:

Ամէնէն անտանելին այն էր որ բնաւ դրամ չունէր: Խոր-հուրդ տուի իրեն դիմել հոլանտական հիւպատոսարանը որ ստանձնած էր հելլէնահպատակներու շահերու պաշտպանու-թիւնը: Դարձեալ Մէհմէտ Ռիֆաթի բարեհաճութեամբ գացինք հիւպատոսարան, ուր Անթօն Սավա պարզեց իր կացութիւնը:

Հիւպատոսարանը քանի մը ոսկի տուաւ ընկալագրի մը փո-խարէն, իսկ ատկէ դուրս չուզեց որեւէ պաշտպանութիւն ընել:

Վերջապէս առտու մը կանուխ Անթօն, ես եւ Մէհմէտ Ռի-ֆաթ գացինք կայարան ու տեղաւորուեցանք վակօնի մը մէջ:

Մեր տոմսակները ոստիկանը վճարեց:

Նոյն իրիկունը հասանք Իսլահիէ ուր պիտի մնար Անթօն, հոնկէ Մարաշ ղրկուելու համար:

Մէհմէտ Ռիֆաթ զայն յանձնեց Իսլահիէի ոստիկանութեան եւ մենք մեր ճամբան շարունակեցինք:

Քովս չնչին գումար մը ունէի եւ չէի գիտեր թէ ի՛նչ բախտ կ'սպասէր ինձի Գոնիայի մէջ: Հակառակ ձէմիլ պէյի հաւաս-տումներուն թէ հոն ազատ պիտի թողուէի, կը վախնայի թէ մի-գուցէ զիս հոն բանտարկեն կամ ուրիշ տեղ մը աքսորեն եւ այդ պարագային, առանց դրամի, շատ անտանելի պիտի ըլլար վի-ճակս:

Մէկ միջոց մը կար դրամ ճարելու, այն էր Տարսոն երթալ եւ Շալվարճեան եղբայրները տեսնել, որոնք այնքան ազնուօրէն հիւրընկալած էին մեզ մեր աքսորանքի առաջին օրերուն: Բայց Տարսոն մեր ճամբուն վրայ չէր:

— Չե՞նք կրնար,— ըսի Մէհմէտ Ռիֆաթին,— պզտիկ շեղում մը ընել, Տարսոն երթալ, գոնէ գիշեր մը մնալ եւ յետոյ ճամբա-նիս շարունակել:

— Անկարելի է,— պատասխանեց ոստիկանը,— որովհետեւ պատուիրած են ինձի որ ճամբան չուշանամ եւ անմիջապէս Հա-լէպ վերադառնամ:

- Օր մը աւելի, օր մը պակաս, կարեւորութիւն չունի:
- Բայց ի՞նչ պիտի ընես Տարսոն, - Հարցուց:
- Բարեկամներ ունիմ որոնցմէ կը յուսամ դրամ առնել:
- Եւ եթէ չի տան...
- Ես վստահ եմ որ անպատճառ կուտան եւ կը խոստանամ առածիս մէկ երրորդը քեզի նուիրել:

Մէհմէտ Բիֆաթ իմ ստիպումներուս վրայ վերջապէս հաւանեցաւ Տարսոն երթալ:

Եննիճէի կայարանը վար իջանք, գոյքերնիս թողուցինք կայարանի պաշտօնեայի մը քով եւ մենք Տարսոնի կառախումբը առնելով կէս օրէն յետոյ հասանք քաղաք:

Առաջին ծանօթը զոր տեսայ պ. Ծօն Մարտիկեանը եղաւ: Ծերուկ ոստիկանը չափազանց յոգնած էր, վակօսին մէջ ամբողջ գիշերը չէր կրցած քնանալ եւ ուզեց որ իրեն հանգչելիք տեղ մը ցոյց տանք: Պ. Ծօն իր սենեակը առաջնորդեց զայն՝ ուր պառկեցաւ մինչեւ իրիկուն, բոլորովին ազատ թողլով զիս:

Նախ գացի տեսնել պ. Նազարէթ Պիւլպիւլեանը որուն հետ գացինք Շալվարճեան եղբայրներուն գրասենեակը: Շալվարճեան էֆէնտի շատ սիրալիք ընդունելութիւն մը ըրաւ ինծի եւ ինքնաբերաբար 50 ոսկի տրամադրեց ինծի:

Խնդրեցի իրմէ որ ինծի հետ ընկերացող ոստիկանին հետ տեսակցի եւ ջանայ կարգալ իմ մասին գրուած թուղթը:

- Շատ աղէկ, - ըսաւ, - անմիջապէս զինքը հոս բեր, եթէ հարկ ըլլայ, թուղթը կարդալու համար քանի մը ոսկի ալ կուտամ իրեն:

Գացի բերել ծերուկ ոստիկանը որուն հետ առանձին տեսուրեցաւ Շալվարճեան էֆէնտին եւ յետոյ ըսաւ ինծի.

- Թուղթը կարդացի, հանգիստ եղիր, բան մըն ալ չկայ քեզի համար, Գոնիա երաշխաւորութեամբ թող պիտի տրուիս:

Բնականաբար այս տեղեկութիւնը շատ ուրախացուց զիս: Գալով Մէհմէտ Բիֆաթի, ան ալ ինծի չափ ուրախ էր, որովհետեւ Շալվարճեան էֆէնտի 4 ոսկի նուէր տուած էր իրեն եւ 15 ոսկի ալ ես տուի, ըրած խոստումիս համեմատ:

Նոյն գիշերը պանդոկ մը անցուցինք եւ հետեւեալ օր ալ գացինք Շալվարճեաններու ալիւրի մեծ գործարանը ուր մնացինք ամբողջ օրն ու գիշերը եւ պ. Արամ Շալվարճեան մէկ քանի լուսանկարներս առաւ:

Յաջորդ առտու արշալոյսին գործարանէն կառքովը վերադարձանք Եննիճէ ուրկէ կառախումբով շարունակեցինք մեր ճամբորդութիւնը: Քանի մը ժամ անդին վար իջանք կառախումբէն տէքօվիլով\* շարունակելու համար ճամբանիս, մինչեւ Գարա Բունար:

Մէհմէտ Բիֆաթ միջոց մը հեռացած էր քովէս եւ ես բաց վակօններէն մէկուն մէջ տեղաւորուած էի, երբ վակօն մտաւ ձեռքը պայուսակով մարդ մը:

Այդ մարդը նոյնինքն Տէր-Չօրի միւթէսարըֆն էր:

Ուշադրութեամբ երեսս նայեցաւ եւ գոչեց.

- Դուն հոս ի՞նչ բան ունիս:
- Հալէպէն զիս Գոնիա կը ղրկեն կոր, - պատասխանեցի:
- Բայց դուն Հալէպ ինչպէ՞ս գացիր Տէր-Չօրէն, առանց իմ գիտութեանս:

- Պ. էտվալի հետ գացի, - պատասխանեցի, - որովհետեւ ճամբան թարգմանի պէտք ունէր:

- Պ. էտվալ իրաւունք չունէր քեզ միասին տանելու եւ այս մասին ինծի խօսք ալ տուած էր:

- Չեմ գիտեր ձեզի տուած խօսքը, բայց իրողութիւնը այն է որ զիս հետը Հալէպ բերաւ:

- Իսկ յետո՞յ...

- Հազիւ թէ հինգ վեց օր ազատ պտտեցայ Հալէպի մէջ, եւ ահա՛ ոստիկանութիւնը զիս ձերբակալեց եւ ամիսէն աւելի բանտը մնացի:

- Ինչո՞ւ քեզ Տէր-Չօր չեն վերադարձուցած:

- Չեմ գիտեր, միայն սաչափը գիտեմ որ իմ մասիս ներքին գործերու նախարարին դիմում ըրին ու հրահանգ ուզեցին, հոնկէ հրաման եկաւ որ զիս Գոնիա աքսորեն:

\* Ննդադուր երկաթուղիով:

- Բայց Գոնիա աքսորավայր մը չէ:
- Հրամանը այդպէս էր:
- Չարմանալի բան... ուրեմն հիմա աքսոր կ'երթաս կոր:
- Այո՛, - պատասխանեցի:
- Բայց ոստիկան չի կա՞յ քովդ:
- Ոստիկանը տեղ մը գնաց հիմա պիտի գայ:
- Բարեբախտաբար նոյն միջոցին ոստիկանը եկաւ:
- Ահաւասիկ ինծի ընկերացող ոստիկանը, - ըսի, զայն ցոյց

տալով:

ՄիւթէսարըՔը սկսաւ ոստիկանը հարցուփորձել եւ տեսաւ որ սուտ չէի խօսած:

- Հարցուցի իրեն թէ ինք ո՛ւր կ'երթար:
- Արձակուրդով Պոլիս կ'երթամ, - պատասխանեց:

Այս հանդիպումը, մանաւանդ իր հարցուփորձները, բաւական մտատանջութիւն պատճառեցին ինծի: Կը խորհէի որ այդ մարդը կրնար Պոլիս դառնալէ ետքը գէշութիւն մը ընել ինծի, որովհետեւ ինչպէս պատմած եմ, Տէր-Չօրի մէջ, մանաւանդ վերջին ժամանակները թէ՛ ինք եւ թէ՛ ոստիկանապետը շատ հակառակ էին ինծի եւ այնպէս կը հաւատային որ ես եմ պատճառը Գերմաններուն իրենց հանդէպ բռնած թշնամական ընթացքին:

Տէքօվիլով մեր ուղեւորութիւնը շատ հաճելի էր: Տաւրոսեան լեռներուն մէջէն կ'անցնէր երկաթուղին ու ամէն վայրկեան տեսարանը կը փոխուէր:

Երբ Հաչքըրի հասանք, յիշեցի որ Թէոդիկ, Սեպուհ Ակունի, Եղիա Սուզիկեան այն կողմերն էին: Վահօնէն իջայ իրենց մասին տեղեկութիւն հարցնելու համար երկաթուղիի Հայ պաշտօնեաներէն:

Պաշտօնեաներէն իմացայ թէ Սեպուհ Ակունի ժամ մը առաջ կայարանն է եղեր, բայց մեկներ է իր տեղը, Քուլճուլար:

- Թէոդիկը մենէ կէս ժամ հեռուն, Թաշ Տուրմազ կը գտնուի, - ըսին, - եթէ ժամանակ ըլլար, կ'երթայինք զինքը կանչելու, բայց դժբախտաբար կառախուսմբը քիչ ատենէն պիտի մեկնի:

- Իսկ Եղիա Սուզիկեանը, - հարցուցի:
- Ան խեղճը քանի մը ամիս առաջ մեռաւ ստամոքսի խանգարումէ, - պատասխանեցին:

Երբ իմ ո՛վ ըլլալս իմացան եւ հասկցան թէ ոստիկանական հսկողութեամբ Գոնիա կը տարուիմ, առաջարկեցին զիս փախցնել:

- Քեզ հոս ապահով տեղ մը կը պահենք, - ըսին, - կե՛ր, խմէ՛, քէյֆդ նայէ:

- Ո՛չ, - պատասխանեցի, - չեմ ուզեր ինծի ընկերացող ոստիկանին գլուխը փորձանք բերել, մանաւանդ որ խօսք տուած եմ իրեն չփախչելու եւ այն ալ իմ այս խոստումիս համար ազատ թողած է զիս:

Արդարեւ երկաթուղիի Հայ պաշտօնեաները առաջին անգամ չէր որ Հայ մը պիտի փախցնէին ու պատսպարէին իրենց քով: Հարիւրաւորներ այսպէս ազատած են ստոյգ մահէ մը:

Հինգշաբթի առտու մը հասանք Գոնիա: Մէհմէտ Ռիֆաթէն խնդրեցի որ զիս անմիջապէս չի յանձնէ ոստիկանութեան: Կ'ուզէի նախապէս պատրաստել երաշխաւոր մը, եւ յետոյ երթալ ոստիկանատուն:

Մէհմէտ էֆէնտի հաւանեցաւ եւ միասին գացինք կայարանին մօտ գտնուած Աւստոս օթէլին, ուր սենեակ մը վարձեցինք: Յետոյ գացինք ժուռ գալու քաղաքին մէջ:

- Նոյն օրը մինչեւ իրիկուն թափառելով անցուցինք:
- Հետեւեալ օրը գացի գտայ տէր Ոսկի քահանան եւ ըսի որ թերեւս պէտք ունենամ իրեն իբրեւ երաշխաւոր:

- Պատրաստ եմ այդ ծառայութիւնը քեզի մատուցանել, - ըսաւ, - երբ որ պէտք ունենաս, եկուր զիս գտիր:

Տեսնուեցայ նաեւ մէկ քանի ուրիշ Հայերու հետ, բայց ծանօթ կամ բարեկամ չկրցայ տեսնել:

Յակոբ Տէր Յակոբեանը թէեւ Գոնիա էր, բայց չկրցայ իր հասցէն իմանալ: Նոյնպէս չկրցայ տեսնել Սրենցը:

Շաբաթ առտու, վերջապէս գացինք սարայ ուր կը գտնուի ոստիկանատունը:

Մուսավին մը մեզ ընդունեց, թուղթս կարդաց եւ ըսաւ.

– Ո՞վ երաշխաւոր պիտի տաս:

– Տէր Ոսկի քահանան, – պատասխանեցի:

– Շատ ազէկ, կ'ընդունինք զինքը:

– Երթամ բերն՞ մ զինքը, – հարցուցի:

– Այո՛, – ըսաւ, – միասին չորս զրուշի ալ դրոշմաթուղթ բեր:

Դուրս ելայ եւ ուղղուեցայ դէպի տէր Ոսկի քահանային բնակարանը: Դժբախտաբար քահանան տունը չէր: Եկայ դէպի սարայ եւ կը խորհէի ուրիշ երաշխաւոր մը գտնել, երբ տեսայ երկու Հայ քահանաներ:

Ուղղակի դիմեցի իրենց, անունս տուի եւ բացատրեցի խընդիրը:

– Ես կ'ըլլամ երաշխաւոր, – ըսաւ մին ինծի, – արդէն ինծի կը պատկանի երաշխաւոր ըլլալը, քանի որ ազգին ներկայացուցիչն եմ:

– Ինչպէ՞ս, – հարցուցի:

– Բնականաբար, Պատրիարքական փոխանորդ եմ այստեղ եւ պաշտօնապէս ճանչցուած:

– Աւելի լաւ, երթանք ուրեմն մուսավինին մօտ:

Ճամբան ինձ հասկցուց որ ինք էսկի Շէհիրի տէր Արսէն քահանան էր եւ Գոնիայի առաջնորդական տեղապահը:

Երբ եկանք մուսավինին քով ըսի թէ տէր Ոսկին չէի գտած տունը եւ տէր Արսէն քահանային հանդիպելով զանիկա բերած էի իբրեւ երաշխաւոր:

– Միեւնոյն բանն է, – ըսաւ մուսավինը, – երկուքն ալ մեզի ծանօթ են եւ երկուքին ալ երաշխաւորութիւնը ընդունելի:

Թուղթը գրուեցաւ, տէր Արսէն իր կնիքը դրաւ եւ մեկնեցաւ: Մէհմէտ Ռիֆաթ եւս մեկնեցաւ, ժամադիր ըլլալով հետս Աւստօս օթէլին ուր թողած էի գոյքերս:

– Դուն քիչ մը սպասէ որ թուղթը վեր դրկեմ վաւերացուի ու երթաս գործիդ, – ըսաւ մուսավինը: – Միայն թէ պէտք է որ ամէն իրիկուն գաս եւ իսպաթը վէճիւտ ընես:

– Եթէ կ'ուզէք օրը երկու անգամ գամ, – պատասխանեցի:

– Ո՛չ, մէկ անգամը բաւական է:

Անցաւ ժամ մը, երկու ժամ թուղթը չբերին: Վերջապէս երբ ժամ ետքը թուղթերու ծրար մը բերին մուսավինին որ սկսաւ զանոնք քննել:

– Արդեօք կրնա՞մ մեկնիլ, – հարցուցի:

– Շատ կը ցաւիմ որ պիտի չկրնաք երթալ, – ըսաւ:

– Ինչո՞ւ համար:

– Վալի փաշան ձեր հոս մնալը յարմար չէ տեսեր...

Ինչպէս յայտնի է նոյն միջոցին Գոնիայի վալին էր Մուսամէր կոչուած հրէշը:

Ամբողջ երազներս, վայրկեանի մը մէջ օդը կը ցնդէին:

– Ո՛ւր պիտի դրկեն զիս, – հարցուցի:

– Վալի փաշան յարմար տեսեր է որ Սուլթանիէ դրկուիք, – պատասխանեց:

Գիտէի որ Սուլթանիէ Գոնիայի նահանգին ամէնէն գէշ աքսորավայրն է:

– Ե՞րբ պիտի երթամ, – հարցուցի:

– Յայտնի չէ, – պատասխանեց, – թերեւս վաղը, թերեւս քանի մը օրէն:

Եւ ուստիկան մը կանչելով հրամայեց որ զիս բանտը տանին կամ աւելի ճիշտ Քարու Արասի կոչուած առժամեայ բանտը, որ նոյն շէնքին մէջ, գետնայարկը, մեծկակ սենեակ մըն է վանդակորմով մը բաժնուած սրահէ մը ուր ուստիկանները եւ պահապանները կը մնային:

Այնչափ յուսալից էի ազատ թողուելուս մասին որ երբ վանդակէն ներս մտցնելէ ետքը դուռը վրայէս կղպեցին՝ անսահման տիրութիւն մը պատեց զիս:

Բարեբախտաբար զիս չէին տարած Սիտիքլի կոչուած աղտոտ բանտը, ուր առաջին անգամ, Գոնիայէն անցած ատենս, քանի մը ժամ մնացած էի եւ որուն յիշատակը անջինջ դրոշմուած էր մտքիս մէջ:



Գիշեր եղաւ. մէկ քանի բանտարկեալ կային որոնց հետ, բնականաբար, խօսակցութեան սկսայ:

Ինչպէս ըսի, գոյքերս օթէլը թողած էի ենթադրելով որ ազատ պիտի թողուիմ, եւ ահա՛ հիմա ո՛չ անկողին ո՛չ վերմակ ունէի պառկելու համար:

Բայց ա՛լ վարժուած էի կեանքի փափկութիւններէն հրաժարելու երբ հարկը պահանջէր: Կօշիկներս հանեցի գլխուս բարձրի ու գետնին վրայ պառկեցայ, արդարի քունով:

Հետեւեալ օրը Մէհմէտ Ռէֆաթ տեսնելով որ չեմ երեւար, կը կասկածի թէ զիս վար դրած են եւ կու գայ զիս տեսնելու: Կը բացատրեմ իրեն կացութիւնս եւ կը խնդրեմ որ գոյքերս եւ ճերմակեղէններս առնէ օթէլէն ու բերէ, ինչ որ սիրայօժար կ'ընէ անմիջապէս:

Հետզհետէ բանտը կը լեցուէր նորանոր մարդերով, որոնց մէջ Հայեր ալ կային, ամէնքն ալ իբրեւ զինուորական փախըստական ձերբակալուած:

Իրիկունը ուշ ատեն բերին նաեւ երկու մանկամարդ եւ մէկ պառաւ Հայ կիներ, որոնց կ'ընկերանային երկու փոքր տղաք ալ:

Այդ կիները մեր վանդակէն դուրս, պահապաններու սրահը տարուեցան:

Խեղճերը դառնօրէն կու լային:

Մանկամարդ կիներէն մին ճիշտ քովս կը գտնուէր, թէեւ երկաթեայ ձողերով բաժնուած:

– Ինչո՞ւ կուլաք, ի՞նչ կայ, – հարցուցի:

– Ի՞նչպէս չի լանք, – պատասխանեց խեղճը, – Հազար չար-չարանքներով յաջողեցանք Սուլթանիէէն փախչիլ եւ հոս ապաստանիլ, եւ ահա՛ մեզի նորէն Սուլթանիէ պիտի ղրկեն...

– Ինչպէ՞ս եղաւ որ օձիքը ձեռք տուիք:

– Մենք արդէն պահուելու օրէնք, ազատ համարձակ կը պտտէինք եւ ոստիկանութիւնն ալ լուր ունէր թէ Սուլթանիէէն եկած ենք: Բայց խնդրին մէջ ուրիշ բան կայ:

– Ի՞նչ է տեսնենք:

– Քովի կնոջս ամուսինը Սուլթանիէի մէջ սափրիչ էր, իբրեւ զինուոր ուզեցին զինքը ձերբակալել, ինքն ալ փախաւ հոս եկաւ, յետոյ մենք ալ ետեւէն եկանք ու հոս հաստատուեցանք: Ոստիկանութիւնը իմացեր է որ ատաբազարցի սափրիչ Շահնիկը հոս է եւ եկան զայն մենէ պահանջելու, մինչդեռ մարդը ուրիշ տեղ ծածկուած է եւ մենք չենք գիտեր թէ այս միջոցիս ո՛ւր կը գտնուի: Ոստիկանները կ'ըսեն որ կա՛մ իր պահուելու օրէնքը ցոյց պիտի տանք եւ կա՛մ մեզ Սուլթանիէ պիտի ղրկեն:

Երկու երիտասարդ կիները ատաբազարցի էին իսկ միւսը կարծեմ էսկէիչէհիրցի: Այս վերջինը պարզապէս վարձու տուած էր իր սենեակներէն մին այդ երկու կիներուն եւ հիմա իբրեւ անոնց մեղսակիցը բանտ կը բերուէր:

Բացի երկու փոքրիկ տղաներէն սափրիչին կինը ունէր նաեւ նորածին մը զոր քանի մը ժամը անգամ մը բանտ կը բերէին որպէսզի մայրը կաթ տայ:

– Սուլթանիէ ինչպէ՞ս տեղ է, – հարցուցի:

– Սոսկալի տեղ է, – պատասխանեց, – կատարեալ դժոխք մը...

– Շատ Հայեր կա՞ն...

– Առաջ հինգ վեց հազար հոգի կային, բայց մէկիկ մէկիկ փախան եւ հիմա հազիւ 5-6 հարիւր Հայ մնացած է:

– Փախչելու դիւրութիւն կայ ուրեմն:

– Կիներուն համար դիւրին է, շատ հարցնող փնտոող չի կայ, բայց էրիկ մարդոց համար քիչ մը դժուար է, միայն թէ դրամով ամէն բան կ'ըլլայ:

Բանտարկութեանս հետեւեալ օրն իսկ Գոնիա գտնուող երկու Հայ տարագիր, ատաբազարցի Յարութիւն Չալըքեան եւ ռոտոսթօցի Երուանդ Գալստեան եկան զիս տեսնելու:

Ուզեցին նախ՝ երաշխաւորութեամբ եւ գոնէ մէկ երկու շաբաթուան համար զիս Գոնիայի մէջ վար դնել, բայց իրենց դիմումները ապարդիւն մնացին:

Այն ատեն ուրիշ հնարք մը մտածեցին:

— Հիւանդ ձեւացիր,— ըսին,— եւ խնդրագիր մը տուր, ըսելով որ չես կրնար ճամբորդել: Ոստիկանութեան բժիշկը ստիպուած է գալ քեզ քննելու եւ տեղեկագիր մը տալու: Կերպով մը կը յաջողինք քեզի նպաստաւոր տեղեկագիր մը առնել ձեռքէն եւ եթէ մէկ երկու շաբաթ հոս մնաս, նոր դիմումներ կ'ընենք եւ կը յաջողինք քեզ բանտէն հանել:

— Հիւանդ ձեւանալուս պէտք չիկայ,— պատասխանեցի,— արդէն աջ ոտքիս երեսը ուռած է եւ դժուարաւ կը քալեմ ու կօշիկ չեմ կրնար հագնիլ, հետեւաբար կարելի չէ որ ոտքով երկու երեք օրուան ճամբայ երթամ:

— Լաւ ուրեմն, մենք քու բերնէդ խնդրագիր մը կը գրենք ու պէտք եղած տեղը կուտանք:

Շնորհակալութիւնս յայտնեցի այս ազնիւ անձերուն: Քանի օր որ մնացի բանտը, ո՛չ միայն ամէն օր իրենց այցելութիւնը կ'ընդունէի, այլ նաեւ օրը երկու անգամ իրենց տուներէն առատ կերակուր կը ղրկէին փոխն ի փոխ:

Խնդրագիրը մատուցուելէն երեք օր ետքը եկաւ ոստիկանական բժիշկը զիս քննելու եւ այդ միջոցին բանտի հանդարտութեան եւ անշարժութեան մէջ, ոտքիս ուռուցքը բոլորովին անցած էր:

Բժիշկը երիտասարդ թուրք մըն էր, չոր ու հակակրելի դէմքով:

— Ի՞նչ ունիս,— հարցուց խիստ դէմքով մը:

— Ոտքս ուռած է,— պատասխանեցի:

— Յոյց տուր նայիմ:

Ակնարկ մը նետեց ոտքիս վրայ եւ ըսաւ.

— Սուտ... բան մըն ալ չունիս, ուռեցք չի կայ:

— Ուռեցքը իջաւ, բայց ցաւը կը մնայ,— պատասխանեցի:

— Պարապ խօսք... իբր թէ զբաղում չունիմ ասանկ պարապ բաներու համար զիս անհանգիստ կ'ընէք...

Եւ սրտմտած դէմքով մը առաւ քալեց:

Այսպէս երկու բարեկամներուս ջանքերը զուր եղան:

Ա՛յ ես միտքս դրած էի թէ Սուլթանիէ պիտի երթամ եւ մըտքի հանդարտութիւնս վերստին գտած:

Բանտին մէջ շատ սիրտս չէր նեղանար: Ամէն օր նոր բանտարկեալներ կու գային կ'երթային եւ ժամանակ կ'անցնէինք խօսակցելով:

Օր մը պատկառելի մօրուքով ծերունի մը բերին: Քարամանէն կու գար Գոնիայի մեծ բանտը տարուելու համար:

Որովհետեւ ամէնէն մաքուր անկողինը իմս էր եւ ցերեկը իբրեւ բազմոց կը ծառայէր, ծերունին չորսդին աչք մը պտտցնելէ ետքը ինչ խնդրեց որ թոյլ տամ իրեն որպէսզի անոր վրայ նստի:

Բնականաբար չմերժեցի: Հարցուցի իրեն թէ ի՞նչ պատճառով բանտը կը գտնուէր:

Պատմեց իր պատմութիւնը: Այդ եօթանասունին մօտ պատկառելի ծերունին 35 տարի է ի վեր բանտի մէջ անցուցած էր իր կեանքը, իբրեւ ոճրագործ:

— Քանի՞ հոգի սպաննած ես,— հարցուցի:

— Եօթը,— պատասխանեց,— բայց կառավարութիւնը միայն չորս սպաննութիւնները գիտէ, միւս երեքը չի գիտեր:

Այն անկեղծութեամբ որ բանտերու մէջ կը տիրէ, հարցուցի.

— Գողութեա՞ն համար ըրիր այդ մարդասպանութիւնները:

— Երբեք,— գոչեց ոճրագործը վիրաւորուած շեշտով մը,— ես ազնուական ընտանիքի կը պատկանիմ, կեանքիս մէջ գողութիւն չեմ ըրած եւ կ'ատեմ գողութիւն ընողները:

— Կը ներէք,— ըսի,— ես ձեզ վիրաւորելու համար չըսի, բայց հետաքրքիր եմ իմանալու ձեր պատմութիւնը:

— Առաջին ոճիրս գործեցի պարուհիի մը պատճառաւ: Գիշեր մը ազգականներու տունը հաւաքուած էինք, աղջիկներ բերել տուինք խաղցնելու եւ զբօսնելու համար: Անոնցմէ մէկը իմ սիրուհիս էր, տեսայ որ ազգականներէս մէկը գէշ աչքով կը նայէր իրեն: Ամէնուս գլուխը տաքցած էր օղիէն, նախանձը

զիս խենթեցուց, դաշոյնը քաշեցի եւ մխեցի ազգականիս սիրտը: Վայրկենապէս մեռաւ, իսկ ես փախայ, բայց քանի մը օր հտըը ձերբակալուեցայ: Դատաստանի միջոցին ըսի թէ սարսափելի գինով էի ու անցած դարձածէն բան մը չեմ յիշեր:

Վկաներն ալ նոյնը հաստատեցին, ի բաց առեալ ազգական մը որուն հետ քիչ մը հակառակութիւն ունէինք: Այս անօրէնը ինծի հակառակ վկայութիւն տուաւ եւ գինով ըլլաս ժխտեց: Թերեւս ազատ պիտի արձակուէի, բայց իրեն պատճառաւ հինգ տարուան դատապարտուեցայ: Շնորհիւ դրամին, երկու տարի հտըը ազատեցայ բանտէն եւ շաբաթ մը հտըը սպաննեցի ինծի դէմ վկայող ազգականս, յետոյ փախայ եւ կրցայ տարի մը ծածկուած մնալ, բայց բոլոր ազգականներս զիս կը հետապնդէին եւ վերջապէս յաջողեցան հետքս գտնել եւ իմաց տալ ոստիկանութեան: Նորէն դատուեցայ եւ տասնըհինգ տարուան դատապարտուեցայ: Ութը տարի բանտը մնալէ հտըը, ընդհանուր ներումէ մը օգտուեցայ ու ազատ արձակեցին զիս: Վեց եօթը ամսուան միջոցին կրցայ զիս ձեռք տուող ազգականներէս երեքը մեռցնել, այնպիսի վարպետութեամբ որ չկրցան զիս ամբաստանել: Յետոյ, հարսնիքի մը ատեն, երբ կրկին գլուխները քիչ մը տաքցած էին, ընկուկէրս քաշեցի եւ ազգականներէս մէկն ալ գետին փռեցի: Ձերբակալուեցայ եւ այս անգամ ցկեանս բանտարկութեան դատապարտուեցայ: Այս անգամ 20 տարի մնացի բանտը եւ սուլթան Մէհմէտ Րէշատի գահակալութեան ատեն արձակուեցայ մեծ գումար մը տալով եւ ներում ընդունողներու ցանկին մէջ իմ անունս արձանագրել տալով: Պատերազմին սկիզբը կռիւի մը միջոցին, ուրիշ մէկ ազգականս սպաննեցի, որուն դէմ ոխ ունէի երկար ատենէ ի վեր: Այս անգամ ապահովաբար մահուան պիտի դատապարտուէի Պատերազմական ատեանին կողմէ, բայց դարձեալ դրամի ուժով գլուխս փրկեցի եւ ցկեանս բանտարկութեան դատապարտուեցայ: Հինգ տարի է որ Քարամանի բանտն էի, բայց հիմա զիս հոս բերին չեմ գիտեր ինչո՛ւ: Ես գոհ եմ այս փոխադրութենէն

որովհետեւ Գոնիայի նոր բանտը աւելի օդասուն եւ ընդարձակ է եւ ասկէ զատ բանտարկեալներուն մէջ ծանօթներ ունիմ:

– Իշալլահ հոս աւելի հանգիստ կ'ըլլաք,– ըսի:

– Ես ալ այդ յոյսով եկայ,– պատասխանեց:

– Եւ օր մըն ալ թերեւս կ'ազատիս...

Սուլթան Րէշատ շատ ծեր է, կրնայ վախճանիլ մէկ օրէն միւսը եւ նոր սուլթանը ընդհանուր ներում պիտի շնորհէ անշուշտ, ասկէ զատ պատերազմն ալ երբոր լմնայ, դարձեալ ընդհանուր ներումի յոյս կայ:

– Ես ալ այդ մտածումով կը մխիթարուիմ, որովհետեւ ա՛լ ձանձրացած եմ բանտի կեանքէն, ասկէ զատ մեռնելէ առաջ կ'ուզեմ անպատճառ, գոնէ քանի մը օր, ազատութիւն վայելի:

– Անշուշտ երբոր անգամ մըն ալ ազատիս, ա՛լ մտքէդ պիտի չանցնես մարդ սպաննել,– ըսի:

– Մէյ մը թո՛ղ ազատիմ,– պատասխանեց,– գոնէ սանկ շաբաթ մը եւ գիտեմ ընելիքս:

– Ի՞նչ պիտի ընես,– հարցուցի:

– Երկու ազգականներ ունիմ, անոնք ալ գետին փռեմ, այն ատեն կը հանգստանամ,– ըսաւ այդ վայրագ ծերունին:

Եւ այս խօսքերը արտասանած ատեն աչքերը չարաշուք կատաղութեամբ շողացին:

Քանի մը ժամ հտըը շղթայակապ տարին զինքը:

Այս ծերուկին յաջորդեց հսկայակազմ Պարսիկ մը, գեղեցիկ դէմքով կայտառ երիտասարդ մը զոր ձեռնակապով բերին ու բանտին մէջ ձեռնակապները հանեցին: Այնքան սեղմած էին երկաթը որ մատները արիւնոտած էին երբոր իրենց երկաթեայ բանտէն դուրս ելան: Բայց մարդը որեւէ բողոք կամ տրտունջ չէր ըներ, ընդհակառակը կը ժպտէր:

Հազիւ թէ իր կապանքներէն ազատած՝ մտերմօրէն քովս եկաւ, բարեւ մը տուաւ եւ առանց հրաւերի սպասելու երկնցաւ անկողնիս վրայ գոհունակութեան հառաչանք մը արձակելով:

Տեսնելով որ մատուըներէն արիւն կը կաթէր տակաւին, ըսի.

– Քովս ջուր ունիմ, ձեռքերդ քիչ մը լուս'։

– Հոգ չէ, պէտք չի կայ, – պատասխանեց անտարբեր կերպով մը, – ես վարժուած եմ ասանկ բաներու։

– Առաջին անգամ չէ՞ որ հոս կուգաք։

– 17 կամ 18 անգամ հոսկէ անցած եմ, արհեստս այնպէս կը պահանջէ։

– Ի՞նչ արհեստով կը զբաղիս։

– Գողութեամբ, – պատասխանեց մարդը ամենայն հանդարտութեամբ։ – Քսան տարի է այս է արհեստս։

– Ուրեմն բնաւ հոգդ չէ՞ ձերբակալուած ըլլալդ։

– Այս անգամ քիչ մը դժգոհ եմ, որովհետեւ գողութիւնը ըրի, բայց չօգտուեցայ անկէ... գողօնը ձեռքս բռնուեցայ։

Եւ պատմեց մանրամասնութիւնները։ Բաւական ունեւոր թուրք կնոջ մը հետ յարաբերութիւն կը մշակէ եղբր։ Վերջերս կինը գիւղ գացեր է քանի մը շաբթուան համար։ Անոր բացակայութենէն օգտուելով՝ տան դուռը բացեր եւ ներս մտեր է գիշեր ժամանակ, յուսալով որ հոն իրեն ծանօթ արկղի մը մէջ պիտի գտնար կնոջ գոհարեղէնները եւ դրամները, մօտաւորապէս 80 դեղին ոսկի։

– Կինը ըսաւ որ զանոնք հետը պիտի չտանի, – բացատրեց Պարսիկ գողը։

Բայց ահա՛ արկղը պարապ էր։ Հոմանուհին կ'երեւայ որ վերջին վայրկեանին միտքը փոխած էր։ Եւ մարդը կ'ստիպուի գոհանալ 5-6 կտոր գորգերէ, որոնք կռնակը կը զարնէ եւ դուրս կ'ելլէ տունէն եւ կ'ողողուի խան մը գորգերը հոն թողլու եւ երթալ գնորդ մը գտնելու համար։

Խանին տէրը կ'երեւայ որ կը կասկածի այս անծանօթ յաճախորդէն ու կ'երթայ ոստիկաններ կանչել, այնպէս որ երբ Պարսիկը կը վերադառնայ խան, իսկոյն կը ձերբակալուի։ Ոստիկանները նոյնիսկ պէտք չեն տեսներ զինքը հարցաքննելու, որովհետեւ վաղուց ծանօթ էր իրենց։ Իսկոյն ձեռնակապ կ'անցնեն ու կը բերեն բանտ։

Այս մարդը իր բազմամեայ փորձառութեան շնորհիւ պատժական բոլոր օրէնքները գիտէր, ինչպէս նաեւ ինքնապաշտպանութեան բոլոր ձեւերը։

– Յէն 6 ամիս է իմ պատիժս, – ըսաւ, – որովհետեւ գողութիւն ըրի, բայց ո՛չ դուռ կոտրեցի, ո՛չ պատ ծակեցի, ո՛չ արկղ կամ դարակ խորտակեցի, պարզապէս տան դուռը բաց գտայ եւ ներս մտայ, որովհետեւ պիտի չըսեմ թէ կեղծ բանալի մը շինել տալով դուռը բացի։

Ուրիշ բանտարկեալներ, գող, աւագակ, ոճրագործ, եւ այլն այս Պարսիկին դիմում կ'ընէին ու խորհուրդ կը հարցնէին։ Ամէնուն ալ պաշտպանութեան ձեւեր կը սորվեցնէր եւ իրենց կրելիք հաւանական պատիժը կ'որոշէր։

– Դուն այսինչ յօդուածին համեմատ 3 տարուան պիտի դատապարտուիս, դուն այնինչ յօդուածին համեմատ 11 ամսուան, դուն ազատ կ'արձակուիս, եւ այլն։

Արկածախնդրական կեանք մը ունեցած էր Պոլսոյ, Յունաստանի, Իզմիրի, Եգիպտոսի, Սուրիոյ, Հալէպի, Ատանայի մէջ որոնց բոլոր բանտերուն ալ ճաշակը առած էր։

Դուրսէն ինծի եկած կերակուրը որ ինծի համար շատ էր, բաժնեցի իրեն հետ այնչափ ատեն որ միասին մնացինք։ Գիշերներն ալ իմ անկողնիս վրայ քով քովի կը պառկէինք։

Միշտ լաւ է բանտին մէջ այս տեսակ մէկու մը բարեկամութիւնը վայելել։

Երբեմն մեր բանտը կը խճողուէր նորանոր ձերբակալուածներով եւ այն ատեն շատ անտանելի կը դառնար։

Գիշեր մը երկու թուրք ոճրագործներ պահանջեցին որ անկողինս իրենց ձգեմ պառկելու համար։

– Ինչո՞ւ դուք անկողնի վրայ պիտի պառկիք եւ մենք գետինը։

– Բայց անկողինը իմս է, – առարկեցի։

– Հոս բանտ է, իմս քուկդ չի կայ, եթէ ո՛չ վերջը գէշ կ'ըլլայ։

Բարեբախտաբար Պարսիկը հո՛ն էր: Իր հսկայ հասակը ցցեց  
եւ ըսաւ.

– Հանգիստ նստեցէ՛ք տեղերնիդ, ապա թէ ո՛չ ուրիշ կեր-  
պով կը խօսիմ հետերնիդ:

Եւ գրպանէն խոշոր դաշոյն մը հանեց:

Ոճրագործները քթերնուն տակէն մուտալով տեղերնին դար-  
ձան:

– Այս դաշոյնը ինչպէ՞ս չեն առած վրայէդ, – հարցուցի:

– Չի գտան, – պատասխանեց, – ասկէ զատ ուրիշ մըն ալ ու-  
նիմ:

Վեց եօթը օր այս ոստիկանական բանտը մնալէ ետքը օր մըն  
ալ եկան զիս տարին Սիտիքլի կոչուած բանտը որ այդ միջոցին  
ժանտառմըռիին կը պատկանէր: Այդ բանտը շատ վատ յիշա-  
տակը մը ձգած էր մտքիս մէջ եւ երբ անոր երկաթեայ նեղ դըռ-  
նէն, կամ աւելի ճիշտը, ծակէն ներս մտայ, նոր յուսահատու-  
թիւն մը տիրեց վրաս:

Բայց երբ ներս մտայ, տեսայ որ բանտը իր հին գարշելի ու  
աղտոտ երեւոյթը չունէր, մանաւանդ ամէն կարգի չարագործ-  
ներով խճողուած չէր: Սիտիքլին հիմա անցած էր, ինչպէս ըսի,  
ժանտառմըռիին եւ հոն, առժամեայ կերպով, կը բանտարկուէին  
այն անձերը որոնք սահմանուած էին ուրիշ տեղ զրկուելու հեծ-  
եալ ոստիկաններու միջոցով:

Երբ ներս մտայ, միմիայն հինգ հոգի կային, ամէնքն ալ  
թուրք: Մին զինուորական փախստական մըն էր, միւսը պոլսեցի  
յիսնապետ մը որ իբրեւ աքսոր Անթալիա կը զրկուէր, երրորդը  
ժանտարմա չափուչ մը, զեղծարարութեամբ ամբաստանուած,  
չորրորդը եւ հինգերորդն ալ Կարսի կողմէն գաղթած թուրքեր  
էին որոնք եզներ գողցած ու ծախած ըլլալով բռնուած ու բան-  
տարկուած էին:

Հագիւ թէ տեղաւորուած էի նոր բանտին մէջ, երբ բանտա-  
պանը եկաւ եւ փախստական զինուորը, կարսցի թուրքերը եւ  
զիս դուրս հանեց եւ առաջնորդեց քիչ մը անդին գտնուած խո-  
շոր ախոռը ուր աղբի ահագին դէզ մը կուտակուած էր:

– Այս աղբերը սա տոպրակներուն մէջ լեցուցէք ու դուրսի  
սայլին մէջ պարպեցէ՛ք, – հրամայեց ժանտարմա մը:

Սկսանք գործի եւ այս տաժանակիր աշխատութիւնը տեւեց  
մէկ քանի ժամ, որմէ ետքը վերադարձանք բանտ:

Հետեւեալ օրը դարձեալ մեզ դուրս հանեցին:

Այս անգամ ընդարձակ բակը պիտի շրջէինք եւ աւլէինք:

Ձիս հորէն ջուր քաշելու սահմանեցին իսկ միւսները ջրելու  
եւ աւլելու:

Ութսուն դոյլի չափ ջուրը քաշելէ ետքը շնչասպառ ինկայ:  
Երկու կարսեցիները, որոնց հետ բարեկամացած էի ու իմ կե-  
րակուրովս զիրենք կերակրած, զիս ներս տարին ու խնամեցին,  
հայհոյանքներ տեղալով ժանտարմաներուն հասցէին որոնք ին-  
ծի պէս չօրպածի մը այս տեսակ անկարեաներու կ'ենթարկէին:  
Իրիկուան դէմ ժանտարմա մը եկաւ եւ ըսաւ.

– Վաղը ճամբայ պիտի ելլես Սուլթանիէ երթալու համար:

– Պատրաստ եմ, – պատասխանեցի:

– Եթէ կառք մը կ'ուզես, կառապան մը բերեմ հետը սակար-  
կէ:

– Կառքը քանի՞ կ'երթայ մինչեւ Սուլթանիէ:

– Առնուազն 30-35 ոսկիի, – պատասխանեց:

Քովս հազիւ 26-27 ոսկի կար որուն մէկ մասը Յարութիւն  
Չալըքեան եւ Երուանդ Գալուստեան տուած էին:

– Այդչափ դրամ չունիմ, – ըսի:

– Ուրեմն ոտքով պիտի երթաս, – պատասխանեց ժանտար-  
ման, – բայց գիտցիր որ շատ պիտի յոգնիս որովհետեւ քեզի  
ընկերացող ոստիկանը ձիաւոր է:

– Ի՛նչ կ'ուզէ ըլլայ, չեմ կրնար կառք բռնել:

Միւս առտու երիտասարդ մը եկաւ եւ 250 դրուչ թղթա-  
դրամ յանձնեց, ըսելով թէ ամերիկացի կին մը զրկած է ինծի  
համար: Անունը տալ չուզեց, բայց կարծեմ միս Քուլմանն էր:

Քիչ յետոյ, բանտապանին ձայնը հնչեց.

– Ստամպոլլու Երուանդ...

Դուրս ելայ: Ընդարձակ բակին մէջ նստած էր ժանտարմա քօմանտանին, իսկ պատին տակ, Հողին վրայ նստած էին այն երեք կիները, որոնք Սուլթանիէէն եկած էին եւ որոնց հետ տեսակցած էի միւս բանտին մէջ: Երեքն ալ դառնօրէն կուլային:

– Դուն կառք պիտի չբռնե՞ս քեզի համար, – հարցուց քօմանտանը ինծի:

– Ո՛չ, որովհետեւ դրամ չունիմ, – պատասխանեցի:

– Այս կիներն ալ պիտի երթան Սուլթանիէ, ուստի կրնաս կառքի վարձքին կէսը վճարելով միասին երթալ:

– Քանի՞ ոսկի է կառքը, – հարցուցի:

– Երեսուն ոսկի, – պատասխանեց:

– Լա՛ւ, ուրեմն 15 ոսկի կուտամ, բայց աւելի չեմ կարող:

Բայց երեք կիները իրենց լաց ու կոծը սաստկացուցին:

– Մենք հոս կը մեռնինք Սուլթանիէ չենք երթար, – կ'աղաղակէին:

Ի գո՛ւր ոստիկանները կը ջանային լռեցնել զիրենք:

Յորդոր, սպառնալիք, ոչինչ օգուտ կ'ընէր: Ոստիկանները փորձեցին բռնի կիները ոտքի հանել եւ դէպի կառքը տանիլ: Որովհետեւ կառք մը պատրաստած էին արդէն:

Կիները գետին փռուեցան եւ սկսան ա՛լ աւելի սոսկալի աղաղակներ բառնալ:

– Ձեզի ծեծել պիտի տամ, – կը պոռար Հրամանատարը:

– Մեծի տակ կը մեռնինք չենք երթար, – կը պատասխանէին կիները:

Այս տեսարանը բաւական տեւեց: Ի վերջոյ Հրամանատարը՝ յուսահատ՝ տեղի տուաւ:

– Հիմակուհիմա թո՛ղ այս կիները մնան, – որոշեց:

– Դուն ալ առայժմ բանտ դարձիր, – հրամայեց ոստիկան մը ինծի դառնալով:

Կառապանն ալ իր կառքը քչեց տարաւ:

Արդեօք այդ կիներուն պատճառով ե՞ս ալ պիտի չմեկնէի: Այս տարտամ յուսով քիչ մը ատեն օրօրուեցայ, բայց երկար չտեւեց:

Ժամ մը ետքը դարձեալ բանտապանին ձայնը հնչեց.

– Սթամպօլլու Երուանդ...

Փութացի դէպի դուռը:

– Պատրաստուէ, կէս ժամէն ճամբայ պիտի ելլես, – ըսաւ:

Վերադարձայ բանտ. կառք մը վարձելու համար պէտք եղած դրամը չունէի, հետեւաբար ստիպուած էի ոտքով երթալ եւ այդ պարագային զրկուիլ անկողինէս ու վերմակէս որոնք չէի կրնար կռնակիս վրայ կրել երկու երեք օր:

Ժանտարմա մը ուզեց զանոնք գնել 80 դրուշ թղթադրամով:

Մերժեցի այդ առաջարկը եւ նախընտրեցի զանոնք նուիրել երկու կարսցի թուրքերուն՝ որոնք զիս բանտը կամ գործարանը մաքրելու տարապարհակ աշխատութիւններէ փրկած էին, ինծի վիճակուած գործերը իրենք կատարելով: Իբրեւ միակ ծածկոյթ ունէի Տէր-Ջօրէն հետս բերած արաբական մաշլախս գոր տիկին Տիրուհի Ճըզըլեան ծածկոյթի վերածած էր Հալէպի մէջ: Այդ մաշլախը թէ՛ կրնար զիս տաք պահել եւ թէ՛ դիւրատար էր: Ասկէ զատ մէկ ձեռք փոխնորդ ճերմակեղէն ունէի, ուրիշ ոչինչ, որովհետեւ ստիպուեցայ հրաժարիլ նաեւ ջրամանէն, մէկ երկու պնակներէ, դաւաթէ եւ ուրիշ այս կարգի մանր մուկն անարկաներէ, որոնք նուիրեցի երկու թուրքերուն:

Այն ոստիկանը որ ինծի պիտի ընկերանար՝ դուրսը բակին մէջ կը սպասէր երբոր բանտէն ելայ:

– Քալէ՛ նայինք, – ըսաւ դաժան դէմքով մը:

Երբ փողոց ելանք, ըսի իրեն.

– Հոս մօտերը Հայ ոսկերիչ մը կայ, Յարութիւն Չալըքեան, կը խնդրեմ մինչեւ իր խանութը երթանք եւ մնաս բարով ըսեմ:

– Ծամբադ քալէ՛, – գոչեց նոյն դաժանութեամբ:

Հասկցայ որ կարելի չէր զինքը համոզել եւ քովն ի վեր սկսայ քալել:

– Դո՞ւք ալ ոտքով պիտի գաք, – հարցուցի երբոր քաղքէն դուրս ելանք եւ ընդարձակ դաշտ մը մտանք:

– Ձէ՛, – պատասխանեց, – ես ձիով պիտի գամ... ձիս քիչ մը անդին կը սպասէ կոր:

Արդարեւ կէս ժամ քալելէ ետքը գտանք իր ձին զոր փոքրիկ տղեկ մը սանձէն բռնած էր:

Ոստիկանը ցատքեց վրան եւ առաջ քաշեց ինծի պոռալով.

— Քիչ մը շուտ քալէ՛ հետեւ չմնաս... եթէ փախչելու փորձ րնես գլուխդ կը պայթեցնեմ:

Հեւ ի հեւ հետեւեցայ իրեն: Մայիսի կէսերն էր եւ արեւը բաւական ջերմ. բեռս ալ թէպէտ թեթեւ, այսուհանդերձ կրկին նեղութիւն կը պատճառէր:

Վերջապէս հասանք, դաշտին մէջէն անցնելով, մեծ ճամբան:

Հեռուն կը նշմարուէր կառք մը որ կեցած էր, դէպի հոն ուղղուեցանք:

Երբ կառքին մօտը գացինք տեսայ որ մէջը երկու ոստիկան եւ թրքուհի մը նստած էին: Միաձի կառք մըն էր, իսկ կառապանը կաղ ծերունի մը:

Ինծի ընկերացող ոստիկանը զիս կառքին մէջ նստող ոստիկաններուն մատնանիչ ընելով ըսաւ.

— Ահաւասիկ այն Հայը զոր Սուլթանիէ պիտի տանիք ձեզի հետ... ես կը վերադառնամ:

Կառքը ճամբայ ելաւ եւ ես վազն ի վազ հետեւեցայ անոր բաւական տեղ: Բայց վերջապէս ոյժս սպառեցաւ ու քայլերս թուլցուցի: Բաւական հեռու մնացի կառքէն եւ ոստիկանները ստիպուեցան կեցնել կառքը, մինչեւ որ հասնէի:

— Ձեռքի բեռդ կառքին մէջ դի՛ր,— ըսաւ ոստիկաններէն մին,— եւ ջանա՛ որ կառքէն չհեռանաս:

Նորէն սկսայ կրցածիս չափ մօտէն հետեւիլ կառքին, բայց ո՛չ երկար ատեն: Ոստիկանները դարձեալ կեցուցին կառքը:

Այս դրութիւնը անտանելի կը թուէր իրենց: Իրենց գնացքը շատ կը դանդաղանար իմ պատճառովս:

— Եթէ այս ընթացքով երթանք, չենք կրնար գիշերը Եարմա հասնիլ,— կ'ըսէր կառապանը:

Եարմա այն գիւղն էր ուր պիտի գիշերէինք:

— Ասկէ աւելի շուտ չեմ կրնար քալել,— յայտարարեցի:

— Ես 35 ոսկի վճարեցի որպէսզի արագ ճամբորդեմ,— կը գանգատէր թրքուհին ալ:

Այս բանակցութեան միջոցին ոստիկանները նշմարեցին որ կառք մը կուգար Գոնիայի կողմէն:

— Սպասենք,— ըսաւ մին,— թերեւս կրնանք այս մարդը կառքին մէջ տեղաւորել:

Կառքը մօտեցաւ մեզի: Ապրանք բեռցած էր, բայց կառապանին քով նստելիք տեղ մը կար:

Ոստիկանները կեցուցին զայն.

— Ո՛ւր կ'երթաս կոր,— հարցուց ոստիկաններէն մէկը:

Կառապանը որ հազիւ 15-16 տարեկան պատանի մըն էր, շփոթած ձեւով մը պատասխանեց.

— Սուլթանիէ կ'երթամ...

— Շատ աղէկ ուրեմն,— գոչեց ոստիկանը,— այս մարդը թո՛ղ քովդ նստի:

Եւ զիս ցոյց տուաւ:

— Բայց ես ստիպուած եմ Եարմա մնալ,— դիտել տուաւ պատանին:

— Մինչեւ Եարմա թո՛ղ քեզի հետ գայ, անկէ անդին Աստուած ողորմած է:

— Բայց կառքը շատ բռնաւորուած է եւ ձին չկրնար տանիլ այդչափ բեռ:

— Երկան ըրիր, հիմա խարազանը կ'իջեցնեմ գլխիդ,— գոչեց ոստիկանը:

Յետոյ ինծի դառնալով՝ աւելցուց.

— Ե՛լ քովը նստէ:

Փրկուած էի:

Պատանի կառապանը՝ դէմքը կախ՝ համակերպեցաւ: Իր սիրտը շահելու համար սիկառէթ մը հրամցուցի, եւ սկսանք խօսակցիլ: Կը կարծէի թէ թուրք մըն էր:

— Ինչո՞ւ Սուլթանիէ կ'երթաս,— հարցուց:

— Ձիս աքսոր կը տանին հոն,— պատասխանեցի:

– Յո՞յն ես...

– Ո՛չ, Հայ եմ:

Պատանին իր պաղ վերաբերումը յանկարծ փոխեց.

– Ես կարծեցի թէ Յոյն ես, – ըսաւ, – եթէ Հայ ըլլալդ գիտնայի բնաւ դժուարութիւն չէի յարուցաներ, ես ալ Հայ եմ:

Եւ անմիջապէս պանիր հաց հանելով հրամցուց ինծի:

– Ես, – ըսաւ, – ոստիկանին սուտ խօսեցայ, վաղ առտու արշալոյսին ճամբայ պիտի ելլեմ դէպի Սուլթանիէ, քեզի ալ միասին կը տանիմ, ձիս զօրաւոր է:

– Շնորհակալ եմ, – պատասխանեցի, – ես ալ քեզի պախշիչ մը կուտամ:

– Բան մըն ալ չեմ ուզեր... աքսոր գացող մարդէն դրամ կ'առնուի՞...

Դժբախտաբար իրիկունը երբ հազիւ կէս ժամ մնացած էր գիւղ հասնելու, կառքին անիւի երկաթներէն մին կոտրեցաւ եւ կառքը անշարժութեան դատապարտուեցաւ:

Խեղճ տղան ստիպուեցաւ հոն մնալ եւ ես ոտքով շարունակեցի ճամբաս:

Ոստիկանները գիւղին միւթարը կանչել տուին եւ հրամայեցին որ մեզի պառկելու տեղ ցոյց տան եւ ուտելիք բերեն:

Գիւղին օտան առաջնորդեցին մեզի, այսինքն հիւրանոցը որ բաւական ընդարձակ սենեակ մըն էր մաքուր գորգերով եւ օթոցներով զարդարուած:

Քիչ յետոյ բերին նաեւ պատուական պուլկուրի փիլավ մը եւ ա՛լ աւելի պատուական անարատ մածուն եւ թարմ փիտէի հաց:

Երկու ոստիկանները, թրքուհին եւ ես, ծալլապատիկ նըստանք խոշոր սինիին շուրջը եւ ախորժակով ճաշակեցինք մեզի տրուած կերակուրը:

Ճամբորդութեան ընթացքին հասկցայ որ թրքուհին, որ ոստիկանական հսկողութեամբ կը տարուէր Սուլթանիէ, բնիկ այդ տեղացի է եղեր եւ սպայի մը կինը: Օգտուելով իր ամուսնոյն

բացակայութենէն, փախուստ տուեր է իր ընտանեկան յարկէն ու գացեր է Գոնիա, հանրատան մը մէջ: Վերջերս ոստիկանութիւնը իմանալով իր ուր գտնուիլը ձերբակալած է ու այժմ կը զրկուէր իր մօրը քով:

Բաւական գեղեցիկ մանկամարդուհի մըն էր այս կինը որ իր վարած կեանքին բերումովը էրիկ մարդերէ շատ չէր փախչեր: Պէտք չի կայ ըսելու որ երկու ոստիկաններն ալ մինչեւ ետքը կը սիրաբանէին հետը: Նոյն գիշերը անցուցինք միասին միեւնոյն հիւրասենեակին մէջ, ուր մեզի համար պատրաստեցին չորս մաքուր անկողին:

Հետեւեալ առտու կանուխ պատրաստուեցանք մեկնելու համար:

Ոստիկաններուն ըսի որ ես ալ բան մը վճարելով իրենց կառքը նստիմ:

– Մենք չենք կրնար խառնուիլ ատոր, – պատասխանեցին, – կառքը կինը բռնած է, անոր խօսէ՛:

Դիմեցի թրքուհիին.

– Ես, – ըսաւ, – կառքը վարձած եմ 35 ոսկիի, եթէ կէս վարձքը վճարես կրնաս նստիլ:

– Բայց ճամբորդութեան կէսը արդէն ըրած ենք, – դիտել տուի:

– Դուն գիտես, – պատասխանեց:

Ճամբայ ելանք անոնք կառքով իսկ ես հետիոտն:

Ամէն անգամ որ գիւղէ մը կ'անցնէինք խոշոր շուկաներու ոհմակ մը կը յարձակէր կառքին վրայ եւ ես կը ստիպուէի քանի մը վայրկեան կառքին մէջ ապաստանելու, մինչեւ որ գիւղին սահմանէն հեռանայինք ու շուկաները ետ դառնային:



## ՍՈՒԼԹԱՆԻԷԻ ՄԷՋ

Դադարի մը միջոցին ոստիկաններէն մէկը քովս եկաւ.

– Դեռ ութը ժամուան ճամբայ ունինք,– ըսաւ,– եւ դուն արդէն յոգնած ես, եկուր կարգադրութիւն մը ընենք ու դուն ալ մեր քովը նստէ՛:

– Լաւ,– պատասխանեցի,– բայց ես 17 ոսկի չեմ կրնար վճարել:

– Մենք կնիկը Համոզեցինք, ինք դրամ չուզեր կոր բայց կառապանը կը մերժէ կոր ըսելով որ բեռը շատ է ու ձին չկրնար տանիլ, բայց եթէ իրեն վճարում մը ընես ան ալ կը Համոզուի:

– Ի՞նչ պէտք է տալ...

– Դուն ո՞րչափ կրնաս վճարել,– Հարցուց ոստիկանը:

– Առ առաւելն երեք ոսկի:

– Շատ քիչ է, հինգ ոսկի տուր գործը լմնցնենք:

Կը զգայի որ պիտի չկրնայի մինչեւ ետքը քալել կառքին ետեւէն, մանաւանդ որ արեւն ալ չափազանց կը նեղէր, ուստի առանց սակարկելու հինգ ոսկին տուի:

– Ես հիմայ երկու ոսկիով գործը կը լմնցնեմ,– ըսաւ ոստիկանը եւ երեք ոսկին ալ ինծի կը մնայ, բայց ո՛չ կառապանին եւ ո՛չ ալ ընկերոջս բան մը չըսես... անոնք թող կարծեն որ միայն երկու ոսկի կրցած ես տալ:

– Ինչպէս որ կ'ուզես այնպէս ըրէ՛,– պատասխանեցի,– ես մէկու մըն ալ բան չեմ ըսեր:

Եւ այսպէս ես ալ բազմեցայ կառքին մէջ:

Նոյն իրիկունը, ուշ ատեն, պիտի Հասնէինք Սուլթանիէ: Ըստ օրինի ոստիկանները պէտք էր որ մեզ յանձնէին հիւքիւ-

մէթը\* եւ եթէ շատ ուշ մնայինք, ինչպէս որ կ'ենթադրէինք, պաշտօնեաները մեկնած պիտի ըլլային եւ մեզ գիշերը վար պիտի դնէին բանտը, հետեւեալ օրը կատարելու համար մեր մասին ըլլալիք ձեւակերպութիւնները: Այս անպատեհութեան առաջը առնելու համար թրքուհին առաջարկեց որ ուղղակի իր մօրը տունը երթանք, գիշերը հոն անցունենք եւ հետեւեալ առտու ներկայանանք պաշտօնատուն:

Ես ալ ոյժ տուի այս առաջարկութեան, բայց ոստիկանները շատ տրամադիր չերեւցան կնոջ տունը երթալու:

– Ուրեմն խան մը երթանք,– առաջարկեցի:

– Սուլթանիէի մէջ ճամբորդ հիւրընկալելու խան չի կայ,– ըսաւ թրքուհին:

– Հիւրանոցը երթանք:

– Մասնաւոր հիւրանոց ալ չի կայ, միայն Հասան աղայի հիւրանոցը կայ, բայց ես հոն չեմ կրնար երթալ որովհետեւ Սուլթանիէի մէջ ամէն մարդ զիս կը ճանչնայ,– առարկեց թրքուհին:

Պահ մը խորհեցանք Սուլթանիէի մօտերը գտնուող եայլայի մը մէջ անցընել գիշերը եւ հետեւեալ առտու շարունակել մեր ուղեւորութիւնը:

Այս ալ կառապանին գործին չեկաւ, որովհետեւ օր մը պիտի կորսնցնէր:

Ի վերջոյ ոստիկանները հաւանեցան թրքուհիին մօրը տունը իջեւանիլ:

Բայց ահա՛ ճամբու ընթացքին երկու ոստիկաններուն մէջ հակառակութիւն մը ծնաւ, որովհետեւ կինը աւելի համակրանք ցոյց կու տար մէկուն: Պահ մը վախցայ որ հակառակութիւնը կռիւ պիտի յանգի:

Արհամարհեալը որ քիւրտ ոստիկան մըն էր, ականջէս վար խուլ սպառնալիքներ կ'ուղղէր միւս ոստիկանին ու կնոջ հասցէին: Այս անախորժ կացութեան մէջ, ուշ ատեն, երբ գիշերը արդէն կոխած էր, հասանք Սուլթանիէ:

\* Այստեղ՝ կառավարական գրասենեակ:

— Հոս իջնենք, տուններնիս սա է,— ըսաւ թրքուհին մօտերը տուն մը ցոյց տալով:

— Անանկ բան չի կայ,— գոչեց քիւրտ ոստիկանը,— շիտակ հիւքիւմէթ պիտի երթանք:

— Մեր կարգադրութիւնը այնպէս չէր,— դիտել տուաւ միւս թուրք ոստիկանը:

— Ես օրէնքէն չեմ կրնար շեղիլ ու վրաս պատասխանատուութիւն բերել, պէտք է որ այս կիւնը իսկոյն յանձնեմ ոստիկանութեան:

Բաւական տաք վիճաբանութենէ մը ետքը, վերջին խօսքը մնաց քիւրտ ոստիկանին եւ կառքը իր ճամբան շարունակեց դէպի հիւքիւմէթը:

Ի գո՛ւր կիւնը կ'աղաղակէր, կը պաղատէր որ գինքը գիշերատեն ոստիկաններուն չյանձնէ, քիւրտը անդրդուելի մնաց:

Վերջապէս հասանք պաշտօնատան առջեւ եւ ոստիկանը մեզ մեր թուղթերով յանձնեց հոն գտնուող մէկ քանի ոստիկաններու որոնց ամէնքն ալ, նոյն միջոցին, գինով էին:

Նախ այդ ոստիկանները ճանչնալով թրքուհին՝ սկսան նախատել զայն, ինքն ալ փոխադարձ հայհոյանքներ տեղաց անոնց հասցէին, գինով ոստիկանին մէկը ձեռքի մտրակովը զարկաւ կնոջ, կիւնը բարձրաղաղակ վայնասուն մը բրցուց, վերջապէս միջամտեցին ու կիւնը առին տարին ու առանձին սենեակ մը բանտարկեցին:

Իսկ զիս առաջնորդեցին քօմիսէր մուսավիինի քով, որ տեղւոյն ոստիկանական բարձրագոյն պաշտօնեան էր:

Քաղաքավար կերպով հարցուփորձեց զիս եւ երբ խմբագիր ու պոլսեցի ըլլալս իմացաւ, ըսաւ.

— Հոս ուրիշ Յոյն խմբագիր մըն ալ կայ որ աքսոր է, թերեւս կը ճանչնաս, Ավրամիտիս կը կոչուի:

— Չեմ յիշեր կոր այդ անունով խմբագիր մը,— պատասխանեցի,— եթէ դէմքը տեսնեմ թերեւս կը ճանչնամ:

— Վաղը կը ծանօթանաս հետը:

Քանի որ հետեւեալ օրը ազատ պիտի թողուէի, խնդրեցի քօմիսէրէն որ զիս նոյն գիշերը բանտ դնել չի տայ եւ թոյլատրէ որ հո՛ս սենեակի մը մէջ, աթոռի վրայ անցնեմ:

— Ես քեզի իմ սենեակս կը տանիմ,— պատասխանեց քօմիսէրը,— դուն հոս սպասէ, մինչեւ որ գամ:

Ենորհակալութիւն յայտնեցի իր ցոյց տուած ազնուութեան համար:

Իր մեկնելէն ետքը երկու գինով ոստիկաններ ներս մտան ու բազմեցան գրասեղանին քով:

— Դուն հոս ի՞նչ բան ունիս,— պոռաց իրենցմէ մին, ինծի դառնալով:

— Քօմիսէր պէյին կ'սպասեմ կոր:

— Անիկա գնաց, ա՛լ վաղը առտու կուգայ:

— Ինծի ըսաւ որ հիմա պիտի գայ եւ իրեն սպասեմ:

— Դուն Գոնիայէն եկող Հայը չե՞ս:

— Այո՛,— պատասխանեցի:

— Աստուած պէլանիդ տայ, խայրններ...

Եւ սկսաւ կարգ մը անլուր հայհոյութիւններ տեղալ:

Յետոյ «Մէհմէտ աղա» պոռաց: Եւ մօրուսաւոր յիսուն տարեկանը անցած մարդ մը ներս եկաւ: Բանտապահն էր:

— Առ այս մարդը բանտը նետէ՛,— գոչեց ինծի ցոյց տալով,— ինչո՞ւ գինքը ազատ ձգեր էք այսպէս:

— Էֆէնտիս,— դիտել տուի մեղմօրէն,— քօմիսէրը ըսաւ որ այս իրիկուն իր սենեակը պիտի մնամ:

— Դեռ կը խօսի՞ս կոր, հիմա գլուխդ կը ջախջախեմ,— գոչեց սպառնական ձեւով ոտքի ելլելով ու մտրակը ճօճելով:

Տեսայ որ անկարելի էր այդ գինովին խօսք հասկցնել ու ծրարս առած հետեւեցայ բանտապահին: Երբ գացինք բանտին դրան առջեւ, կրկին բացատրեցի իրեն խնդիրը եւ ըսի որ թերեւս քիչ ետքը քօմիսէրը կուգայ զիս փնտռելու եւ աղաչեցի որ փոխանակ զիս բանտ դնելու, թոյլ տայ հոն իր քով դրան առջեւ սպասելու:

Բանտապահը հաւանեցաւ:

Բանտին դուռը երկաթեայ ու վանդակաւոր էր, այնպէս որ կարելի էր ներսը դիտել: Պատուհան չունէր եւ միակ օդ առնելիք տեղը այդ վանդակաւոր դուռն էր:

Երեք տարիէ ի վեր շատ բանտերէ անցած էի, բայց երբեք չէի տեսած այնքա՛ն զզուելի, այնքա՛ն գարշահոտ արգելարան մը որքան Սուլթանիէի այս բանտը: Գոնիայի Սիտիքլին դրախտ մըն էր ասոր քով: Այդ մութ ու փոքր ծակին մէջ խճողուած էին քառասունէ աւելի բանտարկեալներ, ամէնքն ալ գող, աւազակ, ոճրագործ եւ շատերը շղթայակապ, այնպէս որ շղթաներու ձայնը կը լսուէր ամէն վայրկեան:

Այնքա՛ն նեղ էր այդ բանտը որ մէջը գտնուողները դժուարաւ կրնային տեղափոխուիլ:

Այդ տխուր տեսարանը կը դիտէի սիկառէթ մը պլորելով, երբ շղթայակիր բանտարկեալ մը մօտեցաւ վանդակաւոր դրան եւ ֆրանսերէն լեզուով խնդրեց որ սիկառէթ մը տամ իրեն:

— Ձեր անունը ի՞նչ է,— հարցուցի զարմացած՝ իր ֆրանսերէնէն:

— Ժոզէֆ,— պատասխանեց:

— Ազգութիւննի՞դ...

— Ֆրանսացի եմ եւ ասոր համար Սուրիայէն աքսորուած եմ Հոս:

— Իսկ ինչո՞ւ համար բանտը կը գտնուիք:

— Ոճրագործութեամբ ամբաստանուած եմ:

Հարցուփորձը աւելի չերկարեցի, քիչ մը ծխախոտ եւ քանի մը սիկառէթի թերթ տուի իրեն որ շնորհակալութիւն յայտնելով հեռացաւ:

Յետոյ իմացայ խնդիրը: Այս Ֆրանսացին ուրիշ երկու Ռուսերու եւ Արաբի մը հետ կը սպաննէ երկու Ռուսեր, զանոնք կողոպտելու համար, եւ ետքը կ'այրեն անոնց դիակները: Ոճիրը երեւան կ'ելլէ ու չորսն ալ կը բանտարկուին:

Ժամանակը կ'անցնէր ու քօմիսէրը չէր երեւնար: Փոխանակ

իրեն՝ ահա՛ զինով ոստիկանը ներս մտաւ յանկարծ եւ զիս տեսնելով բարկութենէն կատղած՝ հրամայեց որ բանտարկեն անմիջապէս:

Ժամանակ չահելու համար բնական պէտք մը պատրուակ ըրի եւ ուղղուեցայ դէպի պարտէզը որուն ծայրը կը գտնուէր գործարանը:

Բաւական մնացի Հոն եւ երբ վերադարձայ, ոստիկանը մեկնած էր, բայց բանտապահը ուզեց անպատճառ զիս ծակը մտցընել:

Բարեբախտաբար նոյն միջոցին վրայ հասաւ քօմիսէրը որուն հետ գացինք իր սենեակը որ մօտակայ տան մը մէջ կը գտնուէր: Յոգնութենէ ընկճուած՝ իսկոյն քնացայ տախտակամածի վրայ, մինչեւ առտու:

Առտուն քօմիսէրը զիս միասին առաւ եւ գացինք գիւղին հրապարակը ուր խեղճ ու կրակ մէկ քանի նպարավաճառի ու մանրավաճառի կրպակներ կային: Մտանք ամէնէն խոշոր խանութը որուն տէրն էր Գառնիկ Շիշմանեան պրուսացի: Արդէն Գոնիայէն յանձնարարած էին զինքը ինծի, իբրեւ Սուլթանիէի Հայ տարագիրներուն լաւագոյններէն մէկը:

Անունս լսած էր արդէն եւ շուտով բարեկամացանք: Ինք եղաւ նաեւ ինծի երաշխաւոր: Քօմիսէրը ըսաւ որ ամէն օր պիտի երթայի ստորագրել ոստիկանատան մէջ դրուած տոմարը:

— Ազատ պիտի պտտիս այստեղ,— ըսաւ,— միայն թէ չըլլայ որ փախչելու փորձ ընես, այն ատեն փորձանք կուգայ գլխուդ: Խոստացայ որ այս տեսակ փորձ մը պիտի չընեմ:

Գառնիկ Շիշմանեանի խանութը ժամադրավայրն էր ո՛չ միայն «երեւելի» տարագիրներու, այլ նաեւ Սուլթանիէի պաշտօնէութեան որոնք Հո՛ն կուգային խօսակցելու եւ նարտ խաղալու համար:

Այսպէս, քանի մը ժամ միայն անցնելով այդ խանութին մէջ ճանչցայ գրեթէ բոլոր Սուլթանիէի ծանօթ դէմքերը:

Նախ «տոքթոր» Արթինը, էսկիչէհիրցի երիտասարդ մը,

Պոլսոյ դեղագործական վարժարանէն վկայուած. հոն գրեթէ իբրեւ աքսոր կը գտնուէր եւ միեւնոյն ատեն առողջապահական տեսուչ էր ու իբրեւ տոքթոր կը ճանչցուէր:

Յետոյ Ասատուր Գոնիալըեան, էրէյլիցի, որ դեղարան մը ունէր:

Գրիգոր էֆէնտի, Հալքալըյի երկրագործական վարժարանէն վկայուած, Քասթէմունիէն աքսորուած Աք Շէհիր ու հոնկէ ալ փոխադրուած Սուլթանիէ իբրեւ երկրագործական քննիչ:

Տէր Դաւիթ քահանայ Դպիրեան, ատաբազարցի:

Արիսթարք Ավրամիտի, Յոյն խմբագիր մը, որ պատերազմին սկիզբը ձերբակալուած էր իբրեւ հելլէնական դեսպանատան հետ գաղտնի յարաբերութիւններ մշակող եւ Պատերազմական ատենանի կողմէ չորս տարուան բանտարկութեան դատապարտուելով զրկուած էր էտիրնէ իր պատիժը կրելու համար:

Չորս տարուան բանտարկութիւնը աւարտելէ ետքը, փոխանակ ազատ ձգուելու աքսորուած էր Սուլթանիէ ուր կը գտնուէր 5-6 ամիսներէ ի վեր:

Տէր Դաւիթ քահանայ եւ Ասատուր փութացին ինծի սենեակ մը ճարելու: Կիրակոս անուևով էրէյլիցի երկաթագործ մը կար որուն տանը մէջ պարապ սենեակ մը կը գտնուի եղբր: Այդ սենեակը տեղաւորուեցայ առժամեայ կերպով: Կիրակոս նոյն միջոցին բացակայ էր տունէն՝ որով իր անկողինը ծառայեց ինծի մինչեւ իր վերադարձը:

Նոյն միջոցին Սուլթանիէի մէջ կը գտնուէին 5-6000 Հայ տարագիրներ, որոնց մեծամասնութիւնը կիներ եւ փոքր տղաք էին: Ասոնք ընդհանրապէս ատաբազարցի, իզմիթցի, պարտիզակցի ու հսկիչէհիրցիներ էին:

Հոն կային նաեւ տասնի չափ Ռուս գերիներ, ո՛չ զինուորական, ամէնքն ալ իբրեւ ուխտաւոր Երուսաղէմ գացած ու պատերազմին պատճառաւ հոն մնացած եւ յետոյ աքսորուած Սուլթանիէ:

Նոյնպէս 7-8 հնդկաստանցի իսլամներ, որոնք Մէքքէ ուխ-

տի գացած են եղբր եւ իբրեւ անգլիական հպատակ հոն քշուած:

Ասոնցմէ զատ կային նաեւ ռուսական արշաւանքի ժամանակ Վանի կողմերէն գաղթած մէկ քանի հարիւր քիւրտեր, այր, կին, մանուկ:

Իմ Սուլթանիէ հասած միջոցիս այսինքն մայիս ամսու վերջերը, տեղւոյն բնակիչներէն գրեթէ ո՛չ ոք կար. ամէնքն ալ ըստ սովորութեան եալլաները գացած էին, այսինքն մօտակայ ամառանոցները իրենց տունները յանձնելով իրենց վարձակալ Հայերուն:

Միայն կառավարական պաշտօնեաները մնացած էին Սուլթանիէ:

Գայմագամը, Ալի էֆէնտի, կրէտացի թուրք մըն էր, փոքրիկ անվնաս մարդուկ մը, նախկին թէնէքէճի մը որ իբրեւ իթթիհատական հասած էր այս պաշտօնին:

Մալ միւտիւրին\* Հայատեաց թուրք մըն էր, էտիրնէցի եւ թալէաթ փաշայի ազգական, որուն համար կ'ըսուէր թէ իր գործած զեղծումներուն շնորհիւ բաւական դրամ դիզած էր:

Նոյնքան Հայատեաց էր նաեւ փօսթա միւտիւրին, Հիւսնի էֆէնտի կարճահասակ, կաղ մէկը որ Ատանայի ջարդերուն ատեն հոն գտնուած եւ ջարդերու թելադրիչը եղած է: Ասիկա իր քով ունէր Հայ աղջիկ մը, 12-13 տարեկան որ մէկ երկու տարուան մէջ եղած էր իրեն չափ Հայատեաց մը:

Կային նաեւ երկրագործական պանքայի տնօրէնը եւ Ռէժիի պաշտօնեան, այս երկուքն ալ երեսանց թէեւ յայտնի չէին ըներ, բայց ներքնապէս թշնամի էին Հայերուն:

Իսկ թուրք որբանոցի տեսուչը կատաղի իթթիհատական մըն էր եւ կարելի էր ամէն չարիք սպասել իրմէ:

Ահաւասիկ, մօտաւորապէս, այն շրջանակը որուն մէջ պիտի ապրէի հինգ վեց ամիս:

\* Գաւառակների մէջ գործող էլեւմտական նախարարութեան պաշտօնեայ:

Գալով Սուլթանիէի՝ շատ ողորմելի տեղ մըն էր, բլրակի մը ստորոտը, ընդարձակ դաշտի մը վրայ: Ութը հարիւրի չափ միայարկ, ցեխով ծեփուած տուններ, շատերը կիսափուլ վիճակի մէջ: Միակ աչքի զարնող շէնքը մեծ մզկիթն էր զոր կառուցած էր սուլթան Սէլիմ եւ որմէ քաղաքը կոչուած էր Սուլթանիէ, մինչդեռ իր բուն հին անունն էր Գարաբունար:

Քաղաքին, կամ աւելի ճիշդը, գիւղին մէջտեղը կար հրապարակ մը, շրջապատուած փոքրիկ խանութներէ որոնց մէկ մասը փակ էին: Հայերը իմ հասած միջոցիս, բացած էին նպարավաճառի երկու խանութ, դեղարան մը, հնակարկատի խանութ մը եւ կլայագործի խանութ մը: Հրապարակին մէջ կը գտնուէր աղբիւր մը որուն ջուրը հեռուի լեռներէն կուգար եւ լաւ էր, միայն թէ յաճախ ճամբաները կ'աւրուէին եւ կը ստիպուէինք հորի ջուր խմել: Չմոռնամ ըսել որ աղբիւրի ճամբան շինուած էր հռոմէացիներու ժամանակէն եւ ո՛չ թէ թուրքերու ձեռքով:

Ո՛չ սրճարան, ո՛չ զբոսատեղի մը կար Սուլթանիէի մէջ: Տէր-Ջօր շա՛տ աւելի բնակելի տեղ մըն էր քան թէ այս քաղաքը:

Մեր ժամանցի միակ տեղն էր Գառնիկ էֆէնտի Շիշմանեանի նպարավաճառի խանութը ուր երկու հոգիի համար նստարան մը կար գորգապատ, իսկ միւս այցելուները կը բազմէին նպարեղէնի պարապ սնտուկներուն վրայ:

Յաճախ, երկու հոգի նարտ կը խաղային եւ միւսները շուրջերնին հաւաքուած զանոնք կը դիտէին, այս ժամանցը երբեմն 4-5 ժամ կը տեւէր:

Առաջին օրերէն բարեկամացանք պ. Ավրամիտէս եւ ես. երկուքս ալ պոլսեցի էինք եւ երկուքս ալ խմբագիր եւ բնական էր որ գաղափարներու մօտութիւն մը գոյութիւն ունենար մեր մէջ: Սուլթանիէ հասնելէս քանի մը օր ետքը պ. Ավրամիտէս ինծի յայտնեց թէ մտադիր էր փախչելու, թէ կառապանին հետ համաձայնած էր եւ թէ առաջին առթիւ ճամբայ պիտի ելլէր: Իր դիտաւորութիւնն էր ուղղակի Շուսթա երթալ, Քարամանի եւ Գոնիայի միջեւ գիւղ մը ուրկէ կ'անցնի երկաթուղիի գիծը: Եր-

կաթուղիի Յոյն պաշտօնեաներէն մէկը որ հոն կը գտնուէր, խոստացած էր զինքը ընդունիլ տալ երկաթուղիի ընկերութեան մէջ, կեղծ անունով մը:

— Թերեւս հոնկէ ալ յաջողիմ Գոնիա երթալու,— ըսաւ:

Փախուստի այս փորձը զիս ալ հրապուրեց եւ որոշեցի հետեւիլ իր օրինակին եթէ ինք յաջողէր:

Իրիկուն մը պ. Ավրամիտէս իմացուց ինծի թէ հետեւեալ առտու արշալոյսին ճամբայ պիտի ելլէին:

Արդարեւ հետեւեալ առտու Յոյն օրագրողը մէջտեղ չի կար: Ամէնքս ալ գիտէինք փախած ըլլալը, բացի ոստիկաններէն:

Անոնք ալ նոյն օրը ուշադրութիւն չդարձուցին, միայն իրիկուան դէմ քօմիսէր մուսավինի Ֆէյզուլլահ հարցուց թէ տեսա՞՞մ էինք զինքը:

— Չէ՛, այսօր մէջտեղ չելաւ, կ'երեւայ որ անհանգիստ է,— պատասխանեցինք:

Միւս օր ոստիկան մը գնաց այն փոքրիկ տունը ուր Ավրամիտէս կը բնակէր առանձին եւ եկաւ մեզ յայտարարեց թէ տունը մարդ չի կար:

— Չարմանալի՛ բան,— ըսինք,— ո՞ւր կրնայ գացած ըլլալ:

— Ապահովաբար Գոնիա փախած է, բայց մեր ձեռքէն չկըրնար ազատիլ,— ըսաւ ոստիկանը,— հիմա անմիջապէս պիտի հեռագրենք Գոնիայի ոստիկանութեան:

Եւ արդարեւ հեռագրեցին:

Քանի մը օր ետքը զինքը տանող թուրք կառապանը վերադարձաւ եւ լուր բերաւ որ Ավրամիտէս ողջմամբ հասած էր Շուսթա:

Անցան քանի մը շաբաթներ եւ մենք այն համոզումը գոյացուցինք թէ մեր բարեկամը յաջողած էր ծրագիրը իրագործել եւ թէ այլեւս ձերբակալուելու վտանգին մէջ չէ:

Ոստիկանները ալ մոռցած էին զինքը եւ իրմով չէին զբաղեր:

Առտու մը սակայն երբոր Շիշմանեան էֆէնտի խանութը մտայ, այս վերջինը ըսաւ.

– Քուկինդ բերեր են երէկ գիշեր...

– Իմինս ո՞վ է, – հարցուցի:

– Ավրամիտէսը... Գոնիայի մէջ ձերբակալուեր է եւ զինքը Հոս զրկեր են կրկին, հիմա բանտն է եղեր եւ մեզի կ'ուզէ կոր տեսնել:

Անմիջապէս ես եւ դեղագործ Արթին էֆէնտի փութացինք իր քովը:

Զինքը տեսանք մուսավինին սենեակը: Խեղճը սոսկալի վիճակի մը մէջ էր: Շղթայակապ ճամբորդած էր Գոնիայէն Շումբա, Շումբայէն Քարաման, Քարամանէն Էրէյլի եւ Հոնկէ ալ Սուլթանիէ, 4-5 օր տեւած էր ուղեւորութիւնը եւ գիշերները անցուցած էր բանտերուն մէջ: Սարսափելի կերպով ծծած էր զինքը Շումբայի միւտիւրը եւ ձեռքին մէկը այնքա՛ն մտրակի հարուած ընդունած էր որ մորթը բոլորովին սեւցած էր, արիւնը մէջը խեղդուած եւ մատները անշարժութեան դատապարտուած. Գիշերը Սուլթանիէի բանտին մէջ մազ մնացեր էր որ շնչաճեղձ ըլլայ եւ այժմ դժուարաւ կը շնչէր:

Պ. Ավրամիտէս մենէ խնդրեց որպէսզի պէտք եղած դիմումները կատարենք զինքը ազատելու համար բանտէն:

Գառնիկ էֆէնտի Շիշմանեան, Գրիգոր էֆէնտի, տէր Դաւիթ քահանան, եւ այլն պէտք եղած դիմումները կատարեցին եւ շնորհիւ մուսավինին բարեացակամութեան կրցան զինքը ազատել, թէեւ այս բանին բոլոր ուժովը կ'ընդդիմանար ոստիկան Զիա որ չար ու դաժան մէկն էր ու մասնաւոր հակառակութիւն ունէր Յոյն խմբագրին դէմ:

Պ. Ավրամիտէսը եկաւ, առժամեայ կերպով, բնակելու իմ սենեակս: Կրեթէ շարժելու կարողութիւն չունէր, ալ ձեռքը միշտ ընդարմացած կը մնար.

Ինծի պատմեց իր ողբասկանը:

Շումբայի մէջ չէր կրցած մնալ, որովհետեւ իրեն պաշտօն խոստացող բարեկամը ուրիշ տեղ փոխադրուեր է: Հոնկէ գացած է Գոնիա, ուր 8-10 օր պահուած մնալէն ետքը ձերբակալուած է եւ շղթայակապ զրկուած է մինչեւ Էրէյլի:

Տեսնելով իր այս վիճակը եւ գլխուն եկած փորձանքները, հրաժարեցայ փախչելու ծրագրէս:

Նոյն գիշերը, երբ երկուքս ալ պառկած էինք եւ խոր քունի մէջ, յանկարծ դուռը սկսան զարնել բուռն կերպով:

Պատուհանը բացի եւ մութին մէջ երկու հոգի նշմարեցի:

– Ո՞վ կ'ուզէք, – հարցուցի:

– Քեզի կ'ուզենք... դուն խմբագիր չե՞ս:

– Այո՛, խմբագիր եմ:

– Ուրեմն շուտ վար եկուր:

– Բայց դուք ո՞վ էք:

– Ոստիկան Զիա եւ մըխթարը:

Նոյն միջոցին պ. Ավրամիտէս եւս արթնցած էր:

– Ի՞նչ կայ, ո՞վ կ'ուզեն, – հարցուց դող ելած:

– Մի՛ վախնար, – պատասխանեցի, զիս կը փնտռեն կոր...

չեմ գիտեր ինչու համար:

Թերեւս կէս գիշերը անցած էր եւ այդ ժամանակ տարօրինակ բան էր որ գային զիս փնտռէին, բայց վերջապէս չէի կըրնար ընդդիմանալ:

Հապճեպով հագուեցայ եւ փութացի դուռը:

– Ո՛ւր պիտի երթանք, – հարցուցի:

– Բանտ, – պատասխանեց Զիա դաժանօրէն:

– Բայց ինչո՞ւ համար, ես ի՞նչ ըրած եմ:

– Քալէ՛, շատ մի՛ խօսիր, – գոչեց ոստիկանը կարգ մը հայ-

հոյութիւններ ընելով:

Եւ թեւէս բռնելով խիստ դէմքով մը երեսս նայեցաւ:

Յանկարծ թեւէս թողուց.

– Դուն ինչո՞ւ եկար, – հարցուց, – ես խմբագիրը ուզեցի:

– Ես ալ խմբագիր եմ:

– Չէ՛, Յոյն խմբագիրը:

– Բայց խեղճը հիւանդ պառկած է:

Անանկ բան չեմ գիտեր, թո՛ղ անմիջապէս գայ, եթէ ո՛չ ոսկորները ջարդուփշուր կ'ընեն:

Վերադարձայ եւ պ. Ավրամիտէսի հաղորդեցի ոստիկանին խօսքերը:

— Ես արդէն գուշակեցի որ ինծի համար եկած է,— պատասխանեց տխրութեամբ ու հագուելով մեկնեցաւ ոստիկանին հետ:

Հետեւեալ առտու կրկին դիմումներ ըրին գատըին ու գայ-մագամին մօտ եւ վերջապէս յաջողեցան ազատել զինքը, ինչ որ ա՛լ աւելի կատաղեցուց ոստիկան Զիան:

\* \* \*

Ինչպէս ըսի, Սուլթանիէի մէջ կային մէկ քանի հարիւր քիւրտ փախստականներ եւ նոյնչափ ու թերեւս քիչ մը աւելի Հայ տարագիրները:

Երկու ազգերուն միջեւ եղած տարբերութիւնը, իրենց բարքերն ու նկարագիրը, որոշ կ'երեւային այդ տառապանքի դրացնութեան մէջ:

Քիւրտերը գրեթէ մեծ մասով, այր թէ կին, անգործ կեանք մը կ'անցնէին եւ բոլորովին բեռ էին թուրքերուն վրայ որոնք ստիպուած էին կերակրել զանոնք: Հայերը ընդհանրապէս մէյ-մէկ գործ գտած էին ապրուստին ճարելու, նոյնիսկ դրամ շահելու համար: Բացի խանութպաններէ, կային դերձակներ ու դերձակուհիներ որոնք բաւական գործ կ'ընէին: Շատ Հայ կի-ներ թուրքերու տունը կերակուր կ'եփէին կամ ծառայութիւն կ'ընէին, ուրիշներ գորգագործութեամբ կը զբաղէին, շատեր բուրդ կը մանէին: Թաղապետութիւնը ընդարձակ պարտէզ մը ունէր զոր Հայերը կը մշակէին: Փուռի մէջ հաց պատրաստող-ները Հայեր էին նմանապէս:

Քիւրտերը իրենց բնական տունները աւերակի վերածած էին, պատուհաններու ապակիները կոտրած, երդիքը քակած ու փայտերը այրած էին, ինչպէս նաեւ կտրած էին տան պարտէ-

զին մէջ գտնուած սակաւաթիւ ծառերը: Իսկ իրենց բնակարան-ներուն աղտոտութիւնը աննկարագրելի էր: Հայերը, ընդհակա-ռակը, ո՛չ թէ միայն իրենց վարձած կամ ձրիաբար նստած տու-ները մաքուր եւ անաղարտ պահած էին, այլ նոյնիսկ, իրենց հանգստութեան համար բնականաբար, խոհանոց շինած, նորո-գութեան կարօտ մասերը նորոգած էին: Նոյնիսկ իրենց սրա-մադրութեան ներքեւ գտնուած պարտէզները մշակած էին եւ առատօրէն դդում, տօմաթէս, բողկ, հազար, ստեպղին, եւ այլն կը քաղէին:

Թուրքերը միշտ կը մերժէին վարձքով տուններին տալու քիւրտերուն եւ ձրիաբար կը տրամադրէին Հայերուն, որովհե-տեւ գիտէին թէ Հայերը թէ՛ նոր պիտի պահեն իրենց բնակա-րանները եւ թէ՛ պիտի շէնցնեն պարտէզներ:

\* \* \*

Սուլթանիէի արեւմտեան կողմը կայ բլուր մը որուն վրայ կը տեսնուին աղօրիքի մը աւերակները: Այդ բլուրին մէկ կողմը յատկացուած էր Հայերու իբրեւ գերեզմանոց: Տէր Դաւիթ քահանայ Դպիրեան կը հաւաստէր թէ վեց հազարէ աւելի Հայ-եր թաղուած էին հոն, մեծ մասով զէյթունցիներ:

Խեղճ զէյթունցիները ամէնէն աւելի չարչարուող տարագիր-ները եղած են: Ամէնէն առաջ, 1915 մայիսին, իրենք տեղահան եղած են եւ բերուած Գոնիայի նահանգը, էրէյլի, Սուլթանիէ, Քարաման, եւ այլն: Յետոյ, քանի մը ամիսներ, նիւթական սոս-կալի անձկութիւններու մէջ ապրելէ ետքը, օր մըն ալ իրենց ա-ւետիս կը տրուի թէ՛ Մարաշ եւ հոնկէ ալ Զէյթուն պիտի եր-թան:

Զէյթունցիները մեծ ուրախութեամբ եւ ցնծութեամբ, տա-վուլ զուռնաներով ճամբայ կ'ելլեն եւ կը տարուին, փոխանակ իրենց ծննդավայրը, դէպի... Տէր-Զօրի անապատները: Ծամբան,

գրեթէ մեծ մասամբ, հիւանդութեանէ կը մեռնին, իսկ Տէր-Ջօր հասնողներն ալ ջարդին զոհ կ'երթան:

Իսկ Տէր-Ջօր գտնուած միջոցիս հազիւ 2-3 զէյթունցի ողջ մնացած էին:

\*\*\*

Սուլթանիէի մէջ անտանելի բան մըն էր թղթատարական հարցը:

Թղթատարը երկաթուղիով կուգար Էրէյլի ու հոնկէ կառքով կը բերուէր Սուլթանիէ: Էրէյլիէն Սուլթանիէ հեռաւորութիւնն էր 7-8 ժամ միայն:

Կառքով թղթատարի փոխադրութիւնը աճուրդով իր վրայ առած էր տեղացի թուրք խանութպան մը, երաշխաւոր մը ցոյց տալով:

Երբ ես Սուլթանիէ հասայ, այդ երաշխաւորը ուղեւորութեան մը միջոցին սպաննուած էր եւ որովհետեւ խանութպանը նոր երաշխաւոր մը չէր ուզած տալ, թղթատարական կանոնաւոր երթեւեկութիւնը դադրած էր:

Օրերով մեր նամակները կը մնային թղթատուն, մինչեւ որ ժանտարմա մը կամ պաշտօնեայ մը որեւէ գործով Էրէյլի երթալիք ըլլար եւ բարեհաճէր թղթատարական պայուսակը հետը տանիլ:

Բնականաբար նոյն դիպուածական ձեւով կը ստանայինք մեր նամակները:

Երբեմն կը պատահէր որ երկու շաբաթ թղթաբեր չէր գար: Ի զո՛ւր ատեն ատեն կը բողբոքէինք այս անկանոնութեան համար թղթատարական պաշտօնեային կամ գայմագամին: Ո՛չ ոք կարեւորութիւն կուտար:

Երբ թղթաբերը գար, կիներ եւ էրիկմարդիկ կը ժողովուէինք թղթատան առջեւ, որ ընդհանրապէս գոց կ'ըլլար:

— Ո՛ւր է միւտիւր էֆէնտին, — կը հարցնէին ամէն կողմէ թըղթատան ծառային:

— Էֆէնտին տունն է, կը քնանայ կոր, — կը պատասխանէր: Ժամ մը վերջը նոյն հարցումը:

— Էֆէնտին նախաճաշ կ'ընէ կոր, — կը պատասխանէր:

Ժամ մը վերջը միւտիւրը կ'երեւար վերջապէս, բայց փոխանակ թղթատուն երթալու եւ նամակները բաշխելու, կ'ուղղուէր շուկան, տանը համար միս եւ բանջարեղէն կ'առնէր, բարեկամներու հետ խօսակցութեան կը բռնուէր:

Եթէ մէկը համարձակէր նամակներու մասին խօսք մը ընելու.

— Սպասեցէ՛ք, փաթլամիշ\* չէք ըլլար կոր ա՛, — կը դռչէր:

Պատահած է յաճախ որ արշալոյսին հասած նամակները իրիկուան դէմ բաժնուած են իրենց տէրերուն եւ նամակի սպասող կիները ժամերով արեւին տակ մնացած են որովհետեւ այդ տարօրինակ միւտիւրը սովորութիւն ունէր ջնջել այն նամակները, որոնց տէրերը բաշխման պահուն ներկայ չէին ըլլար թըղթատան առջեւ:

Քմահաճոյքը երբեք այսքան սանձարձակ կերպով գործադրուած չէր կարծեմ:

Եւ այս վիճակը տեւեց մինչեւ մեր մեկնումը եւ թերեւս տակաւին կը շարունակէ:

\*\*\*

Ամսի մը չափ երկաթագործ կիրակոսի տունը մնալէ ետքը, պ. Ավրամիտիսին հետ փոխադրուեցանք ուրիշ տուն մը կամ աւելի ճիշդ է ըսել խոտո մը որ կը բաղկանար փոքրիկ սենեակէ մը եւ խոհանոցէ մը:

Նոյն միջոցին քօմիսէր մուսավինին Գոնիա գնաց եւ մեր վրայ հսկող մնաց ոստիկան Զիա որ ինչպէս ըսի, հակառա-

\* Պայթել, տրաքել:



կորդն էր Յոյն խմբագրին: Այս անպիտանը մեզի դժուարու-  
թիւն պատճառելու համար ստիպեց որ օրը երեք անգամ, առ-  
տու, ցերեկ, իրիկուն իսպաթը վիւճիւտ ընենք:

Այսպէս պարտաւորուած էինք օրուան մեծ մասը զոհել  
Զիան փնտռելով ու իրեն ստորագրել տալով թուղթ մը զոր  
վրանիս կը կրէինք:

Յերեկ մը հակառակ մեր խուզարկութիւններուն՝ չկրցանք  
գտնել զինքը: Ենթադրեցինք որ գործով տեղ մը գացած ըլլա-  
լու էր:

Իրիկունը, ճիշդ այն միջոցին որ կը պատրաստուէինք ճաշ ը-  
նելու, Զիա տուներնիս եկաւ.

– Ինչո՞ւ ցերեկը չերեւցաք, – գոչեց:

– Եկանք քեզ փնտռեցինք բայց չգտանք, – պատասխանե-  
ցինք:

– Սուտ կը խօսիք կոր, շո՛ւտ քալեցէք, – պոռաց:

Եւ մեզ տարաւ բանտարկեց:

Իսկոյն բանտէն թուղթ մը գրելով ղրկեցինք մեր բարեկամ-  
ներուն որպէսզի ճար մը խորհին մեզ ազատելու համար: Բա-  
նի մը ժամ այսպէս բանտարկուած մնալէ ետքը, Զիա եկաւ մեզ  
բանտէն հանեց, սպառնալով սակայն աւելի ծանր պատիժներու  
ենթարկել եթէ նորէն նոյն յանցանքը գործէինք:

Բարեբախտաբար քանի մը օր ետքը մուսվիւն Ֆէյզուլլահ  
վերադարձաւ եւ ազատեցանք այս փորձանքէն:

Այս ոստիկան Զիայի հակառակութիւնը մեզի հանդէպ տե-  
ւեց մինչեւ մեր մեկնումի օրը:

Բաւական լաւ ժամանակ կ'անցընէինք Սուլթանիէի մէջ, եթէ  
ոստիկանական այս անհաճոյ միջոգէպները ատեն ատեն մեր  
կեանքը չդառնացնէին:

Ընթերցանութեան համար Փրանսերէն գիրքեր կը հայթայ-  
թէր մեզի դեղագործ Արթին էֆէնտին: Իսկ հայերէն գիրքերու  
փոքրիկ պաշար մըն ալ ունէր տէր Դաւիթ քահանայ Դպիրեա-  
նը, ընդհանրապէս կրօնական, ինչպէս Օրմանեանի «Համապա-

տում»ը, Աստուածաշունչ, Մաշտոց, Տօնացոյց եւ այլն որոնց  
ամէնքն ալ ծայրէ ծայր կարդացի: Ես կ'ընդունէի նաեւ «Ժա-  
մանակ»ը եւ «Կավոօ»ը, ուրիշներ «Բիւզանդիոն»ը, պ. Ավրա-  
միտէս յունարէն թերթեր:

Բացի ընթերցանութենէ մեր գլխաւոր ժամանցն էր Գառնիկ  
Շիշմանեանի նպարավաճառի խանութը ուր կը հաւաքուէինք  
առտու իրիկուն:

Գառնիկ էֆէնտի, զուարճախօս, զուարթ ու լաւատես անձ  
մը, իր անցեալի պատմութիւններով միշտ նորութիւն մը կ'ու-  
նենար մեզի ըսելու: Իր Եւրոպա կատարած ուղեւորութիւնը,  
եւ տարագրութենէն անմիջապէս առաջ Պրուսայի մէջ բան-  
տարկութիւնը եւ կրած չարչարանքները նոյնպէս խօսակցու-  
թեան մէջ մէկ անսպառ նիւթեր էին:

Վերջին ամիսները ունեցանք նաեւ սրճարան մը զոր պէլէ-  
տիէն բացաւ մասնաւորապէս պաշտօնէութեան համար ուր  
սակայն մեզի ալ արտօնուեցաւ երթալու:

Պէտք է ըսել որ առանց Հայերու ներկայութեան կարելի պի-  
տի չըլլար այս սրճարանը բանալ, որովհետեւ մէկ քանի Հայ  
արհեստաւորներ էին որ շինեցին պէտք եղած սեղանները եւ  
նստարանները:

Նոյնիսկ սրճարանին մատակարարութիւնը յանձնուած էր  
Հայ երիտասարդի մը:

Այս սրճարանին մէջ կը հաւաքուէին թղթատան տնօրէնը,  
Ռէժիի մէմուրը, երկրագործական պանքայի տնօրէնը, որբանո-  
ցի տնօրէնը, քօմիսէրի մուսավիւնը, մալ միւտիւրին, եւ այլն:

Ընդհանրապէս նարտ կամ թուղթ խաղալով ժամանակ  
կ'անցնէին, երբեմն ալ քաղաքական խօսակցութիւններ տեղի  
կ'ունենային:

Հա՞րկ է ըսել թէ ամէնքն ալ ջերմ իթթիհատականներ էին եւ  
կատարեալ հաւատքով կը սպասէին վերջնական յաղթանակին:

Եւ սակայն նոյն միջոցներուն կացութիւնը շատ տագնապա-  
լից էր: Գերմանական նահանջը սկսած էր եւ գէշ լուրեր կը

հասնէին Սուրբոյ կողմէն: Հակառակ ասոր միշտ լաւատես էին այդ մարդիկը, կամ գոնէ այնպէս կը կեդծէին:

Հայ տարագիրներուն համար խանդավառ ոգեւորութեան օր մը եղաւ երբ ստացանք «Ժամանակ»ի այն ծրարը որուն մէջ կը պատմուէին Երեւանի Հայկական Հանրապետութեան հռչակումը, Հայ պատգամաւորութեան Պոլիս ժամանումը, Հայ նախարարութեան մը կազմութիւնը, եւ այլն: Մենք որ բնա՛ւ տեղեկութիւն մը չունէինք կովկասեան անցուդարձէն, անյագ զարմացումով մը կը կարդայինք այդ ամէնը:

Թուրքերը իրենք ալ մեզի չափ զարմացած էին այդ իրողութիւնները կարդալով իրենց թերթերուն մէջ եւ նախանձով կը դիտէին մեր ուրախութիւնը:

Իրենցմէ մին օր մը ըսաւ.

— Մեր սովորութիւնը այսպէս է. երկար ատեն մեր քով ծառայողը ի վերջոյ չըրախ\* կը հանենք: Ինչպէս որ Ռուսականացիները, Սերպերը, Յոյները, Պուլկարները, Գարատաղցիները չըրախ հանած ենք իրենց անկախութիւն շնորհելով, հիմակ ալ կարգը ձեզի եկած է: Մեր պետութիւնը այսօր ձեզի չըրախ կը հանէ եւ պէլլիկութիւն\*\* կը շնորհէ:

Բայց յայտնի կը տեսնուէր որ անկախ Հայաստանի մը կազմութիւնը ներքնապէս կը կատոնեցնէր զիրենք եւ հետզհետէ չար աչքով սկսան նայիլ Հայերուն, նոյնիսկ ատեն ատեն նախատել մեզ:

Այդ ընթացքը այն աստիճանի հասաւ որ ստիպուեցանք զգուշական միջոցներ ձեռք առնել, փողոցը կամ սրճարանին մէջ հայերէն լրագիր չկարդալ, ուրախութեան ցոյցեր չընել, նոյնիսկ թուրքերուն քով իրարու հետ հայերէն չխօսիլ:

Նոյն միջոցներուն բան մը մեզ բաւական մտատանջութիւն պատճառեց: Գոնիայի իթթիհատական քլիւպը 20-30 օրինակ Սուլթանիէի «երեւելի»ներուն եւ պաշտօնեաներուն ղրկեց այն

\* Ազատ:

\*\* Այստեղ՝ պետականութիւն:

պատկերազարդ թրքերէն հրատարակութենէն, որուն մէջ կը տեսնուէին Հայ յեղափոխականներ, Հայ հրոսախմբերու, Հայերու քով գտնուած զէնքերու, պօմպաներու պատկերներ եւ որուն մէջ կը պատմուէին Հայերուն գործած երեւակայական խժոժութիւնները թուրքերուն դէմ: Ինչպէս յայտնի է իթթիհատական կառավարութիւնը մասնաւորապէս այս հրատարակութիւնը ըրած է թուրք խուժանը եւ թուրք ոստիկանութիւնը Հայերուն դէմ գրգռելու եւ զանոնք ջարդի մղելու համար:

Արդ, ճիշդ այս միջոցներուն քօմիթէի քլիւպին կողմէ այդ հատորներուն Սուլթանիէ ղրկուելու համար բաժնուիլը ուրիշ բան չէր նշանակեր՝ այլ եթէ ջարդի նախապատրաստութիւն տեսնել:

Եւ արդարեւ այդ գիրքերը հասնելէն ու բաժնուելէն քիչ ետքը ա՛լ աւելի սաստկացաւ Հայերուն հանդէպ թուրքերուն թըշնամական ընթացքը:

Լսեցինք թէ մէկ քանի ծանօթ Հայատեացիներ որբանոցի տնօրէնին տունը գիշերային գումարումներ կ'ունենային, որոնք խիստ գաղտնի կը պահուէին:

Այդ տնօրէնը, կատաղի իթթիհատական, շատ գէշ մէկը նկատուած էր եւ կարելի էր իրմէ ամէն չարիք սպասել:

Բարեբախտաբար շուտով վրայ հասան պատերազմի նոր դէպքերը եւ վհատեցուցին այդ ոճրային ծրագիրներ մշակողները:

Պուլկարիոյ պարտութեան եւ զինադադար կնքելուն լուրը պաղ ջուրի ազդեցութիւնը գործեց բոլոր տաքգլուխներուն վրայ:

Յետոյ, կրկին յոյս առին:

— Մաքէնզէնը երկու հարիւր հազար հոգիով Պուլկարիա մտեր է,— կ'աւետէին իրարու:— Համաձայնականները ծանր պարտութիւն մը կրեցին, եւ այլն:

Բայց կամաց կամաց այդ երեւակայական լուրերը սուտ ելան եւ անոնց յաջորդեցին Շամի անկումին լուրերը եւ թրքական զինադադարի մը լուրերը:

Յետոյ լսեցինք թէ Հալէպն ալ ինկեր է ու ահա՛ փախստական զինուորներ եւ սպաներ սկսան անցնիլ Սուլթանիէէն, թէեւ փոքր թիւով, Գոնիա երթալու համար:

Այդ փախստականները կը պատմէին սուրիական բանակին ջախջախիչ պարտութիւնը եւ զինուորական զօրութեան փճացումը:

Առտու մըն ալ արշալոյսին տղայոց բազմութիւն մը եկաւ զիս արթնացնել, երբ կը գտնուէի տէր Դաւիթ քահանային սենեակը:

– Շուտ եկուր,– կը պոռային,– գայմագամը քեզ կ'ուզէ:

– Ի՞նչ կայ,– հարցուցի:

– Երկու հատ օդանաւ եկած են, թարգմանութիւն պիտի ընես:

– Ո՞վ են եկողները:

– Անգլիացի են եղեր...

Այս տեղեկութիւնները թէեւ անհաւատալի կը թուէին ինծի, այսուհանդերձ շուտ մը հագուեցայ եւ փողոց նետուեցայ:

Դուրսը յուզումը ծայր աստիճանին հասած էր: Հայերը գունդ գունդ կը վազէին դէպի հրապարակ Անգլիացիները տեսնելու, իսկ թուրքերը կին, մարդ ու մանուկ կը փութային փախչիլ դէպի հեռո՛ւն, լեռներուն վրայ:

Հեւ ի հեւ հասայ հրապարակ: Ինչ որ տղաքը օդանաւ կ'անւանէին, երկու զինուորական օթոմօպիլներ էին, իսկ Անգլիացիները... Գերման սպաներ:

Բազմութիւնը ճեղքելով մօտեցայ իրենց:

Օթոմօպիլին քովը կեցած էին գայմագամը, ժանտարմաներու հրամանատարը, ոստիկանները, Ռէժիի մէմուրը եւ երկրագործական պանքայի տնօրէնը, եւ այլն, ամէնուն դէմքն ալ անձկութիւն եւ յուզում կը մատնէր:

Սպաներէն մին գերմաներէն բաներ մը ըսաւ:

Ֆրանսերէն լեզուով պատասխանեցի թէ գերմաներէն չէի գիտեր: Սպան իսկոյն Ֆրանսերէն սկսաւ տեսնուիլ:

– Պօզանթին կուգանք եւ Գոնիա երթալ կ'ուզենք,– ըսաւ,– կը խնդրենք որ ճամբան մեզի ցոյց տաք:

Քովիս թուրքերը երբոր հասկցան թէ սպաները Գերմանացի էին՝ լայն շունչ մը առին:

Ներկայացուցի իրենց գայմագամը եւ ժանտարմաներու հրամանատարը:

Այս վերջինները իրենց ըսին թէ ոստիկան մը կրնան տրամադրել, որպէսզի ճամբան ցոյց տայ:

– Կարելի՞ է մինչեւ Գոնիա երթալ օթոմօպիլով,– հարցուցին:

Հաստատական պատասխան տուինք:

– Սուլթանիէէն մինչեւ Գոնիա քանի՞ քիլօմէթր է,– հարցուցին:

Այս հարցումին ո՛չ ոք կրցաւ ճշգրիտ պատասխան մը տալ: Ներկաները այնքա՛ն գաղափար չունէին քիլօմէթրի վրայ որ մին մինչեւ 300 քիլօմէթր կ'երկարեր ճամբան, մինչ ուրիշ մը գայն 10 քիլօմէթրի կ'իջեցնէր:

Բարեբախտաբար վրայ հասաւ երկրագործական քննիչ Գրիգոր էֆէնտին եւ կրցաւ ճիշտ երկայնութիւնը ըսել:

Գերման սպաները յետոյ խմելու մաքուր ջուր եւ հաց ուզեցին:

Մէկ քանիներ գացին բերելու:

Այդ միջոցին գայմագամը ուզեց պատերազմի ընթացքին մասին մէկ քանի տեղեկութիւններ առնել:

– Անգլիացիները Հալէպը առած են,– պատասխանեց Գերմանացի սպան,– եւ հիմա կը յառաջանան մինչեւ Պօզանթի, արդէն իսկ Օսմանիէ հասած են: Թուրքերուն գործը լմնցած է ու ալ դիմադրելու ուժ չունին...

Թարգմանեցի սպային ըսածները, որոնք ներկաներուն վրայ շատ դառն տպաւորութիւն յառաջ բերին:

Երբ Գերմաններուն ուզածները բերուեցան, օթոմօպիլները իսկոյն ճամբայ ելան:

– Գացէ՛ք ժողովուրդը հանդարտեցուցէք, եկողները Անգլիացի չեն եղեր,– հրամայեց գայմազամը:

Յետոյ հաւաքուեցանք սրճարանը, օրուան այս մեծ եղելութեան մասին խորհրդակցելու համար:

– Բայց մեր դռներուն առջեւ հասեր է թշնամին,– կը փսփրսային:

– Արդեօք Արաք զինուոր ալ կա՞յ Անգլիացիներուն հետ,– կ'ըսէր մին մտաւտանջ դէմքով մը:

– Ինչպէ՞ս մոռցանք ատիկա հարցնելու...

– Չեմ կարծեր որ Արաքները Հալէպի նահանգէն ասդին գան,– դիտել կուտար մին:

Ամէնուն ալ երկիւղը Արաքներն էին: Թուրք փախստական զինուորներ եւ սպաններ որոնք Սուրիոյ կողմերէն եկած անցած էին Սուլթանիէէն, սոսկալի բաներ կը պատմէին Արաք անկանոն պատերազմիկներու մասին:

Թուրքերը գիտէին թէ Անգլիացիները խժոժութիւններ չէին գործեր, իսկ Արաքներու մասին նոյն վստահութիւնը չկար: Զանոնք կը նկատէին ջարդարարներ, վրէժխնդիրներ, մանաւանդ գիտէին որ Արաքները կ'ատէին զիրենք:

Հետեւեալ ցորեկ նորէն իրարանցում Սուլթանիէի մէջ:

Այս անգամ ալ եկան զիս փնտռելու ճիշդ այն միջոցին ուր ճաշի նստած էինք: Դարձեալ երկու օթոմօպիլ կեցած էին հրապարակը: Փութացի դէպի հոն:

Եկողները Աւստրիացի սպաններ էին: Գրեթէ նոյն հարցումները եւ նոյն խնդրանքները ըրին մեզի:

Այս զինուորականները աւելի հաճելի, աւելի մարդամօտ ու աւելի խօսուն էին քան Գերմանները:

Միկառէթ հրամցուցինք իրենց եւ իրենք ալ փոխարինաբար սիկառ տուին մեզի:

Թուրքերը ուզեցին հասկնալ թէ անգլիական բանակին հետ Արաքներ ալ կայի՞ն:

– Բնականաբար,– պատասխանեց սպաներէն մին,– Արաքները անգլիական բանակին յառաջապահներն են, մանաւանդ Արաք հեծելազօրքը:

– Շատ խժոժութիւններ կ'ընե՞ն իրենց մտած տեղերը:

– Մենք ուղղակի շփում չունեցանք իրենց հետ, բայց լսեցինք որ դէպքեր տեղի ունեցեր են...

Իրենց խօսքերը թարգմանեցի:

Բաւական տեսակցելէ ետքը, երկու օթոմօպիլները ճամբայ ելան մենէ ուղեցոյց մը առնելով միասին:

Նոյն իրիկունը, երբ սրճարանը հաւաքուած էինք, յանկարծ լուր տուին թէ հեռուէն ձիաւոր Արաքներ կուգային:

Ամէնքս դուրս վազեցինք:

Արդարեւ 10-15 հեծեալներ կ'երեւային, որոնց գլխանոցները արաբական էին: Խուճապը տիրած էր Սուլթանիէի մէջ, թէ եւ մենք Հայերս որեւէ վախ չէինք զգար:

Արաք ձիաւորները հասան: Հասկցանք որ թուրք բանակին մէջ ծառայող Արաք ձիաւորներ էին որոնք հաւատարիմ մնացած էին թուրքերուն եւ անոնց հետ փախած թշնամիին առջեւէն:

Ասոնք Սուլթանիէ գիշերեցին եւ հետեւեալ առտու ճամբայ ելան դէպի Գոնիա:

Ասոնց յաջորդեցին փախստական թուրք զինուորներ, որոնք սարսափելի բաներ կը պատմէին Արաքներու մասին, նոյնիսկ իրենցմէ մէկ քանին պատմած էին թէ Շամի եւ Հալէպի առման ժամանակ Հայերը միացած էին Արաքներուն եւ միասին ջարդած էին թուրքերը ու թալանած անոնց ինչքը:

Այս յերիւրածոյ պատմութիւնները կրկնուելով՝ թէ՛ երկիւղ եւ թէ՛ գրգռում յառաջ բերած էին Սուլթանիէի մէջ:

Մէկ քանի մոլեռանդներ բացէ ի բաց կ'ըսէին թէ հարկ էր Հայերը ջարդել որպէսզի երբոր Արաքները գան, անոնց չի միանան եւ իրենց դէմ դառնան:

Ամիսներէ ի վեր Պոլսոյ թերթերը Հայ տարագիրներու եւ քստորականներու վերադարձին մասին կը խօսէին, բայց որեւէ դրական նշան մը չկար թէ այդ տեսակ գործողութիւն մը կատարուելու վրայ է:

Նոյնպէս կ'ըսուէր թէ կառավարութիւնը 2 կամ 4 միլիոն ոսկի պիտի տրամադրէր իբրեւ ճամբու ծախք:

Մեր ստացած նամակներն ալ նոյն յուսատու լուրերով լեցւած էին:

Եւ ինչպէս նմանօրինակ պարագաներուն, ամէն օր այդ մասին սուտ լուր մը կը լսէինք:

Օր մը կը լսէինք թէ Էրէյլի Հայերը կ'արձանագրեն կոր որպէսզի ճամբայ հանեն իրենց տեղերը:

Ուրիշ օր մը կը պատմուէր թէ կառավարութիւնը Գոնիայի շրջականները գտնուող Հայերը քաղաք բերել կուտայ կոր որպէսզի իրենց տեղերը զրկէ եւ այլն:

Քանի մը օր ետքը այդ լուրերը կը հերքուէին, ուրիշ սուտերու տեղ տալով:

Յայտնի էր սակայն որ ազատումի ժամը կը մօտենար: Գայմագամը թէեւ Էրէյլի կամ Գոնիա երթալ ուզող կիներուն եւ տղոց պաշտօնապէս հրաման չէր տար, բայց գացողներուն աչք կը գոցէր:

Այդ թոյլտուութենէն օգտուելով անոնք որ կառքի դրամ կամ ապրուստի դրամ ունէին, կամաց կամաց կ'երթային Սուլթանիէն:

Մէկ քանի Հայ խանութպաններ կամ արհեստաւորներ իրենց գործերը կը մաքրէին պատրաստ գտնուելու համար:

Նոյն միջոցներուն նամակ ստացայ Պոլսէն թէ ինձի համար դիմումներ կ'ըլլան որպէսզի Պոլիս դառնամ անմիջապէս, առանց ընդհանուր ներումին սպասելու:

Ռուսերը եւ Հնդիկներն ալ կը պատրաստուէին մեկնելու: Ի-

րենց պաշտպանուհին տիկին Քօշման գրած էր որ քիչ օրէն իրենց տեղերը պիտի զրկուին եւ այս առթիւ դրամական նպաստ ալ զրկած էր:

Ռուսերը ընդհանրապէս շատ խեղճ վիճակ մը ունէին: Յեղափոխութենէն առաջ կանոնաւոր ամսական կը ստանան եղեր իրենց կառավարութենէն հոլանտական դեսպանատան միջոցաւ:

Պոլշէվիքները գործի գլուխ անցնելէ եւ Ռուսիան շատ մը բաժանումներու ենթարկելէ ետքը, ամսականները դադարած էին: Հիմա ատեն ատեն միս Քօշմանն էր որ իր մասնաւոր միջոցներով կ'օգնէր իրենց: Այս Ռուսերէն մին ժամագործ էր, երկրորդ մը երկաթագործ եւ երրորդ մը հացագործ: Այս երեքը իրենց արհեստին շնորհիւ ապրուստին կը ճարէին: Միակ ունեւորը իրենց մէջ Քօնսթանթին անուռ անձն էր: Այս մարդը յամառ աշխատող մըն էր եւ իր աքսորի ժամերը կարդալով ու գրելով կ'անցնէր: Ինչ ֆրանսերէն դաս առնել սկսաւ եւ քիչ ժամանակի մէջ, շնորհիւ իր յամառ աշխատութեան, յաջողեցաւ թէ՛ գրել կարգալ սորվիլ եւ թէ՛ 2000է աւելի բառ գոց ընել:

Ինք ի ծնէ թաթար էր եւ յետոյ քրիստոնէութիւնը ընդունած եւ ուխտի գացած էր Երուսաղէմ ճիշտ պատերազմը ծագած միջոցին եւ հոնկէ միւս Ռուս ուխտաւորներու հետ փոխադրուած Սուլթանիէ:

Ամէնէն առաջ մեկնումի հրաման եկաւ Հնդիկներուն:

Այս վերջինները թէեւ իսլամ՝ կ'ատէին թուրքերը եւ կը փառաբանէին անգլիական արդարութիւնը:

Հնդիկներէն ետքը կարգը Ռուսերուն եւ Արաբներուն եկաւ, որոնք ճամբայ ելան դէպի իրենց տեղերը:

Գառնիկ Շիշմանեանն ալ որոշած էր փակել իր նպարավաճառի խանութը եւ երթալ Էրէյլի:

Այնպէս կարգադրեցինք որ ես ալ ընկերանամ իրեն:

Գայմագամը խոստացած էր իրեն վէսիքա տալու: Ես չուզեցի դիմում ընել վէսիքայի համար, խորհելով որ թերեւս մերժէ. առարկելով թէ ես պարզ տարագիր մը չեմ՝ այլ աքսորական մը:

— Քամիսէրի մուսափինը կը համոզենք, միասին կուգաս,— խորհուրդ տուաւ Շիշմանեան,— եթէ պէտք ըլլայ իրեն պզտիկ նուէր մըն ալ կ'ընես:

— Ամենայն հաճութեամբ,— պատասխանեցի:

Օր մըն ալ էրէյլիէն եկան այն երկու կառքերը որոնք պիտի փոխադրէին Շիշմանեան ընտանիքը եւ իրենց գոյքերը:

Կառքերը ճամբայ պիտի ելլէին հետեւեալ առտու արշալոյսին:

Գիշերը իմ գոյքերս ալ փոխադրեցի Շիշմանեանենց բնակարանը ուրկէ պիտի մեկնէինք:

Բազմաթիւ ծանօթներ «բարով երթաք»ի եկած էին որոնց մէջն էր նաեւ մուսափին Տէյգուլլահ էֆէնտին:

Միջոց մը Շիշմանեան մէկ կողմ տարաւ զայն եւ իմ մասիս խօսեցաւ:

Այդ մարդը որ մինչեւ այն ատեն քիչ շատ բարեացակամ գտնուած էր ինծի հանդէպ, յանկարծ բորբոքեցաւ իմանալով որ ես ալ կ'ուզէի միասին երթալ:

— Անկարելի բան է,— գոչեց,— ամէնքը կրնան երթալ, սակայն դուն եւ Ավրամիտէսը չէք կրնար երթալ, դուք գաղթական չէք, դուք քաղաքական աքսորեալներ էք:

Շիշմանեան դրամական նուէրի խօսք ըրաւ, բայց ի գո՛ւր:

— Հազար ոսկի ալ եթէ տաք թոյլ չեմ տար մեկնելու,— պատասխանեց:

Ըսինք թէ լրագիրները ծանուցած էին որ քաղաքական աքսորեալներուն ներում եղած է:

— Թերթերուն գլուխը կարեւորութիւն չունի,— պատասխանեց,— մենք պաշտօնապէս ո՛ր եւ է հրահանգ չենք ստացած այդ մասին:

Վերջապէս հակառակ մեր խնդրանքներուն անկարելի եղաւ զինքը համոզել եւ ստիպուեցայ գոյքերս կրկին բերել տէր Դաւիթ հօր տունը ուր կը մնայի նոյն միջոցին:

Շիշմանեանի մեկնումէն ետքը Ավրամիտէս եւ ես որոշեցինք

փորձի համար, գայմագամին երթալ եւ խնդրել որ մեզ արտօնէ էրէյլի երթալ:

Գայմագամն ալ բացարձակապէս մերժեց այդպիսի արտօնութիւն մը:

Պուլսէն գրած էին ինծի որ աքսորեալներուն ընդհանուր ներում եղած է եւ հարցուցած էին թէ ինչո՞ւ ես կը յամառիմ մնալու Սուլթանիէ: Գրեցի իրենց որ հակառակ ըրած դիմումներուն՝ չէին ուզեր թողուլ զիս որ էրէյլի երթամ:

Պուլսէն սա իմաստով հեռագիր մը ստացայ.

«Իմացո՛ւր մեզի թէ ո՛վ արգելք կ'ըլլայ մեկնումիդ, որպէսզի պարտ ու պատշաճը ընենք»:

Այս հեռագիրը ձեռքերնիս, ես ու Ավրամիտէս կրկին գացինք գայմագամին որ հեռագիրը կարդալէ ետքը, հարցուց ինծի.

— Ի՞նչ պատասխան գրեցիր:

— Դեռ բան մը չգրեցի,— պատասխանեցի,— ուզեցի նախ ձեզ տեսնել եւ ըստ այնմ պատասխանել:

— Ես չեմ կրնար թողուլ որ երթաք, քանի որ պաշտօնական նամակ մը չէ եկած այդ մասին,— ըսաւ:

— Ուրեմն ի՞նչ պիտի ընենք:

— Պիտի սպասէք:

— Թոյլ կուտա՞ք որ Պոլիս հեռագրեմ թէ գայմագամը արգելք կ'ըլլայ մեկնելուն,— հարցուցի:

— Հեռագրեցէ՛ք ինչ որ կ'ուզէք,— պատասխանեց, յետոյ աւելցուց.— լաւ կ'ըլլայ որ երկու օր ալ սպասէք, թերեւս պաշտօնական նամակ մը ստանամ ձեր մասին:

— Եւ եթէ չստանա՞ք... գոնէ խոստացէ՛ք որ այդ պարագային դուք դիմում ընէք հեռագրով Գոնիայի կուսակալին եւ մեր մասին հրահանգ ուզէք:

Գայմագամը քիչ մը խորհելէ ետքը հաւանեցաւ մեր ըսածին:

Երկու օր ետքը դարձեալ ներկայացանք իրեն: Որեւէ պաշ-

տօնական հրահանգ չէր եկած: Յիշեցուցինք իրեն իր ըրած խոստումը, նախ դժկամակեցաւ, յետոյ հեռագրեց Գոնիա եւ մեր մասին հրահանգ ուղեց:

Քանի մը օր ետքը հեռագրատան պաշտօնեայէն իմացանք թէ մեր մասին հեռագիր մը եկած է գայմազամին:

Անմիջապէս փութացինք իր քով:

— Այո՛,— ըսաւ,— այդպիսի հեռագիր մը եկած է, բայց շատ որոշ չէ:

Պ. Ավրամիտէս ուզեց հեռագիրը տեսնել, բայց գայմազամը մերժեց այդ «պաշտօնաթուղթ»ը ցոյց տալու:

— Ի՞նչ պիտի ըլլայ այժմ մեր վիճակը,— Հարցուցինք:

— Պէտք է որ ձեր թուղթերը քննեմ եւ ըստ այնմ որոշեմ թէ կրնա՞ք երթալ կամ ոչ:

Ստիպեցինք որ այդ քննութիւնը անմիջապէս կատարէ: Գայմազամը ոստիկան մը կանչեց եւ հրամայեց որ մուսվիինին քովէն թուղթերը առնէ ու բերէ:

Անցաւ կէս ժամ ու ահա՛ մուսվիինը ներս մտաւ:

— Ասոնց երկուքին ալ թուղթերը կորսուեր են, փնտռեցի, փնտռեցի չգտայ,— ըսաւ:

— Գոնէ կը յիշե՞ս այդ թուղթերուն պարունակութիւնը,— Հարցուց գայմազամը:

— Ո՛չ,— պատասխանեց մուսվիինը:

Գայմազամը շուարած կերպարանք մը առաւ.

— Հիմա ի՞նչ պիտի ընենք,— Հարցուց մեզի:

— Թուղթերը քննելու պէտք չկայ,— պատասխանեց Ավրամիտէս,— թերթերը կարդացէ՛ք. շղթայակապ բանտարկեալները անգամ ներումի արժանացեր են, աքսորեալները եւ տարագիրները իրենց տեղերը վերադառնալու համար ճամբայ ելեր են...:

— Թերթերուն գրածը չեմ կրնար իբրեւ պաշտօնական ընդունիլ, թերթերը իրենց լսածը կը գրեն,— պատասխանեց գայմազամը:

Յետոյ մուսվիինին դառնալով ըսաւ.

— Սա թուղթերը մէյ մըն ալ աղէկ մը փնտռէ՛, թերեւս գտնես, իսկ դուք վաղը անգամ մը հանդիպեցէ՛ք, այսօր փութա պիտի գայ, կարելի է ձեզի համար նոր հրահանգ ստանամ:

Յուսահատ՝ մեկնեցանք քովէն: Նոյն օրը հասած թերթերը դարձեալ կը ծանուցանէին ընդհանուր ներումի, տարագիրներու վերադարձին մասին տեղեկութիւններ. իսկ «Կավոզ» փութարկող մը կը հրաւիրէր զիս, Արամ Անտոնեանն ու խեղճ Գրիգոր Թորոսեանը, զոր ողջ կ'ենթադրէր, անմիջապէս Պոլիս վերադառնալու:

Պ. Ավրամիտէս եւ ես որոշեցինք հետեւեալ օր վերջին դիմում մըն ալ ընել եւ եթէ կրկին մերժումի հանդիպինք առանց հրամանի մեկնիլ Էրէյլի: Գառնիկ Շիշմանեան արդէն գրած էր մեզի թէ փախչինք երթանք եւ թէ անգամ մը որ Էրէյլի ոտք դնենք, որեւէ վախ չկար մեզի համար ետ զրկուելու:

Մեզ փոխադրող կառքը արդէն պատրաստ էր: Այդ կառքով պիտի երթար նաեւ Յոյն տասնապետ ոստիկան մը որ ամիս մը առաջ Սուլթանիէ աքսորուած էր իր պետը նախատած ըլլալուն համար եւ հոն իր պաշտօնը կը վարէր:

Այսպէս ուրեմն հետեւեալ օր կրկին գացինք գայմազամին:

— Ձեր թուղթերը կարելի չեղաւ գտնել,— ըսաւ մեզ տեսածին պէս:

— Բայց մենք չենք կրնար յաւիտեան հոս մնալ թուղթերնիս կորսուած ըլլալուն համար,— դիտել տուաւ Յոյն խմբագիրը:

— Ասկէ գատ,— ըսի ես ալ,— հրապարակաւ զիս Պոլիս կը կանչեն կոր:

— Ո՛վ է կանչողը,— Հարցուց գայմազամը:

— Ահաւասիկ թերթին մէջ գրուած է, եթէ չէք հաւատար կարդացնել տուէք:

Եւ իրեն երկարեցի «Կավոզ»ը եւ ցոյց տուի իմ մասիս գրուածը:

— Այո,— հաստատեց պ. Ավրամիտէս,— բացէ ի բաց գրուած է, անունովը...

Գայմագամը թերթը առաւ, թղթատեց մտածկոտ դէմքով մը:

— Եթէ Հրամանն չի տաք, պիտի ստիպուինք Հեռագրով Պոլսոյ թերթերուն դիմում ընել որպէսզի մեր դարձին համար պէտք եղածը ընեն,— ըսաւ պարոն Ավրամիտէս:

Գայմագամը որ ներքնապէս գէշ մէկը չէր, բայց չափազանց վարանոտ ու պատասխանատուութենէ խուսափող, քիչ մըն ալ մտածեց եւ ի վերջոյ ըսաւ.

— Լա՛ւ, ձեր ուզած վէսիքան կուտամ, ելէք գացէք, բայց պայմանով մը:

— Ի՞նչ պայման:

— Միայն ասկէ էրէյլի երթալու համար վէսիքա մը, իսկ անկէ Պոլիս երթալու համար պէտք եղած Հրամանը հոն կ'առնէք:

— Շատ լաւ, շնորհակալ ենք,— պատասխանեցինք միաբերան:

Եւ կէս ժամ ետքը վէսիքան գրպաննիս դրած՝ դուրս ելանք քօնաքէն:

\*\*\*

Սուլթանիէի մէջ 8-10 հատ Հայ որբեր կային, բոլորովին լքուած, անպաշտպան: Այս խեղճերը խարխիւկ սենեակի մը մէջ կը պառկէին գիշերը, իսկ ցորեկները փողոցները կը թափառէին ակռանուն տակ ծամելիք բան մը գտնելու համար: Իրենց սպորուտի գլխաւոր միջոցն էր պտտիլ պետական ամբարանոցի շուրջը եւ երբ դուռը բացուէր, որեւէ կերպով ներս սպորելու ու մէկ քանի բուռ ցորեն շորթելով կծկել:

— Ամպարին մուկերը,— կ'անուանէր զիրենք տէր Դաւիթ քահանայ:

Այդ ցորենը յետոյ կը ծախէին ու հաց կը գնէին: Այդ խեղճերը կ'ուտէին նաեւ փողոց նետուած պտուղի կեղեւները, եր-

բեմն կը յաջողէին նաեւ պտղավաճառի խանութներէն ձմերուկ մը կամ սեխ մը անյայտացնել:

Այդ պարագային անյայտացնողը առանձին չէր ուտեր աւարը այլ ամբողջ ընկերները կը հրաւիրէր, պատի մը տակ, խընճոյքին եւ ահա՛. վայրկեան մը ետքը ձմերուկի կուտ մը անգամ չէր մնացած իրենց դէմ իրրեւ փաստ ծառայելու համար:

Երբ վէսիքան գրպանս դուրս ելայ, յանկարծ գաղափարը յղացայ այդ փոքրիկներէն մէկը հետս առնելու եւ Պոլիս բերելու: Բաւական յանդուգն գաղափար մըն էր այս որովհետեւ նիւթական միջոցներս հազիւ կը ներէին ինծի մինչեւ էրէյլի երթալու:

Գացի իսկոյն գտայ փռապան Միհրանը եւ դիտաւորութիւնս յայտնեցի իրեն:

— Շատ աղէկ կ'ընես,— ըսաւ,— գոնէ իրենցմէ մէկը թշուառութենէ կ'ազատի:

— Ո՛ւր են տղաքը:

— Ամպարը ըլլալու են, որովհետեւ հիմա ապրանք եկաւ եւ ամպարը բաց է:

Միասին գացինք դէպի շտեմարանը: Արդարեւ բոլորն ալ հոն էին:

Դուրս կանչեցինք զիրենք եւ ես ըսի.

— Վաղը ճամբայ պիտի ելլեմ Պոլիս երթալու համար, ձեռնէ ո՞վ կ'ուզէ հետս գալ:

— Ես,— գոչեցին ամէնքն ալ քովս վազելով:

Հարկ եղաւ ընտրութիւն մը ընել եւ ափյափոյ գատեցի 10-11 տարեկան իզմիթցի տղեկ մը Յակոբ անուն զոր առաջնորդեցի տէր Դաւիթի տունը ուր կը բնակէի ամիսէ մը ի վեր:

Երէցիկներ տիկին Ազնիւ, որ իրաւամբ շատ բարի ու ազնիւ տիկին մըն էր, իսկոյն օճառով ու տաք շուրջով լուաց փոքրիկը, վրայի քուրջերը նետեց եւ իմ ճերմակեղէններովս հագուեցուց զինքը: Միայն թէ տակաւին ոտքերը բոպիկ էին:

Բայց ճշմարիտ է որ ես ալ կօշիկ ըսուելու արժանի բան մը չէի հագած:



Տեսակ մը լայն հողաթափներ ունէի զոր տէր Դաւիթ քահանան շինած էր չուանով, կերպասով ու խաւաքարտով:

Սուլթանիէէն մեկնած պահուստ իմ միակ ցաւս էր բաժնուիրը այդ պատուական քահանայէն որուն նմանը գոնէ ես չէի տեսած մինչեւ այդ օր:

Ամբողջ վեց ամիս միասին ապրած էինք ամէն օր եւ մօտէն ճանչցած էի գինքը:

Անձնուիրութեան եւ անշահախնդրութեան մարմնացումն էր: Ինք աշխարհական եղած ատեն դերձակ է եղեր եւ այժմ Սուլթանիէի մէջ այդ արհեստը ի գործ կը դնէր ինք ու իր ընտանիքը, կինն ու երեք զաւակները ապրեցնելու համար: Իր շահածը հազիւ կը բաւէր իրենց, այսուհանդերձ կարգ մը զըրկանքներու յանձնառու կ'ըլլար որպէսզի կարենար օգնել իրեն դիմող եւ անօթի մնացած խեղճերուն:

Երբ տարագիրները սկսան վերադառնալ, էրէյլի գտնուող բարեկամներ առաջարկեցին իսկոյն իր քաղաքը Ատաբազար վերադառնալ, խոստանալով ամէն նիւթական աջակցութիւն: Էրէյլի ալիւրի ծանօթ վաճառական եւ աղօրեպան Սմբատ Էֆէնտի մէկ քանի անգամ լուր դրկեց թէ պատրաստ էր իր կառքը դրկելու ինքն ու իր ընտանիքը փոխադրելու համար:

Տէր Դաւիթ մերժեց:

— Մինչեւ որ բոլոր տարագիրները չդրկեմ ու գիւղերը գտնուած Հայ որբերը չհաւաքեմ, տեղ մը չեմ երթար,— կը պատասխանէր տէր Դաւիթ:

Իր տունը ապաստան գտած է նաեւ, մէկ քանի ամիս, ծանօթ փրօֆէսոր Խաչատուրեան, Կեդրոնականի նախորդ տնօրէնը: Խաչատուրեան որ Սուլթանիէ գտնուած միջոցին ծանիկ աղա անունը կը կրէ եղեր, ձերբակալուելէ այնքան երկիւղ զգացած է որ հոն գտնուած միջոցին երբեք ոտքը տունէն դուրս չէ դրած:

Հետեւեալ առտու տակաւին մութ էր երբ կառապանը եկաւ գիս արթնցուց ըսելով որ ճամբայ պիտի ելլէինք:

Կառքերնիս կեցած էր քիչ մը անդին, պ. Ավրամիտէսի տանը առջեւ:

Փութացիներ հոն խմբովին, ուրիշ բարեկամներ կը սպասէին ողջերթ մաղթելու համար:

Մեր բարեկամներէն բաժանումը բաւական տխուր եղաւ: Աքսորի թշուառութեան մէջ մարդ շատ աւելի շուտ ու աւելի սերտ մտերմութիւններ կը հաստատէ քան անդորրութեան ու բարօրութեան մէջ: Մեր տիրութիւնը անով կը բարեխառնուէր որ գիտէինք թէ մնացողներն ալ քիչ օրէն պիտի հեռանային այս աքսորավայրերէն ու վերադառնային իրենց տեղերը:

Ճամբան, Սուլթանիէէն մինչեւ էրէյլի, բաւական հաճելի է, միայն թէ մեր ուղեւորութեան պահուն շատ ապահով չէր:

Ջինադադարէն ի վեր եւ նոյնիսկ անկէ ալ առաջ դասալիք զինուորներ կը վխտային ամէն կողմ եւ յաճախ կը յարձակէին ճամբորդներու վրայ զանոնք կողոպտելու համար:

Սպաննուած ճամբորդի լուրեր շատ անգամներ կը հասնէին մեզի: Բարեբախտաբար, ինչպէս ըսի, մեզի կ'ընկերանար Յոյն տասնապետ ոստիկան մը իր մավզէրով եւ ըէվոլվէրով:

Ցերեկուան մօտ հասանք փլած ու անբնակ խանի մը մօտ, ուր կանգ առինք ձիուն հանգիստ տալու համար:

Հո՛ն հանդիպեցանք Սուլթանիէ պաշտօնավարող թուրքի մը, որ ընտանեօք էրէյլի կ'երթար հոնկէ պաշտօնով ուրիշ տեղ փոխադրուելու համար:

Օղիի սիրահար բարի մարդ մըն էր այդ թուրքը որուն հետ միշտ բարեկամական յարաբերութիւններ ունեցած էինք:

Որոշեցինք մեր ճամբորդութեան մնացած մասը միասին շարունակել աւելի ապահով կերպով երթալու համար:

Երկու կառք նուազ յարձակման ենթակայ են քան առանձին գացող կառք մը:

## ԴԵՊԻ ՊՈԼԻՍ

Գիշերը հասած էր երբ մտանք էրէյլի: Քաղքին մէջ գտնուած միակ օթէլը տեղ չկար, ամբողջ սենեակները լեցուած էին թուրք սպաներով: Լաւագոյն խաներուն մէջ ալ չկրցանք տեղ գտնել եւ ի վերջոյ ստիպուեցանք աղտոտ խանի մը մէջ, որ մասնաւորաբար սայլապաններու յատկացուած է, անցընել գիշերը: Հետեւեալ առտու, հազիւ թէ փողոցը ելած՝ հանդիպեցայ ծանօթներու եւ բարեկամներու, որոնցմէ շատերը Սուլթանիէի մէջ ճանչցած էի:

Հարցուցի իրենց թէ որեւէ դժուարութիւն կա՞ր դէպի Պոլիս ճամբորդութիւնս շարունակելու համար:

- Ծամբու համար պէտք է արտօնութիւն առնես,— ըսին:
- Դժուարութիւն կը յարուցանե՞ն ատոր համար:
- Ո՛չ, բայց լաւագոյն է որ ծանօթ անձ մը ընկերանայ ձեզի:

Յետոյ գացի տեսնել Սմբատ էֆէնտին իր գրասենեակին մէջ, ընկերակցութեամբ պ. Ավրամիտէսի:

Սմբատ էֆէնտի շատ սիրալիւր ընդունելութիւն մը ըրաւ մեզի: Միասին գացինք քօմիսէրին տունը որպէսզի ճամբու արտօնագիր առնենք: Առանց դժուարութեան տուաւ: Յետոյ գացինք կայարան հասկնալու համար թէ ե՞րբ Պոլսոյ համար կառախումբ կար:

— Թերեւս վաղը իրիկուն,— պատասխանեցին:

Այդ օրերուն շատ դժուար էր կառախումբեր գտնել, նոյնիսկ եթէ կառախումբ գտնուէր, տեղ կարելի չէր գտնել: Ամբողջ վակօնները եւ վայրաշարժները Գերման եւ Աւստրիացի զինուոր փոխադրելու յատկացուած էին:

Սմբատ էֆէնտի թոյլ չտուաւ որ գիշերը աղտոտ խանին մէջ անցընեմ եւ զիս ու Յակոբը իր տան մէջ հիւրընկալեց:

Հետեւեալ օր ճամբու պատրաստութեամբ անցուցի: Ինչպէս ըսած եմ, էրէյլի հասած էի գրեթէ առանց դրամի: Իմ դիտաւորութիւնս էր հոնկէ հեռագրով դրամ ուզել Պոլսէն, սակայն Սմբատ էֆէնտի հարկ չտեսաւ որ ատոր համար մէկ քանի օր կորսնցնել էրէյլիի մէջ եւ ինքնաբերաբար ինծի տրամադրեց ճամբու ծախքի համար պէտք եղած գումարը:

Յերեկին լուր առինք թէ կառախումբը փոխանակ իրիկունը մեկնելու, ցերեկէն ետքը, ժամը 2ին ճամբայ պիտի ելլէր:

Երբ կայարան հասանք բարեկամներէ շրջապատուած՝ կառախումբը արդէն պատրաստ կեցած էր 40-է աւելի վակօններով կազմուած, բայց անոնցմէ միայն երկուքը ճամբորդներու յատկացուած էին, իսկ միւսները Գերման զինուորներուն: Եւ մեզի տրուած երկու վակօններն ալ բեռան կառքեր էին, մին գոց եւ միւսը բաց: Գոցը արդէն լեցուած էր, ուստի ստիպուեցանք բաց վակօնը մտնել, ուր հազիւ յաջողեցանք տեղ գտնել, այն ալ երկաթուղիի Հայ պաշտօնեայի մը շնորհիւ:

— Դուք հոս կեցէ՛ք, մինչեւ որ ձեզ լաւագոյն վակօն մը փոխադրեմ,— ըսաւ:

Կառախումբը որոշեալ ժամէն ետքը ճամբայ ելաւ դանդաղօրէն: Ածուխի տեղ փայտ կը վառէին եւ ասոր համար վայրաշարժներու արագութիւնը կէս առ կէս զեղչուած էր:

Ամէն մէկ կայարան հանդիպելնուս նոր ճամբորդներ կուգային բաց վակօնին մէջ, այնպէս որ քով քովի սեղմուած էինք:

Իրիկուան դէմ Հայ պաշտօնեան եկաւ եւ մեզ փոխադրեց բեռան վակօնի մը վրայ ուր արդէն նստած էին քանի մը ճամբորդներ:

— Գիշեր չեղած ձեզ գոց տեղ մը կը տանիմ,— խոստացաւ:

Եւ սակայն գիշերը վրայ հասաւ ու պաշտօնեան մէջտեղ չելաւ: Յուրտ քամի մըն ալ սկսաւ փչել, բոլորովին անտանելի դարձնելով մեր վիճակը:

Նոյեմբերի սկիզբն էր եւ արդէն ձմեռը սկսած՝ Գոնիայի նահանգին մէջ որ ծովէն 1200-1300 մէթր բարձր կը գտնուի:

Ես, պ. Ավրամիտէս եւ Յակոբիկ պատասպարուելու համար միմիայն իմ պաթանիէի վերածուած մաչլախս ունէինք:

Այդ լաթի կտորը հազիւ մեր կոնակն ու գլուխը կը ծածկէր: Մինչեւ առտու դողդղալով անցուցինք: Շատ աւելի լաւագոյն պիտի ըլլար եթէ բաց վահօնին մէջ մնացած ըլլայինք: Ամէնէն անտանելին այն էր որ կառախումբը ժամ մը կ'երթար եւ յետոյ երկու ժամ կանգ կ'առնէր որեւէ կայարան մը, երբեմն ալ ամառի դաշտին մէջ:

Վերջապէս լուսցաւ, արեւը բարձրացաւ եւ կրցանք քիչ մը տաքնալ:

Ամբողջ տարագրութեան շրջանին այդ գիշերուան չափ չարչարանք չէի կրած, կ'ենթադրէի թէ ամբողջ գիշերը ցուրտէն դողդղալէ ետքը անպատճառ հիւսանք պիտի ըլլայի, բարեբախտաբար բան մըն ալ չեղայ:

Առտուն կառախումբը կանգ առաւ ամայի դաշտի մը մէջ ուր փոքրիկ կայարան մը կար միայն: Յետոյ, վայրաշարժը մեզ թողուց եւ հեռացաւ:

Այդ ամայի դաշտին մէջ սպասեցինք մինչեւ իրիկուն:

Սովորաբար էրէյլիէէն Գոնիա կառախումբը 7 ժամէն կ'երթայ, մենք 24 ժամէն աւելի էր որ կը ճամբորդէինք եւ տակաւին կէս ճամբան չէինք կտրած:

Պահեստի ուտելիք չէինք առած եւ կարելի չէր բան մը գըտնել: Ստիպուեցանք չոր հացով գոհանալ:

Վայրաշարժը ինչ<sup>ո</sup> մեզ լքած ու հեռացած էր: Ո՛չ ոք կըրնար որոշ բան մը ըսել այս մասին:

Ուշ ատեն հեռուէն սուլում մը լսուեցաւ: Վերջապէ՛ս վայրաշարժն էր որ կուգար: Ամէնուս դէմքը ուրախութենէ փայլեցաւ:

Այդ կայարանին մէջ Հանդիպեցայ գոնիացի ընտանիքի մը, որուն ծանօթացած էի Տարսոնի մէջ, տարագրութեան առաջին

օրերուն: Իրենք յաջողած էին բեռան վահօնի մը մէջ տեղաւորուելու եւ զիս ալ հոն հրաւիրեցին: Սառելու վտանգէն փրկուած էի:

Գիշերը ժամը տասնին հասանք Գոնիա: Այդ յոռի պայմաններուն մէջ, չուզեցի ճամբորդութիւնս շարունակել, մանաւանդ որ ինծի ըսին թէ՝ Գոնիայէն կրնայի դիւրաւ աղէկ վահօն մը գտնել:

Գիշերը անցուցինք կայարանի մօտերը գտնուող Աւստոս օթէլը ուր ահագին բազմութիւն մը լեցուած էր: Ամէն ցեղէ մարդ կար հոն, Չինացի, Անգլիացի, Ֆրանսացի, Գերմանացի, թուրք, Արաբ, Հայ, Յոյն, Հրեայ եւ այլն, օթէլին բոլոր աթոռները, նստարանները եւ սեղանները անկողնի վերածուած էին գիշերը:

Հետեւեալ առտու գացի քաղաք ու հետզհետէ Հանդիպեցայ բարեկամներու, Յակոբ Տէր Յակոբեանին, Սարգիս Սրենցին, տոբթոր Տէր Ստեփանեանին, Մինաս Ծալեանին եւ այլն:

Յետոյ եկայ կայարան ուր տարագիրներու մեծ բազմութիւն մը խոնուած էր փողոցն ու հրապարակը:

Տեսարանը կը յիշեցնէր տեղահանութեան օրերը, միայն թէ այժմ խեղճ վերապրողները չունէին առաջին օրերու առոյգ եւ առողջ կերպարանքը: Դալկահար, նիհար, կմախացած դէմքեր էին ամէնքն ալ, տենդէ ու թանջքէ՝ \* հալած, սպառած, անսուղութենէ \*\* մաշած, երկարատեւ ու ամենօրեայ թշուառութեան ու տառապանքի տակ ընկճուած:

Ընդհանրապէս կիներ, ծերունիներ ու մանուկներ էին այդ վերադարձող տարագիրները, իսկ երիտասարդները ի՞նչ եղած, ո՞ւր մնացած էին: Կա՛մ ամէլէ թալուրիներու մէջ նահատակուած եւ կա՛մ անապատներու մէջ ջարդուած էին:

Ո՞ւր էին աքսորանքի առաջին օրերուն մաքուր հագուստները, ճերմակ սաւանները, կակուղ անկողիները... Հիմա խեղճ

\* Արիմախառն փորքշուքից:

\*\* Սաստիկ քաղցածութիւնից:

թշուառները կը վերադառնային իրենց տեղերը գնչուներու, մուրացկաններու կերպարանքով:

Տխո՛ւր տեսարան, աւելի տխուր քան առաջին օրերու բռնազաղթը, երբ տակաւին մահուան մանգաղը չէր հնձած այնչա՛փ երիտասարդ կեանքեր եւ երբ ամէն մարդ ծրագրուած ոճիրին ահագնութեանը անտեղեակ, կը յուսար կարճատեւ բացակայութենէ մը հտքը վերադառնալ իր օճախը:

Յոյսը կը շողար այդ օրերուն ամէնուն աչքերուն մէջ, իսկ այժմ, վերադարձի այս պահուն՝ յուսահատութիւնը դրոշմուած էր ամէնուն դէմքին վրայ:

\* \* \*

Այդ բազմութեան մէջ յանկարծ նշմարեցի Սուլթանիէէն նոր հասած ծանօթներ, որոնցմէ մին, փոքրիկ աղջիկ մը 12-13 տարեկան, ճամբան կառքէն ինկած ու թեւը կոտրած էր:

Խեղճը անմիջական խնամքի պէտք ունէր:

Գոնիացի բարեկամ մը, որուն հետ էի, խորհուրդ տուաւ իսկոյն միս Քուլմանի դիմելու: Միասին տարինք աղջիկը որբանոց:

Տիկին Քուլման շատ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ մեզի եւ երբ իմացաւ մեր այցելութեան պատճառը, իսկոյն հրաման ըրաւ որ աղջիկը մօտերը գտնուող Յոյն վիրաբուժի մը տարուի եւ խնամուի:

Առաջին անգամն էր որ կը տեսնէի այս մեծ բարերարուհին որ մեր այնչա՛փ որբերուն եւ որբուհիներուն համար ճշմարիտ մայր մը եղած է:

Աւիթէն օգտուելով՝ այցելեցի նաեւ որբանոցը:

Պէտք է ըսել որ մաքրութիւն եւ կարգապահութիւն անթերի էին: Որբերու եւ որբուհիներու զուարթ եւ առողջ դէմքերը ցոյց կուտային թէ որքա՛ն լաւ խնամուած էին այդ խեղճերը:

Իրենց զգեստները եւ ճերմակեղէնները նոյնպէս նոր ու մաքուր էին եւ որբերուն կուտային ո՛չ թէ անծնող լքուածներու՝ այլ գիշերօթիկ վարժարանի մը բարեկեցիկ աշակերտներու կերպարանքը:

Երկու Հայ օրիորդներ հսկողի պաշտօն կը կատարէին այս հաստատութեան մէջ, որ Գոնիայի լաւագոյն շէնքերէն մէկն էր:

Միս Քուլման ըսաւ թէ աւելի թիւով որբեր պիտի առնէր իր քով եթէ տեղ ունենար: Շատ մը որբեր ստիպուած էր շէնքէն դուրս մասնաւոր անհատներու քով տեղաւորել, անոնց սնունդին համար ամսական վճարում մը ընելով: Բնականաբար ասոնք այնքան լաւ չէին սնանք ու խնամք ստանար որքան բո՛ւն որբանոցին մէջ գտնուողները:

Իմ շնորհաւորութիւններս եւ յանուն մեր ազգին մեր երախտագիտութիւնը յայտնելով մեկնեցայ միս Քուլմանի քովէն եւ հիւանդապահուի մը ընկերակցութեամբ տարինք Նուարդը Յոյն վիրաբուժին որ երբ լսեց թէ միս Քուլմանի կողմէ եկած էինք, իր միւս հիւանդները թողլով անմիջապէս Նուարդին կոտրած թեւը խնամեց:

Գոնիայի կայարանին դեր կայարանապետը Հայ երիտասարդ մըն էր որ հակառակ իր բաղձանքին ու ջանքերուն չկըրցաւ, մէկ քանի օր, գոց վակօնի մը մէջ տեղ հայթայթել:

Պ. Ավրամիտէս, որուն հետ միասին եկած էինք Գոնիա, ինչ ճարպիկ բրդաւ եւ մեր հասնելուն հետեւեալ օրը յանկարծ անյայտացաւ: Յետոյ իմացայ որ յաջողած էր Պոլիս մեկնող կառախումբի մը մէջ տեղ գտնել:

Ես ստիպուեցայ մնալ 4-5 օր եւ այդ միջոցին ժամանակս անցուցի բարեկամներու հետ: Յակոբ Տէր Յակոբեան, թէեւ զբաղած, բայց իրիկունները ատեն կը գտնէր գալ ինձի միանալու:

Ինք տակաւին քիչ մը ժամանակ պիտի մնար Գոնիա: Մտադիր էր Պոլիս գալուն օրաթերթ մը հրատարակել, որուն անունն իսկ որոշած էր:

— Երբ Պոլիս երթաս, ուրիշ օրաթերթի հետ չկապուիս,— խորհուրդ տուաւ ինծի,— սպասէ՛ մինչեւ որ ես գամ ու այն ատեն միասին կը հրատարակենք իմ թերթս:

Հաւանութիւն յայտնեցի իրեն այս ծրագրին, բայց յետոյ պարագաները արգելք եղան այդ խորհուրդին իրականացման:

Նոյն օրերուն բոլոր Գոնիայի հայութիւնը տենդագին հետաքրքրութեամբ կը սպասէր Պոլսոյ թերթերու հասնելուն:

Սարայի հրապարակը գտնուող լրագրավաճառին առջեւ բազմութիւնը կը խոնուէր երբ կ'իմացուէր թէ թղթաբերը եկած է եւ երբ թերթերու ծրարները կը բացուէին ամէն մարդ անոնց վրայ կը խուժէր:

Գալով թուրքերուն՝ անոնք նոյն ոգեւորութիւնը ցոյց չէին տար թերթ կարդալու եւ լուր առնելու մասին, որովհետեւ գիտէին թէ իրենց աննպաստ բաներ պիտի իմանային: Ամէնուն վրայ բարոյալքում մը, յուսահատ ընկճում մը կը նշմարուէր: Փողոցները լեցուն էին Սուրիոյ թուրք բանակին բեկորներով, պարզ զինուոր եւ սպայ, առաջինները ողորմելի վիճակի մէջ, մուրացկանի երեւոյթով եւ յաճախ ալ իբրեւ ճշմարիտ մուրացիկներ, իրենց ձեռքը կառկառելով անցորդներուն: Սպաները տակաւին կը պահէին իրենց մարտական կերպարանքը, բայց առանց յոխորտանքի, առանց պոռոտախօսութեան, ինչպէս էին պատերազմի միջոցին:

Այդ սպաներէն մէկը նոյնիսկ երեք ու կէս ոսկիի իր կօշիկը ծախեց ինծի, որով կրցայ չուանէ ու խաւաքարտէ շինուած հողաթափներս մէկ կողմ նետել:

\*\*\*

Վերջապէս գիշեր մը փոխ կայարանապետը յաջողեցաւ զիս ու փոքրիկ Յակոբը տեղաւորել գոց վակօնի մը մէջ: Փօսթայի վակօն մըն էր ասիկա ուր նստարան չի կար, այլ ամէն տեղ բաց

խորշեր, նամակի ծրարներ դնելու համար: Չորս պատուհաններէն երկուքին ապակիները կոտրած էին: Այս նեղ վակօնին մէջ սեղմուած էինք հնդկաստանցի աքսորական մը իր երկու զաւակներով, պիլէճիկցի Հայ երիտասարդ մը Մորճիքեան ընտանիքէն եւ իմ փախուստի ընկեր պ. Միքայէլի ազգականը, մէկ քանի թուրքեր եւ չորս հատ ալ ոստիկան որոնք Պոլիս կը վերադառնային:

Գետինը, աղտոտութեան մէջ, քով քովի նստանք սեղմուած, մենք զմեզ բարեբախտ համարելով որ գոնէ կրցած էինք գոց տեղ մը գտնել:

Կառախումբը դանդաղօրէն կը յառաջանար ամէն մէկ կայարան ժամերով սպասելով: Պաղ հով մը կոտրած պատուհաններէն ներս կը խուժէր, սառեցնելով մեր մարմինը: Բարեբախտաբար հնդկաստանցին, որուն հետ քով քովի նստած էի, կրակաման մը եւ ածուխ առած էր միասին: Կրակ վառեց ու թէյ պատրաստեց, միասին խմեցինք:

Երբ էսկի-Շէհիր հասանք, սարսափելի անձրեւ մը տեղալ սկսաւ: Կառախումբը ամբողջ օր մը մնաց հոն:

Մեր վակօնը գտնուող թուրք ոստիկանները անընդհատ կը խմէին, կ'երգէին, կը նուազէին, ատեն ատեն քովի վակօններէն բերել տալով իրենց հոմանուհիները, բոլորն ալ Հայ կիներ:

Աստուծոյ մին պանտրմացի մըն էր, բաւական գեղանի եւ ուսեալ:

Երբ անունս իմացաւ, ուզեց հետս ծանօթանալ ըսելով որ գրածներս շատ կարդացած էր:

Առիթէն օգուտ քաղեցի բարոյագիտութեան փոքրիկ դաս մը տալու համար այդ կնոջ:

— Մինակ ե՞ս եմ,— պատասխանեց,— այս կեանքը վարող, Գոնիա գտնուող բոլոր Հայ տարագիր կիները, որոնց ամուսինները կորսուած, ջարդուած կամ մեռած են, նոյն վիճակին մատուած են: Կա՛մ հանրատուն մը գացած եւ կա՛մ սիրահար մը առած նստած են: Ուրիշ կերպով ինչպէ՞ս կ'ուզէիք որ ապրէիք: Եթէ,

օրինակի համար, ես այս ուստիկանին հետ կապուած չըլլայի՝ ո՛վ գիտէ քանի անգամ Գոնիայէն քշուած էի դէպի Տէր-Ջօր ու ճամբան մեռած կամ հո՛ն ջարդուած: Ամբողջ երեք տարի այս մարդը զիս պահեց:

– Բայց հիմա որ ա՛լ ազատ ես եւ աքսորուելէ վախ չունիս, կրնաս օձիքդ իր ձեռքէն ազատել:

– Ալ շատ ուշ է, – պատասխանեց թշուառ կինը, – բանը բանէն անցած է... երեք տարի այս կեանքը վարելէս ետքը, ո՛վ կը նայի երեսուս...: Տե՛ս, ես պանտրումացի պատուաւոր ընտանիքի աղջիկ մըն եմ, բայց հիմա չեմ համարձակիր տեղս դառնալ, որովհետեւ հիմա ամօթ կը զգամ իմ ազգականներուս եւ բարեկամներուս երեսը նայելու, որովհետեւ իրենցմէ շատեր իմացած են որ ինչ տեսակ կեանք մը վարած եմ Գոնիայի մէջ:

– Ուրեմն Պանտրումա պիտի չերթա՞ս, – հարցուցի:

– Չէ՛, – պատասխանեց, – Պոլիս պիտի մնամ:

– Եւ եթէ այս ուստիկանը քեզ երեսի վրայ թողու...:

– Այն ատեն ուրիշ մէկը կը գտնամ:

Այս կինը արդարեւ բացառութիւն մը չէր եւ հազարներ կային որոնք այդ կնոջ վիճակին մատնուած կը վերադառնային իրենց տարագրութենէն:

Եւ դեռ քանիներ կային, որոնք Հալէպի, Դամասկոսի, Գոնիայի հանրատուներուն մէջ կը գտնուէին ու չէին ուզեր նոր ազատութենէն օգտուիլ իրենց տեղերը վերադառնալու համար, որովհետեւ ա՛լ մոլութեան մէջ փճացած էին:

Ձուարճալի էր այն փոփոխութիւնը որ կը տեսնուէր ուստիկաններուն վրայ՝ Հայերուն հանդէպ: Այդ մարդիկը որ դեռ ամիս մը առաջ ծեծով, խարազանով կամ անլուր հայհոյանքներով կը հաղորդակցէին տարագիրներու հետ, այժմ կը քծնէին մեզի:

Մեր վակօնը գտնուող ուստիկանները երբ իմացան թէ աքսորուած խմբագիր մըն եմ ու Պոլիս կը դառնամ իմ արուեստիս վերսկսելու համար, սկսան յարգանքներ շնայել ինծի, նոյնիսկ ձեռքս համբուրել:

Ամէնքն ալ ինքզինքնին ցոյց կուտային իբրեւ մէյմէկ պահապան հրեշտակներ որոնք հարիւրաւոր Հայեր ազատած էին մահուանէ:

Եւ վկայութիւններ առաջ կը բերէին իրենց ըսածները հաստատելու համար:

– Հարցուցէ՛ք այնինչ Հայուն, ըսէ՛ք թէ փոլիս Հիւսէին է-Ֆէնտի ինչպէ՞ս մարդ է եւ պիտի տեսնաք թէ ինչ վկայութիւն պիտի տայ ինծի համար: Ընկերներս հազարաւոր ոսկիի տէր եղան, ես մէծիտիէ մը անգամ չեմ առած տարագիրներէն... ընդհակառակը գրպանէս դրամ տուած եմ:

– Ես ալ անգամ մը էրէյլիի մէջ տեսայ որ խեղճ պզտիկ տղաք անօթի կը պտտին շուկան, սիրտս գէշ եղաւ, 10 օխա հաց առի ու բաժնեցի իրենց:

– Ես ամբողջ Հայ ընտանիք մը տանս մէջ ամիս մը պահեցի եւ ասոր համար պատիժ ալ կրեցի, բանտ պառկեցայ, պաշտօնանկ եղայ:

Վերջապէս ամէնքն ալ մէյմէկ սուրբեր էին որոնք միայն բարիք ըրած էին իրենց շուրջը:

Մինչ մէկ կողմէ այսպէս ինքնարդարացումի կը դիմէին՝ միւս կողմէ ամենաբուռն կերպով կը յարձակէին այդ ջարդերուն եւ հալածանքներուն պատճառ եղողներուն վրայ:

– Պատճառ եղողին Աստուած պէլան տայ...

Այս էր իրենց անորոշ բացատրութեան ձեւը: Իսկ թէ որո՞նք էին պատճառ եղողները, այս մասին չէին ուզեր լուսաբանութիւններ տալ:

Հիմա իրենց ամէնէն մեծ թշնամիները կը նկատէին երէկուան դաշնակիցները, բարեկամները, Գերմանացիք:

– Մեզի կործանեցին, փճացուցին...

Էսկի-Շէհիբի մէջ առինք Պոլսէն եկած վերջին թերթերը: Զգայացունց լուրեր կային. Համաձայնական նաւատորմիղը մտած էր Պոլիս եւ թերթերը երկարօրէն կը նկարագրէին Բերայի մէջ այս առթիւ տեղի ունեցած խանդավառ ցոյցերը եւ միեւ-

նոյն ատեն կը ծանուցանէին այս կամ այն ջոջ իթթիհատականին փախուստը:

Թուրքերը այդ լուրերը կը կարդային դառն յուսահատութեամբ մը:

– Լմնցանք, Օսմանեան պետութիւն չմնաց...

Այս էր իրենց յանկերգը: Քանի մը «էօֆ, փիֆ» եւ ահա յանկարծ իրենցմէ մէկը կը գոչէր:

– Հանեցէ՛ք սա օղիի շիշը:

Ու խրախճանքը կը վերսկսէր: Կէս ժամ ետքը մոռցուած էր հայրենիքի դժբախտութիւնը, պետութեան կործանումը: Լպիրշ երգեր կ'սկսէին:

– Ամա՛ն տօքթօր, ճանըմ տօքթօր, տէրտիմէ պիր չարէ\*:

Էսկի-Շէհիրէն կառախումբը եկաւ Աֆիօն Գարահիսար: Տեղատարափ անձրեւը եւ պաղ քամին կը շարունակէին միշտ:

Ամբողջ տարագրութեան շրջանին ամէնէն անտանելի ուղեւորութիւնն էր որ կ'ընէի: Անհամբերութիւնս հետզհետէ կ'աւելնար, քանի կառախումբը կը դանդաղէր առաջ երթալու:

Գարահիսարի մէջ սպասեցինք երկու օր, չեմ գիտեր ինչո՛ւ:

Բարեբախտաբար ամէն կայարաններու մէջ ընդհանրապէս կը գտնուէին երկաթուղիի Հայ պաշտօնեաներ որոնք լսելով որ ճամբորդներուն մէջ կը գտնուիմ, կուգային զիս հիւրասիրել եւ ժամանցի միջոցներ ստեղծել: Ափսո՛ս որ այդ պաշտօնեաներուն անունը այժմ կը վրիպի յիշողութենէս:

Գիշեր մը կայարան կեցանք. բաւական ուշ էր եւ ես կը ջանայի քնանալ վակօնին անկիւնը կծկտած: Յուրտ էր եւ ես առանց վերարկուի, փաթթուած էի մաշլախիս մէջ:

Յանկարծ դուրսէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր.

– Երուանդ Օտեանը հո՞ս է:

– Հոս է կը քնանայ կոր,– պատասխանեցին վակօնին մէջ գտնուողները:

Իսկոյն ելայ եւ դրան մօտեցայ.

\* Վա՛յ բծիշկ, հոգիս բծիշկ, ցաւիս մի ճար գտիր:

– Ի՞նչ կ'ուզէք, ես եմ Օտեանը,– պատասխանեցի:

– Լսեցի որ ճամբորդներուն մէջ էք եւ փափաքեցայ ձեզ տեսնել, կը հաճի՞ք սենեակս գալ, վառարանը կը վառի եւ թէյ պատրաստած եմ:

Զիս այսպէս ազնուօրէն հրաւիրող երիտասարդը կայարանապետն էր: Ըսաւ որ պոլսեցի էր ու Գատրգիւղ կը բնակէր:

– Դեռ ժամէն աւելի կառախումբը պիտի մնայ այստեղ,– ըսաւ,– կրնանք տեսակցիլ:

Մինչեւ մեկնումի վայրկեանը մնացի իր քով: Երբ մեկնումի վայրկեանը հասաւ, արագ շարժումով մը կայարանապետը իր հագած վերարկուն հանեց եւ ստիպեց որ ես հագնիմ:

Ուզեցի մերժել, անկարելի եղաւ:

– Բայց,– առարկեցի,– դուք ձեր պաշտօնին բերումով ստիպուած էք միշտ դուրսը մնալ եւ օդը շատ ցուրտ է...

– Ձէ՛,– պնդեց,– անպատճառ պիտի առնէք, զիս մի՛ մտածէք, ես երիտասարդ եմ:

Եւ տեսնելով որ տակաւին կ'ընդդիմանամ, աւելցուց.

– Եթէ մտիմ՝ հին վերարկու մը ունիմ ան կը հագնիմ:

Ստիպուեցայ տեղի տալ եւ ընդունիլ վերարկուն, որուն իրաւցնէ պէտքը կ'զգայի:

Բայց այսչափով ալ չգոհացաւ, ուզեց քանի մը տուփ սրկառէթ նուիրել, երբ զանոնք ալ ընդունեցի՝ դրամական նուէր մըն ալ ընել ուզեց եւ հակառակ իմ բողոքներուս, հինգ ոսկինոց թուղթ մը սպրդեցուց վերարկուիս գրպանը, ըսելով թէ աքսորէ կը վերադառնայի եւ թէ ճամբան կրնայի դրամի պէտք ունենալ, քանի որ ե՛րբ Պոլիս հասնելնիս յայտնի չէր:

Ուրիշ կայարանի մը մէջ, կարծեմ էսկի Շէհիր, Հայ կաթուղիկ վարդապետ մը զիս փնտոց գտաւ:

Ինք այնպէս լսած է եղեր թէ Տէր-Զօրի մէջ մեռած էի եւ երբ իմացեր է որ ողջ կը վերադառնամ, ուզեր է իր աչքերով ստուգել այդ լուրը:

Տեսակ մը թովմաս առաքեալ:

Բաւական տեսակցելէ ետքը վարդապետն ալ ուզեց անպատ-  
ճառ նիւթական նուէր մը ընել ինծի, ճամբորդութեան անակն-  
կալները պատրուակելով:

Յարութիւն առած նահատակի մը երեւոյթը ունէի:

Տէր-Զօրէն ողջ վերադառնալ՝ արդարեւ պզտիկ հրաշք մը  
չէր:

Այսպէս՝ կառախումբը հասաւ Իզմիթ:

Դեռ կայարան չհասած՝ երբ Իզմիթի ծոցին երկայնքէն  
կ'անցնէինք, տեսանք Համաձայնական բազմաթիւ զրահաւոր-  
ներ, որոնք վեհափառօրէն խարսխած էին:

Կէսօրին մօտ էր երբ կայարան հասանք: Շատ պիտի չմնա-  
յինք Իզմիթ, ուստի անմիջապէս կայարանի ճաշարանը ուղղուե-  
ցայ քիչ մը բան ուտելու:

Հազիւ թէ սեղան նստած էի երկաթուղիի պաշտօնեայ մը մօ-  
տեցաւ ինծի եւ հարցուց:

— Երուանդ Օտեանը դո՞ւք էք:

— Այո՛, — ես եմ, — պատասխանեցի:

— Հիմա հեռագիր ստացանք Անտոն Թարաք էֆէնտիէն, — ը-  
սաւ պաշտօնեան, — հեռագրին մէջ կ'ըսէ որ եթէ Երուանդ  
Օտեան կառախումբին մէջն է, թո՛ղ Բէնտիք իջնէ փոխանակ  
Հայտար փաշայի կայարանը իջնելու: Թարաք էֆէնտի ձեզի  
հոն պիտի սպասէ: Հեռագրով պատասխան կ'ուզէ կոր ի՞նչ  
պատասխանենք:

— Շատ շնորհակալ եմ, — ըսի, — Բէնտիք վար կ'իջնեմ:

Այսուհանդերձ այս հեռագիրը բաւական վրդովեց գիս, մա-  
նաւանդ երբ անոր պարունակութիւնը հաղորդեցի ճամբու ըն-  
կերներու:

Ամէնուն կարծիքը այն էր թէ Պոլսոյ մէջ ծանրակշիռ դէպ-  
քեր պատահած էին եւ ասոր համար պ. Անտոն Թարաք կը հե-  
ռագրէր որ փոխանակ Հայտար փաշայի՝ Բէնտիք վար իջնեմ:

Հակառակ Համաձայնական նաւատորմին ներկայութեան,  
Իզմիթ առանց կենդանութեան եւ ամայացած վիճակ մը ունէր:

Զրահաւորներու նաւազները ցամաք չէին ելլեր տակաւին եւ  
տարագիրներէն շատ քիչերը, հազիւ 10-12 հոգի դարձած էին  
քաղաք:

Անոնցմէ մէկ քանիին հանդիպեցայ կայարանի քարափին  
վրայ ուր եկած էին տեսնելու թէ կառախումբը իրենց քաղա-  
քացի նոր տարագիրներ կը բերէ՞ր:

Արդարեւ մէկ քանի հատ Հայ կային կառախումբին մէջ:

Վերապրողներուն հարցուցի թէ տիրացա՞ծ էին իրենց ցան-  
քերուն ու ինչքերուն:

— Մեր տունները առանց դժուարութեան յանձնեցին ձեզի, —  
պատասխանեցին, — բայց ի՞նչ վիճակի մէջ, ո՛չ ապակի թողած  
էին, ո՛չ պատուհան եւ ո՛չ կղմինտր: Տուներ կան, որոնց սան-  
դուխները եւ պատուհանի փեղկերն ալ հանած էին: Իսկ կարա-  
սիի հետքը անգամ չէր մնացած: Իսկ գալով մեր խանութնե-  
րուն մէջ գտնուած ապրանքներուն, ամէնք ալ ծախուած էին:

— Գոնէ փոխարժէքը չպահանջեցի՞ք:

— Պահանջեցինք, բայց տուող չկայ... դեռ այդ մասին տնօ-  
րէնութիւն մը չէ եղած եղեր:

Հայոց թաղին մէկ մասը որ տարագրութեան սկիզբը այրած  
էր, կը մնար իր աւերակային վիճակին մէջ:

Վերադարձողներու դէմքին վրայ կը կարդացուէր յուսահա-  
տութիւն եւ լքում: Մէկ քանիներու հետ խօսեցայ, որոնք նոյ-  
նիսկ դժգոհութիւն յայտնեցին իրենց քաղաքը դարձած ըլլալ-  
նուն:

— Եթէ գիտնայի այսպէս ըլլալը, էրէյլի կը մնայի, — կ'ըսէր  
մին, — գործ ունէի, գոնէ ապրուստս ապահովուած էր:

— Գոնիայի մէջ շատ աւելի աղէկ էի քան հոս, — կը գանգա-  
տէր ուրիշ մը:

Շնորհիւ կայարանի Հայ պաշտօնեաններուն, Իզմիթի մէջ յա-  
ջողեցայ վակօնս փոխել ու նստարանաւոր վակօն մը փոխա-  
դրուիլ:

Շոգեկառքը որոշուած ժամուն ճամբայ ելաւ բաւական ա-



րագ գնացքով մը: Մարմարայի եզերքը քերելով կ'երթայինք եւ  
ես որ երկուք ու կէս տարիէ ի վեր զրկուած էի ծովէն, Հաճոյ-  
քով կը դիտէի շուրջս պարզուած տեսարանը:

Քանի կը մօտենայինք Պոլսոյ, այնքա՛ն յուզումս կ'աւելնար:  
Տխուր եւ միանգամայն ուրախ էի կամ աւելի ճիշդը մերթ  
տխուր, մերթ ուրախ, ըստ մտածումներուս առած ուղղութեան:  
Կը խորհէի թէ երեք ու կէս տարուան աքսորանքէ ետքը կը  
դառնայի Պոլիս՝ ուր պիտի չգտնէի ո՛չ մայրս եւ ո՛չ ալ ուրիշ  
սիրելիներ, որոնք անդարձ Հեռացած էին երեք տարուան ըն-  
թացքին, միւս կողմէ կը սրտապնդուէի, մտածելով ուրիշ սիրե-  
լիներու որոնց կը մօտենայի ժամէ ժամ եւ որոնք գիտէի թէ ան-  
Համբեր կ'սպասէին ինձի:

Կը հաշուէինք թէ ժամը Հինգին պիտի Հասնէինք մեր ան-  
տանելի ճամբորդութեան վախճանին, Հետեւաբար պիտի կրնա-  
յինք ամէնքս ալ մեր տեղերը երթալ:

Վերջապէս Հեռուէն երեւցան իշխանաց կղզիները: Ա՛լ գրե-  
թէ Պոլսոյ սահմանին մէջ էինք: Տեղ տեղ վրաններու տակ կը  
Հանդիպէինք Գերման եւ թուրք զինուորներու:

Կառախումը կանգ առաւ:

Բէնտիք Հասած էինք:

Փութացի վար իջնել առանց որեւէ գոյք ունենալու Հետս, ու-  
րովՀետեւ մաչլախս, տոպրակ մը որուն մէջ ուտելիք կը դնէի  
եւ ուրիշ մանր մօնըր առարկաներ, իմ ճամբու ընկերոջս Հնդիկ  
աքսորականին ձգեցի իբրեւ նուէր:

Քարափին վրայ պ. Անտոն Թարաք ինձի կը սպասէր:

Համբուրուեցանք, յետոյ անմիջապէս Հարցուցի.

— Ինչո՞ւ Հեռագրեցիք որ Հոս իջնեմ, արդեօք Հայտար փա-  
շա երթալու մէջ վտա՞նգ մը կայ եւ կամ Պոլիս խռովութի՞ւն  
ծագած է:

— Բան մը չի կայ,— ըսաւ խնդալով,— հոգ մի՛ ըներ:

Յետոյ, ըսաւ.

— Եկուր Հետս միասին:

Եւ գացինք կայարանապետին սենեակը ուր սեղանի մը վրայ  
ծրար մը դրուած էր:

— Քեզի Համար բերի,— ըսաւ պ. Թարաք:

— Բայց ի՞նչ է,— Հարցուցի:

— Մտածեցի որ թերեւս հագուստեղէնի պէտք ունիս...

Արդարեւ ձեռք մը մաքուր զգեստ, վզնոց մը եւ գլխարկ մը  
կը պարունակէր ծրարը, այսինքն ինչ բանի որ անհրաժեշտ  
պէտք ունէի:

Գլխարկը մանաւանդ զիս չափազանց ուրախացուց: Սուլ-  
թանիէ գտնուած ատեննիս պ. Ավրամիտէս եւ ես ուխտած էինք  
Պոլիս հասնելուս պէս մեր Ֆէսերը նետել եւ գլխարկ դնել, եւ  
ահա կարող կ'ըլլայի կատարել դեռ ոտքս Պոլիս չդրած:

Մինչ ես հագուստներս փոխելու զբաղած էի՝ կառախումբը  
ճամբայ ելաւ:

— Կէս ժամէն ուրիշ կառախումբ մը կայ Հայտար փաշայի  
Համար,— ըսաւ կայարանապետը:

Այդ կէս ժամը անցուցինք պ. Անտոն Թարաքի Հետ քարա-  
փին վրայ խօսակցելով:

Հետաքրքիր էի տեղեկութիւններ առնել Պոլիս թողած բարե-  
կամներուս վրայ:

Իսկ փոխադարձաբար պ. Թարաք կ'ուզէր իմ աքսորի կեան-  
քիս դրուագները իմանալ:

Վերջապէս կառախումբը եկաւ ու ճամբայ ելանք:

Հազիւ թէ Մալթէփէ Հասած էինք՝ վայրաշարժը խանգարում  
մը ունեցաւ:

Շոգիի խողովակներէն մէկ քանին ծակած էին: Հեռագրով  
ուրիշ վայրաշարժ մը ուզեցին Հայտար փաշայէն: Պատասխան  
տրուեցաւ թէ տրամադրելի վայրաշարժ չկար եւ ստիպուեցանք  
մեր ճամբան շարունակել խողովակները ծակած մեքենայով:

Կառախումբը յուսահատեցուցիչ դանդաղութեամբ մը ա-  
ռաջ կ'երթար եւ Մալթէփէն Հայտար փաշա երեք ժամէն հա-  
զիւ կրցանք հասնիլ:

Իմ աքսորանքիս վերջին փորձութիւնն էր այս:  
Պ. Թարաք զիս հրաւիրեց իր տունը ուր անցուցի գիշերը:  
Իրմէ իմացայ որ Օրմանեան սրբազան ծանրապէս հիւանդ  
էր Ներսէս Օհանեանի տան մէջ ուր եկած էր իբրեւ հիւր:  
– Առտուն հոգեւարք էր, թերեւս արդէն մեռած է, – ըսաւ պ.  
Թարաք:

Հետեւեալ առտու կանուխ գացի տեսնել Օհանեանը:  
Արդարեւ Օրմանեան մեռած եւ մարմինը եկեղեցի փոխադրու-  
ած էր արդէն:

Հոն եկաւ նաեւ Հրաչեայ Տէր Ներսէսեան յուղարկաւորու-  
թեան մանրամասնութիւնները կարգադրելու համար:

Յետոյ ամէնքս միասին, իջանք Պոլիս եւ ես ուղղակի գացի  
«Փամանակ»ի խմբագրատունը:

Սարգիս Գօշունեան զիս տեսածին պէս վիզս պլլուեցաւ եւ  
յուզումէն սկսաւ արտասուել:

Յետոյ, տեսայ նաեւ գրչի միւս ընկերակիցներս, Գալփաք-  
ճեանը, Աբիկ Մուպահեանը, Շիրակացին:

Երեք ու կէս տարուան բացակայութենէ ետքը վերստին կը  
գտնէի գրասեղանս ու աթոռս:

Եւ նստայ առաջին յօդուածս գրելու:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ահաւասիկ իմ երեք ու կէս տարուան աքսորանքի պատմու-  
թիւնս: Ընթերցողները նշմարեցին անշուշտ թէ այդ պատմու-  
թիւնը գրեցի ամենապարզ կերպով եւ նոյնիսկ գրական շատ  
անխնամ ոճով մը: Ամէն բանէ առաջ ուզեցի ճշմարտապատում  
ըլլալ, ո՛չ մէկ իրողութիւն խեղաթիւրել, ո՛չ մէկ դէպք չափա-  
զանցել:

Եւ սակայն իրականութիւնը այնքա՛ն սարսափելի էր որ շա-  
տեր կարծեցին թէ չափազանցութիւններ կային գրածիս մէջ:  
Անոնք որ տարագրութեան տառապանքը կրեցին եւ կրցան  
ապրիլ, անո՛նք կրնան վկայել թէ երբեք չեմ այլայլած ճշմար-  
տութիւնը:

Սա եւս ըսեմ որ ես, հակառակ գլխէս անցած զանազան  
փորձանքներուն, ամէնէն բարեբախտ տարագիրներէն մին ե-  
ղայ, միւսները, այր թէ կին, ինէ շա՛տ ու շա՛տ աւելի տառա-  
պեցան ու չարչարուեցան:

Բազմանդամ ընտանիքներ էին որ դառնութեան ու թշուա-  
ռութեան ծայրայեղութիւնները տեսան: Իրենց զաւակներուն  
կամ ծնողքին մահը, ամայի ճամբաներուն վրայ, իրենց աղջիկ-  
ներուն առեւանգումը կամ բռնաբարութիւնը իրենց աչքերուն  
դիմաց, վրաններու տակ, աւազակներու կողմէ թալան, ոստի-  
կաններու ձեռքով կողոպուտ, հիւանդութիւն, անօթութիւն,  
ծարաւ, չարչարանքի ամբողջ ձեւերը:

Ես, միս մինակ, միմիայն իմ անձս ունէի մտածելիք: Ո՛չ  
գոյք, ո՛չ դրամ կար քովս կողոպուտէ վախնալու կամ ոստի-  
կաններու ընչաքաղցութեան նշաւակ ըլլալու համար: Ընդհա-

կառակը միշտ ու ամէն տեղ, ծանօթ մը կամ անծանօթ համա-  
կիր մը որ անունս լսածին պէս, կը փութար զիս հիւրընկալել  
ու ձեռքէն եկած օժանդակութիւնը ընել:

Երեք տարուան աքսորս փոխարինեց երեսուն տարուան  
գրական գործունէութիւնս:

### ՎԵՐՋ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ընդհանուր Պատերազմին Ծագումը	15
- Չարաշուք գիշերը	33
- Թաքսպոցիս մէջ	40
- Անձկութեան օրեր	46
- Բանտարկութիւն եւ աքսոր	61
- Տարսոնի մէջ	130
- Նալեպի մէջ	145
- Նամայի մէջ	165
- Նալեպէն Տէր - Զօր	205
- Էլ Պուսէրա	241
- Տէր - Զօրի մէջ	280
- Տէր - Զօրէն Նալեպ	338
- Նալեպի մէջ	363
- Սուլթանիէի մէջ	426
- Դէպի Պոլիս	460
- Վերջաբան	477